Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՎԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԱՐԱՏԱՅԻԼ

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԵՐԴՈՂԱՏԱՅՐԸ

Վեպ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ— 1985

ԳՄԴ 8427
Խ 282

80621

Խաչատրյան Հ. Հ.
Խ 282 Քերթողահայրը։ Վեպ.— Եր.։ Սովետ. գրող, 1985. 352 էջ։

Հայ ժողովրդի ստեղծած գրավոր արժեքների մեջ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» հայոց ծննդաբանության, նրա ինքնաճանաչման ու ինքնության մեծարժեք դասագիրքն է։ Մովսես Խորենացին իր պատմությունը գրել է՝ կառարելով պատվերն իշխան Սահակ Բագրատունու, որը հերոսաբար զոհվել է 482-ի Ճարմանայի ճակատամարտում։ Փաստերը հավաստում են, որ պատմահայրը իր երկն ավարտել է Սահակ Բագրատունու մահից առաջ, մոտավորապես 481—482 թվականներին։

Հ. Խաչատրյանի «Քերթողահայրը» վեպում արտացոլված է մեծ պատմիչի կյանքն ու նրա անզուգական գործի ստեղծման պատմությունը։

4702080200
Խ 705 (01) 85 150—85 «S»

ԳՄԴ 8427

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1985

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Օշականում որդան կարմիր աշուն էր։ Խաղողի թանձրախիտ թփերը դեղնականաչ տերևների արանքից բացուխուփ էին անում իրենց խոպոպ ողկույզները։ Ջորս կողմը բռնած մրգահոտը Ջիլքարի պուտկներից թափվում էր Քասախի ձորը։

Գեղջավագի տան բակում առավոտվանից խնջույքի էին նստել երեսունինն այրեր։ Քառասուներորդը պիտի լիներ աստծո հյուրը։ Հայոց աշխարհում սովորաբար խնջույքի են նստում կեսօրից հետո։ Բայց գիշերով Օշական հասած Գյուտ կաթողիկոսին պատիվ տալու համար գեղջավագը շտապեց ժամ առաջ ցուցանել իր աստվածասիրությունն ու ասպնջական ոգին։

Մարդիկ շուրջանակի նստոտել էին գետնատարած գորգերի եզրերին և ուտում ու խմում էին։ Մեջտեղում, սպիտակափառ լավաշի վրա թափել էին քառասուն խորոված գառներ։ Օշականցին միշտ ճաշի է նստել առանց ախորժաբեր նգածաղիկի։ Ախորժակն ի՞նչ է, որ մարդ չունենա։ Ուտելուց առաջ ու հետո էլ օշականցին յոթ օրվա սոված ախորժակ է պահում։

Գյուտը, ծիրանագույն թեզանատի փեշերը քշտած, նստել էր հին բազմականի վրա ու ջանում էր ծածկել իր վսեմ կերպարանքը և ուշադրություն չդրավել։ Խոհերով տարված մարդու հայացքը հաճախ ամլանում է։ Հիմա այդպիսի հայացք ուներ Գյուտը, նա ոչ ոքի չէր տեսնում։

Ամենուսույց հայրապետը, որ արդեն մոտենում էր վաթսունին, խնջույքների համար չէր շրջագայության դուրս եկել։ Գյուղից գյուղ էր գնում, սրտապնդիչ մաղթանքի խոսքեր ասում նախարարներին ու շինականներին։ Չնայած Վարդանանց կռվից անցել էր տասնհինգ տարի, բայց Հայոց աշխարհում ամենքն էլ շվար էին մնացել։ Թվում էր, թե Ավարայրի ճակատամարտը դեռ շարունակվում է։ Մի կողմից պարսիկն էր խեղդում, մյուս կող-

մից՝ բյուզանդացին։ Առաջինն ուզում էր, որ հայը մոխրասեր[1] դառնա և ուրանա մայրենին։ Բյուզանդացու համար կարևոր չէ, թե հայն ում կպաշտի, թեկուզ գորտի, միայն չբարեկամանա պարսիկի հետ։ Դե, Գյուտ, թե զորություն ունես, պահիր հոտդ։ Կաթողիկոսի հետ այդպես են խոսում նախնիների ոդիները։

Գեղեցիկ այր էր Գյուտը։ Նրա դեմքին նայելիս թվում էր, թե արալեզները կենդանացրել են Արա Գեղեցիկին։ Այսքան ո՞ւշ, չէ որ Շամիրամի ժամանակներից երկու հազար տարի է անցել։

Գեղջավագի ձեռքը դիպավ կաթողիկոսի արմունկին։ Դա, իհարկե, պատահաբար չեղավ։ Տանտերն ուզում էր, որ իր մեծանուն հյուրը մասնակցի խնջույքին։ Գյուտն ասես սթափվեց. խորոված մի կտոր վերցրեց և սկսեց աչքի պոչով դիտել, թե ինչպես են ուտում խնջույքավորները։ Ապա զարմացավ, երբ ավելի ուշադիր նայեց նրանց։ Ինչ հրաշալի ախորժակ ունեն այս շինականները։

Ցերեկվա Շանթակող[2] ժամն էր։ Աղախինը մոտեցավ և ինչ-

[1] Մոխրասեր, 5-րդ դարում հայերն այսպես էին անվանում կրակապաշտ հեթանոսներին։

[2] Շանթակողը հին հայկական տոմարի ցերեկվա ժամերից մեկի անունն է։ Հնում հայերը ունեցել են իրենց ինքնուրույն օրացույցը՝ տոմարը։ Ըստ հայկական օրացույցի տարին կազմված էր 12 հիմնական (յուրաքանչյուրը 30 օր) և մեկ լրացուցիչ (5 օր) ամիսներից։ Հայկական հիմնական ամիսներն էին՝ Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից։ Լրացուցիչ ամիսը կոչվել է Ավելյաց։ Անուններ են ունեցել նաև հայկական հիմնական ամիսների բոլոր 30 օրերը և Ավելյաց ամսվա 5 օրերը։ Առաջին օրը կոչվում էր Արեգ, երկրորդը՝ Հրանդ, ապա հաջորդաբար՝ Արամ, Մարդար, Ահրանք, Մազդեղ, Աստղիկ, Միհր, Ջոպաբեր, Մուրց, Երեզկան, Անի, Գարբար, Վանատուր, Արամազդ, Մանի, Առակ, Մասիս, Անահիտ, Արազած, Գրգուռ, Կորդուք, Ծմակ, Լուսնակ, Ցրոն, Նպատ, Վահագն, Սնին, Վարագ, Գիշերավար։ Ավելյաց ամսվա օրանուններն են՝ Լուծ, Ծղջրու, Փառանստ, Արտախուլր, Սկրավորի։ Մեր նախնիները օրը (գիշեր ու ցերեկ) բաժանել են հավասար՝ 24 մասերի և անուններ տվել դրանց։ Մեզ հասած տվյալներով հայկական տոմարի առաջին բարեփոխությունը կատարել է Արտաշես Ա թագավորը (մ. թ. ա. 189—160 թթ.)։ Հավանաբար այդ ժամանակ էլ սահմանվել են հայկական ժամանունները։ Ցերեկվա ժամանուններն են՝ Այգ, Մայդ, Ջայրացյալ, Ճառագայթյալ, Շառավիղյալ, Երկրատես, Շանթակող, Հրակաթ, Հուրփայլյալ, Թաղանթյալ, Արագոտ, Արփող, գիշերվա ժամանունները՝ Խավարակ, Աղջամուղջ, Մթացյալ, Շաղավոտ, Կամավոտ, Բալվական, Խոթափյալ, Գիզակ, Լուսակաև, Առավոտ, Լուսափայլ, Փայլածու։ Այս ժամանուններում հանդիպող ավոտ մասնիկը նշանակում է ժամանակ։ Այսպես, Առավոտ նշանակում է Առի (Արևի) բացվելու ժամանակը, Շաղավոտ (գիշերվա ժամը չորսը)՝ շաղը դնելու ժամանակը և այլն։

որ բան փսփսաց գեղջավագի ականջին։ Գեղջավագը հարմար պահ որսաց և աննկատ ելավ տեղից։ Ապա դուրս եկավ բակից և սկսեց աչք ածել այս ու այն կողմ։ Կանգնեցրեց փողոցով անցնող մի պատանու։

— Դու անծանոթ մարդ չտեսա՞ր,— հարցրեց նա։

— Չէ, գեղջավագ, այսօր մեր գյուղի ճամփաների վրա ես անծանոթի չեմ հանդիպել,— պատասխանեց պատանին։

Գեղջավագը տխրեց։ Հիմա ի՞նչ անի։ Որտեղի՞ց գտնի քառասուներորդ հյուրը։ Այս ինչ ձախորդություն է։ Չէ, եթե հյուր չհայտնվի՝ նա կխայտառակվի աստծու ու կաթողիկոսի առջև։ Գեռնի տակից էլ լինի պիտի հյուր գտնել, ինքն իրեն ասաց գեղջավագը և քայլերն ուղղեց դեպի սուրբ Մաշտոցի գերեզմանը, ուր հաճախ աղոթողներ են հայտնվում Հայքի մոտ ու ծայրակալ գավառներից։

Հայոց գրերի ստեղծողի շիրիմը շատ էլ հեռու չէր գեղջավագի տնից։ Արագոտն գեղջավագը՝ այնտեղ հասավ երկու բոպեում։ Ուրախությունից քիչ մնար բացականչեր։ Մաղածածկ դեմքով մի ծերունի, հագին՝ քրքրված պարեգոտ, չոքել էր Մաշտոցի գերեզմանի վրա և անձայն աղոթում էր։

— Ո՞ղջ լեր, մարդ,— ասաց գեղջավագը։

Ծերունին նրան ուղղեց գլուխը և բարձրացավ տեղից։

— Լսիր, բարեկամ,— խոսեց գեղջավագը,— բարեհաճիր օգնել, խնդրածս այնպիսի բան չէ, որ ուժդ չպատի, խնջույքի եմ հրավիրում, ապա նայիր այս կողմը, տեսնո՞ւմ ես այն բարձր տանիքը։ Դա իմ տունն է։ Գնանք։

Եվ չսպասելով, թե ծերունին ինչ կպատասխանի, գեղջավագը բռնեց նրա թևից և իր տուն տարավ։

Իսկ տան բակում խնջույքը շարունակվում էր։ Տեղ տվեցին անծանոթ հյուրին։ Չհարցրին, թե ով է, որտեղից է գալիս։ Խորոված մի գառ էլ նրան հրամցրին։ Քիչ հետո խնջույքավորների առջև երևացին օշարակով լցված թակուլկներն ու գինով լեցուն փորեղ հազաղակները[2]։ Նորից երևաց մատռվակը և այս անգամ կաթողիկոսի առջև դրեց արծաթազօծ մի ստոման, որ լցված էր կավե կարասի մեջ պահվող յոթնամյա գինով։

[1] Թակուլկ, շրի կամ գինու կավե մեծ աման։

[2] Հազաղակ, գինու փորեղ աման, լինում է կաշվե տիկի կամ փայտե ամանի ձևով։

Օրպատը[1] չիջած՝ Գյուտը ելավ բազմականից և օշարակով լցված քմպանակը ձեռքին սկսեց ճեմել բակում։ Կամաց-կամաց ոտքի ելան նաև մյուսները։ Նրանք ուզում էին դադար առնել՝ մինչև կմատուցեին աղանդերը։

Բակի մի անկյունից ձայնեց փանդիռը։ Հետո ծոր տվեց սրտապարար երգը։ Գյուտը կանգ առավ ու սկսեց ունկն դնել հմայված։ Գեղջավարը բազմականը մոտեցրեց կաթողիկոսին։

Գյուտը չզգաց, թե ինչպես նստեց բազմականի վրա։ Օշականցի գեղջուկի երգը խուտուտ տվեց նրա հոգին։ Երգը կանչ է, որին ամեն մարդ յուրովի է արձագանքում։ Եթե կողքին մարդիկ չլինեին՝ Գյուտը լաց կլիներ։ Չէ որ երգից հաճախ փլվում է մարդու սիրտը։

Փանդիռի նվագը շարունակվեց, առաջին երգին փոխարինեց երկրորդը։ Ապա կաթողիկոսին հաճույք պատճառելու համար սկսեցին գովեստի երգեր ասել խնջույքավորներից շատերը։

— Գուցե մի բան էլ դու երգես,— ասաց շինականներից մեկը իր կողքին անհանգիստ շարժումներ կատարող անծանոթ ծերունուն։

Ծերունին չեմուչում արեց։ Շինականը, մի թեթև հրելով, ծերունուն առաջ մղեց, բայց անծանոթը խպնելով ետ քաշվեց։

— Երգի՛ր, ծերուկ, մի՛ ամաչիր,— ասացին այս ու այն կողմից։

— Ես մի հասարակ պանդուխտ եմ, ի՞նչ կարող եմ երգել,— փորձեց հրաժարվել ծերունին։

Շինականներից մեկը մոտեցավ անծանոթին և շոյելով նրա ճերմակ մորուքը, ասաց.

— Երգիր, անծանոթ բարեկամ, քո աչքերից է երևում, որ կարող ես երգել։

Հանկարծ ծերունու դեմքը այլափոխվեց։ Գետնակոր դլուխը վեր բարձրացնելով և կուրծքը տնկելով՝ նոր մարդ դարձավ նա։ Բոսորը վառեց նրա երեսը, աչքերը փայլեցին, շրթունքները շարժվեցին վարժ նվագարանների պես և նրա ծերացած ծոցից լսվեց մի ձայն՝ նման հնացած այն եղանակին, որ ինչքան հնանում, այնքան ավելի է քաղցրանում։

Մարդիկ ունկնդրում էին ապշած ու անշշունչ։ Իսկ ծերունու ձայնը գնալով ավելի հնչեղ էր դառնում.

[1] Օրպատ, երեկո։

Ով արքայակերպ տեր քահանայապետ նուրբ
և հովիվ բարի,
Որ երկնային նմանեալ հրեշտակատեսիլ,
Երգեմ քեզ երգս, քեզ երգս, երգեմ քեզ երգս,
Երգեմ քեզ երգս...

Երգը դեռ չվերջացած, Գյուտը մի կողմ հրեց տակի բազմականը և, ոտքի կանգնելով, բացականչեց.

— Ո՞վ ավետական ձայնս, ո՞ տայր ինձ տեսանել զնա։ Այդ դո՞ւ ես, Մովսես, չէի՞ ճանաչի՝ եթե չլսեի երգդ։ Փառք ամենակարող աստծուն, նա լսեց իմ աղոթքները։ Որքան ժամանակ է՝ ես փնտրում եմ քեզ։

Հետո մոտեցավ ու գրկախառնվեց ծերունու հետ։ Խնջույքավորները ուրախ բացականչություններով շնորհավորեցին մտերիմների այս անսպասելի հանդիպումը։

* * *

Մովսեսը զարմացավ, երբ, դուրս գալով կաթողիկոսական կառքից, Գյուտի հետ հայտնվեց Դվինի մայր տաճարի գավիթում։

— Դու ինձ ասացիր, թե կաթողիկոսարան ենք գնում,— տրտմաձայն ասաց նա,— մինչդեռ սա Դվինն է։

— Ես ճիշտ եմ ասել, Մովսես, մի քանի օր է, ինչ կաթողիկոսարանը Վաղարշապատից փոխադրել եմ այստեղ՝ Դվին։

— Դա քո կամքո՞վ եղավ, թե՞ մարզպանն ստիպեց։

— Իմ կամքով, Մովսես, իմ կամքով ու իմ ցանկությամբ։

— Բայց դա արդար վճիռ չէ, հայրապետ, թափուր թողնել էջմիածնի մայր տաճարը, ուր ամեն գիշեր իջնում են մեր սրբերի՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի անմահ ոգիները։

— Իմ նպատակն է շտկել մի հին սխալ, Մովսես, որի պատճառով հաճախ անսպասելի արհավիրք է գալիս Հայոց աշխարհի գլխին։ Հայքի քաղաքամայրը, նախագահ քաղաքը Դվինն է, այստեղ է նստում պարսիկ մարզպանը, այստեղ են ժողովների գալիս հայ նախարարները։ Միշտ չէ, որ նրանք հրավիրում են կաթողիկոսին։ Հաճախ վճիռ են կայացնում, հետո այդ մասին տեղյակ պահում ինձ։ Այդ պատճառով էլ ես որոշեցի իմ աթոռանիստը այստեղ փոխադրել։ Ես պետք է նստեմ այնտեղ, ուր նստում են երկրի իշխանավորները։

Մովսեսը Դվինում մնաց մի քանի օր։ Ասես վերադարձել էր

հնարավոր համփորդությունից։ Գյուտն օգնում էր, որ նա կարդի բերի իրեն, հանդերձափոխվի։ Իսկ երբ կաթողիկոսը նրան կապտաթույր մի շուրջառ նվիրեց, Մովսեսը տարակուսանքով դիմեց իր հին ընկերոջը.

— Հայրապետ, իմ ինչի՞ն է պետք այս շուրջառը, սա նվիրիր քո եպիսկոպոսներից մեկին։

— Այսօրվանից ես քեզ կարգում եմ Բագրևանդի եպիսկոպոս,— խորամանկ ժպիտը թաքցնելով պատասխանեց Գյուտը։

— Ի՞նչ,— հանկարծակիի եկավ Մովսեսը։

— Մի քանի ամիս առաջ վախճանվել է Բագրևանդի եպիսկոպոս, հանճարաշատ իմաստասեր Եղնիկ Կողբացին։ Այսօր Հայքում ապրողներից ոչ ոք, քեզնից բացի, արժանի չէ փոխարինելու նրան։ «Եղծ աղանդոցի» հեղինակի թափուր բազմոցին միայն դու կարող ես նստել հանգիստ խղճով։

— Դու նույնիսկ չես ուզում առնել իմ համաձայնությո՞ւնը։

— Ոչ, Մովսես, հիմա քո կարծիքը կարևոր չէ։ Վաղն ութ մեկնիր Բագրևանդ։ Գնա տիրություն արա գավառիդ հոտին և ժամանակ գտիր զբաղվելու դպրությամբ։ Քո կյանքի մատենիկ տարիները չպետք է այդպես ամուլ անցնեին։ Թափ տուր քեզ, Մովսես, և թող աշխարհն ու մարդիկ տեսնեն քո պերճապաճույճ ոգին։ Ես գիտեմ, որ դու կորովի այր ես։ Բայց հաջողության հասնելու համար պետք է սրտիցդ վանես թշնամիներիդ հանդեպ ունեցած ոխը։ Դու կծու լեզու ունես, այնպես մի արա, որ քո ամեն մի խոսքը տտիպ թողնի մարդկանց հոգում։

Մովսեսը չպատասխանեց Գյուտին։ Զգաց, որ նրա մեջ ավելի շատ կաթողիկոսն է խոսում, քան հին ընկերը։ Եվ ընկրկեց։

Դվինում անցկացրած այդ գիշերը ամենահուզումնալիցն էր Մովսեսի կյանքում։ Գյուտի հետ հանդիպումը շուտ տվեց ամեն ինչ։ Ինչպես ստորոտից լեռան կատար ելնես առանց լանջերին ոտ դնելու։ Այդպես է մարդկային կյանքը, ոչ կատարի վրա մնալն է հաստատուն, ոչ էլ ստորոտ գլորվելը։

Ոչ մի արիագնյան թել[1] չի կարող մարդուն անխոտոր առաջնորդել մանկության եզերքներից մինչև աշնանամուտ։ Մի թելը ոչ ոքի տեղ չի հասցրել։ Կյանքի դարձդարձիկ ճամփաներում այն հաճախ է կտրվում և մարդն ստիպված է լինում ետ դառնալ, գտնել թելի ծայրն ու ագուցել։ Բոլոր մարդկանց կյանքի թելերն էլ ագույցներ ունեն, մեկինը շատ, մյուսինը՝ քիչ։ Բայց երբեմն մարդկանց մեծ մասը կորցնում է իր թելի առաջը և ագույց-ճարմանդ անում ուրիշի թելից։ Հետո կարծում է, թե ինքն իրեն է շարունակում։

Բոլոր ագույցները կորուստներ են։ Մովսեսի կյանքի թելի վրա ագույցներն այնքան շատ են, որ դրանք նմանվում են չիրի շարանին։ Նրա թելն սկսվում է մեղրաբուխ Տարոնից։ Այստեղ, Մեղրագետի ձախ ափին է գտնվում Մովսեսի հայրենի գյուղը՝ Խորոնքը։ Երազային աշխարհ է Մեղրագետի հովիտը։ Փարթամ դաշտերն ու դալարագեղ այգիները լցված են ծաղկանց բուրմունքով։ Ամռանը ծաղիկների ու ծառաթփերի վրա վաղորդյան ցողի պես նստում է այն մանանա-մեղրահյութը, որ տարոնցիները անվանում են գազպեն։ Տարոնցի կանայք հավաքում են աստվածային այդ պարգևը և պատրաստում ախորժահամ մեղրաբլիթներ։ Աշխարհում գազպենից քաղցր բան չկա։ Պատանի Մովսեսը կանգնում էր իրենց տան կտուրին և դիտում չորս կողմը։ Ինչե՞ր ասես, որ չէր տեսնում նա։ Առջևում Մեղրագետն էր, որ հեղասահ շարժումներով գնում-խառնվում էր Արածանի մայր գետին։ Աջ կողմից, հեռու տեսածիրում երևում էր Նեմրութի ամպածրար կատարը։ Մովսեսը գիտեր, որ Նեմրութի թիկունքում Վանա ծովն է։ Պատանին տենչում էր շատ բան տեսնել, բայց կտուրը կարճընկեց էր դարձնում նրա հայացքը։ Տասնհինգ տարեկանում սկսեց շրջել հոր հետ և տեսավ համարյա ամբողջ Տարոնը՝ Մուշը, Արգինը, Արտոնը, Փղոնը, Ցրոնը, Աստղոնը, Հացեկաց, Զորկոնը, Ներգին, Ցողոմը գյուղերը, Աշտիշատ և Թիլ ավանները, Ողական ամրոցը, Օձ քաղաքի հնամենի բերդը, Վարդենիսը, Տատրագոմը։

Մովսեսի հայրը՝ Ստեր, իր արձակ այգում աճեցնում էր ամենալավ սխտորը Տարոնում։ Այնքան շատ էր աճեցնում, որ մի տարվա բերքը հերիքում էր ինն-տասնից-հարյուր ընտանիքի։ Բերքահավաքից հետո Ստեր ձի էր նստում, շրջում գյուղերը և անվճար սխտոր բաժանում սրան-նրան։ Բոլոր գյուղերում նա բարեկամներ ուներ։ Այդ բարեկամությունը Ստերի ապուպապերից էր գալիս։

Մեղրագետի հովտով է անցնում աշխարհի ամենահին ճա-

[1] Արիագնյան թել, ըստ հին հունական դիցաբանի Արիագնեն Կրետեի արքա Մինոսի դուստրն էր, որն օգնեց Թեսևսին՝ դուրս գալու լաբիրինթոսից։ Արիագնեի տված կծիկի թելի ծայրը Թեսևսը կապեց լաբիրինթոսի դռանը, որպեսզի վերադարձին չմոլորվի։

նապարհը, որն սկսվում էր Հարավի հեռավոր ավազուտներից և Արածանիի ձախ ափով բարձրանալով հասնում Բագրևանդ։ Այդ մեծ ճանապարհի վրա է խորոնքը։ Ասում են գյուղը խորոնք է կոչվել Հայկ նահապետի ուսոր խոռի անունով։ Այս խոռից է առաջացել և խորխորունիների ազգատոհմը։ Մովսեսի ապուպապերը ազատագարմ խոռի սերնդից են։ Խորոնքով են անցնում ու դառնում արքայական զորագնդերը, առևտրական քարավանները, նավասարդյան տոնախմբությունների մասնակիցները։ Ով ասես, որ չի անցնում այստեղով։ Այստեղ հյուրընկալվում էր ամեն ոք։ Հնամյա, ուներ գերդաստան էր։ Մովսեսենց տան գավիթի հորերում այնքան ցորեն էր ամբարված, որ Ստևի ընտանիքին կբավարարեր յոթ-ութ տարի։

Համայն Հայոց աշխարհում միայն Մովսեսի հայրն էր կրում Ստև անունը։ Ստև նշանակում է ուղտի մազ, բուրդ։ Սակայն Տարոնում ոչ ուղտ կա, ոչ ստև։ Շատ տարիներ առաջ Բագրևանդ գնացող նավասարդավորներից մեկը Ստևի հորը մի ուղտենի նվիրեց։ Երբ Ստևը ծնվեց՝ սկսեցին նրան փաթաթել այդ ուղտենու մեջ։ Տղան սիրում էր խաղալ ստևի հետ, որի պատճառով էլ նրա անունը դրեցին Ստև։ Գյուղական ոչ մի գործ չկար, որ Ստևը չկարողանար անել։ Տարին բոլոր մի ոտը տանն էր, մյուսը՝ այգիներում ու դաշտերում։

Մովսեսի մայրը՝ Արեգուհին, ուներ բարալիկ իրան։ Խորոնքում ոչ մի կին կամ այր այդքան բարձր հասակ չուներ։ Կողքկողքի կանգնելիս բարձրահասակ Ստևի գլուխը հազիվ էր հասնում Արեգուհու ուսին։ Սակայն խորոնքում Արեգուհին հայտնի էր ոչ միայն իր բարձր հասակով։ Նա չէր կարողանում լացել։ Ինչ էլ պատահեր՝ նրա լացը չէր գալիս։

Ստևի ու Արեգուհու որդիներից՝ Մովսեսը ավագն էր, նրանից վեց տարով փոքր էր քույրը՝ Աշխենը, ինը տարով՝ կրտսեր եղբայր Մամբրեն։ Տան շարաճճին Աշխենն էր։ Նա սիրում էր քաշել եղբայրների մազերից կամ անսպասելի ջուր ցողել նրանց դեմքերին։ Երբեմն էլ կամթում էր և ցավեցնում Մովսեսի ու Մամբրեի մարմինները։

— Դու իսկական աշխեն ես՝ փուշ, սուր փշերով ծաղիկ, դրա համար էլ անունդ Աշխեն է,— փորձում էր քրոջը խայթել Մովսեսը, սակայն տեսնելով, որ նա բանի տեղ չի դնում իր ասածները, վախեցնում էր,— եթե շարունակես չարություններ անել՝ Հուշկապարիկը կգա և քեզ կտանի։ Դու չգիտե՞ս էլ, թե ինչ բան

է հուշկապարիկը, դա ճիվաղ է՝ կես մարդու և կես ձիու կերպարանքով, որ ապրում է Արածանիի ջրերում։

Շաբաթվա մեջ երեք անգամ հարևան Քարձոր գյուղից խորոնք էր գալիս ուսուցիչ Նարոտը։ Տեղ էր հասնում թե չէ՝ Մովսեսենց տան մեծ պատշգամբը վերածվում էր դպրոցի։ Հինգ-վեց փոքրիկ տղաներ հավաքվում էին ուսուցչի շուրջը, և դասն սկսվում էր։ Նարոտը մեկին հայերեն տառերն էր սովորեցնում, մյուսին՝ տառապալը, երրորդին՝ կարդալը։ Մի հաստ մատյան ուներ, հետը բերում էր, հետը տանում։ Այդ մատյանում գրած ամեն ինչ երեխաները պիտի անգիր անեին չորս-հինգ տարում։ Ստևը Մովսեսին ասել էր. «Զավակս, լսիր իմ պատվիրանը, մինչև կյանքիդ վերջը աղոթքներիդ մեջ հիշիր նրան, ով քեզ ուսուցանել է հայկազուն տառերը։ Աստված պատժում է իր ուսուցչին մոռացող մարդուն»։

Մովսեսը հոր օգնությամբ փայտից պատրաստել էր մաշտոցյան երեսունվեց տառապատկերները, յուրաքանչյուր տառից՝ հիսունից-յոթանասուն հատ։ Դրանցով նա սերտում էր Նարոտի տված դասերը, ապա տառաշարում հարազատների անունները։ Աշխենը երբեմն թաքցնում էր տառապատկեր փայտիկները։ Մովսեսը ստիպված էր լինում տեղի տալ քրոջ քմահաճույքներին։

— Սա այբն է, հայոց այբուբենի առաջին տառը,— քրոջ գլխին ուսուցիչ էր դառնում Մովսեսը։— Քո անունն այս տառով է սկսվում։— Հետո տառապատկերներով կազմում էր Աշխեն անունը։

Սկզբում Աշխենը ճանաչեց իր անվան հինգ տառերը։ Բայց հետո ստիպեց, որ եղբայրը սովորեցնի նաև մյուս տառերը։

Մովսեսը հիշում էր ոչ միայն Նարոտի տված դասերը։ Հաճախ երեկոները մեծ պատշգամբում նստում էին Ստևի տուն եկած հյուրերը, գազպենի օշարակ խմում և պատմում հին ասքեր ու առասպելներ։ Մովսեսն ունկնդրում էր ամեն ինչ և հիշում։ Հիշո՞ւմ։ Չէ, հիշե՞լն ինչ է որ, բոլոր մարդիկ էլ կարող են հիշել։ Մովսեսը չէր մոռանում ոչինչ, ոչ այսօրվա, ոչ էլ հինգ տարի առաջ լսածը։

Մի անգամ հոր հետ հյուր գնաց Հացեկաց գյուղը։ Գիշերը մնացին ծերունի Վարդանի տանը։ Ստևն ու Վարդանը հին մտերիմներ էին։ Նույն երեկո Վաղարշապատից Հացեկաց էր եկել

Վարդանի տղան՝ մեծ բաբունապետ Մեսրոպ Մաշտոցը։ Այդ տարիներին համայն Հայոց աշխարհում մարդիկ, ինչպես աստծու, պլուխ էին խոնարհում նրա առջև։ Հայերի համար Մաշտոցը դարձել էր արքայից արքա, անհաղթ զորապետ, մի նոր Քրիստոս։ Հայոց գրերի ստեղծողին ավելի ջերմեռանդորեն էին պաշտում, քան մինչ այդ պաշտել էին որևէ աստծու։ Տասնվեցամյա Մովսեսի ուրախությանը չափ չկար։ Մաշտոցը նախ հարցատարափի ենթարկեց պատանուն, ապա ստուգեց, թե նա ինչպես է կարդում։

— Բավական բան գիտես,— ասաց մեծ բաբունապետը Մովսեսին, բայց պետք է սովորես և այնքան բան իմանաս, որ ինքդ քեզ ասես. «ինչքան քիչ բան գիտեմ ես»։

Այդ դեպքից հետո Մովսեսը իր տառապատկեր փայտիկները բաժանեց Աշխենին ու Մամբրեին և հոր ուղեկցությամբ ճանապարհ ընկավ դեպի Վաղարշապատ։ Դեռ Երասխ գետը չանցած՝ Տափերական կամրջի մոտ Մովսեսն իր աչքով տեսավ Տիզբոն մեկնող Հայոց Արտաշիր Արշակունի թագավորին։ Այդ գնալն էր, որ գնաց։ Այնուհետև Հայոց աշխարհը զրկվեց գահատոհմից և Մովսեսը ոչ թագ տեսավ, ոչ թագավոր։ Հմայքից զրկվեց նաև քաղաքամայր Վաղարշապատը։ Էլ ի՞նչ քաղաքամայր, երբ արքունիք չկա։ Սակայն Մովսեսի համար քաղաքամայր կամ նախագահ՝ դահերեց քաղաք էր այն վայրը, ուր ապրում էր ոչ թե երկրի տիրակալը, այլ հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը։

Էջմիածնի մայր տաճարի արևելյան կողմում տեղավորված էր առաջին հայկական դպրոցը։ Դա կիսագետնափոր խցերի շարան էր՝ խցոնք, ուր ներանձնանալով ճգնում-ուսանում էին Մաշտոցի սաները։ Այդպիսի մի խուց մտավ Մովսեսը, որը նրա համար և դասարան էր, և կացարան։ Դա 428 թվականի Հրոտից ամսի Վարագ օրն էր։ Հենց որ որդու անունը գրանցվեց մագաղաթյա մեծ մատյանում՝ Ստեր հրաժեշտ տվեց Վաղարշապատին և բռնեց տան ճամփան։

Խուցն ավելի ժրաջան դարձրեց Մովսեսին։ Մաշտոցն ամեն օր շրջում էր խցերը, ստուգում, թե ով ինչ է անում, ապա ուսուցանում էր, շտկում, հղկում սովորողի միտքը։ Մեծ բաբունապետը շուտով նկատեց, որ իր աշակերտներից ոչ ոք մագաղաթի

վրա տառերն այնպես գեղեցիկ չի քերթում[1], ինչպես Մովսեսը։ Դրա համար էլ տաճարի դիվանի մատյաններում ամեն ինչ սկսեցին գրել տալ Մովսեսի ձեռքով։ Շաբաթվա մեջ մեկ-երկու օր Մովսեսին դաս էր տալիս կաթողիկոս Սահակ Պարթևը։

Օրվա մեջ երկու-երեք ժամ որպես մշակ Մովսեսը բանում էր տաճարի այգում։

— Մտքի մշակը,— ասում էր մեծ բաբունապետը իր աշակերտին,— պետք է նաև հողի մշակ լինի։

Մի տարի հետո Մովսեսին սկսեցին սովորեցնել նաև գիսորերեն ու հունարեն։

Տաճարի այգու կողքին վաճառական Սորսորի ագարակիկն էր, որը հարևան հողակտորներից սահմանազատվում էր փշատենիների շարանով։ Սորսորի ագարակիկն իսկական այգեստան էր։ Այստեղ աճում էր ամեն ինչ՝ խաղող, խնձոր, սալոր, ճերմակ ու այլ թերթիկներով վարդեր։ Սորսորի ագարակիկն առավել գեղեցկաշուք էր դառնում, երբ հայտնվում էր վաճառականի դուստրը Կամարան, որի ամեն ինչը գեղնաթույր էր՝ և՛ այտերը, և՛ փնջեղ գիսակը, և՛ շրթունքները, և՛ շրջազգեստը, և՛ մուլկերը[2]։ Ոնց որ փշատենուց պոկված մի ճյուղ։ Տասնհինգամյա օրիորդի միայն աչքերն էին պլուզ[3]։ Կամարան ագարակիկ էր մտնում գեղեցկանազ քայլվածքով։ Հենց որ օրիորդը երևում էր՝ Մովսեսը կոթնում էր տաճարի այգու ցանկապատին և հմայված նայում նրան։

Ոչ մի բան չի կարող մարդկային հայացքն այնպես զուլալ դարձնել, ինչպես սերը։ Այդ պահին մարդու հոգում ոչինչ չի մնում ծալծլված։ Ոչ Կամարան, ոչ էլ Մովսեսը չիմացան, թե ինչպես եղավ, որ դարձան միմյանց այդքան հարազատ։

Դատեր սերը չվրիպեց Սորսորի հայացքից։ Այդ մասին իմացավ նաև Կամարայի մայրը՝ Հռիփսիմեն։

Վաճառականը չկշտամբեց դստերը։ Ընդհակառակը, նա ուրախ էր, որ Կամարան Մովսեսին է սիրում։ Մովսեսը Մեսրոպ Մաշտոցի աչքի լույսն էր։ Մեծ բաբունապետը Սորսորին հավաս-

---

[1] Քերթել, քերել, գրել։ Հնում այդպես էին կոչում մագաղաթի վրա գրելը, որից առաջացել են քերթող (բանաստեղծ, նաև՝ քերական), քերթվածք (գրական երկ), քերթողահայր (բանաստեղծների, գրող-պատմիչների հայր, ժամանակակիցները այս մականունն են տվել Մովսես Խորենացուն) բառերը։

[2] Մուլկ, կոշիկի տեսակ հին Հայաստանում։

[3] Պլուզ, բաց կապտավուն։

տիացնում էր, որ իր աշակերտը մի օր կդառնա երևելի այր։

Երբեմն որդուն տեսնելու համար Խորոնքից Վաղարշապատ էր գալիս Ստեր։

Մովսեսին թվում էր, թե հենց որ հինգ տարին լրանա, ինքը Կամարային հարս արած՝ կվերադառնա Տարոն։ Նա շատ էր կարոտել մորը, քրոջն ու եղբորը։ Սակայն, երբ Մեսրոպ Մաշտոցն ու կաթողիկոս Սահակ Պարթևը կանչեցին Մովսեսին ու զրուցեցին հետը, հասկացավ, որ Տարոնի փոխարեն ինքն ուրիշ տեղ պիտի գնա։

Կաթողիկոսական սրահում կողք-կողքի կանգնեցին երեք դասընկերներ՝ Մովսեսը, Գյուտն ու Հովհանը։ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը նայեցին իրենց աշակերտներին ու ժպտացին։ Կարծես թե նոր նկատեցին, որ երեքն էլ նույն հասակն ունեն, մի մազ ոչ ավել, ոչ պակաս։ Երեքն էլ գանգրագիսակ են, լայնաճակատ։ Սակայն իր սարափալ ու այտեղ դեմքով Գյուտն առանձնանում էր։ Վսեմաշուք էր նաև նրա հայացքը։ Գյուտն ու Հովհանը եղբորորդիներ էին, բայց առաջինը ծնվել էր Տարոնում, երկրորդը՝ Արշարունիքում։ Խորոնքից շատ էլ հեռու չէր Գյուտի հայրենի գյուղը՝ Արահեզը։ Մովսեսն ու Գյուտը մանկության ընկերներ էին և հաճախ էին հանդիպել ու խաղացել Մեղրագետի ափերին։ Ստեն իր ընտիր սիտորների բաշխումն սկսում էր Արահեզից և առաջինն իշնում էր Գյուտենց տանը։ Եվ Գյուտի, և Մովսեսի առաջին ուսուցիչը նույն մարդն էր՝ Նարոտը։ Արահեզում ամենաքաջ այրը Գյուտի հորեղբայր Սեմարն է եղել։ Տասնին տարեկանում նա մի լավ ծեծել էր գեղջավագին և, խուսափելով դատ ու դատաստանից, հեռացել Արահեզից ու հաստատվել Արշարունյաց գավառի Սախնոտ գյուղում։ Սեմարն այստեղ ամուսնացել էր Մանդակունյաց տոհմից մի օրիորդի հետ, որից էլ ծնվել էր Հովհանը։ Եղբորորդիներ Գյուտն ու Հովհանը մինչև Վաղարշապատ գալը իրար չէին տեսել։

Սահակ Պարթևն այնպես էր խոսում՝ ասես իր առջև կանգնած է ճակատամարտի դաշտ իշնող մի ամբողջ բանակ.

— Ալեքսանդրիայից դուք պիտի վերադառնաք գիտությանն այնպիսի բեռով, որ կարողանաք բաժին հասցնել բոլոր հայերին։ Քուն թե արթուն դուք պարտավոր եք ի միտ առնել Հայոց աշխարհի համար այս դաժան ժամանակները։ Վերացել է Արշակունյաց հայազարմ արքայատոհմը։ Մեր աստվածակերտ աշխարհին տիրելու փափագով հիմա թագեր են ձուլում օտար գլուխների համար։ Թթացել է հայոց հավքունի թուրը։ Ոչ ոք չի կարող ասել, թե այն երբ պիտի փայլատակի իր վաղնջական ուժով։ Աստված մեր ձեռքին միայն մի զենք է թողել՝ հայերենը։ Մենք պետք է հաղթենք հայերեն խոսելով։ Հայերեն պիտի խոսենք և միմյանց, և աստծու հետ։ Բայց աստծու հետ անկաշկանդ խոսելու համար դեռ կատարելապես հայաբարբառ չէ մեր սուրբ գիրքը՝ Աստվածաշունչը։ Տարիներ առաջ մենք Եղեսիա ուղարկեցինք մեր աշակերտներ Հովսեփ Պաղնացուն և Եզնիկ Կողբացուն։ Նրանք պետք է առաջին սուրբ հայերի գրած գրքերը թարգմանեին մեր լեզվով ու բերեին, որպեսզի այնուհետև նույն գործով մեկնեին Բյուզանդիոն։ Սակայն լսելով մի քանի աղալեզու՝ ստախոս մարդկանց, ելան և ինքնակամ ուղևորվեցին Բյուզանդիոն։ Իրավ է, նրանք հմտավարժ թարգմանիչներ դարձան, բայց ոչ Հովսեփ Պաղնացին ու Եզնիկ Կողբացին, ոչ էլ այդ տարիներին նրանց հետ Բյուզանդիոնում ուսած Ղևոնդ Վանանդեցին, Կորյունը, Հովհան Եկեղեցացին ու Արձան Արծրունին չկարողացան սուրբ գիրքն այնպես թարգմանել, որ մենք ասենք՝ ամեն ինչ աստվածահաճո է, հրաշագեղ, ամեն բառ իր տեղում է։ Գործը թերի է մնացել։ Այդ պատճառով ձեզ Ալեքսանդրիա ենք ուղարկում, որպեսզի կատարելագործվեք այնտեղի ճեմարանում, սովորեք պանծալի հունարենը և վերադառնալուց հետո եղած թարգմանությունը նորոգելով է՛լ ավելի հայերենախոս դարձնեք Աստվածաշունչը։

Ուման համար հեռավոր Եգիպտոս գնալը Գյուտի ու Հովհանի սրտովն էր։ Ինչո՞ւ չուրախանային. կգնան, կուսանեն մի քանի տարի և կվերադառնան գիտություններ դարձած։ Մովսեսին մտահոգում էր ուրիշ բան։ Ի՞նչ պիտի անի Կամարան։ Կսպասի՞։ Չէ որ առանց Կամարայի ինքը չի կարող ապրել աշխարհում։

Վաղարշապատից մեկնելուց առաջ Մովսեսը Սորսորի ագարակիկում հանդիպեց Կամարային։ Աղջկա հանդերձը նույն դեղնափունջն էր, որն ասես սրտահաճո բուրմունք էր արձակում։ Կամարան թովում էր, կայտում։

— Այնպե՞ս ես ցնծում, կարծես իմ գլխին փեսայի թագ են դնում,— զարմացած ասաց Մովսեսը։— Չէ որ ես պանդխտության եմ մեկնում, տիրելու փոխարեն ուրախանո՞ւմ ես։

— Մարդ պետք է հարազվարճ լինի։ Մեր աղխում սովորություն չկա հարազատին որևէ տեղ ճանապարհելուց առաջ տրխրել։ Իսկ քեզ՝ ուր էլ գնաս՝ հովանի կլինի իմ սերը։ Եթե մեր սե-

ը մոռանաս՝ կդառնաս անհանճար ու. Լեթան քեզնից կխլի բոլոր այն գիտելիքները, որոնք պայծառացնում են միտքդ։ Ես կսպասեմ քեզ անտրտունջ։ Եթե հանկարծ օտար երկնքի տակ քեզ վտանգ սպառնա՝ ես դեմ կանեմ իմ փոքրիկ վահանը՝ ասպարաբեկը, և հարվածն ինձ վրա առնելով կփրկեմ քեզ։

Աղջկա արբշիռ բույրը պտտեցրեց Մովսեսի գլուխը, և տղան չզգաց, թե նրան ինչպես առավ իր գրկի մեջ։

Սակայն Մովսեսը չկարողացավ երկար ըմբոշխնել երանելի պահը։ Աղջիկը մի գազպեն համբույր տվեց, ապա պոկվելով նրա գրկից, տուն փախավ։

Վաղարշապատի վրա իջնում էր ամենահաճ օրպատը։

Հաջորդ օրը, արևագալին, Հովհանը, Գյուտն ու Մովսեսը հավաքվեցին մայր եղեկեցու բակում և ակն ածեցին երկնքին։ Անձրևաթափ ամպի հետք չկար։ Եթե ամպի մի ծվեն կամ մլարի մի նշան էլ լիներ՝ նրանք չէին կարող ճանապարհ ընկնել։ Այդպես էին պատվիրել և ուսուցանել Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը։

— Միգապատ օրը ոչ աղուն առ շալակդ, ոչ ճամփա ընկիր օտար տեղ։

Կառապանը երիտասարդներին մի-մի ողկույզ խաղող տվեց և ագատ ձին սկսեց լծել կառքին։

— Սա ազոխ է, խակ խաղող,— ասաց տղաներից մեկը։

— Ոչինչ, կերեք, օրինաց կարգ է, օտար երկիր մեկնելուց առաջ կամ պիտի մի ըմպանակ հայկական գինի խմել կամ մի ողկույզ խաղող ուտել։ Ամեն ազգ՝ ազգատոհմ մի սովորություն ունի, մերն էլ դա է։ Հիմա կստուգեմ անիվի ալը՝ լիսեռը, ու կշարժվենք։ Մի տխրեք, իմ պոչատ ասպով ճամփա գնացողի ոտը քարին չի դիպչի։ Ձեր տարիքում մարդ ահ չի ունենում։ Ահը հետո է գալիս, երբ մարդ գլորած է լինում իր կյանքի կեսը։ Ասացին, որ երեքդ էլ վարժ դպիրներ եք, գնում եք, որ ավելի վարժվեք, մոռացա, ի՞նչ էր այդ քաղաքի անունը...

— Ալեքսանդրիա, Եգիպտոսի ոստանը։

— Հա, այդ Ալեքսանդրիան շա՞տ է հեռու։

— Մեծ ծովի ափին է։

— Ես ծով չեմ տեսել, բայց ա՜յ, լսո՞ւմ եք, այս առվակի փչփչոցը չեմ փոխի մեծ ծովի հետ։ Կարճ ասած, ուր էլ գնաք՝ հայոց առվակները հիշեք։ Օտար ծովը ինչքան էլ մեծ լինի՝ հայի

համար կանէանա ինչպես փրփուր։ Օտարաշուրթ դառնալը նույնն է, ինչ ծնողին ուրանալը։ Ասելս այն է, որ փորձանքի չհանդիպեք։

Կառքը շարժվեց և դուրս գալով քաղաքի դարպասներից՝ մտավ արձակ դաշտը։ Կառապանը վերջացրեց իր խոսքը և մինչև Արտաշատի Տափերական կամրջին հասնելը չխոսեց.

Հրաժեշտ տալիս կառապանը իր վերարկուի գրպանից հանեց և Գյուտին, Մովսեսին ու Հովհանին մի-մի փունջ ուրց-ծոթոր նվիրելով, ասաց.

— Ինչքան պահեք՝ կբուրի։ Հենց որ նկատեք, որ այլևս չեք զգում սրա բույրը՝ վերադարձեք։ Աստված թող պահպանի ձեր ուժն ու կորովը։ Ամեն։

Մարգար ամսի Արեգ օրն էր։

Այդ օրից սկսած Գյուտը, Մովսեսն ու Հովհանը մինչև Ալեքսանդրիա հասնելը շատ կառքեր փոխեցին։ Բասենի լեռնանցքով անցնելիս հաղիվ ազատվեցին ձնաստույգից։ Ամառ էր, բայց ոլոր ճանապարհներին տեսան նաև ձմեռ, գարուն ու աշուն։ Մի անգամ Հայոց Միջագետքով անցնելիս սաստիկ քամին շրջեց նրանց կառքը։ Բարեբախտաբար տղաներին ոչինչ չպատահեց։ Մի անգամ էլ նրանց ճանապարհը փակել էր օձերի մի վտառ։ Ստիպված էին ետ դառնալ և ուրիշ տեղով անցնել։ Եգեսիայում մնացին մի քանի ամիս։ Հետագայում իր ուսումնապատումի էջերում Մովսեսն այսպես պիտի գրեր. «...Հասանք Եդեսացոց քաղաքը, թեթևակի նավեցինք դիվանի խորքերի վրայով, այնտեղից անցանք սուրբ տեղերին երկրպագելու և կարճ ժամանակ պաղեստինացոց ուսմամբ պարապելու։ Այսպիսի շրջագայությամբ մտանք Եգիպտոս, այն հռչակված աշխարհը, որ զերծ է անչափ ցրտից և տոթից, հեղեղներից և երաշտից...»։

Աշխարհի յոթ հրաշալիքների նահապետը Եգիպտական Քեոփս փարավոնի բուրգն է, վեցերորդ հրաշալիքը՝ Ալեքսանդրիայի փարոսը։ Եգիպտացիները հպարտանալու իրավունք ունեն՝ յոթ հրաշալիքներից երկուսը նրանց հողի վրա է։

Ահա և հռչակավոր Ալեքսանդրիան՝ կառուցված Մեծ ծովի ափին, Ռակոտիս ձկնորսական գյուղակի տեղում, Նեղոսի գետաբերանի արևմտյան եզրին։ Այս քաղաքը հիմնադրել և իր անունով է կոչել Ալեքսանդր Մակեդոնացին յոթհարյուր վաթսունվեց տարի առաջ։ Այն ժամանակ պղտոր Նեղոսը քաղաքին մոտենալով բաժանվում էր տասնմեկ վտակի։ Հիմա, երբ Մով-

80621

սեսը, Հովհանը և Գյուտը հասան այստեղ, Նեղոսն արդեն տասներկու վտակով էր թափվում Մեծ ծովը։ Ամեհի Նեղոսը վարարում էր առանց մոնչոցի։ Երբեմն նրա ծովացած ջրերը խառնում են աջ ու ահյակ ափերի ագարակների ու ագարակիկների բոլոր սահմանները։ Խաղաղվելուց հետո չես կարող որոշել, թե ում հողակտորը որտեղ է եղել։ Եվ սահմանների համար վեճ ու կռիվ էր սկսվում։ Եգիպտացիներն ստիպված եղան հնարել սպանակը՝ այն չափող գործիքը, որով դյուրությամբ որոշում էին հողակտորների սահմանները։

Քաղաքի հարավային մասում էր Մարեոտիս արհեստական լիճը։ Ոչ ոք չի հիշում քաղաքի ճարտարապետ Դեյնոկրատեսին։ Ի՞նչ Դեյնոկրատես։ Ինչե՞ր ասես, որ չի մոռացել այս վիթխարի քաղաքը։ Ասում են Հռոմից հետո աշխարհի երկրորդ մեծ քաղաքը Ալեքսանդրիան է։ Հետո ի՞նչ։ Որքան մեծ է քաղաքը, այնքան կարճ է նրա հիշողությունը։ Մեծ Ալեքսանդրի դիադոքոսների՝ ժառանգորդ զորավարների մեջ ամենահանճարեղը Պտղոմեոս Լագոսն էր։ Նա է Ալեքսանդր Մակեդոնացու աճյունը Բաբելոնից փոխադրել Ալեքսանդրիա և ամփոփել ամենաշքեղ հուշադամբանում։ Այն ժամանակ Պտղոմեոսին նախանձել են մնացած դիադոքոսները։ Նրանք գլխի են ընկել, որ տիրանալով Ալեքսանդր Մակեդոնացու աճյունին Պտղոմեոսը դրանով իրեն համարում է առաջին ժառանգորդը։ Նա ցանկանում էր հասկացնել ամենքին, որ Ալեքսանդրը սկիզբն էր, ինքը՝ շարունակությունը։ Լագոսն է հիմնադրել Պտղոմեոսյան արքայատոհմը Եգիպտոսում։ Պտղոմեոս Լագոսն է հիմնարկել նաև Ալեքսանդրիայի մուսեյոնը, կառուցել Սերապիս աստծու տաճար Սերապիոնը։

Մուսեյոնը՝ մուսաների իշխանը, միաժամանակ և՛ գիտությունների կաճառ է, և՛ խցոնք-բնակատեղի գիտնականների համար, և՛ ճեմարան, և՛ աշխարհի ամենամեծ գրադարան-մատենադարանը, որի մատյանների թիվն անցնում է հիսուն բյուրից։ Մոլի գրքասեր Պտղոմեոս Քրոջասերը շատ էր տառապում այն բանի համար, որ մուսեյոնի գրադարանում չկային հույն թատերգակների մի քանի եզակի ձեռագրեր։ Եվ ահա նա մարդիկ է ուղարկում Աթենք, որոնք պիտի գլուխ բերեին այդ ձեռագրերն ընդօրինակելու գործը։ Աթենացիները դաժան պայման առաջարկեցին. ի տրիտուր Ալեքսանդրիա ուղարկվելիք ձեռագիր մատյանների, Պտղոմեոս Քրոջասերը պետք է գրավ

գներ տասնհինգ տաղանդ՝ այսինքն երեք ձիաբեռ արծաթ։ Արքան համաձայնեց և տասնհինգ տաղանդ արծաթ ուղարկեց Աթենք։ Աթենացիներն էլ ձեռագրերը առաքեցին Ալեքսանդրիա։ Հետո այսպես եղավ։ Արքան այդ մի քանի ձեռագրերը երեք ձիաբեռ արծաթից ավելի բարձր գնահատեց։ Եվ ձեռագրերը մնացին Ալեքսանդրիայում, արծաթը՝ Աթենքում։ Մուսեյոնի մատենադարանի հիսուն բյուր գրքից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի։ Այո, մուսեյոնը Պտղոմեոսների հրաշագործությունն էր, նրանց անմահության ձոնը։

Սակայն մարդիկ արդեն մոռացել են և Պտղոմեոսներին, և Սերապիս ու Օղիրիս աստվածներին։ Հիմա չի վառվում Ալեքսանդրիայի փարոսը։ Քաղաքի հիմնարկումից քառասունյոթ տարի հետո Փարոս կղզին ամբարտակով միացվեց Ալեքսանդրիային և ճարտարապետ Սոստրատես Կնիդոսցին սկսեց կառուցումը այն փարոսի, որը հետագայում, ի փառաբանություն Պտղոմեոսների, դարձավ աշխարհի վեցերորդ հրաշալիքը։ Հինգ տարի հետո կղզու վրա վեր խոյացավ բարձրաբերձ մի աշտարակ, որը մի պտղունց էր ցածր Քեոփսի բուրգից։ Առաջին հարկը ութանկյուն աշտարակ էր՝ ճակատակալված ճերմակաթույր մարմարով։ Երրորդ հարկում՝ բոլորակ, շուրջանակի սյուներով պատված աշտարակում վառվում էր անշեջ, վիթխարի մի խարույկ, որի հուրը արտափայլում էր հսկա հայելիների միջոցով։ Վերին աշտարակ տանող պարուրաձև ոլորան-սանդուղքներն այնքան զառիկող ու լայն էին, որ նրանցով վերև էին բարձրանում և խարույկի համար փայտ հասցնում էշեր լծած սայլերը։

Փարոսի լույսը շատ հեռվից տեսնում էին Մեծ ծովում լողացող նավերը։ Միաժամանակ փարոսի աշտարակից ալեքսանդրիացիները կարող էին տեսնել ծովում երևացող թշնամական նավատորմը և մարտի պատրաստվել։

Բայց փարոսը փարոս էր առաջներում։ Հիմա ոչ ոք չի էլ հիշում, թե ինչպիսին էր նրա հրաշեկ բոցը։ Աշխարհի վեցերորդ հրաշալիքը վերածվել էր կիսախարխուլ շինության։

Մարդիկ կամաց-կամաց միաստվածասեր դառնալով պաշտում են Հիսուս Քրիստոսին։ Քրիստոնյա Ալեքսանդրիան փորձում էր հաղթել հեթանոս Ալեքսանդրիային։ Բայց հեթանոս Ալեքսանդր Մակեդոնացուն հիշում են և մոռացության տալիս մտադրություն էլ չունեն։ Քաղաքը հիմնարկելուց անմիջապես հետո Ալեքսանդրը հրամայել էր տոն սարքել ի պատիվ այն

էշերի ու ջորիների, որոնք բեռներ են կրել քաղաքի շինության համար։ Եգիպտական տոմարի Տուբի ամսի քսանհինգը հայտարարվել է էշերի ու ջորիների հանգստյան օր։ Համայն Եգիպտոսում այդ օրը ոչ մի բեռնակիր անասուն չէին բանեցնում, էշերի ու ջորիների պարանոցները զարդարում էին պսակներով։ Լսված բա՞ն է, որ մարդ արձակուրդ տա էշին կամ ջորուն։ Ճիշտ է, հիմա իրենց ուսերին քրիստոնյայի քղամիդ գցած ալեքսանդրիացիները Տուբի ամսի տասնմեկին աստվածահայտնության տոն են կատարում, փառաբանում քրիստոնյա նահատակներին, բայց միաժամանակ չեն մոռանում նույն ամսի քսանհինգին հանգիստ տալ իրենց էշերին ու ջորիներին, իսկ նույն ամսի երեսունին՝ տոն կազմակերպել։ Քրիստոնյա ալեքսանդրիացիները չեն մոռացել նաև իրենց հեթանոս նախնիների լորտուններին։ Քաղաքի դուռը դնելու ժամանակ բոլոր նորակերտ տներում հայտնվեցին սորամուտ լորտուններ և սկսեցին ոչնչացնել վնասակար զնոուններին։ Կարծես թե դրանով լորտուները շնորհավորում էին քաղաքի ծնունդը։ Եվ պաշտամունքի սիրահար ալեքսանդրիացիները որպես սրբազան կենդանիների սկսեցին պաշտել նաև լորտուններին և տոն օրերին կարկանդակներ բաժանել դրանց։ Այնպես որ դժվար էր Ալեքսանդրիայում հեթանոսին քրիստոնյայից տարբերելը։ Յուրաքանչյուր ալեքսանդրիացու մեջ և հեթանոսություն կար և քրիստոնեություն։ Բոլոր տոների ժամանակ նույն անգությը, երեսի պաճուճանքի նույն ներկը, ալեքսանդրիացու մի այտը հեթանոս է դարձնում, մյուսը՝ քրիստոնյա։

Հովհանը, Գյուտն ու Մովսեսը ապրում էին մուսեյոնի «Բուկեֆալ» անունը կրող կացարանում, որի կառավարիչը մակեդոնացի Ամինտոսն էր։ Դա երկհարկանի բազմախուց մի շինություն էր, որի պատուհաններից, ինչպես ափիդ մեջ երևում էին Մեծ ծովի կապտակապույտ ալիքները։ Երիտասարդների օրվա մեծ մասը անցնում էր գրադարանում։ Ամինտոսը կզակը թույլ մարդ էր։

— Մեր խցոնք-կացարանը,— ասում էր Ամինտոսը,— ես եմ կոչել Ալեքսանդր Մակեդոնացու հռչակավոր ձիու՝ Բուկեֆալի անունով։ Բուկեֆալ մակեդոներեն նշանակում է ցլապուխ։ Գիտե՞ք ինչ նժույգ է եղել։ Նրանով Ալեքսանդր Մակեդոնացին հասել է Հնդկաստան։ Հնդկաստանում էլ Բուկեֆալը սատկել է։ Այն տեղում, ուր ուժասպառ ընկել է ձին՝ Ալեքսանդրը քաղաք է կառուցել և, ի պատիվ իր նժույգի, կոչել Բուկեֆալիա։ Դա միակ

քաղաքն է աշխարհում ձիու անունով։ Տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի մարդիկ ենք մենք՝ մակեդոնացիներս։ Ի դեպ, Ալեքսանդրը իր Բուկեֆալը նստած անցել է նաև Հայաստանով։

Տղաները լսում էին Ամինտոսին և չէին արձագանքում։ Սակայն մի անգամ Գյուտը չհամբերեց և կացարանի կառավարչին ասաց.

— Հարգարժան Ամինտոս, խնդրում եմ մյուս անգամ վերաձևես ասելիքդ՝ հաշվի առնելով, որ Ալեքսանդր Մակեդոնացին Հայաստան չի մտել, հետևապես նրա Բուկեֆալի սմբակը հայկական հողին չի դիպել։

— Հա՞,— զարմացավ Ամինտոսը և չգիտեր, ինչ պատասխաներ։

Սակայն Ամինտոսը խոսքի տակ մնացող չէր։ Մի քանի օր հետո նա տղաների մոտ մտավ իր դասը նորովի սերտած։ Եվ ասաց.

— Դուք, իհարկե, իրավացի եք, ես ականջալուր եղա՝ Ալեքսանդր Մակեդոնացին Հայաստանը չի նվաճել։ Բայց հավատացեք, պատվարժան երիտասարդներ, եթե նվաճեր՝ դրանով հայերը չէին նսեմանա։ Ահավորապես այր էր Ալեքսանդրը։ Նա և հանճարեղ թշնամի էր, և հանճարեղ բարեկամ։ Ոչ թե նա, այլ Հայաստանը սահեց նրա կողքով։ Ալեքսանդրից հետո հազար խաժամուժ է մտել Հայաստան։ Հայերիդ համար դա է անպատվաբերը։ Եվ ընդհանրապես ոչ ոք չի կարող պարծենալ այն բանով, որ ինքը չի տեսել Ալեքսանդր Մակեդոնացուն։

Մուսեյոնում Մովսեսի, Հովհանի և Գյուտի ուսուցիչ կարգեցին իմաստասեր և ճարտասան Նոր Պլատոնին։ Հույն էր, մարմնեղ, բարձրահասակ, մանրակն, քլախոս։ Առաջին իմաստասեր, մեծահռչակ Պլատոնն ապրել է այս Պլատոնից ութհարյուր տարի առաջ։ Բայց այս նոր Պլատոնն էլ առաջինի նման պայծառամիտ էր, վսեմաշուք։ Նա իր դասն սկսում և ավարտում էր այս խոսքերով.

— Մեծ Սոֆոկլեսը «Անտիգոնե» թատերգության մեջ ասում է. «Աշխարհում շատ զարմանահրաշ ուժեր կան, բայց մարդուց ուժեղը չկա»։ Արիստոտելը եղել է Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը։ Բայց Արիստոտելը կմնար Արիստոտել, եթե նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացուն տեսած չլիներ։ Մարդ պիտի բախտի տոթից պատսպարվի սեփական ստվերի տակ։ Ավելի լավ է մի բան իմանալ, բայց հիմնավոր, քան հազար բան՝ կի-

սատ-պատատ։ Ճշան են այն այրերը, որոնք օրապակաս գիտելիքներ ունեն։ Իրենց ասածը հաստատելու համար նրանք ոգբերգակ-դերասանների նման բարձր ներբանով կոշիկներ՝ կոտուռներ են հագնում և արհեստականորեն բարձրացնում հասակը։ Գիտությունը կոտուռներ չի սիրում։ Դատարկ խոսքը նման է անհուր ճառագայթի։ Ոչ ոք ոչինչ ձեռք չի բերում առանց ճիգ ու չանքի։

Մովսեսը, Հովհաննն ու Գյուտը հասկանում էին, որ Նոր Պլատոնը այդ խոսքերով հավատ էր ներշնչում իրենց՝ դժվարությունները հաղթահարելու համար։

Նոր Պլատոնն իր սաներին և՛ ընդհանուր գիտելիքներ էր հաղորդում, և յուրաքանչյուրին մի այնպիսի բան ուսուցանում, որ սանն ամբողջ կյանքում չմոռանա։ Մի անգամ նա ասաց Մովսեսին.

— Լսիր, որդիդ Ստեփ, դու հավատո՞ւմ ես գուշակությանը։

— Չգիտեմ, իմաստասեր, հազիվ թե իմ կաղ պատասխանը դուր գա քեզ,— պատասխանեց Մովսեսը։

— Գոնե կարո՞ղ ես թվարկել, թե Հայոց աշխարհում ինչ տեսակ գուշակություններ կան։

— Այո, իմաստասեր։ Աստղերի միջոցով գուշակողին կոչում են աստեղագետ, աստղագուշակ, աստղահմա, աստղանշմար կամ քավդեա, տաշտի մեջ լցված ջրին նայելով գուշակողին՝ լականագետ, թռչունների շարժումների օգնությամբ գուշակողին՝ հավահմա, օդի միջոցով բախտ բացողին՝ օդագյուտ, գարու օգնությամբ գուշակողին՝ գարեհմա։

— Գուշակությունների այդ տարատեսակներից ոչ մեկը օրինաչափություն չունի, հետևապես դրանցից յուրաքանչյուրը ճշմարտությունից ու ստից գտնվում է հավասար հեռավորության վրա։ Բայց կա գուշակության մի տեսակ, որ քչերը գիտեն։ Մարդու ձեռքի ափը, այո, այս մի բուռ ափը անձի ազգը, ազգությունը որոշող անփոխարինելի վավերագիր է։ Իրավ է, ազգերն իրարից տարբերվում են նախ և առաջ լեզվով։ Բայց չէ որ կան մարդիկ, որոնք անկաշկանդ խոսում են մի քանի լեզուներով։ Հետևապես միշտ չէ, որ կարող ես լեզվով որոշել մարդու ազգությունը։ Մարդ իր լեզվով կարող է և՛ իր ազգությունը հաստատել, և՛ ժխտել այն։ Սակայն ձեռքի ափը չի կարող թաքցնել մարդու ազգությունը։ Մեղմիր զարմանքդ, այո, աշխարհի բոլոր մարդկանց, այդ թվում և նույն ազգության բոլոր մարդկանց ձեռքերի ափերը տարբերվում են միմյանցից։ Բայց յուրաքանչյուր ազգ ունի ափագծերի իր հյուսվածքաձևը։ Այստեղ նմանություններ չեն լինում, հայլին չես կարող շփոթել հույնի կամ պարսիկի հետ։ Ես հիմա քեզ կցուցանեմ, թե յուրաքանչյուր ազգ ափագծերի ինչպիսի հյուսվածքաձև ունի։ Եվ գիտցիր, Մովսես, հարյուր հազար տարի էլ անցնի՝ ազգության ափագծերի հյուսվածքաձևը մնում է անփոփոխ։ Ուսանելուց հետո դու կարող ես նայել մարդու ափը և ճշգրիտ հայտնել, թե որ ազգի զավակ է նա։

Մի քանի ամիս անց Նոր Պլատոնը ստուգեց իր սանին և հավաստեց, որ նա գերազանց է յուրացրել ափագծերի գիտությունը։ Սակայն իմաստասերը շատ էր սիրում Մովսեսին և ուսումնառության չորրորդ տարում նրան սովորեցրեց նաև բույսերի և ձիերի օգնությամբ մետաղահանքեր հայտնաբերելու գաղտնիքը։ Բույսերի ցողունների ու տերևների վրա նստած փոշու փայլից կարելի է որոշել, թե շրջակայքում ինչ մետաղահանք կա։ Միաժամանակ դա կարելի է անել ձիերի օգնությամբ։ Եթե արևոտ օրը ամայի վայրով անցնելիս դու լսում ես քո ձիու կափկափյունը, ապա գիտցիր, որ այդ մասերում կամ ոսկու հանք կա, կամ թաքցրած ոսկի։

Մովսեսը Նոր Պլատոնից իմացավ, որ առաջին անգամ Հայաստանում են հայտնաբերել ոսկին ու երկաթը։ Չորս հազար տարի առաջ երկնային քարերը, որ մաքուր երկաթից էին, հայերը կոչել են երկաթ՝ երկնքից կաթած։ Դա երկաթի առաջին և ամենահին անվանումն է աշխարհում։ Նույնիսկ հույները դրանից հազար տարի հետո են երկաթին անուն տվել, կոչել այն սիդերոս։

— Դու, Մովսես, պետք է անգիր հիշես հայերեն այն տասնմեկ բառ անունները, որոնք երեքից-չորս հազար տարեկան են և որոնք զուգահեռներ չունեն մյուս լեզուներում՝ երկաթ, ոսկի, արծաթ, պղինձ, կապար, որ կոչվում է նաև արճիճ, արույր, որ կոչվում է նաև դեղին պղինձ, ծծումբ, ծարիր, անագ, զառիկ, որ կոչվում է նաև մկնդեղ, սնդիկ։ Այդ տասնմեկ բառը ազգության դիմագիծը ցուցանող մի ամբողջ հարստություն է, դրանով կարելի է հավաստել, որ հայերենն աշխարհի վրա հնչող չորս ամենահին լեզուներից է, այդ չորսի մեջ էլ՝ գուցե երեքը։ Նույն աստ-

ծու հետ հայերեն է խոսել։ Չկա մի խորհուրդ, իմաստասիրական մի խրթին ծալք, որ չկարողանաս արտահայտել հայերենով։ Հայերենով դու կարող ես լսել տիեզերքի ամենանուրբ շշուկն ու ամենաահեղ գոչյունը, նաև ճայթյունն ու դեռատի աղջկա սիրո հևքը։ Բռնակալները հիմա ստիպում են, որ հայերը ուրանան իրենց մայրենին և խոսեն պարսկերեն կամ հունարեն։ Դա տիեզերական հեղեղագործություն է։ Չի կարելի մոռացության տալ Նոյի լեզուն։ Աստված կզայրանա և այս անգամ աշխարհն այնպիսի ջրհեղեղի տակ կթողնի, որ ոչ մի մարդ չի ազատվի։ Մայրենին մոռացողը ցեց է։ Մայրենին ուրացողը սերմնակեր է։ Այո, Մովսես, հայերենը պիտի մնա աշխարհում։ Առանց հայերենի տիեզերքը մեզ համար ինչ-որ տեղ կմնա անթարգման։ Ոչ մի առատության եղջյուր հայի համար չի կարող փոխարինել ամենաբաշխ, ամենապարզ հայերենին։

Նոր Պլատոնը աշխարհի բոլոր մարդկանց բաժանում էր չորս խմբի՝ մեծագույն խենթեր, հանճարեղ դեմքեր, քանքարաշատ այրեր և սովորական մահկանացուներ։

— Խենթերը,— ասում էր նա,— տեղն եկած տեղը փայլատակում են իրենց հանճարով, երբեմն դրսևորում իրենց ճարտարությունն ու քանքարը, բայց ավելի շատ, քան սովորական մարդիկ, ցուցանում են իրենց հիմարությունը։ Եվ, այնուամենայնիվ, ուզես-չուզես, համայն մարդկության բախտը խենթերի ձեռքին է։ Աշխարհի յոթ հրաշալիքներից երրորդը՝ Արտեմիսի տաճարը Եփեսոսում, կառուցվել է երկու անգամ։ Հիմա ոչ ոք չի կարող ասել, թե որն էր դրանցից գեղեցիկը՝ առաջինը, թե երկրորդը։ Հարյուր քսանյոթ գեղապարույր սյուների վրա բարձրացող այդ տաճարը հիացնում էր և աստվածներին և մարդկանց։ Եփեսոսում մի մարդ էր ապրում Հերոստրատոս անունով։ Նա ոչնչով աչքի չէր ընկնում։ Բայց փափագում էր անմահների շարքը դասվել։ Խորհեց, խորհեց այս խենթը և որոշեց մի այնպիսի բան անել, որ մարդիկ ստիպված լինեն հիշել նրա անունը։ Եվ Հերոստրատոսը հրկիզեց Արտեմիսի փառահեղ տաճարը։ Դա պատահեց Ալեքսանդր Մակեդոնացու ծննդյան օրը։ Այդպիսի հանցագործություն չէր կատարել աշխարհի և ոչ մի մարդ։ Հերոստրատոսը ինքն իր ոտով ներկայացավ Եփեսոսի ատյանին և ասաց.

— Ես եմ Արտեմիսի տաճարի հրձիգը, պատժեցեք ինձ։

Եվ խորհրդի նստեցին Եփեսոսի իմաստունները։ Հազար

տեսակ պատժաձև անցավ նրանց մտքով։ Երկար ժամանակ ծանրութեթև արին Հերոստրատոսի հանցագործությանն արժանի բոլոր հարմար վճիռները և որոշեցին. «Մոռանալ Հերոստրատոսին, ոչ մի տեղ ու երբեք չհիշել նրա անունը, մոռացությամբ պատժել այն մարդուն, որը երազում էր արժանանալ անմահության փառքին»։

Աստվածները քահ-քահ խնդացին Եփեսոսի իմաստունների այս անմիտ ու հիմար վճռի վրա։ Արտեմիսի տաճարը հրկիզելու մասին սկսեցին խոսել ամենուրեք՝ հյուսիսում, հարավում, արևելքում ու արևմուտքում։ Մարդիկ միմյանց ասում էին. «Իսկ գիտե՞ք, թե Եփեսոսում ինչպիսի զարմանալի վճիռ են կայացրել այդ հրձիգի համար։ Հիմա նրան ընդմիշտ կմոռանան։ Ոչ ոք չի իմանա նրա անունը։ Ի դեպ, ի՞նչ էր նրա անունը։ Հերոստրատո՞ս։ Այո, այդ Հերոստրատոսին մենք անպայման կմոռանանք»։

Անունը տալով մարդիկ չմոռացան Հերոստրատոսին։ Շատերն ասում են. ի՞նչ տարբերություն, հիշում են և՛ Արտեմիս աստվածուհուն, և՛ Ալեքսանդր Մակեդոնացուն, և՛ Հերոստրատոսին։ Հետևապես Հերոստրատոսը ճիշտ է հաշվարկել։

Սակայն իսկությունն ուրիշ է։ Հերոստրատոսի անունն անմահացրեց Եփեսոսի իմաստունների վճիռը։ Եթե հանցագործության համար Հերոստրատոսին գլխատեին ու խոսք չլիներ անունը մոռացության տալու մասին, ապա նրա անունը ոչ ոք չէր հիշի։

Ցուրաքանչյուր մարդու մեջ մի քիչ Հերոստրատոս կա։ Կարճատև է մարդկային կյանքը։ Մարդիկ աշխարհ են գալիս և համարյա բան չտեսած հեռանում աշխարհից։ Դրա համար էլ նրանք երազում են անմահության մասին։ Ամեն մեկն իր չափով։ Մեկի համար անմահությունը երեք օր է, մյուսի համար՝ մի տարի, հաջորդի համար ութ հարյուր կամ հազար տարի։

Հերոստրատոսություն կար նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացու մեջ։ Ահավասիկ։ Հերոստրատոսին անմիտ պատժի արժանացնելուց տարիներ հետո Եփեսացիները որոշում են Արտեմիսի նոր տաճար կառուցել։ Վաճառում կամ գրավ են դնում իրենց ունեցած-չունեցածը ոսկին ու արծաթը, նույնիսկ կանանց ամուսնական քառամանյակներն ու մնացած զարդերը, այստեղից-այնտեղից դրամ հանգանակում և նախապատրաստվում ձեռնարկել տաճարի շինությունը։ Իհարկե, ինչ-որ բան պակասում էր։ Հենց

այդ ժամանակ Եփեսոսում մակեդոնական իր փաղանգով հայտնվում է Ալեքսանդր Մակեդոնացին։ Եփեսոսցիներին նա ասում է. «Ես համաձայն եմ վճարել տաճարի կառուցման բոլոր ծախսերը՝ պայմանով, որ տաճարի ընծայագիր որմնաքարի վրա գրվի իմ անունը»։ Մակեդոնացուն պատասխանելու համար Եփեսոսի այրերը ժողով են անում։ Նրանք իրենց քաղաքի պատիվը գերադասում են Մեծն Ալեքսանդրի գայթակղեցուցիչ առաջարկից։ Եվ մի սրամիտ եփեսոսցի Ալեքսանդր Մակեդոնացուն ասում է. «Վայելուչ չէ, որ մի աստված տաճար կառուցի ուրիշ աստվածների համար»։ «Ինչպես կուզեք»՝ պատասխանում է զորավարը։

Եվ եփեսոսցիները Արտեմիսի նոր տաճարը կառուցում են իրենց ուժերով։ Բայց և այնպես Ալեքսանդր Մակեդոնացուն հասցրած վիրավորանքը մեղմելու նպատակով որոշում են տաճարի համար նրա նկարը պատվիրել գեղանկարիչ-պատկերահան Ապելլեսին։ Վերջինս զորավարին պատկերում է Զևսի նման՝ շանթը ձեռքում։ Պատկերում է այնպես, որ թվում էր, թե ուր որ է Ալեքսանդր Մակեդոնացու շանթակալ ձեռքը դուրս պիտի գա կտավից։ Կատարելության կատար այդ նկարը կախարդում, ապշեցնում է պատվիրատուներին։ Նրանք այդ կտավի համար Ապելլեսին վճարում են քսանհինգ տաղանդ կամ հինգ ձիաբեռ ոսկի։ Ոչ մի արվեստագետ այդպիսի բարձր հոնորար չի ստացել ոչ մինչ այդ, ոչ դրանից հետո։

Ալեքսանդրիայում Մովսեսը հանգստյան օր ու ժամ չուներ։ Մուսեյոնից շտապում էր քաղաքի մեծ շուկան, ուտելիք գնում իր և ընկերների համար, համարյա վազելով հասնում «Բուկեֆալ», մի կտոր բան գնում բերանը և ձեռքն առնում գրակալն ու մագաղաթը։ Լրացնում էր իր սիրելի ուսուցչի՝ Նոր Պլատոնի քննիկոնը, որը մի հիշատակարան-օրագրություն էր՝ նման Ալեքսանդր Մակեդոնացու էֆիմերիդներին։ Արթնանում էր արևագալի Այդ ժամին և Հովհաննին ու Գյուտին քնած թողնելով դուրս գալիս շրջագայության։ Սովորություն ուներ վաղորդյան ժամերին թափառել կամ ինչպես ինքն էր ասում՝ «երազային ճամփորդություն կատարել» Ալեքսանդրիայի փողոցներում։ Հետո ծանոթացավ մի հույն քարգործ վարպետի հետ և սկսեց որմնագրություն անել։ Ամեն առավոտ աշխատում էր ընդամենը երկու ժամ։ Սակայն հույնը նրան շատ էր վճարում։

— Դու այնպես հրաշալի ես կերտում շենքը, որ ասես հազար տարվա փորձ ունես,— ասում էր քարգործ վարպետը և թմփացնում Մովսեսի ուսը։

Մի անգամ էլ Մովսեսը հույն քարգործ վարպետին ցույց տվեց, թե ինչպես կարելի է որմնահեցով՝ պատին դեմ տված հեծանով, առավել ամրապինդ դարձնել շինությունը։ Դա զարմացրեց հույն վարպետին, և նա Մովսեսին ասաց.

— Այդ հաստափոր ու գեղակազմ գրքերը քեզ բախտավոր չեն դարձնի։ Արի միացիր մեզ, դարձիր մեր մեծավորը և քո կշռով ոսկի կաշխատես, ալեքսանդրիացիները շատ բարձր են վճարում գեղեցիկ շենքերի համար։

— Չէ, վարպետ,— պատասխանեց Մովսեսը,— ինձ սպասում է իմ Կամարան, ոչ առանց նրան կարող եմ ապրել, ոչ էլ առանց Հայքի։

Բայց միայն որմնադրությամբ չէ, որ Մովսեսը դրամ էր վաստակում։ Ճարտար ձեռք ուներ նա։ Փյունիկյան մայրի փայտից պատրաստում էր ընտիր կարկինների և հանձնում մուսեյոնին։ Ճեմարանի ռաբունապետները ոգևորում էին Մովսեսին և գնում նրա հրաշակերտ կարկինները։

Հայրենիքի կարոտից կարող է փղձկալ ոչ միայն մարդու սիրտը։ Հաճախ Մովսեսին թվում էր, թե կարոտից ինքը շնչահեղձ է լինում։ Այդպիսի դեպքերում լաց էր լինում և ջանում, որ Հովհանն ու Գյուտը չտեսնեն իր արցունքները։ Գիշերները նրան թվում էր, թե ջինջ, աստղազարդ երկինքը Ալեքսանդրիան մոտեցնում էր Հայքին։ Նա նայում էր երկնքի այն մասին, որ սպիտակափառ էր և նման էր աստղերի երերված շարանի։ «Բուկեֆալ»-ի կառավարիչ Ամինտոսն ասում էր, թե դա Սիր Կաթինն է, թե դա իբր Զևսի կնոջ՝ Հերա աստվածուհու ստինքից թափված կաթն է, որ ցրվել և փայլփլում է երկնակամարում։ Մովսեսի համար Սիր Կաթինը Հարդագողի ճանապարհն էր։ Հայոց Վահագն աստվածը մի ցուրտ ձմռան գնացել էր Ասորիք, գողացել ասորական Բարշամ աստծու հարդը և երկնքով բերելիս ճանապարհին թափել։ Թափած հարդը մնացել է երկնքում, որի պատճառով էլ Սիր Կաթինը կոչվել է Հարդագողի ճանապարհ։ Մովսեսը նայում էր Հարդագողի ճանապարհի ծայրին և մտովի պատկերացնում, որ եթե նույն ուղղությամբ երկնքից իջնես, ապա կկանգնես հայկական հողի վրա։ Մովսեսն ամեն անգամ երազային այդ ճանապարհով իրեն տուն էր գցում, առնում հարազատների կարոտը։

Ալեքսանդրիայում մնալու վերջին՝ վեցերորդ տարում Մովսեսը սկսեց անհամբեր դառնալ և հաշվել նույնիսկ ժամերը։ Այդ անհամբերությունը նա փոխանցել էր նաև Հովհաննին և Գյուտին։ Մի անգամ էլ Ամինտոսը ասաց, որ երիտասարդները ետդարձի ճանապարհով տուն գնալ չեն կարող, որովհետև Միջագետքում հրոսակներ են հայտնվել, որոնք կողոպտում ու կոտորում են անցնող ու դարձող մարդկանց։ Դա հաստատեցին նաև Միջագետքից վերադարձած ալեքսանդրիացի մի քանի զորականներ։ Եվ Գյուտը, Մովսեսն ու Հովհաննը որոշեցին տուն վերադառնալ ծովով՝ Ալեքսանդրիայից կհասնեն Աթենք, այնտեղից Կոստանդնուպոլիս, հետո Տրապիզոն, որ նշանակում է, թե համարյա տանն ես։

Եվ ահա Սահմի ամսի Հրանդ օրը «Զևս» նավը, որի վրա էին Մովսեսը, Հովհաննը և Գյուտը, դուրս եկավ Ալեքսանդրիայից և ուղևորվեց դեպի Աթենք։ Նավի մեջ վաթսուն մարդ կար՝ երեսուն նավաղ, երեսուն ուղևոր։ Աշնանաբույր այդ օրը երկինքը ցինջ էր, ծովը՝ խաղա՜ղ, խաղա՜ղ, ալիքների ծփանքը՝ մեղմի՜վ, մեղմի՜վ։ Սակայն իրիկնապահին հանդարտ ծովը ասես միանգամից ճոճվեց, հեզասահ կոհակներն սկսեցին ուռճանալ, հորիզոնը ծածկվեց հողմաբեր ամպերով։ Նավացուկի վրա թառեց մի արտավազդահավ, որ նշան էր, թե փոթորիկ է սպասվում։ Ամեն ինչ հանկարծական էր։ Թոն՝ հորդ անձրև սկսվեց, իսկ ծովի խորքից բարձրացավ մրրկախառն քամի։ Մոլեգին հորձանքից ջրասյուներ էին գոյանում, ահագնացայտում դեպի վեր և այստեղ ու այնտեղ թոնը դարձնում հորդահոս շատրվան։ Նավը կորցրեց իր ընթացքը և նմանվեց ջրերի մեջ ընկած հարաճոճ խաղալիքի։ Նավապետը, սակայն, քաջ այր էր, մյուսների նման նա չահաբեկվեց ու չկորցրեց իրեն։ Նա իր ջլուտ բազուկներով օգնում էր նավազներին, պրկում ճոպանները։ Հետո սկսեց ուժգին հայհոյել տագնապահար այն ուղևորներին, որոնք կպել էին նավի այս ու այն կողմին։ Նավազները մթերքով լեցուն մի քանի տակառ հանեցին և առանց ափսոսալու ալեկոծ ծովը նետեցին։ Անդնդասույզ եղավ նաև Մովսեսի փոքրիկ սնդուկը, որի մեջ զանազան նվերներ և ծովի հավիտենական ծփանքի արձագանքը պահող խխունջի պատյաններ կային Կամարայի, Մամբրեի ու Աշխենի համար։ Եղավ մի պահ, երբ թվաց, թե մրրիկը մեղմանում է։ Սակայն քիչ անց երկինքն սկսեց ավելի խոլաբար որոտալ, ծովը սպառնաց նոր շառաչյունով։ Կարծես Մեծ ծովը

միշտ էլ այդպես հարաճուռ է եղել։ Յուրաքանչյուր որոտ ավելի ահակոծոր էր դարձնում ուղևորներին։ Նավը ողողվում էր ջրով և թվում էր, թե փրկություն չկա։ Մի հորձանուտ խելահեղ ոստյունով քիչ մնաց պոկեր ցոուկը։ Անսատար նավը շարունակում էր մարտնչել։ Իջավ գիշերը։ Քամին փչում էր և կարծես միտք չուներ դանդաղել։ Ուժատ նավազներն ու ուղևորները, վարժվելով փոթորկի վայրիվերումներին, սկսեցին օգնել միմյանց և լցողել, որ «Զևսը» լցվի ջրով։

Հաջորդ օրվա լուսադեմին փոթորիկը դադարեց։ Ոչ նավապետը, ոչ էլ նավազներից որևէ մեկը չիմացավ, թե դեպի ուր է լողում նավը։ Մովսեսը ափսոսաց իր ջրամույն սնդուկը, որի մեջ էր նաև հավերժական հոտով եգիպտական ծաղիկների այն տրցակը, որ նա քաղել էր Կամարայի համար։

«Զևսը» շարժվեց դեպի հյուսիս։ Մի քանի օր անց երևացին Իտալիայի ափերը, և նավը ստիպված կանգ առավ Հռոմի նավահանգստում։

Մովսեսը, Գյուտն ու Հովհաննը այցելեցին սուրբ Պետրոսի ու Պողոսի հանգստարանները, տեսան կնճռոտված փառքով ապրող հավերժական քաղաքի աստվածաշեն տաճարներն ու հաղթակամարները։ Երկու շաբաթ հետո «Զևսը» կարգի բերեց իր ջարդված կողերը և շարժվեց դեպի Հունաստան։ Զմեռնամուտին հասան Աթենք։ Երիտասարդները ձմեռն անցկացրին այստեղ։ Գարնանը նավեցին դեպի Կոստանդնուպոլիս։ Այստեղից էլ ձիակառքերով ճանապարհ ընկան դեպի հայրենիք։

Եղեմաբույս[1] գետին դեռ չհասած, Հայքի շեմին, Գյուտը, Մովսեսը և Հովհաննը լսեցին, որ մեկուկես տարի առաջ մեռել է կաթողիկոս Սահակ Պարթևը[2], մի տարի առաջ էլ՝ Մեսրոպ Մաշտոցը[3]։ Գույժը երեքին էլ հուսաբեկ դարձրեց։ Նրանք սկսեցին աղիողորմ արտասուքներ թափել։ Կառապանը զարմացավ և երիտասարդներին ասաց.

— Երևում է, որ դուք լավ մարդիկ եք։ Թող աստված սատար լինի ձեզ, և դուք այլևս լացելու պատճառ չունենաք։ Իմ ճամփի ծայրը Մանից գոմն է, լսե՞լ եք, Մանից գոմ կամ Մանես, Գուգարաց աշխարհում է, Սանահինի մոտ։ Այնտեղից պիտի մի

[1] Եղեմաբույս, Եփրատ գետի հայկական անվանումը։
[2] Սահակ Պարթևը մահացել է 439 թվականի սեպտեմբերի 7-ին։
[3] Մեսրոպ Մաշտոցը մահացել է 440 թվականի փետրվարի 17-ին։

պղնձագործի հետս առած եմ դառնամ Երզնկա։ Բայց չեմ կարող ձեզ պես մարդկանց ճանապարհի կեսին թողնել, ոչինչ, ձեզ մի կերպ կհասցնեմ Վաղարշապատ։

Կառապանը կատարեց խոստումը։ Մարերի ամսվա Գիշերավար օրը երիտասարդները հասան Վաղարշապատ։ Փթթուն գարուն էր, կանաչն այնքան շատ էր, որ քաղաքի շենքերը հեռվից դժվարությամբ էին երևում։ Էջմիածնի մայր տաճարի շքամուտքի ճակտոնի արևի ժամացույցը ցույց էր տալիս ցերեկվա Հրակաթ ժամը։ Առանց վայրկյան կորցնելու Գյուտը, Հովհանը և Մովսեսը շտապեցին կաթողիկոսարան։ Սահակ Պարթևի վերափառական բազմականին նստել էր Հովսեփ կաթողիկոսը, որ Վայոց Ձորի Հողոցիմ գյուղից էր։ Հովսեփ քահանան եպիսկոպոսապետ էր դարձել երանելի Մեսրոպ Մաշտոցի հրամանով։ Երիտասարդները անմիջապես ճանաչեցին նրա հագի արջնաթույր շուրջառը։ Դա Մեսրոպ Մաշտոցի նափորտն էր, որը, երանելին երևի մահից առաջ էր նվիրել Հովսեփին։ Երիտասարդները իսկույն ծնկի իջան և համբուրեցին նափորտի քղանցքները։ Կաթողիկոսը հասկացավ, որ օտար ափերից տուն դարձած երիտասարդները իրենց կարոտը ավելի շատ առնում են Մեսրոպ Մաշտոցի շուրջառից։ Ապա Մովսեսը կաթողիկոսին հանձնեց Ալեքսանդրիայի մուսեյոնի բաբունապետների խորհրդի նամակը, որտեղ ասված է, թե վեց տարվա ուսումնառության ընթացքում ինչ են սովորել Գյուտը, Մովսեսն ու Հովհանը։ Նամակի ընթերցումից հետո կաթողիկոսը գովասանքի խոսքեր ասաց և եզրափակեց.

— Խաղաղությամբ վերադարձեք ձեր ոստանները և առեք ձեր հարազատների կարոտը։ Ինձ կներկայանաք վաթսուն օր հետո՝ Ավելյաց ամսի Փայլածու օրը։ Իսկ մինչև մեկնելը կարող եք հանգստանալ և գիշերել մայր տաճարի դպրոցի խցոնք-կացարաններում։

Մովսեսը ինքն էլ չիմացավ, թե կաթողիկոսարանից դուրս գալուց հետո ինչպես հայտնվեց վաճառական Սորսորի տան առջև։ Ջարմացավ։ Նախկին տունը վերաշինվել-դարձել էր իսկական ապարանք։ Նրա աչքին առաջինը զարնվեց շքամուտքի սյունախոյակների վրայի զարդաքանդակներով պճնված ախավեղագես[1] վերնախարիսխը։ Շքամուտքն այնքան նման էր Սեբապիս աստծու տաճար Սերապիոնին, որ Մովսեսին թվաց, թե ինքը դեռ Ալեքսանդրիայում է։

Մովսեսը ոտք դրեց շքամուտքից ներս և, կճասալ հատակով շարժվելով, զարկեց դռան զարկանը։ Անմիջապես չարձագանքեցին։ Երևի տանը մարդ չկա, անցավ Մովսեսի մտքով։ Բայց ահա դուռը բացվեց բերդի դարպասի ճոնշոցով, և շեմին հայտնվեց երկարակոթ մի աշտե բռնած սպասավոր-զորական։

— Հինգ-վեց տարի առաջ այստեղ ապրում էր վաճառական Սորսորը,— ասաց Մովսեսը։

— Նա հիմա էլ այստեղ է ապրում, սա նրա ձեռակերտն է,— պատասխանեց սպասավոր-զորականը։— Բայց արդեն մի քանի օր է, ինչ Մանազկերտ է գնացել։

— Տիկին Հռիփսիմե՞ն էլ տանը չէ։

— Նա ամուսնու հետ է։

— Իսկ նրանց դուստրը՝ Կամարան։

— Տիկին Կամարա՞ն։

— Ի՞նչ ասացի՞ր, տիկին Կամարա՞ն...

Սպասավոր-զորականը հայտնեց, որ Կամարան մի տարի առաջ ամուսնացել է Որոտ իշխանի հետ և այժմ ապրում է Բասենի գավառի Դու գյուղի իր դղյակում։

Մովսեսին թվաց, թե ոտի տակի հողը դարձավ սորուն, հարթ բակը՝ թեք, զարիվայր առապար։ Ինչո՞ւ միայն վաճառականի տան բակը։ Մի՞թե զառիկող չէ և՛ Վաղարշապատի տարածքը, և՛ Այրարատյան դաշտը, և համայն աշխարհը։ Եվ ընդհանրապես աշխարհը միշտ էլ ծուռ է եղել, մարդիկ էլ աշխարհի վրա ծուռումուռ են քայլում։ Մովսեսը դա հասկացավ միայն հիմա, երբ լսեց, որ Կամարան ամուսնացել է։

Առանց հրաժեշտ տալու զորական-սպասավորին, նա հեռացավ վաճառականի տան բակից և հայտնվեց ծանոթ ագարակիկում։

Մովսեսը նստեց փշատենու տակ և հայացքը ուղղեց դիմացի նռենիների շարքին։ Մղեղ-շամանդաղի մի քուլա փակեց նրա տեսածիրը։ Չկարողացավ հասկանալ, թե ինչ քուլա էր՝ մոխրի փոշի՞ էր, թե ամպերից բեկված մի պատառ։ Ապա հուսակտուր հայացքը դարձրեց կողքին ընկած փշատենու կանաչ ուղեշին։ Վերցրեց ճյուղը և սկսեց հարվածել գետնին։ Հարվածում էր ու ինքն իրեն խոսում.

— Կամարա, ախր այս ի՞նչ արիր դու։ Ո՞ւր մնաց քո եր-

[1] Ախավեղագես, այան վերին մասը։

դումը, քո հանձնարարական սերը։ Չեմ ուզում հավատալ, որ դու մոռացել ես մեր սերը։ Անկասկած, հայրդ է ստիպել։ Դե, իհարկե, Որոտ իշխանը իր հարստությամբ շլացրել է հորդ։ Հայրդ ամենավաճառ է՝ փիրեզակ, կարող է և ուլունք վաճառել, և ադամանդ, և հարազատ դստեր սերը։ Երևի հիմա սպասյակները քեզ տեղից տեղ են փոխադրում պատգարակով։ Ես տուն վերադարձա քո գգվանքին կարոտ, բայց ի չիք դարձան և՛ հույս, և՛ երազային ճախրանք։

Ադարակիկի ցանկապատի մոտ երևաց մի շան քոթոթ, որի կնձաձայնն[1] էլ ընդհատեց Մովսեսին։

Մովսեսը ելավ տեղից, մի կողմ նետեց փշատենու ուղեղը և քայլեց դեպի ադարակիկի մուտքը։ Քոթոթը ագին խաղացնելով շարժվեց նրա հետևից։

Հասավ խցոնք-կացարանին և Հովհաննին ու Գյուտին պատմեց պատահածի մասին։ Ընկերները փորձեցին սփոփանքի խոսքեր գտնել Մովսեսին մխիթարելու համար։

— Եթե ազնվատունկ լիներ՝ չէր դավաճանի,— ասաց Գյուտը։— Մեր նախնիք մի առած ունեն՝ շատ ոսկի ու մարգարիտ տեսած աղջիկը անսեր կլինի։ Մոռացիր նրան...

Հովհանը ավելացրեց.

— Գյուտն իրավացի է։ Ոչ մի վաճառական էլ ազն չունի։ Հետևապես Սորսորի դուստրը հանուն քո սիրո չէր հրաժարվի մարգարիտներից։ Ի՞նչ գիտես, թե նա կամովին չէ իրեն նետել իր ամուսին-իշխանի ճիտ-պարանոցը։ Միայն թանձրամիտը կարող է մղկտալ այդպիսի կորստի համար։

— Լռե՞ք, լռե՞ք, նա ինձ համար Մարիամ է, մասիսակատար սրբություն,— բացականչեց Մովսեսը, լթողնելով, որ ընկերները իրենց մաղձը մինչև վերջ թափեն Կամարայի գլխին։

Հաջորդ օրը Մովսեսը ճամփա ընկավ դեպի Բասեն։ Նա չհամաձայնեց, որ ընկերները ուղեկցեն իրեն։

— Գյուտ,— ասաց նա,— մերոնց հայտնիր, որ տուն կվերադառնամ մի քանի օրից։ Իսկ այս նափորտիկը ինքդ նվիրիր եղբորս՝ Մամբրեին։

Մովսեսին թվում էր, թե ինքը Վաղարշապատից Բասեն կհասնի մեկուկես օրում։ Սակայն նա տեղ հասավ միայն հինգերորդ օրվա լուսաբացին։ Ահա Արծաթաղբյուրներ կամ Աղբեբակենց կոչվող դալարագեղ գաշտը։ Մովսեսը կանգ առավ Մրկնառինճ գյուղում, որ համարյա Դու գյուղի կողքին էր, նրանից երկու հրասախ հյուսիս։ Հարցուփորձեց Որոտ իշխանի մասին։ Ասացին, թե իշխանը ականավոր, երևելի այր է համայն Բասենում։ Հեռվից ցույց տվեցին նրա ամրոց-դաստակերտի ահեղաջուրք աշտարակները։

Ցերեկվա Զորացյալ ժամին Մովսեսը դուրս եկավ Մկնառինճից և շարժվեց դեպի Դու։ Ճանապարհը թողած նա քայլում էր վարդակարմիր կաքավախոտերով ծածկված դարավանդներով, հուռթի, հասկալեցուն արտերի եզրերով։ Զորակով անցնելիս նրա դեմ ելավ դեղեցկատես մի քաղ։ Մովսեսը ուզում էր կռահել, թե դա ինչ նշան է։ Իսկ քաղը կանգնել և ապշահար նրան էր նայում։ Գուցե դա ոչ թե քաղ, այլ ընտանի այծ է, անցավ Մովսեսի մտքով։ Բայց հենց որ նա քայլ արեց, քաղը ոստյունով պոկվեց տեղից և օդապարիկ[1] վազքով փախավ հեռու։

Մի ժամ հետո Մովսեսը կանգ առավ Որոտ իշխանի սանդղաձև աշտարակներով ամրոցի առջև։ Դեռ չէր որոշել անելիքը, երբ նրա կողքին հայտնվեցին մի քանի զինավառ մարդիկ։ Նրանցից մի գեր երիտասարդ, որ ծիրանաթույր պատմուճան էր հագել, և որի ականջները նման էին սագի լայնշի թաթերի, ձեռքին սայրասուր դաշույն խաղացնելով մոտեցավ Մովսեսին և դաշույնի կոթը դեմ տվեց նրա ծնոտին։ Մովսեսը երկյուղած ընկրկեց և հարցրեց.

— Ովքե՞ր եք։

— Մենք մենք ենք, իսկ դու ո՞վ ես։ Որտեղից հայտնվեցիր այսպես հանկարծահաս։ Չէ որ քո եռևից ոչ ոք նույշ չի ուղարկել։ Դե լսիր, վախկոտ սիրահար։ Ես իշխան Որոտն եմ, Դու գյուղն իմ կալվածքն է, իսկ այս ամրոցը՝ իմ տունը։ Դու իմ տանը մոտեցար գողի նման։ Դրա համար ես հենց հիմա կարող եմ պատժել քեզ։ Բայց ես գիտեմ, որ դու գող չես։ Քո անունը Մովսես է։ Դու եկել ես՝ հուսալով, թե կարող ես տեսնել Կամարային։ Իսկ Կամարան իմ կինն է։ Ի՞նչ։ Դու ուզում ես առարկե՞լ։ Պետք չէ։ Մկնառինճն էլ իմ կալվածքն է։ Այդ գյուղի շինականները իմ հպատակներն են։ Քո գալուստը նրանք նախապես իմաց են տվել ինձ։ Լսիր ինձ, դպիրդ Մովսես։ Իրավ է,

---

1 Կնձաձայն, չոռ վնգստալով հաչելը, կռզկանձելը։

1 Օդապարիկ, սրաթռիչ, օդում պարող, արագավազ։ Մեր նախնիները օդապարիկ էին ասում արագավազ նժույգին։

Կամարան սիրում է քեզ։ Բայց ես նրան չեմ զիջի։ Աշխարհում անընկճելի կանայք չեն լինում։ Նա մի օր ստիպված կլինի սիրել ինձ։ Տեսնո՞ւմ ես՝ չեմ կեղծում։ Դե հիմա գնա և ինչքան սիրտդ տալիս է՝ բարբաջիր, շաղակրատիր իմ մասին։ Բայց եթե անշնորհակալ լինես և նորից երևաս այս կողմերում, ապա ես այլ կերպ կխոսեմ քեզ հետ և այստեղից ողջ չես վերադառնա։

Որոտ իշխանը բարձրացրեց ձեռքը և քիչ հետո նրա մոտ դանդ առավ մի կառք։ Զորական-կառապանին դիմելով իշխանն ասաց.

— Քեզ հետ կգան ես երկու զորականներ։ Երեքով այս երիտասարդ մարդուն, որի անունը Մովսես է, կհասցնեք Վաղարշապատ։ Կիջեցնեք նրան քաղաքին չհասած։ Կաճ վերցրեք։ Որ անձրևի՝ կառքը կաճով կծածկեք, որպեսզի չթրջվեք։ Եթե ճանապարհին բու կունչա, տասներեք անգամ կթքեք կառքի ձախ անիվին՝ նոր կշարունակեք ճամփան։ Դպրին կես ճանապարհին չթողնեք, անփորձ է երևում, իրեն սար ու ձոր է գցում, պողոտաները թողած այծուղիներով է քայլում։

Իշխանն ավարտեց իր խոսքը, շեղ հայացքն ուղղեց Մովսեսին, խորամանկ ժպտաց և նորից բարձրացրեց ձեռքը։ Զորականները Մովսեսին խոթեցին կառքի մեջ։

Հաջորդ օրը դեռ արփին չբացված, գիշերվա լուսափայլ ժամին իշխանական կառքը կանգ առավ Վաղարշապատի Արեգ դարպասի առջև։ Այստեղ էլ զորականները բաց թողեցին Մովսեսին։

Նրան թվաց, թե ինքն արթնացել է ծանր քնից, թե Դու գյուղ գնալն ու Որոտ իշխանին հանդիպելը միայն տանջալի երազ է եղել։ Բայց երբ գրպանից հանեց նարնջագույն քրքումը՝ սթափվեց։ Չէ, արթմնին երազի հետ խառնել չես կարող, այս քրքումը նա պոկել է Աղբերականց դաշտում, Մկնառինճից Դու գնալու ճանապարհին։ Սովորաբար քրքումը պոկում տալիս են դուշակին, որ նրանով մարդու բախտ բացի։ Բայց հիմա ոչ մի քրքում ու դուշակ չեն կարող փրկել իրեն։ Մի օրում այս ինչքա՞ն տառապանք տարավ նա։

Մի տատրակ թևածեց և թառեց Արեգ դարպասի քիվին։ Թռչունը կարծես թե հիշեցրեց Մովսեսին, որ նա պարտավոր է մի բան անել, որ չի կարելի այդպես անվերջ անշարժ մնալ։

Փորձեց քայլել՝ չկարողացավ։ Ուժաթափ էր, աջ ոտքի ազդրն էլ թմրել էր։

Ոտքի թմրությունն, իհարկե, անցավ։ Բայց հոգու ցավը չանցավ ոչ այդ օրը, ոչ էլ հաջորդ ամիսներին։ Վաղարշապատից Խորոնք հասավ տասնչորս օրում։ Ոտքով էր գնում, դրամ չուներ կառք վարձելու համար։

Տեսնելով իրենց ավագ եղբորը՝ Մամբրեն ու Աշխենը հրճվանքից կորցրին գլուխները։ Ստեն ուրախությունից լաց էր լինում, իսկ Արեգուհին երկար ժամանակ իր գրկից բաց չէր թողնում որդուն։

Մովսեսը Տարոնում երկար մնալ, սակայն, չէր կարող։ Շուտով եկան Գյուտն ու Հովհանը։ Նրանց հետ էլ Մովսեսը վերադարձավ Վաղարշապատ։ Նորից ներկայացան կաթողիկոս Հովսեփին։

Երեքն էլ ծառայության անցան կաթողիկոսարանում։ Պիտի նորոգեին «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը։

— Սուրբ գրքի թարգմանությամբ ձեր գործը չի վերջանա,— ասաց Հովսեփ կաթողիկոսը,— հորինեցեք և թարգմանեցեք, իմաստության և ողջախոհության սերմեր ցանեցեք մարդկանց հոգիներում։ Թող աստվածական, աստվածահաճ լինի ձեր ստեղծածը։

Սակայն ոչ Մովսեսի, ոչ էլ Գյուտի ու Հովհանի համար խաղաղ կյանք չսկսվեց։ Վրդովված էր նաև համայն Հայոց աշխարհը։ Զարմանալի երկիր է Հայքը։ Միշտ էլ գտնվել է բախտի հողմակոծ լանջին։ Սասանյան Պարսկաստանն ու Բյուզանդիան երկճեղքել են Հայքը և յուրաքանչյուրը ջանում է բզկտել, արյունաքամ անել իր բաժինը։ Հայերը այնքան զորական ուժ չունեն իրենց ինքնությունն ու ազգային արքայատոհմը վերահաստատելու համար։ Այնուամենայնիվ, նվաճողների երկյուղը չէր անցնում։ Պարսիկ տիրակալներն ուզում էին հայերին կրոնափոխ ու լեզվափոխ դարձնել։ Հանդիպում էին ահեղ դիմադրության։ Կրոնափոխ էին դառնում հայ վախկոտ նախարարներից մի քանիսը։ Շինականները պատրաստ էին մեռնել, բայց մոխրասեր չդառնալ։ Քահանաներից շատերը ասորիներ էին։ Բայց հայ քահանաներն էլ էին ժամերգությունները ասորերեն կարդում։ Պարսիկներին ձեռնտու էր հայերի ասորախոսությունը։ Կարևորն այն է, որ նրանք հունախոս չդառնան և Բյուզանդիայի կողմը չանցնեն։ Այսպես էին խորհում պարսիկ իշխողները։

«Ասորախոս հայը կես հայ է»— ասում էր Պարսից արքա Հազ-կերտը։ Կրթության համար Ասորիք մեկնող հայ պատանիները ասորերեն էին սովորում, Բյուզանդիա մեկնողները՝ հունարեն։ Եվ Հայքում ծնունդ էին առնում երկու ախոյան ուժեր՝ ասորասերներ և հունասերներ։ Գրագետ հայերը կռվում էին գրագետ հայերի դեմ, հալածում միմյանց։ Պարսիկ իշխողները յուղ էին լցնում կրակին։

Մովսեսը մտադիր չէր մասնակցելու ազգության միասնությունը չլատող, սկիզբ ու ավարտ չունեցող այդ վեճերին։ Կամարային կորցնելը, Որոտ իշխանի հետ անսպասելի հանդիպումը կարծես թե ամեն ինչ խառնեց իրար։ Ներանձնացավ իր քահանայական խցում և սկսեց գրել, գրել։ Մի անթարգմանելի թեթևությամբ նա ստեղծեց «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը։

Խորհուրդ մեծ ու սքանչելի
Ոչ յայտ աւուր յայտնեցաւ,
Հովիվք երգեն ընդ հրեշտակս,
Տան աւետիս աշխարհի։

Սնաւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ։

Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ,
Ոչ մեկնելով ի հօրէ,
Ի սուրբ այրին բազմեցաւ։

Ոչ ոք չիմացավ, թե այս շարականն ինչպես վերածվեց երգի ու տարածվեց Հայքի չորս կողմերում։ Արքայական ոչ մի հրովարտակ այդպիսի արագությամբ չէր կարող հասնել շինականին։ «Խորհուրդ մեծ և սքանչելի»-ն հնչեց և՛ եկեղեցիների կամարների տակ, և՛ արձակ դաշտերում։

Հետո գրեց իր անզուգական մեծացուցածները՝ նվիրված տիրամորը.

Առաւօտ խաղաղութեան
Եւ Արուսեակ զուարթաբար,
Այսօր Մարիամ սրբուհին
Ի փառս քո, Քրիստոս,

Ծագեաց մեզ լոյս.
Որպոյն օրինեաց,
Անդադար երգոք սոքօք
Զքեզ միշտ մեծացուցանեմք։

Խնդա եւ ուրախ լէր անհարսնացեալ Մարիամ,
Քանզի որ ի քէն ծնաւ փրկիչ...

Մովսեսի ստեղծած շարականների մասին Հովսեփ կաթողիկոսն ասաց.

— Այսպես գրում էր մեր բաբունապետ Մեսրոպ Մաշտոցը։

Կարծես թե կաթողիկոսի այս խոսքերը ազդանշան դարձան, որ Մովսեսի դեմ սկսվի մի խոլ հալածանք։ Սուրը մի սայր ունի, երկու բերան, նախանձը՝ քսաներկու սայր և քսաներեք բերան։

Եվ եղև այսպես։ Գարնան ծաղկաբեր Արեգ ամիսն էր։ Մեծ պահուց վերջին կիրակին էր՝ ծաղկազարդի տոնը։ Վաղարշապատը տոնական այնպիսի հանդես էր սարքել՝ ասես Հիսուսը ավանակի վրա նստած ուր որ է պիտի մտներ քաղաք։ Մարդկանց ձեռքներին ծաղիկներ և ուռենու ոստեր էին։ Նշանված օրիորդները փեսացուների ծնողներից եկեղեցիներում ստանում էին զարդարված մոմեր։ Այդ օրը նորահարսները իրավունք ունեն եկեղեցուց անմիջապես գնալ հորանց տուն։ Պատանիները ճոճանակ ածելով, ձեռքներին օղակաձև ուռեր և բոբ[1] բռնած, երգում ու տնից տուն անցնելով ձու են հավաքում։ Արեգ դարպասի մոտ, մեծ հրապարակում, նոր փեսաները ուռենու ոստերով «կռիվ» են խաղում։ Խաղում են այնքան ժամանակ՝ մինչև ոստերը կտոր-կտոր դառնան։ Ծաղկազարդին օրհնված ոստերը, որ բարիքի նշան էին, մարդիկ պահում և օգտագործում էին որպես հուռութ։

Այդ օրվա Շառավիղյալ ժամին Էջմիածնի մայր տաճարի բակում կաթողիկոս Հովսեփը, մեծ բազմության առջև սքանչելագույն շարականներ հորինելու համար Մովսեսի գլխին ուռենու ոստերից հյուսած հաղթապսակ դրեց։ Դա համարյա նույնն էր, ինչ օլիմպիական ագոնի ժամանակ Աթենքում տերևներից հյուսած պսակ դնեն հաղթող ագոնարարի գլխին։ Հանդեսին ներկա էր Բասենի Դու գյուղի ամրոցի տեր Որոտը։ Նա Վաղարշապատ էր եկել մենակ, առանց Կամարայի։ Հենց տեսավ, որ

[1] Բոբ, զամբյուղ, կողով։

կաթուղիկոսը պսակ դրեց Մովսեսի գլխին՝ Որոտը դարձավ ատելություն, նախանձի ու չարության դեմ։ Մի ժամում նա իր լիքը քսակը դատարկեց։ Առատ-առատ ոսկի ու արծաթ բաշխեց մի քանի աբեղաների ու իշխանազունների, որոնք միմյանց ետևից մտնում էին կաթողիկոս Հովսեփի մոտ և կրկնում նույն բանը.

— Հայրապետ, մարդիկ հավատում են, որ այդ շարականները, ոչ թե Մովսեսը, այլ ուրիշ մարդ է հորինել։ Մովսեսը պսակի արժանի չէ։ Դու աճապարեցիր։ Շտկիր քո վրիպումը, հայրապետ, թե չէ մարդիկ դրա համար կքարկոծեն քեզ։

Հովսեփի համար այդ ամենն անսպասելի էր։ Բողոքողները անսահման շատ էին։ Ամենագետ կաթողիկոսը այդ օրը կարծես թե կուրացել էր։ Նա չկարողացավ տեսնել դավադրության թելի տուտը։ Եվ օրապակաս որոշում կայացրեց։ Նրա հրամանով Մովսեսի գլխից վերցրին կենցաղօգուտ[1] պսակը։ Վերցրին նույն օրվա Հուրփայլյալ ժամին, հանձնելուց շորս-հինգ ժամ անց, երբ դեռ պսակի ոստերը ազազուն չէին դարձել և ագույցը չէր Բուլացել։ Մովսեսին հայտնեցին, թե շփոթմունք է եղել։

Բայց դրանով ամեն ինչ չվերջացավ։

Ասորի վանական Բաբեսարը մի օր Էջմիածնի մայր տաճարի գավիթում հարգալից բարևեց Մովսեսին և ասաց.

— Աբոն։

Այդ բառի եղած-չեղածը ասորական ողջույն է, որ նշանակում է ավետիք։ Սակայն այդ բառը լսելուց Մովսեսի մարմնով սահմռկեցուցիչ մի դող անցավ, դեմքն այնպես կաս-կարմիր կարեց, որ լուն նրա վրա հազար կտոր կդառնար։ Նա ատելությամբ ու արհամարհանքով նայեց Բաբեսարին և պատասխանեց.

— Դուք, ասորիներդ, հայի լսելիքը խոցող այդ բառերով եք լցրել մեր սրբազան տաճարները։

Բաբեսարը խաղաղ մարդ էր և Մովսեսի հետ վեճի մտնելու ոչ մի մտադրություն չուներ։ Դրա համար էլ նա ձեռքը թափ տվեց ու անցավ լեռլյայն։ Հաջորդ օրը այդ դեպքի մասին ասորին պատմեց քահանա Մրջնիկին։ Վերջինս աղերսաբան էր, շողոմարար, լպիրշ, աղբն արծաթի տեղ ծախող։ Նրա ատելությունը հունական կրթություն ստացողների հանդեպ այնքան մեծ էր, որ նրա բոլոր մտքերից մգլահոտ էր փչում։

Այս «աբոն»-ի վրա Մրջնիկը մի շաբաթ որոճաց և իր խոսքը Հովսեփի կաթողիկոսի առջև բանաձևեց յուրովի.

— Հայրապետ։ Մովսեսն անընկերասեր է և այնպիսի պահվածք ունի, որ չես զգում, թե նա հայկական հողի վրա է։ Նա կարծում է, թե ինքն Ալեքսանդրիայից Ալեքսանդրիա է վերադարձել։ Հանդիմանում է նրանց, ովքեր հայերեն ու ասորերեն են խոսում, ուզում է համարում հունարեն չիմացողներին, լուտանք է թափում երևելի հայ իշխանների գլխին։ Ամբարիշտ է, ամբարտավան, պառակտումի նախանձախնդիր։

Հովսեփը գիտեր, որ Մրջնիկը աղվեսուկ է և նրա ասածը հալած յուղի տեղ չդրեց։ Բայց նաև շատաց. «Մրջնիկ, դու լրբաբար ստում ես»։

— Ես լսեցի,— պատասխանեց կաթողիկոսը։

Այդ երկդիմի պատասխանն էլ գոհացրեց Մրջնիկին։

Մրջնիկը, այնուամենայնիվ, մենակ չէր։ Վաղարշապատում շատ Մրջնիկներ էին վխտում։ Բամբասանքն ու չկամությունը կարծես լցվել և պղծում էր Տափերական լայնանիստ դաշտի հանապազաջինջ օդը։ Աշխարհն ու կյանքը անտանելի են դառնում այն ժամանակ, երբ մարդ չի կարողանում չեզոք մնալ, երբ դիմացինի մեջ տեսնում է նաև երկրորդին՝ լրտեսին։ Չեզոք չէին նաև Գյուան ու Հովհանը։ Անտեսանելի և ոչ մի թույր չունեցող բամբասանքը իր ոլորտի մեջ էր առնում նաև նրանց։

Ընկերները փորձեցին լուսամուտ գտնել։ Հովհանն ասաց.

— Մանիր և տես նախ զքեզ։ Մեր արյունակիցները կարծես թե փոխվել են։ Ջարիքը ծուլությունից է, ժամանակն անբովանդակ անցկացնելուց։ Մեր հիվանդոտ ժամանակներում ծույլերն ավելի են ծուլացել։ Նույնիսկ ծույլի և աշխատասերի աղոթքներն են տարբեր։ Հողմ սաստիկ ոչ կարե շարժել զծառս հաստատուն, և ախտ ձանձրութեան զմիտս հաստատուն։ Ախտ ձանձրութեան կերիչ է սրտի, զերիչ է մտաց։ Յուրաքանչյուր անձի պիտի բնութագրել միայն աշխատանքով։ Մարդու փրկության, հոգևոր բժշկության հիմքը աշխատանքն է։ Ի վերջո բարիքն ու աշխատանքը նույնություններ են։ Նույնիսկ աստված չի օգնի այն մարդուն, որն իր աշխատանքով չի օգնում ոչ իրեն, ոչ էլ ուրիշներին։ Իսկ եթե ավելի արդարությունից լիներք, ապա

---

[1] Կենցաղօգուտ, կյանքի համար պիտանի, կենսօգուտ։ Սա Մովսես Խորենացու օգտագործած բառերից է։

պիտի ասենք՝ չգործող ձեռաց՝ անկեր բերան, ով չի աշխատում՝ չպետք է բերանը պատառ դնի։

Գյուտը առարկեց Հովհաննին.

— Հիմա անօգուտ է ուսուցանող խոսքը, հիմա արդար խախալ է պետք, որ հարդը զատի ցորենից։

— Ո՞վ պիտի ստեղծի այդ խախալը,— հարցրեց Մովսեսը։

— Աստված,— պատասխանեց Գյուտը և շարունակեց,— միայն պետք է կովի պես համբերել։ Երբեմն համբերությամբ ավելի շատ բան ես նվաճում, քան հզոր բանակներով։

— Այդ դեպքում,— հնգնեց Մովսեսը,— եկեք երեքս էլ մոնոզոն՝ մենակյաց դառնանք և սպասենք ազգի։ Գուցե մի օր գան ու հայտնեն, թե Քրիստոսը երկնքից իջել և մեզ է որոնում։

Մովսեսի գլխում ինչ-որ բան փայլատակեց։ Նա աննկատ դուրս եկավ խցից, իսկ Հովհաննն ու Գյուտը շարունակեցին իրենց բանավեճը։

Այդ գիշեր Մովսեսը չքնեց։ Աբեղայական իր խցից նա հայացքը հառեց ամառային լուրջ երկնքին և սկսեց հոգու մեջ գրել իր մեծ «Ողբը»։

Եվ հղկված խոհերը հանգրվանեցին մագաղաթի ակոսներում.

«Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ։ Վերջացավեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց ագիտությամբ շաբաթաոությունը։

Խնդում եմ քեզ, Հայաստանյայց եկեղեցիդ, բեմիդ բարեզարդությունից անշքացած, քաջ հովվից և հովվակցից զրկված։ Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ էլ փարախի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում։

... Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք. արհավիրք հեթանոսների կողմից և կռիվներ հերձվածողների կողմից, և չկա այն խորհրդականը, որ խրատեր և պատերազմի պատրաստեր։

Ավաղ այս զրկանքներին, ավաղ այս թշվառ պատմությանը։ Ինչպե՞ս դիմանամ այս ցավերին, ինչպես ամրապնդեմ միտքս

ու լեզուս և հայրիկիս իմ պարտքը հատուցանեմ այս խոսքով, իմ ծնունդի և սնունդի փոխարեն։ Որովհետև նրանք ինձ ծնեցին և սնեցին իրենց տված ուսումով և ուրիշների մոտ ուղարկեցին կատարելագործվելու։ Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեն իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքներում պարել խիզախ և արագ շարժումներով, և առագաստի երգեր երգել։ Այժմ այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով. նույնիսկ չհասցրի տեսնել նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն ու օրհնությունը։

Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում։ Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը՝ շեղվածների համար։ Ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ հետևողներ է գրավում. ո՞ւր է երկայն ճանապարհները հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացողը։ Կորավ ժողովուրդը, ծածկվեց նավահանգիստը, լքեց օգնականը. լռեց խրախուսիչ ձայնը։

Ո՞վ այսուհետև պիտի հարգի մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր՝ աշակերտիս առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտի մասամբ իր որդիներից հաղթվելով։ Ո՞վ պետք է զսպի առողջ վարդապետությանը հակառակ դուրս եկողների հանդգնությունը, որոնք ամեն բանով բանգված ու քայքայված՝ շատ ուսուցիչներ են փոփոխում և բազմաթիվ գրքեր, ինչպես ասաց հայերից մեկը. ամեն խոսքի առթիվ նրանք հավասարապես նեղանում են, և մարդկանց համար չար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ։ Ո՞վ պետք է նրանց պապանձեցնի սաստելով և մեզ սփոփի գովելով և չափ դնի խոսքի և լռության։

Երբ մտածում եմ այս բաների մասին, սիրտս հառաչում և արտասվում է և ցանկանում եմ տխրալից և սգավոր ասել։ Եվ չգիտեմ ինչպես հորինեմ իմ ողբը և կամ ո՞ւմ արտասվեմ, արդյոք իմ թշվառ մանուկ թագավորին, որ վատթար խորհրդակցությամբ իր ցեղով հանդերձ գեն նետվեց և նախքան մահով մեռնելը անարգաբար աթոռից կործանվեց, թե ի՞նձ, որի գլուխից վերցվեց փառավորող գեղեցիկ կենցաղօգուտ պսակը. ար-

դյոք իմ հորն ու քահանապետին, այն վսեմ մտքին, որ ուր գնում, տանում էր կատարյալ խոսքը, որով կառավարում էր և բարեկարգում, և սանձերը բուռը հավաքած՝ ուղղություն էր տալիս ընթացքին և սանձահարում էր օտարոտի լեզուները. թե ինձ, նրա հոգու խանդից զրկվածիս ու տնանկիս. արդյոք իմ ծնողի՞ն, այն վարդապետության աղբյուրը, որ ոռոգում էր արդարությունը և իբրև հեղեղ դուրս էր քշում ամբարշտությունը, թե ինձ, նրա խրատները խմելու ծարավից ցամաքածիս ու թառամածիս, արդյոք մեր աշխարհին արդեն եկած աղետնե՞րը, թե ապագայում սպասվածները։

Ո՞վ մեզ այս բաներում ճառակից կլինի՝ մասնակցելով մեր տրտմությանը, ո՞վ մեզ կընկերանա՝ ցավակցելով մեր ողբին, կամ արձանների վրա փորագրելու Զարթիր, Երեմիա, զարթիր և մարգարեանալով հանդերձ ողբա այն, ինչ թշվառություններ որ կրեցինք և ինչ պիտի կրենք. գուշակիր, որ տգետ հովիվներ պետք է երևան գան, ինչպես գուշակեց Զաքարիան իսրայելացիների համար։

Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով. ոսկեներ, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը։

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվամոլ, քան աստվածասեր։

Վիճակավորները՝ հպարտ, դատարկապորտ, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առևտուր և կատակերգություններ սիրող։

Աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են։

Աշխարհականները՝ ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասակար, ժառանգությունից փախչող։

Զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, ելուզակ, ավազակներին համաբարո։

Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, հափշտակող, աշխարհ ավերող, աղտեղասեր, ստրուկներին համախոհ։

Դատավորները՝ տմարդի, ստախոս, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող։

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած։

Եվ ինչ է բոլորի ապացույցը, եթե ոչ այն, որ աստված մեզ անտես է արել և տարրերը փոխել են իրենց բնությունը. գարունը երաշտ, ամառը սաստիկ անձրևային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև։ Քամիները բքաբեր ու խորշակաբեր, ցավեր տարածող. ամպերը կայծակներ թափող, կարկտաբեր. անձրևներն անժամանակ և անօգուտ. եղանակը դաժան, եղյամաբեր. ջրերի ավելանալը անօգուտ, իսկ պակասելը՝ չափազանց. երկրի պտղաբերությունը նվազած, անասունների աճելությունը պակասած, այլև՝ երկրաշարժեր և սասանումներ։ Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքին, թե ամբարիշտներին խաղաղություն չկա։

Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորները, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս։ Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած. հավատը ծախվում է այս ունայն կյանքի համար։ Ասպատակություններ են գալիս անհատնում և շատ կողմերից, տները թալանվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում աղնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ։ Աստվածապաշտությունը մոռացված է և կա դժոխքի ահնկալություն։

Որից փրկե Քրիստոս աստված մեզ և բոլորին, որոնք ճշմարտությամբ երկրպագում են նրան։ Նրան փառք բոլոր արարածներից, ամեն»։

Հազար ու մի ողբ տեսած Հայոց աշխարհի մասին մինչ այդ ոչ ոք այդպիսի թուղթ չէր գրել։ Դա ինքնախարազանող հրովարտակ էր, որ շանթում էր ամենքին՝ բարիքներ արարող շինականից բացի։ Միաժամանակ, մինչ այդ ոչ մի մատյան, ոչ մի հրովարտակ այդքան շատ չէր ընդօրինակվել։ Հայքում անկյուն չկար, որ չիմանային Մովսեսի «Ողբի» մասին։ Ընդօրինա-

կել էին տալիս Մովսեսի թշնամիները, իհարկե, ամենից շատ Որոտ իշխանը։ Վերջինիս նպատակն էր համընդհանուր ատելության թիրախ դարձնել Մովսեսին։ Որոտը համոզված էր, որ նախարարները, եկեղեցական պաշտոնյաներն ու նրանց աթոռաժառանգները չեն հանդուրժի իրենց հասցեին ուղղված վիրավորանքն ու անարգանքը, կսկսեն անգոսնել Մովսեսին և համատեղ ուժերով վրեժ լուծել նրանից։ Սակայն անցավ մի տարի և աշխարհալուր դարձած «Ողբ»-ի հեղինակը շարունակում էր ազատ ապրել Վաղարշապատում և ճշմարտախոս իմաստասերի անուն վայելել։

Շուտով Հայքում տարածվեց Մովսեսի մյուս աշխարհապատում թուղթը՝ «Յուրաքանչյուր երկրորդ հայ լոշտակ է»։ Զարմանալ պետք չէ։ Մարդակերպ արմատով կենարար բույս է լոշտակը, որի ցողունը նման է խխունջաձև ոլորուն ճանճիկների։ Նրա արմատով բուժում են ազգի-ազգի՝ հիվանդություններ։ Բայց աշխարհում ոչ մի բույս այնպես դժվարությամբ չի դուրս գալիս գետնից, ինչպես լոշտակը։ Դուրս գալիս էլ լաց է լինում մարդու պես։ Ասում են հեռու-հեռու անցյալում, երբ դեռ մարդը թվեր չուներ ժամանակը հաշվելու համար, մի ճգնավոր էր ապրում Արածանիի աստվածանման ափին։ Այս ճգնավորը իր պոչով ամեն օր մաքրում էր Անահիտի տաճարի մոխրատունը, որպեսզի կաղ գեր չգա և մոխիրը խառնելով՝ Հայոց աշխարհը չխոովի։ Ճգնավորը մի փոքրավոր ուներ Լոշտակ անունով։ Սա նախանձում է իր տիրոջը, մտադրվում ձեռք գցել մոխիր մաքրողի պաշտոնը և դառնալ ինքնիշխան։ Դավակից դառնալով գեին՝ Լոշտակը ձյութոտում է քնած ճգնավորի մորուքը և ճրագը մոտեցնելով հրկիզում այն։ Մինչ հանկարծակիի եկած ճգնավորը փորձում է հանգցնել մորուքի բոցը՝ դարան մտած գեը դուրս է գալիս, խածնում և պոկում է նրա պոչը։ Ճգնավորը ուշքի գալով, անիծում է տիրանենգ փոքրավորին և ասում. «Գետինն անցնես ու ամեն հիվանդության դեղ դառնաս»։ Այդ անեծքից հետո փոքրավորը դառնում է կենարար բույս։ Լոշտակի բնություն ունի յուրաքանչյուր երկրորդ հայ, իր թղթում ասում է Մովսեսը... Այդ թղթով նա հավասարապես խայթում էր և հունասերներին, և պարսկասերներին։

[1] Ազգի-ազգի — բազմատեսակ։

Երկրորդ թղթի ընդօրինակման ժամանակ, այնուամենայնիվ, շարամիտներին հաջողվեց ընդմիջարկություններով[1] աղարտել Մովսեսի գրածը։

Ասես ինչ-որ մեկի հրամանով Մովսեսի հակառակորդները միանգամից լռեցին։ Մովսեսն զգաց, որ այդ լռության խորքում դավադրություն կա։

Մի իրիկնադեմի ծառապատ փողոցով անցնելիս մի նետ սուրաց նրա աջ ականջի կողքով։ Մաղապուրծ Մովսեսը շփոթված ակն ածեց չորս դին, բայց գլխի չընկավ, թե որտեղից թռավ նետը։ Շուրջը լայնասաղարթ ծառեր էին, ոչ ոք չէր երևվում։ Շտապեց Գյուտի և Հովհանի մոտ։ Ընկերները պատահարը մահափորձ չհամարեցին։

Այդ դեպքից տասնվեց օր հետո մայր տաճարի բակի մոտ գիշերվա խավարակ ժամին երկու հեն հարձակվեցին Մովսեսի վրա և սկսեցին բռունցքներով ծեծել նրան։ Մովսեսը ավազակներից մեկի ձեռքին մթության մեջ նկատեց դաշույնի փայլը։ Մովսեսը չկորցրեց իրեն, հարվածեց նրա ոտքին։ Դաշույնը բռնած հենը սայթաքեց և ընկավ։ Մովսեսը, հավաքելով իրեն, ուժգին մի հարված հասցրեց երկրորդի երեսին և պոկ գալով տեղից, փախավ դեպի աբեղայական կացարանները։ Վազելով հասավ իր խուցը և փութով գցեց դռան սողնակը։ Մարմինը սաստիկ ցավում, այրվում էր։ Նրան թվում էր, թե ոչ թե մարդիկ, այլ մի բոռ, մի իշամեղու է հարձակվել իր վրա և մարմինը խայթել բազում տեղից։ Գիշերը անցկացրեց սոսկալի տենդի մեջ։

Մի քանի օր նա դուրս չեկավ խցից։ Հետո առանց Հովսեփ կաթողիկոսին և Գյուտին ու Հովհանին իմաց տալու աննկատ հեռացավ Վաղարշապատից։ Ինքն էլ չգիտեր, թե ուր է գնում։ Գյուղից գյուղ անցնելով իններորդ օրում հասավ Սյունիքի Թանահատ վանքը։ Ամառնամուտ էր։ Բնությունն այստեղ այնքան պերճ ու հրաշագեղ էր, որ մարդ մոռանում էր ուտելու ու խմելու մասին։ Դրա համար էլ այս վանքի ժուժկալ մոնոզոն-

[1] Ընդմիջարկություն — հավելում, ներմուծում, շարադրանքի մեջ ոչ հեղինակի կողմից։

Նրերը հատել, ընդհատել են թան խմելն ու ապուր ուտելը և դարձել թանահատներ, թանից հրաժարվողներ։ Վանքն էլ նրանց անունով կոչվել է Թանահատ։ Մովսեսին վանք ընդունեցին առանց պայմանի։ Թանահատներից ոչ մեկը չէր ճանաչում Մովսեսին։ Նրանց մտքով չէր էլ անցնի, թե հայացունց Ողբի հեղինակը կարող էր Վաղարշապատից գալ հասնել Թանահատ։ Այդ օրերին թանահատները երկու քարգործ վարպետի հետ սկսել էին վանքի մեծ շինության կառուցումը։ Մովսեսը քարգործներին օգնեց պատրաստելու մի գեղեցիկ ախավեղագեռ։ Թանահատները սիրեցին Մովսեսին։

Բայց և այնպես Թանահատն իշխան չդարձավ Մովսեսի համար։ Մի օր Մովսեսը նկատեց, թե վանահայրը ինչպես է զրուցում աբեղա Մրջնիկի հետ։ Գուցե Մրջնիկը Վաղարշապատից Թանահատ է եկել ուրիշ բանի համար։ Ի՞նչ իմանաս։ Մրջնիկն, այնուամենայնիվ, հենց այնպես չէր հասնի Թանահատ։ Կամ որոնում են Մովսեսին, կամ թակարդ են լարում նրա դեմ։ Մովսեսը, որ աշխատում էր քարգործների հետ, առանց երկար ու բարակ ծանրութեթև անելու, քաշվեց անտառի եզրն ու մտավ խորքը։ Թանահատներն այլևս չտեսան նրան։

Գիշերն անտառից դուրս չեկավ։ Այստեղ իրեն ավելի ապահով էր զգում։ Շատ-շատ կարող էր արջի հանդիպել։ Գազանից, անկասկած, կարելի է մի կերպ ազատվել։ Դժվարը մարդու լարած որոգայթից ազատվելն է։

Հե՛յ, քաջազարմ որդիդ Ստեփ, այս ի՞նչ օրն ընկար դու։ Ինչո՞ւ վերադարձար Ալեքսանդրիայից։ Այնտեղ ոչ ձյուն կար, ոչ այսքան դավադրություն։ Քո թշնամին լոկ Որոտը չէ։ Երևի Հազարից ավելի նետ ու նիզակ կա, որոնք հիմա դարանամուտ քեզ են սպասում։ Քո հարազատ Տարոնում մահվան զգացում ունեցող կանդը ճախրում է վեր և իր մահն ընդունում երկնի լուրթ բարձունքներում։ Դա փառավոր, արծվային մահ է։ Դու ոչ միայն կանդի, այլ մի լորու չափ էլ չկաս։ Քեզ կսպանեն մի ձորակում, կամ մի թփուտի ետև։ Ինչքան պիտի մնաս անտառում։ Քաղցը կհաղթի և դու ստիպված կլինես դուրս գալ մարդկանց մեջ։ Մի կտոր հաց կտան, հետո կսպանեն։ Մարդու մատները մեկ փափկասուն, փաղաքուշ են դառնում, մեկ՝ հոշոտող մագիլներ։

Բացատում, Մովսեսից տասնութ-քսան քայլի վրա ոստնեց մի համուր և ծածկվեց ծառերի ետևում։ Մովսեսի մտքերն ասես

մի պահ ընդհատվեցին։ Եթե կարողանար՝ բախտի փոսի վրայով ինքն էլ կոստներ այդ համուրի նման։ Բայց որ փոսից ազատվեր։ Փրկավետ ուղի չկար։ Ամեն տեղ և փուշ կա, և փականք։ Միշտ չէ, որ կարող ես ոստնել փորձանքի վրայով։

Զիմացավ, թե ինչպես դուրս եկավ անտառից և քայլեց մեծ ճանապարհով։ Կանգ կառնի այնտեղ, որտեղից ծուխ երևա։ Կյանքն այնտեղ է, ուր ծուխ կա։ Մարդիկ հաց կտան և քաղցը կհագեցնա։ Ճանապարհի եզրին մոխրագույն մի մտրուկ տեսավ։ Այստեղ պիտի գյուղ լինի, կռահեց Մովսեսը, հիմա ինչ-որ տեղից պիտի ծուխ ելնի։

Դարձդարձիկ ճանապարհը կոտրվեց տափարակում, և Մովսեսը տեսավ առաջին տունը։ Նա կանգ առավ ու սկսեց դիտել։ Որդան կարմիր շրթներով ժրաջան մի կին բակի անկյունում լվացած ասր էր շորացնում։ Հետո ելավ տեղից, տնից բադի փետուրների խուրձ բերեց, փռեց շեչաքարի վրա և փայտի փոքրիկ ձողը վերցրած մոտեցավ կրակարանին։ Զողով բորբոքեց կրակը, ապա նույն ձողով սկսեց փոշեհան անել մի հին քուրձ։ Քիչ հետո նորից մոտեցավ կրակարանին, կաթսայի միջից հանեց եփած միսը և սկսեց քամել արգանակը։ Տնից դուրս եկավ ձիգ քթի ունեցող մի այր։ Նրա ձեռքին փայտե մսահան-պատառաքաղ կար։ Մսահանն ավելի գրգռեց Մովսեսի ախորժակը։ Նա չկարողացավ զսպել իրեն և ձայնեց.

— Է՛յ, բարի մարդ, դու չե՞ս կարող ուտելու որևէ բան տալ ինձ։

Ձիգ քթով մարդը ձեռքով հրավիրեց Մովսեսին։ Կինն անմիջապես քաղցրահամ ոսպնաթան և լավաշ մատուցեց Մովսեսին։

Քիչ հետո տանտերը հարցրեց։

— Որտեղի՞ց և ո՞ւր։

— Ինքս էլ չգիտեմ, թե որտեղից եմ գալիս, չգիտեմ նաև, թե ուր եմ,— պատասխանեց Մովսեսը։

Դրանով էլ նրանց զրույցն ավարտվեց, միմյանց ասելիք չունեին։ Տանտերը մի քանի լավաշ ու աղ տվեց Մովսեսին։ Հայոց աշխարհում ճամփորդին աղ տալը նշան էր, որ տանտերը նրան հաջողություն է մաղթում։

Մովսեսն առանց դյուղ մտնելու շարունակեց ճամփան։ Ճամփեզրերից մորի քաղելով շարժվեց դեպի կողքի անտառը։

Դիմացի լեռան լանջից իջնող զովասուն հովը փչեց դեմքին։ Հովն ասես ինչ-որ բան հուշեց նրան։ Նրա սրտից սկսեց հորգալ ականակիտ, քաղցրաձայն երգը։ Հախուռն էր ձայնը, սրտապարար, դյութող։ Նրա երգի մեջ մորմոք ու մրմունջ, իղձ ու փափագ կար։

Ախորժալուր ձայնը բռնել էր շրջակա դար ու դարավանդները։ Բայց ահա Մովսեսի դեմ դիմաց կանգ առան մի խումբ հաղթահասակ, զինավառ մարդիկ։ Նրանցից մեկը, որի հագին բարձր օձիքով քղամիդ կար, ասաց.

— Որտեղի՞ց լույս ընկար։ Դու նժդեհ ես, Սյունիքում այդպիսի ձայն ունեցող գուսան չկա։

— Ես գուսան չեմ,— ընդհատելով երգը՝ ասաց Մովսեսը։

— Ի՞նչ է անունդ, մարդ։

— Մովսես։

— Իսկ իմը Զվիկ է։ Նայիր ձախ, տեսնո՞ւմ ես, ես այդ ամրոցի տերն եմ։ Արի համաձայնիր և գուսանություն արա իմ ամրոցում։ Զանձրույթ չես զգա։ Առանց մեղրի չես ապրի ոչ մի օր։ Ես քեզ ավելի շատ կվարձատրեմ, քան քաջասիրտ իմ որևէ զորականի։ Իսկ փառք՝ քեզ քո ձայնը կտա։

— Իշխան, ես ուրախությամբ կհամաձայնեի մինչև կյանքիս վերջն ապրել քո ամրոցում՝ եթե առաքելություն չունենայի Հովսեփ կաթողիկոսի կողմից։

— Աբեղա՞ ես։

— Այո՛, իշխան։

— Ափսոս, ես մտադիր չեմ բռնանալ քո կամքի վրա։ Բարին ընդ քեզ։ Հա, չմոռանամ ասել, որ դու քեզ չես ճանաչում։ Երևի չգիտես էլ, թե ինչ աստվածային ձայն ունես։ Քո ինչի՞ն է պետք աբեղայությունը, գնա և երգիր, Մովսես, դու քո ձայնով կարող ես գրավել բոլոր ամրոցները։

Որպես հրաժեշտի նշան՝ Զվիկ իշխանը բարձրացրեց իր մկունդը և գնաց։ Նրան հետևեցին մյուս զորականները։

Մովսեսը մնաց ճամփեզրին ապշահար կանգնած։ Հանկարծ նա մտաբերեց իր ուսուցիչ Նոր Պլատոնի պատմածը հնդկական Ագնի աստծու մասին։ Սրտահաճո երգ լսելիս Ագնին բարձրացնում էր ձեռքը, արեգակի ճառագայթներից մի լալ պոկում ու տալիս երգչին։ Մովսեսը համոզված էր, որ Հայոց աշխարհում իրեն ոչ ոք լալ չի տա։ Բայց ինչո՞ւ չերգել։ Գուսանն ինչով է վատ աբեղայից։ Հիմա ինքն ուրիշ անելիք էլ չունի։ Մնացել է

Միայն երգը։ Բայց երգն էլ սերմի նման է, ուշ ցանածը նվազ բերք է տալիս։

Մովսեսը Սյունիքում էլ սկսեց գուսանի իր դայլայլը։ Նրա դյութիչ ձայնը լսելիս՝ մարդիկ հիացմունք էին ապրում։ Սյունիքից անցավ Արցախ, Արցախից Փայտակարան։ Հասավ Կասպք և իր երգը հնչեցրեց Վրկանա ծովի ափին։ Այս ծովափին աճում է ձևով և գույնով մեղրամոմի նմանվող մոմիկ բույսը։ Մովսեսը մի մոմիկ կտրեց և դրեց ծոցագրպանում։ Ասում են՝ դժբախտություն չի պատահի հարազատներին այն պանդուխտի, որն իր գրպանում մոմիկ է պահում։ Վաղարշապատից լուր չուներ, ասես իշխաններն ու աբեղաները մոռացել են նրան։ Կորցրել էր օրերի հաշիվը։ Երգում էր ուրիշներին հաճույք ու վայելք պատճառելու համար։ Չէր արձագանքում գեղանազ օրիորդների սիրածարավ ծպիտներին։ Այր մարդու տղամարդության իմաստն այն է, խորհում էր Մովսեսը, որ սիրո համար կարողանա զոհաբերել ամենաթանկ բանը։ Իգասեր, իգամոլ են դառնում այն այրերը, ովքեր դադարում են սիրելուց։

Մովսեսին հաճախ թվում էր, թե մոռացության է տալիս և՛ Տարոնի Մեղրագետի հովիտը, և՛ իր հարազատներին, և՛ Ալեքսանդրիան, և՛ Վաղարշապատը։ Ասես դուրս է եկել աշխարհից, ընկել մի մթին քարանձավ և ձեռքի աղոտաճաճանչ ճրագով ճամփա է որոնում դեպի արևի պայծառ լույսը։ Մեկ հանդերձն էր փոխում, մեկ կզակի մորուքը գոշ՝ նոսրահեր դարձնում, մեկ՝ հաստ ու երկարուկ։ Երբեմն էլ նրբին մորթու դիմակով կամ դիմափոշով աղարտում էր դեմքի բնական տեսքը, կամ ման գալիս ալևոր մարդու նման՝ ցուպը ձեռքին։ Չէր վստահում ոչ ոքի։ Սովափից զարհհ ու փրփրիկ էր հավաքում և եռացնում։ Զարհհն ու փրփրիկը միասին դառնում էին օշնան։ Դրանով լվացվում էր ու լվանում հագուստը։ Շաբաթվա մի օրն էլ ձրկնորս էր դառնում։ Ժամանակն սկսել էր կերպարանափոխել նրան։ Ավելի սևաթույր էին դարձել ակնակապիչները։ Մովսեսին թվում էր, թե խաբկանք է իր ապրած ամբողջ կյանքը։ Մշտահուշը, մշտափափագը Կամարան էր, որ երազների աշխարհում երևում էր հեռուստ, այն էլ ոչ թե հայուհու, այլ քանանուհու տեսքով։ Ժամանակը հաղթում էր, սկսվում էր մոռացումը, որ մարդու համար նույնն է, ինչ կարիճի համար սեփական խայթը։ Փորձեց հաշվել, թե ինչքան ժամանակ է մնացել Կասպքում՝ չկարողացավ։ Վերջապես սերը հաղթեց, նա որոշեց ճամ-

փա գտնել դեպի Կամարան։ Կասպքից Վաղարշապատ ուղևորվեց ձիարշավի եկած նժույգավարի նման։ Տեղ հասավ երրորդ օրը։ Ոչ ոքի չհանդիպեց։ Կարծես թե ոչինչ չէր փոխվել, միայն շատացել էին անիրեն հայացքներով մարդկանց դեմքերը։

Գիշերը, չնայած ցուրտ էր, մնաց վաճառական Սորսորի ագարակիկում, փշատենիների առջևով ետ ու առաջ քայլելով։ Ոչ մի տեղ Կամարան այնքան մոտ չէր նրան, որքան այստեղ։ Հաջորդ օրը քայլեց Վաղարշապատի փողոցներով, մի քանի անգամ պատուհան տվեց էջմիածնի մայր եկեղեցու բակում։ Ինքը ջատերին տեսավ ու ճանաչեց, բայց իրեն ոչ ոք չճանաչեց։ Դա քաջալերեց նրան։ Փոքրոգի մարդկանց մտապատկերում մեռնելը դեռևս մահ չէ։ Չարժե դրա համար սիրտ մորմոքել, սրդոլել ու քրթմնջալ։ Հիմա իրեն ձեռնտու է անծանոթ մնալը։ Թե չէ՝ հենց որ ճանաչեցին, մեջտեղ կելնի նաև դարանակալած քեռը։ Պետք չէ ցուցանել ինքնությունը։ Հաղագս ինչի՞ ցուցանի։ Որ կործանե՞ն իրեն։ Հին առածն ասում է. «Ոչ մի ձագ ձագ չի մնում, ինչ էլ անես՝ կոդեռնը մի օր ուղտ պիտի դառնա»։

Սակայն Վաղարշապատը նաև ուրիշ գույնով ներկայացավ Մովսեսին։ Սա միայն այն քաղաքը չէր, որտեղ դավել, լկանքի են ենթարկել նրա հոգին, որտեղ դավել և փորձել են սպանել նրան։ Այս քաղաքում է ծնունդ առել նրա առաջին սերը։ Սորսորի ագարակիկում նրա աչքին պարզ երևաց Կամարայի փրխրուն ուրվականը։ Այստեղից են սկսվում նրա երջանկությունն ու դժբախտությունը։ Գյուտին ու Հովհանին չտեսավ։ Գուցե նրանք Վաղարշապատում էլ չեն։ Բայց նա հիմա Գյուտի ու Հովհանի մասին չէր մտածում։ Կամարայից բացի ոչ ոքի տեսնելու ցանկություն չուներ։

Ու ինքն էլ չիմացավ, թե ոտքն ինչպես դուրս դրեց Արեգ դարպասից և կանգ առավ ճիշտ այն տեղում, որտեղ Որոտ իշխանի զորականները տարիներ առաջ իշեցրել էին նրան կառքից։ Չուզեց հիշել Որոտ իշխանի լկտի վերաբերմունքը իր հանդեպ, նրա նիզակաձև սպառնալիքները և ուղևորվեց դեպի Բասեն։ Ճանապարհին ընկերացավ մի տարեց գուսանի։ Մհուբ էր անունը։ Նրա խոժ, կապտաժեռ աչքերն ավելի շատ մոտ էին ականջներին, քան ճակատին։ Քիթն էլ քթի նման չէր, այնքան տափակ էր, որ թվում էր, թե ոչ թե քիթ է, այլ այտի մի մասը։

Մհուբի դեմքի վրա նշմարելի ուրիշ բան չկար։ Չարժեր նայել նրան։ Պետք էր նրան ունկնդրել առանց դեմքին նայելու

երկրի երեսին ոչ ոք չէր կարող նրա պես փանդիռ նվագել։ Գողթնցի էր։ Տասնյոթ տարեկանից դուրս էր եկել գինեվաճառ Գողթանից և սկսել ոտի տակ տալ Հայոց մոտ ու ծայրակալ գավառները։

— Դու չե՞ս հոգնել, Մհուբ,— հարցնում էր Մովսեսը։

— Մարդիկ չեն հոգնում, Մովսես, չար ոգիներն են մարդկանց հավատացնում, թե իբր աշխարհում հոգնություն կա։ Մարդու կյանքի եղածն ի՞նչ է, որ խոսք լինի հոգնության մասին,— իմաստասերի պատասխան էր տալիս Մհուբը։

— Այդ ինչի՞ր ես ասում, Մհուբ, չէ՞ որ աստված հոգնություն ստեղծել է հենց մարդու համար։

— Դա խարկանք է, Մովսես, հիսուն կամ հարյուր տարին տիեզերական մեծ ժամանակի օրապակաս ակնթարթն է։ Տեսնո՞ւմ ես իմ փանդիռը, ապա նայիր, բունն ինչքան փայլուն է։ Ի՞նչ ես կարծում քանի՞ տարեկան կլինի այս փանդիռը։

— Երևի տասնհինգ կամ քսան,— ասաց Մովսեսը։

— Ոչ, Մովսես, սա երկու հարյուր տարեկան է, սրան դիպել են նաև իմ ապուպապի ձեռքերը։ Այս փանդիռը չորս-հինգ մարդու կյանքի չափ արդեն ապրել է։

— Իմ ուսուցիչ Նոր Պլատոնն ասում էր, որ մարդ չպետք է տրտնջա կարճ ապրելու համար, չէ որ աշխարհում թիթեռ կա, որն ընդամենը մի օր է ապրում։

— Չէ, Մովսես, ես համաձայն չեմ քո ուսուցչին։ Այդ թիթեռի համար օրը հավերժություն է, իսկ մարդու համար հարյուր տարին մի ակնթարթ է, որովհետև մարդն զգացողություն ու միտք ունի և դարը տարբերում է ակնթարթից։ Մարդու համար չկա ավելի մեծ երջանկություն, քան աշխարհում ապրելը։ Մարդ այդ երջանկությունը լիապես կզգա, եթե միայնակ լինի բնության հետ։ Բայց մարդուն խանգարում են մյուս մարդիկ։

— Ես էլ քեզ հետ չեմ համաձայն, ինքնին երջանկությունը թիթեռային է։ Իսկական երջանկությունը մարդուն մարդն է տալիս և ուրիշ ոչ ոք։ Դու ինքդ լավ դիտես, թե ուր ենք գնում մենք։ Տեսնո՞ւմ ես, առանց Կամարայի չեմ կարողանում ապրել։ Եվ ահա գնում ենք դեպի Դու, չնայած մեր ձեռնարկը կարող է հաջողակ չլինել։

— Որոտ իշխանն աղքատատյաց մարդ է։ Նա իր շներին քիչ է լակ տալիս, որպեսզի նրանք մոլեգնաբար հաչեն դղյակի դարպասների առջև երևացող մուրացկանների վրա։ Ինձ որ

մնար՝ նրա բազմապարիսպ դղյակի կողքով էլ չէի անցնի։ Բայց գն գուսանը գուսանի համար ամոլ է, լուծ քաշող ընկեր, չեմ կարող քեզ մենակ թողնել։

Միանգամից Դու չմտան։ Մհուբը զարմացավ, տեսնելով, թե իր աչքի առջև ինչպես կերպարանափոխվեց Մովսեսը։

Վերջապես նրանք դուրս եկան դղյակ-ամրոցի մեծ դարպասի առջև։ Մհուբը հնչեցրեց իր փանդիռը և շրջապատը լցվեց կախարդող հնչյուններով։

Սկզբում թնդաց Մհուբի փանդիռը։ Հետո Մհուբին նվագակցեց Մովսեսը։ Եվ փաղաքշանքով ու երազանքով արբեցնող հնչյունները սրահից դուրս հորդացին ու թափվեցին Դու գյուղի ձորերն ու հովիտները։ Ինչքա՞ն շատ սեր կա աշխարհում, մի՞թե մարդիկ կույր են ու ոչինչ չեն տեսնում։ Տիեզերքում ամեն բան խախուտ է ու անցողիկ, ամեն բան վերջ ու փլուզում ունի, անսասանը միայն սերն է։ Տիեզերքի մույթը՝ նեցուկն էլ սերն է։

Հետո երկու փանդիռների նվագը կամաց-կամաց քնքշացավ ու մեղմացավ։ Հենց այդ ժամանակ էլ հնչեց Մովսեսի ձայնը։ Աստվածային դյութանք կար այդ երգի մեջ։ Փշալից է սիրո ճամփան, ասում էր երգը, ամեն քայլում՝ կիզող մորենի։ Ի՞նչ ես գտել այս չնչին, այս փքուն պալատում։ Մի օր քո մահը կողբան ձայնարկու, ողբասաց կանայք, բայց քո սերը ոչ ոք չի ողբա։

Կամարան չերևաց։

Երգը լռեց։ Մհուբն ինչ-որ բան կռահեց և Մովսեսին ասաց.

— Գնանք այստեղից, թե չէ մեր գլխին դժբախտություն կգա։

Մովսեսը չէր լսում նրան։

Մհուբը Մովսեսին ուժով հրեց առաջ։ Ձախ ձեռքով բռնելով փանդիռները՝ Մհուբը աջով սկսեց իր ետևից քարշ տալ Մովսեսին։

***

Շարժվելով դեպի հյուսիս և ոչ մի տեղ կանգ չառնելով հասան Կարին։ Մհուբն այստեղ հրաժեշտ տվեց Մովսեսին և ասաց.

— Առաջիկա յոթ տարիներում ես կշրջեմ Հայոց աշխարհի միայն ծայրակալ գավառներում։ Բասենում ու Տափերական

դաշտում չեմ երևա։ Մեծ սերը սովորաբար մի կաթիլ երջանկություն է տալիս, մի կարաս դժբախտություն։ Քո երջանկության բաժինը դու արդեն ստացել ես, քեզ մնացել է կարասը։

Մովսեսը մնաց միայնակ։ Կարինում նա ոչ ոքի չէր ճանաչում։ Քայլեց անհրապույր, այծուղի փողոցներով և հարցուփորձելով հասավ Կարինի միակ վանատուր-իջևանատանը։ Տեսան փանդիռով է՝ օթևանելու տեղ և նպար տվին։

Աչքունքը չէր բացվում, չէր կարողանում ժպտալ մարդկանց։ Զայնը կտրվել էր, սկսել էր հազալ, մատները չէին մոտենում փանդիռի լարերին։

Մի քանի օր անց իջևանատերը իր շարությունը թափեց Մովսեսի գլխին։

— Եթե իմանայի,— ասաց իջևանատերը,— թե ծույլ ու անբան մարդ ես, չէի թողնի, որ ոտքդ ներս դնեիր իմ իջևանատունը։ Ոչ դրամ ունես, ոչ էլ երգել կամ նվագել գիտես։ Իսկ ես չեմ կարող ձրիակեր պահել։ Դու չես էլ նմանվում գուսանի։ Գուցե այս փանդիռը գտել կամ գողացե՞լ ես։ Փանդիռը քեզ չեմ տա, կվերցնեմ վարձի փոխարեն։

Մովսեսը լսում էր և զարմացած նայում իջևանատիրոջ անտաշ դեմքին։

Հետո իջևանատերը բռնեց Մովսեսի ուսերից և դուրս քշեց վանատուրից։

Ջիմանալով իր անելիքը՝ Մովսեսը քայլեց Կարինի փողոցներով։ Հասավ արևմտյան դարպասին և գլխի ընկավ, որ դուրս է գալիս քաղաքից։ Հենց այստեղ էլ կանգնեց ու սկսեց դիտել, թե քարգործ շինարարներն ինչպես են բարձրացնում պարսպապատը։ Աչքով չափեց պատն ու ասաց.

— Ծուռ է։

— Ի՞նչ ասացիր,— ձայնեց գործավորների գլխավորը, մոտենալով Մովսեսին։

Մովսեսը ցույց տվեց, թե որտեղից է սկսվում պատի ծռությունը։

Շինարարների գլխավորը, որի անունը Ջաջուռ էր, զարմացավ, տեսնելով իր առջև կանգնած մեկին, որն ավելի հմուտ է որմնադրության մեջ, քան ինքը։

Ջաջուռը ձեռները թաց էր և բաց չթողեց Մովսեսին.

— Քեզ նայողը կկարծի, թե շրջմոլիկ խաբեբա ես։ Մինչդեռ երևում է, որ իսկական շինարար ես։ Ես հենց քեզ պես

մարդկանց եմ որոնում։ Կրկնակի կվարձատրեմ։ Դու լավ կապրես, մի բան էլ ես կգցես սուզ օրերիդ համար։ Մեկ էլ տեսար վաղը դուստր ունեցար՝ ինչպե՞ս պիտի գլուխ բերես նրա օժիտը։

— Ես ամուրի եմ,— ասաց Մովսեսը՝ փորձելով զրույցն ուրիշ կողմ շրջել։

— Ամուրին անտոհմ կմնաս։ Ես ինքս կամուսնացնեմ քեզ։ Միով բանիվ՝ սա քո մուրճը, սա քո բրիչը, սա էլ քո ծակիչը։ այս պահից քեզ կարգում եմ իմ օգնականը։ Ի՞նչ օր է այսօր։

— Նավասարդ ամսի Նպատ օրը,— պատասխանեց Մովսեսը։

— Ինչքան էլ արագ պատասխանեցիր,— հիացավ Ջաջուռը,— թե չէ իմ բոլոր գործավորները խառնում են օրերի հաշիվը։

Կարինի համար թեժ ժամանակներ էին։ Բյուզանդիայի Թեոդոսիոս Փոքր կայսրը սկսել էր Կարինի վերակառուցումը։ Մտադիր էր Կարինը մեծ քաղաք դարձնել և վերանվանել Թեոդոսուպոլիս։ Շինարարության գլխավորը կայսրի զորապետ Անատոլն էր։ Ջաջուռը Մովսեսին տարավ զորապետի մոտ և հպարտացավ, որ նրան ինքն է գտել։

— Դու հունարեն անթերի ես խոսում,— զրույցից հետո ասաց Անատոլը Մովսեսին։

Շատ տարիներ հետո Անատոլ զորավարի և Կարին քաղաքի վերաշինության մասին Մովսեսը պիտի գրեր. «Անատոլ զորավարն արքունական հրամանն ստանալով՝ գալիս է մեր աշխարհը և շատ կողմեր շրջելով, հավանում է Կարին գավառին՝ այնտեղ շինելու արգավանդ, շատաջուր և բարեբեր քաղաքը, համարելով, որ այդ տեղը միջին դիրք ունի, ոչ շատ հեռու այն տեղերից, որտեղից բխում են Եփրատի մի քանի աղբյուրները և հանդարտ հոսանքով առաջ գնալով ծովանում են, ճահճի տեսք ստանում։ Այստեղ անհաշիվ քանակությամբ ձկներ են լինում և զանազան տեսակ թռչուններ, որոնք սնվում էին այնտեղ, որոնց ձվերով միայն կերակրվում էին բնակիչները։ Եվ ճահճի ափին եղեգնուտներ կային մեծ քանակությամբ եղեգով։ Դաշտերում բուսնում են բարձր խոտեր և առատաբեր սերմատու բույսեր։ Լեռները լիքն են կճղակաբաշխ և որոճող երեներով։ Բազմությամբ աճում են այնտեղ ընտանի եղջյուրավոր անասուններ, հաղթահասակ, խոշոր, լիքը մարմնով և պարարտ։

Մի գեղեցկադիր լեռան ստորոտում գտավ մի տեղ, որ-

տեղ բխում են բազմաթիվ մանր աղբյուրներ մաքուր ջրերով, և այդտեղ գծեց քաղաքի տեղը։ Նրան շրջապատեց խոր փոսով, շատ խորը դրեց պատվարի հիմքը, նրա վրա ահագին բարձր աշտարակներ շինեց, որոնցից առաջինը կոչեց Թեոդոս՝ Թեոդոսի պատվին։ Սրանից այն կողմ շինեց ժայռաձև աշտարակներ, նավերի ցռուկների նման, և անցքեր՝ ներս ընկած խորշերով, որոնք դեպի լեռն են դարձած։ Այսպես շինեց նաև դեպի հյուսիսային դաշտը նայող կողմում։ Իսկ արևելք ու արևմուտք դարձած կողմերում կանգնեցրեց բոլորաձև աշտարակներ։ Իսկ քաղաքի մեջ, մի բարձրավանդակի վրա, շինեց բազմաթիվ մթերանոցներ, որը կոչեց Ավգոստիոն, Ավգոստոսի պատվին։ Եվ շատ տեղերից անհայտ ուղիներով ուրիշ ջրեր բերեց մրցքրից քաղաքը։ Քաղաքը լցրեց զենքերով ու պահապան գրնդերով և կոչեց Թեոդոսուպոլիս, որպեսզի քաղաքի անունը հիշելով անմահ մնա թագավորի անունը։ Իսկ բխող ջերմուկները վերևից ծածկեց տաշած քարերով»։

Կարինի ամրապատ պարիսպների և գեղապարույր սյուներով ապարանքների ամենագեղեցիկ, անկյունավոր որմնաքարերը տաշել է Մովսեսը։ Նա և՛ քարտաշ որմնադիր էր, և՛ ատաղձագործ։ Բայց այդ մասին ոչինչ չգրեց։

Ջաջուռը ոչ մի կառույց չէր սկսում առանց Մովսեսի։

— Ի՞նչ օր է այսօր,— հարցնում էր Ջաջուռը։

— Հոռի ամսի Արամ օրը,— պատասխանում է Մովսեսը։

Եվ Ջաջուռը զորապետի կեցվածքով ասում էր.

— Հոռի ամսի Արամ օրը այս ծայրատաշ վիմով մենք դրեցինք արքայական մեծ պալատի արևելյան պատի հիմք-հենարանը, խորունկ խարիսխը։ Թող աստված տեսնի և հարահաստատ դարձնի մեր դրած ամեն մի քարը։

Հետո Ջաջուռը նորից է դիմում Մովսեսին.

— Այսօր ի՞նչ օր է։

— Ահեկան ամսի Սիմ օրը, ցերեկվա Մայդ ժամը։

— Այսօր,— ասում էր Ջաջուռը,— մենք դրեցինք արքայական մեծ պալատի հեռադիտիչ սրահի բազալտե որմնախոյակը, արևմտյան պատի ճակատակալ քարը և սկսեցինք ծածկը պսակող լուսանցույց աշտարակի և երկլանջ տանիքի կառուցումը։

Մի անգամ էլ Ջաջուռը Մովսեսին ասաց.

— Լսիր, որդիդ Ստեփ, դու զարից էլ լավ կգրես, մագաղաթ

գտիր և գրի առ իմ խոսքերը։ Ձեռակերպիր հենց այսպես՝ հրամարակի նման. «Այսօր, Տրե ամսի Յրոն օրը ես հավատում եմ։ Վարպետ-որմնադիր Մովսեսի հանճարով Կարինի շքեղ շենքերը զարդարվեցին կողովաձև, խոյազարդ և արծվաքանդակ քանանի խոյակներով։ Մինչև Մովսեսի հայտնվելը Կարինում ոչ մի սնապուխ, ոչ մի թակաղակ[1] խոյակով չէր ավարտվում։

Սակայն Կարինը դեռ Թեոդոսուպոլիս չվերանվանված՝ Անատոլ զորավարը որոշեց Մովսեսին ուղարկել Կոստանդնուպոլիս։

— Իրավ է, այստեղ շատ բան դեռ կիսատ է, շատ մայր մույթեր դեռ մերկ են, բայց ոչինչ, Ջաջուռն ուրիշ վարպետ կգտնի։ Հայքում դժվար չէ հային հայով փոխարինելը։ Քո մասին գիտի կայսրը։ Կոստանդնուպոլսում դու կապրես իշխանի նման, այնտեղ մեծ գին ունի ճարտար ձեռքը։ Դու այնքան կվաստակես, որ քո տոհմի յոթ պորտը ոսկու կարիք չի զգա,— ասաց բյուզանդացի զորապետը։

— Չէ, զորապետ,— պատասխանեց Մովսեսը,— ինչքան էլ հրապուրիչ լինի Կոստանդնուպոլսում աշխատելու հեռանկարը, ես չեմ կարող հեռանալ Հայքից։

— Ի՞նչ, դու հրաժարվո՞ւմ ես Կոստանդնուպոլիս գնալ։

— Ներիր ինձ, զորապետ, ես պետք չեմ կայսրին։

— Ինձ զարմացնում է քո պատասխանը։ Բայց դու ինձ շփոթում ես Ջաջուռի հետ, որը համոզված է, թե դու միայն որմնադիր ես։ Իսկ ես գիտեմ, որ դու դպիր Մովսեսն ես և ըստիպված ես եղել թողնել մտավոր կյանքը։ Դու պատահաբար ես ընկել Կարին ու դարձել քարգործ շինարար։ Վաղարշապատում քեզ չեն սիրում, քեզ ատում է Դու ամրոցի տեր Որոտը։

— Զորապետ, իմ մասին բավական բան գիտես, բայց ես հանցագործ չեմ, ինձ պարզապես անարգել են չարակամորեն, ես ձախողակ մարդ եմ։

— Որոտ իշխանը երկու վարձկան մարդասպան է առաքել քո հետևից։ Նրանք ուր որ է կհայտնվեն Կարինում։ Իսկ Կոստանդնուպոլսում քո կյանքին ոչ մի վտանգ չի սպառնա։ Հույները հարգանք են տածում քեզ նման մարդկանց հանդեպ։ Մերոտենին մի գիշերում չի ծաղկում, դու էլ մեկեն չես կարող փոխել քո կյանքի առագաստը։ Ողջամիտ եղիր և ապավինիր կայսրին։

[1] Թակաղակ — փայտե փոքրիկ թակ։

Բյուզանդացի զորապետը չկարողացավ տարհամոզել Մովսեսին և զրույցը դրանով ավարտվեց։ Մովսեսը հասկացավ, որ ինքը պետք է հրաժեշտ տա Կարինին։ Նա շտապեց Ջաջուռի մոտ և պատմեց եղելությունը։ Ջաջուռը քսանչորս ոսկի տվեց Մովսեսին՝ որպես երեք տարվա աշխատանքի վարձ և վերջին անգամ հարցրեց.

— Ի՞նչ օր է այսօր։

— Մեհեկան ամսի Արամազդ օրը։

Դրանից հետո Ջաջուռն ու Մովսեսը իրար չհանդիպեցին, բայց, Ջաջուռը մինչև կյանքի վերջը չմոռացավ այդ օրը և երբեմն-երբեմն խոսքի տակին՝ գլխին ասում էր.

— Ամեն մարդ տարվա մեջ մի սև օր ունի, իմը Մեհեկան ամսի Արամազդ օրն է։

Մովսեսը դուրս եկավ Կարինից և մի քանի օրից հասավ Տարոն։ Ահա և հայրենի խորոնք գյուղը։ Սակայն Ստեների տանն այլևս մարդ չէր ապրում։ Մովսեսը խորոնքից գնաց Ներգին գյուղը, որ գտնվում էր Մեղրագետի մյուս ափին։ Ներգինում էր ապրում Մովսեսի քույրը՝ Աշխենը։ Նա ամուսնացել էր Առանձար անունով մի կարճազատի հետ, որ Ներգինի գեղջավագն էր։

Տեսնելով եղբորը՝ Աշխենը մի ծկլթոց արձակեց և ընկավ նրա գիրկը։ Շատ էր փոխվել Աշխենը։ Երբեմնի լեզվանի, հոլովաբան, համառ ու կամակոր աղջնակը դարձել էր լրջախոհ ու փափկասուն տիկին։

— Աստված իր բարկությունը թափեց մեր տան, մեր աղխի գլխին,— ասաց Աշխենը,— մենք կարծում էինք, թե դու այլևս չկաս, թե քո թշնամիները սպանել են տվել քեզ։ Դու հաշվե՞լ ես, թե քանի տարի է, որ չես երևում Տարոնում։ Ոչ էլ տեղեկացնում ես, թե աշխարհի որ անկյունում ես գտնվում։ Ի՞նչ պատահեց։ Դու այդ ի՞նչ արեցիր, որ ստիպված ես թաքնվել ու թաքնվել։ Մեղավորը կամարան է, նա կործանեց քո կյանքը։ Մայրիկը մահացավ քո վշտից։ «Ես իմ դեմքին մուր չեմ քսի,— ասում էր նա,— որովհետև իմ Մովսեսը հանցանք չի գործել։ Նրան ատում են միայն նախանձողները»։ Չկա նաև մեր հայրը։ Նա ինձ հետ քո մասին ոչինչ չէր խոսում։ Հայրիկն ու մայրիկը համաձայնեցին, որ Մամբրեն էլ ուսանելու մեկնի Ալեքսանդրիա։ Նրանք կարծում էին, թե Մամբրեն քեզ կգտնի այնտեղ։ Բայց Մամբրեն վերադարձավ առանց քեզ որևէ տեղ հանդիպե-

լու։ Նա հիմա Վաղարշապատում է։ Գյուտն ու Հովհաննը օգնեցին նրան։ Նա հմտավարժ թարգմանի ու մեկնիչի համբավ ունի։ Վաղարշապատի իմաստասերները նրան տվել են Վերծանող պատվանունը։ Այնպես որ մեր եղբայրն արդեն հայտնի է Մամբրե Վերծանող անունով։ Դու հեռուներում իրազեկ չեղար մեր առաջապանքներին, իսկ մեզնից յուրաքանչյուրը տանջվում էր քեզ համար։

Աշխենն ու Առանձարը փոքրիկ մի ուստր[1] ունեին։ Առանձարը խնդրեց, որ Տարոնում ընդունված սովորության համաձայն, Մովսեսը որպես տղայի մորեղբայրը, որպես քեռի, անուն տա նրան։

— Թող Դավիթ կոչվի,— միանգամից ասաց Մովսեսը։

Ոչ Մովսեսը, ոչ Աշխենն ու Առանձարը չգիտեին, որ փոքրիկը մի օր կդառնա երևելի իմաստասեր և աշխարհը նրան կճանաչի Դավիթ Անհաղթ անունով։

Մովսեսը Տարոնում երկար չմնաց։ Մեղրագետի հովիտը թողեց դառնությամբ ու դժկամությամբ։ Եթե կարողանար՝ կմնար հայրենի եկեղեցում։ Բայց չէ՞ր վրդովի իր քրոջ կյանքը։ Չէ որ անտես թշնամիները Տարոնում նրան հանգիստ չէին թողնի։

Բախտը աղատաղդի[2] Ստեփ որդուն նորից դարձրեց թափառական ու անտուն։ Այստեղ ու այնտեղ էր գցում իրեն։ Աչքին անընդհատ երևում էր մի ահարկու, բացված մկրատ։

Վերջապես շարժվեց դեպի արևելք և բռնեց Արցախ տանող ճամփան։

Հե՜յ Արցախ, Արցա՜խ, Հայաստան աշխարհի հոգու թանկ կտոր։ Տրտուն հավանաբար Հայոց աշխարհի առաջին հրաշալիքն է Հաթերք գյուղի մոտ։ Սա նման չէ հայոց մյուս սանձակտոր գետերին։ Առաջ է շարժվում անձայն առվի պես, անցնում գեղատեսարթ անտառի միջով։ Նրա հորդառատ ու սառնորակ ջուրն այստեղ այնքան վճիտ է, այնքան անապական ու վաղորդյան շաղի նման, որ մարդը նրանից ումպ-ումպ պիտի խմի որպես սրբազան հյութ։ Ջրի մեջ մանրահատիկ քարերը մերթ շողշողուն սուտակի թույր են առնում, մերթ դառնում հրափայլ, մերթ՝ ոսկեփայլ։ Սահանքը մեղմ է, վայելչագեղ։ Պճնագեղ տեսարան

[1] Ուստր — տղա որդի։
[2] Աղատաղդի — թարգմատոհմիկ, իշխանական ծագում ունեցող։

են արարում ջրերի վրա թեքված ճյուղերը։ Թվում է, թե հեքիաթային ոգիները մի ափից մյուսն են ոստնում նազանքով։ Բոլոր առավոտները Տրտուի վրա բացվում են պարզ ու անշամանդաղ։ Ահա աջ ափի հաճարենու վրա լսվում է փայտփորիկի կտկտոցը։ Կարծես վարսանդով ցորեն է ծեծում։ Հետո կտկտոցը ընդհատվում է և քիչ անց իր կտուց վարսանդն է շարժում ձախ ափի հաճարենու վրայի փայտփորիկը։ Նրանք իրար չեն խանգարում, մեկը լռում է, մյուսն է սկսում։ Հետո փտած մի ճյուղ է ընկնում ամբարձուղեջ[1] կաղամախուց և լսվում է փոշեպատ տերևների մեղմիվ սոսափյունը։ Թվում էր, թե ծառն իր լայնշի տերևներից մառախուղ էր թափ տալիս։ Նոսր տերևներով մի պտղաբեր ծառի վրա սկսում են ունդեր[2] պայթել։ Զախափնյա շքեղ բացատի թփի վրա քրքիջ է արձակում ճիճին։ Ինչ ասես, որ չի աճում ու փթթում այս բացատում։ Ահա Արցախի հռչակավոր ծնեբեկը։ Նրա կողքին, սեզերի միջից այքով անող կակաչանման ծաղիկոտրուկն է, քիչ այն կողմ՝ շեկ թերթիկներով շուշանը, սրա կողքին էլ՝ պատռված պռունկներով չաժականման տուղտը։ Բացատի զարդը համասփյուռն է, Հայրի ծաղիկների թագուհին, որի տասներկու թերթիկներից յուրաքանչյուրը առանձին գույն ունի։ Համասփյուռով բուժում են կույրերին, խուլերին, քաղցկեղ ունեցողներին ու ցավագարնեերին, ծաղկաջուրն ու հոտն էլ կորով ու ավյուն են ներարկում մարդկանց։ Եթե հնար լիներ՝ Մովսեսը կմնար խատուտիկ այս բացատում և ոչ մի տեղ չէր գնա։

Մովսեսը հասատավեց Հաթերքում։ Դեռ չէր որոշել, թե ինչով պիտի զբաղվեր, երբ խախտվեց գյուղի անդորրը։ Հարեվան Վաղուհաս գյուղի բնակիչները վեճի բռնվեցին հաթերքցիների հետ և արգելեցին, որ վերջիններս օգտվեն իրենց ջրաղացից։ Վաղուհասը, որ առատահոս Տրտուի աջ ափին էր, մեծ ջրաղաց ուներ, որից միշտ էլ օգտվել են հաթերքցիները։ Բայց հիմա վեճն այնքան էր սաստկացել, որ ոչ ոք չկարողացավ հաշտեցնել երկու գյուղերին։ Հակառակի պես հենց այդ օրերին Հաթերքի գեղջավագ Կոտիտի ճակատն սկսեց ուժգին քոր գալ։ Հետո դրան հաջորդեց հոնքերի ստեպ-ստեպ ճռճվելը։ Հաթերքցիներն առանց հապաղելու Կոտիտին կնքեցին Հոնքառոճ

[1] Ամբարձուղեջ — բարձրաբյուղ, դեպի վեր ձգվող ճյուղերով։
[2] Ունդ — հունդ, սերմ։

մանկանունով։ Հաթերքցի գարեհմա մի կին ասաց, թե բոլոր Հաթերքցիները հոնքաճոճ ու ցավագար կդառնան, նրանց ճեռը[1] կկտրվի, եթե չլքեն իրենց գյուղը և չընտրեն բնակության մի այնպիսի վայր, որտեղ ջրաղաց կա։ Կոտիտը համոզեց համագյուղացիներին, և շվար մնացած մարդիկ ակամա ու հոժարաբար գաղթի պատրաստվեցին։ Մովսեսը փորձեց կանխել այդ անմիտ տեղաշարժը։

— Դու մեր հյուրն ես,— ասաց Կոտիտը,— մեր հյուրն էլ կմնաս, եթե մեզ հետ գաս։ Բայց մենք չենք կարող այլևս մնալ այստեղ։ Առանց ջրաղացի ապրել չի լինի։ Մենք ալյուր չունենք հաց թխելու համար, իսկ բազմությանն աղանձով չես պահի։ Հաթերքցիները չքավոր մարդիկ են, արյուն-քրտինքով են բերք ստանում դաշտերից, սակայն իրենց ցորենի ու հաճարի կեսը որպես աղունավարձ թողնում են Վաղուհասի ջրաղացում։

— Բայց չէ՞ որ համարյա ձեր կողքով է հոսում հրաշագեղ Տրտուն,— փորձեց նորից առարկել Մովսեսը։

— Հետո ինչ, գետը դեռևս ջրաղաց չէ։ Շուտով հաթերքցիները հացի կարոտ կմնան։

— Պետք է ուրիշ հնար գտնել, գեղջավագ, չի կարելի լքել այս այգավետ ու գինեվետ հովիտը, պապերի շիրմաքարերը։

— Որտեղ հաց՝ այնտեղ կաց, այս առածը մենք ենք ստեղծել և ոչ թե օտարները։

Մովսեսը գլխի ընկավ, որ ոչ մի հորդոր չի կարող տարհամոզել Հոնքաճոճ Կոտիտին և ստիպված դիմեց խորամանկության։

— Իսկ գիտես,— ասաց նա գեղջավագին,— որ Հաթերքն աշխարհի ամենահին գյուղն է և աստված չի հանդուրժի, որ այն դյուրաքանդ լինի ու դառնա ամայաբնակ։ Դուք բնիկ այստեղացի եք, ո՞ւր եք չվում։ Ջրհեղեղից առաջ էլ սա եղել է ձեր ազատ պապերի բնօրրանը։ Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ եք անում։ Ճնճղուկն անգամ այդպես դյուրությամբ չի փոխի իր բույնը։ Այս աշխարհում չկա մի անկյուն, որտեղ մարդիկ ապրեն անցավ, առանց մկանները լարելու, առանց արորի մանի

[1] Ճեռ — սերունդ, զարմ։

վրա քրտինք թափելու։ Ամեն տեղ հողի գուղձերը փափկում են շինականի ձեռքի ափերով։ Ես ասածու առաքյալն եմ, եկել եմ, որ ջրաղաց կառուցեմ հաթերքցիների համար։

Այս խոսքերը լսելուց Կոտիտի հոնքերն սկսեցին ճոճվել ավելի արագ։

Գեղջավագն անմիջապես տեղի տվեց։ Եվ հաթերքցիներն սկսեցին Տրտուի գեղածիծաղ ափին ջրաղաց կառուցել։ Մովսեսը ցույց տվեց, թե Տրտուի ձախափնյա որ մասից պիտի ջրաղացի համար առու հանել։ Կարինցի քարգործ վարպետ Ջաջուռի նման Մովսեսը Կոտիտին ասաց.

— Է՜յ, գեղջավագ, հիշիր, այսօր Հրոտից ամսի Արագած օրն է։ Հինգ ամիս հետո այս ակնահաճո լանջի վրա կաշխատի Հաթերքի ջրաղացը, դուք անպայման ալյուր կունենաք և կթխեք ձեր սեփական անուշաբույր հացը։

Հետո սկսվեց ջրաղացքարերի համար քարի փնտրտուքը։ Մի խումբ հաթերքցիների հետ Մովսեսը ման էր գալիս Տրտուի ափերին։

— Մեզ հաստ ու չոր որձաքար է պետք, որ ձեռակերտ բոլորակ դառնա,— ասում էր Մովսեսը,— իսկ սա արագամաշ սալաքար է, չի դիմանա, սա քանդակագործի համար էլ պիտանի չէ, չնայած արտաքուստ պինդ է երևում, շատ-շատ սրանից կարելի է խաղողի հնձան պատրաստել։

Վերջապես անդնդախոր կիրճում կանգ առան մի ապառաժ քարի մոտ։ Մովսեսն սկսեց չափել բոլոր կողմերից։ Նրան մուրճ ու բրիչ տվին։ Հաթերքցիները զարմացան՝ տեսնելով, թե Մովսեսն ինչպես է քարը տաշում հմտաբար ու անձանձրույթ, ինչպես է ցանկացած չափի բեկորներ պոկում ապառաժից։

Ամենադժվարը մեծ քարի փոխադրումն էր ջրաղացի համար նախատեսված տեղը։ Հիսունից ավելի շինականներից Մովսեսը ընտրեց քսանինն հոգու։ Հաթերքցիները կացիններով ծառերից բարակ գերաններ կտրեցին ու սկսեցին տեղաշարժել քարը։ Գերանի մի ծայրը դնում էին իրենց անրակներին, մյուսը՝ քարին և գերանը տաքանում էր կնճակի պես։ Մովսեսի նշած ուղեգրով հրում էին, տեղ-տեղ խանդակ փորում՝ քարն առաջ շարժելու համար, մի պահ ընդհատում էին աշխատելը, հենվում կողքի ծառի բներին, թուքը կուլ տալիս, շունչ առնում-հանգըս-

տանում և նորից չանում մինչև ուժաղուրկ լինելը։ Յոթերորդ օրը քարը տեղ հասցրին։ Հետո Մովսեսն սկսեց ագուդայք սարքել, որի միջով ջուրը պիտի մտներ ջրաղաց։

Նոր կառուցված ջրաղացի առաջին նաշ ալյուրով Մովսեսը ալրոտեց հաթերքցի բոլոր այրերի բեղ-ընչացքները։

Մովսեսը դարձավ ջրաղացպան և փորձեց չհաշվել ժամանակը։ Տրտուի գեղաշուք, գեղեցկապանծ ափերին ապրողի ինչին էր պետք թիվ ու հաշիվ հիշելը։ Այստեղից չէին երևում ո՛չ Խորոնքը, ո՛չ Վաղարշապատն ու Ալեքսանդրիան, ո՛չ էլ Դու գյուղի ամրոցը։ Նրան թվում էր, թե ինքը միշտ էլ Տրտուի ափերին է եղել։ Նա մտովի այստեղ փոխադրեց Կամարային, սկսեց երազանքով վայելել նրա սերը և ապաքինել իր հոգու ծակոցները։

Նրա կյանքը այս ջրաղացում էլ կավարտվեր, եթե տեղի չունենար Կամարայի հետ անսպասելի հանդիպումը։ Հոռի ամսի Մարգար օրը, գիշերվա Աղջամուղջ ժամին, Հոնքաճոճ Կոտիտը վաղելով իրեն ջրաղաց գցեց և Մովսեսին ասաց.

— Քե՛զ տեսնեմ, Մովսես, դու պիտի թխես ամենահամեղ նկանակը և քո ձեռքով էլ մատուցես նրան։ Հարցեր մի տուր, որովհետև ես ինքս էլ չգիտեմ, թե ով է նա։ Վաղը կեսօրին մենք նրան կդիմավորենք մեր գյուղից ներքև, մեծ ճանապարհի կողքին։

Հաջորդ օրը, մեծ ճանապարհի եզրին հավաքվել էին համարյա բոլոր հաթերքցիները։ Ասում էին, թե մեծահարուստ մի իշխան, որ իր տիկնոջ հետ Պարտավ է գնում, պիտի կանգ առնի այստեղ։ Ահա երևաց երկձի ռազմակառքերի շարանը։ Առջևի ռազմակառքում նստած էր սպասավորը։ Նրան հետևեց աստղաճակատ նժույգներով կառքը և հաթերքցիները Կոտիտի նշանով միաբերան ողջունեցին նրանց։ Ասես դիմավորում էին հաղթանակից վերադարձող զորավարին։ Իշխանական կառքի փակ վարագույրները բացվեցին և իշխանը ոտ դրեց գետնին։ Հետո վազեվազ մոտեցան մի քանի զորականներ, դեսպակի վրա առան տիկնոջն ու մի քանի քայլ տանելով՝ զգուշորեն իջեցրին։ Դրանից հետո կանգ առան նաև մյուս ռազմակառքերը։ Հաթերքցիներն սկսեցին հյուրասիրել նրանց։ Փայտե նգույրների վրա նուռ ու խաղող թափեցին, մրգով լեցուն կթոցներ դրին։ Հետո մեջտեղ բերին խորոված՝ շամփուրները։ Իսկ իշխանի ու

նրա տիկնոջ առջև դրեցին խորոված մի ամբողջական բզաք։ Տիկնոջը մատուցեցին անուշահոտ հալրեվարդի փնջեր։ Ապա հյուրերին հրամցրին գինով լեցուն կավե կահույքներ ու մորթուց սարքած տիկեր։

Տիկինը պճնված էր բազմապաճույճ զարդարանքով։ Նրա ականջներին փայլում էին թանկարժեք զորշապահանգներ ու գինդեր։ Թովիչ էին և՛ նրա դեմքը, և՛ զգեստը։ Մովսեսը մոտեցավ իշխանուհուն, որպեսզի իր թխած նկանակը մատուցի նրանց։ Բայց դեռ նկանակը նգույրի վրա չդրած՝ ձեռքերը թուլացան։ Նա ճանաչեց Կամարային։ Ճիշտ է, տիկնոջ մաշկի գեղեցիկը փոխարինվել էր բոսորի։ Բայց դրանից նա ավելի էր գեղեցկացել։ Մովսեսը անշարժացած Կամարայի աչքերին էր նայում, բայց տիկնոջ հայացքը սառն էր։

Կամարան նկանակից մի կտոր պոկեց և սկսեց հաճույքով ուտել։

— Հրաշալի համ ունի, Որոտ, դու էլ փորձիր,— ասաց Կամարան։

Մի կտոր էլ իշխանը կերավ։ Հետո Կամարան մի ոսկի մեկնեց Մովսեսին։ Վերջինս հրաժարվեց նվերից։

— Վերցրո՛ւ, ծերուկ, դու երեխաներ շատ կունենաս, սրանով դու կարող ես տեսակ-տեսակ հանդերձներ առնել։

— Ես անպտուղ մարդ եմ, կին ու երեխաներ չունեմ,— փորձեց խայթել Մովսեսը։

— Պապենական առածն ասում է. «Մի եղիցի անսերմ» դու իզուր չես ամուսնացել,— զրույցին խառնվեց Որոտը։

— Այնուամենայնիվ, վերցրու, ծերուկ, սա պետք կգա քեզ,— նորից խոսեց Կամարան։

— Չէ, տիկին, Արցախում ոչ մի ջրաղացպան նկանակի դիմաց դրամ չի վերցնում։ Եվ, այնուամենայնիվ, ես գովում եմ քո առատաձեռնությունը։ Քեզ ու առատագութ իշխանին հաճելի զբոսանք եմ մաղթում, թող ձեր բախտի նժույգները խոտոր ճամփա չընկնեն,— ասաց Մովսեսն ու շուռ եկավ։

Թողեց խնջույքի սեղանները ու շարժվեց ջրաղացը։

— Չճանաչե՞ց, չճանաչե՞ց,— դառնացած կրկնում էր Մովսեսը։

Մովսեսին թվում էր, թե ինքը հարբել է ազոխջրից, հազիվ էր կարողանում քայլել։

Այս հանդիպումից հետո Մովսեսը չկարողացավ մնալ Հաթերքում։

Ջրաղացը բոլոր հարթեքցիներին և նորից ձեռքն առավ թափառականի լույսը։ Եռ ու առաջ շարժվեց շատ ճամփաներով՝ մինչև հասավ Ոշական, որտեղ Գյուտը ճանաչեց նրան։

Հիմա եպիսկոպոսի շուրջառը ուսերին առած Մովսեսը մտածում էր, թե ինչ է ասելու իրեն Բագրևանդում։

Դվինի վրա բացվում էր Տափերական դաշտի հանապազաջինջ առավոտներից մեկը։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Բագրևանդում, Արածանի գետի ափին, Նպատ լեռան ոտքերի տակ փռված է Հայաստան աշխարհի հոգևոր քաղաքամայր Բագավանը։ Հնում այստեղ են խորհրդի նստել հայոց բոլոր աստվածները, որի համար էլ ավանը կոչվել է Դիցավան, Բագավան կամ Բագնաց ավան։ Հետո աստվածներին փոխարինելու եկած իշխանավորները նույն Բագավանում են անցկացրել իրենց աշխարհաժողովները։ Այս գեղածիծաղ հովտում է տեղի ունեցել հայոց ամենամեծ ու սրբազան տոնի՝ Նավասարդի առաջին տոնախմբությունը։ Գրիգոր Լուսավորիչը Բագավանի կողքին՝ Արածանի գետում մկրտեց Տրդատ թագավորին, նախարարներին ու զորականներին, բոլոր հայերին։ Չորս հարյուր բյուր հեթանոս հայ ջուր մտավ և գետեղը դուրս եկավ քրիստոնյա դարձած։

Ապա Գրիգոր Լուսավորիչը քանդել տվեց Բագավանի հնօրյա մեհյանները և նրանց փլատակների վրա կառուցել տվեց եկեղեցիներ։ Բագավանը հռչակվեց Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոսանիստ կենտրոն։ Իր կյանքի վերջին յոթ տարին այստեղ է անցկացրել Սահակ Պարթևը։

Մովսեսը Բագավանում եղել էր միայն մի անգամ, պատանության տարիներին։ Հոր՝ Ստեփի հետ, նա խորոնքից այստեղ էր եկել մասնակցելու նավասարդյան տոնախմբություններին։ Հիմա Բագավան է մտնում եպիսկոպոսի շուրջառով։

Ավանի երեք եկեղեցիներից ամենամեծը Լուսավորչի տաճարն է։ Սա Հայաստանի բոլոր եկեղեցիների մեջ միակն է, որ ունի կճասալ հատակ։ Այս տաճարի բակում էլ Հրոտից ամսի Վահագն օրը կանգ առավ Դվինից եկած կառքը։ Մովսեսին ոչ ոք չդիմավորեց։ Իջավ ու սկսեց աչք ածել շուրջը։ Նրան դուր եկավ տաճարի գմբեթի սրածայր վեղարը։ Բակում այս ու այն

կողմ քայլելուց հետո կանգնեց դավթի առջև ու նայեց կամարի բիղխ քարի վրա քանդակված արևի կիսաբոլորակ ժամացույցին, որի փոքրիկ անցքին անցկացրած փայտե ձողիկը ցուցանում էր ցերեկվա Թաղանթյալ ժամը։ Ապա հայացքը սևեռեց բիղխին՝ ակամայից մտաբերելով իր երբեմնի քարգործությունը։ Բիղխը կամարի միջնաքարն է, որի վրա սովորաբար քանդակում են ոչ միայն արևի կիսաշրջանաձև ժամացույց, այլև՝ տոհմական զինանշաններ, բազմազան հուռութներ ու հրեշտակների պատկերներ։ Բիղխը կամարի աչքն է։ Հայոց աշխարհում քարգործ վարպետի կոչում է ստանում նա, ով անկոփ քարից ընտիր բիղխ է պատրաստում։ Բայց ո՞վ կարող էր կամարի միջնաքարն ավելի հմտորեն տաշել ու հղկել, քան Մովսեսը։

Հայացքը կտրեց կամարից ու կշտամբեց իրեն՝ անցյալը հիշելու համար։ Անտարակույս շուրջառը քիչ է, պետք է մեկն անընդհատ հիշեցնի նրան, որ ինքն այժմ եպիսկոպոս է։

Վերջապես երևաց աբեղա Արծանը։ Իր կյանքի ճամփանեերին Մովսեսն այդքան գեր ու մարմնեղ մարդու չէր հանդիպել։ Ուսերը նման էին զանգվածեղ ելուստների, որոնք ասես ուր որ է իրենց մեջ պիտի առնեին նրա գլուխը։

Արծանը բարևեց Մովսեսին և առաջնորդեց նրան տաճարի ներսը։ Աբեղան ցույց տվեց եպիսկոպոսական այն բազմականը, որի վրա երկար տարիներ բազմել էր Եզնիկ Կողբացին։

Մովսեսը ծոցից հանեց Գյուտի հայրապետական կոնդակը և, հնաբույր բազմականի վրա դնելով, ասաց.

— Ողջո՞ւյն, Եզնիկ, այրդ իմաստուն, թող քո անեղծ հոգին բարյացակամ լինի մեզապարտիս հանդեպ։ Հազար չոր տափի եմ նստել, բայց չեմ խռովել իմ բախտից։ Հիմա ծունր եմ իջնում և գոհություն հայտնում ամենակարողին, որ արժանացնում է ինձ պատկանող բարձին։

Այնպես էր խոսում՝ կարծես Եզնիկը լսում էր նրան։

Ապա Մովսեսը տեղավորվեց Լուսավորչի տաճարից ոչ հեռու գտնվող մի տան մեջ։

Իրերը կարգի բերելուց հետո նա խաչակնքեց երեսին ու ասաց.

— Տեր աստված, ես շատ եմ հոգնել, այնպես արա, որ այս տունը լինի իմ վերջին երկրային կացարանը։

* * *

— Դու ճանաչո՞ւմ ես ասպետ Սահակ Բագրատունուն,— հարցրեց Գյուտը։

— Լսել եմ նրա մասին, բայց բնավ չեմ հանդիպել, Տիրոց Բագրատունու որդին է, ասում են՝ լավ այր է,— պատասխանեց Մովսեսը և ինչ-որ բան մտաբերելով ավելացրեց,— Հայքի ամենամեծ գրատունը նրա դղյակում է։ Ափսոս, որ չեմ տեսել։

— Ոչինչ, Մովսես, կհասցնես տեսնել։ Իսկ այս նամակը նա է գրել քեզ։

Եվ Գյուտը գրոնակաձև մի մագաղաթ հանձնեց Մովսեսին։

— Բայց ինչո՞ւ պիտի նա նամակ գրի ինձ, ի՞նչ ասելիք ունի,— ասաց Մովսեսն ու փորձեց քակել գրոնակի կապերը։

— Մի-աճապարիր, կբացես այն ժամանակ, երբ միայնակ լինես։

Մովսեսը մի կողմ դրեց գրոնակը։

— Մենք պետք է հանդարտաբարո վարքով հավատ ներշնչենք մեր ժողովրդին,— վերսկսելով զրույցն ասաց Գյուտը։— Չի կարելի տգետին ամեն օր հիշեցնել որ նա տգետ է։

— Ինչո՞ւ։

— Որովհետև նա հազար դավ կնյութի և կտապալի խելոքին։ Արդյունքն այն կլինի, որ խելոքները կիշնեն բեմից, իսկ աշխարհում ոչ մի տգետ էլ չի պակսի։

— Ասածիդ մեջ տրամաբանություն կա, Գյուտ։ Տգետները աշխարհը կուտեն, բայց իրար չեն ուտի։

— Ձիու քացուն ձին կդիմանա։

Ընկերները կարծես հասկացան իրար և զրույցը դրանով ավարտվեց։

Հայրապետի մեկնելուց հետո Մովսեսը բացեց նամակը։ «Ասպետ Սահակ Բագրատունին ողջունում է իմաստասեր Մովսեսին։

Այրդ սքանչելի։

Ցուրաքանչյուր կրթյալ ազգ ստեղծել է իր պատմությունը, որն ունի սկիզբ ու անցած ճանապարհի խորհուրդ։ Մենք չորս մատյան ունենք՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Եղիշեի գրքերը, որոնց մեջ հայը երևում է միայն գոտկատեղից վերև։ Իսկ ո՞վ և ե՞րբ է կապել հայի պորտը։ Որտե-

պի՞ց Ինք գալիս մենք։ Տոհմաների պատմություններով չես կարող մի ամբողջ ազգ ոգեկոչել։ Ես որոնում եմ մեկին, որ կարողանա տարեգրել մեր ազգի ամբողջական պատմությունը։ Գյուտ հայրապետն ասաց, որ մեր աշխարհում քեզնից բացի ոչ ոք չի կարող գլուխ բերել այդ գործը։

Ես գիտեմ, որ տգետներն ու շարլատանները հալածել, անպատում տառապանքներ են պատճառել քեզ։ Բայց դու Հիսուսի նման քո ոգին անեղծ ես պահել, խիղճդ մաքուր։ Քո մասին հայրապետն ասաց. «Մարդ ինչքան պիտի մարդկանա, որ հասնի Մովսեսին»։

Արդ, այդ հանճարաշատ ու արդարախոս։ Եթե իմ առաջարկը հաճո է քո սրտին, ապա առանց հապաղելու սկսիր գործդ։

Զափազանցնելն ու նսեմացնելը մարդկային թուլության հարազատ զավակներն են։ Չպետք է մեղանչել ճշմարտության դեմ։ Գրիգնձն ինչքան էլ գեղնի՝ ոսկի չի դառնա։

Այնպես արա, որ քո աշխարհալույս մատյանում բոլոր հայերը տեսնեն իրենց։ Ցուցանիր այն երևելիներին, որոնք պիտի հավիտյան նմանողության օրինակ դառնան մեր ազգի ներկա ու եկող սերունդների համար։ Սկսիր աշտարակաշինությունից։ Անսկիզբ ազգերը սակավակյաց են լինում։ Եվ քո հիշատակարանում թող երևան բնիկն ու եկվորը, թագավորական գահատարիքները, նախարարական տների ծնունդն ու վախճանը։ Գրով գրոշմիր մեր անցած ուղին։ Որտեղ են սկսվում ու ավարտվում արևի ներքո զբաղեցրած մեր տան եզրերը։ Հայաստան աշխարհը տեսանելի դարձրու ներսից ու դրսից։

Մի ընչին հավելում։

Իմ խաղախորդը[1] քո մատյանին արժանի մագաղաթ կհասցընի Բաղավան։

Ողջ լեր»։

Զարմանք ապրեց Մովսեսը։ Ասես այս ասպետ Սահակը տեղյակ է, թե ինչ է թաքնված իր հոգում։ Չէ որ ուսումնասիրության տարիներից նրան հանդիպած չի թողել հայոց պատմության հիշատակարան ստեղծելու փափագը։ Չես կարող ասել, թե հոգով և աշխարհընկալումով քո նմանակին երբ և որտեղ կհանդիպես։ Ինչպես իմանաս, որ դեռ երեսունը չլրացած այս ասպետը հայոց պատմության գրավոր շենքը պատկերացնում է այնպես, ինչպես Մովսեսը, որն ասպետի դեմքն էլ չի տեսել։ Բայց չէ որ Մովսեսն ամբողջ կյանքում շրջել է, հանդիպել հազար-հազար մարդու։ Այ քեզ բախտ։ Թվում է, թե նա տեսել է բոլոր հայերին։ Միայն չի հանդիպել ասպետ Սահակին։

— Բախտավոր է այն մարդը, որ ժամանակին է հանդիպում հոգեկից մարդուն։ Կես երջանկություն է, երբ, այնուամենայնիվ, դու նրան հանդիպում ես քո կյանքի արփողին։

Նստեց աշտանակ-գրակալի առջև ու սկսեց մտմտալ ասպետի նամակի պատասխանը։ Չէ, չէր ստացվում։ Ասելիքը շատ էր, նամակի մեջ չես տեղավորի։

Հետո ինքն էլ չիմացավ, թե ինչպես սկսեց իր «Պատմություն Հայոցը»։ Մեսրոպյան տառերը ակոսեցին ողորկ մագաղաթը։ Դա և՛ երկ-մատյան էր, և՛ նամակ։ Մեծ էր և՛ գիրքը, և՛ նամակը։ Չես կարող ասել, թե որտեղ է սկսվում գիրքը, որտեղ նամակը։ Գիրքընդհանուր ստեղծվեցին և՛ մեկը, և՛ մյուսը։ Նա չգիտեր, որ իր նամակը գրելու էր երկար տարիներ։

— Բերքդ անհատնում լինի, գիրք իմ, արտ իմ հոգևոր,— ասաց ու սկսեց.

«Մովսես Խորենացին մեր ազգի պատմության այս սկզբում ողջունում է Սահակ Բագրատունուն։

Քո մեջ եղած աստվածային շնորհքների անսպառ գործունեությունը և հոգու անդադար շարժումները քո մտածողության վրա՝ ես ճանաչեցի այս գեղեցիկ խնդրի միջոցով, մարմնիցդ առաջ հոգուդ հետ ծանոթանալով։ Սա իմ ճաշակին ես ախորժելի է, և մանավանդ իմ սովորություններին։ Ուստի ոչ միայն պետք է քեզ գովել, այլև քեզ համար աղոթել, որ միշտ այդպես մնաս»։

Կանգ առավ, մի քանի անգամ ընթերցեց գրածը։ Սրտապարար ու սրտահաճո էր։ Հետո գովեց ասպետի «խոհականության կայծը» և շարունակեց.

«Սրա հետ միասին հետևյալն էլ եմ նկատում, որ եթե մեզանից առաջ և մեր ժամանակ ապրող՝ Հայոց աշխարհի ցեղապետներն ու իշխանները ոչ իրենց ձեռքի տակ ընկած և հավանորեն եղած իմաստուններին հրամայեցին այսպիսի պատմական

[1] Խաղախորդ — կաշեգործ, մորթը աղաղով (դարաղով նյութ) մշակելով կաշի պատրաստող արհեստավոր։ Այդպես էին պատրաստում հին հայկական հմնական գրելանյութը՝ մագաղաթը։ Այսպիսով, խաղախորդ նշանակում է կաշի պատրաստող, իսկ խաղախորդել՝ կաշի պատրաստել, դարաղել։

[1] Արփող — իրիկնագեմ, արևի մայրամուտի ժամը։

հիշատակարաններ գրել, ոչ էլ մտածեցին դրսից որևէ տեղից ներս բերել իմաստության նպաստներ, և այժմ քեզ ենք տեսնում այսպիսի մարդ։ Ուրեմն պարզ է, որ դու պետք է ճանաչվես բոլոր քեզանից առաջ եղածներից վեհագույն և բարձրագույն գովեստների արժանավոր և պատմական այսպիսի արձանագրության մեջ գրվելու արժանի։

Ուստի ուրախությամբ ընդունելով քո խնդիրը՝ սիրով կաշխատեմ այն կատարել, անմահ հիշատակ թողնելով այս քեզ և ինձ հաջորդող սերունդներին։ Որովհետև նախնական և քաջ ազգ ես, արդյունավոր ոչ միայն խոսքի և պիտանի իմաստության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով, որոնք մենք կհիշատակենք այս պատմության ընթացքում, երբ հորից որդի ծննդաբանությունը կազմելով՝ Հայաստանի բոլոր նախարարությունների ազգաբանությունը կգրենք, ամեն մեկի որտեղից և ինչպես ծագելը համառոտ և հավաստի պատմելով, ինչպես որ կա մի քանի հունական պատմությունների մեջ»։

Ապա գովեց հույն իմաստասերներին ու հունական հիշատակարանները։ Երկարաշունչ ստացվեց։ Մի կողմ նետեց տասը մագաղաթ, ասելիքը սեղմեց մեկի վրա և իր խոսքի ավարտը բանաձևեց այսպես. «Վասն որոյ և զբոլոր իսկ զՀոյնս՝ ոչ զանդաղիմ մայր կամ դայեակ ասել իմաստից— այս պատճառով ես չեմ տատանվում ամբողջ Հունաստանը գիտության մայր կամ դայակ կոչել»։

Մովսեսը նշավակեց «նախնիների անիմաստասեր բարքը», որոնք իրենց ժամանակի ու քաջության արժանի գործերի մասին ոչ մի մատյան չեն թողել։ Գովելի են քաղդեացիները, ասորեստանցիները, եգիպտացիներն ու հույները, որոնց «շարադրած գրվածքները կարդալիս աշխարհական կարգերի գիտություն ենք ձեռք բերում և քաղաքական կարգեր ենք սովորում»։

Իսկ մերո՞նք։ Մինթե Հայաստան աշխարհում արձանագրելու բան չկար։ Չէ որ «Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել— թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ

գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի, ոչ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու»։

«Ես շատ եմ զարմանում քո մտքի ծննդականության վրա, որ մեր նախաբարական ցեղերի մեջ, հներից սկսած մինչև այժմյանները մենակը գտնվեցիր այսպիսի մեծ խնդրի ձեռնարկելու և մեզ առաջարկեցիր հետազոտություն կատարել— երկար և շահավետ գործով ճշմարտությամբ հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների և նախաբարական ցեղերի և տոհմերի մասին, թե ով ումից է ծագել, ինչ է գործել նրանցից յուրաքանչյուրը, և որն այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է և որոնք եկվորներ են և հայացել՝ բնիկ են դարձել, ամեն մեկի գործերն ու ժամանակները գրով դրոշմել, անկարգ աշխարակի շինությունից սկսած մինչև ներկա ժամանակը— նկատելով այս՝ քեզ համար գեղեցիկ փառք և բավականություն առանց նեղության»։

* * *

Գրիչ չվարձեց։ Ինքը գրում էր, ինքն էլ ընդօրինակում։ Գիրք-նամակի առաջին մագաղաթները հանձնեց Սահակ Բագրատունու կապարճակիր Ատատին։

Ատատը քսանչորս տարեկան էր։ Բարձրահասակ ու բարալիկ այս երիտասարդը գետնի վրա աշխույժ էր, մշտաժպիտ, բարության հրեշտակի կերպարանքով։ Նժույգի վրա դառնում էր կրակ ու ցասում։ Ասպետի նամակները Դվինից նա բերում էր Բագավան, հանձնում Մեսրոպին, Բագավանից էլ Մեսրոպի գրքի թարմաբույր թերթերի խրձերը նա տանում Դվին ու հասցնում տիրոջը։ Գնալն ու գալը մեկ էր լինում։ Բագավանում նա պարտավոր էր մնալ այնքան ժամանակ՝ մինչև Մովսեսը նրան կհանձներ գրքի շարունակությունը։ Ատատը ինքն էլ չգիտեր, որ դառնում է բագավանցի։ Երբեմն ամիսներ էին տևում՝ մինչև մի բան էր ստանում Դվին տանելու համար։

— Մարդ պիտի համբերությամբ սպասի և մարդու ծնունդին և գրքի երկունքին,— ամեն անգամ ասում էր ասպետ Սահակ Բագրատունու մայրը՝ հուսադրելով նրան։

Սակայն Ատատի՝ Բագավանում մնալուն ուրիշ աչքով էր նայում Մովսեսը։ Ոնց որ մշտական կոչնակ կամ աներես պարտատեր, որ ուր շրջվում ես՝ տեսնվում է աչքիդ առջև։ Մովսեսն

ամեն օր արթնանալուց մտաբերում էր, որ Ատատը Բագավանում է, և որ ինքը պիտի շարունակի իր գիրքը։

Ակսելը դժվար չէր։ Մարդ իր կյանքում հազար բան է ակսում ու կիսատ թողնում։ Այո, դժվարը շարունակելն ու ավարտին հասցնելն է։ Կատար տանող կեսճանապարհին՝ լանջերի վրա, մնում են միայն թուլերն ու խեղճերը։ Ավելի լավ է կատար ելնողի տնքոցը լսես, քան ստորոտում մնացողի քրքիջը։ Կատարի վրա մարդս մի օրում երկու օրվա լույսով է դիտում աշխարհը։

Ժամանակն անցնում էր, բայց իր բացած ակոսների մեջ չդիտեր, թե ինչ հատիկներ գցեր։ Ինչպես և որտեղի՞ց սկսել բուն պատմությունը, որտեղի՞ց են սկիզբ առնում հայն ու Հայաստանը։ Մտաբերեց մուսեյոնի բազմալեզու հիշատակարաններում հայերի ու Հայոց աշխարհի մասին գրածները։ Դրանք տարբեր էին, հաճախ իրարամերժ։ Որի՞ն հավատաս։ Հակառակի պես հայերի նախասկզբի մասին գրել են միայն օտարները։ Ափսոս, որ նորից չի կարող թերթել այդ մատյանները։

Աբեղա Արձանի հետ աչքի անցկացրեց տաճարի դիվանը։ Տաճարական դիվաններում օտարազգի արքաների ու սրբերի վարքագրություններ էին, որոնք պետք չէին Մովսեսին։ Մի քանի գրքեր ձեռք բերելու համար ապսպրեց եղբորը՝ Մամբրեին, որը հաստատվել էր Վաղարշապատում։ Մամբրեն Մովսեսին ուղարկեց հույն պատմագիր Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը», որ հունարենից հայերեն էր թարգմանել ինքը։ Դա շատ ուրախացրեց Մովսեսին։ Եվսեբիոս Կեսարացու այդ գիրքը մարդկության պատմության ամենաընդարձակ ժամանակագրությունն էր։

Մովսեսը եպիսկոպոսական շրջագայություն կատարեց իր թեմում՝ Բագրևանդի ու Արշարունիքի գավառներում, տնտղեց մի քանի տաճարների խցերում պահվող հատուկենտ մատյանները, զրուցեց երկարակյաց ծերունիների և Բագավանով անցնող ու դարձող զուսանների հետ։ Զարմացավ։ Մարդիկ ինչքան քիչ բան են հիշում իրենց նախնիների մասին։ Ոռն ինչ իրավունք ունի մոռանալ իր հերոսազարմ պապին։ Եվ ընդհանրապես մարդը մտահարուստ չէ։ Մոռացության դեմ նա չի կարողանում հաղթող դուրս գալ։ Այդ պատճառով էլ գրքերը դարձել են մարդկային հիշողության միակ պահեստարանները։

Բայց միշտ չէ, որ գրով դրոշմել կամ դրոշմում են ճշմարիտն ու ճշմարտապատումը։

Հայն արյամբ կապված է մարդկության ծայրի հետ։ Ասում են Ադամից մինչև Նոյ տասը շար է, այսինքն երեսունվեց հազար տարի։ Բայց ո՞վ կարող է հավաստել դա, ո՞վ է հաշվել։ Իսկ եթե ոչ թե տասը, այլ հարյուր կամ հազար շար է։ Մտաբերեց քաղդեացի Բերոսոսին, որին Մովսեսը միշտ էլ համարել է բոլոր դիտություններին քաջահմուտ մարդ։ Բերոսոսը ծնվել է Ալեքսանդր Մակեդոնացուց վեց տարի հետո, դարձել Բաբելոն քաղաքի Մարդուկ աստծու տաճարի քուրմը և գրել Անտիոքոս Սոտեր թագավորին նվիրված իր «Բաբելոնապատում» գիրքը, որի առաջին մասում պատմում է Ադամից մինչև Նոյ մարդու անցած ուղու մասին։ Մովսեսի համար շատ բաներում վստահելի է նաև Բերոսոսի աշակերտ, հույն պատմիչ Աբյուդենոսը, որ առաջինն է գրել հայերի անվանադիր նախնու՝ Հայկի մասին։ Վերջերս ոմանք դեն գցեցին Աբյուդենոսի «Աղգապատումը», որի մեջ գրված է. «Արա Գեղեցիկը որդի Արամի, որդի Հարմայի, որդի Գեղամի, որդի Ամասիայի, որդի Արամայիսի, որդի Արամանյակի, որդի Հայկի, որ դուրս եկավ Բելին հակառակորդ և միանգամայն նրա կյանքին վերջ դնող»։

Այս ամենը հաստատում է Կեփալիոնը, որին Հռոմի կայսրը Անդրիանոսը աքսորեց Սիցիլիա կղզին։ Այստեղ էլ Կեփալիոնը գրեց իր ինն մասանի պատմությունը՝ Նինոսից ու Շամիրամից մինչև Ալեքսանդր Մակեդոնացի։

Մովսեսի համար վստահելի էր նաև Հովսեփոս Փլաբիանոսի հնախոսարանը։ Աշխարհակործան ջրհեղեղներ և կործանարար հրդեհներ եղել են և Նոյից առաջ։ Հովսեփոս Փլաբիանոսը գրում է, որ Ադամի թոռ Ենովսը երկու դիպվածի դեմ պատրաստել էր տվել երկու արձան, որոնց վրա դրոշմված էին իր ժամանակի հիշատակության արժանի անցքերը։ Արձաններից մեկը քարից էր, որը պիտի դիմագրավեր ջրհեղեղին, եթե լիներ, մյուսը, աղյուսից էր, որն անվնաս կմնար՝ ինչպիսի հրդեհ էլ պատահեր։

Այդ օրերին Աշտիշատից Բագավան վերադարձավ աբեղա Արձանը։ Նա հետը բերել էր մի կիսատ մատյան։ Առաջին թերթերը չկային։ Մովսեսը աչքի անցկացրեց կիսատ գիրքը և ասաց.

— Սա բազմավեպի հորինած հիշատակարանն է։ Իմպերատոր Սուլլայի ժամանակներում փոյուգացի մի իմաստասեր է

եղել Ալեքսանդր Կոռնելիոս անունով։ Մի կռվի ժամանակ նա գերի ընկավ, ստրկագրվեց հռոմեացիներին և տառապեց երկար տարիներ։ Ստրկություն լինելուց հետո գրեց իր փայլուն հիշատակարանները։ Բաղում գիտությունների քաջատեղյակ այր էր փոյուգացին, դրա համար էլ նրան կնքեցին Բաղմավեպ մականունով։

Հետո Մովսեսը Արձանին հարցրեց.

— Աշտիշատում Բերոսյան Սիբիլլայից ոչ մի գիրք չգտա՞ր։

— Վանահայրն ասաց, որ հիսուն տարուց ավելի է, ինչ իրենց գրատանը չի պահվում կնոջ մտքի արգասիք և ոչ մի էջրք,— պատասխանեց արեղան։

— Իզուր,— ափսոսաց Մովսեսը,— ինձ սիրելի և շատերից ավելի ճշմարտախոս է Բերոսյան Սիբիլլան։ Պիտի ձեռք բերել նրա գուշակարանը, որի մեջ իրապատում հիշատակություններ կան մեր աշխարհի մասին։ Ինձ պետք են նաև Գորգիի, Բանանի և ոմն Դավթի հնախոսաբանները, որոնց մեջ հավատի շատ բան կա Նոյ նահապետի, ջրհեղեղի և մեր աշխարհի մասին։ Այդ գրքերը ես տեսել եմ Եղեսիայի գրադարանում։

— Հա՛,— ինչ-որ բան մտաբերելով ասաց Արձանը.— Աշտիշատում ես հանդիպեցի երկու մարդու, մեկի անունը Գորտ էր, մյուսինը՝ Տողար։ Զրուցասացներ էին։ Ամբոխին հավաքում էին իրենց գլխին և պատմում հին-հին ասքեր։ Հետո ով ինչ կարողանում էր, մի բան էր տալիս։ Երևում էր, որ նրանք հետաքրքրական բաղում գրույցներ գիտեն անգիր, այդ պատճառով էլ նրանց հրավիրեցի Բագավան։

— Ես գովում եմ քեզ, Արձան, խելացի բան է քո արածը,— ոգևորվեց Մովսեսը։

Հիրավի, մի քանի օր անց Բագավանի Լուսավորչի տաճարի բակում հայտնվեցին Գորտն ու Տողարը։ Քառասունն անց, միջահասակ, պատկերաճոխ մարդ էր Գորտը։ Զարմանալի դեմք ուներ Տողարը։ Անխոս պահին նրա դեմքին նայողը կասեր, թե հիսունն անց է։ Բայց հենց որ շրթունքները շարժում էր՝ միանգամից կերպարանափոխվում էր և դառնում քսանհինգ տարեկան։ Ոչ մի իմաստուն չի կարող նույնիսկ մոտավորապես գուշակել այդպիսի մարդկանց տարիքը։

Մովսեսն ուրախությամբ ընդունեց նրանց։ Գորտն ու Տողարը համաձայնեցին պատմել իրենց իմացած բոլոր զրույցները՝ եթե Մովսեսը յուրաքանչյուրին տա մեկական ոսկի։

Առաջինն սկսեց Տողարը.

— Պապս ասում էր, որ հեռու-հեռավոր ժամանակներում Հայոց աշխարհը եղել է բլրապատ մի հարթավայր։ Բոլոր բլուրները զարմանալիորեն ոչ միայն նույն բարձրությունն են ունեցել, այլև խիստ նման են եղել իրար։ Դա ցայրացրել է Հայոց Վահագն աստծուն։ Մեր նախնիներն ու նրանց աստվածները երբեք էլ չեն սիրել նմանն ու նմանակը։ Մարդը մարդուց պիտի տարբերվի, բլուրը բլրից, շենքը շենքից, խոսքն էլ խոսքից։ Աշխարհն այսքան հմայիչ չէր լինի, եթե խայտաբղետ չլիներ։ Եվ ահա Վահագնը մտածել է, մտածել ու որոշել մի հարվածով վերջ տալ հայոց բնության միապաղաղությանը։ Նա երկինք է բարձրացել և իր հայկաչափ գեղարդը ահագնաթափ ուժով նետել ներքև։ Այդ հարվածից երկրի կրծքից հուր ու կրակ է ժայթքել, բարձրացել են ատրաշեկ սյուներ։ Լույսն այնքան շատ է եղել, որ մի քանի տարի աշխարհի վրա գիշեր չի եղել։ Կրակը մարելուց հետո ծնունդ է առել աշխարհի ամենաբարձր լեռը՝ Մեծ Մասիսը, որն այժմ երեք ու կես միլիոն տարեկան է։ Ինքը՝ Վահագն աստվածն էլ անվանակոչել է լեռը՝ Մասիս, որ նշանակում է ծնող, մայր, մեծ ծիծ։ Իսկ Փոքր Մասիսը բոլորովին վերջերս է ծնվել, ընդամենը երկու հարյուր հազար տարի առաջ։ Այնպես որ Մեծ Մասիսը երեք միլիոն երեք հարյուր հազար տարի ապրել է առանց իր կրտսեր եղբոր։ Փոքր Մասիսի ծնունդն էլ Վահագնի արածն է։ Առաջ մարդիկ դժվարանում էին մի տեղից մյուսը գնալ։ Բայց երկու հարյուր հազար տարի առաջ շատ ցեղեր դարձան վաշխատուն։ Մեր կողմերում էլ սկսեցին երևալ այլալեզու և այլատարազ մարդիկ։ Նրանք գալիս ու մեր աշխարհով անցնում էին իրենց աստվածների հետ։ Այդ աստվածներից մի քանիսը մտադրվեցին փլեցնել մեր գեղեցկանիստ Մասիսը։ Նրանք իրենց տեգերով սկսեցին փորփրել Մեծ Մասիսի ստորոտները։ Հենց այդ ժամանակ Վահագնը մի աստվածասաստ որոտ արձակեց և Մեծ Մասիսի կողքին որպես հենարան ծնունդ առավ Փոքր Մասիսը։

Տողարը վերջացրեց առաջին զրույցը։ Եվ մինչ նա դադար կառներ՝ իր ասքն սկսեց Գորտը.

Հիսուս Քրիստոսի ծննդից երեք հազար երկու հարյուր երե-

տունութ տարի առաջ եղավ աշխարհի ամենամեծ ջրհեղեղը, որի ժամանակ Նոյը, կամ ինչպես քաղդեական լեզվով նրան կոչում են Քսիսութրիոսը, իր տապանով բարձրացավ ջրերի վրա։ Մինչ այդ աշխարհակործան վեց ջրհեղեղներ են եղել։ Իհարկե, միայն Նոյը չէր, որ տեսավ ջրերի բարձրանալը և պատրաստեց իր նավը։ Տապաններ էին սարքել նաև ուրիշ երևելիներ։ Նրանց նավերը ջրամույն են եղել և փրկվել է միայն Նոյը իր աղխով։ Նոյն իր նավը պատրաստել էր հայկական մայրի փայտից, որն աճում էր Վանա լճի արևելյան մասում, այսինքն Հայոց ձոր գավառում։ Ի դեպ, ջրհեղեղից հետո հայոց մայրիները անհետացան աշխարհի երեսից։ Նրանց փայտը երկաթի ամրություն է ունեցել։ Հիմա առաջ առանենք մեր խոսքը։ Տապանի մեջ էին Նոյի կինը՝ Նոյեմվարը, նրանց ուստրերը՝ Սեմը, Քամը և Հաբենը, դուստրը՝ Աստղիկը, ազգականները, իրենց աղխի մի քանի անդամ։ Նոյի կրտսեր դուստր Սովինարը հրաժարվեց տապան բարձրանալ, որովհետև նահապետը մերժել էր նավի մեջ առնել նաև նրա սիրած տղային։ Տապանի մեջ Նոյը վերցրել էր յոթ զույգ ազնիվ կենդանի, յոթ զույգ անազնիվ կենդանի, յոթ զույգ թռչուն, պարեն ու խմելու ջուր և այն պնակիտները, որոնց վրա գրոշմված էր Միջերկրյայքի ժողովուրդների պատմությունը։ Տապանը ջրերի վրա է բարձրացել Վանա լճից հարավ և լողալով եկել ու դեմ առել Մեծ Մասիսի կատարին։ Այն ժամանակ համատարած ջրերի այդ անեղը օվկիանում Մասիսի գագաթը միակ ցամաքն էր, Միջերկրյայքի միակ կղզին։ Ջրհեղեղը տևեց հարյուր հիսուն օր։ Այդ ամբողջ ժամանակաշրջանում Նոյն իր մերձավորներով ապրեց Մասիսի գլխին։ Նոյը և իր որդիներն ու թոռները ցրտաշունչ ձմեռներ չեն տեսել։ Եղանակը մեղմ էր նաև այդ հարյուր հիսուն օրում։ Ջրերի իջնելուց հետո Նոյը գրագրոշմ պնակիտները թողեց Մասիսի վրա, այն անձավում, որը նրա համար հինգամյա տուն է եղել։ Նոյը պատգամել էր, որ իր հետնորդները հարյուր հիսուն տարի հետո բարձրանան և կարդան այդ պնակիտները։ Սակայն ոչ ոք չհասցրեց տեսնել դրանք։ Եղանակները փոխվեցին, բուքն ու հավերժական ձմեռը բնադրեցին Մասիսի կատարին, ձյան տակ մնացին և Նոյի անձավը, և նրա պնակիտները։ Մասիսի դագաթին, ձյունների տակ մնաց նաև նրա տապանը։

* * *

«Եվ այս հայտնի է ամենքին, թե դժվարագյուտ և տաժանելի է ժամանակագրություն կազմելը սկզբից մինչև մեր ժամանակները, մանավանդ որոշելը նախաբարական ցեղերի սերումը Նոյի երեք որդիներից»։

Մովսեսն այս տողերը գրել ու կանգ էր առել երկու ամիս։ Դասդասեց սերունդները, հետո երկար ժամանակ հաշվումներ կատարեց։ Վերջապես նրան թվաց, թե ամեն ինչ իր տեղում է և ոգևորված գրեց. «Իսկ դու, ով իմ ուշիմ ընթերցող, նայիր այստեղ երեք ցեղերի շարքի հավասարությանը մինչև Աբրահամ, Նինոս և Արամ, և զարմացիր»։

Երբ փորձեց շարունակել՝ շարքի հավասարությունը խախտվեց։ Ստիպված էր նորից փորփրել հիշատակարանները, ճշտել, թե Սեմից ովքեր սերեցին, Քամից՝ ովքեր։ Իսկ երրորդ շարքը, որ հարազատ էր իրեն, սերնդաշարեց այսպես.

«Հաբեթ ծնում է Գամերին։
Գամեր ծնում է Թիրասին։
Թիրաս ծնում է Թորգոմին։
Թորգոմ ծնում է Հայկին։
Հայկ ծնում է Արամանյակին։
Արամանյակ ծնում է Արամայիսին։
Արամայիս ծնում է Ամասիային։
Ամասիա ծնում է Գեղամին։
Գեղամ ծնում է Հարմային։
Հարմա ծնում է Արամին։
Արամ ծնում է Արա Գեղեցիկին»։

Իր ասածները հաստատելու համար Մովսեսը վկայակոչեց հներին և շարունակեց. «Բաղմաթիվ գրվածքներից ընտրելով հավաստին, որքան կարողացանք՝ նշանակեցինք Նոյի երեք որդիների սերունդները մինչև Աբրահամ, մինչև Նինոս և մինչև Արամ, որին, կարծում եմ, խելացի մարդկանցից ոչ ոք չի հակառակի, եթե միայն մարդ չցանկանա, ճշմարտության ոճը խանգարելով, ճշմարիտ պատմությունները առասպելների վերածել։ Այս դեպքում թող ամեն մի միտք ուրախանա՝ ինչպես կամենա։ Բայց եթե դու շնորհակալ լինես մեր նեղությունների և ջանքերի համար, ով ուսումնասեր և մեզ այս հարցերում աշ-

խատեցնող, համառոտ խոսքերով կհիշատակեմ, թե հին վիպագիրները ինչպես գրեցին մեր վերը նշանակած անձերի մասին...»։

Այնուհետև մագաղաթի վրա գրի առավ այն, թե Աստղիկը ինչպես հաշտեցրեց իր եղբայրներին, որոնցից մեկը՝ Սեմը, ձգտում էր միահեծանության, թե Զրվանը հենց ինքը Սեմն է, և որ նրա անունով է կոչվում Զարավանդ գավառը։ Եվ վերջում ավելացրեց. «Բայց ավելի հաճախ Արամյան ազգի ծերունիները փանդիռների նվագակցությամբ ցուցքերի և պարերի երգերում հիշատակում են այս բաները»։

* * *

Բագրևանդի հանելուկը Նպատ լեռան հյուսիսային ձորահովիտն է։ Երկինքն իր ամպերը թաքցնում է նրա անտառակներում և քուլաներով դուրս հանում տոթ օրերին։ Այդ պատճառով էլ ձորահովտի միակ գյուղը կրում է Ամպոտ անունը։ Ամպի պես դյուրաթեք են այս գյուղի բոլոր տնական ծառերի ծղիները։ Այստեղ գործում են ամենանուրբ մաղերն ու խաղողի ամենագեղեցիկ կայթերը։ Նպատը համայն Հայքի ամառանոցն է։ Ամպոտցիներն ամբողջ ամռանը զբաղված են իրենց փայտաշեն իրերը հովեկներին վաճառելով։ Երբեմն կատակով ասում են՝ ասված ամենաճարտար ձեռքը բաշխել է ամպոտցիներին։ Նրանք փայտից և՛ ցորենի շեղջ անելու թի են պատրաստում, և՛ ջրի կուժ, և՛ գինու դաշխուրան։ Ամպոտցին համոզում է, թե դդումից պատրաստած իր դդմակով դու կարող ես գինի խմել հարյուր տարի։

Արձանը Մովսեսին հայտնել է, որ Ամպոտ գյուղի քահանան գառնենու մեջ փաթաթված աղվես է, շահասեր, մարդատյաց։ Ոչ ոք չգիտե, թե երբ և որտեղից է եկել այս քահանան, որի անունը Շակուկ է։ Նա շինականներին ասում է.

— Ինչքան էլ գովեք ասածուն՝ նա չի կարող ձեզ համար նույնիսկ մի շերեփ պատրաստել։ Ձեր գործին նայեք։ Ձեր նախնիք ճարտար ձեռք են ունեցել Հիսուս Քրիստոսի ծննդից շատ առաջ։ Ով կհաստատի, որ բոլոր հայերը Հայկից են սերվել։ Ապա ինչու մյուս գավառների հայերը ձեզ նման ձեռքի շնորհք չունեն։ Իսկ գուցե դուք ասորական Բարշամ աստծու արյունակիցներն եք։ Ձեր հյուսած կողովները գեղեցիկ են աշխարհի

բոլոր ժողովուրդների համար, որոնց մեծ մասը չի պաշտում Հիսուս Քրիստոսին։ Միևնույն է, Հիսուս Քրիստոսը Հայքում չի եղել և, ինչքան էլ պաշտեք, նա հայ չի դառնա։

Վերջապես մի օր Մովսեսը ելավ և Արձանի հետ գնաց Ամպոտ։ Շակուկը փորձեց իր շողոմ լեզվով դուր գալ եպիսկոպոսին։ Սակայն Մովսեսը նրան առավ իր մտքի աքցանի մեջ։

— Որտե՞ղ ես ծնվել դու,— հարցրեց Մովսեսը։

— Եդեսիայում,— պատասխանեց քահանան։

— Բայց ինչպե՞ս ընկար Ամպոտ։

— Ինձ այստեղ է ուղարկել Բրքիշո հայրապետը։

— Բրքիշոյի բարքով էլ ապրում ես Ամպոտում։

— Հավանաբար ինձ ամբաստանել են, սրբազան հայր։

— Մ՛չ, Շակուկ։ Քեզնով ոչ ոք չի հետաքրքրվել, այդ պատճառով էլ դու հղփացել ես։

— Ես ոչինչ չեմ արել ապօրինի։

— Դու անհավատ արքաների պես տիկնունի ես պահում։ Քո կանանցից մեկը Ամպոտում է, մյուսը՝ Բագավանում, երրորդը Արշարունիքում, չորրորդի տեղը չգիտեմ։

— Սրբազան հայր, ես չեմ հասցրել ապահարզան տալ, նրանք իմ նախկին կանայք են։

— Դա ասում ես հիմա, ճարահատյալ, իսկ գինովցած ժամանակ սիրում ես կրկնել. «Գինու հինը, կնկա նորը»։ Ինչո՞ւ աղոթքի ժամանակ կուլ ես տալիս հայերեն բառերի կեսը։

— Սրբազան հայր, խրթին բառեր կան, որ ես դժվարանում եմ արտասանել։

— Հայերենում հայի համար ոչ մի խրթին բառ չկա, իսկ քահանան պարտավոր է հստակ արտասանել բոլոր բառերը։ Եվ հետո, Շակուկ, այդ ի՞նչ ես քարոզում ամպոտցիների մեջ։

— Ի՞նչ եմ քարոզում, սրբազան հայր։

— Դու ասում ես, որ նրանք տարբերվում են մյուս հայ շինականներից։

— Ես գովում եմ միայն նրանց ճարտարությունը։

— Ո՛չ, Շակուկ, դու ավելի վատ ես, քան հերձվածողը։ Դու ուզում ես արմատից կտրել Ամպոտի բնակիչներին, հեռացնել նրանց իրենց արյունակիցներից։

— Դա միայն բամբասանք է, սրբազան հայր։

— Դա ճշմարտություն է, Շակուկ։ Բոլոր օտարազգիներն

էլ սիրում են հրապուրել և Հայքից դուրս տանել արհեստավորներին։

— Սրբազան հայր, ես ծառայում եմ ամենակարող աստծուն։

— Շակուկ, այս պահից ես ազատում եմ քեզ այդ ծառայությունից։

— Սրբազան հայր...

* * *

Արածանի գետը ծունկ է տալիս Դիցավանի մոտ և թեքվում ձախ։ Ծնկածալ ծաղկախիտ ափին կապտակապույտ մի ժայռասեպ կա յոթ կանգուն բարձրությամբ։ Մոտիկից դիտելիս թվում է, թե այս հսկան բեկվել է երկնի կապույտից ու եկել խրվել այստեղ։ Ոչ ոք չգիտե, թե այդ ժայռասեպը երբվանից է կոչվում Բախտատուր։ Հայոց աշխարհի բոլոր կողմերից մարդիկ ուխտագնացության էին գալիս և բախտավորություն հայցում կապտաթույր քարից։ Ամռան ամիսներին այնքան շատ ուխտավորներ էին հավաքվում, որ ծնկածալ գետափը ծածկվում էր հարյուրավոր վրաններով։

Բախտատո՜ւր։ Հայերը բախտի աստված չեն ունեցել։ Ապավինել են քարին և բախտ ու երջանկություն հայցել նրանից։ Ավելի բախտավոր է Բախտատուրը։ Հնում նրան պաշտել են հեթանոս հայերը, հիմա էլ պաշտում են նույն հայերի քրիստոնյա դարձած շառավիղները։ Քրիստոնեությունը կիսով չափ ավերել է Հայաստանը, բայց Բախտատուրը մնացել է անձեռնլհաս։

Ոչ ոք չգիտե, թե Բախտատուրը ում է բախտավոր դարձրել։ Միայն Ատատի համար այս կապույտ քարը բախտի վիմասյուն է։ Ասպետ Սահակ Բագրատունու կապարճակիրը Բախտատուրի մոտ է հանդիպել Թեժին՝ նախարար Գագիշո Խորխոռունու այծյամավիզ և գեղապաճուճ դեսով դստերը։ Դա եղել է Մարգաց ամսի Լուսնակ օրը։ Այդ հանդիպումը այնքան հանկարծակի էր, որ Ատատը չի կարողանում սթափվել հոգու արբեցումից։

Թեժի չքնաղ դեմքին նայելիս թվում էր, թե հորդացումից պայթել է օրիորդի հոգու ամբարտակը և շրթունքներն ու հայացքը ողողել հոգնպարար սիրով։

— Եթե իմաստասեր Մովսեսը չդանդաղեր՝ դա չէի հանդիպի քեզ,— ասում է Ատատը։

— Իսկ ո՞վ է իմաստասեր Մովսեսը,— հարցնում է Թեժը։

— Դու չե՞ս լսել նրա մասին։

— Ոչ, չեմ լսել։

— Բագավանի եպիսկոպոսն է։ Երբեմն նա էլ է շրջապայության դուրս գալիս այստեղ։ Ես ցույց կտամ նրան։

— Ատատ, բոլոր եպիսկոպոսներն իմաստասե՞ր են։

— Դե, ի՞նչ ես ասում, Թեժ, լինում են նաև հիմար եպիսկոպոսներ։ Մովսեսն ուրիշ է, երանելի է։ Հայոց աշխարհում նրանից խելոք մարդ չկա։ Նա ամեն ինչ գիտե, անգիր հիշում է հին ու նոր պատմությունները։ Նա իմ տիրոջ՝ ասպետ Սահակի պատվերով բոլոր հայերի պատմությունն է գրում։

— Բայց դու ասում ես՝ թե դանդաղում է, եթե գիտե, էլ ինչո՞ւ է դանդաղում։

— Շատ ժամանակ է կորցնում հարդը ցորենից զատելու համար, այդպես է ասում ինքը,— հետո Ատատը ինչ-որ բան է մտաբերում և ավելացնում,— նա նաև ասում է, որ աշխարհում ամենադժվարը ասելիքը սեղմելն է և խոսքի կեմ անելը։ Ինձ հետ այդպես է խոսում, իր պատմության ամեն մի գլուխը մի խուրձ է անվանում։ Իրեն էլ համարում է մտքի հնձվոր։ Սուր ու հատու է նրա մանգաղը, Թեժ։

— Դե, եթե նա հնձվոր է, դու էլ խրձերը կալի մոտ հասցրնող սայլվոր ես։

— Ճիշտ ասացիր, Թեժ, միայն եղների փոխարեն ես իմ սայլին նժույգ եմ լծել, որովհետև շատ երկար ճանապարհ եմ անցնում մինչև կալին հասնելը։

Թեժի և Ատատի հանդիպումները շվրխպեցին մաղխազ Գագիշոյի հայացքներից։ Դուստրը Գագիշոյի թուլությունն էր։ Նախարարը կատարում էր Թեժի ամեն մի ցանկություն։ Եվ հետո հայրը չէր կարող արգելել, որ իր տանտիկնամայա դուստրը սիրեր որևէ մեկին։ Բացի այդ, Բախտատուրի մոտ շատերն են իրար հանդիպում։ Բայց ամեն հանդիպում չէ, որ ավարտվում է սիրով ու ամուսնությամբ։

Եվ, այնուամենայնիվ, բոլորովին, բոլորովին ուրիշ մարդ էր Գագիշոն։ Մի ժամանակ Խորխոռունյաց տունը պատվարժան տոհմ էր Հայաստանում։ Բոլոր հայ թագավորների թիկնապահների գլխավորը՝ մաղխազը եղել է Խորխոռունյաց տոհմից։ Ար-

շակունի գահատոհմի վերացումից հետո Խորխորունիներին մնացել է միայն մաղխազ պատվանունը։ Էլ ի՞նչ Թիկնապահ կամ մաղխազ՝ երբ տեր չկա։ Տոհմական պատվանունը Գագիշոյին ոչինչ չէր տալիս։ Նա պատրաստ էր մաղխազություն անել օտարազգի արքաների համար։ Սակայն օտարազգի արքաներն իրենց մաղխազներն ունեն, Գագիշոն պետք չէ նրանց։ Նրա ախտաժետ հոգու ընդարձակ աշխարհում համայն Հայաստանն զբաղեցնում էր ընդամենը մի ոտքատեղ։ Ոտ դիր ու տրորիր այդ հողը և պարսիկները քեզ կարժանացնեն տիտղոսների ու նվերների։ Նորից դիր ոտ նույն հողին և պարսիկ գահիճը կթողցրնի քո արյունակից հակառակորդների գլուխները։

Նա դաշնակցեց Վասակ մարզպանին ու պարսիկներին և հայերը չկարողացան հաղթել Ավարայրի ճակատամարտում։ Բայց հայերի պարտությունը նրան փառքի դափնի չտվեց։ Ասենք՝ ինչո՞ւ։ Ավարայրից հետո Հազկերտը նրան ընծայեց մի վարազագիր մատանի։ Վարազը Սասանյան արքայատան զինանշանն է։ Այդ մատանին կրողը ոչ միայն Պարսից արքայի հովանավորությունն էր վայելում, այլև համարվում էր անձեռնմխելի անձ։ Սակայն այդ մատանին Գագիշոն մատին չէր կրում, ծոցագրպանում էր պահում։ Երկյուղում էր հայրենակիցներից։ Չէ որ դա ոչ թե ընծա է, այլ դավաճանության վարձ։ Գիտեր, որ հայերը այդ մատանու համար կարող են պատժել իրեն։

Եվ նա դազաղեց։ Ի՞նչ հայրենիք, ի՞նչ Հայաստան։ Գագիշոն հիմա պատրաստ է դավաճանելու ամենքին։ Գուցե խնայի միայն սիրասուն դստերը։

Գագիշո Խորխորունին հովասուն օդի և բախտ հայցելու համար չէ Բախտատուրի մոտ եկել։ Ա՞յդ էր պակաս, բախտ հայցել մի անշունչ քարից։ Այդ ե՞րբ է քարը բախտ տվել մարդուն։ Չէ՛, Գագիշոն բախտ մուրացող չէ։ Արածանիի ափին նա հովեկի վրան է նեռել, որպեսզի քար գցի ուրիշների բախտին։ Նա լսել է, որ Գյուտ կաթողիկոսը Բախտատուրի մոտ պիտի հանդիպի Բյուզանդիայի Լևոն կայսրի պատվիրակների հետ։ Եվ Գագիշոն սպասում էր։ Եթե այդ հանդիպումը տեղի ունենար, ապա այս անգամ Գյուտը չէր ազատվի նրա ձեռքից։ Գյուտը նույնն է, ինչ Հովսեփ Հողոցիմցի կաթողիկոսը։ Առաջինը ոգեկոչեց Ավարայրը, սա էլ նախապատրաստում է երկրորդելու նույնը։ Գագիշոյին թվում էր, թե Ավարայրից հետո ինքը պի-

տի իշխեր Հայոց աշխարհի բոլոր անցուդարձերի վրա։ Բայց դեպքերը խճճվեցին հենց Ավարայրի օրերից։ Մեծ ճակատամարտը սկսվելուց մի տարի առաջ հայերը պատվիրակություն ուղարկեցին Բյուզանդիայի Թեոդոսիոս Փոքր կայսեր մոտ։ Հայաստանն օգնություն էր խնդրում Բյուզանդիայից Պարսից Հազկերտ արքայի դեմ կռիվ սկսելու համար։ Հայ ավագանին հավատում էր Թեոդոսիոս Փոքր կայսրին։ Այդ նա է Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին թույլատրել հայկական դպրոցներ բացել Հայաստանի բյուզանդական մասում։ Պատվիրակության ղեկավարն էր հազարապետ Վահան Ամատունին, որ ոչ միայն խոհեմ ու բանիմաց, այլև անվանի այր էր համայն Հայոց աշխարհում։ Այս նույն Ամատունին էր, որ տասը տարի առաջ Մեսրոպ Մաշտոցի դին Վաղարշապատից տարավ և թաղեց իր հայրենի Օշական գյուղում։ Կոստանդնուպոլիս մեկնելուց առաջ Հայոց նախարարների մատնակնքած նամակը հազարապետը բերեց Օշական և դրեց Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին՝ որով կարծես առնում էր երանելու օրհնությունը։ Վահան Ամատունու հետ Բյուզանդիա մեկնեց սպարապետ Վարդան Մամիկոնյանի եղբայր, սեպուհ Հմայակ Մամիկոնյանը։ Երրորդ գեսպանը Աղան Արծրունու եղբայր Մեհրուժան Արծրունին էր։ Սակայն Կոստանդնուպոլսում նամակատարների բախտը չժպտաց։ Պատվիրակության տեղ հասնելուց մի քանի օր հետո Թեոդոսիոս Փոքր կայսրը մահացավ և հայերին օգնելու նրա խոստումը մնաց անկատար։ Թեոդոսիոս Փոքրին փոխարինեց Մարկիանոսը։ Վերջինս բանի տեղ չդրեց իր նախորդի՝ կայսրության անունից տված խոստումը։ Եվ Վահան Ամատունին, Հմայակ Մամիկոնյանն ու Մեհրուժան Արծրունին ետդարձի ճամփան բռնեցին ձեռնունայն։

Սակայն կայսերական խոստումներով կամ խոստումնազանցությամբ չեմ կարող սանձել Հայոց ապստամբական ոգին։ Արտաշում, Տղմուտ գետի ափին տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը։ Հմայակ Մամիկոնյանը եղբոր՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի մահվան բոթը լսեց Բասենում։ Սպարապետի եղբայրը սկսեց իր դրոշի տակ հավաքել հայկական նահանջող զորական ջոկատները և գնալ ու ամրանալ Տայքի Որշնհաղ գյուղում, որը գտնվում էր Պարխարի դժվարամատույց լեռների դոգում։ Մինչ այդ Պարսից Հազկերտ արքան Տիզբոն կանչեց Վասակ Սյունի մարզպանին և շնորհազրկեց նրան։

Հայաստանի մարզպան նշանակվեց պարսիկ Ատրորմիզդ Արշականը։ Հազկերտը նոր մարզպանին պատվիրեց. «Հիմա չի կարելի ձեռք տալ հայերի հավատքին։ Դա Պարսից արքայի սրտի խոսքը չէր։ Ավարայրը ստիպեց, որ նա այդպիսի հրամարտակ արձակի։ Սակայն պարսիկները հանգիստ չթողեցին սպարապետ Վարդան Մամիկոնյանի կողմնակիցներին։ Ատրորմիզդ Արշականը որոնում էր Հմայակ Մամիկոնյանին։ Պարխարի խայտաճամուկ ձորահովիտներում քառասուն-հիսուն զորականներին գտնելը այդքան էլ դյուրին չէր։ Ոչ Ատրորմիզդ Արշականը, ոչ էլ որևէ ուրիշ պարսիկ Որշնհաղ չէին հասնի, եթե չլիներ Գադիշո խորխորունին։ Վերջինս գիտեր, որ Հմայակ Մամիկոնյանը մի օր վրեժ կլուծի եղբոր համար։ Վրեժ կլուծի ամենքից, և ամենից առաջ՝ Գադիշոյից։

Մաղխազը մի քույր ուներ Սեաչ անունով, որն ամուսնացել էր Կամսարական տոհմի ազատ Վարձի հետ և ապրում էր Շիրակի Կումայրի ավանում։ Քաջարի զորական էր Վարձը։ Ավարայրի մեծ կռվից հետո նա էլ էր միացել Հմայակ Մամիկոնյանին և անցել Պարխարի կողմերը։ Վարձն ու Սեաչը, ճիշտ է, զավակ չունեին, բայց խելագարի պես սիրում էին իրար։

Հմայակ Մամիկոնյանին գտնելու համար Գադիշոն որոշեց դավաճանել հարազատ քրոջը։ Ինքն իրեն նա ասաց.

— Թող ոչ ոք չփորձի ասել, թե ես դավաճանում եմ քրոջը։ Վարձը Սեաչի ի՞նչն է։ Ամուսի՞նը։ Բայց երեխա չունի։ Չի էլ ունենա։ Հետևապես ավելի լավ է, որ նրանից բաժանվի և ամուսնանա ուրիշի հետ։ Սեաչն այդ քայլին չի դիմի։ Ոչինչ, ես ինքս նրանց կհեռացնեմ իրարից։ Աշխարհում ոչ ոք չի իմանա այդ մասին, դա գաղտնի կմնա նույնիսկ աստծուց։

Մի իրիկնադեմի Գադիշոն հայտնվեց Կումայրիում և կանգ առավ քրոջ տան բակում։ Նա դժվարությամբ իջավ ձիուց և տուն մտավ կաղալով։

— Վո՜ւյ, քոռանա՞մ ես, ի՞նչ է պատահել,— իրարով անցավ քույրը, տեսնելով եղբոր ձախ ոտքի արյունոտ ճանկրտված ծոցը։

— Ոչինչ, Սեաչ, բան չկա։ Ճանապարհին մի կինճ պատահեց։ Երեք նետ արձակեցի, բայց ոչ մեկը չդիպավ։ Մի թփի մոտ սայթաքեցի, ոտս այսպես եղավ։ Ուզում էի որսով հյուր գալ քեզ,— ասաց Գադիշոն։

Քույրն սկսեց վիրակապել հոգոց հանելով։ Գադիշոն հարցրեց.

— Ի՞նչ լուր կա Վարձից։ Լավ այր դուրս չիկավ իմ փեսան։ Ինձ լսեր՝ հեռու կլիներ ամեն տեսակ գլխացավանքից։

— Ես էլ չգիտեմ նրա տեղը։ Մի ամիս է լուր չունեմ։ ասում են անցել է բյուզանդական մասը,— պատասխանեց Սեվալը։

Գադիշոն գիտեր, որ քույրը խաբում է։ Բայց Սեաչն էլ լավ էր ճանաչում եղբորը և Վարձի հետ կապված ոչ մի գաղտնիք չէր վստահի նրան։

Մաղխազը անընդհատ տրտնջում էր, թե ոտը ցավում է, իսկ ինքն իրը անհետաձգելի գործ ունի Դվինում։ Մի քանի օր նա չէր ելնում անկողնուց։ Ցերեկները քնում էր, գիշերներն արթուն մնում։ Համոզված էր, որ Վարձը Սեաչի մոտ կարող էր գալ գիշերով։ Այդ պատճառով էլ նա ճիգ էր թափում գիշերներն արթուն մնալու։ Գադիշոն գլխի էր ընկնում, որ իր տնական ներկայությունը կամաց-կամաց ջղագրգիռ է դարձնում քրոջը։ Դա նշանակում էր, որ ուր որ է պետք է երևար Վարձը։

Մի գիշեր, երբ երկինքը որպես շղարշ աշնանային բալ էր նետել Կումայրիի ուսին, Գադիշոն իր պատուհանից ձիու դոփյուն լսեց։ Անշշուկ ելավ տեղից և մոտենալով պատուհանին՝ լսեց քրոջ ու փեսայի զրույցը։

— Որշնհաղից այստեղ մի շնչով հասա,— լսվեց Վարձի ձայնը։

— Կամա՛ց,— փաղաքուշ ձայնով արձագանքեց նրան Սեաչը։

— Ինչո՞ւ։

— Տանը մարդ կա։

— Ի՞նչ։

— Եղբայրս է, Գադիշոն։

— Ա՜յ քեզ ձախորդություն, ե՞րբ է եկել։

— Մի քանի օր առաջ։ Որսի ժամանակ վիրավորել է ոտքը և դժվարանում է քայլել։

— Հիմա ի՞նչ անենք։

— Ետ դարձիր, Վարձ։

— Լսի՛ր։

— Ասա՛։

— Արի՛ գնանք։

— Ո՞ւր։

— Որշնհաղ։

— Խե՜ղթ ես, ինչ է։

Ապա Վարձն ու Սեաչը քայլելով հեռացան պատուհանի մոտից և Գադիշոն այլև ոչինչ չասաց։

Առավոտյան Գադիշոն ելավ տեղից, հագնվեց ու քրոջն ասաց.

— Դե ես գնամ, հիմա ոտս չի ցավում, վերքն էլ արդեն ապաքինվել է։

— Վո՜ւյ, քոռանա՜մ ես, իմ Վարձին դժբախտություն է պատահելու։

Սեաչը համոզված էր, որ եղբայրը լսել է իր ու Վարձի դիշերային զրույցը։ Այլապես այսպես միանգամից չէր մեկնի։ Գուցե ճանկռվածքն էլ հնարովի է և ոչ մի որսի հետ կապ չունի։ Հավանաբար նա լսել է Որշնհաղ գյուղի անունը և շտապում է այդ մասին հայտնելու պարսիկներին։

Անվախ կին էր Սեաչը։ Որոշեց գնալ Որշնհաղ և զգուշացնել Վարձին։ Եվ առանց ժամանակ կորցնելու Կամսարական տոհմի մի ծառայի հետ ճանապարհ ընկավ դեպի Պարխար։

Բայց Գադիշոն ավելի արագ շարժվեց, քան քույրը։ Ատրորմիզդ Արշականին նա իմաց տվեց, որ Հմայակ Մամիկոնյանն իր փոքրիկ զորաջոկատով գտնվում է Տայքի Որշնհաղ գյուղում։ Ոչ այդ ժամանակ, ոչ էլ հետո ոչ ոք չիմացավ, որ այդ լուրը Ատրորմիզդ Արշականին հաղորդեց Գադիշո խորխոռունին։ Ինքը մաղխազն էլ չէր ուզում, որ որևէ մեկը իմանար այդ մասին։ Ոչ վարձ էր պետք, ոչ էլ հատուցում։ Կարևորն այն է, որ մեջտեղից վերանար Հմայակ Մամիկոնյանը։

Պարսկական մի մեծ զորագունդ արագ երթով շարժվեց դեպի Պարխար։ Ճանապարհին պարսիկ հետախույզները նկատեցին Սեաչին և նրա ուղեկցին։ Վարձի կինը չիմացավ, որ իր հետևից Որշնհաղ է բերում մի ամբողջ զորագունդ։ Սեաչը տեղ հասավ երեկոյան, իսկ գիշերը պարսիկները պաշարեցին գյուղը։

Լուսադեմին Հմայակ Մամիկոնյանը իր փոքրաթիվ զորականներով մարտի բռնվեց թշնամու դեմ։ Անակնկալի եկած հայ զորականներից շատերը չհասցրին նույնիսկ ձիերի վրա բարձրանալ։ Մարտերն սկսվեցին գյուղի փողոցներում և ավարտվեցին կողքի այգեստանում։ Հենց այստեղ էլ շատերի հետ զոհ-

վեց Հմայակ Մամիկոնյանը։ Ամուսնու կողքին մարտնչելով՝ սուրը ձեռքին ընկավ գեղանի Սեաչը։

Ատրորմիզդ Արշական մարզպանը Որշնհաղի մարտով էլ ավարտեց իր ռազմական գործունեությունը Հայաստանում։ Մնացածը նա արեց խորամանկորեն, դավադրաբար, ուխտադրժորեն։ Ամենուրեք հայտարարեց, թե այստեղ ու այնտեղ ապաստանած հայ նախարարները կարող են վերադառնալ իրենց տները, թե ոչ մեկի կալվածքը հարկունիս չի գրավվի, թե սպարապետ Վարդան Մամիկոնյանի համախոհներից ոչ ոք դատաստանի չի ենթարկվի։ Նախարարներն իջան անառիկ լեռներից և ընկան ծուղակի մեջ։ Մարզպանը ձերբակալեց նրանց իբրև ապստամբության մասնակիցների և ուղարկեց Տիզբոն։ Հազկերտը դատեց և մահվան դատապարտեց հայ ուխտ քահանայի և երեսունմեկ նախարարի։ Վրաց բդեշխ Աշուշային հաջողվեց Հազկերտի մազիլներից փրկել Հմայակ Մամիկոնյանի մանկահասակ երեխաներին՝ Վահանին, Վասակին և Արտաշեսին, որոնց Վասակ Սյունի մարզպանը որպես պատանդների ուղարկել էր Տիզբոն։ Տուն վերադառնալուց հետո հիշելով այդ մասին բդեշխն ասել է.

— Իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է քենուս երեխաներին ազատելը պարսկական աքսորից։

Այո, Աշուշան ազգակցական յոթ թելով կապված էր Հայաստանի հետ։ Սպարապետ Վարդան Մամիկոնյանի մայրը Սահակ Պարթևի դուստրն էր, Համազասպ Մամիկոնյանի կինը։ Սահակ Պարթևն այս դուստրից բացի ուրիշ զավակ չուներ։ Վարդան Մամիկոնյանն ամուսնացավ Դուստր անունով մի օրիորդի հետ, որն Արծրունյաց տնից էր։ Արծրունյաց տնից հարս առավ նաև Վարդանի եղբայրը՝ Հմայակ Մամիկոնյանը։ Սրա կնոջ անունն էլ Զվիկ էր։ Աշուշա բդեշխի կինն էլ այս Զվիկի քույրը Անուշվռամն էր։ Ի հավելումն այս բոլորի՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկն էլ ամուսնացել էր Աշուշա բդեշխի տղայի՝ Վազգենի հետ։

Աշուշան Հմայակ Մամիկոնյանի երեք որբերին Տիզբոնից բերեց, սակայն երկյուղելով, որ նրանց գլխին կարող են խաղ խաղալ, Հայաստանում չթողեց և հետը տարավ Վիրք, որի քաղաքամայրն այն ժամանակ Ցուրտավն էր՝ Լալվար լեռների մեջ կառուցված գեղեցկատես ամրոց-քաղաքը։ Այստեղ, Աշուշայի

ապարանքում, իր քրոջ՝ Անուշվռամի հետ էր ապրում այրի Զվիկ տիկինը։

Բդեշխի ապարանքում առնականանում էր Հայաստան աշխարհի ազատատենչ ոգին։ Աստ սկսեցին մնվել ու դաստիարակվել Վահան, Վասակ, Արտաշես Մամիկոնյանները և ուրիշ հայ երեխաներ։ Նրանց հոգևոր սնունդ էին տալիս Զվիկ տիկինն ու նրա եղբայր Աղան Արծրունին, իսկ զորական կրթություն՝ Աշուշան։

Վիրահայոց այդ դպրոցի բաբունապետն, իհարկե, Աղան Արծրունին էր՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի երևելի սանը։ Աղանի պապը Հայոց Արշակ թագավորի ժամանակներում ապրող Մեհրուժան Արծրունին էր, որ դավաճանեց իր հայրենիքին, անցավ Պարսից Շապուհ արքայի կողմը և պարսիկների գլուխն անցած սկսեց ասպատակել ու ավերել հայրենի երկիրը։ Աղանն ատում էր իր դավաճան պապին, որի պատճառով շատ հայ մայրեր են հառաչել։ Աղանը մեղավոր չէ, որ թուլակամ ու օտարասեր էին իր հայրը՝ Վասակը և հորեղբայրները՝ Շավասպը, Տաճատը և Գոտերը։ Սրանցից Շավասպը փորձեց ձեռք գցել Հայաստանի թագը, դարձավ երկրորդ Մեհրուժան Արծրունի և Հայաստանը լցնել մոգերով ու ատրուշաններով։ Հայոց աշխարհում շատ ծխան մարեց, շատ լացուկոծ եղավ։ Վերջապես դավաճանի դեմ ելավ սպարապետ Վարդան Մամիկոնյանը և սրի հարվածով երկատեց նրա մարմինը։ Եթե Բյուզանդիա չմեկնեին՝ Մեհրուժաններ կդառնային և Աղանի հայրը՝ Վասակը և նրա մյուս երկու հորեղբայրները՝ Տաճատն ու Գոտերը։ Բայց նույն Աղանի հարազատ եղբայրը՝ Մեհրուժան Արծրունին, Վարդան Մամիկոնյանի համախոհն էր և օգնության համար Բյուզանդիա մեկնած երեք դեսպաններից մեկը։ Եվ հետո Մեհրուժանի ու Աղանի քույրեր Անուշվռամն ու Զվիկը իրենց սիրտն էին նվիրաբերում հայրենիքին։ Այդպես էին Արծրունիները, նրանց և՛ սերն էր ուժգին, և՛ ատելությունը։

Աղան Արծրունու սանն էր նաև Ղազար Փարպեցին, որ ապագայում պիտի դառնար երևելի պատմիչ, և որը Ցուրտավում ապրում էր Մամիկոնյան պատանիների հետ։ Ղազարը Վահան Մամիկոնյանի մտերիմ ընկերն էր, և, չնայած տարիքով մեծ էր նրանից, խաղերի ժամանակ Վահանի ետևից տանում էր նրա թիկնոցը։

Վահան Մամիկոնյանը իր նեռը սրեց Լալվարի որսատեղիներում, դարձավ անվրեպ աղեղնավոր և իր արյունակից անվեհեր նիզակակիցների հետ անահ ու քաջակորով զորականի անուն հանեց։ Ասես միանգամից Հայքի օդը շիկացավ այնպես, ինչպես Ավարայրի ճակատամարտի նախօրեին։ Պարսկամոլ հայ նախարարներին դուր չեկավ Վահանի մտերմությունը ասպետ Սահակ Բագրատունու և կաթողիկոս Գյուտի հետ։ Գադիշո Խորխոռունին շտապեց Տիզբոն և Պերոզ արքային ասաց.

— Վահան Մամիկոնյանին պետք է արտաքսել Հայոց աշխարհից։ Պատուղը ծառից հեռու չի ընկնում։ Նա սպարապետ Վարդան Մամիկոնյանի եղբոր տղան է։

— Հեռո՞ւ,— անվրդով արձագանքեց Պերոզը,— ի՞նչ կարող է անել նա մեն-մենակ, առանց զորքի։

— Վահան Մամիկոնյանը սպարապետ Վարդան Մամիկոնյանի եղբոր տղան է,— կրկնեց Գադիշոն։

Բայց շուտով, կարծես ի հեճուկս Գադիշո Խորխոռունու, Պերոզ արքան Վահան Մամիկոնյանին նշանակեց Հայոց աշխարհի ոստիկան, այսինքն գլխահարկի պետ, հարկահան։ Հավանաբար Պերոզը դրանով փորձում էր Վահան Մամիկոնյանին։ Միաժամանակ Պերոզը Վահանի օգնական էր կարգել Վրիվ անունով մի ասորու, որ բանսարկու ու խարդախ մարդ էր։ Վրիվը ստվերի պես հետևում էր Վահանին։ Դեռ տարին չլրացած Վրիվը Գադիշոյի թելադրանքով շտապեց Պերոզի մոտ և ամբաստանեց Վահանին.

— Ոստիկանը չի թողնում, որ ես խառնվեմ իր գործերին, և ինձ թվում է, որ Հայոց աշխարհից հավաքած ամբողջ ոսկին նա մտադիր է ուղարկել կայսրին կամ հոներին, որպեսզի փոխարենը զորական գնդեր ստանա՝ քո դեմ ապստամբելու համար։

Սակայն Վահանը խոհեմ էր և հենց որ այդ լուրն առավ, փորձեց խորամանկել Վրիվին։ Նա իր հավաքած ամբողջ ոսկին հետն առած հասավ Տիզբոն և ներկայացավ Պերոզին։ Պարսից արքան զարմացավ ու ոսկեհատին ասաց.

— Վահան, այսպես արագ գալդ բոլորովին դեմ է Վրիվի ասածին, մանավանդ որ հետդ բերել ես ամբողջ ոսկին։

— Արքա, ես չգիտեմ, թե Վրիվն իմ մասին ինչ է ասել քեզ,— պատասխանեց Վահանը,— բայց ես ոչ հիմար եմ, ոչ էլ կույր, որ ապստամբեմ Պարսից հզոր ու անհաղթ տերության դեմ։ Չէ որ ես ոչ միայն զորք չունեմ, այլև մի ծառա էլ չունեմ։

որ ինձ համար կերակուր եփի։ Ես որսի եմ գնում առանց թիկնապահի։ Չէ, արքա, ես ուրիշ չեմ ուզել, որ իմ հավատարմությունը կասկածի տակ դնես։ Դե, եթե քեզ հավատարմությամբ չծառայեի՝ էլ ինչո՞ւ էի այսքան ոսկին բերում ու քեզ հանձնում։ Չէ որ այսքան ոսկով ես կարող էի մի օտար երկիր մեկնել, ամեն օր խորոված ուտել և մինչև խոր ծերություն ապրել ապահովության մեջ։

Պերոզն ստիպված էր Վահան Մամիկոնյանին վերահաստատել ոսկեհատի պաշտոնում։ Այդ պահին Պարսից արքան չմտածեց, որ դրանով ապտակում է Գադիշո Խորխոռունու քիթ ու մռութին։ Պերոզի ինչ փույթն է, որ Գադիշոն չարության մեջ եփվում-խորովվում է, դառնում ավելի զազիր։

Վրիվն այլևս Հայաստան չվերադարձավ։ Նա ավելորդ էր, առանց այն էլ Հայաստանում պարսկամոլները քիչ չէին։ Գադիշոն գլխի էր ընկնում, որ հայ նախարարները հավաքվում են Վահան Մամիկոնյանի և կաթողիկոս Գյուտի շուրջը։ Երկիրը պատրաստվում էր մեծ ու ահեղ ճակատամարտի։ Ուր որ է՝ պիտի ամպրոպ ճայթեր Հայոց երկնքում և վերոկվեր Ավարայրի կիսատ մնացած կռիվը, որի առաջնորդն էր Գյուտ կաթողիկոսը։

Գադիշոն հասկացավ, որ իր ամենամեծ թշնամին Գյուտն է։ Պետք է մեջտեղից նախ նրան վերացնել, հետո մտածել Վահան Մամիկոնյանի և մյուսների մասին։ Կաթողիկոսին պիտի բռնել բյուզանդացիների հետ գործարքի մեջ։ Միայն այդ ժամանակ Պերոզը կհավատա Գադիշոյին։

Խորխոռունու լուրերը գալիս էին հեռուներից։ Ուր որ է՝ հայ նավաստիդավորների տարազով Բախտատուրի մոտ կհասնեն Լևոն կայսրի պատվիրակները։ Գադիշոն զբաղված չէ նրանց ճանաչելու հոգսով։ Թող ինչքան ուզում են՝ հանդերձափոխվեն այդ խորամանկ բյուզանդացիները։ Միևնույն է, նրանք պիտի հանդիպեն Գյուտին։ Իսկ դա կտեսնի Գադիշոն։ Կաթողիկոսը նրանից թաքնվել չի կարող։

Քանի մոտենում էր բյուզանդացիների ու Գյուտի հանդիպման օրը՝ Գադիշո Խորխոռունու տրամադրությունը բարձրանում էր։ Այդ ժամանակ էր, որ Թեժը հորը հայտնեց իր ու Ատատի սիրո մասին։

Ապագա աներոջ հետ հանդիպումը երկյուղով լցրեց Ատատի սիրտը։ Գադիշո Խորխոռունու ձախ աչքի բիբը սովորական բիբ էր, իսկ աջ աչքինը՝ ասես կծկված սև դև լիներ, որ պիտի

դուրս գար խոռոչից և ճիվաղի պես կպչեր իրեն։ Ատատը չէր ցանկանա այդպիսի աներ ունենալ։ Բայց Թեժի համար նա պատրաստ էր բարեկամություն անել նույնիսկ իժի հետ։

— Թեժն ասաց, որ քո անունը Ատատ է, դա Խորխոռունյաց տոհմի անուններից է,— խոսել սկսեց Գադիշոն։

— Ես էլ Խորխոռունիներից եմ,— պատասխանեց Ատատը։

— Բայց ծառայում ես Սահակ Բագրատունուն։

— Ասպետը փրկել է հորս կյանքը, նա մեր ընտանիքի հովանավորն է։

— Գովելի է քո տիրասիրությունը, բայց պիտի չմոռանալ, որ Բագրատունիները մի անտես ոտք ունեն, որով յոթ տարին մեկ աքացի են տալիս իրենց աջակից տոհմերին։ Հիմա ասա, թե ինչպե՞ս եղավ, որ Սահակ Բագրատունին գիրք գրելու պատվեր տվեց եպիսկոպոս Մովսեսին։

— Նա այդ պատվերը տվել է Գյուտ կաթողիկոսի խորհրդով։ Իսկ Գյուտը ջատագով է այն ամենին, ինչ հունական է։

— Նորից Գյուտը, ամեն ինչում նրա մատը խառն է։ Եվ ի՞նչ է գրում այդ ծեր, ուժասպառ եղած դպիրը։

— Հայերի պատմությունը Ադամից մինչև հիմա։

— Ես դա չեմ հարցնում, Ատատ։ Պերոզ արքայի դեմ ի՞նչ է գրում Մովսեսը։

Այդ խոսքերից շանթահար եղածի պես Ատատը պատասխանեց.

— Նա ի՞նչ գործ ունի Պերոզ արքայի հետ։ Դու նրան չես ճանաչում, նա ազնիվ իմաստասեր է, ակոսահատ շինականների պաշտպան։

— Բայց նա հունասեր է և ատում է այն ամենը, ինչ պարսկական է։

— Դա ճիշտ չէ, տեր Գադիշո, եպիսկոպոսն ատում է միայն անազնիվն ու անարդարը՝ լինի դա հայկական, պարսկական թե հունական։ Ասպետն ասում է, որ եթե այդպես շարունակի՝ Մովսեսը կստեղծի հայոց աստվածաշունչը։ Ամեն ազգ իր նշանաբանն ունի, իսկ մենք չունենք։ Նա ստեղծում է մեր ազգի նշանաբանը։ Իմաստասերն ինձ բացատրել է, թե ինչ բան է դա։ Խառնիճաղանջ դարերը Հայաստան աշխարհում միայն խորշակ են թողել։ Մենք պետք է հոգևոր ծարավը հագեցնելու մեր հավիտենական աղբյուրն ունենանք։ Բոլոր հայերը շնորհակալ կլի-

նեն իմաստասեր Մովսեսից։ Նա առաջին մարդն է, որ Հայոց պատմության ճանապարհն է անում։

— Դու դեռ երիտասարդ ես և այդպիսի բաները չես հասկանում,— զրույցը եզրափակեց Գադիշոն՝ հասկանալով, որ իր դեմ կանգնած է ապագա հակառակորդներից մեկը։

Ատատը չպատասխանեց։

Այդ հանդիպումից հետո շարագործ Գադիշոյի գլուխը ծանրացավ նոր սանդրանքով։ Ատատն էլ գլխի ընկավ, որ թանկարժեք բաներ հաղորդեց մաղխազին։ Հիմա Գադիշոն երկու նոր զենք ունի Գյուտ կաթողիկոսի դեմ։ Նա Պերոզին կհայտնի, որ Սահակ Բագրատունին Գյուտ կաթողիկոսի խորհրդով «Հայոց պատմություն» է գրել տալիս եպիսկոպոս Մովսեսին։

Հաջորդ օրը Բագավան ժամանեց Գյուտ կաթողիկոսը։ Գադիշո խորխորատին անմիջապես նկատեց դա։ Լևոն կայսրի պատվիրակները կաթողիկոսի հետ խորհրդակցեցին ոչ թե Բախտատուրի մոտ, այլ ավանի Լուսավորչի տաճարում։ Կողմնակի աչքերից զրույցը գաղտնի պահելու համար տաճարի փակ դռան մոտ պահակ էին կարգել Ատատին։ Այդ օրվա գիշերն էլ կաթողիկոսը աննկատ հեռանում է Բագավանից։ Մի օր անց Գադիշոն վիրավոր վագրի նման ոտի տակ է տալիս ավանը՝ փողոց առ փողոց, տուն առ տուն, հարցուփորձում այնպես, կարծես թե ասելիք ունի կաթողիկոսին։ Եթե Ատատը չլիներ՝ զգաստ Գադիշոն թերևս չիմանար, թե Գյուտն ում հետ է հանդիպել Բագավանում։ Բայց Գադիշոյի խարդավանքներին անտեղյակ Ատատը չգիտեր, թե ինչ նպատակով և ինչ տեղեկություններ է հավաքում մաղխազը։ Իրավ է, չի սիրում նրան, բայց չի մոռանում, որ նա Թեժի հայրն է։ Այդպես էլ միամտորեն հայտնեց նրան, որ կաթողիկոսը անծանոթ մարդկանց հետ հանդիպել է Լուսավորչի տաճարում։ Եթե իմանար, թե իր խոսքի պատճառով հետագայում պիտի տառապեին Գյուտն ու Մովսեսը, ապա մի դագանակ կվերցներ ու կհարվածեր Գադիշոյի գլխին։

Խորխորատին հավաքեց Բախտատուրի մոտ խփած հովիկի իր կաճե վրանները և հեռացավ Բագավանից։

Երեք օր անց Գադիշոն ճեմում էր Պարսից արքունիքի գահասրահում։ Պերոզը նրան սպասեցնել չտվեց։ Գադիշոն Պարսից գահակալին ողջ տվեց.

— Բյուզանդիայի Լևոն կայսրը դրժել է քեզ հետ բարեկամ մնալու ուխտը և դաղտնի համաձայնության եկել հայերի հետ

— Կայսրն ի՞նչ խոստում է տվել հայերին,— հարցրեց Պերոզը։

— Հինգ հազար զորականներով օգնել հայերին՝ եթե նրանք կռվի ելնեն քո դեմ։

— Ո՞րն է քո լուրերի աղբյուրը։

— Մի քանի օր առաջ Բագավանի Լուսավորչի տաճարում Լևոն կայսեր պատվիրակները հանդիպել են Գյուտ կաթողիկոսի հետ։ Զրույցի ժամանակ Գյուտն ասել է, որ հայերը երազում են դավանակից տերության գիրկն ընկնել,— վստահ պատասխան տվեց Գադիշոն։

— Դու, կարո՞ղ ես հաստատել, որ Գյուտը հանդիպել է բյուզանդացիներին։

— Այո՛, արքա։

— Ես անպատճառ կպատժեմ Գյուտին, մորթել կտամ նրան,— մոլեգնեց Պերոզը։

— Դա պիտի վաղուց աներիր, արքա, նա անունկնդիր մարդ է և դիվական ուժով խաթարում է Հայոց աշխարհի անդորրը։ Այն մարդկանց, որոնք քո կամքն ու հրամանն են ուզում կատարել, որոնք ուզում են քո կրոնը հանձն առնել և սիրել, այդ անօրենը կանչում է իր մոտ և որին հող կամ կայք տալով, որին քաղցր խոսքերով խաբելով՝ հեռացնում է նրանց իրենց դիտավորությունից։ Շատերն են եկել ինձ մոտ, հանձն առել ընդունել քո օրենքը, բայց Գյուտը կանչելով այդպիսիներին, համոզել է, որ թողնեն իրենց միտքը և արհամարհեն սրբազան մոգությունը։ Իսկ ինձ ասում է նրա համար, որովհետև ես սիրում եմ քեզ և պաշտում եմ արեգակի ու կրակի երկիր Պարսից աշխարհը, որովհետև բոլորանվեր սրտով ծառայում եմ քեզ։

— Բայց ինչո՞ւ է կայսրն այդպես անվերապահորեն հավատում Գյուտին,— հարցնում է Պերոզը։

— Նա բազում անգամ ընծաներ է նվիրել կայսրի հպատակներին և այն արքունականներին, որոնք ելումուտ ունեն կայսրի մոտ,— ասում է Գադիշոն։

— Ես Գյուտին կպատժեմ նաև դրա համար։ Նրան կխորովեմ թոնրի մեջ։

— Արքա, քո դեմ կռվելու համար Գյուտը յոթ սուր է սրում։ Նրա խորհրդով ասպետ Սահակ Բագրատունին, որի նախնիները ականակապ ու թագակիր են եղել Հայոց Արշակունի թագա-

վորների ժամանակ, պատմություն է գրել տալիս Բագրևանդի եպիսկոպոս Մովսեսին։

— Ի՞նչ պատմություն։

— Ասում են դա լինելու է մի նոր աստվածաշունչ, որը բոլոր հայերին բորբ պայքարի է ոգեկոչելու պարսիկների դեմ։

— Իսկ ո՞վ է այդ եպիսկոպոս Մովսեսը, նա կարո՞ղ է աստվածաշունչ ստեղծել։

— Այո, արքա, կարող է։ Մովսեսը խելոք, հանճարաշատ իմաստասեր է։ Նրան համարում են ամենաբմբոստ ու ամենաիմաստուն այրը մեր աշխարհում։

— Չպիտի թողնել, որ նա ավարտի իր աստվածաշունչը։

— Արքա, արդարադատ է քո որոշումը, բայց դրան հասնելու համար մեջտեղից պիտի վերացնել նախ կաթողիկոսին։

Այս զրույցից շատ ժամանակ չանցած Գյուտ կաթողիկոսը ազդ առավ և մեկնեց Տիզբոն։ Պերոզ արքան չընդունեց նրան։ Հպարտ ու պատվասեր Գյուտը թուքը կուլ տվեց և սպասեց։ Հայոց կաթողիկոսին մեղադրելու դեր ստանձնեց Միհրան տոհմի նախարար, Պերոզ արքայի դայակի որդի Հըզատվշնասպը։ Գադիշոյի հաղորդած մեղադրանքները ներկայացնելուց հետո Հըզատվշնասպը Գյուտին հոխորտաբար ասաց.

— Դու դավաճանել ես արյաց արքային, քեզ մահ է սպասվում, եթե կարող ես՝ արդարացիր, ողջախոհ պատասխաններ տուր, որ նա ներողամիտ լինի։

Եվ Գյուտը Հըզատվշնասպին պատասխանեց.

— Մաղխազ Գադիշոն զձուռ այր է, բայց նրա բոլոր ասածները չեն, որ սուտ են։ Դրանց մեջ կան նաև ճշմարիտ բաներ։ Ես ատում եմ հոռի անձանց, բոլոր նրանց, ովքեր խուսափում են ճշմարտությունից։ Գադիշոն թացը շատ է խառնում չորի հետ։ Ինչ արած, դժվար է՝ թացը միայն թաց ներկայացնել, չորը՝ չոր։ Հույների հետ ես հարաբերություններ ունեմ։ Այլ կերպ լինել չի կարող. հելլենական են իմ կրթությունն ու դաստիարակությունը։ Ես շատ հույն դասընկերներ ունեմ։ Սակայն արյաց արքային դավաճանելու համար չէ, որ ես կապերի մեջ եմ մտնում հույների հետ։ Զարմանալու բան չկա։ Չէ որ հայերն ու բյուզանդացիները կրոնով դավանակից են։ Իմ շուրջառի աստառը նույն կտորից է, ինչ հույն կաթողիկոսի շուրջառինը։ Ես դիպակ եմ բերել տալիս Կոստանդնուպոլսից։ Այո, բյուզանդացիների հետ մեզ կապում են հանդերձներն ու ծիսական արարողությունները, բայց ոչ տիրանենգությունը, նախարարդ Հըզատվշնասպ։ Ընդհակառակը մեր կրոնը մեզ պարտավորեցնում է հավատարմությամբ ծառայել մեր տերերին։

— Իսկ ի՞նչ կասես, Գյուտ, այն մասին, որ ձեր երկրում նոր աստվածաշունչ են ստեղծում։

— Ի՞նչ աստվածաշունչ։

— Բագրևանդի եպիսկոպոս Մովսեսը գիրք չի՞ գրում ասպետ Սահակ Բագրատունու պատվերով։

— Գրում է։

— Ի՞նչ գիրք է դա։

— Հայոց պատմություն։ Այդպիսի գրքեր շատ կան աշխարհում։ Դուք՝ պարսիկներդ այդպիսի մի քանի գիրք ունեք։

— Մաղխազ Գադիշոն Պերոզ արքային հայտնել է, որ դա լինելու է ոչ թե սովորական գիրք, այլ՝ նոր աստվածաշունչ։

— Ես չեմ կարող հնարովի պատասխաններ տալ չեղած բաների մասին։ Ամեն բաղձ չէ, որ շահեն է, ամեն խոսք չէ, որ խոսքի արժեք ունի։ Մենք հայերս մի առած ունենք, որն ասում է՝ մի լծեր զեզն ընդ իշոյ։

Հըզատվշնասպը Գյուտի խոսքերը հաղորդեց Պերոզ արքային։

Պերոզն ասաց.

— Նա ուզում է գեղեցկախոս լեզվով փրկել իր կյանքը։ Հայտնիր, որ ես ազատ կարձակեմ նրան, եթե նա ուրանա իր հավատը։

Հըզատվշնասպը նորից զրույցի բռնվեց Գյուտի հետ։

— Ավարայրի մեղավորներին Պերոզի հրամանով ես կմ ազատել Հրև քաղաքի աքսորից և տեսել եմ, թե ինչ տառապանքներ են քաշել նրանք։ Մարդու կյանքն ավելի թանկ է, քան ամեն տեսակ դավանանք,— ասաց պարսիկ նախարարը։ — Հիմա չես կարող ասել, թե ով ում կուռքն է։ Գադիշո նորխոռոմներին գութ չունի, մատնել է իր ազգակիցներին, բայց ապրում է աշխարհում և իր կալվածքի տերն է։ Ո՞վ կարող է հաստատել, թե նա պարսից ատրուշան է պաշտում և ոչ Հիսուս Քրիստոսին։ Կարևորը կյանքն է, Գյուտ, արդարև, մարդ պետք է նախ և առաջ պաշտի իր կյանքը։

— Աքաղաղը ծուղրուղու է կանչում աչքերը գոց, իսկ ես մարդ եմ, նախարարդ Հըզատվշնասպ։

— Ինչքան էլ իմաստուն և արդարուսույց լինեն քո մտք-

քիրը՝ միևնույն է, աշխարհը չի տեղավորվի մարդու ձեռքի ադուռի մեջ։ Ադուռը բուռ է, Գյուտ, և միայն բուռ։

Հրդատվշնասպն, այնուամենայնիվ, համոզվեց, որ վաղ թե ուշ արքայական ոչ մի սպառնալիք Գյուտին դավանափոխ չի դարձնի։

Մի անգամ կաթողիկոսը, նկատելով պարսիկ նախարարի թախծոտի դեմքը, հարցրեց,

— Քեզ վատ բա՞ն է պատահել, նախարարդ Հրդատվշնասպ։

— Դժբախտությունն ինձնից մի քայլ է հեռու,— ասաց Հրդատվշնասպը և պատմեց իր շնաշխարհիկ, բայց ցավագար քրոջ մասին։

Գյուտը նրան քաղցրարմատ մատուտակ տվեց, որ հետը վերցրել էր Հայոց աշխարհից և ասաց, թե ինչպես պիտի դրա հյութը խմեցնի քրոջը։

Հետագայում կաթողիկոսը նրա դեմքից կռահեց, որ քույրը ապաքինվել է, բայց ինքը՝ Հրդատվշնասպն այդ մասին ոչինչ չասաց։

Սակայն Հրդատվշնասպը չանաց պարտքի տակ չմնալ և օգնել, որ Պերոզը մահվան չդատապարտի Գյուտին։

— Տեր արքա,— ասաց Հրդատվշնասպը Պերոզին,— չարժե սպանել Հայոց նրբաքիթ, շքեղաշուք ու պատկերաճոխ կաթողիկոսին։ Այո, պատկառանք է ղրում մարդ՝ նրա սեգ պահվածքին ու պերճապսակ գանձուրներին նայելիս։ Չնայած շնորհաբուխ խոսքի ուժ ունի, բայց չի թաքցնում իր հոգու ներքինը։ Թող ամենքն իմանան, որ արյաց արքան չի սպանում գեղեցիկը։ Դա կփառավորի քո արեգական անունը և Ասիայի բոլոր ազգերի տարեգրիները կգրեն. «Գեղեցիկի պաշտամունք ուներ Պարսից մեծ, իմաստուն ու հզոր արքա Պերոզը, որը մահվան չդատապարտեց Հայոց Գյուտ կաթողիկոսին, որովհետև վերջինս այր էր գեղեցիկ արտաքինով»։

— Հայտնիր նրան,— հրամայեց Պերոզը,— որ մինչև այժմ կաթողիկոսի իշխանություն է բանեցրել առանց իմ հրամանի, ծառա մարդիկ են այդպիսի մեծ գործ տվել նրան, իսկ ինքը հնուց էլ վստահություն չի ունեցել Պարսից աշխարհում։ Նա այլևս կաթողիկոս չէ։ Ես ազատ եմ արձակում նրան։ Թող գնա և ապրի այնտեղ, որտեղ կամենում է։ Եվ թող իմանա, որ ես խնայեցի ոչ թե նրա մշուշոտ հոգին, այլ՝ նրա գեղեցիկ մարմինը։

***

Գյուտը Բագավանում հայտնվեց հանկարծակի։ Լուսավորչի տաճարի բակում նա իջավ գրաստից, անփութորեն բաց թողեց երասանը և գողդոջ քայլերով մոտենալով դավիթում շվար կանգնած Մովսեսին՝ երկար-երկար ողջագուրվեց նրա հետ։ Մովսեսն զգում էր, որ կաթողիկոսը բարի լուրերով չէ վերադարձել Պարսից աշխարհից։ Սովորաբար Հայոց հայրապետը տեղից տեղ է գնում միայն կառքով։ Գրաստի թամբին նստում են կառքից իջնողները։ Մի՞թե Պերոզը շնորհազրկել է Գյուտին։

Տաճար մտան գիրկընդխառն։ Գյուտը պատմեց իր հետ տեղի ունեցածը։

— Հիմա ի՞նչ կդառնա Հայոց աշխարհը,— հարցրեց Մովսեսը։

— Աշխարհը կմնա, Մովսես, շարիքն ու չարագործները չեն մնա։ Օտար ժանիքի տակ հայոց ընկույզը չի կոտրվի։ Միայն թե մենք մեզ չչարդենք։ Դու երբևիցե հանդիպե՞լ ես Գագիշո խորխոռունուն։

— Շատ տարիներ առաջ նրան մի անգամ տեսել եմ Վաղարշապատում։

— Իսկ նա այս ամռանը եղել է այստեղ՝ Բագավանում և Պերոզին հայտնել իմ ու բյուզանդացիների հանդիպման մասին։ Հիմա, իհարկե, իմաստ չունի գրանով զբաղվել։ Գագիշոն գաղձ է։ Նոր եմ հասկանում, թե ինչու գաղձին նաև գայլախոտ են անվանում։ Դե, իհարկե, այդ պատատուկը փաթաթվում է ուրիշ բույսերի, ծծում հյութը և չորացնում նրանց։ Այդպես է անում գայլը ոչխարն իր ճանկը գցելուց հետո։ Գագիշոյի համար ամենքս էլ ոչխարներ ենք։ Բայց ես դրա համար չեմ եկել քեզ մոտ։ Ես այսուհետև չեմ խառնվի աշխարհիկ գործերին, կքաշվեմ Վանանդի Ոդմսու գյուղը, որտեղ ապրել եմ ես՝ երբ դեռ եպիսկոպոս էի Գագ անունով։ Չէ, ունքերդ մի կիտիր, Արահեղ չեմ կարող գնալ։ Մեր Տարոնն ինձ նորից մարտի կկանչի։ Իսկ դա կխանգարի Հայոց աշխարհի փրկությանը։ Հիմա պիտի թողնել, որ ուրիշները ջանան։ Հայաստանն ուժ ունի, կարող է թոթափել իր լուծը և պարսիկներին դուրս քշել երկրից։ Ես ճանապարհս թեքեցի և Բագավան մտա մի քանի խոսք քեզ ասելու համար։ Գուցե սա մեր վերջին զրույցն է։ Պարսից արքան գիտե, որ ապետ Սահակի պատվերով դու «Հայոց պատմություն» ես գրում։

Գաղիշոն հասցրել է նաև այդ մասին հայտնել Պերոզին։ Այդ լուրը երկյուղով է լցրել պարսիկների սրտերը։ Պետք է ավարտին հասցնել այն, ինչից սարսափում է թշնամին։

— Դավն ու թշնամանքը հյուծում են նաև իմ հոգին։

— Արարողը, Մովսես, պիտի արհամարհի մանրն ու չընչինը, թումբն ու դարավանդը, գրող-գպիրը չպետք է դադար ունենա, քեզ կարող է ապավեն լինել միայն այս զգացումը։

— Այս եպիսկոպոսությունն էլ մի կողմից է ինձ հոգնաբեկ դարձնում։

— Ընդհակառակը, եպիսկոպոսությունը օգնում է քեզ։ Մի կարծիր, թե ինձ փոխարինողը կշնորհազրկի նաև քեզ։ Սահակ Բագրատունին և Վահան Մամիկոնյանն ամեն ինչ կանեն, որ քեզ ձեռք չտան։ Մանավանդ, որ հակառակորդները այլ կերպ են մտածում քո մասին։ Նրանք կարծում են, թե դու ծերացել ես ժամանակից շուտ և երկար չես ապրի։

— Բայց դա ճշմարիտ է, Գյուտ։

— Ճշմարիտ չէ, Մովսես, դու կապրես ավելի երկար, քան շատ այսօրածիններ։ Իսկ սրանք վերցրու, քեզ պետք կգան,— ասաց Գյուտն ու Մովսեսին մեկնեց թանկարժեք մի թարշիշ ու մի դահանակ։

— Ի՞նչ պիտի անեմ այս հակինթները։

— Յուրաքանչյուր ամսվա Ահրանք, Մանի և Եմակ օրերին մի թեթև նայիր դրանց և աչքերիդ լույսը չի նվազի մինչև կյանքիդ վերջը։

— Իսկ դու, Գյուտ, կարծում ես, թե կարող ես փակվել Ոդմսուում և կտրվել աշխարհից։

— Գիտես, Մովսես, հայը տերության կորուստն զգում է օտար երկրում։ Ի՞նչ աշխարհից պիտի կտրվեմ։ Ես այլևս աշխարհ չունեմ։ Ավելի լավ է Ոդմսուի մի փոքրիկ տան մեջ ես իմ գլխի ու իմ տան տերն զգամ։ Հայ թագավորի ձեռքով մեռնելը մի մահ է, օտար թագավորի ձեռքով մեռնելը՝ երկու մահ։ Տերություն է պետք, Մովսես, սեփական տերություն, հայախոս, հայազրոյ, հայազորք պետություն։ Օտար տիրապետությունը նման է մի հեղեղի, որ կեղտոտում է բոլոր հայատակների հոգին։ Հեղեղ կա, որի նստվածքը մնում է դարերով։

Գյուտն այլևս չշարունակեց։ Նա գրկեց Մովսեսին և անխոս հրաժեշտ տվեց նրան։

Գյուտի մեկնելուց մի քանի օր անց Դվինից Բագավան վերադարձավ Ատատը։

— Ատատ,— հարցրեց Մովսեսը,— դու հիշո՞ւմ ես, թե երբ էր, որ Գյուտ կաթողիկոսն այս տաճարում հանդիպեց օտարազգի մի քանի մարդկանց հետ։

— Ամռանն էր, սրբազան հայր,— պատասխանեց ասպետ Սահակի կապարճակիրը,— ես էլ պահակում էի, որ անծանոթ մարդ տաճար չմտնի։

— Ապա մտաբերիր, Ատատ, դու որևէ մեկին հայտնե՞լ ես այդ մասին։

— Ոչ, չեմ հայտնել, այսինքն՝ չեմ հիշում...

— Մի անգամ,— ասում է Մովսեսը,— նախամայրը Եվան դրախտից մի խնձոր է թոցնում և սկսում հաճույքով ուտել։ Հետո խորհելով, որ միայնակ ուտելն արդար չէ՝ խնձորի մի մասը տալիս է Ադամին։ Շտապ-շտապ ուտելիս խնձորի մի կտոր մնում է Ադամի կոկորդում և խոչափողի առջևի մասում ելուստ առաջացնում, որ ամենքս կոչում են ադամախնձոր։ Դու ինձ ճի՞շտ պատասխանեցիր, Ատատ, հոգուդ մեջ ադամախնձոր չկա՞։

— Ես մտաբերեցի, սրբազան հայր, Գյուտի և բյուզանդացիների հանդիպման մասին ես հայտնել եմ Գաղիշո խորխորունում։

— Իսկ քեզ ի՞նչն է կապում այդ մարդու հետ։

Ատատը մի պահ մտածեց, ապա գլուխը ներքև հակեց ու պատասխանեց.

— Ես սիրում եմ նրա դստերը։

— Ուրեմն պիտի դառնաս Գաղիշոյի դստրա՞լրը։

— Այո, սրբազան հայր։

— Իհարկե, մարդ պիտի ամուսնանա, որպեսզի ոստաղերծ չմնա։ Եվ պիտի ամուսնանա նրա հետ, ում սիրում է՝ հաշվի չառնելով, թե ով է նրա հայրը,— ասաց Մովսեսը, լռեց և տեսական դադարից հետո հարցրեց.— Ամառվանից հետո դու ե՞րբ ես նորից հանդիպել Գաղիշոյին։

— Այսօր։

— Այսո՞ր։

— Այո։

— Որտե՞ղ։

— Այստեղ, Բագավանում։

— Հիմա ի՞նչ է որոնում Բագավանում։

— Ուզում է իմանալ, թե Գյուտ կաթողիկոսն ինչո՞ւ է եկել Բագավան։

— Դու ի՞նչ պատասխանեցիր նրան։

— Ես նրան ասացի, որ հայրապետը Բագավան չի եկել։

— Բայց դա ճշմարիտ չէ, Ատաս, Գյուտն իրոք եղել է այստեղ։

— Ես չգիտեմ այդ մասին, բայց եթե իմանալի էլ՝ կժխտեի։ Ինչ էլ լինի՝ այսուհետև ես Գաղիշո խորհրդունուն ոչինչ չեմ հայտնի ուրիշների մասին։

— Բայց ինչո՞ւ հանկարծ այդպիսի վճիռ կայացրիր։

— Այդ վճիռը, սրբազան հայր, ես չեմ կայացրել, այլ նրա դուստր Թեժը։ Նա հասկացրել է ինձ, որ չի կարելի հորը որևէ բան վստահել, որովհետև նա դավաճանում է ամենքին։

— Իսկ եթե դա թանկ նստի քեզ վրա և նա հրաժարվի դրստերը կնության տալ քեզ։

— Գաղիշոն չի կարող այդպիսի բան անել։

— Ինչո՞ւ չի կարող։

— Որովհետև Թեժը սիրում է ինձ։

* * *

Մի քանի օր շարունակ Մովսեսը չէր կարողանում կորվել ասորիներն այն հնախոսարանից, որ աբեղա Արծանի եղբայրը բերել էր Հայոց Միջագետքից։ Հավանաբար դա ամենահին մատյանն էր աշտարակաշինության մասին։

Ասում են ջրհեղեղից հետո Սենաար երկրում մարդիկ փորձում են երկնահաս մի աշտարակ կառուցել։ Ասված զայրանում է մարդկանց հանդգնության վրա, խառնում է լեզուները, մարդիկ իրար չեն հասկանում և ցրվում են աշխարհով մեկ։ Եվ կիսատ է մնում Սենաարի աշտարակը։ Մինչև այդ գրքի ընթերցումը Մովսեսը կարծում էր, թե աշտարակաշինությանը մասնակցել են հետագայում հայտնի դարձած յոթանասուներկու ազգերի, այդ թվում և՝ հայերի նախնիները։ Բայց ասորիներն հնախոսարանում ուրիշ բան է գրված։ Աշտարակաշինության ժամանակ հայերն ապրել են իրենց հողում և Սենաար չեն գնացել։ Նրանց ինչի՞ն էր պետք աշտարակը, Հայաստանում շատ են երկնահաս լեռները։

Դե արի ու պրպտիր հանիր, թե ինչն ինչից է։ Պատմությունը գրի առնված տեղեկությունների ամփոփագիր է։ Բայց չէ՞ որ գրի է առնվել գրի առնվելիքի մեկ հազարերորդը։ Այդ պատճառով էլ յուրաքանչյուր ազգի պատմության հազար ոտից ինն հայրուր ինն ունինը պիտի կաղի։ Շատ դժվար է գտնել սկիզբը։ Իսկ աշխարհն արարելու ժամանակ ասված որտե՞ղ կանգնեց, ոտը որտե՞ղ դեմ տվեց, եթե մինչ այդ ոչ մի բան չկար։

Մի անգամ Արծանիի ափին, նպատ լեռան մոտ, մի հայ իմաստուն հանդիպում է մի ասորի իմաստունի։ Հայը հարցնում է, ասորին՝ պատասխանում։

— Որտեղի՞ց։

— Սենաարից։

— Ե՞տ է հեռու այստեղից։

— Ձիով յոթ օրում կհասնես, նժույգով՝ երեք, ոտով՝ քսանմեկ օրում։

— Ի՞նչ են անում քո երկրի մարդիկ։

— Աշտարակ են կառուցում։

— Ի՞նչ աշտարակ։

— Այնպիսին, որ հասնի մինչև երկինք։

— Ինչո՞ւ են ուզում այդքան վեր բարձրանալ։

— Որպեսզի մոռնան ասածն և սրտաբաց զրույցի նստեն նրա հետ։ Եվ հետո՝ եթե նորից չրհեղեղ լինի, մարդիկ տապան չեն մտնի, և հույսները չեն դնի հայոց լեռների բարձրության վրա, այլ կելնեն աշտարակի վերին հարկերը և այնտեղից կդիտեն մեծ ալեկոծումները։

— Ուզում ես ասել, որ այդ աշտարակը ավելի բա՞րձր կլինի, քան Մասիսը։

— Այո։

— Քո՞ երկրի մարդիկ ե՞րբ կավարտեն մասիսաչափ այդ շինությունը։

— Երբ իմ ծոռը ծոռ ունենա։

Հարյուր տարի հետո հանդիպում են այս երկու իմաստունների ծոռների ծոռները։ Այս անգամ էլ հայը հարցնում է, ասորին՝ պատասխանում։

— Ի՞նչ եղավ Սենաարի աշտարակը։

— Փլվեց, ավելի ճիշտ՝ ասված փլեցրեց։

— Ինչո՞ւ։

— Ասված ասաց՝ մի աշտարակն էլ հերիք է մարդկանց։

— Ո՞րն է այդ աշտարակը։

— Հայոց Մասիսը։

Ասորերեն հնախոսաբանում զրույցին առասպելն էր հաջորդում, առասպելին՝ զրույցը։

Մովսեսը մտովի ծանրութեթև արեց դրանք, ջրհեղեղի մասին իր իմացած մյուս զրույցները, քամեց ու մզեց, և մի քանի դարերից մի ծեղ բան թողնելով իր պատմության մեջ, գրեց. «Այսքանը բավական կհամարենք այս հարցերի մասին։ Որովհետև եթե աշտարակաշինությունից սկսած մինչև ներկա ժամանակները պատահած բոլոր բաները ջանանք մեջ բերել մեր պատմության մեջ ի գիտություն քեզ, ապա ե՞րբ կհասնենք քո ցանկացած պատմական զրույցներին, մանավանդ որ մեր առաջիկա գործը երկար է, իսկ մահկանացուների ժամանակը կարճ է և անհայտ»։

* * *

— Մհուբ, դո՞ւ ես։

— Այո, Մովսես։ Ներիր, որ սրբազան հայր չեմ ասում, դու ինձ համար Մովսես ես, դուսան։ Ինչ լավ է, որ հիշեցիր ինձ։

— Դու շատ ես նման քեզ, Մհուբ։

— Չէ, Մովսես, ծերացել եմ, դարձել ձայնատ։ Մնացել է միայն իմ փանդիռի նվագը։

— Դու պատահաբա՞ր ընկար Բագավան։

— Ոչ, ես եկա, որ հանդիպեմ քեզ։ Մի տարի առաջ լսեցի, որ Եղնիկ Կողբացուն փոխարինել, եպիսկոպոս է դարձել Մովսեսը։ Անունդ եզակի չէ, այդ պատճառով էլ մտքովս չէր անցնի, որ եպիսկոպոս ես դարձել դու։ Այդ մասին ինձ հայտնեց կարինցի մի մարդ, Ջաջուռը, որի հետ դու որմնադրություն ես արել։

— Ջաջուռին հիշում եմ։

— Եպիսկոպոսական շուրջառդ տեսնելու համար չէ, որ ես Բագավան եմ եկել։ Մի քանի օր առաջ ես հանդիպեցի նրան։

— Ո՞ւմ։

— Կամարային։

— Ի՞նչ...

— Այո, Կամարային տեսա։ Դու գիտե՞ր, որ Որոտ իշխանը մեռել է։

— Ոչ։

— Իշխանն այլևս չկա։ Գնացի Բասեն և Դու մտա առանց վախի։ Խեղճացած տեսք ունի իշխանուհի Կամարան և այլևս չի նմանվում ծիրանագույն փետուրներով երաշտահավի։

— Ինչո՞ւ գնացիր Դու, ինչո՞ւ էիր ուզում հանդիպել նրան։

— Մտադիր էի ստուգել ինձ։ Այն ժամանակ ասացի, որ նա կմոռանա քեզ։

— Եվ ի՞նչ իմացար։

— Քո մասին ոչինչ չհարցրեց, անմռունչ ընդունեց քո եպիսկոպոս դառնալու լուրը։ Ինձ թվաց, թե Որոտը նրա հոգում թափուր տեղ չի թողել ուրիշի համար։

— Գիտես ինչ, Մհուբ, ինձ չի հետաքրքրում այն Կամարան, որին դու տեսել ես։ Իմ հիշողության մեջ ես նրան թողել եմ այն տարիքում, երբ նա սիրում էր ինձ։ Նա ամեն օր, ամեն պահ ինձ հետ է։ Հիմա էլ իր երազային կերպարանքով մասնակցում է մեր զրույցին։ Եթե նրան հեռացնեմ ինձնից՝ տակը ոչինչ չի մնա։ Կարևոր չէ, թե այժմ նա ինչպիսին է։ Ես իմ հոգում վերածնել եմ Կամարային, ներարկել նրան իմ երազանքի ավիշը, դարձրել ըղձալի։ Իմ սրտում նա թերի բան չունի, կատարյալ Մարիամ է։ Այնպես որ իմ երազ աղջիկը շատ քիչ է նման Կամարային։ Անփոփոխ եմ պահել միայն նրա դեղին շրջազգեստը և վարսերի հարդարանքը։ Երևի դա է իսկական սերը, եթե երևակայությունդ չխառնես՝ ոչ մի կնոջ չես կարող երկար սիրել։ Հավանաբար մի տղամարդը կնոջ համար հավիտենական միապաղաղություն է։ Իսկ միապաղաղությունը կարող են հանդուրժել տղամարդիկ, բայց ոչ կանայք։ Եթե աստծու ուժը պատեր՝ չէր թողնի, որ Եվան դավաճաներ Ադամին։ Բայց այրերը ջանում են ինչ-որ բան շտկել և գոնե մտովի դժվարասանձ կնոջը դարձնել հավատարմության նշանաբան։ Գուցե մի օր կինը հասնի տղամարդու երազանքին։

Մովսեսը լռեց։ Մհուբը տեսավ, թե նրա ձախ աչքից արտասրը ինչպես կաթեց ու կախվեց այտի փոսիկից։

Եվ գուսանը մի կողմ թեքեց խոսքի առը.

— Հայոց լեռներում գարունը մնում է մինչև աշուն։ Հիմա Այծպակունքի թավուտ լանջերին բանջարբուսուկ է։ Ես իմ աչքով տեսա մի եղնիկի ծնունդ։ Հենց այդ ժամանակ էլ հիշեցի

հնօրյա զրույցն այն մասին, թե իբր վիշապները եղնիկներից են ծնվում։ Հենց որ ձագն աշխարհ է գալիս՝ մայր եղնիկը մի կողմ է քաշվում և վախվորած դիտում, թե ինչ է ծնել ինքը՝ եղնիկ թե հրեշ։ Երբ համոզվում է, որ եղնիկ է՝ մոտենում է ու կերակրում, իսկ եթե ծնածը վիշապ է լինում, ապա աչքերը դարձնում է դեպի երկինք, որտեղից իսկույն հայտնվում են հրեշտակները և վիշապին երկինք բարձրացնում, այլապես նա կարող է աներևակայելի արագությամբ մեծանալ և կուլ տալ իր մորն էլ, աշխարհն էլ։

Իմ տեսած եղնիկն էլ ձագը ծնելուց հետո իսկապես մի կողմ քաշվեց և ձախ ոտքի կճղակով քորեց փորը։ Բայց դեռ աչքս չթարթած՝ նա անմիջապես մոտեցավ ու սկսեց փայփայել ձագուկին։ Այդ պահին ես հասկացա, որ մայր եղնիկը կմոտենար, եթե նույնիսկ իր ծնածը հրեշ լիներ սոսկալի երախով։

Այո՛, յուրաքանչյուրին հարազատ է իր ծնածը։ Եթե եղնիկը կարող է այդքան գորովագութ լինել իր ձագուկի հանդեպ, ապա մարդն ինչու պիտի զատափետի իր գունեղ երազանքը, չսիրի իր մտքի ու հոգու հորինածը։ Ողջերի համար զազաղ չեն սարքում, սա հայոց ամենահին առածն է։ Թզուկ մարդն էլ կարող է իր կճպետ հոգում տատնապատիկ անգամ ընդարձակել տիեզերքի սահմանները։ Մարդու մեջ ապրում են բոլոր երազային կերպարները։ Ասում են՝ երկար են ապրում նրանք, ովքեր իրենց հոգու աշտարակից ներքև չեն նետում երազանքի և ոչ մի փշուր։

Հետո մի պահ կանգ առավ ու ավելացրեց.

— Դե, ես գնացի։

— Ո՞ւր, Մհուր։

— Մարդկանց մեջ, Մովսես, մարդկանց մեջ։ Իրավ է, այս տաճարը լուսաողող զմբեթ ունի, բայց ես չեմ սիրում զմբեթավոր այն դահլիճները, որտեղ գուսանը չի կարող իր սիրո երգն ասել։

— Ինչո՞ւ ընդհատեցիր քո խոսքը, Մհուր։ Դու հրաշալի էիր խոսում։ Երևի ինքդ էլ չդիտես, որ կարող ես իմաստասիրության դասեր տալ իմաստասերներին։

— Ամեն մի գուսան կիսով չափ իմաստասեր է։ Իսկ իմ մտքերին շատ էլ կարևորություն մի տուր, գուցե ես ուրիշներին եմ կրկնում։ Ով կարող է հավատալ, որ ինձնից հազար տարի

առաջ այսպես չի խոսել մի ուրիշ գուսան։ Իմաստությունները թռչում են, դեգերում աշխարհի այս ու այն անկյունում։ Հավանաբար մենք կրկնում ենք, Մովսես, և մեզնից հետո ուրիշներն էլ մեզ պիտի կրկնեն։ Իզուր են կարծում, թե մարդու հետ մեռնում է նաև նրա հիշողությունը։ Ասում են թոռը պապին է քաջում։ Ի՞նչ գիտես, թե պապից մի պտղունց հիշողություն չի փոխանցվում թոռանը։ Այդ մի պտղունցը դատարկ բան չի լինի։ Դե, ողջ լեր, եպիսկոպոս։ Ես քեզ հետ զրուցելու կգամ տարին մի անգամ։ Իսկ եթե չերևամ՝ գիտցիր, որ կանգ եմ առել։ Գուսանի դին հողին են հանձնում օտարները։

* * *

Մովսեսը միշտ էլ դժգոհ է ինքն իրենից։ Մի նախադասություն է գրում, կանգ առնում ու սկսում նայել այս ու այն կողմից, քննել այս ու այն տեսանկյունից։ Հետո բառերը տեղաշարժում է, ինչ-որ բան կրճատում ու սկսում ծանրութեթև անել։ Գիրքն էլ գրավոր շենք է և սովորական կառույցից տարբերվում է նրանով, որ այստեղ պիտի շարահյուսության մեջ դրվող բոլոր բառերն էլ տաշած լինեն։ Դա նշանակում է, որ բառը պիտի դնես իր տեղում։ Բառերն էլ նման են մարդկանց։ Խառնափընթոր շարահյուսության մեջ զորապետն ընկնում է զորականի, զորականը՝ զորապետի տեղ։ Այդպիսի դեպքերում խոսքի իմաստային նետերը դեպի նպատակակետ են շարժվում ոչ թե սլանալով, այլ հարբածի պես օրորվելով։ Այդպիսի խոսքերից գլուխ չի հանի-նույնիսկ ամենասթափ դատողության տեր մարդը։ Բառի բախտը մարդու ձեռքին է։ Ճշգրիտ իմաստով օգտագործելու դեպքում բոլոր բառերն արքաներ են դառնում։

Եթե Մովսեսին մնա՝ նա անընդհատ կտաշի ու կհղկի իր բոլոր բառերն ու մտքերը, բայց հաճախ որևէ խոսք բարեկիրթ դարձնելու համար ափսոսում է փչացնել մագաղաթը։ Իրավ է, նա ամենևին էլ մագաղաթի պակաս չի զգում։ Ասպետ Բագրատունին վարձել է Դվինի արհեստավորաց տներից մեկը, որն զբաղված է միայն խաղախորդությամբ։ Ատատը Դվինից տարեկան երկու հարյուր ոչխարի կաշի է բերում Բագավան։ Մովսեսը երեք կաշվից երկուսը ծախսում է սեագրության համար։ Կիսով չափ կտրտված կաշիները նա դեն չի նետում, այլ հանձնում է կոշկակար Ճոճին։ Հաճախ Ատատը զրույցի է նստում

Ճոճի հետ, որն աշխարհի գործերը չափում է տրեխով ու կոշիկով։ Նա շուռումուռ է տալիս կաշիները ու ասում.

— Տրեխը պատրաստում են խամ մորթուց։ Եղել է ժամանակ, որ տրեխ են հագել նույնիսկ արքաները։ Հիմա էլ ասում են՝ երկիր կա, որտեղ միայն տրեխ են հագնում։

— Ճոճ, դու կցանկանայի՞ր, որ ամենքը կոշիկ հագնեին,— հարցնում է Ատատը, աչքերը խորամանկորեն խաղացնելով։

— Ո՛չ։

— Ինչո՞ւ։

— Որովհետև ոչ մի կոշիկ հագնող հոտ չի պահի, ոշխարները կսատկեն և կաշի չի լինի ոչ տրեխի, ոչ էլ կոշիկի համար։ Մարդիկ կմնան ոտաբոբիկ։

— Բայց բոլոր մարդիկ էլ կուզենան կոշիկ հագնել։

— Չէ, Ատատ։ Մարդ կա կոշիկն է սիրում, մարդ կա՝ տրեխը։ Շինականի ինչի՞ն է պետք կոշիկը։ Նա չի կարող կոշիկներով դաշտ ու ձորերում տրտինգ տալ այնպես, ինչպես տրեխ հագած ժամանակ։ Շինական կա, որ երազում է թագավոր դառնալ՝ պայմանով, որ իր տրեխը կոշիկով չփոխարինվի։ Եթե կոշիկն աշխարհում շատանա՝ կործանարար պատերազմ կլինի։

— Ի՞նչ ես ասում, Ճոճ, կոշիկն ի՞նչ կապ ունի պատերազմի հետ։

— Ունի, Ատատ, տրեխը խաղաղության նշան է, կոշիկը՝ պատերազմի։

Ատատը քմծիծաղ է տալիս։ Ճոճը ձևացնում է, թե չի նկատում այդ արհամարհանքը և ասում է.

— Դու գիտես, թե աշխարհում երբ է կարվել առաջին մույկը։

— Ոչ։

— Իսկ գիտես, որ առաջին պատերազմը եղել է այդ մի զույգ կոշկի համար։

— Ոչ։

— Դե հիմա լսիր,— ասում է կոշկակարը և պատմում։— Մի քաջ ու երիտասարդ արքա է լինում։ Նա որոշում է իր կնոջ համար մի այնպիսի ոտնաման սարքել, որ նման չլինի տրեխին։ Ձիու ընտիր կաշի է գտնում և սկսում խաղախորդել։ Հղկում է, հղկում, հետո սկսում ձևել ու կարել։ Երեք փաթ կաշի է դնում և

բարձրացնում ոտնամանի կրունկը, գեղազարդում կեռ կտուցը։ Այդպես էլ պատրաստվեց առաջին կոշիկն աշխարհում։ Ինչպես տեսնում ես՝ առաջին կոշկակարն արքա է եղել։ Հետևապես կոշկակարությունն արքայական արհեստ է։

— Ճոճ, դու չասացիր, թե կոշկի պատճառով ի՞նչ պատերազմ է եղել։

— Հա, ես չվերջացրի իմ պատմությունը,— շարունակեց Ճոճը։— Թագուհին հագնում է առաջին կոշիկը և սկսում կայտել կաքավիկի պես։ Երևի ոչ մի կին այնպիսի հրճվանք չի ապրել, ինչպես այդ կինը։ Բայց կանայք տղամարդկանցից տարբերվում են նրանով, որ երազում են ամենքին ցուցանել իրենց հագի գեղեցիկը։ Նա պահանջում է, որ ամուսինը խնջույք կազմակերպի և հրավիրի հարևան տերությունների արքաներին ու թագուհիներին։ Երիտասարդ արքան ի կատար է ածում կնոջ ցանկությունը։ Այդ խնջույքում կոշիկ հագած թագուհին իրեն զգում է ամենաերջանիկ կինն աշխարհում։ Հիմա ինքդ մտածիր, թե ինչպես կզգային տրեխ հագած մյուս թագուհիները։ Եվ մի մոռացիր, որ աշխարհում չկա ավելի կործանարար բան, քան կնոջ նախանձը։ Տուն վերադառնալով թագուհիներն սկսում են դրգռել իրենց ամուսիններին։ Տրեխ հագած թագուհիների ամուսինները կարճամիտ են լինում։ Իրենց կանանց համար կոշիկ կարել տալու փոխարեն նրանք որոշում են զավթել աշխարհում կարված առաջին կոշիկը։ Եվ սկսվում է մի մեծ կռիվ։ Տրեխավորները հաղթում են և իրենց ձեռքը գցում թագուհու կոշիկը։ Հետո սկսում են իրար հետ կռվել այդ մի զույգ կոշկի համար։

Ճոճը վերջացնում է իր պատմությունը և սկսում դասդասել Մովսեսի տված կաշիները։

— Սրանից լավ կոշկատակ կլինի,— ասում է Ճոճը,— սրանից՝ ներբան, սա երեսի, սա էլ գարշապարի կաշի է։

Ճոճը վարպետորեն է պատրաստում և երկարաճիտ կոշիկ, և երկարավիզ, և ճտկակոշիկ, և կիսակոշիկ, և մուճակ, և սովորական օդ[1]։ Նրա ձեռքի կարը հիացնում է ամենքին։

Ատատը Ճոճի մոտից հեռանում է խոհամույն։ Բնավ չէր մտածել, որ խաղախորդած կաշվի պատճառով կարող է աշխարհում պատերազմ լինել։

---

[1] Օդ — կոշիկ։ Հին հայերենում այս բառը հնչել է օդ, ոտ ձևով, որ նշանակել է ոտնաման։

***

Մովսեսի համար Հայոց պատմության թնջուկը Մար Աբաս Կատինայի մատյանն է։ Ոչ մի օտարազգի հայերի համար այնքան բարություն չի արել, որքան ասորի այս դպիր-պատմագիրը։ Հե՞յ դառն ու դշխեմ ճակատագիր։ Ինչպե՞ս պատահեց, որ պատմության ավազահողմից թավալգլոր եղավ հզոր Ասորեստանը։ Ինչո՞ւ Ասիան չլացեց այդ անգարձ կորստի համար։ Չէ՞ որ ասորիները որպես աղ համ են տվել Ասիայի բոլոր աղգերի մշակույթին։ Ինչո՞ւ մարեց քո աստղը, թուլրաթուխ գեղուհիների և իմաստուն այրերի հայրենիք Ասորաց աշխարհ։

Մովսեսը քիչ բան գիտեր Մար Աբաս Կատինայի մասին։ Ստիպված նորից հարցուփորձեց աբեղա Արձանին։

— Անունը Մար Աբաս է եղել,— ասաց Աբեղան,— գուցե Կատինա պատվանունով է կնքվել իմաստուն լինելու շնորհիվ։ Դե, ինքդ էլ գիտես, որ Կատինա ասորերեն նշանակում է իմաստուն, ուշիմ։

— Կարող էին Կատինա պատվանուն տալ նաև որևէ հայի։

— Իհարկե, սրբազան, բայց նրա ասորի լինելը մինչև հիմա ոչ ոք կասկածի տակ չի դրել։

— Դու որտեղի՞ց գիտես, որ Կատինան նրա պատվանունն է եղել,— հարցրեց Մովսեսը։

— Այդ մասին ինձ հայտնել է հրանելի Եզնիկ Կողբացին։

— Բայց պատվանուն կարող է լինել նաև մար բառը, որ ասորերեն նշանակում է տեր։

— Գուցե պատվանուն է նաև Աբասը, որ վանահայր է նշանակում,— ասաց Արձանը։

— Դժվարանում եմ այդ հարցին պատասխանել։ Հավանաբար մենք չգիտենք այդ մարդու իսկական անունը։ Ուրիշ ի՞նչ կասես Մար Աբասի մասին։

— Ասում են՝ թիկնեղ էր, բայց նրա ձախ թուշը երկու անգամ լայնշի է եղել աչից։

— Դա՞ էլ է Եզնիկ Կողբացին հայտնել քեզ։

— Ոչ, սրբազան։ Այդ մասին ես լսել եմ իմ պապից։

— Հետո՞։

— Ասում են նաև, որ դեռևս Աժդահակի ու Հայոց Տիգրանի ժամանակներում Աղձնիքում եղել է ասորական մի գյուղ Մարբակատինա անունով։ Վաղարշակ թագավորի ժամանակ էլ այդ

գյուղը կար։ Գուցե այդտեղ է ծնվել ասորի պատմագիրը և իր հայրենի գյուղի անունով կոչվել Մար Աբաս Կատինա։

— Հիմա Աղձնիքում այդպիսի գյուղ չկա։

— Այո, չկա։ Մարբակատինայի ասորիները չվել են այստեղ ու այնտեղ։

— Հետո՞։

— Ուրիշ բան չգիտեմ, սրբազան։ Ես հարցուփորձել եմ շատերին։ Ոչ ոք ոչինչ չգիտե։

Դե, ով պիտի հիշի Մար Աբաս Կատինային, մտածում էր Մովսեսը։ Չէ՞ որ նրա ժամանակներից համարյա յոթ հարյուր տարի է անցել։ Բայց այս մարդը մատենագրել և անգարձ կորստից փրկել է մեր կենսագրությունը, մեր տոհմածառը։

Աշխարհի հզորներից է եղել Պարթևաց արքա Արշակը։ Սա իր եղբորը՝ Վաղարշակին թագավորեցնում է Հայոց աշխարհի վրա։ Այո, ասպետ Սահակ, այս Վաղարշակին ու Մար Աբաս Կատինային ենք պարտական մեր պատմության սկզբի համար։

Եվ Մովսեսի գրիչն սկսեց ակոսել մագաղաթը. «Սա իր իշխանությունը լիովին կարգի բերելով և իր թագավորությունը հաստատելով՝ կամեցավ իմանալ, թե ովքե՞ր արդյոք և ինչպիսի՞ մարդիկ են տիրելիս եղել Հայոց աշխարհի վրա իրենից առաջ, արդյոք ինքը քաջե՞րի տեղն է գրավում, թե ապիկարների»։

Եվ Վաղարշակը որոնում ու գտնում է քաղդեական ու հունարեն գրության մեջ վարժ, ուշիմ մի ասորու, Մար Աբաս Կատինա անունով և ուղարկում իր եղբոր մոտ։

— Այս նամակը կհանձնես Պարթևաց արքա Արշակ Մեծին,— ասում է Վաղարշակը Մար Աբաս Կատինային,— նա քո առջև կբացի արքունական դիվանը և դու կմատենագրես այն, ինչ վերաբերում է Հայքին։

Մար Աբասը հասնում է Պարթևաց աշխարհի քաղաքամայր Պահլ։ Արշակ Մեծը Մար Աբաս Կատինային ասում է.

— Իմ մարդիկ քեզ կուղեկցեն Նինվեի մատենադարան, գրի առ, ինչ ուզում ես, ինչ սրտահաճո կլինի իմ արքա եղբորը։

Նինվեի անունը լսելով՝ Մար Աբասը մնաց շվար ու ապշահար։ Պարթևաց արքան նկատելով նրա թթու դեմքը, հարցրեց.

— Ինչո՞ւ զարմացար, դպիր, չէ՞ որ դրա համար ես եկել, Պահլ։

— Արեգակնափայլ արքա, դու ինձ ուղարկում ես Նինվե, իսկ աշխարհում հիմա այդպիսի քաղաք չկա, այն վաղուց է կործանվել,— ասաց Մար Աբասը։

— Իհարկե, դպիր, դու իրավացի ես, հիմա Նինվե քաղաք չկա, բայց Նինվեի մատենադարան-դիվանը փրկվել է կործանումից և տեղից տեղ անցնելով հանգրվանել այստեղ՝ Պահլում։ Այնպես որ պահպանվել է միայն Նինվե անունը, իսկ հնագրանը գտնվում է այստեղ՝ Պահլում, իմ պալատից երկու հարյուր քայլի վրա։ Դու այնտեղ կգտնես նաև Ալեքսանդր Մակեդոնացու հիշատակարան-էֆիմերիդները։ Հիմա կասես, թե Ալեքսանդր Մակեդոնացին լույս աշխարհ է եկել Նինվեի կործանումից մի քանի հարյուր տարի հետո։ Բանն այն է, դպիր, որ Նինվեի հնագրանում մենք պահում ենք հին ու նոր բոլոր մատյանները, նաև՝ մի քանի տարի առաջվա գրվածը։

Անսալով Արշակ Մեծին Մար Աբաս Կատինան աչքի անցկացրեց արքունական դիվանի բոլոր մատյաններն ու հիացական ճիչ արձակեց, երբ գտավ հունարեն մի հիշատակարան, որտեղ գրված էր այն, ինչ որոնում էր ինքը։

Ալեքսանդր Մակեդոնացին հպարտանում էր, որ բերանացի գիտեր Հոմերոսի «Իլիականն ու Ոդիսականը», բայց չէր վստահում իր հիշողությանը և շատ բան գրի էր առնում ու գրել տալիս ուրիշներին։

Մար Աբաս Կատինայի ձեռքն էր ընկել այն հիշատակարաններից մեկը, որը Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով քաղդեերենից թարգմանվել է հունարեն, և որը պարունակում է բուն հների պատմությունները։

Մովսեսը նորից է նստում գրակալի առջև ու շարունակում. «Մար Աբաս Կատինան այս մատյանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրերով՝ բերում է Վաղարշակ թագավորին։ Եվ բարեկազմ ու քաջ աղեղնավոր, արի Վաղարշակը, կորովախոսն ու հանճարեղը, ընդունելով այն՝ համարելով առաջինն իր դանձերի մեջ՝ հրամայում է մեծ զգուշությամբ պահել արքունիքում և մի մասը նրանից հրամայում է արձանի վրա դրոշմել։ Որից մենք հավաստի տեղեկանալով զրույցների կարգին՝ կկրկնենք այժմ, քո հարցասիրությունը գոհացնելով, հասցնելով մեր բնիկ նախարարությունները մինչև քաղդեացոց Սարդանապալը և դեռ ավելի մոտ։

Պատմությունն այսպես է սկսվում։

Աստվածներից առաջինները ահեղ էին և երևելի, և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բազմամարդության սկիզբ։ Սրանից առաջ եկավ հսկաների սերունդը, անհիթեթ, հաղթանդամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությամբ հղանալով ծնան աշտարակաշինության ամբարիշտ խորհուրդը, որը և ձեռնարկեցին իրագործելու։ Աստվածների ցասումից ինչ-որ ահագին և աստվածային հողմ փչելով կործանում է աշտարակը և մարդկանց յուրաքանչյուրին տալիս է մյուսներին անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ աղմուկ և շփոթություն է ընկնում։ Սրանից մեկն էր և Հապետոսթյան Հայկը, անվանի և քաջ նախարարը, լայնալիճ աղեղով և հզոր նետաձիգ»։

Մովսեսն ընդհատում է գրելն ու խորհում։ Հայկն իրո՞ք մասնակցել է Բաբելոնի աշտարակաշինությանը։ Ինչպես եղավ, որ աստծու զայրույթից միանգամից յոթանասուներկու լեզուներ առաջացան, որոնց թվում նաև՝ հայերենը։ Բայց ո՞վ կհավատա, որ հայերենը Բաբելոնում է ծնունդ առել։ Չէ, հայերենի հայրենիքը Հայոց աշխարհն է։ Հայերենը եկվոր չէ։ Աշխարհակործան ջրհեղեղից ու աշտարակաշինությունից առաջ էլ հայոց լեզուն հնչել է աշխարհում։ Իսկ Հա՞յկը։ Հավանաբար նա ոչ թե Բաբելոնից է Հայք եկել, այլ Հայքից է գնացել Բաբելոն։ Գնացել է, որովհետև կամ ինքն է հարկատու եղել Բաբելոնին, կամ իր հայրը։

Մար Աբաս Կատինայի բերած մատյանում Հայկի մասին գրված էր.

«Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ։ Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու։ Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սիրվում, տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ»։

Մար Աբաս Կատինան ասում է, թե Հայկը չհնազանդվեց Բելին և իր աղխով եկավ Արարատի երկիրը։ Եկա՞վ, թե՞ տուն վերադարձավ։ Հասավ Հարք և հիմնարկեց Հայկաշեն գյուղը։

Բելը իր որդիներից մեկին որպես պատգամավոր ուղարկում է Հայկի մոտ և պատվիրում նրան հայտնել հետևյալը.

— Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով խաղաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել։

Հայկը Բելի պատգամավորին ետ է դարձնում խստությամբ պատասխանելով։

Հետո Բելն իր զորքի գլուխն անցած հասնում է Հայաստան և ընկնում Հայկի ետևից։ Հայկը նրան ասում է.

— Ի՞նչ ես համառորեն հետապնդում ինձ։ Վերադարձիր քո Սենաարը, եթե չես ուզում ընկնել իմ նետից։ Չէ՞ որ դու քաջ գիտես, որ ես չեմ վրիպում։

Գոռոզ Բելը պատասխանում է.

— Իսկ ես մտադիր չեմ ոչ սպանել, ոչ էլ պատժել քեզ։ Ուզում եմ, որ դու խաղաղությամբ վերադառնաս ինձ մոտ և դառնաս իմ որսկան շունը։

Գոռ Հայկը խոսքի տակ չի մնում և բռնակալին ասում է.

— Շունն ինքդ ես, Բել և շուն են քո մերձավորները։ Ես գիտեմ, թե այսօր ինչպես կպարպեմ իմ կապարճը։

«Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հսկան, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, շտապով հավաքում է իր որդիներին և թոռներին, քաջ և աղեղնավոր մարդկանց, թվով շատ նվազ և ուրիշ մարդկանց, որ ձեռքի տակ ուներ, գնում հասնում է մի ծավակի ափ, որի ջրերն աղի են և մանր ձկներ են պարունակում։ Եվ իր զորքերին կանչելով՝ ասում է նրանց. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք»։

«Եվ ամբողջ առպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասնում են բարձրագույն լեռների միջև մի դաշտաձև տեղ։ Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը՝ Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում, մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում։ Հայկը ճանաչեց սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար ատրածություն կար նրա և ամբոխի մեջ։ Նա կրում էր երկաթե գլխանոց՝ նշաններ կրող վերջերով, թիկունքի և լանջի վրա պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկայրի սուրը. աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում վահան, նրա աջ և ձախ կողմում՝ ընտիր զորականներ։ Հայկը տեսնելով պինդ սպառազինված Տիտանյանին և նրա աջ և ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը, Կադմոսին՝ իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, որովհետև աղեղ և սուր գործածելու մեջ կորովի մարդիկ էին, ինքը կանգնեց առջևից և մյուս բազմությունը կանգնեցրեց իր ետևում, դասավորեց մոտավորապես եռանկյունի ձևով և հանդարտ առաջ շարժվեց։

Երբ երկու կողմի հսկաներն իրար մոտ հասան, երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին իրենց զրահներով և իրար վրա ահ ու սարսափ էին զցում իրենց հարձակումների ձևերով։ Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի հանդիպելով թավալվում, ընկնում էին գետին, և կռիվն անորոշ էր մնում, երկու կողմերն էլ անպարտելի մնալով։ Այս անսպասելի տարակուսական դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց, և հետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր. որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի։ Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում։ Այս կերպով ճոխացած Տիտանյանը կործանվում, ընկնում է գետին և շունչը փչում է։ Իսկ ամբոխն այս քաջության ահագին գործը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած կողմը։ Այսքանը բավական լինի այս մասին։

Բայց ճակատամարտի տեղը շենցնում՝ դարձնում է դաստակերտ և անունը դնում է Հայք, հաղթական պատերազմի պատճառով. սրանից զատ էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր։ Իսկ այն բլուրը, որտեղ Բելն ընկավ զորականների հետ՝ Հայկը կոչեց Գերեզմանք, որին այժմ ասում են Գերեզմանակ։

Բայց Բելի դիակը, ասում է, դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հարք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիների։ Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք»։

Ապա Մովսեսը մատենագրում է Հայկի տոհմաբանությունը, փառաբանում նրա որդիներին, թոռներին ու ծոռներին, նշում, թե ում անունով ինչ լեռ, գետ, դաշտ ու գավառ է կոչվել։ Արամանյակի անունով Արագած լեռն է կոչվել, Նրաստի անունով՝ Նրասխ գետը, բազմազավակ և շատակեր Շարայի անունով՝ Շիրակը։ Եվ առածն էլ ստեղծվել է այս Շարայի համար. «Դու, ասում են, Շարայի որկորն ունես, բայց մենք Շիրակի ամբարներ չունենք»։

Մովսեսը հայոց անվանադիրին վերաբերող պատմության համար գրում է հյութեղ ու կարճ վերջաբան. «Այս է Հայկը, հայ ազգի նախնին, որ Թորգոմի որդին էր, սա՝ Թիրասի, սա՝ Գամերի, սա՝ Հաբեթի, և այս են նրա ցեղերն ու սերունդները և նրանց բնակության աշխարհը»։

Նմանակները միաժամանակ են ծնվում, նմանները՝ հազար տարին մեկ։ Հայկից հետո շատ ժամանակներ անցան՝ մինչև լույս աշխարհ եկավ Արամը, որ քաջ ու անվանի էր ինչպես Հայկը։ Նա Հայոց երկրորդ անվանադիրն է, որովհետև իր գործերով այնպես փայլատակեց Ասիայում, որ օտարները Հայքը նրա անունով Արմենիա կոչեցին, իսկ հայերին՝ արմեններ։

***

Մովսեսն արթնացավ գիշերվա Մթացյալ ժամին։ Երազը կիսատ մնաց։ Փորձեց մտաբերել։ Թուխ դեմքով մի ըմբիշ ստիպում էր, որ Մովսեսը խմի գինով լեցուն գավաթը։

— Խմիր, դառնահամ չէ,— ասում էր թիկադեմը,— ես էլի կտամ, տեսնո՞ւմ ես այս կավե ծոփը, հարյուր գավ էլ խմես՝ սա կմնա լեցուն։ Աշխարհի ամենամեծ ծոփն է։ Այս հյութի շնորհիվ է, որ ես հաղթում եմ բոլոր ըմբշամարտիկներին։

— Չէ, չեմ ուզում, կհարբեմ,— ջանում է հրաժարվել Մովսեսը։

— Եթե չխմես, հրեշտակները կգան և քեզ կծեծեն մտրակով, վերջում էլ մարմինդ կնետեն ձուլարան և այնտեղ ոսկորներդ կայրվեն ճռթճռթալով։ Շտապիր, եթե ուզացնես՝ լորձանք

կդառնա, ժամանակին խմիր, որ զզվանք չզգաս, այդպես է այս գինին։

— Իսկ ինչո՞ւ ես ուզում, որ ես խմեմ։

— Սա անխելքության դեղթափ է, խմես թե չէ՝ խելքդ տեղը կգա։

— Բայց ես բնավ էլ չեմ բողոքել իմ խելքից։

— Իզուր, ասված է խելքի կարիք ունի, իսկ դու շատ ամբարտավան ես երևում։

Թիկադեմն այլևս չի համբերում և թանձր հեղուկը զգոնով խմեցնում է Մովսեսին։

Մովսեսն աչքը թարթում է թե չէ՝ չքանում են և ըմբիշը, և գինով լեցուն ծոփը, և մեծ գավաթը։ Տեսարանն աննկատելիորեն փոխվում է։ Այժմ նրա դիմաց նստել էր Ալեքսանդրիայի մուսեյոնի իր ուսուցիչը՝ Նոր Պլատոնը։

— Ողջո՞ւյն, Մովսես։

— Ողջո՞ւյն, բաբունապետ Նոր Պլատոն։

— Աշխարհում ո՞վ է մեծ զարմանք ապրում։

— Տգիտներից բացի բոլորը, և իմաստունները, և չնչին բան իմացողները։

— Իսկ ո՞վ է չափավորում իր զարմանքը։

— Նա, ով քննախույզ միտք ունի։

— Դու քննախույզ աչքով չես քննում Մար Աբաս Կատինայի մատենագրած մատյանը։

— Ինչո՞ւ, բաբունապետ։

— Մար Աբաս Կատինայից ու Ալեքսանդր Մակեդոնացուց շատ ու շատ առաջ մի հայ իմաստասեր նստել ու գրել է իր ազգի պատմությունը։ Հայերեն գրեր չլինելու պատճառով ստիպված է եղել գրել քաղդեերեն։ Այստեղ զարմանալու բան կա՞։

— Ոչ, բաբունապետ, չկա։

— Այս հայ պատմագրի ստեղծած հիշատակարանը Ալեքսանդր Մակեդոնացին թարգմանել է տալիս հունարեն։ Մինչ այդ մեկ ուրիշը այն քաղդեերենից թարգմանել էր ասորերեն։ Հետո այդ հիշատակարանը Մար Աբաս Կատինան մատենագրել է և բերել ու հանձնել է Վաղարշակ թագավորին։ Հիմա էլ այդ մատյանն ընկել է քո ձեռքը։ Դա գրվել է Հայաստանում, պահվել Հայոց արքունական դիվանում։ Ասորիներն ու հույները հոգ չէին տանի ուրիշ ազգերի քաջությունն ու արիական գործերը հիշատակելու մասին։ Չէ որ դու լավ գիտես, որ հզորներից շա-

տերը այրել են իրենցից առաջ եղած բոլոր գրքերը, ուրիշների գործերը փառաբանող հիշատակարանները, ցանկանալով ցույց տալ, թե իրենցից է սկսվում աշխարհակալությունը, քաղաքակրթությունը, ժամանակը, թե պիտի գրի առնել միայն այն, ինչ վերաբերում է իրենց։

— Հասկացա, բաբունապետ, մատյանը պանդխտությունից տուն է վերադարձել։ Հայ իմաստասերի գրածը հայերենից թարգմանվել է ուրիշ լեզուների, ես հիմա նա եմ թարգմանում, վերականգնում բնագիրը։

— Այո, Մովսես, դու հիմա նման ես իմ ամենիմաստ սանին։ Գիտցիր, դու միայն թափ ես տալիս այն փոշին, որ օտար ճամփաներին նստել է մատյանի վրա։

Տեսարանը նորից փոխվում է, նոր Պլատոնն անհետանում է և Մովսեսի առջև կանգնում է թիսպդեմ ըմբիշը։ Հենց այդ ժամանակ էլ նա արթնանում է։

Անկողնում շուռումուռ գալով Մովսեսը մի քանի անգամ վերապրեց իր երազը։ Փորձեց նորից քուն մտնել՝ չստացվեց։ Դրսից մեկ-մեկ լսվում էր ասպուճակի ծվծվոցը, որից Մովսեսը փորձում էր կռահել, թե մինչև լույսը բացվելը ինչքան ժամանակ է մնացել։ Ջարմանալի թռչուն է ասպուճակը։ Գիշերվա կեսից սկսում է ծվծվալ, հետո կամաց-կամաց, լույսը բացվելու հետ ծվծվոցը վերածում է փաղաքուշ երգի։ Այ քե՛զ, ասպուճակ, անհնչ է մնում, որպեսզի լուսաբացին մարդկանց սիրտը լցնի բնության զարթոնքի խնդությամբ։ Հիմա լուսակն ժամն է, ուրեմն Շաղվոտ, Կամավոտ, Բավական, Խորաթափյալ և Գիզակ ժամերին ինքն արթուն է եղել։ Ի՞նչ է կռիվ տալիս ինքն իր հետ։ Խոհեմ մարդը աղքատիմաց է դառնում տարին մի անգամ, իսկ աղքատամիտը խոհեմանում է տարին երկու անգամ։ Այսպես էին ասում իր հայրենի Տարոնում՝ հենց որ ուզում էին կշտամբել որևէ մեկին։ Երևի Մովսեսի երեսին այդ նույնն ասեր նոր Պլատոնը՝ եթե իմանար տարոնական այդ առածը։

Ուզում էր նորից մտաբերել երազը։ Սակայն հենց այդ ժամանակ իսկի դռնակը բախեցին։ Մովսեսը նկավ մահճակալից և մոտեցավ.

— Ա՜, դո՞ւ ես, Արձան,— ասաց նա և բացեց դռնակը։

— Ներիր, սրբազան հայր։

— Ի՞նչ է պատահել։

— Տաճարի բակում քեզ սպասում է վաճառական Քաջաջը։

— Ո՞վ է։

— Ագնվաշուք այր է, Դվինից է եկել, մի քանի օր է, ինչ վրան է զարկել Բախատատուրի մոտ։

— Բայց այսքան վաղ ի՞նչ է ուզում ինձնից։

— Քեզ հրավիրում է խնջույքի։

— Ա՜, ահա թե ի՞նչ, չէ որ դու գիտես, որ ես փախչում եմ բոլոր խնջույքներից։

— Իմ պատասխանը ոչ կգոհացներ, ոչ էլ դուր կգար նրան։

— Չէ, Արձան, մի հարմար պատասխան գտիր և իմ անունից հայտնիր նրան։

Աբեղայի գնալուց հետո Մովսեսը հագնվեց և նստեց գրակալի առջև։ Վայելքն իր համար չէ, պետք է գրել։ Ուշ սկսեց, չգիտես էլ, թե ինչքան պիտի ապրես, իսկ կիսատ թողնել չի կարելի։

— Այո, ասպետդ Սահակ,— բարձրաձայն ասաց Մովսեսը,— ես ավարտին կհասցնեմ իմ պատմությունը, ես կկատարեմ քեզ տված խոստումը։

Եվ որպես իր բանավոր խոսքի շարունակություն գրի առավ. «Եվ որովհետև մեզ հաճելի թվաց քո հրամանով մեր հանձն առած նեղությունն ավելի մեծ բավականություն համարել, քան ուրիշներից առաջարկված ուրախություններն ու կերուխումը, ուստի համաձայնեցինք կարճառոտ մեջ բերել զրույցները Հայկյան Արամի վարած պատերազմների մասին»։

«Բայց հրաման տալ բնակչաց աշխարհին՝ ուսանել վիսսա և ղլեղուս հայկական — բայց այդ աշխարհի բնակիչներին հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն»։

Մովսեսի կարծիքով հայոց ազատասիրությունն սկսվում է Հայկից, իսկ հայրենասիրությունը՝ Արամի որդի Արա Գեղեցիկից. «Արան Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին, Նինոսից նույնպիսի շնորհի արժանանալով՝ ինչպես և իր հայր Արամը։ Բայց այն վավաշուռ և անառակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել։ Իսկ Նինոսի վախճանվելուց կամ կրեատ փախչելուց հետո, ինչպես համոզված եմ, Շամիրամն իր ախտը համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով, և շատ ազաչանքներով ու պարգևների խոստու-

մով խնդրում է գալ նինվե՝ իր մոտ, և կամ իրեն կին առնել և բոլորի վրա թագավորել, կամ նրա ցանկության կամքը կատարել ու մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ։

Երբ պատգամավորները շատ անգամ երթևեկություն կատարեցին և Արան չհամաձայնեց՝ ապա Շամիրամը սաստիկ շարանալով, պատգամավորությունը դադարելուց հետո առնում է իր զորքի բազմությունը և շտապում է գնալ հասնել Հայոց երկիրը՝ Արայի վրա. բայց որքան դեմքից կարելի է գուշակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանել կամ հալածել, որքան նվաճել կամ իր ձեռքը գցել, որպեսզի իր ցանկության կամքը կատարի. որովհետև մոլեգին ցանկությունից՝ նա տուփանքով սիրահարվել էր Արայի մասին եղած պատմություններին՝ որպես թե նրան տեսնելիս լիներ։ Փութով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվեց Այրարատ։ Ճակատը պատրաստելիս նա իր զորապետներին պատվեր է տալիս, եթե դնպքը բերի, ջանալ կենդանի պահել Արային։ Կռվի ժամանակ Արայի զորքը շարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից։ Հաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ դիակների մեջ փընտրելու իր ցանկալի տարփածուին։ Արային գտնում են մեռած քաջամարտիկների մեջ։ Հրամայում է նրան տանել դնել ապարանքի վերնատունը։

Երբ հայոց զորքը պատրաստվում էր նորից պատերազմելու Շամիրամ տիկնոջ հետ, Արայի վրեժն առնելու համար, Շամիրամն ասում է. «Ես իմ աստվածներին հրամայեցի նրա վերքերը լիզել և նա կկենդանանա»։ Միևնույն ժամանակ նա հույս ուներ կախարդական դյութությամբ Արային կենդանացնել, տրոփական ցանկությունից ցնորված։ Բայց երբ դիակն սկսեց նեխել, հրամայեց գցել նրան մի մեծ վիհի մեջ ու ծածկել. իսկ իր սիրականներից մեկին զարդարելով ու ծածուկ պահելով՝ նրա մասին այսպիսի լուր է տարածում. «Աստվածներն Արային լիզելով ու կենդանացնելով՝ մեր փափագն ու ցանկությունը կատարեցին. ուստի այսուհետև նրանք ավելի ևս արժանի են մեզանից պաշտվելու և փառավորվելու, իբրև մեզ ուրախացնողներ և մեր կամքը կատարողներ»։ Նաև մի նոր արձան է կանգնեցնում աստվածների անունով և մեծամեծ զոհերով պատվում է նրան, ցույց տալով, իբր թե աստվածների այս զորությունը կենդանացրեց Արային։ Այսպիսի լուրեր տարածելով Հայոց աշ-

խարհում և բոլորին համոզելով՝ հուզմունքը խաղաղեցնում է»։

Հետո Մովսեսը դրեց, թե այնուհետև ինչ գործեր կատարեց Շամիրամը, ինչպես իր համար հովոց ընտրեց Հայաստանում, և ինչպես սպանվեց իր Զամեսես որդու ձեռքով, որը հավաստում են նաև Գողթան գուսանները։ Շամիրամը սպանվել է աղի ծովակի ափին. «Մեր աշխարհի առասպելներն էլ արդարացնում են բազմահմուտ ասորի Մար Աբաս Կատինային, թե այստեղ է պատահել Շամիրամի մահը, նրա հետիոտն փախչելը, ծարավելը, ջրի պապակելը, ջուր խմելը, այլն՝ սուսերավորների մոտենալիս հուսալքները ծովը նետելը և նրա ասած խոսքը— «Ալլունք Շամիրամա ի ծով»։

* * *

Մար Աբաս Կատինայի մեջ ամեն զրույց չէ, որ խելքին մոտիկ ծայր կամ ավարտ ունի։ Պատմագիրը գրում է, թե այնուհետև Արա Գեղեցիկի կին Նվարդը Հայքում հաստատեց արգո օրը։ Եվ Մովսեսն ստիպված է կանգ առնել։ Արեղա Արձանն ասում էր, թե այդ մասին կարող է իմանալ միայն հարյուրքսանամյա գուշակ Գամերը, որն ապրում էր Բարձր Հայքի Մանանաղի գավառի Բաղմաղբյուր գյուղում։ Գուշակը Բագավան չի գա, այդքան տարի ապրել է աշխարհում, բայց ոչ մի անգամ հայրենի գյուղից ոտը դուրս չի դրել։ Չէ, ուրիշ ելք չկա, ինքը՝ Մովսեսը պիտի գնա Մանանաղի։ Բագրևանդից կանցնի Բասեն, այնտեղից Կարին, ապա՝ Բաղմաղբյուր։ Ափսոս, որ Բասենում մեծ պոլոտան անցնում է Դու գյուղի կողքով։ Որոտ իշխանի ամրոց-ապարանքը վերստին տեսնելը ամենևին հաճելի չի լինի Մովսեսի համար։

Մանանաղի գնալու օրը բացվեց արեգական առատ լույսի շողապարով։ Ամռան այդ առավոտը Մովսեսն արթնացավ երիտասարդական օրերի թեթևությամբ։ Լուսավորչի տաճարի բակում կառքն սպասում էր նրան։ Կառապանը, որ թավ մորուքով միջահասակ մի մարդ էր, քթի տակ աղոթք էր մրմնջում։ Կառքի կողքին ասպազեն Ատատն էր։ Մովսեսը տեղի էր տվել ասպետ Սահակ Բագրատունու կապարճակրի թախանձանքին և թույլատրել, որ նա ուղեկցի իրեն։

Տաճարի դռան բիդխից կախված էր ծաղկահյուս մի փարթամ դրասանգ։ Մովսեսը գիտեր, որ դա Ատատի ձեռքի գործն է։ Ասպետի կապարճակիրը սիրում է դրասանգ կախել տաճարի

բիդխից։ Բուրումնավետ այդ ծաղիկները հավանաբար նա քաղել է Արածանիի ափերից։ Բայց եպիսկոպոսը չգիտեր, որ Ատատը այսօր առավոտյան երկու դրասանգ է սարքել, մեկը տաճարի բիդխից կախելու, մյուսը՝ Թեժի համար։ Իրավ է, դեղանի Թեժը հիմա Բագավանում չէ, բայց դա ամենևին չի խանգարում, որ Ատատը նրա համար մի ծաղկեփունջ հյուսի և դնի Բախտատուրի վրա։ Ով տեսնի-չտեսնի՝ ասված հո կտեսնի, որ Ատատը ծաղիկների բույրն ու իր սրտի սերն է նվիրում Թեժին։ Աշխարհում ոչ ոք չի կարող այդքան գեղեցիկ հյուսակ անել։ Թվում է, թե դա ձեռնահյուս չէ, թե ասված ինքն է ձև ու գույն տվել այդ դրասանգին։ Աբեղա Արձանը դերձակի մի մկրատ էր գտել և բազմաշերտ թաղիքից կառքի վրա նստատեղ էր պատրաստում եպիսկոպոսի համար։ Քիչ հետո աբեղան ուտելիքներով լեցուն զամբյուղը ամրացրեց կառքի ետնամասում։ Կառապանը եռանդուն շարժումներով պնդացրեց կառքի անիվների սռնակները և օգնեց, որ Մովսեսը կառք բարձրանա։ Ապա մըտրակի կոթով հարվածեց կառքին լծված ձիու պարանոցից կախված պղնձե զանգակին։ Ձին տեղից պոկվեց ընդոստ շարժումով։ Շքախումբը մտավ թանձրաթուփ ծառուղին, որ ավանի Բուն փողոցն էր։ Ատատը հետևում էր կառքին և չէր թողնում, որ ընդվզի և թունդ առնի իր աստղաճակատ կայտառ նժույգը։ Ավանի վերջում թևատարած մի ծառ կամար էր կապել փողոցի վրա։

Ավանից դուրս եկան թե չէ՝ օդում մի ճուռակ երևաց, կռընչաց, օդապարիկ ճախրանքով վեր սլացավ ու անհետացավ մոսմոռ երկնքում։

— Ճուռակի կռնչոցը սուրհանդակ երևալու նշան է,— ասաց Արձանը։

Աբեղան հազիվ էր իր խոսքն ավարտել, երբ ճանապարհի վրա մի հեծյալ երևաց։

— Ես չգիտեի, որ դու մարգարե ես, Արձան,— ասաց Մովսեսը և գլխով նշան արեց Ատատին։

Ատատը կարծես այդ հրամանին էր սպասում։ Նա չափ դցեց իր նժույգը և փակեց դիմացից եկող հեծյալի ճամփան։ Նժույգները վրնջյուն հանեցին դեմ-դիմաց կանգնելով։

— Եթե գուժկան ես՝ ետ դարձիր,— ազդու ու սպառնագին ասաց Ատատը։

— Ես բարի լուր եմ բերել եպիսկոպոս Մովսեսին։ Ինձ

առաքել է հայրապետ Հովհանը,— ասաց անծանոթ հեծյալը։

— Մոտ արի,— լսելով նրա խոսքերը, ասաց Մովսեսը։

Հեծյալը մոտեցավ կառքին, իջավ նժույգից և, խոր գլուխ տալով եպիսկոպոսին, ասաց.

— Ողջույն, սրբազան հայր, նորընտիր հայրապետ Հովհանը պատվիրեց ինձ հայտնել քեզ հետևյալը. «Զատիավորենք մեր խնդությունը և հուսանք, որ հեռու չէ այն օրը, երբ աստված իր հովանու տակ կառնի մեր տառապյալ աշխարհը»։

— Եղիցի՜,— արձագանքեց Մովսեսը։

Անծանոթը նորից գլուխ տվեց եպիսկոպոսին և թռավ իր նժույգին, որը ծառս եկավ տեղում, ապա ոստնեց ու ետ դարձավ իր եկած ճանապարհով։

Կառքը շարժվեց։ Հաճելի մտքերը պաշարեցին Մովսեսի հոգին։ Հովհանը դարձել է կաթողիկոս։ Մովսեսի համար աշխարհում ինչը կարող էր ավելի սրտապարար լինել, քան այդ լուրը։ Տեսնես ինչպես է եղել դա՝ Պերոզի կամքո՞վ։ Մի՞թե Պարսից արքան այդքան վստահում է Հովհանին։ Իսկ ինչո՞վ է տարբերվում Հովհանը Գյուտից։ Չէ որ Հովհանը միայն Գյուտի եղբորորդին չէ։ Նրանք նման են ամեն ինչով՝ հոգով, մտածողությամբ, երազանքով։ Ապրեք, սպասեք Սահակ Բագրատունի և զավակդ Հմայակի՝ Վահան Մամիկոնյան։ Հովհանը գիտե, թե ազատության հուրը ինչպես պիտի բորբոքի բոլոր հայերի սրտում։ Չէ, սա իսկական մեծ հաղթություն է։ Իզուր են ասում, թե հայկական հողը դժվարահաճ հանգրվան է աստծո համար։ Երևի լինում են պահեր, երբ աստված երեխայի պես դյուրաբեկ է դառնում։ Թե չէ՝ նա իր սուրբ երեսն այսքան չէր մոտեցնի Մասիսի ճերմակ ճակատին։ Դե, իհարկե, Հովհանն իրավացի է, պիտի չափավորել խնդությունը։ Ալեքսանդրիայի մուսեյոնից սկսած դա եղել է Հովհանի նշանաբանը։ Պետք չէ ծնծղա զարկել։ Շուրջդ ամեն տեսակ թունավոր մատնիչներ ու թուլասիրտ զրպարտիչներ են վիտում։

Պախուրցը ձգելով և նժույգի թափը մեղմելով կառքին մոտեցավ Ատատը և եպիսկոպոսին մեկնեց նարդոսի մի փունջ։

— Այս տղան կրա՜կ է, ինչպե՞ս է հասցնում և մեզ հետ շարժվել, և ծաղիկ փնջել,— ասաց Մովսեսը դիմելով Արձանին։

— Սրբազան հայր, սիրուց մարդիկ խենթանում են, հերոսանում, աղնվանում,— արձագանքեց աբեղան և գլուխը բարձ-

բացնելով աջ ու ձախ նայեց ու շարունակեց,— հիմա էլ ետ սուրաց։

Մի պահ լռեցին և սկսեցին ունկնդրել թիփուների վրա ոստոստող թռչունների ճռվողյունը։

— Շա՞ն բախտ ունի Գադիշո խորխոռունին, ճրագով էլ ման գար՝ այսպիսի փեսացու չէր գտնի,— նորից խոսել սկսեց Արձանը։

Սակայն երազամուն Մովսեսը չլսեց նրա խոսքերը։

Կեսօրին նրանց դիմաց կանգ առավ մի կառք։

— Իշխանուհի Կամարայի կառքն է,— եպիսկոպոսին զեկուցեց Ատաղը։

Թվաց, թե այդ անսպասելի հանդիպումից Մովսեսը կայծակնահար եղավ։

Երբ բժժոցն անցավ՝ Մովսեսը տեսավ կառքի մոտ կանգնած բարձրահասակ, գունատ մի կնոջ։ Նրա հյուսկեն մազերը ծածկում էր ծակոտկեն, մետաքսակար ոսկերիզ մի ապարոշ։ Շրջազգեստի վրայից նա հագել էր ասմազուն[1] գույնի մի թեթև թիկնոց։

Մովսեսը չճանաչեց։ Կինը բոլորովին նման չէր Կամարային։

— Ներիր ինձ, սրբազան հայր, մի՞թե դու Մովսեսն ես,— նրբաձայն ասաց Կամարան։

— Այո, ես Մովսեսն եմ,— մի տեսակ անտարբեր արձագանքեց եպիսկոպոսը։

— Դու չե՞ս ճանաչում ինձ։

— Ոչ, չեմ կարողանում մտաբերել։

— Ես նման չե՞մ Սորսորի դուստր Կամարային։

— Ոչ, տիկին, դու նման չես Կամարային։

— Դու էլ այնքան նման չես Մովսեսին։ Վերջին անգամ ես քեզ տեսել եմ Պարտավ գնալու ճանապարհին, Հաթերք գյուղի մոտ։ Այն ժամանակ դու Մովսեսն էիր ոտից գլուխ։ Հիմա եպիսկոպոսական շուրջառը եղծել է քո արտաքինը, համարյա անկարելի է ճանաչել քեզ։ Ինչ արած, սրբազան հայր, խիղճդ ընդ քեզ, բարով անցնես բոլոր ճամփաներդ,— ասաց Կամարան ու փորձեց ետ դառնալ և շարժվել դեպի իր կառքը։

— Սպասի՛ր,— սաստող ձայնով ասաց Մովսեսը և, նկնելով տեղից, կանգնեց կառքի մեջ։

[1] Ասմազուն — կապտավուն, երկնագույն

Կինը կանգ առավ և դեմքով նորից շրջվեց Մովսեսի կողմը։ Մովսեսը նկատեց, որ նա արտասվում է ու մտաբերեց մի առած. «Կինը երեք տեսակ արտասուք ունի՝ ցավի, ուրախության և չարության»։ Դա չարության լաց էր, որ Կամարան հաղիվ էր զսպում։ Ասված իմ, մի՞թե մարդու մեջ երկու մարդ է լինում, մտածում էր Մովսեսը։

Սթափ մի խոհ խուժեց Մովսեսի ուղեղը. «Ի՞նչ պատահեց քեզ, որդիդ Ստեփ, մոռացիր հուշ ու վրեժխնդրություն, քո առջև կին է կանգնած, խնդրող արարած»։ Մովսեսը հավաքեց իրեն և ասաց.

— Ավելի լավ է՝ ասես այն, ինչի համար այսքան ճանապարհ ես անցել ու հասել այստեղ։

Կամարան չսպասեց, որ Մովսեսը երկրորդեր ու պնդեր իր ասածը։ Նա մի քայլ էլ մոտեցավ կառքին և ասաց.

— Տղաներիցս կրտսերը, որի անունը Եղբ է, և որը հաղիվ տասնյոթ տարեկան է, ձախորդության մեջ է ընկել։ Մի ամիս առաջ մի քանի տղաների հետ դաշտում արածող ձիերի երամակը քշել է դեպի Մկնատինճ և լցրել գյուղի եկեղեցին։ Հենց այդ ժամանակ Մկնատինճում հայտնվում է ոսկեհատ Վահան Մամիկոնյանը։ Նրա հրամանով ասպարազնն զորականները բռնում են Եղրին և տանում Դվին։ Ասում են՝ տղաս պղծել է մեր հավատքը, մեր եկեղեցին։ Ախր իմ Եղբը պատանյակ է, սխալվել է։ Նա ոչ մի դիտավորություն չի ունեցել վարկաբեկելու մեր կրոնն ու եկեղեցին։ Ոսկեհատի մարդիկ տարել են նաև եկեղեցու հատակին կպած գշկորը՝ հավանաբար հաստատելու համար, որ իմ տղան մեղավոր է, որ ձիերն, իրոք, եկեղեցում երկար ժամանակ են մնացել։ Հիմա հայրապետը կարող է Եղրին մահապարտ հայտարարել։ Տղաս պաշտպան չունի, նրան կարող են քարարկել ու տանջահար անել։ Այս մասին մտածելն անգամ սարսափելի է։ Ամուսինս հակառակորդներ ուներ։ Այժմ էլ շատերն են աչք տնկել նրա կալվածքին։ Գուցե նրանք մտադրվել են նախ մեջտեղից վերացնել իմ տղաներին և սկսել են փոքրից։ Ես գիտեմ, որ դու կարող ես օգնել ինձ։ Դրա համար էլ քեզ մոտ էի գալիս։ Մի թողնիր, որ ես որդեկորույս մայր դառնամ։ Այս տուփի մեջ հարյուր գոհար կա, նվիրիր կաթողիկոսին և փրկիր իմ որդուն,— այս ասելով Կամարան ծառայի ձեռքից վերցրեց գունազարդ կափարիչով մի փոքրիկ տուփ և մեկնեց Մովսեսին։

— Նա տար քո տուփը, իսկ ես կօգնեմ, որ որդուդ ազատ արձակեն,— ասաց Մովսեսը։

— Ինչպե՞ս։

— Վերցրու այս մատանին և մեկնիր Դվին, հանձնիր կաթողիկոս Հովհաննին և ասա նրան հետևյալը. «Մովսեսը Նոր Պլատոնի անունից խնդրում է, որ դու ազատ արձակես Եզր պատանուն»։

— Եվ նա կհավատա՞ ինձ։

— Իհարկե։

— Իսկ եթե չազատի։

— Կասկածամտությունն ավելորդ է, նա անպայման կազատի քո որդուն,— իր խոսքն ավարտեց Մովսեսը։

Իշխանուհին վերադարձավ իր կառքը։ Մովսեսը ճանապարհը շարունակեց առանց Կամարային հրաժեշտ տալու։

— Ինչքան մարդիկ կան աշխարհում, որոնք կարծես թե միայն իրենց համար են ծնվել,— ասաց Մովսեսը։

Եպիսկոպոսի դիմաց նստած Արձանը շարձագանքեց։ Նա հասկանում էր, որ Մովսեսն ինքն իր հետ է խոսում։ Այդպիսի դեպքերում մարդ չպետք է քիթը խոթի ուրիշների գործերի մեջ։

Ցերեկվա Արագոտ ժամին կառապանը ձգեց երասանակ-գանգաղավանդը և կառքը կանգ առավ կանաչապատ մի գյուղի առջև։

— Սա Ճիշն է,— ասաց Աբեղան և ավելացրեց,— հարմար է, որ մենք դադար առնենք և գիշերենք այստեղ։

Մովսեսը համաձայնության նշան տվեց։ Նրան հիմա չէին հետաքրքրում ոչ զարմանալի անունով այս գյուղը, ոչ գիշերելը, ոչ էլ աբեղան։ Մտքում կռիվ է տալիս ինքն իր դեմ։ Դեն է գցել իր տարիքի երկրորդ և երրորդ հարկերը, ալեհեր մազերը, եպիսկոպոսի պաշտոնը։ Դարձել է քսաներեք կամ քսանչորս տարեկան։ Կամարային պիտի մոռանար այդ հասակում։ Հավանաբար ոչ մի կին այնքան ուժ չունի մինչև իր կյանքի վերջը մեկին նվիրվելու համար։ Բոլոր կանանց սրտերն էլ ետնախորշեր ունեն, որտեղ թաքցնում են երկրորդին կամ երրորդին։ Հարմար պահին նրանք դուրս են գալիս, քեզ դեն նետում և իրենցով լցնում կնոջ սրտի բոլոր ծակուծուկերը։ Այսօրվա հանդիպումն էլ հավաստեց, որ Մովսեսը կամ վռնդվել է Կամարայի սրտից, կամ մեկի ոտի տակ մնացել այնտեղ։ Իզուր չեն ասում՝ արջը խաղող գտավ, տանձը մոռացավ։ Որոտ իշխանի

անհուն գանձերին տիրացողը ինչու պիտի հիշեր ուրիշին։ Մովսեսը հիմա պիտի միայն ինքն իրեն խղճա։ Աշխարհում ուրիշի տեղ է ղբաղեցնում նա, ով ապրում է սին երազանքով։

Ակնհայտաբար ինքն արդար կվարվեր՝ եթե չօգներ Կամարային։ Միևնույն է այդ թուլամիտ տղան մի օր կվատնի հոր հարստությունը և կդառնա դատարկապորտ։

Եվ հետո՝ ոսկի ու գոհար ունեցողը նման է կարմրաժեռ զեռունին, որը ջրի մեջ լողում է թևք, մի կողմի վրա և ջանում է մտնել ջուր խմողի բերանը։ Կամարան փողի ուժով շատ բանի կհասնի։

Մի շինականի բակ մտան։ Տանտերը, որ ոչխարները խուզել և պատի տակ բրդի դեզ էր սարքել, սրբազանին դիմավորեց արորի կորնթարդը ձեռքին։ Դրանով նա ուզում էր ասել, որ սա հերկվորի տուն է։ Չգիտես որտեղից մի թիկնաթոռ գտան, որի վրա հրից հոգնած տեսքով Մովսեսը բազմեց անփութորեն։ Գյուղացու կինը մի կողմ դրեց ոստայնանկի[1] աղբը[2] և շոքելով եպիսկոպոսի առջև համբուրեց նրա շուրջառի տուտը։

— Նախ թան կտանք, հետո տապակած դմակ, ապա պանիր ու թարմ լավաշ, վերջում էլ կբացեմ գուբը և յոթ տարվա գինեկարասից ձեզ կմատուցեմ շողշողուն գինի,— ասաց տանտերը, ուրախանալով, որ իր շեմին եպիսկոպոս է ոտ դրել։

Շուտով բակը լցվեց բազմաթիվ շինականներով։ Եկել էին եպիսկոպոս տեսնելու։ Մովսեսն ստիպված էր զրույցի բռնվել շինականների հետ, որոնք ամեն տեսակ հարցեր էին տալիս նրան։

Բակում թևածող զվարթությունը մտավ նաև Մովսեսի հոգին։ Նրան թվաց, թե միանգամից աշխուժացավ և երբ տեսավ գինով լեցուն սափորը, աչքով արեց, որ գինի տան իրեն։ Փայտե առաստակը, որ շատրվանաձև ծորակներով գինու գավաթ էր, Մովսեսը շուռումուռ տվեց ձեռքում և սկսեց խմել ագահորեն։

Գիշերը Մովսեսը քնեց խաղաղ, խաղաղ։ Առավոտյան ծանոթ զեփյուռն այնպես շոյեց նրա դեմքը, որ նրան թվաց, թե գտնվում է Հայրենի Խորոնք գյուղում։ Դուրս եկավ ու սկսեց զբոսնել ծառերի տակ։ Բզզոց լսեց և կանգ առավ ու հայացքը

---

[1] Ոստայնանկ — ջուլհակ։

[2] Աղբ — գործվածքի կտավի հիմնածոպերը՝ թելերը։

գարձրեց բակի մի անկյունում դրված մեղվի փեթակին։ Նկատեց, որ մայր մեղուն առաջինը դուրս եկավ փեթակի ակից։ Հետո երևացին մյուս մեղուները։ Կյանքն էլ այսպես է, մտածեց նա, առանց առաջնորդի ամբոխը կարող է մրափել օրերով։ Պետք է մեկը բզզա կամ բոթի, որ տեղիցդ ելնես։

— Դու մի այնպիսի երախտիք արեցիր ինձ, որ իմ թոռ ու ծոռներն էլ չեն մոռանա։ Քո գալստյամբ օրհնվեց այս տունը,— ասաց շինականը իր հյուրին ուղեկցելիս։

Ճամփա ընկան։ Կառքից բավական տեղ առաջ ընկած իր նժույգն էր խաղացնում Ատատը։

Կեսօրին կանգ առան ծործորարդ մի կանաչուտում։ Ոչխարի հոտը փակել էր նրանց ճանապարհը։ Հովիվները շրջապատեցին կառքը և խնդրեցին, որ եպիսկոպոսը դառնա իրենց հյուրը։ Մովսեսը չառարկեց։ Շուրջը զգլխիչ զով էր, հաճելի կանաչ, կակաչներ, կակաչներ, կակաչներ։ Մովսեսը, Արձանն ու Ատատը փռվեցին կանաչների վրա և սկսեցին դադար առնել։ Քիչ հետո հովիվները հարցատարափի տակ առան Մովսեսին։

— Իրա՞վ է, որ ծիածանի տակով անցնող տղան աղջիկ է դառնում, աղջիկը՝ տղա։

— Մինչև հիմա ոչ ոքի չի հաջողվել անցնել ծիածանի տակով,— պատասխանում է Մովսեսը։

— Սրբազան հայր, ինչո՞ւ ծիածանը յոթ գույն ունի և ոչ թե վեց կամ ութ։

— Եթե վեց կամ ութ ունենար՝ պիտի հարցներիր, թե ինչու յոթ գույն չունի։

— Սրբազան հայր, այնպիսի երկիր կա՞, որտեղ ձյուն չինի։

— Այո, աշխարհի կեսը ձյուն չի տեսնում։

Այդ միջոցին հովիվներն այնպիսի արագությամբ խորոված արեցին, որ զարմանք պատճառեց Մովսեսին։ Մի քանի շամփուրներ բեռնավորվել էին ամիճի և քաղի թարմ մսով։ Օդը լցվել էր խորոված ի գրգռիչ հոտով։ Հետո էլ մեջտեղ բերեցին ոչխարի խաշած մսով լիքը պղնձե մի կաթսա։ Հովիվներից մեկը, որ մսի պատառներ էր հրամցնում Մովսեսին, ասում է.

— Աշխարհում ամենաանդարար ու ախորժահամ բանը խորոված է։ Խորոված չուտող մարդը պիտի հաշվի, որ ինքը համարյա չի ապրում։ Մարդ, ինչքան էլ հոգնած, հիվանդ ու անոթի լինի՝ չի կարող անտարբեր նայել խորոված ին, թեսակ էլ լինի, անհամ է ու նվազ սննդարար, որովհետև մսի համն ու հոտը ջրի մեջ է մնում։

Հովվական այծենակաճի վրա նստած Մովսեսը հաճույքով ունկնդրում էր գեղջկական անտաղտուկ իմաստասիրությունը և անուշ անում համեղ ու գովական խորոված։

Մանանաղի հասան երրորդ օրը։ Հրաշագեղ, ծաղկավետ լեռնահովտի մեջ նստած գյուղ էր Բազմաղբյուրը։ Շինականներն անմիջապես ցույց տվեցին գուշակ Գամերի տունը։ Տան սրահակում հյուրերին դիմավորեց Գամերի թոռը՝ հիսունն անց մի մարդ, որ դարձել էր պապի պատգամախոսը։ Նրա անունը Տուտ էր։ Նա սովորել էր Կոստանդնուպոլսում, իրեն համարում էր իմաստասեր, քաջածանոթ էր աշխարհի անցուդարձերին։

— Ով ասես, որ չի հյուրընկալվել այս հարկի տակ.— ասում է Տուտը։— Պապիս մոտ եղել են և Սահակ Պարթևն ու Մաշտոցը, և Վարդան Մամիկոնյանն ու նրա եղբայր Շմայակ Մամիկոնյանը, և երանելի Եղնիկ Կողբացին։ Բոլորովին վերջերքս ես զրուցել եմ Բյուզանդիայի ծպտյալ կայսր Լևոնի հետ, որ Բազմաղբյուր էր հասել վաճառականի անվան տակ։ Աշխարհի հզորները միշտ էլ կարիք են զգում հավատարիացնող խոսքի։ Պապս միայն գալիքի վարագույր բացող չէ։ Նա կենդանի հնադարան է, հիշում է վերջին հարյուր տարվա անցած-գնացած բաները։

Քիչ անց դուռը բացվեց և սրահակ մտավ Գամերը։ Գեղեցիկ այր էր՝ թիկնեղ, հրաշյա, արծվենի քթով։ Նա ուներ խնամքով սանրված մորուք։ Ուսերին գցած թիկնոցի տակից երևում էր նրբակար սպիտակաթույր ստորնակը։ Դժվար էր ասել, որ նա հարյուր քսան տարեկան էր։ Հրաշքով պահել էր երիտասարդական տարիների կայտառությունը։ Ողջունեց հյուրին ու նրստեց Մովսեսի դեմ-դիմաց։ Հետո ուշադիր նայեց եպիսկոպոսին ու ասաց.

— Զարմանալի է։

— Ի՞նչն է զարմանալի,— հարցրեց Մովսեսը։

— Որ դու եկել ես ինձ մոտ։

— Ինչո՞ւ։

— Քո դեմքից երևում է, որ դու ազնվամեծար իմաստուն ես, դու աշխարհի այն քչերից ես, որոնց համար իմ ասելիքը հազիվ թե արժեք ունենա։

— Գուշակդ իմ մեծապատիվ, չկա մի մարդ, որ լավ խոսքի

կարոտ չունենա։ Ո՞վ կարող է իմանալ կյանքի բոլոր գաղտնիքները։

— Հա, հիմա խառնափնթոր ժամանակներ են։ Կգա մի օր, երբ աշխարհը կգրավեն զորեղ խոսքի տեր մարդիկ։ Ասում են Բագրեւանդի՞ց ես հասել այստեղ։

— Այո՛։

— Հայոց աշխարհն ինձ համար սկսվում է Բագրեւանդից։ Դու, անշուշտ, տեսել ես Զիրավ դաշտը։ Հիմա չգիտեմ ինչպիսին է, այն ժամանակ ծաղկանոց էր։ Այնտեղ ամենից շատ աճում է լայլակի նմանվող ասպուր ծաղիկը։ Հրագույն թերթեր ունի, նրանից պատրաստված ներկը նման է որդան կարմիրի։ Ես մասնակցել եմ այդ դաշտում տեղի ունեցած ճակատամարտին։ Դա հարյուր տարի առաջ էր։ Այն ժամանակ ես հազիվ քսան տարեկան էի։ Մեր աշխարհին բազում վնասներ պատճառած Մեհրուժան Արծրունու խորհրդով Շապուհ արքան պարսից զորքն ուղարկում է Հայաստան։ Պարսիկները գալիս հասնում են Բագրեւանդ։ Զիրավ դաշտում դեմ-դիմաց են կանգնում պարսից զորքն ու մերոնք։ Մեզ օգնում էր հունաց մի զորաբանակ։ Հայոց սպարապետն էր ասպետ Սմբատ Բագրատունին, պարսից զորքինը՝ դավաճան Մեհրուժան Արծրունին։ Ճակատամարտն սկսելուց առաջ մերոնք գերի են վերցնում երկու պարսիկ զորականների և բերում ասպետ Սմբատի զորավրանը։ Ասպետը նրանց ասում է.

— Ես գիտեմ, որ պարսիկներն իրենց կամքով չեն եկել Զիրավ։ Ոչ ոք կամովին դեպի մահ չի գնում։ Ձեզ խաբել է վատախորհուրդ Մեհրուժանը։ Գնացեք և հայտնեցեք նրան, եթե այդքան քաջություն ունի՝ թող մեջտեղ դուրս գա միայնակ։ Ես ու նա կմենամարտենք։ Մեզնից ով հաղթի՝ կհաշվենք, որ ճակատամարտը շահել է նրա կողմը։ Միայն մեկը կզոհվի, մնացած բոլոր մարդիկ՝ պարսիկ թե հայ, ողջ կմնան։

Գերի պարսիկները վերադարձան իրենց բանակը։

Սրատարոփ սպասում էինք, թե ինչ պիտի լինի։ Հայոց զորքից մի քանի թավալում առաջ ընկած իր նժույգն էր խաղացնում ասպետ Սմբատը։ Երկար ժամանակ պարսիկների կողմից ոչ ոք չէր երևում։ Հանկարծ մի հեծյալ պոկվեց պարսից բանակից և արշավասույր հասավ ասպետի մոտ։ Սմբատը տեսավ, որ իր դիմաց մի պարսիկ պատանի է կանգնած։ Զայրացած ասպետը, առանց մենամարտն ընդունելու, վերադարձավ ելման դիրքերը։

— Ես այսօր ցույց կտամ, թե ով ում է ծաղրում,— մռնչաց Սմբատը և հրաման տվեց, որ պարսիկ պատանու դեմ դուրս գա մեր պատանիներից մեկը։

Մենամարտը երկար տևեց։ Բայց ահա պարսից բանակից դեպի մենամարտի վայրն շտապեցին պատանու հասակակիցները։ Սրանց դեմ էլ դուրս եկան հայ պատանիները։ Նրանց հետ էի և ես։ Պատանյակների այդ կռվում հայերը փայլուն հաղթանակ տարան։ Հետո սկսվեց մեծ ճակատամարտը։ Այստեղ էլ հաղթեցին մերոնք։ Ողջ մնացած ու խուճապահար եղած պարսիկները փախուստի դիմեցին։ Նրանց հետ չկարողացավ մարտադաշտից դուրս գալ ու փախչել Մեհրուժան Արծրունին, որովհետև նրա ձին վիրավորվել էր։ Սմբատը հասավ նրան և ձերբակալեց Կոգահովտի եղեգնուտի ափին։ Հետո ես տեսա, թե նրան ինչպես բերին հայկական բանակատեղին։ Ասպետը երկաթե շիկացած շամփուրը երկու փաթ բոլորեց պսակի ձևով և ասաց.

— Քեզ պսակում եմ, Մեհրուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա թագավորելու և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրենի իշխանության կարգով։

Ապա շամփուրը դրեց Մեհրուժանի գլխին և չարագործը սատակեց։ Սա էլ Զիրավի ճակատամարտից մնացած հուշն է, որ սեպվել է մարմնիս վրա։

Եվ Գամերը ցույց տվեց արմունկի վրայի չորացած սպին։

— Իմ սրտին հաճո էր քո հետաքրքրական պատմությունը,— արձագանքեց Մովսեսը։— Դու կարո՞ղ ես ասել, զուշակ, թե ինչ բան է արգո օրը։

— Միայն այդ բանն իմանալու համա՞ր ես հասել այստեղ։

— Այո։

— Իմ իմացածը երևի քիչ թվա քեզ։

— Քիչն ավելի լավ է, քան ոչինչը,— պատասխանեց Մովսեսը։

— Իհարկե, ձի չունեցողը պիտի ոտով անցնի իր ճամփան։ Հա, ինչ էի ասում, դա շատ վաղուց է եղել։ Զիրավի ճակատամարտից էլ հազար տարի առաջ։ Մի թագավոր ենք ունեցել Արա Գեղեցիկ անունով։ Այնքան գեղեցիկ էր, որ նրա վրա աչք էին տնկել աշխարհի բոլոր գեղուհիները։ Նրանց մեջ էր և Ասորեստանի թագուհի Շամիրամը։ Չնայած վավաշոտ էր, բայց ահեղ գեղեցկության տեր էր ասորուհին։ Գեղեցիկ կինը երեք ահավոր զենք ունի՝ արտասուք, լեզու և չարություն։ Նա և՛ արտասուք

թափեց, և՛ լեզու բանեցրեց, բայց չկարողացավ Արային իր գիրկն առնել։ Վեհանձն ու հայրենասեր Արան մերժեց նրա սերը և Շամիրամը ստիպված գործի դրեց երրորդ զենքը՝ չարությունը։ Հավաքեց իր զորքն ու կռիվ եկավ Հայոց դեմ։ Մտադիր էր գերի բռնել Արային և ուժով դարձնել իր ամուսինը։ Սակայն կռվի դաշտում Արան զոհվեց։ Շամիրամը չհուսահատվեց։ Նրա հրամանով Արայի դիակը դրին մի աշտարակի վրա։ Իբր արաբեղները պիտի լիզեին և կենդանացնեին նրան։ Բայց ո՞ր մեռածն է քնից արթնացել։ Չարթնացավ նաև մեր Արան։ Այստեղից էլ սկսվում է Արգո օրի պատմությունը։ Արայի կին Նվարդը թագուհու խույրը գլխին դրեց և արձակեց աշխարհի ամենաիմաստուն հրովարտակը. «Պատերազմի դաշտում զոհված մեր հարազատների հիշատակը հավերժացնելու համար Հայքում սահմանվում է արգո օր։ Յուրաքանչյուր մարդ պետք է ամսվա մեջ երեք օր գանի և աշխատի բոլորանվեր ուժով՝ մտածելով, որ ինքը բանում է մեռածների փոխարեն։ Այդպես պիտի վերակենդանացնել ընկածներին և ոչ թե դիմել արալեզների օգնությանը։ Դրանով մենք կհաղթենք մահին։ Ողջերի հետ կապրեն բոլոր մեռածները։ Արգո օրով պիտի ծածկենք ընկածների բացը։ Ոչ ծառերն ու այգիները կչորանան, ոչ էլ դաշտերը կդառնան խոպան ու ուսուսկածածկ։ Դա է Հայքի հարատևության պայմանը։ Թող Հայոց բոլոր աստվածները պատժեն նրան, ով կապրի առանց արգո օրի»։

— Դու ասացիր, թե ամեն հայ ամսվա մեջ երեք օր պիտի գանի մեռածների փոխարեն բանելու համա՞ր։

— Այո, Մովսես, յուրաքանչյուրը այդ երեք օրը կարող է լրացնել իր հանգստի ու քնի ժամերի հաշվին։ Դա հայերին կդարձնի երիցս աշխատասեր ու կորովի։

— Ո՞ւմից ես լսել այդ հրովարտակի մասին։

— Պապիցս, նա էլ՝ իր պապից, այս պապն էլ՝ իր նախապապից։

— Դու վերապատմեցի՞ր հրովարտակը։

— Ոչ, անգիր ասացի, առանց ավել-պակասի։ Սա բերանացի գիտեն նաև իմ թոռը՝ Տուտը։ Նույնը կանի նաև Տուտի ծոռը, իսկ հետո գալիքում՝ նաև այդ ծոռան ծոռը։

— Գուշակդ Գամեր, իսկ դու չես լսել՝ այդ մասին չի՞ գրվել որևէ մատյանում,— հարցրեց Մովսեսը։

— Նվարդի ժամանակներում հրովարտակը բերանացի գիտեին բոլոր հայերը։ Արա Գեղեցիկի կինը թույլ չի տվել, որ այն գրի առնվի։

— Ինչո՞ւ։

— Երկյուղել է, որ որևէ արքա կարող է գողանալ այդ հրովարտակը և անմահացնել իր անունը։ Դու տեսե՞լ ես Մեծամորի երկաթե եռաթև սյունը։

— Իհարկե, տեսել եմ։

— Դա փոխարինում է Նվարդի հրովարտակին։ Երեք թևը արգո երեք օրն է, իսկ սյունը՝ Հայքի հավերժության նշանը։

Հեռու Գամերն ասաց, որ մինչև այժմ էլ համարյա բոլոր հայերը կատարում են Նվարդի պատվիրանը։ Արգո օրը մեր արյան կանչն է։ Հայը ջանում է մի օրում երկու օր աշխատել։ Իսկ հրովարտակի մասին գիտեն միայն Հայոց ձոր գավառի Մարգք գյուղի բնակիչները։

Ապա Մովսեսը Գամերին հարցրեց.

— Ասա ինձ, հարգարժան Գամեր, դու հավատո՞ւմ ես քո գուշակությանը։

— Այո։

— Բայց չէ՞ որ գուշակության մեջ խաբեություն կա։

— Նայած թե ով է գուշակում։ Ես չեմ մարգարեանում։ Իմ նախատեսումների մեջ և կենսափորձ կա, և երազանք, և բարեմաղթություն։ Գուշակել նշանակում է հավատել մարդու փափագն ու ցանկությունը։ Ես այնպես եմ կանխատեսում գալիքը, որ մարդուն մղեմ դեպի երազանքի իրագործում։

— Իսկ շա՞տ ես հեռուն տեսնում։

— Ոչ։ Հարյուր քսան տարի։ Իմ տարիքի չափ կարող եմ մաքով թռչել դեպի վաղը։ Նրանից այն կողմ ես ոչինչ չեմ տեսնում։

* * *

Տունդարձին, դեռ Բագավան չհասած Մովսեսը լսեց, որ Հովհան կաթողիկոսն սպասում է իրեն։ Ատատը սուրաց առաջ և ժամ առաջ հասավ Բագավան։

— Միևնույն է, ես պիտի սպասեի, եթե պետք լիներ համբերել ևս երկու օր,— ասաց Հովհանը՝ ողջագուրվելով Մովսեսի հետ։

— Նշանակում է՝ կամ շատ կարևոր բան ունես ասելու, կամ կարոտել ես ինձ,— ասաց Մովսեսը։

— Կարոտել եմ, Մովսես, սիրուց հետո մարդու ամենաթանկ զգացումը կարոտն է։ Վերջերս, սա էլ քո մատանին։ Տիկին Կամարան հանձնեց ինձ, և ինքը տուն վերադարձավ իր նոր որդու հետ։

— Դու հավանաբար կշտամբանքի խոսքեր ես սրել ինձ համար։

— Ես երբեք էլ հարգանք չեմ ունեցել ազամանդազարդ այդ կնոջ հանդեպ։

— Մի կարծիր, թե նա եղակի է իր գոհարամոլությամբ։ Ամենամատուն կինն էլ կին է դառնում ազամանդի շողքը տեսնելուց։ Ավելի լավ է ասես, թե ինչպես ես զգում հայրապետական բազկաթոռի վրա։

— Հայոց հայրապետը, Մովսես, մի քիչ հայրապետ է, մի քիչ արքա, մի քիչ մարզպան, մի քիչ նախարար կամ ազատ, մի քիչ զորական ու շինական, մի քիչ էլ աստված։ Ուժեղ է նա, ով համաչափորեն է մեկտեղում այս ամենը։ Հենց որ սրանցից մեկը գլուխ բարձրացնի և բանի տեղ չդնի մյուսներին՝ հաշվիր, որ հասել է հայրապետի վախճանը։ Երևի հիմա ասես, թե ինձ իրենց հուսո ձեռքերն են կարկառել հայոց վաղվա սերունդները, թե ես պարտավոր եմ գործել նրանց համար։ Խելացի մարդը, եպիսկոպոս, քիչ հույս է տածում, բայց ամենևին չի հուսահատվում։ Հիմա պիտի զգույշ լինել բառերի հետ։ Խոսելը մեկ, լռությունը՝ երկու բերան ունեցող սուր է։ Շատ խոսող մարդը նման է կնիքը քակված նամակի՝ ով ուզենա կարող է կարդալ։ Խելացիների քիչ խելքն էլ երևում է այն ժամանակ, երբ նրանք չանում են ցուցանել իրենց ամբողջ ունեցածը։

— Լսում եմ քեզ, Հովհան, և խորհում։ Դու կարող ես Ալեքսանդրիայի մուսեյոնում բաբունապետ դառնալ, մենք կարող ենք Հայքում տասը մուսեյոն հիմնարկել և իմաստասիրական վեճի մեջ մտնել համայն աշխարհի հետ։ Բայց մենք չենք կարող հաշտվել մի թագավոր ունենալու մտքի հետ, որովհետև թագավորացու գլուխները շատ են Հայքում։ Սա մեր խեղճության նշանն է, մեր կորստյան պայմանը։ Բոլոր նախարարներն էլ նայում են իրենց տվերներին, հիանում և մտովի ասում. «Ոչ ոք չի կարող ուրանալ, որ ես արքայական կեցվածք ունեմ, պակասում է միայն թագը»։ Հիմա դու կասես, թե իմ խոսքերը ճշմարիտ են, բայց մենք չենք կարող փախչել մեզանից։

— Այո, Մովսես, այս հողը շատ է սրբացել մեզ համար։

Ուրիշները նահանջում են և նոր հայրենիքի տեր դառնում։ Իսկ մենք՝ հայերս, եթե տիեզերքի մի ծայրից մյուսն էլ պատեպատ տանք մեզ՝ հայրենիք չենք գտնի։ Մեր ունեցածը սա է, պիտի պատույտ տաս Մասիսի շուրջը։

— Բայց Մասիսը դուր է գալիս նաև օտարազգի բոլոր բզոնավորներին։

— Դա էլ մեր ճակատագրական դժբախտությունն է, մեր ողբերգությունը։ Դու ինքդ բացեցիր իմ կարևոր խոսքի տուտը։ Չէի կարող այդ մասին քեզ հայտնել թղթով։ Դրա համար էլ անձամբ եկա։ Քահանայապետական քո այս տիրույթ Բագրևանդը Հայքի մեղրի բլիթն է։ Ինչ ճանճի ասես, որ այն չի քաշում իրեն։ Այստեղ ամեն տեսակ քարոզիչ է հայտնվում։ Նրանք շանում են հաստատվել Բագրևանդում և մեր ոգին ցլատել իրենց մարմանդ քարոզչությամբ։ Հայոց հեթանոս աստվածները թաքնվել են Բագրևանդի թավուտներում։ Դու չես կարող նրանց քշել։ Բայց պետք է չթողնես, որ նրանց կողքին բնակություն հաստատեն օտարերկրյա հեթանոս աստվածները։ Կրթիր հոտիդ այնպես, որ մարդիկ բոլոր հյուրերին ճանապարհ դնեն ժամանակին։ Պիտի ասեղ խրել աներես հյուրի անկողնու ներքնակին։

— Ես այդպես էլ ուսուցանում եմ, հայրապետ։

Հետո երկուսով լռեցին։

Կարծես ամեն ինչ ասացին ու վերջացրին։ Չէ որ հաճախ համախոհները քիչ բան են ունենում միմյանց հայտնելու։ Բայց ահա Հովհանը ինչ-որ բան մտաբերեց.

— Դու քո պատմությունը մաս-մա՞ս ես ուղարկում Սահակ Բագրատունուն։

— Այո։ Մեզ իրար հետ կապում է ասպետի կապարճակիր Ատատը։

— Այն երիտասա՞րդն է, որը պիտի դառնա Գաղիշո խորխորոնու դատարկը։

— Այո։ Ոչ հավանում է, ոչ էլ հավատում իր ապագա անհրաժեշտը։

— Գաղիշո խորխորոնու զինակիցն է Վարազշապուհ Ամատունին, որից պիտի զգուշանա Ատատը։

— Ինչպե՞ս։

— Խուսափի նրա հետ հանդիպելուց և բարեկամանալուց։ Վարազշապուհ նախարարը օձի լեզու ունի։

— Աստան արդեն գիտե այդ մասին։

— Ի՞նչ գիտե։

— Որ Վարազշապուհը հայրենիքի դավաճան է, ստապատիր անձ, որ նրանից պետք է հեռու փախչել յոթանասուն հրամանդ։

— Դո՞ւ ես նախազգուշացրել նրան։

— Ոչ։ Գագիշո խորխոռունու դուստրը՝ Թեժը։

— Դա արդեն զարմանալի է։

— Սա Հայոց աշխարհն է, հայրապետ, ամբը կարող է մեկ բերքակործան կարկուտ դառնալ, մեկ՝ բերքաբեր անձրև։

— Այդ ամենը հաճելի է լսել։ Բայց Վարազշապուհը մնում է Վարազշապուհ։ Հայքի նախարարներից միայն նա է առյուծի մորթ հագնում։ Այդպիսի պատմուճան է հագել, որպեսզի առյուծաժանիք դառնա ուրիշներին հոշոտելու համար։ Պերոզ արքայի մոտ նա արդեն զրպարտել է քեզ։ Ասել է, թե իբր դու Բագավանում նստած ապստամբության ծրագիր ես հղանում պարսից դեմ, թե իբր ասուվածաշունչ ես գրում ու գուշակում, որ բոլոր մոխրասերները հիսունվեց տարի հետո կվարակվեն մահաբեր ախտով։

— Բայց Պերոզը այդքան հիմար չէ, որ հավատա Վարազշապուհի խոսքին։ Նա հաստատող ապացույցներ կպահանջի։

— Վարազշապուհ Ամատունին արքային արդեն խոստացել է, որ ինքն այդպիսի ապացույցներ կներկայացնի։

— Որտեղի՞ց պիտի գտնի նա այդ ապացույցները։

— Հենց թեկուզ հետևյալ ձևով։ Աստատը Բագավանից ուղևորվում է դեպի Դվին։ Ճանապարհին Վարազշապուհի զինված մարդիկ հարձակվում են նրա վրա և խլում Սահակ Բագրատունուն հասցեագրված մագաղաթների տոպակը։ Հետո վեր ու վար են նայում և տեսնում, որ քո գրածները Պերոզին պետք չեն։ Այդ ժամանակ էլ նստում են ու քո անունից մի կեղծ թուղթ հորինում՝ ուղղված Սահակ Բագրատունուն և Վահան Մամիկոնյանին։

— Բայց նրանք միշտ էլ կարող են այդպիսի կեղծ թուղթ հորինել։

— Չէ, ուրիշ բան է հենց այնպես հորինելը, ուրիշ բան՝ եթե մի քանի հոգի հաստատեն, որ այդ թուղթը խլել են Աստատի ձեռքից։

— Աստատը նրանց ձեռքը չի ընկնի։

— Այդքան վստահ մի եղիր։ Բագավանից Դվին գնացող ճանապարհը գիտեն նաև Վարազշապուհ Ամատունու մարդիկ։

— Չգիտեն։

— Ինչպե՞ս թե չգիտեն։

— Բագավանից Դվին տանող երեք ճանապարհ կա, որոնցից երկուսը միայն Աստատին է հայտնի։

— Ինչե՞ր ես ասում, Մովսես, ճանապարհն այնպիսի բան չէ, որ թաքցնես ուրիշների աչքից։

— Դու չես ճանաչում Աստատին։ Այդ երկու ճանապարհը ինքն է հորինել, իրեն սար ու ձոր է գցում, դարձդարձիկ այծուղիների մեջ ընկնում, հետ ու առաջ շարժվում երկար պտույտներ գործելով։ Աստատը խենթ է, խենթի հետևից հասնե՞լ կլինի։

***

Շիկափոկ այս երասանակը տարիք չունի։ Թվերից էլ հին է։ Ասում են Հայոց աշխարհում այդ երասանակով են սանձել առաջին ձին։ Սանձողն էլ եղել է Սահակ Բագրատունու տոհմահայրը։ Նրա անունը Բագրատ է եղել։ Այն ժամանակ դա համարյա նույնն էր, ինչ որ նվաճես աշխարհի կեսը։ Ոչ ոք չէր հավատում, թե մարդը կարող է բռնել արձակ դաշտերում տըրտինգ տվող ձիուն։ Առաջին Բագրատին իր այդ փառահեղ հաղթության համար տվել են ասպետ պատվանունը։ Այդ անթվակիր ժամանակներում ձիուն անվանել են ասպ, սանձողին էլ՝ ասպի պետ, կամ՝ ասպետ, այսինքն ձիավոր, հեծյալ։ Դա սովորական է հնչում հիմա, իսկ այն ժամանակ ասպետը ասուվածատուր ուժ է ունեցել։ Հայքում համոզված էին, թե ասուվածների հետ կարող է խնջույքի նստել միայն ասպետը։ Հետո երբ մարդիկ սովորեցին ասպ հեծնել՝ նրանց կոչեցին հեծյալներ կամ ձիավորներ։ Ասպետը մնաց Բագրատունիներին։

Բագրատունիների մասին ասում են նաև, թե նրանք են թագադրել բոլոր հայ արքաներին։ Դրա համար էլ նրանց անվանում են թագադիր ասպետներ։

Սահակ Բագրատունին թագ չի դրել որևէ մեկի գլխին, բայց պահում է հնաբուն տոհմի ասպետական ոգին։ Շիկափոկ երասանակը որպես զինանշան որդուց որդի է անցել և հասել իրեն։

Ասպետ Տիրոցի որդի ասպետ Սահակը հիմա երեսուն տարեկան է։ Թիկնեղ է, բարձրահասակ, գանգրահեր, լայնալիճ ունքերով, գեղեցիկ քթով ու սիրուն կզակով։ Անմրցակից նժույգավար է, ասպարեզի անհաղթ մրցորդ։ Գիտե թանկ գնահատել տոհմական արժանապատվությունն ու իր արդը, մեծավարի պահել իրեն մեծերի հետ նստելիս ու վեր կենալիս։

Չի փախչում այն փառքից, որից շահում է նաև Հայաստան աշխարհը։ Դվինից ոչ հեռու գտնվող իր ամրակառույց դղյակում ստեղծել է տոհմական գիվան։ Ընդօրինակել է տալիս հայերեն, հունարեն, ասորերեն, պարսկերեն բոլոր այն գրքերը, որոնց մեջ թեկուզ մի անգամ հիշատակվում է հայ կամ Հայաստան բառը։ Նրա ենչասենյակում Եգիպտոսի Պտղոմեոս Եղբայրասեր թագավորի արձանիկն է։ Ասպետ Սահակը նրան համարում է բոլոր ժամանակների ամենամեծ գրքասերը, գրքամոլների արքայից արքան։ Ալեքսանդրիայի մեծահռչակ մատենադարանը հոխորտելու և ընտիր գործերով հարստացնելու համար ինչեր ասես, որ չի արել այս Պտղոմեոսը։ Մի անգամ նա կանչում է իր մատենապետին և ասում.

— Լսիր, Դեմետրեոս, քանի՞ գիրք կա մեր գրադարանում։

— Հինգ հարյուր հազար, տեր իմ,— պատասխանում է մատենապետը։

— Իսկ ինչքան գիրք կա համայն աշխարհում։

— Դժվարանում եմ պատասխանել այդ հարցին, արքա, ոչ ոք չի հաշվել աշխարհի բոլոր գրքերը։

— Մոտավոր հաշվով։

— Հավանաբար տասը գրքից ինը մեր գրադարանում է։

— Իսկ ի՞նչ չունենք մենք։

— Մենք ունենք հունարեն համարյա բոլոր գրքերը։

— Մի շրջանցիր իմ հարցը, Դեմետրեոս, դու չասացիր, թե ինչ չունենք մենք, աշխարհի իմաստությունները միայն հունարենով չեն ստեղծվել։

— Այո, արքա, բայց մեր ունեցած հինգ հարյուր հազարից հարյուր հազարը թարգմանություններ են այլևայլ լեզուներից։ Հիմա կաղ է այն ամենը, ինչ հունարեն չէ։

— Ինձ ասացին, որ մեր գրադարանում չկա աստվածապատում մի գիրք, աշխարհի ամենաիմաստուն մարդանը, որ կոչվում է Աստվածաշունչ։

— Ներիր ինձ, արքա, չի կարող ամենաիմաստուն հոլակվել այն, ինչ չի հնչել հունարեն։ Մեր ինչի՞ն է պետք եբրայերեն գրված այդ հաստափորը։

— Իսկ եթե թարգմանե՞լ տանք այն։

— Դժվար կլինի, տեր իմ, դա կարող են անել միայն իրենք՝ հրեա մեկնիչները։

— Հենց այսօր. էլ նստիր ու նամակ գրիր Երուսաղեմ՝ եղիազար քահանայապետին։ Իմ անունից խնդրիր, թող նա ուղարկի այդ գիրքը և այնպիսի մեկնիչների, որոնք կարողանան եբրայերենից թարգմանել այն հունարեն։

Այս զրույցից շատ ժամանակ չանցած Երուսաղեմից Ալեքսանդրիա հասան յոթանասուներկու թարգմանիչներ։ Պտղոմեոս արքան սիրալիր ընդունեց նրանց։ Ալեքսանդրիային մերձ Փարոս կղզու վրա արքան պատրաստել տվեց յոթանասուներկու տարանջատ սենյակներ և թարգմանիչներին ասաց.

— Ձեզնից յուրաքանչյուրը կունենա մի դպիր և մի սպասավոր։ Ձեզ կմատուցեն եգիպտական ամենահամեղ սնունդը և այն ամենը, ինչ ցանկանա ձեր սիրտը։ Իսկ դուք սկսեք թարգմանել։ Պայմանն այսպես է, կարող եք համատեղ զրոսանքի դուրս գալ և զրուցել իրար հետ, բայց ձեր թարգմանածը չպետք է ցույց տաք միմյանց։ Եթե մեկը խախտի այս կարգը՝ նրա հետ կպատժվեք յոթանասուներկուսդ էլ։

Հրեա մեկնիչները Աստվածաշունչը՝ Հին Կտակարանը, թարգմանեցին յոթանասուներկու օրում։ Հետո բոլորը հավաքվեցին Պտղոմեոս Եղբայրասեր արքայի գահասրահում ու սկսեցին համեմատել։ Յոթանասուներկու թարգմանություններն էլ միմյանց նման էին տառ առ տառ, բառ առ բառ։ Պտղոմեոս արքան իր գոհունակությունը հայտնեց և հրեա մեկնիչներից յուրաքանչյուրին ընծայեց յոթանասուներկուական ոսկի։

Ապա արքան կանչեց մատենապետ Դեմետրեոսին, հանձնեց նրան յոթանասնից թարգմանությունը և ասաց.

— Պետք է աչքի լույսի պես պահել այս Աստվածաշունչը։ Հինգ հարյուր հազար գիրք ունեցող Ալեքսանդրիայի մեր գրադարանը յոթանասուներկու անգամ թանկարժեք է դառնում այս մի հատիկ գրքով։

Ասպետ Սահակը փորձում է նմանվել Պտղոմեոս Եղբայրասերին, եզրեր գտնել իր և եգիպտական արքայի միջև։ Նա հույս ունի, որ մի օր ինքն էլ նույն հրճվանքը կապրի, ինչ Պտղոմեոս

սը։ Իմաստասեր Մովսեսը նրա պատվերով «Հայոց պատմութիւն» է գրում։ Դա հայոց բոլոր մատենադարաններում այնպիսի գրքի համբավ կվայելի, ինչպես Աստվածաշունչը Ալեքսանդրիայի գրադարանում։ Հրեա մեկնիչներն իրենց Աստվածաշունչը թարգմանեցին յոթանասուներկու օրում, Մովսեսն էլ թող իր պատմությունը գրի յոթանասուներկու ամսում։ Այդ յոթանասուներկուսը դուր չի գալիս ծերունի Մովսեսին, նա բողոքում է և ասում, որ ինքը չի կարող այդքան ժամանակում անել այն, ինչ պահանջում է ասպետը։ Զնայած քրթմնջում է, բայց գործն առաջ է գնում։ «Սրբազան հայր, քո գործը դու պիտի ավարտին հասցնես յոթանասուներկու ամսում»՝ սա հնչում է հրամանի նման և Մովսեսը պատասխանում է. «Քո համառությունը տհաստության արդյունք է։ Եվ տարիքդ է ազոխ, և միտքդդ»։ Թող ասի՝ ինչ ուզում է, մտածում էր ասպետը, միևնույն է, նա կկատարի իմ պատվերը։

Ով կարող է իմանալ, թե ինչ կա ասպետ Սահակի հոգում։ Եկեղեցում ծնրադրում է Հիսուս Քրիստոսի առջև, ջերմեռանդորեն աղոթում և ցուցանում ամենքին, թե աստվածապաշտ է։ Բայց նա մտովի Հիսուսին դարձնում է Հայոց Արամազդ, Մարիամին՝ Անահիտ, ոսկեմայր ու ոսկեծոր Անահիտ։ Հավանաբար բոլոր մարդիկ հեթանոս եղել են, հեթանոս էլ կմնանեն։

Եթե հավահմա չլիներ՝ որսորդությունը չէր սիրի։ Հեծնում էր իր աստղաճակատ նժույգը և չափ զցում Տափերական դաշտում։ Այդ պահերին նա սանձաթող էր անում իր երազանքը, հավքերի հետ վեր ու վար ճախրում, աշխարհի գործերը վերածելով սրտի ուզածին պես։ Հենց որ օդում սրաթև ուրուր էր տեսնում՝ իսկույն արձակում էր նետը։ Բայց մինչև այժմ նրան չի հաջողվել մի ուրուր սպանել։ Հետո ի՞նչ։ Նա մտովի պատկերացնում է, որ ուրուրը Հայքի թշնամին է։ Այո, այդ գիշատիչ թռչունի մեջ նա և՛ Պերոզ, և՛ բյուզանդական ուխտադավ կայսր է տեսնում։ Այսպես է հաշվում, եթե նետը կպչի՝ նշանակում է մինչև մի տարի Հայքը ինքնություն տերություն կդառնա։ Ասպետը հետամտիկ է նաև լեշակեր ցինին։ Ցինն ուրուրից վատթար է։ Նրա համար ցին է և Գաղիշո Խորխոռունին, և Վարազշապուհ Ամատունին։ Ասպետը երբեմն կանգնեցնում էր ձին ու սկսում դիտել կարմրատոն կաքավների կայթելը։ Հավանաբար ուրիշ երկրներում այդպիսի գեղեցիկ թռչնապար մարդիկ երազում են տեսնում։ Սահակը սիրում էր հաշվել գեղափետուր տատրակի ծվծվոցները։ Մտքում գնում էր, որ եթե յոթ անգամ ծլվծլվա՝ ապա Հայոց երկնքում առաջիկա յոթ ամսում մահաբեր ճայթյուն չի լինի։ Բայց խելառ տատրակը վեց անգամից ավելի չի ծվծվում։

Որսի դուրս գալուց առաջ մայրը Սահակին հիշեցնում էր.

— Տղաս, ծիծառ չսպանես։

Բայց ինչու միայն ծիծառ։ Նա երբեք նետ չի արձակի ոչ խայտաբղետ հոպոպի, ոչ էլ սեափետուր ծառակուտկուտի վրա։

Ասպետը ստեպ ձեռքը նետին է տանում՝ հենց որ հանդիպում է խուլսագի։ Այս վայրի աքլորը երկար մորուք ունի և նման է ծիծաղելի հրեշի։ Խուլսագ տեսնելիս Սահակին թվում է, թե իր առջև կանգնած է ծննդականների թշնամի, սրյունաբրու երախով Ալքը։

Տափերական բարերեր դաշտի երկնքի դարպն. [illegible] նայելիվ, սրատես ու սրաթռիչ տրիպն է։ Աշխարհում ուրիշ ոչ մի տեղ [illegible] խոշոր թռչուններ չկան։ Նրանք պատկառ են տալիս Մեծ Մասիսի բոլորիքյան, երբեմն դաղար առնում լեռան անձավներում, ապա նորից հայտնվում Տափերական դաշտի անաղջամուղջ երկնքում, հետո օդապարիկ սուրում են վեր և անհետանում երկնի անհղորական ու անհվան կապույտներում։

Ինչպես աղատության կանչ, այդ արծիվները ամեն օր ասես կոչահարում են հայի հոգին։ Ծատրները կապել են հայի թևերը և բանտել նրան իր տանը։ Նրա աչքը կարոտ է մնացել իր աղատ երկնքին։ Դե, թափ տուր քեզ, գարմգ հայկյան, տեր դարձիր քո ապարասան ոդուն և վեր ճախրիր հայրենական արծիվների նման։

Ամեն անգամ Սահակը որսից տուն էր դառնում ձեռնունայն, բայց երազանքով հագեցած։

Նրա դղյակի վերին հարկում սրակամար առաստաղով մի սենյակ կա, որտեղ նա հանդիպում էր ոսկեհատ Վահան Մամիկոնյանի և կաթողիկոս Հովհան Մանդակունու հետ։ Այդ գաղտուկ հանդիպումների մասին ոչ ոք չգիտեր։ Երեքն էլ իրատես էին և ցուցանում էին համարձակն ու իրաղությունը արդարամիտ գնահատելու հանճար։ Մի անգամ Հովհանը Վահան Մամիկոնյանին ու Սահակ Բագրատունուն պատմեց այն, ինչ Մովսեսից լսել էր արդեն երկար տարիներ։

— Մեզնից յուրաքանչյուրի ամբողջ կյանքը հայրենիքին նվիրված մի արդար օր է,— ասաց ասպետ Սահակը։

— Տիարք, արդո օրն ինձ ուրիշ բան է հուշում,— նորից խոսում է հայրապետը։

— Ի՞նչ բան,— հարցնում է Վահան Մամիկոնյանը։

— Եթե ամեն գյուղում ու քաղաքում երկու պատանյակի ուսուցանենք զորական գործը՝ նժույգավարելը, նետաձգությունը, ասպարով պաշտպանվելն ու նիզակահարելը, ապա մենք կունենանք քառասուն հազարանոց մի զորքի բանակ։

— Իսկ ո՞վ պիտի վարժեցնի նրանց,— հարցրեց Սահակը։

— Այդ գյուղերում ու քաղաքներում ապրող նախկին, այժմ տարեց զորականները,— պատասխանեց Հովհանը։

Վահան Մամիկոնյանի դեմքը լրջանում է։ Նա ելնում է տեղից, ետ ու առաջ շարժվում սենյակում և սկսում իր խորհրդածությունները.

— Ավարայրում հորեղբայրս փորձեց իր անձնազոհությամբ ոգևորել հայ զորականներին, որոնց կեսից ավելին զենքի երես չտեսած շինականներ էին։ Այդ սխալը մենք չենք կրկնի։ Մարտադաշտ պիտի իջնի զինվորը և ոչ թե շինականը։ Հայ շինականը եթե ուզում է հայ մնալ պետք է նաև զինվոր դառնա։ Ամեն գյուղում ու քաղաքում երկու զորական պատրաստելը, իրոք, մեծ բան է։ Դա աչքի չի զարնվի, ոչ պարսիկները զլխի կընկնեն, ոչ էլ մեր պարսկամոլ նախարարները։ Կվարժեցնենք և մի քանի տարի հետո կունենանք նախարարական գնդերին երեք չորս անգամ գերազանցող բանակ։ Այո, զորական ուժն է մեր փրկությունն ու հույսը։ Բայց այս ամենն իրագործելու համար պիտի աստվածաշունչ եռանդ և շատ փող ունենալ։ Եռանդը կա, մնում է փողը։ Առանց փողի ոչ վահան կարող ես ձեռք բերել, ոչ տեղ, ոչ սոնապան ու սաղավարտ, ոչ էլ զորական ուրիշ զենք ու հանդերձ։ Ինձ մոտ, իհարկե, մի քիչ ոսկի կա, կարելի է զինել հինգ-վեց հազար մարդու։ Հա, ոսկեհատի իմ պաշտոնն օգտագործելով կբարձրացնենք շինականի տուրքերի չափը, և իրենց տվածով կզինենք իրենց։

Ոսկեհատը լռում է և սպասում, թե ինչ կասեն համախոհները։ Հայրապետը գլխով է անում, իսկ Սահակը բացասաբար շարժում է գլուխը և ասում.

— Ամեն ինչ հիանալի ասացիր, բացի շինականների տուրքերն ավելացնելը։ Մի անգամ Ալեքսանդր Մակեդոնացու պաշտոնյաներից մեկը, որի անունը Տիտոս էր, փորձում է համոզել տիրակալին՝ ավելացնելու տերության բոլոր տուրքերը։ Ալեքսանդրը Տիտոսին պատասխանում է. «Գիտցիր, ես ատում եմ այն պարտիզպանին, որ ծաղկի հետ արմատն էլ է պոկում, և սիրում եմ այն հովվին, որ ոչխարը խուզում է առանց մորթազերծ անելու»։

Վահան Մամիկոնյանն անմիջապես համաձայնում է։ Հետո երեքն էլ սկսում են իրենց մտքերում ոսկի որոնել։

— Ելք կգտնենք,— ասում է Հովհան Մանդակունին։

Եվ Սահակ Բագրատունին ու Վահան Մամիկոնյանն արձագանքում են.

— Ելք կգտնենք։

Հետո իջնում են դղյակի միջնահարկի պատշգամբը և օշարակ խմում։

Հաջորդ օրը ասպետը դիմում է մորը՝ գեղեցկապարանոց տիկին Մագաղաթին.

— Մի անգամ դու ասացիր, մայր իմ, որ հայրս ինձ համար մի բան է ետ դցել նեղ օրվա համար։

— Այո, տղաս, մենք այդպիսի մի պահուստ ունենք, բայց դու դրա կարիքը չես զգում հիմա և տա աստված, որ բնավ չզգաս։

— Ես ուզում եմ իմանալ, թե հայրս ինչ է ետ դցել ինձ համար։

— Ոսկի։

— Դա ես գիտեմ։

— Իսկ ի՞նչ ես ուզում իմանալ։

— Չափն եմ ուզում իմանալ, մայր իմ, չափը։

— Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչքան է։

— Դու կարո՞ղ ես ցույց տալ ինձ այդ գանձը։

— Ոչ, Սահակ, ժամանակը չէ։

— Մայր իմ, մի՞թե դու ինձ չես վստահում այն, ինչ ինձ է պատկանում։

— Ես կատարում եմ հորդ պատվիրանը։

— Ի՞նչ է պատվիրել նա։

— Հայրդ ասել է. «Այս գանձը Սահակին կհանձնես այն ժամանակ, երբ հասուն այր դառնալուց հետո զգա սրա կարիքը»։

Ասպետը ժպտաց, համբուրեց մորը ու ասաց.

— Ուրեմն ես հիմա հասուն այր չե՞մ։

— Դու դեռ պատանյակ ես, տղա։

— Հարյուր տարեկան էլ դառնամ՝ ես քեզ համար պատանյակ պիտի մնամ։

— Եթե հասուն այր լինեիր՝ չէիր պահանջի այն, ինչի կարիքը չես ունենում։

— Իսկ եթե հանկարծ քեզ մի բան պատահի՝ ո՞վ պիտի հայտնի ինձ այդ դանձի տեղը։

— Ինձ ոչինչ չի պատահի, տղաս։ Ես գիտեմ և՛ իմ մահվան, և՛ դանձի տեղը քեզ հայտնելու ժամանակը։

***

Կես գիշերն անց էր, երբ Ատատը դղյակ հասավ։ Մահճակալի վրա պառկած ասպետը գլուխը վերցրեց բարձից, հանդարտ ելավ տեղից և վատվակով[1] նստեց բազմոցին։

— Հիմա գիշերվա Փայլածու ժամը կլինի,— ասաց Սահակը,— ի՞նչ է պատահել, որ դու արթնացրիր ինձ, հը՞, բերե՞լ ես մատյանի շարունակությունը։

— Ոչ, տեր իմ։

— Գուցե որևէ բան է պատահել իմաստասեր Մովսեսին։

— Ոչ, տեր իմ։

— Ապա ինչո՞ւ ես գիշերով Բագավանից հասել այստեղ։

— Ես Խորխոռունյաց գավառից եմ գալիս։

— Ա՜, երևի այցելությա՞ն ես գնացել Թեժին։

Ասպետի հանդիստ ու խաղաղ պահվածքը զարմացնում է Ատատին։ Նա շունչը տեղն է բերում ու ասում։

— Վահան Մամիկոնյանին վտանգ է սպառնում։ Վարազշապուհ Ամատունի նախարարը Պերոզ արքային հայտնել է, թե ոսկեհատը իր կողմն է գրավել նախարարներին և որոշել է մի գիշերում կոտորել Հայքում գտնվող բոլոր պարսիկներին։

— Ո՞վ հայտնեց քեզ այդ լուրը։

— Թեժը։ Նա էլ լսել է հորից։

— Իսկ Գադիշո Խորխոռունին գիտե՞, որ դու տեղյակ ես այդ ամենին։

— Ոչ։

— Ինչպե՞ս թե, մի՞թե դու անտեսանելի ես, նրա ամրոցն ես մտնում ու դուրս գալիս աննկա՞տ։

[1] Վատվակ — ներքնազգեստ։

— Տեր իմ, ես չեմ մտնում Գադիշոյի ամրոցը։

— Իսկ որտե՞ղ ես հանդիպում Թեժին։

— Նախարարի ամրոցից հեռու։ Մեր ժամադրավայրը մի խուլ այր է։

— Ատատ, ինձ զարմացնում է այն, որ մինչև հիմա Գադիշոն քեզ չի գցել իր որոգայթը։

— Երբեք էլ չի գցի, տեր իմ։

— Թեժը Գադիշոյի դուստրն է, Ատատ, և առայժմ քո կինը չէ։

— Թեժն ատում է իր հորը, տեր իմ։ Իսկ ինձ սիրում է ոչ միայն նրա համար, որ ես ես եմ։

— Էլ ինչի՞ համար պիտի սիրի քեզ։

— Նրա համար, որ ես կապված եմ քեզ ու իմաստասեր Մովսեսի հետ։ Նա իրեն ավելի շուտ նաղանք լճակը կնետի, քան կուրանա հայրենի հողն ու լեզուն։

— Լավ է, որ Թեժն այդպիսին է։ Եվ, այնուամենայնիվ, հայտնած լուրը դույժ է, Ատատ։

— Ես այդ գիտեմ, տեր իմ։

— Ուրիշ ի՞նչ ասաց Թեժը։

— Նա ասաց, որ Պերոզ արքան, երևի, նոր բանակ ուղարկի Հայք և հայ ըմբոստ նախարարներն ստիպված կլինեն լեռներն իրենց քաշել։

— Ախոռ իշիր և թամբիր իմ նժույգը։

— Իսկույն, տեր իմ։

Ատատը դուրս եկավ ննջասենյակից, իսկ Սահակը սկսեց հագնել իր հանդերձը։ Դուռը բացվեց և ներս մտավ Մագաղաթ տիկինը։

— Այս ի՞նչ ես անում, տղաս։

— Հյուր պիտի գնամ Վահան Մամիկոնյանին, մայր։

— Ի՞նչ է պատահել, Սահակ։

— Դավ են նյութում Վահան Մամիկոնյանի դեմ, պիտի իմաց տալ նրան։

— Դա կարող ես անել վաղը։

— Չէ, մայր, չի կարելի վաղվան թողնել այն, ինչ հնարավոր է անել հիմա։

— Էհ, տղաս, լավ կլիներ, որ դու պատանյակ մնայիր մինչև վերջ։

— Ինչո՞ւ, մայր իմ։

— Ես ուժ կունենայի քեզ փակել տանը և թույլ չտալ, որ դիշերով դուրս գաս դղյակից։

— Վերջապես դու համոզվեցիր, որ ես պատանյակ չեմ։ Հիմա հույս կա, որ դու կասես հորս գանձի տեղը։

— Կարծեմ դու չափն էիր ուզում։

— Այո, մայր իմ, նախ՝ չափը։

— Ես քեզ կարող եմ ասել, թե ինչի տեր ես դու։

— Դա էլ մի բան է, մայր, ասա լսում եմ։

— Հավանաբար դու ավելի հարուստ ես, քան Պերոզ արքան։

— Դու Պերոզի գանձապետը չես եղել, մայր, որտեղի՞ց գիտես, թե նա ինչ ունի, որ ինձ նրանից հարուստ ես համարում։

— Ինքդ էլ այդպես կասես, եթե տեսնես քո աչքով։

— Դա նշանակում է, որ դու որոշել ես ցույց տալ հորս գանձը։

— Ոչ, տղաս, ես դա կանեմ այն ժամանակ, երբ դու համոզես ինձ, որ զգում ես այդ ոսկու կարիքը։

* * *

Վանա լճի հյուսիսային կողմում, Բզնունյաց ու Խորխորունյաց գավառների սահմանագլխին Նազանք լիճն է։ Գեղազարդ ու հարսնապաճույճ է իր անվան պես, նազանքով օրոր-շորոր անող կոհակներով։ Ափերին՝ թփերի ու ծառերի վրա արագիլների բներ են։ Աշխարհում ոչ մի տեղ այնքան արագիլ չկա, որքան Վանա ու Նազանք լճերի ափերին։ Ասում են ջրհեղեղից առաջ Վանա ու Նազանք լճերի տեղում հաստաբուն մայրիներ էին աճում, որոնց ճյուղերի վրա բնադրում էին արագիլները։ Երբ ջրերը բարձրացան մինչև Մասիսի կատարը, արագիլները վեր սլացան և հարյուր հիսուն օր նախրում էին իրենց բնօրրանի երկնքում՝ երկյուղելով, որ կկորցնեն տան ճամփան։ Ջրերն իջնելուց հետո արագիլները տեսան, որ ծանոթ մայրիների տեղում առաջացել են Վանա ու Նազանք լճերը։ Այդ պատճառով էլ երկնքից արագիլների միայն մի մասն իջավ իր բնօրրանը, մյուսները թռան հայրենիք որոնելու ուրիշ տեղ։

Գագիշո Խորխորունին Արագիլ է կոչել Նազանքի արևմտյան ափին կառուցված իր ամրոցը։ Ահագնասաստ կերպարանք

ուներ սևաթույր քարերից շինած բազմաշտարակ բերդը, որի ներսում և չորս կողմերում տնկած բարձրահասակ նոճիների վրա ոչ մի արագիլ բույն չէր դնում։ Թվում էր, թե արագիլները փախչում էին սևահոգի Գագիշոյից ու նրա սևասքեմ ամրոցից։ Զարմանալի է, Նազանքի բոլոր ափերը արագիլների տիրույթն էր, բացի Արագիլ ամրոցը։ Հայրենիք են կորցնում ոչ միայն մարդիկ, այլև թռչունները։

Մառայլ էր նաև ամրոցի ներքինը։ Սև լռություն կար նրա խցերում, օրերով չլսվում մառաններ դռները։ Գագիշոն գինի էր խմում այն օրը, երբ նրան հյուր էր գալիս Վարազշապուհ Ամատունին։ Վերջինս էլ իր սովորության համաձայն Արագիլ ամրոց էր մտնում միայն գիշերները։ Սակայն մի անգամ Վարազշապուհը Գագիշոյի ամրոց հասավ կեսօրին։

— Քո օրը ցերեկով հայտնվելը ձախորդության նշան է, տեր Ամատունի,— ասաց Գագիշո Խորխորունին, առանձնանալով համախոհի հետ։

— Այո, Գագիշո, մեր գործերն աջ չեն գնում, Պերոզ արքան համարյա չի հավատում մեր խոսքին։ Այս անգամ էլ մենք չկարողացանք Վահան Մամիկոնյանի հախից գալ։ Տիզբոնից ոսկեհատը վերադարձել է ողջ և առողջ։

— Անհավատալի է։

— Բայց իրողություն է, նա արդեն Դվինում է։

— Պերոզը նրան չէր արձակի հենց այնպես։

— Հենց այնպես չի արձակել։ Ես նամակ ստացա Վրիվից։ Նա գրում է, թե Վահան Մամիկոնյանը խորամանկեց, առերես ուրացավ իր կրոնը և ընդունեց պարսից հավատը։ Վրիվը հայտնում է, որ ես ու դու պետք է զգույշ լինենք, որովհետև Վահան Մամիկոնյանը կարող է արքայի անունից ձերբակալել տալ մեզ։

— Ա՜հ, ահա թե ի՞նչ ստացվեց վերջը։

— Մի վհատվիր, Գագիշո, ոչ մի Մամիկոնյան ոչ կրակ է պաշտել, ոչ էլ պարսիկ է դարձել։ Չի դառնա նաև այս Վահանը։ Ոսկեհատը Պերոզի աչքի լույսը չէ։ Այս գիշեր մենք թուղթ կգրենք և արքայի հոդում կկաթեցնենք թույնի զորավոր մի կաթիլ։

— Ի՞նչ պիտի գրենք։

— Հայք վերադառնալու ճանապարհին, Ջուղայի մոտ,

հենց երասխի ափին, Վահան Մամիկոնյանը հրամայել է ատրուշան վառել և...

— Եվ ի՞նչ։

— Պարսկական ատրուշանի վրա հայկական խորոված է արել։

— Ինչպե՞ս իմացար այդ մասին։

— Նրան ուղեկցող զորականներից մեկը հայտնեց ինձ։

— Նամակ գրելուց բացի ուրիշ էլ ի՞նչ պիտի անենք։

— Շատ բան, Գադիշո։ Առածն ասում է՝ խորամանկը երկու ոտքով է թակարդի մեջ ընկնում։ Ափսոս, որ Վահան Մամիկոնյանի համախոհների զորաթևում մենք մարդ չունենք։ Դու ասացիր, թե Թեժի համար փեսացու ես գտել, որը նրանց կողմից է։ Ո՞ւր է այդ փեսացուն, նրան պիտի հոտոտել սովորեցնել։

— Ինքս էլ չգիտեմ, Վարազշապուհ։ Հինգ-վեց ամիս է, ինչ ես այդ աղջկին չեմ տեսնում։

— Բայց նա անելիք ունի, Գադիշո։

Հենց նույն օրվա երեկոյան խորխոռունին մտավ Թեժի նընջասենյակը։

— Ասա ինձ, դստրիկս,— խոսեց հայրը,— որտե՞ղ է Ատատը։

— Չգիտեմ, հայր։

— Այր ու կին չդարձած դուք արդեն խոսվե՞լ եք իրարից։

— Մենք չենք խոսվել։

— Ինչո՞ւ վերջերս նա չի երևում մեր ամրոցում։

— Չգիտեմ, հայր։

— Իմաց տուր՝ թող նա երևա, ես ուզում եմ զրուցել նրա հետ։

— Եթե նա ինքը չերևա՝ ես նրան իմաց տալ չեմ կարող։

— Իսկ ե՞րբ կերևա։

— Չգիտեմ, հայր, չգիտեմ։

Գադիշոն նախատինք չկարդաց աղջկա գլխին, բայց Թեժի հայացքում որսաց խորհրդավոր մի բան։ Նա գլխի ընկավ, որ Ատատը Արագիլ ամրոցում չի երևում Թեժի ցանկությամբ։ Հանկարծ խորխոռունուն թվաց, թե ինքն արթնանում է երկարատև քնից։ Մի՞թե չի կարող պատահել, որ այնքան սիրելի դուստրը գործի հոր դեմ։ Ինչ ասես, որ չի լինում։ Հակառակորդներ են ծնվում նաև նույն արգանդից։

Մի քանի օր անց Գադիշոն նոր աղախին վարձեց։ Առույգ,

նիհար ու աբգաշարժ, քառասունն անց կին էր, անունը՝ Շյուղ։ Հենց առաջին օրը նախարարը նրան երկու ոսկի նվիրեց։ Իր ամբողջ կյանքում Շյուղն այդքան փող չէր վաստակել։ Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչի համար է այդ վարձատրությունը։ Գուցե նախարարի միտքը ծուռ է։ Սակայն ժամանակն անցնում էր, բայց Գադիշոն ծուռ աչքով չէր նայում Շյուղին։

— Դու պետք է իմանաս, թե Թեժն ո՞ւմ հետ է հանդիպում և ինչ է խոսում, բայց դա պիտի անել զգուշորեն ու աննկատ,— պատվիրեց Գադիշոն երկու շաբաթ անց։

Շյուղը փորձեց իր շողոմ լեզվով մտերմության եզրեր գտնել օրիորդի հետ։ Դա չհաջողվեց։ Եվ աղախինը ստիպված էր լռելյայն, սովերի պես հետևել Թեժին։ Շուտով Շյուղը նախարարին իմաց տվեց, որ Թեժը յոթ օրը մեկ հանդիպում է Ատատին։

— Որտե՞ղ է հանդիպում,— հարցրեց Գադիշոն։

— Հենց մեր ամրոցի կողքին, լճափի խոժոռ քարայրում։

— Ատատն ինչպե՞ս է իմաց տալիս Թեժին, որ սպասում է խոժոռում։

— Դա համարյա անհնար է կռահել, ինձ հաջողվեց իմանալ պատահաբար։ Քարայր տանող արահետի եզրին տափարակ մի ժայռաբեկոր կա։ Հենց որ Ատատը հասնում է այստեղ՝ երկու փոքրիկ քար է դնում այդ ժայռաբեկորի վրա։ Ամեն օր զրոսանքի գնացող Թեժը աչքը տնկում է ժայռաբեկորին, հենց որ նրա վրա զույգ քար է տեսնում, վերցնում է դրանցից մեկը և շտապում դեպի քարայր։ Թեժն այնտեղ մնում է մոտ մի ժամ։ Ես չգիտեմ, թե նրանք ինչ են անում այնտեղ և ինչի մասին են խոսում։

Գադիշոն մնացածը շարունակեց առանց Շյուղի։ Հավատարիմ զորականներից մեկին պահակ կարգեց խոժոռ քարայր տանող արահետի եզրին։ Մի քանի օր հետո զորականը նկատեց Ատատին և անմիջապես իմաց տվեց նախարարին։ Գադիշոն ժայռաբեկորի վրայից վերցրեց փոքրիկ քարերից մեկը և արահետով իջավ քարայրի մուտքի առջև։

— Ողջույն, Ատատ, ես զարմանում եմ, որ դու այստեղ ես հանդիպում Թեժի հետ, չէ որ ես իմ ամրոցի դարպասները երբեք չեմ փակել քո առջև, դե դուրս արի, ամոթ է,— ձայնեց Գադիշոն։

Քարայրից ոչ ոք չարձագանքեց նրան։ Զորականը Գադիշ-

ջոյի հրամանով ներս մտավ մթապատ խոժոռը ու սկսեց կանթեղի լույսով նայել բոլոր անկյունները։

Քարայրում ոչ ոք չկար։

Խորխոռունին զայրույթից ուտում էր իրեն։ Նա հասկանում էր, որ Շյուղն ինչ-որ բան կիսատ է նկատել։ Ամեն անգամ Թեժը ժայռաբեկորի վրայից զույգ քարերից մեկը վերցնելուց հետո՝ մոտենում էր և ձեռքի քարը նետում այրի մուտքի առջև գտնվող ջրափոսի մեջ։ Դա նշան էր, որ ինքը միայնակ է գալիս և ոչ ոք չի հետևում իրեն։ Գադիշոն իր զորականի հետ խոժոռի մոտ է իջել առանց ջրափոսի մեջ քար նետելու։ Եվ Ատատը, ծուղակի մեջ չընկնելու համար, անցել է մուտքի քարի ետև և ճողոպրել։

Բայց ոչ այդ օրը, ոչ էլ հետո Գադիշոն այդպես էլ չիմացավ, թե Ատատն ինչպես ծլկեց քարայրից։ Դրանից հետո ոչ Շյուղը, ոչ էլ Գադիշոյի զորականը ժայռաբեկորի վրա զույգ քար չտեսան։ Փոքրիկ կենտ քարը մինչև վերջ էլ մնաց կենտ։

* * *

Գադիշո խորխոռունին որոշեց պատժել և Թեժին, և Ատատին։ Դատերը նա ասաց.

— Մի քանի օր հետո մեկնում եմ Տիզբոն։ Ես հազար թըշնամի ունեմ, որոնք կարող են իմ բացակայության ժամանակ ամրոց սողոսկել և վնասել քեզ։

— Դու ուզում ես ինձ հետդ Տիզբո՞ն տանել,— հարցրեց Թեժը։

— Ոչ, դստրիկս։ Ես քեզ կուղարկեմ իմ հավատարիմ բարեկամներից մեկի ամրոցը։

— Ո՞վ է։

— Դու նրան չես ճանաչում։ Մի քանի ամիս հետո ես կվերադառնամ Տիզբոնից և մենք նորից միասին կլինենք։

— Ես ե՞րբ պիտի մեկնեմ։

— Առավոտյան,— պատասխանեց Գադիշոն և զրույցն ավարտվեց։

Թեժը ներանձնացավ իր ննջասենյակում ու սկսեց խորհել։ Հայրն իրեն մեկուսացնում է։ Չասաց, թե ուր է ուղարկում։ Ինչ ամրոցում ուզում է՝ թող բանտի ինձ։ Միևնույն է, քարի տակ էլ լինեմ՝ Ատատը կգտնի ինձ։ Երևի պիտի տոկալ։ Հավանաբար կյանքում ավելի շատ տոկում են նրանք, ովքեր խորն են սիրում։

Հաջորդ օրը երկու զորականի ու մի սպասյակի ուղեկցությամբ Թեժը կառք նստեց և դուրս եկավ Արագիլ ամրոցից։ Շյուղը մնաց Գադիշոյի մոտ։ Իսկ Թեժը հեռանում էր նազանքի ափերից՝ չիմանալով, թե ուր է գնում։ Վերջապես օրիորդը շհամբերեց և սպասյակին հարցրեց.

— Ո՞ւր ենք գնում մենք։

— Բաանն,— առանց թաքցնելու պատասխանեց սպասյակը և շարունակեց,— Որոտ իշխանի ամրոցը Դու գյուղում է։ Ասում են դա ոչ թե ամրոց է, այլ հրաշալիք, թե դա ավելի գեղեցիկ է, քան Շամիրամի Կախովի պարտեզները Բաբելոնում։

— Բայց իշխան Որոտը մի քանի տարի առաջ է մահացել,— ասաց Թեժը։

— Այո։ Մենք հյուր ենք գնում նրա տիկնոջը՝ իշխանուհի Կամարային։

Թեժը Կամարային չէր տեսել։ Բայց չգիտես ինչու չէր ուզում ոչ նրան հանդիպել, ոչ էլ տեսնել Դուի հոյակապ դղյակ-ամրոցը։ Շատ կցանկանար, որ Ատատը հրաշագործ լիներ և հենց այս պահին հայտնվեր ու փախցներ իրեն։ Ապա Թեժն սկսեց իր երազանքի թևերով վեր բարձրանալ։ Փախցնելուց հետո՝ կգնան Տայքի լեռները։ Այնտեղ անտառներ կան, որոնց բացատներում կուչ եկած գյուղերի տեղը չգիտեն ոչ նախարարները, ոչ էլ արքաները։ Այստեղ էլ կամուսնանան և ութ երեխա կունենան, չորսը դուստր, չորսը՝ ուստր։ Ութերորդն անպայման տղա կլինի և նրա անունը կդնեն Գադիշո։ Հայր Գադիշոն կգա Տայք ու կյանքի վերջին տարիները կապրի դստեր, դստրայրի և թոռների հետ։ Այն ժամանակ բոլորովին, բոլորովին ուրիշ տեսակ այր կլինի Գադիշոն։ Թեժը շատ է ուզում, որ հայրը շուտ հասնի վաթսունին։ Ասում են վաթսունից հետո մարդիկ նորից են մանկանում, դառնում հայրենասեր։ Նույնիսկ օտարախոսները այդ տարիքում վերագտնում են իրենց մայրենին։ Հայր Գադիշոն էլ կափսոսա իր ապրած տարիների համար և կյանքը կսկսի նորից։ Իսկ մինչև վաթսունը՝ Գադիշոն չի գա Տայք։ Ինչ էլ լինի՝ Ատատը չի դառնա նրա համախոհը։ Եթե դառնա՝ Թեժը կհիասթափվի Ատատից։ Առայժմ նրանք հակառակորդներ են և իրար ձեռք չեն սեղմի։ Առածն ասում է՝ ոչ առյուծն աղվեսի որջ կմտնի, ոչ էլ աղվեսն՝ առյուծի։

Դու հասան հաջորդ օրվա երկրատես ժամին։ Կամարան Թեժին ընդունեց զսպված սիրալիրությամբ։ Մեծ սրահում, որի առաստաղը նման էր հովանոցաձև վեղարի, շարք էին կանգնել Կամարայի երեք տղաները, նաժիշտներ, սպասավորներ։ Հետո Կամարան ներկայացրեց իր տղաներին.

— Սա իմ ավագ ուստրն է, Նոյը, սա միջնակս է՝ Սորը։ Հորն անունը Սորսոր էր, կիսել ենք և կեսը տվել սրան։ Այս մեկն էլ կրտսերս է՝ Եղրը։

Թեժը ստիպված էր ձեռք տալ նրանց և ժպտալ։

Ապա Կամարան թևանցուկ արեց Թեժին և սկսեց ծանոթացնել նրան դղյակին։ Ամրոցի մեծ, քառահարկ շենքի արևելյան պատշգամբում տարածված էր վարդերի բույրը։ Ցուրաքանչյուր թուփ դրված էր գեղեցկահյուս զամբյուղի մեջ։ Շենքում շատ էին նուրբ բազրիքներով աստիճանները, որոնք տարբեր ձևեր ընդունելով վերին հարկի բոլորակ աշտարակները կապում էին ստորին հարկերի ու նկուղների հետ։

Հենց առաջին օրերին Թեժը նկատեց, որ Կամարան ուզում է ցուցադրել իր ազնվափայլ հանդերձները։ Հետո իմացավ, որ այրի տիկինն ունի չորս հարյուրից ավելի շրջազգեստ, որոնց մի մասը նրա հանգուցյալ ամուսինը կարել է տվել Կոստանդնուպոլսում։ Թեժն ակամայից հիշեց իր տատին, որն ասում էր, թե շատ հանդերձ ունեցող կինը չի կարող հանգիստ քնել։ Տատը չէր սիրում կարմիր կտորից կարված շրջազգեստը։ Նա համոզված էր, որ հավերը ածից կտրվում են այն ժամանակ, երբ անընդհատ կարմիր են տեսնում։ Իսկ այս Կամարայի հանդերձների մեծ մասը բոսորավուն է։

Գադիշոյի մարդիկ Թեժին թողեցին Դուում, իրենք վերադարձան Արագիլ։ Նաղանքի ափերին կյանքը շարունակեց մնալ այնպիսին, ինչպիսին առաջ էր։ Գադիշոն չէր էլ մտածում Տիզբոն կամ որևէ այլ տեղ գնալու մասին։ Նա մտադիր էր ծուղակ սարքել և հանկարծակիի բերել Ատատին։

— Նա կերևա,— ասում էր Գադիշոն ինքն իրեն,— կերևա և եղունգներով կճանկռտի իմ ամրոցի որմերը։

Սակայն Ատատն այլևս չերևաց Նաղանքի ափերին։ Բագավանի ուխտավորներից մեկը նրան հայտնեց, որ Թեժին տեսել է Բասեն տանող ճանապարհի վրա։ Ատատը գլխի ընկավ, որ Գադիշոն Թեժին թաքցնում է իրենից։

Թեժը չէր կարող Որոտ իշխանի ամրոցից նամակ ուղարկել

Բագավան։ Նա գիտեր, որ բոլորը հետևում են իրեն։ Նրա համար գարշելին Կամարայի վարսահարդարն էր, որը փորձում էր սրտամոտ զրույցի բռնվել։ Տարիքն առած այս կինը հագնում էր կարճ աղվեսենի, որը նրա իրանի կեսը հազիվ էր ծածկում։

— Բոլոր այրերը իգատենչ են,— ասում էր վարսահարդարը,— եթե նրանք չեն նկատում որևէ կնոջ, ապա մեղավորը այդ կինն է։ Տղամարդը կնոջը նայելիս նախ նրա վարսերն է տեսնում, հետո կնոջը։ Կինն սկսվում է վարսեր հարդարելուց։ Գեղեցիկ վարսահյուսքը առաջին խայծն է տղամարդուն խելքահան անելու համար։

— Իսկ ես չեմ ուզում դուր գալ որևէ մեկին,— ասում է Թեժը,— ջանալով վերջացնել իր համար անհաճո զրույցը։

— Իզուր,— շարունակում է վարսահարդարը և իր մաքերը ավելի հեռուն քշում,— կինն աշխարհ է գալիս միայն նրա համար, որպեսզի դուր գա ու փաղաքշի տղամարդուն։ Մենք պետք չենք ուրիշ բանի համար։ Կանայք կան, որոնք իրենց գեղեցկությունը ոչ մի տղամարդու քիմքին դեմ չտված ետ են տանում աշխարհից։ Դա հիմարություն է։ Դու գեղեցիկ ես՝ քանի դեռ ապրում ես, մահից հետո սկսում են փտել և մաղերը, և այտերը, և աչքերը, և շրթունքները։ Տղամարդու աչքից չի կարելի թաքցնել ոչ վարսերը, ոչ ժպիտը։ Ոչխարը գեղմով է լավ, կինն էլ՝ իր վարսերով։ Իսկ քո մաղերից կարելի է հիասքանչ խոպոպիկներ սարքել։

Թեժը որոշում է շարձագանքել նրան։ Թող խոսի մինչև հոգնելը, մտածում էր նա։

* * *

Ամեն օր Մասիսի լանջերից չորս գարուն է իջնում Տափերական դաշտ։ Այստեղ ձմռան ամենացուրտ օրվա մեջ էլ մի քիչ գարուն է լինում։ Դվին քաղաքին մերձ Բագրատունյաց դղյակում գարունը պատշգամբից պատշգամբ է անցնում ծաղկամանների հետ։ Ասպետ Սահակին թվում էր, թե Տափերական դաշտը քնքշանքով է լցվում և տարին բոլոր գարուն բուրում իր մոր՝ տիկին Մագաղաթի թովչանքով։ Մայրն ամեն առավոտ իր աղոթքն սկսում էր՝ հայացքը Մասիսին ուղղած։

Աշխարհատես բոլոր արշալույսները Մասիսի վրա են բացվում, հետո բեկվում լուսափնջերի և պերճապայծառ առավոտնե-

բով լցնում հայոց ձորերն ու հովիտները։ Մասիսի կատարին են իրենց մի ոտքը դեմ տալիս նարոտափայլ ծիածանները։

Մասիս է կոչվում նաև հայոց բոլոր ամիսների տասնութերորդ օրը։ Ասպետի մատենադարանում կա քաղդեերեն մի հնախոսարան, որտեղ այդ մասին գրված է. «Աշխարհում հալվում ու փոշի է դառնում այն ամենը, ինչ չի արժանանում սիրո ու գուրգուրանքի։ Կանէանա նույնիսկ աշխարհապահ Մասիսը, եթե մարդիկ ու աստվածները չպաշտեն նրան։ Այդ մասին հայտնեցին Բելին հաղթող Հայկին։ Եվ Հայկն ասաց՝ թող հայոց գուսանները ամսվա մեջ մի օր փառաբանեն Մասիսը։ Պիտի պահել Մասիսի սեգ բարձրությունը։ Հենց որ Մասիսը հավասարվի աշխարհին՝ կհնչի նաև աշխարհին հրաժեշտ տալու հայոց ժամը։ Հայերը կատարեցին Հայկ նահապետի պատվիրանը և մի ամբողջ օր երգ ու նվագով թնդացրին Մասիսի փառքը։ Դա Արեգ ամսվա տասնութն էր։ Հետո Մասիսատոն սարքեցին ու Մասիս կոչեցին բոլոր ամիսների տասնութերորդ օրը։

Սահակը զարմանում էր։ Հետագայում մարդիկ ինչպե՞ս հանդգնեցին մոռանալ Հայկի պատվիրանը։ Ինչ է, խե՞նթ են այս հայերը։ Մի՞թե չեն տեսնում Մասիսը։ Ինչո՞ւ այլևս չեն տոնում Մասիսատոնը։ Գուցե դրանից է սկսվում մեր ձախորդությունը։ Արքաները տարվեցին ականակուռ թագերի փայլով ու մոռացման իրենց առհավատյան հնատարիք լեռան հանդեպ, որը անպարուրելի է աշխարհի բոլոր տեսածիրներից։

Պետք է ուշքի բերել աստվածասպան ու մոռացկոտ ազգին։ Ես կվերսկսեմ Մասիսատոնը՝ մեր վաղագույն գուսանախմբությունը, որոշեց Սահակը և սկսեց նախապատրաստվել։ Սուրհանդակներ ուղարկեց Հայքի բոլոր կողմերում ապրող գուսանների ետևից և հրավիրեց նրանց Դվին։

Նավասարդ ամսի Մասիս օրը Բագրատունյաց դղյակի մերձակայքը նմանվեց բանակատեղիի։ Ձէր երևում վրանների ստվար շարքերի ծայրը։ Ասպետը բոլորի համար օթևան էր պատրաստել։ Եկել էին մոտ ու ծայրակալ գավառներից։ Երևի ոչ մի արքայի օրոք գուսանների այսպիսի բույլ չէր մեկտեղվել։

Պայծառ առավոտ էր։ Մասիսն իր գլխից հանել էր ամպե ապարոշը և նմանվում էր առագաստ մտնող հարսի։ Տափերական դաշտը լցված էր ծաղիկների, սիրո, արեգակի բույրով, ծղրիդների սրտահաճ ճռվողյունով։

Ահա հնչեցին ազդարար փողերը, լիսլիկացին պղնձե բոլ-

ժոները։ Հանդարտաքայլ գնացքով ամենքն սկսեցին մոտենալ հանպատրաստից բեմ-պատվանդանին, որի կողքին, բարձրադիր նստարանների վրա բազմել էին Սահակ Բագրատունին, Վահան Մամիկոնյանը, տիկին Մագաղաթը, Բագրատունի և Մամիկոնյան դերդաստանների երևելի այրեր, գեղեցկապարանոց օրիորդներ և փափկասուն տիկնայք։

Տոնախմբությունն սկսելուց առաջ առանց հրամանի ու փող փչելու մարդիկ հայացքները դարձրին դեպի Մասիսը, չոքեցին գետնին, գլուխները խոնարհեցին, խաչակնքեցին երեսներին և ելան տեղներից։

Հետո բեմ բարձրացան գուսանները։ Հնչեցին փանդիռները և շրջապատը լցվեց քաղցրաթով հնչյուններով։ Նվագին հաջորդեց երգը։ Մի ծեր գուսան, որ եկել էր գինևետ Գողթանից, իր գողտր ձայնով փառաբանեց Մասիսը՝ ասելով, թե Հայոց տան հենասյունը ավելի ծեր է, քան ժամանակը։

Գողթանցուն փոխարինեց շիրակացի մի գուսան։ Ձայնեղ շիրակացին սկսեց նմանակել։ Սկզբում թվաց, թե ոչ թե մարդ է երգում, այլ Գինա գետակն է գլգլում Մասիսի լանջին։ Ապա նրա ձայնը դարձավ բամբ՝ նման հրաբուխի հեռավոր որոտմունքի։ Կարծես դրանից հետո պիտի Մասիսի կրծքին պատռվածքներ ու վիհեր առաջանան։ Հետո հրաշունչ ձայնին փոխարինեց սիրատենչ մի մեղեդի, որ մեղմ հովի պես լեռան կատարից իջավ դեպի ստորոտ։

Նմանակողից հետո բեմի վրա երևացին երկու ասացողներ։ Մեկը բարձրահասակ էր, մյուսը՝ կոտակ, ոնց որ Մասիսն ու Սիսը։

— Իմ անունը Ցորենիկ է,— ասաց բարձրահասակը։

— Իսկ իմը՝ Օշին,— արձագանքեց կոտակը։

— Ես Ճակատք գավառից եմ։

— Իսկ ես՝ Արցախի Պարզկանք գավառից։

Հետո սկսվեց հարց ու պատասխանը։

— Ի՞նչ սար կա Մասիսից բարձր,— հարցրեց Օշինը։

— Մասիսից բարձր սար չիք,— պատասխանեց Ցորենիկը։

— Իսկ ո՞ր փարավոնի բուրգն է մրցում Մասիսի հետ։

— Ոչ մեկը։ Նույնիսկ Փոքր Մասիսը, որ Մեծ Մասիսի մոտ գաճաճ է երևում, եգիպտական ամենաբարձր բուրգից բարձր է երեսուն անգամ։

— Ինչի՞ց է հյուսված Մասիսի զանգվածը։

— Միրանաքարից։

— Ուրիշ ի՞նչ տեսակ քար ունի մեր լեռը։

— Խստաքարը, որ ավելի լավ է հղկվում, քան Արագածի լանջերի գլաքարը։

— Փոքր Մասիսի վրա ի՞նչ ծառ է աճում։

— Բարդի։

— Ո՞վ է տնկել այդ ծառն այնտեղ։

— Արա Գեղեցիկի կին Նվարդը։

— Ի՞նչ ծառ կա Մեծ Մասիսի լանջին։

— Գիհի։

— Ո՞րն է քո ամենասիրելի թիվը։

— Տասներկուսը։

— Այդ դեպքում ասա անունները տասներկու այն բույսերի, որոնց կարելի է հանդիպել Մասիսի լանջերին։

— Ասաղածաղիկ, տերեփուկ, կապուտիկ, կանթեղնիճ, քարհերձուկ, համասպրամ, կոտեմ, ճարտարուկ, իշառվույտ, հրանունկ, սագախոտ, ղանդակածաղիկ։

— Հիմա էլ թվարկիր մասիսաբնակ տասներկու կենդանու անուն։

— Այծքաղ, առն, աղվես, կուզ, նապաստակ, այծյամ, արջ, լուսան, արագիլ, ճայ, կարապ, բադ։

— Դեղին, սև ու նարնջագույն թևերով այն ի՞նչ թիթեռ է, որ միայն Մասիսի լանջերին է թռչում, և որն ունի երկու անուն։

— Այդ թիթեռը մաքավոնն է, որին ասում են նաև ծիծեռնագի։

— Քանի գյուղ կա Մասիսի լանջին։

— Միայն մեկը՝ Ակոռին, որ հայտնի է իր հրաշալի այգիներով ու մեղրով։

— Մեղուները երբ և ինչպե՞ս փրկեցին Ակոռին։

— Հազար տարի առաջ պարսկական մի զորաբանակ մոտենում է Ակոռին, հուսալով, որ այնտեղ կգտնի քառասուն ձիաբեռ ոսկի։ Ակոռեցիները նկատելով լանջերն ի վեր բարձրացող թշնամուն՝ այսպես արեցին։ Նրանք վերևից մեղվի մի քանի քթոցներ բաց թողեցին, որոնք գլորվելով ներքև՝ խուճապի մատնեցին թշնամուն։ Գազազած մեղվաճանճերը դուրս թռչելով քթոցներից սկսեցին խայթել պարսիկ զորականներին, որոնք ահից ու ցավից իրենց դեմքերը գետնին էին քսում։ Հենց այդ

ժամանակ էլ ակոռեցիները իջան ու գերեցին գլուխները կորցրած բոլոր պարսիկներին։

Մի պահ լռություն տիրեց և ասացողները բեմի վրա փոխեցին իրենց տեղերը։ Այժմ պիտի հարցեր տար Ցորենիկը։

— Ի՞նչ ձև ունեն Մասիսի ու Սիսի գագաթները։

— Թամբարդ,— պատասխանեց Օշինը։

— Քանի՞ տեսակ արու այծ կա մեր աշխարհում։

— Երեք՝ նոխազ, քազ, բզաք։ Նոխազը ներին է, որ առաջնորդում է այծերի հոտն այնպես, ինչպես ոչխարների համար խոյը։ Բզաք է կոչվում կրտած այծը։ Իսկ քազ ասում են և նոխազին և բզաքին, նաև այն արու այծին, որ ոչ ների է, ոչ էլ բզաք։

— Ի՞նչ է աշունը։

— Տարվա շաբաթանը։

— Ո՞րն է մարդու արթմնի քունը։

— Հույսը։

— Քանի՞ տեսակ մարդ կա աշխարհում, որոնք չեն կարող հանգիստ քնել։

— Երեք՝ ագահը, ավազակը և մատնիչը։

— Հանգիստ ապրելու համար ի՞նչ պիտի անի մարդ։

— Պիտի քիչ խոսի, շատ լսի և ոգետի դիմաց լոի։

— Ի՞նչը կարող է մեծացնել մարդուն և դարձնել նրան հռչակավոր։

— Երեք բան՝ սուր հիշողությունը, գործունյա կամքը և սուր միտքը։

— Ո՞վ է եղել Հայկ նահապետի պապը։

— Թիրասը։

— Ի՞նչ է ասել նա Մասիսի մասին։

— Եթե դու Մասիսը չես տեսել, ուրեմն ոչ մի սար էլ չես տեսել։

— Ալեքսանդր Մակեդոնացու հայր Փիլիպոս արքան ի՞նչ պատգամ է տվել որդուն։

— Ով որ առանց պակասության բարեկամ փնտրի՝ առանց բարեկամի կմնա։

— Ամենից շատ ո՞ւմ է պետք սեղմ խոսքը։

— Առակախոսին։ Բայց բոլոր մարդիկ էլ սեղմ խոսքի կարոտ են զգում՝ և առակասացը, և շինականը, և նախարարը, և արքան։

— Մի առակ ասա։

— Մի իմաստուն գնում է աստծու մոտ և հարցնում. «Ինչո՞ւ են մարդիկ իմաստուն դառնալու կեսճանապարհին մնում»։ Աստված պատասխանում է. «Գնա և ասա մարդկանց, թող իրենց իմացած տասը բանից միայն հինգի մասին խոսեն»։

— Մարդիկ ի՞նչ են անվանում կովից փախչողին։

— Կապարճադարձ։

— Իսկ Մասիսը չերկրպագող հայի՞ն։

— Ուրացող։

— Իսկ կա՞ աշխարհում մեկը, որը չցանկանա հիանալ Մասիսի վեհությամբ ու գեղեցկությամբ։

— Այդպիսինը կամ պիտի կուզ լինի, կամ ինձնից էլ ցածր հասակով մի կոտակ,— ասաց Օշինը։

Ցորենիկն ու Օշինը վերջացրին իրենց ասելիքը և սկսեցին հուշիկ քայլերով իջնել բեմից։ Ամբոխը ծափողջունեց նրանց և գոչյուններ արձակեց, որ կիսատ բավարարվածության նշան էր։ Մարդիկ կցանկանային, որ Օշինն ու Ցորենիկը շարունակեին իրենց հարց ու պատասխանը։

Հավաքվածները, սակայն, հենց որ բեմի վրա տեսան շիկավարս վարձակին՝ խսկույն մոռացան և Օշինին, և Ցորենիկին։ Վարձակը մի քանի սահուն ու նազելի շարժումներ արեց, ապա սկսեց պարել կաքավիչի[1] նման։ Նրա բոցափայլ հայացքում և բաղձալի գորով կար, և բուռն ու շռայլ սեր։ Կամաց-կամաց մեղմեց պարը և նրա կրծքից ծորեց անուշ երգը, որի հնչյունները սփռվելով գալիս ու մտնում էին մարդկանց սրտերը։ Եվ դրանից էլ մարդիկ զգում էին սկզբական սրտի բաբախյունը։ Իսկ վարձակը շարունակում էր իր երգը։ Նա ասում էր, որ սերը անուրջ է, խանդաղատանք ու գորով, պապակ սրտի համար ջուր։ Մարդու մեջ հազար բան է փոխվում ու նորոգվում, հազար բան է մոռանում մարդն իր ճանապարհին, բայց վարար է պահում սիրո ակունքը։

Վարձակի ականջների բլթակները կարմիր են կորում։ Նա հանդիսավոր քայլերով հեռանում էր բեմից՝ մարդկանց թողնելով առասպելապատում սիրո պերճանքը։ Նա հեռանում էր մարդկանց հայացքից ինչպես աշխարհաշեն սիրո մարող ներքոր։

Հետո նոր դուսաններ նկույթ ունեցան։ Մեկը ներբգույն,

[1] Կաքավիչ — պարող կին։

մյուսն իր հեզ ու չափավոր ձայնն էր ցուցանում։ Օդը լցվել էր հույզերով, գեղեցիկ ու անստվեր պատումներով, բորբոք սիրով։

Ասպետն այդքան երջանիկ օր չէր ապրել։ Արտասովոր հուզմունքից նա գիշերն էլ չկարողացավ քնել։ Հաջորդ օրը հրաժեշտ տալուց առաջ, իր ձեռքով վարձատրեց բոլոր դուսաններին ու ասացողներին։

Դեռ Բագրատունյաց դղյակից չհեռացած՝ Օշինը հանդիպեց Ցորենիկին ու ասաց.

— Ի՞նչ տվեց քեզ ասպետ Սահակը։

— Տասներկու ոսկի,— պատասխանեց Ցորենիկը։

— Այդքան էլ ինձ է տվել։ Ամենքն էլ նույն թիվն են ասում։ Հավատալս չի գալիս։ Դուսան են եղել և իմ հայրը, և իմ պապը։ Նրանք երկուսով իրենց ամբողջ կյանքում այսքան փող չեն վաստակել։ Դե, արդար եղիր, Ցորենիկ, չէ որ մեր ասելիքն ու երգը այսպիսի գին չունի։

— Երևի ունի, Օշին։

— Չունի, Ցորենիկ։

— Ասպետ Սահակը ոսկու գինն ավելի լավ գիտե, քան ես ու դու։

— Գուցե նա սխալվել է։

— Ոսկու հաշվի մեջ հազվադեպ են սխալվում։

Օշինն, այնուամենայնիվ, չհամբերեց և ճեպով գնաց ասպետի մոտ։ Շփոթվեց ու չկարողացավ ոչինչ ասել։ Կարծես նրա լեզուն կապ ընկավ։ Հետո հիշեց, թե ինչի համար է ասպետի մոտ եկել և դրպանից հանեց ու ոսկիները մեկնեց Սահակին։

— Դա քո վարձն է, ինչո՞ւ ես ուզում ետ տալ,— հարցրեց Սահակը։

— Հայոց աշխարհում ոչ մի դուսան այսպիսի վարձատրություն չի ստացել ոչ հիմա, ոչ էլ հազար տարի առաջ,— ասաց Օշինը։

— Ես գիտեմ դա,— հանգիստ խոսեց Սահակը։— Եվ իզուր ես կարծում, թե շփոթվել եմ կամ սխալվել։ Մասիսի զովքը և հայերեն երգն ու խոսքը ավելի թանկ արժեն, քան տասներկու ոսկին։

***

Բագավանից դեպի արևելք, Նպատ լեռան թիկունքում Ճրագնավորի քարայրն էր։ Այստեղ էր ապրում գուշակ Կուկը։ Ոչ ոք չգիտեր, թե նա միայնակ ինչպես էր ապրում ծերպերի մեջ։ Չգիտեին նաև որտեղացի է, քանի տարեկան է, ինչ կերպարանք ունի։ Մոտենում էին Ճգնավորի մուտքին, հարցեր տալիս, ստանում պատասխանները, հետո վարձը դնում մուտքի առջև ու հրաժեշտ տալիս նրան։ Ասում են Կուկը մարգարեի պես գուշակում էր մարդկանց ապագան։

Գուշակի մոտ գնաց նաև Ատատը։

— Բարև, Կուկ։

— Բարին ընդ քեզ, երիտասարդ,— պատասխանեց գուշակը։

— Իմ անունը Ատատ է, ես քսանից դուրս եկել դեպի երևանն եմ գնում։

— Իսկ ես, ընդհակառակը, վաթսունից իջել՝ դեպի քսանն եմ գալիս։

— Զարմանալի է, Կուկ, մի՞թե մարդիկ կարող են ետ դառնալ, մի՞թե մարդու անցած կյանքը ետդարձ ունի։

— Ես փորձում եմ ետ դառնալ։

— Իսկ ի՞նչ պիտի անես, երբ քսան տարեկան դառնաս։

— Դուրս կգամ այս մութ այրից և կսկսեմ վազել դաշտերով ու հովիտներով։ Եվ ճամփաներից մեկում կհանդիպեմ քեզ։

— Իսկ մինչ այդ կարո՞ղ ես օգնել ինձ։

— Իհարկե, Ատատ, եթե անկեղծ խոսես՝ ես կօգնեմ քեզ։

— Ես սիրում եմ մի աղջկա, որի անունը Թեժ է։

— Հայոց աշխարհում այդ անունն է կրում Գագիշո Խորխորունու դուստրը։

— Ես հենց նրան եմ սիրում։ Մի քանի ամիս է, ինչ նա չքացել է։ Նա ապրում էր հայրական Արագիլ ամրոցում, որ նազանք լճի ափին է։ Երբեմն հայրը մեկ-երկու ամսով նրան բերում էր այս կողմերը, Բախտատուրի մոտ։ Ես ու Թեժը սիրում ենք իրար։ Նրա հայրը մտադիր է խափանել մեր սերը, դրա համար էլ դստերը թաքցրել է իմ աչքից։ Ասա ինձ, Կուկ, որտե՞ղ կարող է լինել նա։

— Ատատ, դու ճանաչո՞ւմ ես իմաստասեր Մովսեսին, նա, որ հիմա դարձել է մեր՝ Բագրևանդի եպիսկոպոսը։

— Իհարկե, ճանաչում եմ։

— Իսկ ճանաչո՞ւմ ես այժմ տիկին դարձած այն աղջկան, որին երիտասարդ ժամանակ սիրել է Մովսեսը։

— Չեմ ճանաչում, Կուկ։

— Գագիշոն իր դստերը պահ է տվել այդ տիկնոջը։

— Իսկ դու չգիտե՞ս, թե ով է նա,— հարցրեց Ատատը։

Գուշակը չպատասխանեց։

— Կուկ, աղաչում եմ, ասա, ուրիշ ի՞նչ գիտես նրա մասին։

Կուկն այլևս չարձագանքեց։ Հավանաբար ուրիշ ասելիք չուներ։

Ատատը Ճգնավորի մոտից հեռացավ մտամոլոր։ Եթե այս Կուկը դուրս չի գալիս մարդկանց մեջ՝ որտեղի՞ց է ճանաչում Մովսեսին ու Գագիշո Խորխորունուն։ Դե արի գտիր այն աղջկան, որին սիրել է իմաստասերը և որը հիմա ուրիշի կին է դարձել։ Մի այդպիսի բան նա լսել է արեղա Արձանից, երբ Մովսեսին ուղեկցում էր դեպի Մանանագի։ Այն ժամանակ գնա Բասեն չհասած ճանապարհին մի տիկին հանդիպեց և դրույցի բռնվեց սրբազան հոր հետ։ Գուցե նա է եղել Մովսեսի սիրած աղջիկը։ Չէ, Ատատի իմացածը կիսատ-պռատ է։ Եթե չամաչեր՝ միանգամից կհարցներ Մովսեսին։ Բայց չէ որ ինքն ուրիշ անելիք չունի։ Առանց Թեժի ապրելը դժվարացել է, նրան թվում է, թե շնչասպառ է լինում։ Ասես ինչ-որ բան փակում է նրա բուկը և ուր որ է պիտի խեղդվի։ Իսկ ինչու այդ մասին չասել իմաստասերին, չէ որ նա սիրում է Ատատին։

Մտածեց, մտածեց ու հասկացավ, որ ուրիշ ելք չունի։ Գնաց և իմաստասերին պատմեց, թե ինչ է եղել։

— Կուկը հիմար մարդ չէ,— ասաց Մովսեսը։— Բայց խորամանկ է ու ճարպիկ։ Մեր ավանում նա մի ազգական ունի՝ Կաղ Մարկոսը, դու ճանաչո՞ւմ ես նրան։

— Իհարկե, սրբազան հայր, բրուտ Մարկոսին ո՞վ չի ճանաչում,— ասաց Ատատը։

— Հենց այդ Մարկոսը հարցուփորձում է սրան-նրան և ամեն ինչ հաղորդում Կուկին։ Մարկոսը կավե կուժ է պատրաստել այն կառապանի համար, որը Թեժին Արագիլ ամրոցից հասցրել է Դու։ Թեժի մասին կառապանն ասել է Մարկոսին, Մարկոսը՝ Կուկին, Կուկն էլ՝ քեզ։

Հաջորդ օրը Ատատը չափ գցեց իր նժույգը և հասավ Դու։

Տիկին Կամսարան սկզբում ունքերը կիտեց, երբ լսեց, որ Աստատին Մովսեսն է ուղարկել, բայց անմիջապես փոխվեց ու ինքն էլ նրան առաջնորդեց Թեժի սենյակը։ Բայց ներս չմտավ, որպեսզի չխանգարի սիրող սրտերի անկաշկանդ հանդիպմանը։

— Ես գիտեի, որ դու կգտնես ինձ,— ասաց Թեժը։

— Ինձ օգնեցին գուշակ Կուկն ու սրբազան հայր Մովսեսը։

— Շուտով կերևա հայրս, ուր որ է նա պիտի տուն վերադառնա։

— Որտեղի՞ց պիտի վերադառնա։

— Արդեն չորս ամիս է, ինչ նա Պարսից աշխարհ է մեկնել։

— Թեժ, քո հայրը ոչ մի տեղ էլ չի մեկնել։ Այս չորս ամսում նաղանքի ափերից նա չի հեռացել։

— Հայրս միշտ էլ խաբել է ինձ, ինչո՞ւ, ինքս էլ չգիտեմ։

— Փախչենք, Թեժ։

— Ո՞ւր։

— Գնանք այնտեղ, ուր մարդիկ մարդկանց չեն խաբում։

— Աշխարհում այդպիսի տեղ չկա, Աստատ։ Պիտի փորձենք լեռու գտնել հորս հետ։ Համբերիր։ Ամեն օր իր վերջն ունի։ Բայց վաղվա մեկն ավելի արժե, քան այսօրվա երկուսը։

* * *

Շիրակ գավառում, Անի ամրոցից հյուսիս, ծիծաղկոտ Թագավորածաղիկ գոգհովտում Կամսարականների Դպրևան ավանն էր։ Ջնայած անշքացել է ավանի հին ամրոց-դղյակը, բայց նրա տերը՝ Ներսեհ Կամսարականը, մտադիր չէ թողնել այն և ամրոց կառուցել ուրիշ տեղ։ Գեղեցիկ է Շիրակի այս անկյունը։ Եվ հետո, հին ամրոցում կա գմբեթավոր մի դահլիճ, որն ավելի սքանչելի է, քան Ջենոն կայսեր գահասրահը Կոստանդնուպոլսում։ Ճիշտ է, դահլիճի առաստաղը ճեղքվել է, բայց կնճիռներ ունեցող մայրն ավելի է քաղցրանում որդու համար։ Ներսեհի համար սա հարազատ տուն է։ Ճեղքը կարևոր չէ։ Հիմա Հայքի և բախտն է ճեղքված, և հանճարեղ Մասիսը։ Կամսարականների պորտը Դպրևանում է պնդացել։

Դպրևանում էր ապրում դպիր Ղազար Փարպեցին, որ Կոստանդնուպոլսում կրթություն ստանալուց հետո եկել էր Շիրակ և դարձել մանկահասակ Կամսարականների ուսուցիչը։

Մի անգամ Ներսեհ Կամսարականը Ղազար Փարպեցուն ասաց.

— Դու իսկապե՞ս տեսել ես Կոստանդնուպոլսի բոլոր գեղեցիկ կառույցները։

— Իհարկե, տեր Ներսեհ, ես տեսել եմ նաև հանրահռչակ Աթենքը,— պատասխանում է դպիրը, ապա կռահելով, թե Ներսեհն ինչ է ուզում իմանալ, շարունակում է,— շատ են մեծ ու շքեղաղարդ շենքերը և Աթենքում, և Կոստանդնուպոլսում։ Իրավ է, մեր գմբեթավոր դահլիճը ավելի փոքր է իմ տեսած դահլիճների համեմատությամբ, բայց ավելի գեղեցիկ է, քան նրանցից ամենագեղեցիկը։

— Բայց մերը ճեղք ունի, դպիր։ Ես ուզում եմ քարգործ վարպետներ հրավիրել և նոր ապարանք կառուցել, պատվիրելով, որ նրանք նմանակեն մեր գմբեթավոր դահլիճը։

— Աշխարհում ոչ մի բան չի նմանակվում, տեր Ներսեհ։

— Ինչպե՞ս թե։

— Այո, կարելի է նորը կառուցել, բայց այն նմանակ չի լինի, որովհետև ճեղք ունեն նաև բոլոր նմանությունները։

Ներսեհը կարծես անմիջապես հասկանում է Ղազար Փարպեցուն և այլևս հարցեր չի տալիս նրան։

Բոլոր Կամսարականներն էլ շատ են սիրում դպրին՝ իրենց ու Վահան Մամիկոնյանի մանկության ընկերոջը։ Եթե Ներսեհը հանդուրժեր՝ Սահակ Բագրատունին ու Վահան Մամիկոնյանը նրան վաղուց կտանեին Դվին։ Չէ, առանց դպիր Ղազար Փարպեցու Կամսարականների իշխանական տունը հմայք չի ունենա։ Դպիրը միայն ուսուցիչ չէ, այլ մարդու պերճապաճույճ միտքը արթմնի պահող։ Նա պերճախոսության դասեր է տալիս նաև Ներսեհի գեղանի քրոջը՝ օրիորդ Վանադուխտին։ Նազուկ իրան ուներ օրիորդը։ Նրա մրազարդ հոնքերը նմանվում էին լանջին կպած երկու կարճ պարանի։ Արդեն երկար ժամանակ է, ինչ նա իր աղջկական տարիքի եզրի վրա ետ ու առաջ է շարժվում։ Ամենքը գիտեն, որ Վանադուխտը ասպետ Սահակի սիրած աղջիկն է։ Վանադուխտն սպասում է ու չի դժգոհում։

Ղազարն սկզբում Վանադուխտի համար պերճախոսության նյութ էր ընտրում հելլեն իմաստասերների գրվածքները։ Ինքը թարգմանում էր հունարենից, իր ձեռքով գրում մագաղաթի վրա և տալիս օրիորդին։ Վանադուխտը ընթերցում էր այդ բոլորը, ապա մագաղաթները խնամքով պահում և ցույց տալիս Սահակին, երբ սա մեկ կամ երկու օրով Դվինից գալիս էր Դպրևան։

Խոսելով այդ մասին, Սահակը մի անգամ դպրին ասաց.

— Ղազար, ես կարդացի Վանադուխտին տված քո թարգմանությունները։ Իրավ է, գեղեցիկ են այդ հատվածական պատմությունները, բայց ավելի լավ կլիներ, եթե դրանք վերաձևեիր։ Այնտեղ ավելորդ մանրամասներ կան, որոնք անպատշաճ են պերճախոսությանը և պետք չեն Վանադուխտին։

— Պատմիչը չպետք է շտապումուռ տա ճշմարտությունը,— պատասխանեց Ղազարը։— Պետք է խոսքերի վայելուչ դասավորություն, ինչպես կանոնավոր գիտությունը պահանջում է, պատկառանքով ստույգը գրել, որ իմաստասերները լսելով չպարսավեն, չեղածը չավելացնել՝ խոսքը անտեղի երկարացնելու համար, չպակասեցնել եղածները և անփույթ խոսքերով կիսատ-պռատ պատմել, այլ բոլորը հրապարակ հանել բարեմիտ զգուշությամբ։

— Այդպես պիտի վարվել, եթե ինքդ պատմություն գրես,— ասաց ասպետը։— Բայց ինչ արած, գուցե դու իրավացի ես ընդհանրապես։ Իսկ եթե թարգմանելու փոխարեն Վանադուխտի համար ինքդ պատմություններ հորինես։

— Ի՞նչ պատմություններ։

— Հայոց կյանքից, հայկական գեղեցկախոսությունից։

Այս զրույցից հետո Ղազարն սկսեց հին-հին ասքեր որոնել։ Երկու ամիս անց Վանադուխտի համար նա գրեց առաջին զրույցը. «Հին ժամանակ Շիրակում երիտասարդ մի իշխան էր ապրում Թաթ անունով։ Ինքը գեղեցիկ էր, խոսքը՝ տգեղ։ Ինչ աղջկա հետ խոսում էր՝ բան չէր ստացվում։

— Մեր ինչի՞ն է պետք նրա գեղեցիկ դեմքը, մի կարգին խոսել չգիտե,— միաբերան ասում էին Շիրակի չմահավան աղջիկները։

Թաթը ճարահատյալ դիմում է իմաստունների օգնությանը։

— Իմ ունեցած ոսկու կեսը ձեզ՝ միայն թե մեկ ամսում ինձ ճարտասան դարձնեք,— պայման է դնում Թաթը։

— Դա մեր ուժից վեր է,— փորձում են առարկել իմաստունները։

— Ինչո՞ւ։

— Որովհետև ոչ մեկը չի կարող մեկ ամսում սովորել այն, ինչ ուրիշները սովորում են ամբողջ կյանքում։

— Հաստատվուխնե՞ր ու տխմարնե՞ր, ինձ թոթովախո՞ս եք կարծում, ի՞նչ է, պոռնկորդինե՞ր, ես այնպես կանեմ, որ դուք քնեք ազբանոցում։

Իմաստունները ահից պարտավորվեցին մեկ ամսում պերճախոս դարձնել Թաթին։ Բան դուրս չեկավ։ Զայրույթից նա դազազեց, սկսեց ճամարտակել ավելի անվարժ ու անվայելուչ։

Վերջապես որոշեց գնալ աստծու մոտ։ Շալակն առավ իր ոսկու պարկն ու ճամփա ընկավ։ Կեսօրին հասավ մի թզենու մոտ, որտեղից ճանապարհը երկատվում է։ Թզենու կողքին մի ծերունի էր նստել։ Թաթը դիմում է նրան և ասում.

— Է՛յ, ի՞նչ ես գլուխդ տմբտմբացնում, ասա ինձ, այս երկու ճամփաներից ո՞ր մեկն է տանում աստծու մոտ։

— Դու մոռացար բարի օր ասել, երիտասարդ,— պատասխանեց ծերունին։

— Վերցրու այս երկու ոսկին, մեկն իմ չասած բարի օրվա դիմաց, մյուսն էլ որպես վարձ աստծու մոտ տանող ճանապարհը ցուցանելու համար։

— Չէ, երիտասարդ, ինձ ոսկի պետք չէ։ Դու պետք է կատարես իմ պայմանը։

— Ի՞նչ պայման։

— Մի ամիս կնստես իմ տեղը և անցնող-դարձողի բարի օր ողջույնին կպատասխանես՝ աստծու բարին՝ խոսքերով։ Բայց պետք է այդ բառերն ասես մեղմ, հանգիստ, սրտանց, այնպիսի ավյունով, որ արձագանքդ ուժ տա հոգնած ճամփորդին ու վհատ անցվորին։ Մի ամիս հետո ես կերևամ և կասեմ, թե որն է աստծու մոտ տանող ճամփան։

Այս ասելուց հետո ծերունին անհետացավ։

Թաթը մի ամիս նստեց թզենու մոտ և առավ անցնող-դարձողի բարևը։ Երեսուներորդ օրը երևաց ծերունին և ասաց.

— Բարի օր, երիտասարդ։

— Աստծու բարին, բարի մարդ,— պատասխանեց Թաթը։

— Դու կարո՞ղ ես ասել, թե ո՞րն է աշխարհի ամենալավ խոսքը։

— Ողջույնին ողջույնով պատասխանելը՝ աստծու բարինը։ Ես ամբողջ կյանքում դա չեմ մոռանա։

— Դու կատարեցիր պայմանը, բռնիր ձախ կողմի ճամփան և գնա աստծու մոտ, հաջողությունն ընդ քեզ,— ասաց ծերունին։

Թաթը շարունակեց իր ճամփան։ Գնաց, գնաց ու դեմ առավ մի քերդաքաղաքի։ Այստեղից հետո մի ճանապարհը երեք էր

դառնում, ինչ իմանաս, թե որն է աստծու մոտ տանում։ Նա դիմեց բերդաքաղաքի տիրոջը։ Վերջինս ասաց.

— Իսկ դիմացն ի՞նչ կտաս։

— Տասը ոսկի,— պատասխանեց Թաթը։

— Չէ, ոսկին մեր աշխարհում գին չունի։ Ես իմ պայմանն ունեմ։

— Ի՞նչ պայման։

— Դու պետք է մի ամիս ծառայես ինձ մոտ։

— Իսկ ի՞նչ պիտի անեմ։

— Ամեն օր պիտի հանդիպես իմ տիկնոջը և ասես. «Այդ շրջազգեստի մեջ դու ավելի հմայիչ ես. աննման են քո նոր խոպոպները, դեմքդ էլ ծիծաղախիտ է»։

Թաթն ուտում ու խմում էր և օրվա մեջ մի անգամ հանդիպում բերդաքաղաքի տիրուհուն։ Զարմանալի կին էր, ոչ հրապուրիչ էր, ոչ անհրապույր։ Երևի բոլոր կանայք էլ այդպես են՝ հոգու խնդությունից հրապուրիչ են դառնում, տխրությունից՝ անհրապույր։

Թաթը ջերմագին բարևում էր տիրուհուն և ասում.

— Այդ շրջազգեստի մեջ դու ավելի հմայիչ ես. աննման են քո նոր խոպոպները, դեմքդ էլ ծիծաղախիտ է։

Տիրուհու դեմքը պայծառանում էր և նա լիաթոք ժպտում էր Թաթին։

Ամսվա վերջին բերդաքաղաքի տերը Թաթին հարցնում է.

— Ո՞րն է աշխարհի ամենագեղեցիկ խոսքը։

— Կնոջն ասված տղամարդու շոյիչ խոսքը, որից կրկնապատկվում է կնոջ հրապուրանքը՝ ինչ հանդերձի մեջ էլ նա լինի։

— Դու կատարեցիր պայմանը,— ասում է բերդաքաղաքի տերը, բարի ճանապարհ մաղթում նրան և ցույց տալիս, թե ինչպես պիտի գնալ աստծու մոտ։

Թաթը նորից է բռնում իր ճամփան։ Հասնում է մի բերդի, որի ասպարակիր պահակը ասում է.

— Չէ, ոսկու դիմաց ես քեզ աստծու մոտ տանող ճանապարհը ցույց չեմ տա։

— Իսկ ի՞նչ ես ուզում։

— Դու պիտի կատարես իմ պայմանը։

— Ի՞նչ պայման։

— Սա հանցանաց խուց է։ Այստեղ բանտարկվել են բոլոր

տեսակ ավազակները։ Ինչ հայհոյանք, զաղրախոսություն ասես, որ դուրս չի գալիս սրանց բերանից։ Սրանց հետ մնալը նույնն է, ինչ որ մարդ ամբողջ կյանքն ապրի արտաքնոցում։ Մի ամսով ես քեզ կգցեմ սրանց մեջ։ Դու պիտի կարողանաս ոչ մի հայհոյանք չտալ, կոշտ ու կոպիտ ոչ մի խոսք չասել։

Թաթը համաձայնում է և կամովին մտնում հանցանաց խուց։ Մտնում է թե չէ՝ բանտարկյալներից մեկն ասում է.

— Այս կկղանքն ինչպե՞ս ընկավ այստեղ։

Մյուսն էլ այսպես է ասում.

— Է՛յ, ողորմելի, դու չղջի՞կ ես թե ճպուռ։ Գուցե ճա՞նճ ես։ Դու կարծում ես, թե մենք հավեր ենք, քեզ էլ ուղարկել են, որ մեզ կուտ տաս։

Երրորդը վրա է տալիս.

— Տղե՛րք, սա ցիռ[1] է, Տափերական դաշտից է փախել ու ընկել այստեղ։

Թաթը չլսելու է դնում այդ ամենը և ասում.

— Բարի օր ձեզ, մարդիկ։

Բոլորն արձագանքում են անսանձ հռհռոցով, անպարկեշտ ծամածռություններով։ Ամբողջ մի ամիս բանտարկյալները անպատրվակ կոպտում ու վիրավորում են Թաթին, այլազան հիշոցներ թափում նրա գլխին։ Թաթը համբերում է և ոչ ոքի ոչ մի հայհոյանք չի տալիս։ Ամսվա վերջին ասպարակիր պահակը բացում է հանցանաց խցի դուռը, Թաթին դուրս հրավիրում և հարցնում.

— Ի՞նչ տեսար։

— Ամեն տեսակ անասուն։

— Իսկ մա՞րդ։

— Մարդ չկար։

— Հետո ի՞նչ հասկացար այս մեկ ամսում։

— Որ մարդն անասունին կարող է նմանվել նախ և առաջ հայհոյանքով և անտաշ խոսքերով։

— Քայլենք, հիմա ես քեզ ցույց կտամ, թե որն է աստծու մոտ տանող ճամփան,— ասաց հանցանաց խցի պահակը։

— Չէ, ես պետք է տուն վերադառնամ, որովհետև աստծուն այլևս ասելիք չունեմ։

---

[1] Ցիռ — վայրի էշ, որով հարուստ էր հին Հայաստանը, հատկապես Արարատյան դաշտը։

Վանադուխտը կարդաց այս զրույցը և ուղարկեց ասպետ Սահակին։ Վերջինս կաթողիկոս Հովհաննին ասաց.

— Դպիր Ղազար Փարպեցին իմաստուն այր է։ Նա գեղեցիկ մի զրույց է հորինել Վանադուխտի համար։ Ես կարդացի այն։ Անհրաժեշտ է այսպիսի զրույցներից ստեղծել մեր գրագրանոցների Պիտույից գրքերը։ Ավելի հեռու կգնաս սեփական ձիով, քան ուրիշի նժույգով։

* * *

«Իմաստասեր Մովսես։

Տողերդ իմաստուն են, չնայած ծնվում են դանդաղ և մաշում իմ համբերությունը։ Միայն ես ստիպված եմ վերստին հավաստել, որ իմ սրտին հաճո չէ քո ծայրահեղ հելլենասիրությունը։ Դու հունական երանգ ես տալիս քո մտքի կապարճից հանած ամեն մի նետի։ Ինչո՞ւ ես շրջանցում մեր աշխարհին հայտնի ճշմարտություններն ու պատումները։ Մենք հույներից չենք փոխ առել ոչ գիշեր ու տիվ աշխատելու մեր սովորությունը, ոչ խորոված անելն ու լավաշ թխելը, ոչ խենթի պես սիրելն ու խենթի պես նվիրվելը։ Մի՛ նույնացրու, մի՛ նմանեցրու։ Մենք ավելի շատ նմանության եզրեր ունենք պարսիկների, քան հույների հետ։ Երեք հազար տարվա հարևաններ ենք մենք ու պարսիկները։ Իսկ նմանությունն ավելի շատ հարևանությունից է ծնվում։ Մեր հնամենի հարևանի հետ կապված ենք հազար թելով, կապված ենք արյամբ ու կենցաղով։

Երբեմն մի բան ես գրում՝ առանց հայտնելու, թե որտեղի՞ց ես քաղել այն։ Մոռանո՞ւմ ես, թե դիտմամբ չես նշում։ Չէ՞ որ դա թուլացնում է գրածիդ հավաստիությունը։

Ամեն տեսակ մատյաններ ձեռք բերելու համար Ատատի միջոցով երկու հարյուր ոսկի եմ ուղարկում։

Լսել եմ, որ ամռանը շատ տարեցներ են հավաքվում Բագավանում, զրուցիր նրանց հետ, նրանցից շատերն ավելի հավատի գիտեն մեր աշխարհի անցուդարձերը, քան հաղորդում են այդ մասին օտարագիր հնախոսարանները։

Շտապիր, իմաստասեր։ Մենք հավերժության նավի մեջ չենք։ Դու խոստացար յոթանասուներկու ամսում ավարտել իմ ու քո մատյանը։ Ժամանակն անցնում է, իսկ դու չես էլ կիսել գործը։ Ամեն ինչի կիսատը մեռնում է»։

Մովսեսը ընթերցեց Սահակ Բագրատունու նամակը և դիմեց Ատատին.

— Ինչո՞ւ չի ամուսնանում ասպետը, չէ՞ որ նա երեսունն անց այր է։

— Չգիտեմ, սրբազան հայր։

— Բագրատունյաց դղյակում այդ մասին ոչինչ չե՞ս լսել։

— Կամսարական տոհմից մի օրիորդ կա, որի անունը Վանադուխտ է, ասում են նա է ասպետի հարսնացուն։

— Ինձ համար հաճելի կլիներ, եթե լսեի նրա ամուսնանալու լուրը։ Ավելի լավ է, որևէ մատյան կիսատ մնա, քան Բագրատունյաց տոհմը մնա առանց ընձյուղի։

Ամեն անգամ ասպետ Սահակից նամակ ստանալու օրը Մովսեսը նստում և գրում էր մի քանի տող։ Դրանով նա և ասպետին էր պատասխանում, և շարունակում էր իր պատմությունը։ Այս անգամ էլ նա այսպես գրեց. «Ամեն ինչ հարմարեցնելով ես այս գրքում կնշանակեմ մեր ազգի լավագույն մարդկանց ու նախնիներին և ինչ-որ նրանց յուրաքանչյուրի մասին զրույցներ և պատմություններ կան, չմտցնելով սրա մեջ ոչ մի ինքնահնար կամ անպատշաճ բան, այլ ինչ որ հավաքեցինք գրքերից և սրանց հետևությամբ՝ իմաստուն և այս հարցերում լավատեղյակ անձերից, որոնցից հավատարմությամբ ջանացինք հնագրությունները հավաքել։ Եվ մենք ասում ենք, որ այս պատմության մեջ արդարախոս ենք եղել մեր դիտավորությամբ և ուղղամտությամբ։ Իսկ ինչ աղբյուրներից որ հավաքել ենք՝ այդ աստծուն է հայտնի»։

Այդ մի քանի տողով Մովսեսը կարծես արդարանում է, տրտնջում, դժգոհում։

— Է՛յ, ասպետ, դու չգիտես, թե ես ինչքան եմ տառապում այս գրքի համար,— ասում է բարձրաձայն և մի կողմ դնում գրակալն ու մագաղաթը։

Ահա ինչքան ժամանակ է, ինչ չի կարողանում պարզել, թե որտեղ է թաղվել Արա Գեղեցիկը։ Մար Աբաս Կատինան ասում է, որ Շամիրամի արալեզները չկենդանացրին Արային և նրա դիակն սկսեց նեխել։ Միայն դրանից հետո Շամիրամը հրամայում է Արայի դին գցել մի մեծ վիհի մեջ և ծածկել։ Իսկ որտե՞ղ է գտնվում այդ վիհը։ Հնախոսարաններն ու բանավոր զրույցներն այդ մասին ոչինչ չեն հայտնում։ Իսկ ժողովուրդն ասում է, որ արգո օր սահմանելուց բացի Նվարդը բարդի կամ սոսի է

տնկել Փոքր Մասիսի վրա։ Հավանաբար Շամիրամի մահից հետո Նվարդը Արայի դիակը հանել է սառցուհու թաղած տեղից և տարել ու թաղել Սիսի վրա։ Այստեղ էլ, գերեզմանի շուրջը սոսիներ է տնկել։ Ո՞վ կհաստատի այս ամենը։ Այս պատմությունը մնացել է բարդիների սոսափյունի մեջ։ Ո՞ւմ վկայակոչես։ Գուցե Արայի որդո՞ւն՝ Անուշավան Սոսանվերին։ Ինչո՞ւ է կոչվել Սոսանվեր։ Պատվանո՞ւն է սա, թե այդպես է անվանվել ծառահմա լինելու պատճառով։

— Է՜յ, Արձան, որտե՞ղ ես, մարդ։

— Լսում եմ, սրբազան հայր,— արձագանքում է աբեղան և հայտնվում Մովսեսի առջև։

— Դու երբևիցէ տեսե՞լ ես, թե ինչպես են գուշակություններ կատարում սոսի ծառի տերևների շրշյունով։

— Այո, սրբազան հայր։ Հիշում եմ, փոքր էի, երաշտ ամառ էր։ Մեր արտը չորանում էր և հայրս չգիտեր իր անելիքը։ Մի իրիկնադեմի հորս հետ գնացինք մեր գյուղի կողքին գտնվող մեծ սոսու մոտ։ Հայրս հայացքը հառեց ծառի սաղարթներին ու սկսեց սպասել։ Քիչ հետո նրա լարված դեմքի վրա ես ուրախության նշաններ տեսա։ Տերևների շնկշնկոցի մեջ հայրս լսեց անձրևի կաթկթոցը։ Տուն վերադառնալիս նա ասաց, որ երեք օր հետո անձրև կլինի և մեր արտը կփրկվի։ Նշված օրն, իրոք, անձրև տեղաց։ Այդ դեպքից հետո շինականները գիմում էին հորս և խնդրում, որ նա գուշակություններ անի։ Հայրս փորձեց ծառահմա դարձնել նաև ինձ, բայց բան չստացվեց։

— Իսկ հայրդ չի՞ ասել, թե ինչու մեր աշխարհում սոսին է դարձել գուշակածառ։

— Ինչո՞ւ միայն սոսին, հայրս լսում էր նաև փոշենենու տերևների սոսափյունը։

— Բայց Հայոց աշխարհի բոլոր կողմերում չէ, որ փոշենեի է աճում։

— Այո, սրբազան հայր, դա հավաստում էր նաև հայրս։ Ամեն ինչ սկսվել է Արա Գեղեցիկից։ Նրա ժամանակ Արմավիր քաղաքում թեատարած մի հսկա սոսի ծառ կար։ Արան ու Նվարդը իրենց սիրո առաջին խոսքերը շշնջացել են այդ սոսու տակ։ Արայի ու Նվարդի ձայները մտել են տերևների մեջ և դարձել սոսափյուն։ Ով մի անգամ է սիրում՝ նա ոչ սիրած աղջկան կմոռանա, ոչ էլ հայրենին։ Այս խոսքերն էին շնկշնկում Արմավիրի սոսու տերևները։ Արայի մահից հետո Նվարդի հրամանով Ար-

մավիրի սոսուց ոստեր կտրտեցին և սկսեցին սոսի աճեցնել Հայքի բոլոր կողմերում։ Հայրս ասում էր, որ սոսու տերևների մեջ Հայոց աշխարհի հավատարմության ոգին է։ Հայերեն են շնկշնկում մեր սոսիները։

— Անհրաժեշտ է գրել այդ մասին, Արձան, դա այն է, ինչ պետք կգա մեր հետնորդներին հազար տարի հետո։ Գուցե քո սոսահմա հայրը Արայի զարմից է եղել ու չգիտեր այդ մասին։

— Այո, հայրս շատ բան գիտեր սոսու մասին։ Նա ինձ սովորեցրեց էգը տարբերել արուից։

— Ի՞նչ էգ ու արու։

— Հը՜մ, սոսին երկսեռ ծառ է, կա էգ ու արու։ Էգը բարձրաձիգ է, սրածայր և ունի այնպիսի ամփոփ ճյուղեր, որ ասես վարսահարդարի ձեռք է դիպել նրան։ Իսկ արուն հաստաբուն է, թեատարած։ Գուշակածառը արու սոսին է։

— Զարմանալի է, թվում է, թե քո ասածը հասարակ բան է, բայց մինչև հիմա ես չգիտեի այդ մասին։ Հավանաբար տարբեր են նաև տերևները։

— Չէ, սրբազան, արու և էգ սոսիների տերևները նման են։

— Իսկ ինչու չի կարելի գուշակություն անել նաև էգ սոսու տերևների սոսափյունով։

— Բանն այն է, սրբազան, որ էգի տերևների մեջ ձայներ չկան։ Ամեն տերև չէ, որ կարող է շնկշնկալ։ Գուշակածառ սոսու տերևները կլորակ թաթաձև են, բարակ կանթով և ծառի ճյուղերից կախվում են ականջի օղերի նման։ Նրանք սոսինջք են արձակում հանդարտ կամ ուժգին քամուց։ Դա իսկական սոսինջք է, քեզ թվում է, թե մեկն անորոշ ձայն է հանում՝ մերթ սուլում է, մերթ փչում, մերթ երգում թռչունի պես, մերթ էլ նմանվում հեղաշարժ աղչկա մանրաքայլ գնացքի։

— Մի՞թե մեր ծառահմայությունը նման է Դոդոնայի գուշակությանը։

— Ի՞նչ Դոդոնա, սրբազան հայրը։

— Հունաստանում մի քաղաք կա Դոդոնա անունով։ Այդտեղ է գտնվում Զևսի տաճարը, որի բակում էլ Զևսի սրբազան կաղնին էր, որի տերևների սոսափյունով և կաղնու տակից բխող աղբյուրի խոխոջյունով գուշակություններ էին անում քրմերն ու քրմուհիները։

— Բայց կաղնու տերևների սոսափյունն այն չէ, ինչ սոսի ծառինը։

— Դա միայն մեզ՝ հայերիս համար։ Քիչ առաջ ինքդ ասացիր, որ սոսու տերևները շնչշնչում են հայերեն։

— Այո, հայրս համոզված էր դրանում։

— Հավանաբար, Արձան, կաղնու տերևներն էլ հունարեն են սոսափում և դա լսելի է միայն հույներին։ Ինձ հետաքրքրում է ուրիշ բան, մեզ մոտ սոսին է, Հունաստանում՝ կաղնին, մեզ մոտ առաջին գուշակավայրը եղել է Արմավիրը, նրանց մոտ՝ Դոդոնան։ Միայն ծառերն են տարբեր, Արձան, իսկ գուշակության եղանակը նույնն է։ Երկու դեպքում էլ տերևների սոսափյունի մեջ մարդիկ ձայներ են լսում։ Դե, արի իմացիր, թե ո՞րն է գրանցից հնագույնը, ով է փոխառել մյուսից։ Հը, ի՞նչ կասես, Արձան։

— Սրբազան հայր, գուցե մենք ու հույները սոսափյունով գուշակել ենք սովորել միմյանցից անկախ։ Աշխարհի բոլոր կողմերում երեխաները խաղում են իրար նման։

— Միտքդ կիսատ թողեցիր, աբեղա։

— Չէ, իմաստասեր, ես ամեն ինչ ասացի։ Արա Գեղեցիկի ժամանակներում մենք ու հույները նման ենք եղել իրար այնպես, ինչպես այժմյան հույն ու հայ երեխաները։

— Իսկ ես կարծում եմ, որ, այնուամենայնիվ, դա փոխառված սովորություն է։

— Սրբազան հայր, սոսի ու կաղնի կա և Հունաստանում և Հայքում։ Եթե հայերը սաղարթների սոսափյունով գուշակել են սովորել հույներից, ապա նրանք հույների նման կաղնին կընտրեին գուշակածառ, իսկ եթե հույներն են սովորել մեզանից, ապա հազիվ թե նրանք սոսին փոխարինեին կաղնիով։ Չէ, իմաստասեր, մեր սոսին ու հունական կաղնին ազգակիցներ չեն։

— Հավանաբար դու իրավացի ես, Արձան, իզուր չէ Բարդածանն ասել, որ մարդս ենթակա է երեք ազդակների՝ բնությանը, ճակատագրին և քմահաճություններին։ Երեքի ամենից շատ՝ բնությանը։

— Ո՞վ է այդ Բարդածանը։

— Ասորի գուշակ ու իմաստասեր։ Մնվել ու ապրել է Եդեսիայում, հոր անունը եղել է Նուհամա, մորը՝ Նահշիրամ։ Նա գուշակում էր նույնիսկ երկրաշարժի ժամը։ Ընդգետնյա ձայները լսում էր այնպես, ինչպես հայրդ էր լսում սոսու տերևների զրույց-շնչշնչոցը։ Այս Բարդածանը մի ընկեր ուներ Աբգար

անունով, որը Եդեսիայի իշխանն էր։ Մի անգամ կեսգիշերին Բարդածանը ելնում է անկողնուց և գնում ու զարկում ընկերոջ ապարանքի դարպասը։ «Ի՞նչ է պատահել»,— հարցնում է ընկերը։ Բարդածանը պատասխանում է. «Քո զորականներից մեկը դավաճանել է, լուսադեմին թշնամին քաղաք կմտնի արևմտյան դարպասով»։ Աբգարն անմիջապես գործի է անցնում։ Նա ծուղակ է սարքում և գերում քաղաք խուժող թշնամու զորքը։ Ես չգիտեմ, թե ինչպես է գուշակել Բարդածանը։ Բայց նա եղել է կատարյալ մարգարե։

— Հիմա աշխարհում քիչ կան այդպիսի մարդիկ։ Այժմյան գուշակներից շատերը խաբեբաներ են։ Հենց մեկն էլ մեր կողքի ճգնավորի այրում կուչ եկած Կուկը։ Գիշերները Բագավան է մտնում, լուրեր հավաքում, ցերեկները քաշվում իր այրը ու այդ լուրերը վաճառում նույն մարդկանց։

— Արձան, Արմավիրում հիմա սոսահմաներ կա՞ն։

— Ոչ, սրբազան հայր, չէ որ դու գիտես, որ կաթողիկոսի կոնդակով այդպիսի մարդիկ պատժվում են։

— Ես ուզում եմ հանդիպել իսկական ծառահմայի։

— Այդ դեպքում դու պիտի վեր կենաս ու գնաս Գողթն։ Այնտեղ, Ոսկիտոզա ավանի կողքին աճում է Հայքի ամենահսկա սոսին։ Հալածանքներից խուսափելով այնտեղ են հավաքվել համարյա բոլոր սոսահմաները։ Գողթան գավառը, սրբազան հայր, երեսանց քրիստոնյա է, բայց տակից հեթանոս է մնացել. մեր հին աստվածներն էլ են քաշվել այնտեղ։

— Պատրաստվիր, աբեղա, վաղը մենք կմեկնենք Գողթն։

— Սրբազան հայր, այդպես միանգամի՞ց։

— Իսկ ինչո՞ւ չենք կարող միանգամից գնալ։

— Մինչև Գողթն երկու օրվա ճամփա է, իսկ դու հիվանդ ես, քանի օր է, ինչ չես ազատվում հազից։ Թոքախտն սկսվում է այդոսնակ հազից։

— Իմ հիվանդությունը ես կթողնեմ ճանապարհին և տուն կվերադառնամ առողջ թոքերով։

— Սրբազան, մի մոռացիր, որ նվազել է նաև քո տեսողությունը, իսկ ճանապարհորդը ստիպված իր հայացքի մեջ է առնում նոր տեսարաններ, որ հոգնեցնում է նրա աչքերը։

— Ասում են Հռոմի Ներոն կայսրը մի զմրուխտ քար ուներ, որն աչքին էր դնում սուսերամարտը լավ դիտելու համար։ Այդ

գունավոր ակնոցը Հայքից են տարել Հռոմ։ Ասպետ Սահակը խոստացել է այդպիսի քար գտնել ինձ համար։

Երկու օր հետո հասան Գողթն։ Դեռ Ոսկիողա չմտած և Մովսեսը, և Արձանը հանդերձափոխվեցին։ Այդպես էին պայմանավորվել, եպիսկոպոսի նափորտը կխանգարեր և նա չէր կարող հանդիպել սոսահմա-պատգամախոսի։ Մովսեսը հագել էր մի հին պարեգոտ, դեմքը կիսով չափ կապել ճերմակ մի շորով՝ ասես տառապում էր այտուցախտով։ Եպիսկոպոսը ետ դարձրեց կառքը և դիմափոխված սկսեց քայլել դեպի Ոսկիողա։ Բայց մի քանի քայլ շարած՝ հանդիպեց գուսան Մհուրին։ Նրանց հայացքները հանդիպեցին իրար։ Իմաստասերը փորձեց շարունակել իր ճանապարհը և ցույց տալ, թե չի ճանաչում նրան։ Սակայն Մհուրն այնպես բացականչեց, որ Մովսեսն ստիպված էր ղինաթափվել։

— Ինչո՞ւ ես կապել դեմքդ, ցավո՞ւմ է ատամդ,— հարցրեց Մհուրը։

— Ո՛չ, չի ցավում,— պատասխանեց Մովսեսը։

— Չլինի դեն ես նետել եպիսկոպոսի շուրջառը։

— Ոչ, դեն չեմ նետել։

— Նշանակում է սկսել են նորից հալածել քեզ։

— Ոչ, ոչ ոք չի հալածում ինձ։

— Ապա ինչո՞ւ ես հանդերձափոխվել հին օրերի նման։

— Միտս է ընկել հինը։

— Դու Ոսկիողայում երկա՞ր պիտի մնաս։

— Երեք-չորս օր։

— Ետդարձին Ջուղա մտիր, ես այնտեղ կսպասեմ քեզ։

— Անպայման կգամ, Մհում, ողջ լեր։

— Եղիցի, Մովսես, եղիցի,— բարձրացրեց իր փանդիռը գուսան Մհուրը, հրաժեշտ տվեց հին օրերի ընկերոջը և շարունակեց իր ճանապարհը։

Ոսկիողա հասան թե չէ՝ Արձանն զբաղվեց ասպնջական երդիկ որոնելով, իսկ Մովսեսը շտապեց նշանավոր սոսու մոտ։ Արփող էր։ Անամպ երկնքից ասես մեղմ զեփյուռ էր թափվում սոսու շրջակայքում։ Անրջամույն մի ծեր մարդ նստել էր ծառի տակ՝ մեջքը ընին հենած։ Մովսեսի ողջույնին նա արձագանքեց ուշացումով։ Իմաստասերը մի ոսկի նվիրեց նրան։

— Ինչի՞ համար ես տալիս այս ոսկին,— հարցրեց ծերունին, ելնելով տեղից։

— Որ մի բան ասես,— ասաց Մովսեսը։

Ծերունին ուշադիր նայեց իմաստասերին և ասաց.

— Դեն նետիր դեմքիդ փաթթոցը։

— Ինչո՞ւ։

— Որովհետև ոչ ատամդ է ցավում, ոչ այտդ։

— Ինչպե՞ս իմացար։

— Քո աչքերից։

— Եվ համոզված ես, որ չե՞ս սխալվում։

— Համոզված եմ։

— Իսկ եթե սխալվես։

— Թող Անուշավան Սոսանվերը պատժի ինձ դրա համար։

— Դու իրավացի ես, իսկապես ես ոչ մի ցավ չունեմ,— ասաց Մովսեսը, դեմքից հանեց շորի փաթաթանը և շարունակեց,— դու գուշա՞կ ես։

— Ես Անուշավան Սոսանվերի պատգամախոսն եմ։

— Այդ նա՞ հուշեց, որ իմ ոչ մի տեղս չի ցավում։

— Այո՛։

— Իսկ նա չի՞ կարող ուրիշ բան ավելացնել իր ասածին։

— Դու աշխարհի այն մարդկանցից ես, որ միթթարիչ խոսքի կարիք չես զգում։

— Դա է՞լ Սոսանվերը հուշեց քեզ։

— Նա ինձ հուշեց, ես էլ՝ նրան։ Եվ ընդհանրապես ես առանձին գոյություն չունեմ։

— Ի՞նչ է քո անունը։

— Բիբ։

— Քանի՞ տարի է մնացել, որ հասնես հարյուրին։

— Ինչու՝ ես, թող այդ հարյուրը հասնի, որ ինձնից ետ է մնում երեսունմեկուսով։

— Դու երբվանի՞ց ես լսում այս ծառի տերևների սոսինջը։

— Մենդյան օրից։

— Քո հա՞յրն էլ էր լսում։

— Այո, և հայրս, և պապս, և նախապապս, մենք ազգովի սոսահմաներ ենք, մեր տոհմում ոչ մի խուլ չի եղել։

— Ի՞նչ ասացիր, խո՞ւլ։

— Մենք այդպես ենք անվանում նրանց, ովքեր չեն կարող ունկնդրել ծառի տերևների սոսափյունը։

— Ինչո՞ւ այդքան անկեղծորեն ես խոսում ինձ հետ։

— Այնուամենայնիվ, դրանով նվիրածդ ոսկու գինը չեմ վերադարձնում։

— Հապա՞։

— Դու ավելի հեթանոս ես, քան Հայքում ապրող որևէ հայ։ Դու պատահաբար ես ընկել մեր ժամանակները։

— Բայց ես եպիսկոպոս եմ։

— Չեմ հավատում։

— Ես անկեղծորեն խոստովանում եմ՝ Բագրևանդի եպիսկոպոսն եմ, իմ անունը Մովսես է։ Շուրջառս հանել եմ նրա համար, որ արժանանամ քո վստահությանը։

— Եպիսկոպոս լինես թե կաթողիկոս՝ միևնույն է, դու մնում ես հեթանոս։

Մովսեսն ու Բիբը զրուցեցին մինչև մութն ընկնելը։

Այդ օրերին Ոսկիոզան մարդաշատ էր դարձել։ Արձանը Մովսեսին իմաց տվեց, որ ոսկեհատ Վահան Մամիկոնյանը Ոսկիոզայում է։

Ոչ ոք չգիտեր, թե ինչու է Վահանն այդքան երկար մնում Գողթն գավառում։ Գիշերները նա խնջույքի էր նստում և լսում վարձակ գեղուհիների դայլայլը, իսկ ցերեկները Զայնադարան կոչվող գոգհովտում ստուգում էր երիտասարդների զորական մարզվածությունը։

Մի քանի ամիս առաջ Կոստանդնուպոլսից Դվին եկավ արքունական Պիլոսը։ Նա հայ Արշակունիների գահատոհմից էր և Բյուզանդիա էր ընկել փոքր հասակում։ Այքարացության շնորհիվ դարձել էր կայսրերի սիրելին։ Տեղյակ էր բյուզանդական արքունիքի ծակուծուկերին և գիտեր, թե կայսրերն ինչ են որոճում ու որոշում։ Բայց, ըստ երևույթին ավելի շատ գիտեր, քան պետք էր։ Այդ պատճառով էլ նոր կայսր դարձած Զենոնը մտադրվեց խաղից դուրս անել նախկին կայսրերի հավատարիմ մարդուն՝ Պիլոսին։ Դա զգաց հայ արքունականը և Կոստանդնուպոլսից ճողոպրեց ժամանակին։ Եթե մի օր էլ ուշանար՝ նրան կսպանեին դավադրաբար։ Պիլոսն շտապեց Դվին և հանդիպեց Վահան Մամիկոնյանին։

— Իմ անունը Պիլոս է, ես փախել եմ Զենոն կայսեր արքունիքից,— ասաց նա։

— Քո հունական անո՞ւնն էլ ես Կոստանդնուպոլսից բերել,— փորձեց խայթել Վահանը։

— Ես չգիտեմ իմ իսկական անունը։ Ինձ Պիլոս են կոչել հույները, բայց ես գիտեմ, որ Արշակունի եմ, իմ հայրն ու մայրը մեռել ու թաղվել են Վաղարշապատում։ Ես շատ էլ հեռու չեմ վաթսունից, իսկ հիսունից հետո մարդ երկու անգամ արագ է ծերանում։ Գոնե կյանքիս վերջում օգտակար լինեմ իմ հայրենիքին։

— Ուզում ես ասել, որ շա՞տ բան գիտես բյուզանդական արքունիքի մասին։

— Դրանից օգուտ չունի Հայքը։

— Իսկ ինչի՞ց օգուտ ունի։

— Զենոն կայսրը չի օգնի Հայքին։ Եվ ընդհանրապես ոչ հիմա, ոչ էլ վաղը չի կարելի որևէ հույս կապել բյուզանդացիների հետ։ Հայն աշխարհում հայ կմնա միայն այն ժամանակ, երբ սեփական զենքով պաշտպանի ինքն իրենց։ Ես այդ մտքին հանգեցի բյուզանդական արքունիքում քառասուն տարի ապրելուց հետո։ Եվ եկա հայտնելու ձեզ այդ դառն, բայց կասկածի չենթարկվող ճշմարտությունը։

Վահանը շնորհակալություն հայտնեց Պիլոսին։ Ոսկեհատը հասկացավ, որ պարսիկների հետ բախման ժամանակ Հայքը միայնակ կլինի։ Զենոնն ու Պերոզը եղբայրացել են և սիրալիր ողջույններ են հղում միմյանց։ Թույլի հետ թույլն էլ չի բարեկամանում։ Այժմ Վահանին միայն մի բան է հետաքրքրում՝ զորականներ պատրաստել ապագա հայկական բանակի համար։ Սուրհանդակները Հայքի տարբեր գավառներն ընկած երիտասարդներին հրավիրում էին Գողթն։ Ոսկեհատը ստուգում էր եկողների մարտունակությունը և անմիջապես հետ ուղարկում։ Դրա շնորհիվ ոչ ոք Գողթնում զորականների կուտակում չէր տեսնում։ Երիտասարդները դալիս էին Գողթն իբր գուսանական տոնախմբություններին ականատես լինելու։ Սակայն Վահանը գժգոհ էր նրանց զինական պատրաստականությունից։ Շատերը խաղ էին համարում նժույգավարելը, նետ արձակելն ու նիզակ բանեցնելը։ Ոսկեհատին միայն մի բան էր ուրախացնում՝ զորականին նրանք կհավաքվեն ժամանակին։ Առայժմ նրանց թիվը ութ հազար է, բայց չէ որ երկու-երեք տարի հետո ինքը գործ կունենա քառասուն կամ հիսուն հազարի հետ։

Գողթնում իր անելիքը վերջացնելուց հետո՝ Վահանը որոշեց դիմել սոսահմանների։ Նրան տարան Բիբի մոտ։ Հնամենի սոսու տակ ոսկեհատը Բիբին ասաց.

— Մեր զրույցի մասին ոչ ոք չպետք է իմանա։

— Ոչ ոք ոչինչ չի իմանա, կարող ես անհոգ լինել,— հավաստեց Բիբը։

— Եթե խոստմանդ տերը չմնաս, ապա քեզ կկախեմ այս ծառի ճյուղից։

— Ես համաձայն եմ, սպարապետ։

— Դու ճանաչո՞ւմ ես ինձ։

— Իհարկե։ Դու Վահան Մամիկոնյանն ես, Ավարայրի հերոս Վարդան Մամիկոնյանի եղբոր որդին։

— Բայց այդքանն իմացողը պիտի իմանա նաև, որ ես ոսկեհատ եմ և ոչ սպարապետ։

— Բոլոր Մամիկոնյաններն էլ սպարապետներ են։ Ոսկեհատի պաշտոնը քեզ շնորհել է Պարսից արքան, իսկ սպարապետությունը ժառանգական իրավունքով քեզ պատկանող պաշտոնն է։ Հենց որ հայերը քեզ սպարապետ կոչեն՝ դա կլինի պարսիկներին Հայքից քշելու առաջին նշանը։

— Բիբ, ես պատրաստվում եմ վրեժ լուծել բոլոր ընկածների համար։

— Գուշակեմ, թե ինչով կավարտվի քո հերոսամա՞րտը։

— Այո, Բիբ։

Գուշակը հայացքը դարձրեց սոսու արևելյան ճյուղին։ Թվում էր, թե զեփյուռից մեղմորեն շնկշնկում և սոինչք են արձակում բարալիկ սաղարթները։ Բիբը միանգամից վերացավ աշխարհից։ Նա ոչ Վահան Մամիկոնյանին էր տեսնում, ոչ սոսու ծառը։ Ինչ-որ ձայներ էր լսում։

Քիչ հետո արթնանալով ինքնաներշնչանք երազից Բիբը դարձավ Վահանին.

— Դու պիտի ռազմի փող փչես միայն այն ժամանակ, երբ տարեթիվը զույգ լինի։ Հայերս միշտ էլ մեծ կորուստներ ենք տվել կենտ տարեթվերում։

— Բայց ես մարտի կելնեմ եկող տարի։

— Ոչ, սպարապետ, հինգ տարի հետո։

— Եկող տարի, Բիբ։

— Դու կհաղթես հինգ տարի հետո։

Երբ Վահան Մամիկոնյանը հրաժեշտ տվեց Բիբին ու հեռացավ սոսու մոտից, Մովսեսը դուրս եկավ փչակից ու գուշակին ասաց.

— Բիբ, դու երդվեցիր, որ աշխարհում ոչ ոք չի իմանա քո ու Վահան Մամիկոնյանի զրույցը...

— Ես չասեցի, իմաստասեր։ Ծառի փչակում դու սովորական ունկնդրող չէիր, այլ՝ աստվածային ոգի։

— Նա ուզում է ճակատամարտ տալ եկող տարի, իսկ դու նրան ասում ես՝ թե կհաղթի հինգ տարի հետո, ես չհասկացա ոչ քեզ, ոչ նրան։

— Եկող տարի նա ճակատամարտ կտա։

— Եվ կհաղթի՞։

— Ոչ։ Բայց չի էլ պարտվի։

— Իսկ ինչո՞ւ այդ մասին դու չհայտնեցիր նրան, ինչո՞ւ խորհուրդ չտվեցիր, որ նա ետ կանգնի այդ մարտից։

— Դա անխուսափելի է, ինչպես Ավարայրը։

— Իսկ հինգ տարի հետո՞։

— Տերևների շնկշնկոցը հավաստում է, որ հինգ տարի հետո Վահան Մամիկոնյանը կանի այն, ինչ կիսատ թողեց իր հորեղբայրը։

Մտնելով Ոսկիոդա Մովսեսը գտավ Արձանին ու ասաց.

— Աբեղա, պետք է այստեղից շտապով հեռանալ։

— Ինչո՞ւ, սրբազան հայր։

— Եթե մի օր էլ մնամ՝ կսկսեմ հավատալ ամեն տեսակ հրաշքի։ Գողթնը ոչ միայն գուսանների, այլ մարգարեների օրրան է։

* * *

Բագավանում ամեն օր ուխտավորներ են լինում։ Նրանք գալիս են, աղոթում Լուսավորչի տաճարում, գլուխ խոնարհում Հիսուս Քրիստոսի առաջ, հետո դուրս գալիս և շտապում դեպի Բախտատուր ու մտովի երկրպագում հին աստվածներին։ Ինչ մարդիկ են այս հայերը, ոչ իրենց հին աստվածներին են մոռանում, ոչ էլ ուրանում Հիսուս Քրիստոսին։ Եթե մի նոր աստված էլ ի հայտ գար՝ էլի կպաշտեին։

— Դա նրանից է,— աբեղա Արձանին բացատրում է Մովսեսը,— որ հայերը ասպնջական, վանատուր ժողովուրդ են։ Հայը սիրում է հյուրընկալել և արյունակցին և օտարին։ Մարդկանց համար հյուր է նաև ամեն մի աստված։ Տարբերությունն այն է,

որ աստվածները հաճախ դարերով են մնում հայկական հարկերի տակ։

— Բայց մարդկանց համար հավերժականն ու երազայինը աստված է որոշում, ինչո՞ւ են մարդիկ իրենց հոգու ամենապայծառ անկյունում տեղ տալիս հյուրին, թեկուզ և նա աստված լինի,— փորձում է առարկել Արձանը, ցույց տալով, որ, այնուամենայնիվ, աշխարհում ամեն ինչ այնպես չէ, ինչպես որ պիտի լինի։

— Հավերժական ու երազային է այն, ինչ մատչելի է մարդուն, երջանիկ ու իմաստուն է այն, ինչ մարդկային է։ Մնացածն ընդմիջարկություն է։ Ամեն ինչ սկսվում է մարդուց և ավարտվում մարդու հետ,— ասում է Մովսեսը և իր ասածը վերահաստատելու համար ավելացնում,— ամենաաստվածայինը ամենամարդկայինն է։

Բագավանն ամենքին էլ հյուրընկալում է՝ և անտես հեթանոս աստվածներին ու Քրիստոսին, և չերմեռանդ քրիստոնյաներին ու մոխրասերներին, և նրանց, որոնք ոչ մի աստծու էլ չեն պաշտում։

Գողթնից վերադառնալուց մի քանի օր հետո Մովսեսի մոտ եկավ ուլի աչքերով քառասունամյա մի մարդ՝ զամբյուղը ձեռքին։

— Իմ անունը Ցուլ է,— ասաց նա։

— Դու ինչ-որ բան ես ուզում վաճառել։

— Կռահեցիր։

— Բայց ես չեմ ուզում ոչինչ գնել։

— Դու կարող ես հրաժարվել հանդերձից ու ակնեղենից, բայց ոչ հնամյա մատյանից։

— Ի՞նչ մատյան։

— Աստրապիր։

— Իսկ ինչո՞ւ ես զամբյուղի մեջ դրել այն։

— Դե, դա իմ սովորությունն է, ամեն լավ բան նախ զամբյուղի մեջ եմ դնում, հետո վաճառքի հանում։

— Ցուցանիր, տեսնեմ ինչ մատյան է։

Ցուլը հանեց գիրքը և մեկնեց Մովսեսին։ Իմաստասերը սկսեց թերթել այն։ Քիչ հետո նրա դեմքը լրջացավ։ Կարծելով, թե մատյանը չափից դուրս գրավեց Մովսեսի ուշադրությունը՝ Ցուլը ասաց.

— Չորս հարյուր տարեկան է։

— Դա անկարելի է, Ցուլ, այստեղ մտքեր կան, որոնց մասին մի քանի տարի առաջ է գրել Գյուտ կաթողիկոսը։ Մի մասն էլ արտագրված է Եվսեբիոս Կեսարացու և ուրիշների մատյաններից։ Սա և հնախոսարան է, և նորախոսարան, մի խոսքով՝ խառնարան է, որ ինձ պետք չէ։

— Իսկ ո՞ւմ կարող է պետք գալ սա։

— Երևի ոչ ոքի,— անկեղծորեն պատասխանեց Մովսեսը։

— Ափսոս,— ասաց Ցուլը, մատյանը նորից դրեց զամբյուղի մեջ և շտապ հեռացավ տաճարից։

Այս դեպքին ներկա Արձանը, Ցուլի մեկնելուց հետո դիմեց Մովսեսին.

— Սրբազան, ես ճանաչում եմ այս մարդուն, նա տգետ է ու կամակոր, զարմանում եմ, թե ինչու դյուրությամբ հրաժարվեց իր կեղծած մատյանը վաճառելուց։

— Ես կքաշեի նրա ականջները և Միդասի օրը կգցեի նրան,— խոսեց Մովսեսը։

— Իսկ ո՞վ է այդ Միդասը։

— Շատ հին ժամանակներում,— պատմեց Մովսեսը,— Փռուգիայում մի թագավոր էր ապրում Միդաս անունով։ Սա և ագահ էր, և հիմար, և տգետ։ Սրա ագահությանը հագուրդ տալու համար Դիոնիսոս աստվածը մի հրաշագործություն է անում։ Միդասին օժտում է մարմնի հպումով ամեն ինչ ոսկու վերածելու կարողությամբ։ Ինչին ձեռք է տալիս՝ ոսկի է դառնում։ Առաջին օրը նա հաճույքի մեջ մոռացել էր ուտելու ու խմելու մասին։ Հետո սովածությունն ու ծարավը զգացնել տվին։ Փորձեց մի կտոր հաց վերցնել՝ հացը ոսկի դարձավ, ձեռք տվեց ջրին, ջուրն էլ վերածվեց ոսկու։ Այդպես սկսվեց նրա ոսկե տանջանքը։ Վերջապես նրան օգնության հասավ Դիոնիսոսը և ազատեց նրան սովամահ լինելու վտանգից։ Միդասը լողաց Պակտոլոս գետի ակունքներում և ազատվեց ոսկեվետ շնորհից։ Մի անգամ էլ այս նույն Միդասին կարգում են Ապոլլոնի և Պանի երաժշտական մրցության դատավոր։ Իր տգիտության պատճառով Միդասը հաղթանակը շնորհում է Պանին։ Դրանից հետո ամբողջ Հունաստանում միդասյան դատ ասելով հասկանում են տգետի դատ։ Անարդար որոշումից զայրացած Ապոլլոնը ձգել, երկարացրել է Միդասի ականջները։ Ապաշնորհ արքան չգիտեր, թե ինչպես թաքցներ իր երկար ականջները։ Փռուգիական գլխարկի տակից էլ այն երևում էր բոլոր մարդկանց։ Եվ հետո միդասյան ականջ-

ները դառնում է թեավոր խոսք, որ նշանակում է ազգությունն ու հիմարությունը չի կարելի թաքցնել։

— Հիմա հասկացա,— ասաց աբեղան,— Հայոց աշխարհում քիչ չեն այդպիսի Միդասները։

— Ամեն տեղ էլ Միդասներ կան, ամեն տեղ էլ միդասյան դատեր են լինում։

Սակայն ամեն հիմար չէ, որ կարող է Ցուլի պես մի կողմ ոստնել և փրկել իր ականջները կամբատակելուց։

* * *

«Ահա այժմ ես զվարճանում եմ՝ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնի սերունդները թագավորության աստիճանի են հասնում։ Ուստի վայել է մեզ այստեղ մեծ գործ կատարել և շատ պատմական ճառեր գրել, որոնց հիմունքը մենք ինքներս արժանացանք կարդալու իմաստուն, իմաստունների մեջ իմաստագույն և բազմարդյուն հեղինակի չորս հագներգությունների մեջ»։

Իր սովորության համաձայն, Մովսեսը գրի է առնում կարևորն ու խտացվածը, իսկ մնացածը մանրամասնելով ասում է բանավոր։ Աչքը տնկում է դիմացի պատի որևէ կետի և սկսում բարձրաձայն խոսել։ Կարծես Դվինում նստած ասպետ Սահակը լսում էր նրան։ Տարիներ հետո, երբ նա մտովի համադրեց իր ասած դրվագները ու բանավորը՝ հասկացավ, որ բանավորը տասն անգամ շատ է, որ պիտի գրի առներ երկուսն էլ։ Իրավ է՝ բանավոր խոսքը պատմության հարդն է։ Բայց հաճախ պատահում է այնպես, որ հարդի հետ կորչում են ընտիր ցորնահատիկները։

Մովսեսը բանավոր մենախոսությամբ շատ է վիճում ասպետի հետ, կշտամբում նրան։ Նրա թունդ, մաղձոտ վեճը հալվում է այդ մենախոսության մեջ և մեղմացած, պատշաճության եզրերը չխախտող ձև առնում գրավոր ակոսներում։ Հիմա էլ նա բարձրաձայն ասում է.

— Իսկ դու, ասպետ Սահակ, գիտե՞ս, թե ինչ է նշանակում թագավորության աստիճան։ Չէ, մի՛ մեծամտիր, չգիտես։ Դեմքիդ կծու ժպիտն էլ ինձ դուր չի գալիս։ Առանց թթխմորի հունցած հացը թոնրի պատին չի կպչի։ Պատմությունն էլ իր թթխմորն ունի։ Մինչև Պարույր Հրաչյան հայերն ապրում էին ինչպես որ պատահեր, երբեմն այսպես, երբեմն այնպես։ Ամեն

մեկն իրեն թագավոր էր զգում՝ և գավառի տերը, և գեղջավագը, և զորապետը։ Հազար ձոր ու հովիտ ունեցող Հայոց մեծ աշխարհում շատ էին թագավորները։ Թփի ետևից կարող էր դուրս գալ ամեն տեսակ մարդ և հռչակել իրեն թագավոր։ Կարևոր չէր, թե հագին ինչ ուներ՝ կարմիր կոշիկ, թե տրեխ։ Ամեն մեկն իրեն էր ճանաչում իր գլխի ու աշխարհի տերը։ Պարույրն ստիպեց, որ բոլոր հայերն ընդունեն իր գերիշխանությունը։ Սա է թագավորության աստիճանը, ասպետդ Սահակ, այստեղից է սկսվում պետությունը։ Մարդ չի կարող մշտապես ապրել ինչպես որ պատահի, երբեմն այսպես, երբեմն այնպես։ Այդպես կարող ես անել միայն մանկության ժամանակ։ Հայկ նահապետից մինչև Պարույրը եղել է հայ ազգի մանկությունը։ Չէ, չէ, դու քեզ նրանց հետ մի համեմատիր։ Ճիշտ է, նրանք այնքան ոսկի չեն ունեցել, ինչքան դու, ոչ էլ քեզ նման պերճախոս ու իմաստուն են եղել, բայց նրանք բարձր են եղել քեզնից։ Այսօրվա հայոց մեծերի հայրենասիրության ակունքը փառասիրությունն է, իսկ Սկայորդու ժամանակներում փառքի ակունքը հայրենասիրությունն էր։

Իմաստասերը լռում է և գլուխը հակում գրակալին։ Պիտի գրել, թե չէ, միշտ չէ, որ մարդ կարողանում է ծնված միտքը հիշողության մատույցում պահել. «Այժմ ես կանցնեմ թվարկելու մեր մարդկանց, մանավանդ մեր թագավորներին, մինչև Պարթևների տիրության հաստատվելը։ Որովհետև մեր թագավորների մեջ ինձ այն մարդիկ են սիրելի, իբրև բնիկներ, արյունակիցներ և իսկական հարազատներ։ Ես շատ կփափագեի, որ այն ժամանակ Փրկիչը եկած և ինձ գնած լիներ, որ նրանց ժամանակ ես աշխարհ եկած լինեի, նրանց տերությամբ զվարճանայի և այժմյան վտանգներից խուսափած լինեի։ Բայց շատ վաղ մեզանից այդ դրությունը փախավ, գուցե նաև վիճակը...

Եվ որ այդ ժամանակները մեր ազգը թագավորություն ուներ՝ սրան վկայում է Երեմիա մարգարեն իր մարգարեության մեջ՝ Բաբելոնի դեմ պատերազմի հրավիրելով. «Հրաման տուր, ասում է նա, Այրարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին»։ Սա ապացույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագավորություն»։

Վիպողը պիտի հրավառի իր երկի բոլոր բառերը։ Նուռը նման է պողով լցված փոքրիկ թոնրի։ Այդպիսի նուռ-թոնիր պիտի լինի ամեն մի մատյան։ Յուրաքանչյուր բառ պիտի հոգուց

մեջ թրծես, պող դարձնես և նոր դնես մատյանի մեջ։ Պիտի կանգ առնես՝ երբ բաներդ դժգույն են և պիտի շարունակես, երբ նրանք հրավառ են։

Իսկական թոնրի ջերմությամբ վառվեց Մովսեսի հոգին, երբ նա հասավ Տիգրան Երվանդյանին. «Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին։ Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ։ Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմանները ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը, բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի թե ինքը և թե իր ժամանակը։

Եվ ո՞ր իսկական մարդը, ոք համակրում է արիական բարքի և խոհականության, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել։ Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ օտարների լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ...

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, զունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, զեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր հատկություններով, որ պիտանի են մարդուն։ Եվ այս գրքում ինչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունները երկարել։ Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»։

Կանգ առ, իմաստասեր։ Այլդ նորից տնկիր դիմացի պատին։ Չէ, այս անգամ ասպետ Սահակի հետ չէ, որ պիտի վիճես։ Ինքդ քեզ հետ վիճիր։ Այդ Երվանդյան Տիգրանը իր գեղանի քրոջը՝ Տիգրանուհուն, կնության է տվել Մարացի Աժդահակին։

Հետո Աժդահակը փորձել է դավադրությամբ սպանել Տիգրանին, բայց Տիգրանուհին իմաց է տվել եղբորը և ենգությունը հայտնի է դարձել։ Ասում են՝ թե Աժդահակը երազում տեսել է իր կործանումը։ Շատ են այդ երազի տարատեսակները։ Դրանցից մեկի մասին լսել և Մովսեսին նամակով հայտնել է Սահակ Բագրատունին։ Աժդահակի այդ երազի մասին ասպետը լսել է Պարսից աշխարհում։ Իբր զրույցի են բռնվել Աժդահակն ու Տիգրանուհին։

— Իմ սուրհանդակը հենց նոր վերադարձավ ծայրակալ հարավից,— ասում է Աժդահակը։

— Եվ ի՞նչ լուր է բերել նա,— հարցնում է Տիգրանուհին։

— Ջրերը բարձրանում են, արդեն ջրի տակ են մնացել հարավի իմ տիրույթները։ Շուտով ջրհեղեղը կծածկի ցամաքը։

— Ոչինչ,— փորձում է Աժդահակին մխիթարել Տիգրանուհին,— եղբայրս կօգնի մեզ, մենք էլ նոյ նահապետի նման Մասիսի կատարը կբարձրանանք։

— Դու, իհարկե, իրավացի ես, պիտի սուրհանդակ ուղարկել Հայոց աշխարհ։

— Ինչի՞ է պետք սուրհանդակը։ Չէ՞ որ Տիգրանը մեր հարազատն է։ Նա առանց մեզ տապան չի նստիլ։

— Ուզում ես ասել, որ ավելի լավ է միասնաբար մեկնենք Հայոց աշխարհ։

— Այո։

— Թող քո ասածը լինի, մեկնենք։

Աժդահակն ու Տիգրանուհին Մարաց աշխարհից ճամփա են ընկնում և հասնում Հայք։ Այստեղ Տիգրանը մի մեծ նավ էր պատրաստել և սպասում էր Աժդահակին ու Տիգրանուհուն։ Նավ նստելուց մի օր առաջ, գիշերվա կեսին, Աժդահակը դավադրաբար սպանում է Տիգրանին և նրա աղխի այն անդամներին, որոնք պետք է նավ մտնեին։ Հետո արթնացնում է Տիգրանուհուն և ասում.

— Ջուրն արդեն մեզ է հասել, նավ նստենք։

— Իսկ ո՞ւր է Տիգրանը, ո՞ւր են մերոնք,— հարցնում է Տիգրանուհին։

— Ես սպանել եմ բոլորին,— պատասխանում է Աժդահակը։

— Ի՞նչ։

— Դե, դա քեզ համար եմ արել։

— Ինձ համա՞ր։

— Այո՛։ Ջրհեղեղից հետո աշխարհում կմնանք միայն ես ու դու։ Ես կլինեմ տիեզերքի թագավորը, իսկ դու թագուհին։

— Դու չես դառնա աշխարհի տիրակալը։

— Ինչո՞ւ։

— Որովհետև ապերախտ ես և հարազատասպան։

— Ես կսպանեմ նաև քեզ։

— Սպանի՛ր, ես չեմ վախենում։

Աժդահակը փորձում է միայնակ մտնել տապանի մեջ, բայց նավը տեղից չէր բարձրանում՝ չնայած չորս կողմը ծովացել էին ջրերը։ Հետո գլխի է ընկնում, որ նավը ճեղքեր ունի և ջուրը լցվում է ներս։

Տիգրանուհի, լսո՞ւմ ես, Տիգրանուհի, տապանը ճեղքեր ունի։

— Գիտեմ։

— Դո՞ւ ես արել։

— Այո։

— Բայց չէ՞ որ ինձ հետ կկործանվես նաև դու։

— Ես հոժար եմ, միայն թե քեզ պես չարը ջրամույն լինի։

Աժդահակի երազն այստեղ ընդհատվում է։

Չէ, ասպետ, այս երազն ինձ դուր չի գալիս։ Ես սա գրի չեմ առնի իմ մատյանում։

Մար Աբաս Կատինայի մատյանում ուրիշ բան է գրված Աժդահակի երազի մասին։ Ինձ համար դա ավելի սրտահաճո է։

Հետո Մովսեսը գրում է, թե Տիգրանն ինչպես հաղթեց Աժդահակին, Նախճավանի կողմերում ինչպես քաղաք կառուցեց իր քրոջ՝ Տիգրանուհու պատվին, և Աժդահակի կնոջ՝ Անուշին՝ իր սպասավորների հետ ինչպես բնակեցրեց Մասիսի ստորոտներում։ Եվ իր ասածները հաստատելու համար նորից վկայեց գուսաններին. «Այս բանը ճշմարտապես պատմում են և թվեցյաց երգերը, որ, ինչպես լսում եմ, ախորժելով պահել են գինեվետ Գողթն գավառի կողմի մարդիկ. այդ երգերում շարժվում են պատմությունները Արտաշեսի և նրա որդիների մասին, այլաբանաբար հիշելով և Աժդահակի սերունդները, նրանց վիշապազուններ կոչելով»։

Պատմիչը նման է այն ասպարահատին, որ և դեպի անցյալն է ետ դառնում, և շարժվում դեպի գալիքը։ Հավանաբար Մար Աբաս Կատինան ոչ գինեվետ Գողթնում է եղել, ոչ էլ ծանոթացել այդ գավառի իմաստուն գուսանների հետ։ Միաժամանակ

Գողթնի գուսաններն էլ ամենևին չեն լսել Մար Աբաս Կատինայի անունը։ Զարմանալին այն է, որ Մար Աբաս Կատինան գրավոր է ասում այն, ինչ իրենց երգերում երգում են գուսանները։ Այդ երգերը հավաստում են Մար Աբաս Կատինայի մատյանի պատմությունների ճշմարտությունը։ Մովսեսն այդ մասին ոչ ոքի չէր ասում։ Բայց Գողթան գուսանները նրա համար հավաստիության չափանիշ էին։

Տիգրանի որդիներն են Բարը, Տիրանը և Վահագնը։ Վերջինիս մասին առասպելներն ասում են.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկն եղջնիկ.
Ընդ եղջեան փող ծուխ ելանէր,
Ընդ եղջեան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վագէր
Խարտեաշ պատանեկիկ։
Նա հուր հեր ունէր,
Բոց ուներ մօրուս,
Եւ այկունքն էին արեգակունք։

Հետո Մովսեսն ավելացնում է. «Մենք մեր ականջով լսեցինք, թե այս մասին ոմանք ինչպես են երգում փանդիռներով։ Դրանից հետո երգում ասում էին, թե կռվել է վիշապների հետ ու հաղթել, և Հերակլեսի քաջագործություններին շատ նման բաներ էին երգում նրա մասին։ Բայց ասում են նաև, թե սա ասովածացրած է, և Վրաց աշխարհում սրա հասակով արձան կանգնեցնելով՝ պատվում էին զոհերով»։

Աժդահակին հաղթելուց հետո Տիգրան Երվանդյանը գերում է մարերին ու բերում և բնակեցնում Հայքում։ Հետագայում նրանց հայացած տոհմը կոչվում է Մուրացյան։ Այդ տոհմի ամենաերևելի նահապետը եղել է Արգամը։ Գողթան գուսանները փաղաքուշ են դարձրել այս անունը և կոչել Արգավան։ Հենց այս Արգամի ժամանակ է աշխարհամեջ գալիս Արտաշես արքան։ Արգամը անսում է Արտաշեսի խնդրանքին և չի խառնվում նրա ու Երվանդ արքայի կռվին։ Արտաշեսը հաղթում է և թագ դնում գլխին։ Նա կատարում է իր խոստումը և Արգամին տալիս երկրորդական գահը, հակինթաշար պսակ, երկու ականջի գինդեր, կարմիր միամույկ հագնելու, ոսկի գդալ և պատառաքաղ

գործածելու, նվագով և ոսկե գավաթներով գինի ըմպելու արտոնություն։

Շուտով Հայոց աշխարհի խաղաղությունը վրդովվում է։ Ալանները զորք կազմած մտնում են Հայք և սկսում ասպատակել երկիրը։ Արտաշեսը ժողովում է իր բանակը և ընդառաջ դուրս գալիս թշնամուն։ Կուր գետի ափին բախվում են հայկական ու ալանաց բանակները։ Արտաշեսը հաղթում է և գերի վերցնում ալանաց պատանի արքայազնին։ Ալանների արքան հաշտություն է առաջարկում՝ ամեն տեսակ դիջումների և մշտնջենական դաշինքի պայմանով, սակայն Հայոց արքան մերժում է նրան։ Հենց այդ ժամանակ գետափի դարավանդին հայտնվում է ալանաց արքայազնի քույրը՝ աչագեղ Սաթենիկը։ Թարգմանների միջոցով նա ձայնում է Արտաշեսին և ասում.

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշես,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.
Եկ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
զԱյլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն,
Կամ ծառայեցուցանելով ի սարկաց կարգի պահել,
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել։

Ալանաց արքայադստեր գեղեցկությունն ու պերճախոսությունը գերում են Արտաշեսին։ Նա փափագում է կնությամբ առնել օրիորդ Սաթենիկին և բանագնաց է ուղարկում Ալանաց արքայի մոտ։ Վերջինս ասում է.

Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս
Հաղարս ի հաղարաց և բիւրս ի բիւրուց
Ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց։

Դրանից հետո թե ինչ է անում Արտաշեսը՝ գուսաններն այսպես են երգում.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր։

Ապա տեղի է ունենում Արտաշեսի ու Սաթենիկի հարսանիքը, որի ժամանակ.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշեսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն։

Սաթենիկը գառնում է տիկնանց տիկին և շատ որդիներ պարգևում Արտաշեսին։ Նրանց մեջ ամենաքաջն ու ինքնահավանը ավագն էր՝ Արտավազդը։

Չես կարող ասել, թե մարգարիտների անձրևը երջանկացրեց Արտաշեսին ու Սաթենիկին։ Սիրահարվելուց մինչև սերը ոչ թե մեկ, այլ հազար ու մեկ քայլ է՝ ասում է առածը։ Նրբանկատ են հայոց գուսանները։ Նրանք չեն ցանկացել վիրավորել արքայի արժանապատվությունը և պարզ ու շիտակ ասել, որ Սաթենիկը դավաճանել է Արտաշեսին։ Նրանք երգում են այսպես.

Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս՝
զԱրտախուր խաւարտ և զտից խաւարծի
Ի բաձիցն Արգաւանայ։

Խավարծին կամ խավարածիլը թթվաշ ու համեղ ուղղաբուն բույս է, որ ուտում են ցողունը կեղևելով։ Հայոց աշխարհում այն սիրո բույս է, որն ուտողի քունը չի տանում և միայն սիրածին է մտաբերում։ Եթե երիտասարդն այն դնի իր բարձի տակ և հետո ուղարկի սիրած աղջկան, ապա վերջինս երազի մեջ կտեսնի սիրածին՝ եթե նույն խավարածիլը դնի բարձի տակ և նոր քնի։ Եթե ախտավորը իր լաթից մի ծվեն կապի մացառուտին, ապա թուփը ցավն իրեն կքաշի։ Այդպես է նաև սիրո ծաղիկ խավարածիլը։ Սաթենիկը երազում էր, որ իրեն մի փունջ խավարտ կամ խավարծիլ բերեին՝ Արգամի բարձերի տակից։ Միով բանիվ՝ Սաթենիկը տենչում էր արժանանալ Արգամի սիրուն։

Լինում էին պահեր, երբ աշխարհի բոլոր տղամարդկանց նման Արտաշեսն էլ էր կասկածում կնոջ հավատարմությանը։ Բայց ինչպե՞ս հաստատեր իր ասածը, նա երբեք չէր տեսել Սաթենիկին Արգամի հետ։ Արքայազն Արտավազդը համոզված էր, որ մայրը սիրում է Արգամին։ Մի անգամ նա հորն ասաց.

— Դու ինչո՞ւ ես Արգամին երկրորդական գահ տվել։

— Նա օգնել է ինձ գահ բարձրանալու,— պատասխանեց Արտաշեսը։

— Նա երախտամոռ է և ապիրատ։

— Արքայազն, դու ոչ մի հիմք չունես այդպես խոսելու։

— Ներիր, հայր։

— Տղաս, արքաները պիտի շրջանցեն բոլոր տեսակ բամբասանքները։

— Բայց այն դիպչում է տիկնանց տիկնոջը։

— Բամբասանքը կայծակ է, իսկ կայծակը ամենից բարձր ծառերին է հարվածում։

Հոր սառնասրտությունը զայրացրեց արքայազնին։ Եվ Արտավազդն ստիպված էր ասել ավելին.

— Արգամը մտադիր է խլել քո գահը և թագավորել ամենքի վրա։

— Ի՞նչ ապացույց ունես։

— Քշախոս է ու ոչ մեկին չերմ խոսք չի ասում։ Այդպիսի մարդիկ իշխանության են ձգտում։

Այս զրույցից հետո Արտաշեսը տեղի տվեց և Արգամից խլելով երկրորդական գահը այն հանձնեց Արտավազդին։ Արտաշես արքայի հասցրած այդ վիրավորանքը ծերունի Արգամը կուլ տվեց լռելյայն։

Անցնում է մի տարի և Արգամը ճաշի է հրավիրում Արտաշեսին։ Վիշապների պալատում փառահեղ խնջույք էր։ Ուտում էին ըմբոշխնելով, գինի խմում նախշավոր բղուլներից։

Ճաշ տվեց Արգամը ի պատիվ Արտաշեսի,
Խարդավանելով նրան տաճարում վիշապաց։

Այդ վայելքի մեջ տիկնաց տիկին Սաթենիկը մի պահ որսաց և աչքով արեց Արգամին։ Դա սիրո խոստովանություն էր, որ ամփոփվեց այդ մի կարճ հայացքում։ Մոր այդ դավաճան հայացքը նկատեց արքայազն Արտավազդը։ Նրան թվաց, թե կողը սուր խրեցին։ Նա գինու ըմպանակը շպրտեց Արգամի երեսին և, դիմելով իր եղբայրներին, բացականչեց.

— Ի՞ զեն, արքայազո՞ւնք, այս պալատի բոլոր անկյուններում դավադրությո՞ւն կա արքայի ու մեր դեմ։

Ամենքն իրարով անցան։ Արտավազդը զայրույթի մեջ չէր կարողանում որոշել իր անելիքը։

Այդ ժամանակ Արտավազդի եղբայրները բռնեցին ծերունի Արգամին և սկսեցին քաշել նրա մազերը։ Արտաշես արքան հազիվ խաղաղեցրեց իր զազազած որդիներին։ Խնջույքն ընդհատվեց։ Արտաշեսը վերադարձավ Արտաշատ, մի գունդ հանձնեց արքայազն Մաժանին և հրամայեց.

— Գնա՛, հրի մատնիր Արգամի ապարանքը և կոտորիր Մուրացյան ցեղին։

Մաժանը կատարում է հոր պատվիրանը։ Սակայն Արգամը փախչում և ազատում է իր գլուխը։ Մաժանը գերում է Արգամի քնադատես հարճին, որի անունը Մանդու էր, և բերում ու հանձնում է հորը։

Արտաշես արքան հմայվում է Մանդուի գեղեցկությամբ։ Եվ Արտաշեսը զարմանում է՝ ինչու է Արգամը սիրահետում Սաթենիկին, չէ որ Մանդուն ավելի գեղեցիկ է, քան Սաթենիկը։ Երկու տարի անց, երբ արքայի զայրույթը մեղմանում է, նա հրամայում է Մուրացյաններին վերադարձնել նրանցից գրավված ինչքը։ Արտաշեսը չի վերադարձնում միայն հարճ Մանդուին։ Հավանաբար արքան դրանով ցանկանում էր խոցել Արգամին, ցույց տալ, որ նա արժանի չէ վայելելու գեղեցիկ կնոջ մարմինը։ Իր թաքստոցից դուրս է գալիս և նահապետի արտոնությունը վերստանում Արգամը։ Դրանից խանդարվում է Արտավազդի հոգեկան խռովքը։ Նրա հոգում և ուղեղի մեջ լարեր են կտրվում։ Նրան թվում է, թե ընկել է ցնորական նիրհ մշուշի մեջ։ Մի գունդ է վերցնում, փութով մեկնում Մասիսի ստորոտները, այստեղից անցնում դեպի Նախճավան, բռնում և սպանում Արգամին, սրի քաշում Մուրացյան տոհմից ողջ մնացած այրերին, գրավում նրանց գյուղերն ու ունեցվածքը։

Արտաշեսն, իհարկե, հաշտվեց կատարվածի հետ։ Բայց հայր ու որդի դժկամությամբ էին նայում միմյանց երեսի։ Արտավազդը ելք էր որոնում, որ գուսաններն այսպես են վիպել.

Արտավազդայ ոչ գտեալ,
Քաջի որդւոյն Արտաշիսի,
Տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝
Նա անց գնաց և չինեաց
Ի մէջ Մարաց զմարակերտ։

Որդու հոգեկան խռովքը արագացնում է Արտաշեսի մահը։ Ամենքը սգում են արքայի մահը, լինում են նաև ինքնակամ մահեր։ Հոր հանդեպ ժողովրդական այդ սերը շարժում է Ար-

տավազդի նախանձը և նա իր մաղձը թափում է հոր դիակի առջև.

Մինչ դու գնացեր
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես ունայնացս ո՞ւմ թագաւորեմ։

Արտաշեսը անիծում է որդուն և ասում.

Եթե դու յորս հեծցիս
յԱզատն ի վեր ի Մասիս,
զՔեզ կալցին քաջք, տարցին
յԱզատն ի վեր ի Մասիս
Անդ կայցես,
Եւ զլոյս մի տեսցես։

Հոր նեղվելը կատարվում է։ Մի անգամ Մասիսի լանջին, Գին գետակի ակունքների մոտ կինճեր ու վայրի եշեր որսալու ժամանակ Արտավազդը վայր է ընկնում ձիուց և սուզվում խոր վիհի մեջ։

Մովսեսի մտապատկերում Արտաշեսն ու Արտավազդը պատահաբար հանդիպում են Փիլիպոս Մակեդոնացուն և Ալեքսանդրը Մակեդոնացուն։ Հայր ու որդի հայերը նմա՞ն չեն հայր ու որդի հույներին։ Միայն Արտավազդը չէ, որ նախանձել է հոր իշխանությանը։ Իր հորը՝ Փիլիպոսին, նախանձել է նաև Ալեքսանդր Մակեդոնացին։ Նախանձել է այնպես, ինչպես Հայոց Արտավազդը։ Մի անգամ լսելով հոր հերթական հաղթանակի մասին՝ պատանի Ալեքսանդրն իր հասակակից մտերիմներին ասել է. «Հայրս ինքն է հավաքում փառքի բոլոր դափնիները, ինձ ու ձեզ ոչինչ չի մնում մեծ ու փայլուն սխրանքի համար»։

Լուսավորչի տաճարի կողքին գտնվող դարբնոցից կռանի երեք հարված լսվեց։ Մովսեսն ասես արթնացավ քնից, բեկվեց գուսաններից և վերադառավ իրեն Բագավանում։ Ինքը եպիսկոպոս է, սա Բագավանն է, կռանի հարված տվողն էլ դարբին Մատթեոսն է, որ ամեն օր տաք-տաք բարևում է իրեն։ Այս Մատթեոսը, ինչպես և Հայոց աշխարհի բոլոր դարբինները չեն մոռացել Արտաշեսի որդի Արտավազդին։ Եվ Մովսեսը շարունակում է գրել. «Պառավները սրա մասին զրուցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ, երկաթե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա ջանք է անում

դուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց ասում են, դարբինների կռանահարության ձայնից կապանքներն ամրանում են։ Ուստի դեռ մինչև այժմ էլ դարբիններից շատերը, առասպելին հետևելով, կիրակի օրերը երեք կամ չորս անգամ կռանով խփում են սալին, որպեսզի, ասում են, Արտավազդի շղթաներն ամրանան»։

Հավանաբար սալին ամենից ուժգին հարվածում էր դարբին Մատթեոսը։ Համենայն դեպս այդպես էր թվում բոլոր բագավանցիներին։

* * *

Բագավանի գլխավոր փողոցը կոչվում էր Բուն։ Այդ փողոցի ձախ կողմում էր գտնվում և Լուսավորչի տաճարը, և Մովսեսի տունը։ Վերջինս քարաշեն, միհարկանի շինություն էր, որ և՛ ննջասենյակ ուներ, և՛ ընդարձակ սեղանատուն, և՛ մի խցասենյակ։ Մովսեսը աշխատում ու քնում էր խցասենյակում։

Չգիտես ինչու աշխարհի բոլոր իմաստասերները նախընտրում են խուցը։

— Նեղ խորխորատից երկինքն ավելի պայծառ է երևում,— ասում է Մովսեսը ամեն անգամ, երբ աբեղա Արձանը նրան խորհուրդ է տալիս փոխադրվել շինության ընդարձակ սենյակը։

Տնից մինչև Լուսավորչի տաճարը երկու հարյուր քայլ է։ Այդ ճանապարհի միջնամասում վաճառական Մանուկի դաստակերան էր։ Դա ամենաշքեղ ապարանքն էր ամբողջ Բագավանում։ Տնից՝ Լուսավորչի տաճար, Լուսավորչի տաճարից տուն անցնելիս Մովսեսը մայթի վրա հանդիպում էր Մանուկին, ջերմորեն բարևում ու շարժվում առաջ։ Ինչ կարող ես անել՝ վաճառականը երկու կողմից հարևան էր իմաստասերին։ Մի երկու անգամ Մանուկն իր հարկի տակ հյուրասիրել էր Մովսեսին։ Իմաստասերին թվում էր, թե անփոփոխը, սովորականն ու հավիտենականը Մանուկի հարևանությունն է։ Սակայն գարնան մի օր Մանուկը Լուսավորչի տաճար գնաց եպիսկոպոսին մեկտեղ բարով ասելու։

— Եկա հրաժեշտ տալու, սրբազան Հայր,— ասաց Մանուկը։

— Իսկ ո՞ւր ես գնում,— հարցրեց Մովսեսը։

— Բասենի գավառի Դու գյուղը։

— Ինչ է, երկո՞ր պիտի մնաս այնտեղ։

— Մշտապես։

— Ինչպե՞ս թե մշտապես։

— Հենց այնպես, սրբազան հայր։ Մի վաճառական ընկեր ունեի Սորսոր անունով։ Նրա դուստրը ամուսնացել է Դու գյուղի իշխան Որոտի հետ։ Որոտը մի տարի առաջ է մահացել։ Այրի իշխանուհու անունը Կամարա է։ Նրա երեք տղաներից միջնակը՝ Սորը, մահացել է հոր մահից երկու ամիս հետո։ Հայրական դղյակ-ամրոցի վերին աշտարակից նրա ոտքը սայթաքել է և գետնին ընկնելն ու մեռնելը մեկ է եղել։ Դա կատարվել է ղժբախտ մոր աչքի առջև։ Կամարան չի կարողանում հանգիստ քնել իր ամրոցում։ Նա բնակության ուրիշ վայր է որոնում։ Ես համաձայնեցի փոխանակել մեր ապարանքները։ Ես Դու գյուղում եմ ծնվել։ Իմ հասակում մարդիկ ամենից շատ մանկությունն են հիշում։ Ես վերադառնում եմ դեպի իմ սկիզբը։

Մովսեսն այլևս ոչինչ չհարցրեց։ Վաճառականը համբուրեց եպիսկոպոսի շուրջառի տուտը և գնաց։

Այդ լուրը տակնուվրա արեց Մովսեսի հոգին։

— Աչքդ պլթա, բա՜խտ,— տաճարի լռության մեջ լսվեց նրա ձայնը, որն ասես դիպավ գմբեթարդ առաստաղին և, փշուր-փշուր լինելով, ետ եկավ ու թափվեց կճասալ հատակին։

Ոչ նույն օրը, ոչ էլ հաջորդ օրերին տուն գնալիս ու գալիս Մովսեսը չէր նայում ծանոթ դաստակերտի կողմը։ Բայց նրան թվում էր, թե փողոցի այդ հատվածում իր ոտքերը կապ են ընկնում։ Բուն փողոցի այդ մայթի վրա ոչինչ չէր փոխվել։ Փողոցի վրա կռացած հունապենու ճյուղը հիմա էլ է դիպչում Մովսեսի գլխին։ Վաճառական Մանուկը այդ ճյուղի պտուղը չէր քաղում և թողնում էր, որ կարմիր հունապը ինքնիրեն թափվի մայթի վրա։

Քայլում էր նորովի իմաստնացած իմաստասերը և փորձում գտնել մարդկային կյանքի դիպվածների հյուսվածքի աստվածաստեղծ հենքը։ Չէ, աշխարհում ոչ մի բան հենց այնպես չի լինում։ Մինչև հիմա նա տնից Լուսավորչի տաճար էր գնում, Լուսավորչի տաճարից տուն և միջնամասում ոչինչ չէր տեսնում։ Հիմա իր և աստծու արանքում տնկվել է Կամարան։ Մինչև այժմ աստծու հետ անձամբ էր հաղորդակցվում։ Ինչ պիտի անի այսուհետև՝ մեջտեղ է եկել Կամարան։ Ի՞նչ անել, նորից թափառականի ցո՞ւպ վերցնել։ Բայց հիմա ինքը եպիսկոպոս է և

չի կարող մեր կենալ, հենց այնպես թողնել Բագավանն ու Լուսավորչի տաճարը։ Եթե անգամ թողներ էլ՝ հետու գնալ չէր կարող, չէր դիմանա անօթեան և արկածներով լեցուն թափառումներին։

Լուսավորչի տաճարի ետնախուցը Մովսեսը դարձրել էր դպրաց տուն։ Այստեղ շաբաթվա մեջ երկու անգամ հավաքվում էին բագավանցի մի քանի պատանյակներ և սովորում։ Ինքը՝ Մովսեսն էր ուսուցանում։ Սակայն հենց որ Բագավանում հայտնվեց իշխանուհի Կամարան՝ նա ուսուցչի իր գործը հանձնարարեց աբեղա Արձանին։ Միայն երեք շաբաթ հետո Մովսեսը որոշեց տեսնել, թե ինչ է անում աբեղան։ Այդ օրը Արձանը դաս էր տալիս մի պատանյակի։

— Ի՞նչ է նշանակում արջառ,— հարցնում է Արձանը։

— Տավար, անասուն, լծկան, ջահել եզ։ Արջառ են եզը, կովը, ցուլը, երինջը,— պատասխանում է սանը։

— Կարո՞ղ է պատահել, որ շինականը շփոթի և ոչխարին արջառ կոչի։

— Ոչ։

— Իսկ այծի՞ն։

— Ոչ։

— Հիմա ասա, թե ինչ է նշանակում նախիր։

— Նախիր է կոչվում եզների ու կովերի հոտը։ Նախիրի մեջ չեն մտնում ոչխարն ու այծը։ Հոտ ասելով շինականը հասկանում է ոչխարն ու այծը, բայց ոչ բնավ արջառը։ Նախրապանը եզ ու կով է պահում, իսկ հովիվը՝ ոչխար ու այծ։

— Ի՞նչ է նշանակում այդը։

— Որձ ձի, հովատակ։

— Ի՞նչ ասել է մտրուկ։

— Ձի, զամբիկ, ասպ, հովատակ, ձիու քուռակ։

— Մայրդ ի՞նչ է ասում հավի ոտքի ետևի մասին։

— Բիտ։

— Իսկ միակտոր փայտյա տաշտի՞ն։

— Գուշ։

— Ասա ձեռքիդ հինգ մատներից յուրաքանչյուրի անունը։

— Այս մեծը բութ մատն է,— ձեռքի վրա ցույց տալով ասաց աշակերտը,— սա ցուցամատը, սա միջնամատը, սա մատնամատը՝ այսինքն այն մատը, որի վրա մատանի են դցում, սա էլ՝ ճկույթը։

— Ի՞նչ է նշանակում վիրապ։

— Ջրհոր։

— Ի՞նչ էր հնգաձաս հույների գերագույն աստծու անունը։

— Զևս։

— Հունարեն ի՞նչ է նշանակում Զևս։

— Երկինք։

— Հույներն ու հռոմեացիները բարևելու ժամանակ ինչու են տալիս միմյանց անունը, հայրանունն ու տոհմանունը։

— Ուզում են ցուցանել, թե դիմացինին այնքան են սիրում ու հարգում, որ մտքից չեն հանում նրա անունը, հայրանունն ու տոհմանունը։

Մովսեսն առանց միջամտելու դասին, բարևելու մտքից կառչած դուրս եկավ խցից ու սկսեց խորհել։ Հիմա Կամարային փողոցում հանդիպելուց ինչպե՞ս վարվի ինքը, հույների նման չտա՞ նրա անունը, հայրանունը և տոհմանունը և ավելացնի, որ այդ անուններից ոչ մեկի հետ բարի հիշողություններ չեն կապված։

Առաջին սերը պիծակ է, որի խայթոցը մարդու մարմնի մեջ է մնում ամբողջ կյանքում։ Հե՞յ, անհոգ ու անփույթ երիտասարդություն, ինչո՞ւ գնացիր ու կպար վաճառականի ոսկեճամուկ դստերը։ Ինչպե՞ս չկռահեցիր, որ սիրամարգի նմանվող այդ օրիորդը աշխարհ էր եկել ապարանջանով հրապուրվելու համար և գլուխ չուներ անպատիր սիրո հետ։ Հիմա մտովի վերածևում ես նրան, հարմարեցնում քո երազ աղջկան։ Դե, խելքի՛ եկ, իմաստասեր, այս տարիքում ոչ ոք չի փոխվում։ Ուժասպառ եղած և հոտին կպած նոխազը այլևս այծերի առաջնորդ չէ։

Տարիք է առնում մարդը, բայց ոչ նրա սիրտը։ Սակայն վաթսունն անցնելուց հետո ոչ ոք ոլոր-մոլոր չի գալիս սիրո դռան առջև։ Եթե նույնիսկ այդ դուռը բացվի՝ դու չես ընկնի սիրո բուրաստան։ Քո տարիքում նոր սեր որոնելը նույնն է, ինչ որ ի քարե կաթն կթել, ի վիմե ասր ստանալ։ Ճշմարիտն այն է, որ քո որոնածը նոր էլ չէ։ Դու ուզում ես նորափթիթ դարձնել փտած կոճղը։ Իզուր, քո բախտի ճանապարհին Կամարայի հայտնվելը նման է եղել ագռավի բոթաբեր կռնչոցի։ Քո ճամփով գնա, իմաստասեր, ագռավի տեսած սերմը չի կանաչի...

Կովում ու անհուշտ է մնում ինքն իր հետ։ Հետո վեճի է բռնվում աստծու հետ։ Չէ, ամենակարողդ արարիչ, դու իզուր ես Ադամի մարմնից մի կող հանել և կերտել Եվային։ Կնոջն

այդպես չեն արարում։ Նելոք բան կանիր՝ եթե վեց օրում կնոջն արարեիր, մի ժամում՝ աշխարհը։ Կինը կարող էր շտկել աշխարհի խորդուբորդությունները, իսկ աշխարհը չի կարող կնոջ ծրոմբոտոցը շտկել։ Կնոջ մեջ ամենից շատ ստապատիր նազն է։ Տղամարդը՝ եթե տասը գայլենի էլ հագնի չի կարող չտեսնել կնոջ նազերը։ Մարդու մարմնից մի կող հանելով՝ դու թերակատար ես դարձրել մարդուն։ Այդ բաց կողի տեղը մարդու մեջ լցվել է այն անհեղ թուլությունը, որ մարդ զգում է կնոջ հանդեպ։

Կամարան, այնուամենայնիվ, լթողեց, որ Մովսեսն աստծու հետ իր վեճը շարունակեր այդքան երկար։ Մի իրիկնադեմի Մովսեսն իր տան գավիթում տեսավ պճնազարդ իշխանուհուն։

— Ես եմ,— ասաց Կամարան։

— Տեսնում եմ,— պատասխանեց Մովսեսը։

— Իմ հարևանությունը հաճո չէ քեզ։

— Ո՛չ, հաճո չէ։

— Իզուր, մարդու կյանքի սկիզբն ու վերջը նման են լինում իրար, ինքս էլ չգիտեմ, թե աստված ինչու է ինձ բերել քո դուռը։ Աշխարհում հաստատուն ոչ մի բան չկա, իմաստասեր։ Հավերժականը կես օրվա կյանք ունի։

— Այդ դեպքում ինչո՞ւ ես հիշում ինձ։

— Ինձ եմ հիշում և ոչ թե քեզ։ Իսկ օրիորդական տարիներիս դու ինձ հետ ես եղել։

— Հիմա ժամանակ է անցել, դու իշխանուհի ես դարձել ուրիշի տոհմանունով, իսկ ես՝ եպիսկոպոս։

— Դու եպիսկոպոս ես ուրիշների համար, ինձ համար դու սոսկ Մովսես ես։

— Այս տարիքում ոչ ես եմ քեզ պետք, ոչ էլ դու՝ ինձ։

— Դա ճիշտ չէ։

Մովսեսը լիմացավ, թե Կամարան ինչպես ծեկի եկավ ու համբուրեց շուրջառի փեշը։

— Հիշում ես, Մովսես, մի անգամ դու իմ Եղը որդուն փրկեցիր դատ ու դատաստանից։

— Հիշում եմ,— ասաց Մովսեսը։

— Բայց դու չգիտես, թե մինչ այդ ինչ է եղել։

— Ի՞նչ պիտի լիներ։

— Մեկը փորձում էր սպանել տալ քեզ։

— Ո՞վ։

— Վարազշապուհ Ամատունին։

— Բայց ես նրան ոչ մի վատ բան չեմ արել։

— Դա ճիշտ է. բայց դու քո գոյությամբ շատերին ես խանգարում նաև հիմա։ Ըստ ամենայնի Վարազշապուհը փորձում էր ի կատար ածել մեկ ուրիշի հրամանը։

— Հետո՞։

— Դա եղել է այն տարում, երբ դու դարձել ես եպիսկոպոս։ Դու գյուղի մեր դղյակում Վարազշապուհը մի ելուզակի սովորեցնում էր, թե ինչպես կարելի է սպանել քեզ։ Հիմար մարդ է Վարազշապուհը։ Կարծում է, թե քանի որ իմ գլխին վարշամակ է, ապա ես ոչ մի տղամարդու վնասել չեմ կարող։ Ես լցվեցի անողոք չարությամբ։

Կամարան լռեց։ Հավանաբար մտադիր չէր շարունակել։

— Ինչո՞ւ ընդհատեցիր քո խոսքը,— հարցրեց Մովսեսը։

— Շարունակությունը կարևոր չէ, դու հիմա ողջ ես, իսկ մարդասպանը չկա,— ասաց Կամարան։

— Ինչպե՞ս թե չկա։

— Հենց որ նա ճանապարհ ընկավ դեպի այստեղ՝ Բագավան, ես իմ հավատարիմ զորականներից մեկին ուղարկեցի նրա ետևից։ Ելուզակն իր մահը ընդունեց Դուից շատ չհեռացած։

— Իսկ Վարազշապուհ Ամատունի՞ն, նա իմացա՞վ, թե ինչ պատահեց իր վարձկանի հետ։

— Նրան ես ինքս ասացի։

— Դո՞ւ։

— Այո։

— Իսկ նա՞։

— Ես ստիպեցի, որ նա հանգիստ թողնի քեզ։

— Բայց Վարազշապուհը այն մարդը չէ, որ այդքան դյուրությամբ ձեռք քաշի իր մտադրությունից։

— Ես նրան ասել եմ. «Վարազշապուհ Ամատունի, եթե դու նոր վարձկան բռնես կամ փորձես ուրիշ ճանապարհով մեջտեղից վերացնել եպիսկոպոս Մովսեսին, ապա Հայքում թաքնվելու տեղ չես ունենա և կմեռնես յոթ օրվա ընթացքում»։ Զարմանալին այն է, որ նա ամենևին չհակադրվեց։ Այդ դեպքից հետո ես այլևս չեմ տեսել նրան։

— Իսկ նրա համախո՞հը՝ Գագիշո նորխոռոնին։ Այդ ի՞նչ զորեղ բարեկամություն է եղել քո ամուսնու և նրա միջև, որ դատերը՝ Թեժին, պահ է տվել քեզ։

— Ես այդպես էլ չիմացա, թե ինչ կա Գագիշոյի ու Որոտի միջև։

— Հիմա որտե՞ղ է Թեժը։

Հավանաբար Նազանք լճի ափին, հայրական Արագիլ ամրոցում։ Հենց որ Գագիշոն լսեց, որ ես փոխադրվում եմ Բագավան, Դու եկավ և դատերը հետն առած վերադարձավ տուն։

— Ատատն ասում է, որ Թեժն Արագիլ ամրոցում չէ։

— Օրիորդի որտեղ լինելն արդեն ես չեմ իմանա։

— Իսկ ի՞նչ է ասել քեզ Գագիշոն։

— Ինչի՞ մասին։

— Թե ինչու է Թեժին թաքցնում Ատատի աչքից։

— Գագիշոն ուզում է, որ Ատատը փեսայանալուց առաջ դառնա իր համախոհը։

— Դա անկարելի է։

— Ես գիտեմ այդ մասին։ Եվ եթե կարողանայի՝ կօգնեի, որ Թեժն ու Ատատը ամուսնանան։

* * *

Մեծ էր այրիացած իշխանուհու գերդաստանը։ Տան գործերը վարում էր Կամարայի ավագ տղան՝ Նոյը։ Բայց նա ամեն ինչ անում էր մոր հետ խորհրդակցելով։ Կամարայի կրտսեր տղա եղբը դարձել էր ասրավաճառ։ Նա բուրդ էր առնում այստեղից-այնտեղից և վաճառում հնդիկ և հույն վաճառականներին։ Հավանաբար առքն ու վաճառքը շահեկան էր, չնայած Եղբի այդ գործը մոր սրտովը չէր։ Ե՛վ Նոյը, և՛ Եղբը ամուսնացել էին Բագավան գալուց առաջ։ Նոյը երկու ուստր ուներ, Եղբը՝ մի դուստր։ Շատ էին ծառաները։ Գերդաստանն ուներ իր ախոռապետը, հանդերձապետը և զորական մի վաշտ։ Որոտը սիրում էր հավաքագրել քաջ նիզակավորներին։ Նույնը հիմա շարունակում էր Կամարան։

Նոյն ու Եղբը ոչինչ չգիտեին իրենց մոր և Մովսեսի սիրո մասին։ Մովսեսը նրանց համար միայն եպիսկոպոս էր։

Մովսեսը չէր գնում Կամարայի մոտ, Կամարան էր Մովսեսի տուն գալիս։ Պատրվակ չէր որոնում իր այցի համար։ Նա հաշ-

վիտու չէր ոչ ոքի։ Կանացիական հրապուրանքը կաթիլ առ կաթիլ մտնում էր իմաստասերի հոգին։

Պատնեշ չկար Կամարայի դատաստակերտի և Մովսեսի տան բակերի սահմանագլխին։ Հաճախ Մովսեսը բակ էր մտնում և գաղտագողի դիտում, թե ինչ են անում իշխանուհու կալվածքի մարդիկ։ Մովսեսի բակի ուղղությամբ Կամարայի պարտեզն էր։ Ցանկապատ դարձած փոքրիկ թփի վրա բույն էր դրել մի դեղձանիկ։ Երբեմն-երբեմն լսվում էր դեղձանիկի ձագերի ծլվլոցը։ Պարտեզում շատ էին ծղրիդները, որոնք ճռվողում էին օրն ի բուն։

Մովսեսը զարձել էր բնության ունկնդիր։ Նրան թվում էր, թե ինքն ավելի շատ ձայներ է լսում, քան մյուս մարդիկ։ Գողթնի Բիբ գուշակը սաղարթների սոսափյունն է լսում, ինքն էլ՝ թռչունների հաղարաձայն կանչերը։ Գուցե ծնվել է թռչնահմա՞ դառնալու համար։ Մտաբերեց իր ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցին։ Հայոց գրերը ստեղծելու ժամանակ երևի նա էլ է ունկնդրել բնության ձայները։ Հունարեն այբուբենում ոչ ծ կա, ոչ էլ ղ։ Իսկ Կամարայի պարտեզը լցված է ծ-ով ու ղ-ով։ Առավոտյան իշխանուհու աղաղակները իրենց փառահեղ ծուղրուղուով ազդարարում են լուսաբացը։ Բնության հրաշալիքներից է ծուղրուղուն։ Այդ բառը կամոքձահատվեր՝ եթե հայերենը չունենար ծ և ղ տառերը։ Իսկ թռչունների ծլվլոցը, նրանց քաղցր ծիվ-ծիվը։ Մաշտոցը լսել է բոլոր ձայները, աստծու պես ծանրութեթև է արել ամեն ինչ։

Մովսեսը լսում է իր անունը։ Հանկարծակիի է գալիս ու ձեռքից բաց թողնում մոքերի երասանը։ Ցանկապատի մոտ ազատաթեղի մի փունջ ձեռքին կանգնել է Կամարան։

— Եթե ես այստեղ չապրեի՝ դու չէիր կանգնի այդտեղ,— ասում է իշխանուհին։

— Այո, իրավացի ես,— պատասխանում է Մովսեսը։

— Երբ դու հայտնվում ես այստեղ՝ ես իմ դատիկոնից անմիջապես նկատում եմ քեզ։

— Դե, ես ձեղուն չունեմ, և ստիպված եմ դեռնից դիտել աշխարհն ու մարդկանց։

— Որևէ լուր չկա՞ Թեժից։

— Կա։

— Դե, շուտ ասա, որտե՞ղ է հիմա նա։

— Այստեղ։

— Բագավանո՞ւմ։

— Այո՛, երեկ եկել և մտել է Լուսավորչի տաճարը։ Ուզում էր իմ միջոցով գտնել Աստատին։ Նա մի կերպ փախել է Գաղիշոյից և թաքստոց է որոնում։

— Էլ ինչ կարիք կա երկար ու բարակ մտածել։ Դրանից էլ դյուրին բան։

— Ի՞նչ ես առաջարկում։

— Ես կպահեմ նրան այնքան ժամանակ, ինչքան պետք լինի։

— Դա վտանգավոր է։

— Ինչո՞ւ։

— Գաղիշոն եկումուտ ունի քո դատակերտը։

— Նրա ոտն արդեն կտրվել է այստեղից։

— Իսկ ծառաներդ ու զորականնե՞րդ։

— Նրանք ամենքն էլ հավատարիմ են ինձ։

— Չես կարող բոլորի լեզվին նիգ դնել։

— Ոչ, այնուամենայնիվ, նրան ապահով պահելու համար այս դատակերտից հարմար նիստ չես գտնի։

***

Հողջուն, իմաստասեր Մովսես։ Ամեն անգամ այքս ջուր է կտրում՝ մինչև հայտնվում է Աստատը։ Ես ուզում եմ այս տարիքում կարդալ քո մատյանի ավարտը։ Իսկ դու դանդաղում ես, հա դանդաղում։ Գլուխգործոցներն, իմաստասեր, ստեղծվում են համառոտ ու արագ։ Աստված աշխարհը վեց օրում է արարել և ոչ վեց հարյուր օրում։

Եվ հետո, հաճելի կլիներ, որ նորից քննեիր գրածդ։ Կարևոր բացթողումներ չկա՞ն։ Հոմերոսյան ժամանակների բոլոր կամուրջներից այս կողմ ես անցել, բայց ոչինչ չես գրել մեր Զարմայր նահապետի մասին։ Ես լսել եմ, որ եթովպական զորքի հետ նա օգնել է Պրիամոսին և մարտնչել Աքիլլեսի դեմ։ Մա առասպե՞լ է թե ճշմարտություն։

Իմաստասեր, դու սքանչելի ես ներկայացնում մեր Երվանդյան Տիգրանին։ Բայց քո զուգահեռները դուր չեն գալիս ինձ։ Մի նսեմացրու Հայոց մեծերի հակառակորդներին։ Բյուրասպի Աժդահակի մասին հրաշալի զրույցներ կան մեր աշխարհում տարածված։ Ինչո՞ւ ես շրջանցում դրանք։

Արդարությունը եղիր, բոլոր ազգերի համար տեղ տուր արևի տակ և պատշաճը մատուցիր յուրաքանչյուրին։

Պատմությունն ազգերի նավարկություն է ժամանակի օվկիանոսներով, ծովերով ու նեղուցներով։ Օրհասական կռիվներ են լինում նեղուցներով անցնելիս։ Պահիր ազնվափայլ անունդ և ոչ մի նեղուցում մի՛ հրիր հարևանիդ։ Հրիչն ու հարևան ազգին ջրամույն դարձնելը ներհակ է հայկյան ոգուն։ Եվ փորձիր տեսնել, թե ինչ կյանք կա մեր կողքով անցնող նավերի ներսում»։

Մովսեսը կարդաց ասպետի նամակը և մենախոսեց.

— Է՜, ասպե՜տ, ասպե՜տ, դու շարունակում ես կշտամբել ու կսմթել ինձ։ Ինչ է, ի՞նձ ես ծանոթացնում մեր ազգին։ Ամեն ազգի մեջ էլ նեղսիրտ մարդիկ կան, ես գործ չունեմ նրանց հետ։ Հայ մարդպանն է հաշվում նաև հայոց հավկիթը։ Նողկալի է։ Ախ, ինչո՞ւ չես ուզում հասկանալ։ Դժվար է Հայոց պատմություն գրելը։

Եվ Մովսեսը նստում է գրակալի առջև ու սկսում. «Այս երկու պայմաններն են, որ քո հարցասիրության շնորհիվ մեզ տագնապ ու նեղություն են պատճառում՝ համառոտարանություն և արագաբանություն, այն էլ պերճ ու պայծառ, ինչպես պլատոնական խոսքերը, ստությունից հեռու և լի ճշմարտությամբ, և այս կերպով քեզ միանգամից պատմել առաջին մարդուց սկսած մինչև քեզ։ Բայց այս բոլորը միասին չի կարող պատահել։ Որովհետև աստված, որ ամեն բան ստեղծեց, նա, որ կարող էր մի ակնարկությամբ մի ակնթարթում ամեն ինչ զոյացնել՝ այսպես շարավ, այլ օրեր որոշեց և ստեղծվածների մեջ կարգեր, որովհետև մի քանիսն առաջին օրվա ստեղծվածներն են, մի քանիսը՝ երկրորդի, երրորդի և հաջորդ օրերի։ Եվ սուրբ հոգին այս վարդապետությամբ մեզ սովորեցնում է նույնպիսի կարգեր պահպանել։ Բայց քո փափագը մենք տեսնում ենք աստվածային սահմանից դուրս եկած, որ ամեն բան և միանգամից և ճշմարտությամբ քեզ ասված լինի։ Իսկ մենք կամ երկար պետք է գրենք, որպեսզի ցանկացածիդ պես լինի, կամ կարճ, որ քեզ հաճելի չի լինի։ Որովհետև քո շտապելուց մենք ոչինչ չգրեցինք Ալեքսանդր Մակեդոնացու մասին, ոչ էլ Եղիսական պատերազմի մասին իր տեղումը հիշեցինք և այստեղ ենք կցում։ Չենք կարող ասել, թե իմաստո՞ւն թե անհանճար հյուսն ենք դառնում այստեղ, պատշա՞ճ է թե ոչ...

Բայց ինչ ցանկություն է արդյոք, որ ունես Բյուրասպի Աժդահակի անպիտան և անճոռնի առասպելների նկատմամբ, կամ ինչու մեզ նեղություն ես տալիս պարսից անհարմար ու անճաշակ զրույցների պատճառով։

Ինչ կարոտություն ունես այս սուտ առասպելներին կամ ինչ կարիք այսպիսի շինծու անմիտ և անհանճար զրույցների։ Մի՞թե սրանք հույների պերճ ու ողորկ, պատճառավոր առասպելներն են, որոնց տակ թաքնված են ճշմարիտ իրողություններ։ Բայց դու մեզ ասում ես, որ իմաստ տանք նրանց անիմաստությանը և անդարդը զարդարենք։ Ես նույնը կրկնում եմ քեզ։ Ի՞նչ կարոտություն ունես սրանց, և ինչ փափագ է՝ անբաղձալի բաներին բաղձալը և մեզ նոր նեղություն պատճառելը։ Մենք այս վերագրում ենք քո մանկական հասակին և համարում ենք քո տհաս խակության ցանկություն։ Ուստի այստեղ էլ թող կատարած լինենք քո կամքը և փափագդ լրացնենք»։

* * *

Երկխոսությունը շարունակվում է։ Ասպետ Սահակը անվերջանալի հարցումներով անհանգստացնում է Մովսեսին։ Դրանց պատասխանելու համար շատ ժամանակ է պետք։ Սակայն ասպետ Բագրատունին անհամբեր մարդ է։ Նա շտապեցնում է իմաստասերին և ջանում ժամ առաջ ստանալ իր ակնկալածը։ Հիմա էլ հարցնում է. «Հյուսիս-արևմուտքում Հայքի բնական սահմանը հասնո՞ւմ է ծովին, այսինքն Եվքսինյան Պոնտոսին, թե ոչ»։

Հավանաբար ասպետը չի եղել խաղտիքում, որտեղ լեռների ոտքերի տակով, արևմուտքից արևելք ուղղություն բռնած հոսում է Ճորոխը։ Հետո Հայքի ծայր հյուսիսում դեռը թեքվում է դեպի հյուսիս և մի օրվա ճամփա կտրելով, թափվում Եվքսինյան Պոնտոս։ Այդ գետաբերանն էլ Հայոց աշխարհի ամենահյուսիսային եզրն է։ Այստեղից մինչև Տրապիզոն ամբողջ ծովեզերքը հայկական տարածք է եղել անհիշելի ժամանակներից մինչև Հայկ Նահապետ, և Հայկ Նահապետից մինչև այժմ։ Խաղտքից մինչև ծով մի պտղունց է։ Շատերն են փորձել նվաճել այդ մի պտղունցը, բայց հայը միշտ էլ իր մի ոտքը պահել է ծովի ջրի մեջ։

Վաղարշակ թագավորը արևմուտքի բդեշխ է նշանակել Տորքին։ Սովահենները սարսափում էին այս անգեղ մարդուց և

հեռու էին փախչում Եվքսինյան Պոնտոսի հայկական ափերից։

Հաճախ Մովսեսը տարվում է մենախոսությամբ և մոռանում գրի առնել ակնթարթածին մտքերը։ Հիմա էլ նա մտաբերեց, որ ոչինչ չի գրել և թեքվեց մագաղաթի վրա ու նոր ակոս բացեց. «Իսկ Տորքին, որ սերված էր Հայկի թոռն Պասքամից, մի տգեղ, բարձր, կոպիտ կազմվածքով, տափակ քթով, փոս ընկած աչքերով, դմնյա հայացքով մարդու, որին սաստիկ տգեղության պատճառով կոչում էին Անգեղյա, որ վիթխարի հասակ և ուժ ուներ՝ արևմուտքի կուսակալ նշանակեց և ցեղի անունը կոչում է Անգեղ տուն՝ երեսի տգեղության պատճառով։ Բայց եթե ուզում ես, ես էլ սրա մասին անհամ ու անտեղի ստեր կպատմեմ, ինչպես պարսիկները, որ Ռոստոմ Սագճիկի մասին պատմում են, թե հարյուր քսան փղի ուժ է ունեցել։ Որովհետև նրա ուժեղության և սրտոտ լինելու պատճառով երգերը պատմում էին նրա մասին չափազանց անհարմար բաներ, որոնք ոչ Սամսոնին են հարմարում, ոչ Հերակլեսին և ոչ Սագճիկին։ Որովհետև երգում էին նրա մասին, իբր թե ձեռք էր զարնում որձաքար ապառաժներին, որոնց վրա ոչ մի ճեղքվածք չկար, ուզածին պես ճեղքում էր, մեծ ու փոքր, եղունգներով տաշում էր, տախտակներ էր ձևացնում և նույնպես եղունգներով նրանց վրա գծում էր արծիվներ և նման բաներ։ Պոնտոս ծովի ափին պատահել է թշնամիների նավերի և վրա է հարձակվել. նրանք հեռացել են խոր ծովը մոտ ութ ասպարեզ։ Չկարողանալով նրանց հասնել, ասում են, վերցնում է բլրաձև ժայռեր և շպրտում է նրանց ետևից։ Ջրերի ալեկոծումից ոչ սակավ նավեր ընկղմվում են, և ջրերի պատառումից առաջացած ալիքները մնացած նավերը շատ մղոններ առաջ են քշում, Ո՜հ, չափազանց առասպել է այս, առասպելների առասպել։ Բայց ինչ կանես, որ մարդը սաստիկ ուժեղ էր և այսպիսի զրույցների արժանի»։

Տորքի մասին զրույցները շատ են։ Դրանցից մեկը, որ պատմում էին Ծոփաց աշխարհում, Մովսեսը մի քանի ձևով համառոտեց, երկար մոմոաց, բայց հարմար չգտավ մատյանում գրի առնելու։ Զրույցն ասում է՝ Հայքում մի երիտասարդ է եղել Տորք անունով։ Զնայած քաջ ու կորովի էր, բայց բոլոր աղջիկները հեռու էին փախչում նրանից։ Դե ո՞վ կսիրի կամ կամուսնանա այնպիսի տգեղի հետ, ինչպիսին Տորքն էր։ Սակայն Տորքը չգիտեր, որ ինքն այդքան տգեղ է։ Նա սիրահարվեց մի ազնվատոհմ օրիորդի, որի անունը Նազենի էր։ Աղջիկը անգթաբար այպանեց Տորքի սիրո խոստովանությունը։ Խոցվեց երիտասարդը, բայց չհուսահատվեց։ Մեծ ճանապարհի եզրին մի հսկա ժայռ կար։ Տորքն իր եղունգներով սկսեց հղկել ժայռը և նրա վրա դեղաքանդակել Նազենուն։ Երբ ամիս հետո Տորքը այդ ժայռից յոթ արձան՝ յոթ Նազենի կերտեց։ Օրիորդն իր նաժիշտներով եկավ ու դիտեց արձանաշարը։ Հիացավ, արմանքզարմանք կորեց։ Նաժիշտներից մեկն ասաց.

— Տիրուհի, յոթ արձաններն էլ քեզ նման են։ Նմանահան արձանագործը արժանի է ամեն ինչի։

— Իսկ ի՞նչն է, որ նման է ինձ,— հարցրեց Նազենին։

— Ամեն ինչ նման է, տիրուհի, և՛ կեցվածքը, և՛ ոտքերն ու իրանը, և՛ մազերը, աչքերն ու շրթունքները, և՛ քիթն ու այտերը, և՛ վիզն ու ձեռքերը։ Նա նկատել է նույնիսկ քո ճկույթի նրբությունը։

Հրաշալի արձանաշարի լուրը տարածվեց ամեն կողմ։

Մի օր էլ Հայք եկավ Կիպրոսի գեղանի թագուհին։ Նա դիտեց Տորքի կերտած արձանաշարը և հյուրընկալվեց օրիորդ Նազենու տանը։

— Թագուհի, ինձ զարմացնում է քո հետաքրքրասիրությունը,— ասաց Նազենին։

— Ինչո՞ւ է զարմացնում, օրիորդ։

— Մի՞թե արժե այս քանդակները տեսնելու համար Կիպրոսից այստեղ հասնել։

— Իհարկե, օրիորդ Նազենի, սրանցից յուրաքանչյուրը մի հրաշալիք է։ Եվ բացի այդ իմ ճանապարհորդությունն ապարդյուն չանցավ։ Ծանոթացա արձանագործ Տորքի հետ։

— Դու տեսար այդ տգեղի՞ն։

— Նա այդքան էլ տգեղ չէ։

— Ի՞նչ ես ասում, թագուհի, դու երեի ուրիշի հետ ես շփոթում։

— Ոչ, ես տեսել եմ հենց իրեն՝ Տորքին։

— Եվ հաստատում ես, որ նա այդքան էլ տգեղ չէ՞։

— Այո՛։

— Զարմանալի է։

— Իզուր ես զարմանում, օրիորդ։ Տղամարդու գեղեցկությունը ոչ թե նրա արտաքինի, այլ նրա ուժի և հոգու մեջ է։ Եթե նա կարողանա քանդակել ինձ այնպես, ինչպես քեզ է քանդակել, ապա ես կհամաձայնեմ դառնալ նրա կինը։

— Եվ այդ մասին դու խոսել ես նրա հետ։
— Դեռ ոչ, բայց վաղը կխոսեմ։
— Եվ նրան քեզ հետ Կիպրոս կտանե՞ս։
— Իհարկե։
— Իսկ եթե չգա քեզ հետ։
— Այդ դեպքում գլուխ կխոնարհեմ և հրաժեշտ կտամ նրան։ Հանճարների կամքի վրա չի կարելի բռնանալ, իսկ Տորքի պես հանճար, հավանաբար, ամբողջ Ասիայում չլինի։

Գիշերը Նազենին չկարողացավ քնել։ Խանդն ու նախանձը չարաչարեցին նրան։ Նա թագուհուն թողեց քնած և մի նաժիշտի ուղեկցությամբ դուրս եկավ տնից ու գնաց Տորքի մոտ։ Խորամանկեց և ասաց.

— Ինձ քեզ մոտ է ուղարկել Կիպրոսի չքնաղագեղ թագուհին։ Նա մտադիր է քեզ Կիպրոս տանել։
— Ես Կիպրոս չեմ գնա,— արձագանքեց Տորքը։
— Ինչո՞ւ։
— Որովհետև ես ոչ թե թագուհուն, այլ քեզ եմ սիրում։
— Ինչը կարող է քեզ ետ կանգնեցնել այդ մտքից։
— Ոչ մի բան։
— Ես համաձայն եմ քո կինը դառնալ,— ասում է Նազենին և հուսավառում Տորքին ու ինքն իրեն։

Երկու օր հետո թագուհին վերադառնում է Կիպրոս, իսկ Նազենին ամուսնանում է Տորքի հետ։

Մովսեսին թվում է, թե այս զրույցը կիսատ է և սկսում է իր սովորական վեճը ասպետ Սահակի հետ.

— Կիպրոսի թագուհուն ասված է ուղարկել։ Նա եկել է օրիորդ Նազենու նախանձը շարժելու։ Եթե ասածու մատը խառը չլիներ՝ թագուհին Կիպրոսից չէր հասնի Հայք։

***

Հայոց Վաղարշակ թագավորը արքունիքում երկու խորհրդական էր պահում, մեկը բարին հիշեցնող, մյուսը՝ վրեժխնդրություն։ Մեկի անունը Սանտուրսանանատուր էր, մյուսինը՝ Սան։ Սանտուրսանանատուրը բարին հիշեցնողն էր, Սանը՝ վրեժխնդրությունը։ Մի անգամ արքայի մոտ բերին ձեռ ու ոտը կապոտած մի մարդու։ Սենեկապետն ասաց.

— Այս մարդը գինեմոլ է։

— Իսկ դու, սենեկապետ, արքունիքը շփոթել ես գինետան հետ,— խոսեց Վաղարշակը։

— Չեմ շփոթել, տեր իմ, նա արժանի է արքայական պատժի։ Հենց որ գինովանում է՝ սկսում է հայհոյել։

— Ո՞ւմ է հայհոյում։
— Քեզ, տեր արքա։
— Ի՞նչ է ասում։
— Ասում է՝ մեր արքա՜յի...
— Շարունակությունն ասա, սենեկապետ։
— Շարունակությունը չեմ լսել, տեր իմ։
— Իսկ ո՞վ է լսել։
— Ոչ ոք։ Բայց հավանաբար ուզում է ասել՝ մեր արքայի արևը խավարի, կամ՝ մեր արքայի օրը սևանա։
— Տարեք և գլխատեք,— հրամայում է Վաղարշակը։
— Հենց հիմա՞։
— Չէ, երբ գինովությունն անցնի։

Սենեկապետը գահասրահից դուրս է բերում ձեռ ու ոտը կապոտած մարդուն։ Այդ ժամանակ, ինչպես դերասանները բեմի վրա, արքայի առջև տնկվում են Սանտուրսանանատուրն ու Սանը։

Սանն ասում է.

— Արդար վճիռ կայացրեց արքան։ Տիրակալին հայհոյողի վիզը պիտի կտրել։

— Չէ, Սան, արքայի վճիռն օրապակաս էր,— հակադրվում է Սանտուրսանանատուրը։

— Ինչո՞ւ է օրապակաս, նրա համար, որ Վաղարշակը պաշտպանում է իր արքայական արժանապատվությունը և չի հանդուրժում, որ ամեն մի թոկից փախած հայի աջ ու ձա՞խ։

— Արժանապատվություն չես պահի՝ գինովցած մարդու հետ գլուխ գնելով։

— Ուրեմն ի՞նչ թույլ տալ, որ գինովցածն ինչ ուզենա՝ ասի՞։

— Ոչ մի արքա չի կարող փական գնել հարբած մարդու լեզվին։ Պարզապես պիտի բանի տեղ չդնել նրա ասածը։

— Բայց նա անպատկառ խոսքեր է ասել։

— Սենեկապետի խոսքերից երևաց, որ նա ոչինչ էլ չի ասել։

— Ինչպե՞ս թե չի ասել։

— Այդ մարդը միայն մի բան է ասել՝ մեր արքային... Շա-
բունակությունը պահել է իր փորում։ Գուցե այդ շարունակու-
թյունն ուրիշ բան է և ոչ այն, ինչ ենթադրում է սենեկապետը։

— Ի՞նչ բան։

— Ասենք՝ մեր արքայի արևին մեռնեմ, կամ՝ մեր արքային
հազար տարվա կյանք եմ մաղթում։

— Ուրիշի փոխարեն կուշտ մի մտածիր։

— Դա վերաբերում է նաև սենեկապետին։

— Հրամանն արքան է տալիս։

— Սենեկապետն այսօր իր քսու խոսքերով գրգռեց արքա-
յին և արքան ու ձեռն ու ոտը կապած մարդը հավասարվեցին
իրար։

— Ինչպե՞ս հավասարվեցին։

— Սենեկապետի խոսքերից գինովցավ նաև արքան։ Իսկ
գինովցածի հրամանն ու հայհոյանքը նույն գինն ունեն։

— Սանտուրսանսանատուր, քեզ չի՞ թվում, որ դու վիրա-
վորում ես արքային։

— Ոչ։

— Հանդուգն խոսքերիդ համար արքան կպաշտոնազրկի
քեզ։

— Բայց ինձ նման երկար անունով խորհրդական չի գտնի
Հայքում։

— Ավելի լավ, մարդ հոգնում է մինչև Սանտուրսանսանա-
տուր է ասում։

— Իմ անունը համբերության փորձաքար է։

Արքան բարձրացնում է ձեռքը և Սանն ու Սանտուրսանսա-
նատուրն ընդհատում են իրենց վեճը։ Եվ Վաղարշակն ասում է.

— Սանտուրսանսանատուրն իրավացի է։ Ես փոխում եմ իմ
հրամանը։

Այս կարգի պատմությունների մի շարան կար Մար Աբաս
Կատինայի մատյանում։ Մովսեսը համառոտեց դրանք, նորից
համառոտեց իր համառոտածը և Վաղարշակի մասին այսպես
գրեց. «Եվ իր թագավորական տանը օրենքներ է հաստատում,
ժամեր է սահմանում արքունիք մտնելու և իջնելու, խորհրդի,
կերուխումի և զբոսանքների համար։ Սահմանում է զինվորական
կարգեր, առաջին, երկրորդ, երրորդ և այլն, և երկու մարդ գրով
հիշեցնողներ, մեկը բարին հիշեցնողը, մյուսը վրեժխնդրությու-
նը։ Բարին հիշեցնողին հրաման է տալիս թագավորի բարկանա-

լու կամ անիրավ հրաման տալու դեպքում հիշեցնել իրավացին
և մարդասիրականը»։

Վաղարշակն անփոփոխ է թողնում Երվանդյան Տիգրանի
ժամանակներից մնացած մի օրենք, որի համաձայն անարև օրը
արքան իրավունք չուներ մահվան վճիռ կայացնել։ Երբեմն հան-
ցագործի բախտը բերում է և Տափերականի երկնքում մի քանի
ամիս չի երևում արևը։ Ինչ հանցանք էլ գործած լինի մարդը,
միևնույն է՝ նա պետք է ապրեր մինչև արևի դուրս գալը։ Աբե-
գական Հայքում ոչ մի արքա չէր խախտել արեգական այդ
օրենքը։

Մովսեսին զարմացնում էր նախնյաց չափավորած զգացո-
ղությունը ժամի մասին։ Մարդը կարող է հավասարաչափ լար-
վածությամբ, ընկալումով ու հաճույքով ունկնդրել մի ժամ։
Դրա համար էլ գուսանի երգը, վիպասացի ասքը պետք է կարճ
լինի։ Ամենագեղեցիկը ամենասեղմն է՝ սա է Հայքի վիպասա-
նաց օրենքը։

Մար Աբասն ասում էր, որ Վաղարշակը արքայական գա-
հավորակի մոտ մի հատ մահակ էր պահում։ Դրանով նա երեք
հարված էր հասցնում այն արքունականի հետույքին, ով չէր
կարողանում հակիրճ ղեկույց տալ։

Հետո Մովսեսը մի քանի տող է գրում Վաղարշակի որդի
Արշակի մասին ու հրաժեշտ տալով Մար Աբաս Կատինայի
մատյանին, տարեգրում.

«Աստանոր սպառին բանք ծերունւոյն Մար Աբայ Կատի-
նայ — այստեղ սպառվում են ծերունի Մար Աբաս Կատինայի
պատմությունները»։

* * *

Ունկն դրեք ինձ, բոլոր ծնունդներդ հայկյան գալիքի։ Ես
կատարեցի մի մարդու՝ ասպետ Սահակ Բագրատունու պատվերը,
բայց դրեցի ամենքիդ համար։ Ես առավոտ դարձրի իմ կյանքի
արփողը։ Օր ծերության ես այրեցի ամեն բան, որպեսզի հրա-
վառեմ հոգիս մատյանի բոլոր էջերը լուսավորելու համար։
Իմաստասեր, պատմիչ ու մեկնիչ կոչեցին ինձ, բայց ես նաև
Հոմերոս էի։ Չէ, ամբարտավան չեմ։ Թե իմ մատյանի այս
հատվածը գրված լիներ Հունարեն՝ կկարծեին, թե դա բեկվել է
Հոմերոսի քերթվածից. «Երվանդակերտ կոչված ձեռակերտի,

մասին։ Ինձ համար քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով։ Որովհետև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակության շուրջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը։ Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերին։ Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը հիշեցնում էին ծնոտների գեղեցիկ ողորկությունը։ Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերացնում էր մի բերան, իր երկու շրթունքներով։ Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղղել է Թագավորանիստ բարձրավանդակի վրա։ Արդարև բերրի և Թագավորանիստ դաստակերտ»։

Ինչեր քաշեցի իմ մատյանի ձեռքին։ Ամիսներով ընկա հենց միայն այս Երվանդակերտ քաղաքը կառուցող Երվանդի ետևից։ Ասում են, թե սա բողոքդի է եղել։ Հետո ի՞նչ։ Ավելի լավ չէ՞ մի բող կին աշխարհաշեն արքա ծնի, քան առաքինի մեկը լույս աշխարհ բերի մի Գադիշո խորխոռունի կամ Վարազշապուհ Ամատունի։

Ահեղ ու կործանարար հայացք է ունեցել այս Երվանդը։ Եռեղանդամ էր դառնում կամ մահիճ ընկնում այն մարդը, ում դիպչում էր Երվանդի հայացքը։ Այդ հայացքի ուժը նորանում էր ամեն օր։ Նրա չար աչքի զորությունը պարպվում էր առավոտյան առաջին մարդուն նայելիս։ Այդ պատճառով արքունի սպասավորները ամեն առավոտ որձաքարեր են բռնել Երվանդի առաջ, որի հայացքի չարությունից այդ որձաքարերը պայթելիս են եղել։ Դե արի իմացիր, թե որտեղ են գրկախառնվում ճըշմարտությունն ու առասպելը։

Այս Երվանդի հայացքից երկյուղելով՝ Արտաշես արքան խուսափել է անձամբ դուրս գալ նրա դեմ։ Երվանդին սպանել է Արտաշեսի զինվորներից մեկը, որը նույնպես չար աչք ուներ։

Շատերը չեն հավատում չար աչքին։ Բայց չէ որ այդպիսի մարդիկ կան։ Այլապես իմ նախատատը ինձնից հազար տարի առաջ չէր ստեղծի «թող բարիլուսդ դեմ չառնի չար աչքի» օրհնանքը։

Մովսեսի քրոջ՝ Աշխենի ամուսին Առանձարը Տարոնի Ներ-

գին գյուղից Բագավան էր ուղարկել մի հնախոսարան Հայոց աշխարհի նշանավոր չար աչք ունեցողների մասին։

Մի ոմն Կատար շրջել է Հայքի բոլոր կողմերը և գրի առել այն ամենը, ինչ լսել է։ Սրմանց լեռան ոտի տակ մի գյուղ կա Մեծգոմ անունով։ Այս գյուղում էր ապրում Հաթամը, որը զարմանալի աչք ուներ։ Նրա հայացքից ճեղքվում էր ամեն տեսակ մանյակ, ինչ կին կամ օրիորդ էլ այն կրելիս լիներ։

Արմավիրում մի մարդ էր ապրում Թասիկ անունով։ Նրա անայլայլ հայացքից օձերն ուշագնաց էին լինում։

Արտաշատում Բանբան անունով մի մարդ կար։ Ահեղ հայացք ուներ։ Բավական էր նայեր որևէ հղի կնոջ՝ երեխան կմեռներ դեռ արգանդից դուրս չեկած։ Ժողովուրդը բողոքեց և Թագավորն ստիպված էր քաղաքից քշել այդ մարդուն։

Վան քաղաքի իշխանն էր Վանիկը։ Սա չէր սիրում իր կնոջը, բայց նրանից ազատվելու հնար էլ չէր գտնում։ Վերջապես նա գլխի է ընկնում, որ իրեն կարող է օգնել հենց նույն Վանում ապրող չար աչք ունեցող Աբելը։ Եվ ահա իշխանը Աբելին խընջույքի է հրավիրում իր տուն։ Խնջույքի ժամանակ Աբելի հայացքից իշխանի կնոջ գլուխը պտտվում է։ Իշխանուհին անկողին է ընկնում և հինգ օր հետո ավանդում հոգին։

Երբեմն չար աչք ունեցողների օգնությանն էին դիմում ըմբիշները։ Նրանք մրցությունից առաջ իրենց հակառակորդներին «ծանոթացնում» էին չար աչք ունեցողներին։ Եվ ըմբիշն ուժաթափ էր լինում նրանց հայացքից։

Արտաշեսի թոռ Տիգրան աշխարհակալ արքան չար աչք ունեցողներից կազմած մի դասակ ուներ, որը կռվի մեջ էր մրտնում ճակատամարտի բախտորոշ պահին։ Այս դասակի զինվորների հայացքից հակառակորդի զորականների ձեռքերը թուլանում էին, նրանք դեն էին նետում իրենց վահաններն ու նիզակները և խուճապահար լքում ռազմադաշտը։

Կատարի հնախոսարանում ամենից երկար գրված էր Վարազդատ արքայի մասին։ Չար աչք է ունեցել այս Վարազդատը։ Կատարն ասում է, թե նրա հայացքից առյուծները խեղճանում էին և մոնչում ահից։ Մովսեսը վերաձևեց Կատարի գրածը և օլիմպիական մրցումների հաղթող, առյուծասատ բռնցքամարտիկ Արտավազդի մասին մատենագրեց այսպես. «Բարեգործ Թեոդոս Օգոստոսը, Մեծ կոչվածը, իր թագավորության քսաներորդ տարում Հայոց վրա Պապի փոխարեն թագավորեցրեց մի

ոմն Վարազդատի նույն Արշակունյաց տոհմից։ Այս Վարազդատը երիտասարդ էր տարիքով, սրտոտ, հաղթահասակ, ուժեղ, լի արիության բոլոր գործերով և շատ հզոր նետաձգության մեջ։ Շապուհից փախչելով նա գնացել էր կայսեր դուռը և այնտեղ քաջ հանդիսացել։ Նախ Պիսայում բանցքամարտիկներին հաղթելով, հետո ելլեզացիների Արեգ քաղաքում կես օրում մի քանի առյուծ կոտորեց, որի համար օլիմպիական հանդեսի ըմբշամարտերի խաղերում փառք վաստակեց և հարգանք։ Իսկ այն քաջ և արիական գործերը, որ նա կատարեց Ղանկվարտների ազգի դեմ, համարձակվում եմ ասել, թե հավասար էին սուրբ Տրդատի գործերին, որովհետև թշնամիների կողմից հինգ տխրության հարձակվեցին նրա վրա և նա մեկը մյուսի ետևից բոլորին սրով կոտորեց։ Եվ մի բերդի վրա դիմելով, բերդի պատվարի վրա տասնեյոթ մարդ նետով զարնելով իրար վրա ներքև գլորեց, ինչպես շուտ հասունացած թզերը թափվում են սաստիկ մրրկից։

Երբ նա իրեն թագավոր մեր աշխարհն եկավ Շապուհի հիսունհինգերորդ տարում, առաջին կռվում պատահում է մի քանի ասորի ավազակների՝ Դարանաղիի դժվար տեղերում, նրանց փախստական է անում և ետևներից ընկնում։ Իսկ նրանք Եփրատի նեղ տեղում կամրջից անցնելով՝ փայտը գետը գցեցին իրենց ետևից. իսկ նա հասնելով, վազելով թռավ Եփրատի վրայով, ավելի քան լայնացի Քիոնեսի վազքը քսաներկու կանգունի չափ։ Այստեղ մի նոր Աքիլլես էր հանդես գալիս՝ Սկամանդրոս գետի վրայով ցատկելիս։ Ավազակները զարհուրած զենքերը գցեցին և անձնատուր եղան։

Այսպես իր երիտասարդության քաջությունններից հարբած լինելով՝ թագավորության ժամանակ էլ չէր հնազանդվում Հունաց վերակացու զորքերի խրատին։ Այլ պատգամավորներ կ ուղարկում Շապուհի մոտ, որ իր աղջիկներից մեկին իրեն կնության տա և ինքը Հայոց աշխարհը նրան կդարձնե։ Հունաց զորավարներն այս իմանալով, հայտնում են կայսրին։ Ինքնակալ Թեոդոսը հրամայեց նրան բռնել, եթե նա իր կամքով կայսրի կոչին չգնա։ Ուստի հարկադրված՝ իր կամքով գնում է կայսրի մոտ, հուսալով, թե սուտ կհանե Օգոստոսին։ Իսկ կայսրը նրան նույնիսկ տեսության չարժանացրեց, այլ հրամայեց երկաթե կապանքներով տանել օվկիանոսի Թուլիս կղզին»։

* * *

Ասպետ Սահակ Բագրատունին չսպասեց, որ Մովսեսն ավարտեր իր մատյանը։ Նա գրիչներ վարձեց և սկսեց ընդօրինակել տալ պատմության այն մասը, ինչ ուղարկել էր իմաստասերը։ Միանգամից ընդօրինակում էին երեք հարյուր մատյան։ Մինչ այդ աշխարհում ոչ մի գիրք այդքան շատ չէր բազմացվել։ Սահակը մտադիր էր ավարտելուց հետո մատյանն ուղարկել բոլոր նախարարներին, եպիսկոպոսներին, երևելի անձանց։ Եվ, այնուամենայնիվ, մտահոգության մեջ էր։ Հայկական առածն ասում է. «Զարամիտները եթե ուզենան մեծ լեռն էլ կուտեն՝ մանր մանր բրդելով»։ Իսկ եթե հարյուր տարի հետո երեքհարյուրից ոչ մեկն էլ չմնա։

Իր մտահոգությունը կիսեց մոր հետ։ Տիկին Մագաղաթը սկսեց մտմտալ, բայց չգիտեր, թե ինչով օգներ որդուն։ Մի քանի օր հետո նա ասպետին ասաց.

— Տղաս, այս գիշեր երազ տեսա։

— Ի՞նչ երազ։

— Աստծուն տեսա։ Ես նրան պատմեցի, թե ինչ հոգս ունի տղաս։ Նա ասաց. «Եթե ուզում եք, որ ասպետ Սահակի պատվերով գրված «Հայոց պատմությունը» մոռացության չտրվի ու հայերի հետ անցնի դարը դարին կապող կամուրջներով, ապա պետք է Դվինի մայր տաճարում այն մի անգամ կարդալ բարձրաձայն»։

Սահակն այնպիսի լրջությամբ ընդունեց մոր ասածը, ասես դա ոչ թե երազում, այլ արթմնի ժամանակ է ասված զրուցել մոր հետ։

Անմիջապես դուրս եկավ տնից և շտապեց Հովհան Մանդակունու մոտ։ Ասպետն իր զրույցը սկսեց հեռվից.

— Հայրապետ, ինչո՞ւ են բազմանում չարախոսներն ու չարագործները։

— Աստված փորձում է անաղարտ հոգի ունեցողներին։ Կոփում է նրանց դիմադրության եղրերը,— պատասխանեց կաթողիկոսը։— Չարությունը մարդկության համար աչքի կեղտ է, որից պիտի ազատվել և լուսավոր հայացքով նայել աշխարհին։

— Հազիվ թե, հայրապետ, այդ կեղտից մի օր մարդու աչքը կփակվի և աշխարհը մեզ համար կդառնա մութ ու անտեսանելի։

— Սխալվում ես, Սահակ, բարին պիտի հաղթի։

— Ե՞րբ, աշխարհի դեմքն աղճատելուց հետո՞։

— Չարի կործանման ու փրկության ժամը աստծու ձեռքին է, ասպետ։

— Իսկ աստված ի՞նչ է թողել մեր ձեռքին։

— Հուսալու և աստծու ողորմությանը հավատալու կարողություն։

— Դա քիչ է, հայրապետ։ Մենք ամեն ինչ կարող ենք կորցընել։ Դա ոչինչ, երկրայինը թող երկրի վրա մնա։ Բայց ես երկյուղում եմ աստվածային համար, ի՞նչ անենք, որ Մովսես իմաստասերի գիրքը չարագործների հրի ճարակ չդառնա։

— Սպասիր, Սահակ, Մովսեսն իր պատմության ո՞ր մասն է գրել։

— Կեսը։

— Թող ավարտին հասցնի։

— Ինձ մտահոգում է ուրիշ բան։

— Ի՞նչ բան։

— Մշուշոտ է այդ մատյանի գալիքը։ Այն դառնում է Հայոց աշխարհում մինչև հիմա գրված բոլոր մատյանների աչքը։

Ապա Սահակը Հովհան Մանդակունուն հայտնեց իր մոր երազի մասին։

— Պետք է կատարել աստծու պատվերը,— ասաց կաթողիկոսը, ապա ավելացրեց,— Մովսեսի մատյանը ինքս կկարդամ աստծուն։

Այնուհետև հենց որ հարմար պահ էր որսում Մանդակունին մտնում էր մայր տաճար և խորհրդավոր լռության մեջ կարդում մատյանը։ Կարդում էր աստծու համար աստվածային ներշնչմամբ։ Ամեն օր մի քանի մագաղաթ։ Կարդում էր ավելի ջերմեռանդորեն, քան Աստվածաշունչը։ Նրան թվում էր, թե աստված իրոք լսում էր Հայոց պատմության էջերը։ Հետո սկսեց ինքն էլ հավատալ, որ դրանից հետո Մովսեսի գրած գիրքը չի կորչի։ Բարձրաձայն ընթերցելով հայրապետն ասես Հայոց պատմությունը պահ էր տալիս աստծուն։ Հովհանի համար իր նախկին դասընկեր Մովսեսը դարձել էր աստված։ Եվ մատյանի ամեն մի հատված ընթերցելուց հետո նրան թվում էր, թե ինքը միայն միջնորդ է, պատգամախոս, և աստված զրուցում է աստծու հետ։ Մինչ այդ հոգու խորքում հայրապետը տարբերություն չէր տեսնում իր, Գյուտի ու Մովսեսի միջև։ Նրան թվում էր, թե երեքը էլ մտքի ու հոգու հավասար կորով ունեն։ Միայն հիմա, Մովսեսի մատյանը բարձրաձայն կարդալուց հետո հասկացավ, որ ոչ ինքը, ոչ էլ Գյուտը Մովսես չեն։

Ասպետ Սահակը գոհ էր, որ կաթողիկոս Հովհանը օրհնանքի է արժանացնում իր մատյանը։

Զմեռը Մասիսի կատարից նոր էր իջել Տափերական դաշտ։ Քաղաց ամսի Վանատուր օրը Բագավանից Դվին հասավ աբեղա Արձանը։ Մովսեսի մատյանի հերթական էջերը Աստատի փոխարեն նա էր բերել։ Ասպետը զարմացավ։

— Իսկ ո՞ւր է Աստատը,— հարցրեց Սահակը։

— Չգիտեմ, չգիտե նաև իմաստասեր Մովսեսը։ Մենք կարծում էինք, թե նա այստեղ՝ Դվինում կլինի։

— Չէ, ես նրան չեմ կանչել։

— Դա արդեն ցավալի է։ Տասներկու օր է, ինչ չգիտենք, թե որտեղ է նա։

— Գուցե Դու գյուղ է գնացել։

— Նա այնտեղ անելիք չունի, Թեժը հիմա Բագավանում է,— ասաց Արձանը և պատմեց, որ իշխանուհի Կամարան տեղափոխվել է Բագավան, որ նրա դաստակերտը Մովսեսի տան կողքին է։

— Իսկ օրիորդ Թեժն ի՞նչ է անում Բագավանում։

— Նա փախել է հոր մոտից և դիմել Մովսեսի օգնությանը։

— Եվ ի՞նչ որոշեց եպիսկոպոսը։

— Երկու ամսից ավելի է, ինչ աղջկան թաքցրել ենք իշխանուհի Կամարայի դաստակերտում։

— Այդ մասին, իհարկե, չգիտե Գադիշո խորխորունին։

— Այո, չգիտե և իմանալ էլ չի կարող։

— Հիմա ամեն ինչ պարզ է։ Եպիսկոպոսը ռազմավարական սխալ է գործել։ Գադիշոն որոնել է Թեժին ու չի գտել։ Նա հասկացել է, որ իր դուստրը չէր կարող անհայտանալ առանց Աստատի։

— Դու կարծում ես, որ Գադիշոն սպանել է Աստատի՞ն։

— Ինչո՞ւ սպանել։ Նա Աստատի հետ վարվել է այնպես, ինչպես դուք եք վարվել Թեժի հետ։

— Բայց Թեժն աղջիկ է, իսկ Աստատը՝ քաջ զորական։

— Գադիշոն էլ Գադիշո է, աբեղա, նրա խորամանկ խազերից գլուխ չեն հանում նույնիսկ Պարսից արքաները։

Ասպետը համոզված էր, որ Գադիշոն Աստատին ծուղակի մեջ

է գցել։ Երևի Արագիլ ամրոցի նկուղներից մեկը հանցանաց խուց է դարձել ասպետի կապարճակրի համար։

Հանդարտաբարո Սահակի հոգին ասես ընդվզեց միանգամից։ Գադիշոն շատ է երկարում իր ձեռքերը։ Ասպետն այնպես կխփի այդ ձեռքերին, որ խորխոռունյաց տերը ցավի մրմուռը չի մոռանա մինչև կյանքի վերջը։

Սահակ Բագրատունին ուներ ընդամենը յոթանասուներկու զորական։ Նրանք միաժամանակ և փայլուն նժույգավարներ էին, և փայլուն նետաձիգներ, և փայլուն նիզակավորներ։ Առանց ժամանակ կորցնելու ասպետը կարգի բերեց իր զորական ուժը և չոկատի գլխավորին ասաց.

— Գադիշո խորխոռունին իր Արագիլ ամրոցում բանտել է մեր Աստատին։ Պետք է դաս տալ չափը կորցրած այդ ուրացողին։ Գնացեք Նագանք լճի ափ և օրը ցերեկով պաշարեցնք Գադիշոյի ամրոցը։ Կպահանջեք Աստատին։ Եթե կամովին հանձնեց՝ ոչ մի նետ չարձակեք և տուն դարձեք։

Հեծյալ զորաչոկատի մեկնելուց մի ժամ հետո ասպետի դղյակ հասավ Վահան Մամիկոնյանը։

— Ամեն ինչ խառնվեց, Սահակ,— ճեպով ասաց Վահանը,— Վիրքից սուրհանդակ է ժամանել, Վախթանգ արքան սպանել է բդեշխ Վազգենին և մարտահրավեր նետել պարսիկներին։ Վրաց արքան մեր օգնությանն է դիմում։ Հայոց գունդը Շիրակում մեզ է սպասում։

Հայն ու վրացին միմյանց հետ կապված են թախտի բոլոր թելերով։ «Մենք մի արև ունենք՝ լույս տալուց լուսավորվում ենք երկուսով, խավարելուց՝ մթան մեջ ենք ընկնում երկուսով», ասել է բդեշխ Աշուշան։

Հե՜յ պայծառամիտ ու մեծահոգի Աշուշա։ Դու կարող էիր հարկիդ տակ հյուրընկալել համայն Հայաստանը։ Դու հենց այնպես, պատահաբար չխնամիացար Վարդան Մամիկոնյանի հետ։ Սպարապետի գեղանի դուստրը՝ Շուշանիկը դարձավ տղայիդ՝ Վազգենի կինը։ Շուշանիկի կյանքը եղավ հայի ու վրացու բարեկամությունն անխորտակ դարձնող ամրակուռ շաղախ։ Նա էր, որ Ցուրտավի եկեղեցում հաստատեց հայերեն ժամերգությունը։ Եվ դարձյալ նրա կարգադրությամբ էր, որ Ցուրտավի աթոռի համար եպիսկոպոսներ էին նշանակվում հայերից կամ հայկական ուսում ստացած վրացիներից։ Շուշանիկը Ցուրտավում եղբայրացրեց հայերենն ու վրացերենը։

Բայց ինչ կարող ես անել, որ երբեմն տղան հորը չի քաշում։ Թուլակամ ու փառասեր մարդ դուրս եկավ Վազգենը։ Ամենևին չէիր ասի, թե նա Աշուշայի հարազատ ուստրն է։ Զգնահատեց իր վսեմաշուք տիկնոջ ավանդապահ ոգին։ Հաճախ թվում էր, թե Վազգենը ոչ թե ազատատոհմ պայազատ է, այլ ընդօծին։ Վազգենն ու Շուշանիկը չորս զավակներ ունեցան՝ երեք ուստր և մի դուստր։ Սակայն ամուսնական կյանքի հենց առաջին օրերից Վազգենը չսիրեց Շուշանիկին։ Բիրտ էր ու անսիրտ։ Հոր մահից հետո ստանձնեց բդեշխությունը և դարձավ բռնակալ։ Նույնիսկ ծեծում էր իր փափկասուն տիկին Շուշանիկին։ Նա ուրացավ հայրենի կրոնը և բարեկամացավ Պարսից Պերոզ արքայի հետ։ Ամուսնացավ Պերոզի կնոջ մոր հետ։ Դրանից հետո տիկին Շուշանիկը իր ամոթալի կյանքը քարշ տվեց հազիվ վեց տարի։ Նա մահացավ ամուսնու պատճառած տառապանքներից։

Հենց այդ օրերին Վախթանգ արքայի ապարանքի առջև երևաց աբեղա Սուրամը, որն անընդհատ կրկնում էր նույնը.

— Սրբացա՜վ, սրբացա՜վ Շուշանիկը, սրբացա՜վ Շուշանիկը...

Վախթանգին հայտնեցին, թե Սուրամի հավաստմամբ Շուշանիկի ոգին ամեն գիշեր երևում է Ցուրտավի եկեղեցում։

Վրաց արքան այլ կերպ էր ընդունում Շուշանիկի մահը։ Հիմա բդեշխ Վազգենին ոչ ոք չի կարող սանձել։ Նա կմատնի ամենքին, նա կմատնի համայն Վիրքը։ Պետք է սպանել նրան։

Վախթանգը կտրուկ եղավ իր որոշման մեջ։ Ցուրտավում և Վիրքի բոլոր կողմերում մարդիկ իմացան, որ Վախթանգը սպանել է Վազգենին և Վրաց աշխարհի սահմաններից դուրս քշել պարսիկ հարկահաններին։ Դա ապստամբության ազդանշան էր։

Թախտի աստղը կանգ առավ Հայոց ու Վրաց երկնակամարում։ Սկիզբը հաջողակ էր։ Ազվանքից Հայք էր վերադառնում հայոց նախարարական գունդը, որ պարսկական զորաբանակի հետ, Զառմիհր Հաղարավուխտի հրամանատարությամբ երկար ժամանակ կռվում էր լեռնականների դեմ։ Հաղարավուխտը հենց այնպես չարձակեց հայոց նախարարական գունդը։ Պարսիկ զորապետը վազուց էր խոստացել արձակուրդ տալ հայոց զորականներին։ Թող գնան, տան կարոտն առնեն, ապա համալրված նորից ներկայանան իրեն։ Հաղարավուխտն այս անգամ

մտադիր էր հայոց գունդը տանել հեփթաղների դեմ։ Թող ինչքան կուզեն՝ երկու կողմերն էլ քաջություն ցուցանեն։ Հեփթաղները պարտվեն՝ կշահեն պարսիկները, հայերը պարտվեն՝ դարձյալ կշահեն պարսիկները։

Սակայն Հայոց գունդը Դվին հասավ թե չէ՝ այլ որոշում կայացրին Հայոց աշխարհի մարզպան Ատրվշնասպ Հողմանդյանը ու հազարապետ Վեհվեհնամը։ Նրանք հայոց գունդը խառնեցին երկու հարյուր զորական ունեցող պարսկական մի զորաջոկատի հետ և մեկնեցին Շիրակ։ Ի՞նչ էին մտադիր Ատրվշնասպ Հողմանդյանն ու Վեհվեհնամը, գժվար էր ասել։

Շիրակ հասնելուն պես հայոց գունդը տեղավորվեց Անի ամրոցի մեծ զորանոցում, իսկ պարսկական զորաջոկատը՝ Նազկոցաձորի բերդում։ Հենց նույն երեկոյան էլ հայերը գաղտնի խորհրդի նստեցին։ Միանա՞լ Վախթանգի կոչին, թե չեղոք դիրք գրավել։ Չես կարող միանգամից պատասխանել այս հարցին։ Այդտեղ էին ասպետ Սահակ Բագրատունին և ոսկեհատ Վահան Մամիկոնյանը։

Առաջինը խոսեց Սահակ Բագրատունին.

— Հայոց աշխարհում խախտվել է դահնամակը, հնամյա նախարարական տները զրկվում են իրենց տանուտիրական իրավունքներից ու կալվածքներից։ Երիրի տեր են դառնում ուրացողները։ Մենք զրկվում ենք սրբազործված հազարամյա մեր իրավունքներից։ Թուլանում է հայոց զորական ուժը, որովհետև ուրացողները պարսիկներին դուր գալու համար զորական ուժ չեն պահում։ Այսպես հեռու գնալ չեն կարող։ Շուտով համայն Հայքը կդառնա պարսկախոս ու մոխրասեր։ Ամոթ մեզ։ Ստրուկը ստրկալույծ է դառնում կամ զենքի ուժով կամ համբերությամբ, իսկ մենք՝ նախարարներս ու ազատորդիներս, հետիոտն ենք դառնում առանց մարտի ու արժանապատվությունը պահելու։ Ո՞ւր մնաց հայկյան մեր ազատաբաղձ ոգին։ Գուցե սա է փրկության պատեհ ժամը։ Մենք ճանապարհ ենք որոնում։ Ուզում ենք փրկվել ամենօրյա կասկածներից և ամենժամյա հարվածներից։ Քաջ այր է Վրաց Վախթանգ թագավորը։ Գուցե բազմաղորմ աստված տեսնի մեր վտանգները, օգնի մեզ և վրացիների հետ թերևս կարողանանք որոշ չափով նեղել պարսիկներին։

Սահակ Բագրատունին կարծես ողորեց նախարարներին։ Խոսեցին խանդավառված և միաբանեցին ինքնահոժար։ Ապա

խելք-խելքի տվեցին և հասկացան, որ առանց Վահան Մամիկոնյանի ոչնչի չենք հասնի։ Իսկ Վահանը նրանց ասաց.

— Ամենքն էլ գիտեն, որ իմ կյանքի բոլոր ժամերը անցնում են տագնապով։ Երեկոյին հասնելով՝ կասկածում եմ, թե կապրե՞մ մինչև առավոտ, առավոտին հասնելով՝ երկյուղում եմ, թե կապրե՞մ մինչև ցերեկվա վերջը։ Ինձ թվում է, թե հապճեպ պիտի լինի անհայտ վիճակիս վախճանը։ Կկամենայի և նախընտրելի էր ինձ համար, որ մայրս բնավ չծներ ինձ։ Արժե՞ր ծնվել այսպիսի աշխարհ գալու համար։ Բայց միաբանել ձեր խորհրդին և ասել, որ իմաստը լավ է, գործեք, չեմ կարող, քաշվում եմ հայտնել, որովհետև լավ գիտեմ Արյաց ուժը և բյուզանդացոց թուլությունն ու խաբեությունը։ Դուք ասում եք, թե մեզ միաբանում են Վրաց արքան և հոները։ Վիրքն առանձին՝ թույլ երկիր է, այրուձիով էլ՝ սակավ, իսկ հոների մասին ով կարող է ստույգ բան ասել, կուզենան՝ կգան, կուզենան՝ չեն գա, առայժմ մեջտեղ չկան, չեն երևում։ Չի կարելի հույս դնել հոների վրա, նրանք անվստահելի են։ Իսկ թե իմ կամքը հարցնեք և իմ խոսքը ընդունեք ու հավանեք, ապա ես այսպես կասեմ՝ մենք այնպիսի ժամանակների ենք հասել, երբ խելոք մարդը պետք է ավելի բարեկամանա բարեկամի հետ, բայց ապավինի միայն իր սեփական ուժին։ Ինչո՞ւ եք դիմել ինձ։ Չէ, ինձ մասնակից մի դարձրեք ձեր անպիտան խորհուրդներին։ Միաբանում եք ամենեքյան, հետո փորձության ժամին լքում ու միայնակ թողնում համախոհներին։ Երեսուն տարի առաջ մեր նախարարներից ոմանք այդպես չվարվեցի՞ն հորեղբորս՝ Վարդան Մամիկոնյանի հանդեպ։

Նախարարները լսելով Վահան Մամիկոնյանի այս խոսքերը՝ փորձեցին հավաստիացնել, որ իրենք միաբան են։ Նրանցից մեկն ասաց.

— Մենք լսեցինք քեզ, հերոսազարմ այրդ Մամիկոնյան։ Բոլոր ասածներդ ճշմարիտ են ու արդար, վայել քո իմաստությանը։ Բայց մենք մեր հույսը ոչ հոռոմների, ոչ էլ հոների վրա ենք դրել, այլ՝ աստծու ողորմության և մեր նախնիների կանչի վրա։ Մենք դերադասում ենք նահատակվել, քան ապրել այսպես անարգված ու արհամարհված։ Քեզ էլ, Վահան Մամիկոնյան, հաճո չէ տեսնել, թե ինչպես է ժանգոտվում Մամիկոնյան տոհմի սպարապետական արծվակիր լանջապանակը։

Անսալով նախարարների հորդորներին Վահանն այսպես արձագանքեց.

— Դուք գիտեք, որ իմ Վարդ եղբայրը Պարսից արքունիքում է։ Հենց որ պարսիկները լսեն մեր ուխտի մասին՝ նրանք շղթայակապ կանեն եղբորս և տանջանքների կենթարկեն նրան։ Բայց թող աստված օգնական լինի ինձ։ Ես համաձայն եմ ձեր ուխտին։

Ապա նախարարները ողջունեցին Վահան Մամիկոնյանին և միաբանության բացականչություններով ասացին.

— Եկեք ամենքս երդվենք սուրբ Ավետարանի վրա։

Հենց այստեղ հայոց բանակում էր բանիբուն և խորհրդապահ սրտով այր Աթիկ քահանան, որ Բշնի գյուղից էր։ Նա մեջտեղ բերեց Ավետարանը։ Ցուրաքանչյուրն իր ձեռքը դրեց մատյանի վրա և ասաց. «Ով խոտորվելով իր հավատից՝ ուրանա երդումը և նենգությամբ ստի, թող աստված նրան արժանացնի հավերժական լացի ու ատամների հավերժական կրճտոցի»։

Կեսգիշերն անց էր, երբ ցրվեցին։ Միայն իր օթևանը չգնաց նախարար Վարազշապուհ Ամատունին։ Նա շտապեց Մաղկոցաձորի բերդը, մտավ պարսկական զորատեղին և մարզպան Ատրվշնասպ Հոզմանդյանին ու հազարապետ Վեհվեհնամին պատմեց հայոց նախարարների որոշման մասին։ Պարսիկները երկյուղից խուճապահար եղան։ Նրանք գիշերով էլ դուրս եկան զորանոցից և փախուստի դիմեցին։ Մակայն նրանց չհաջողվեց անկատ անցնել Անիի մեծ զորանոցի կողքով։ Հայերը զինափոխվեցին ու սկսեցին հետապնդել փախչողներին։

— Մեր միաբանությունը մի ժամ էլ չդիմացավ,— ասաց Վահան Մամիկոնյանը Սահակ Բագրատունուն։

— Ամեն երկրի մեջ էլ սափոր կկոտրվի,— պատասխանեց ասպետը և ավելացրեց,— ոչինչ, պղտորն անցավ, ջուրը հիմա վճիտ կդառնա։ Եվ լավ է, որ շուտ անցավ։

Առաջ անցած հետախույզ հեծյալները փութանակի[1] ետ դարձան և զեկուցեցին Վահան Մամիկոնյանին, որ Ատրվշնասպն ու Վեհվեհնամը ճողոպրում են մեծ արագությամբ։

— Նրանք իրենց զրաստներով հեռու գնալ չեն կարող,— ասպետի հետ իր զրույցը վերսկսելով ասաց Մամիկոնյանը։

— Մի մոռացիր, սպարապետ, որ պարսիկներին ուղեկցում է Վարազշապուհ Ամատունին, որը Շիրակից Արտաշատ տանող ճանապարհը գիտե այնպես, ինչպես մենք,— արձագանքեց Սահակ Բագրատունին։

Վահան Մամիկոնյանը հուզվեց։ Ապտեն առաջին անգամ նրան անվանեց սպարապետ։ Նրան թվաց, թե լսեց արյան տոհմականը։

Նժույգները թափ առան և զրույցն ընդհատվեց։

Լուսադեմին հայոց գնդի առաջապնաց զորաթևը հասավ պարսիկների ետևից։ Վերջիններս խուսափեցին մարտից և լքեցին զրաստներն ու կառքերը։ Հայերը վերցրին ավարը և շարունակեցին հետապնդումը։ Հենց այդ ժամանակ հայկական գնդին ընդառաջ եկավ Ատատը՝ ասպետի յոթանասուներկու հեծյալներով։ Նրանց հետ էր ձեռքերը կապոտած Գադիշո խորխոռունին։ Տեսնելով իր կապարճակրին Սահակ Բագրատունին անչափ ուրախացավ։

— Ի՞նչ պատահեց քեզ, Ատատ, դու մեջքդ դեռևս տվող զորական չես, ինչպե՞ս ընկար ծուղակի մեջ,— խոսեց Սահակը։

— Ասպետ, նա դև է, մաղձոտ հուշկապարիկ,— մատը տընկելով Գադիշո խորխոռունու կողմը սկսեց Ատատը և շարունակեց,— Երեք շաբաթ առաջ Բագավան եկավ և գինով հյուրասիրեց ինձ։ Իմ մտքով չէր անցնի, թե նա կարող էր գինու մեջ քնաբեր դեղ լցնել։ Այդպես ամարդորեն նա քնեցրեց ինձ, գերեց և Բագավանից հասցրեց Նպանք լճի ափը։ Նա ինձ պահում էր ոչ թե Արագիլ ամրոցում, այլ՝ լճի վրա մի նավակի մեջ։ Ես պատանդ էի։ Սա ասում էր, թե ինձ բաց կթողնի՝ եթե ես հայտնեմ Թեժի տեղը։ Ուժասպառ անելու համար ինձ համարյա սոված էր պահում։ Հենց որ մերոնք երևացին, նա որոշեց ինձ փոխադրել լճի խորքը։ Մերոնք գլխի ընկան, վրա հասան և ազատեցին ինձ։ Նրան անպատիժ թողնել չէի կարող։ Դրա համար էլ նրան բերեցի քո դատաստանին հանձնելու։ Նա շատ է խառնել Հայոց աշխարհի գործերը։

— Հը, ի՞նչ կասես, սպարապետ,— Ատատին լսելուց հետո հարցրեց Սահակը Վահան Մամիկոնյանին։

— Այո, անպատիվ մարդը մեզ հանդիպել է անպատեհ ժամանակ,— ասաց սպարապետը։— Երկու ժամ առաջ մեր ջուրը պղտորեց Վարազշապուհ Ամատունին։ Իսկ Գադիշոն իր ամբողջ կյանքում միայն ջրեր է պղտորել։ Սա հայոց Հուդան է և արժանի է խստագույն պատժի։

---

1 Փութանակի — շտապով, անձգպարանքով։

Պարսիկներին հետապնդող զորաշարից ետ կանչեցին բոլոր նախարարներին։

Ատյանն սկսվեց փոքրիկ տափարակում։ Բոլոր նախարարների ներկայությամբ սպարապետ Վահան Մամիկոնյանն ասաց.

— Գագիշո Խորխոռունին մատնիչ է, հայրենիքի դավաճան։ Աղնվափայլ արք, գուցե ձեղնից որևէ մեկը արդարացնող խոսք ասի։ Նրա ամոթալի կյանքում լուսավոր շող չի՞ եղել։

— Ո՛չ մի արդարացում, մա՜հ մատնիչին, մա՜հ դավաճանին,— ձայնեցին այս ու այն կողմից։

Սպարապետը դարձավ Գագիշո Խորխոռունուն և հարցրեց.

— Քանի՞ տարեկան ես դու։

— Հիսունվեց,— պատասխանեց մահապարտը։

— Դու կմեռնես հիսունվեց նետով,— ասաց սպարապետը և դիմեց նախարարներին,— թող իրենց նետ ու աղեղներով առաջ գան հիսունվեց արք։ Ինչ էլ լինի՝ նախարար է, հետևապես թող մեռնի նախարարների նետերով։

Հետո Վահան Մամիկոնյանը մի կողմ անցավ և բարձրացրեց ձեռքը, որ նետերն արձակելու հրաման էր։ Շրջօղակի մեջ ընկած Գագիշո Խորխոռունին չկարողացավ նույնիսկ ճիչ արձակել։ Նախարարների նետերից նրա մարմինը մի ակնթարթում նմանվեց փշոտ ոզնու։

Հետո ամենքը թքեցին Խորխոռունու կողմը և բարձրացան նժույգների վրա։ Կեսօրին նրանք հասան Դվին և գնացին ու պաշարեցին Արտաշատի բերդը, որը Հայոց աշխարհի մարզպան Ատրվշնասպ Հոզմանդյանի նստավայրն էր։ Մինչ այդ պարսիկները եկել և ամրացել էին բերդում՝ փակելով նրա բոլոր մատույցները։

Հայերը որոշեցին այդ օրը հագիստ առնել և գրոհն սկսել հաջորդ օրվա առավոտյան։ Սակայն գիշերը Ուրծի իշխան Կոզթեկի որդի սեպուհ Վարազներսեհի օգնությամբ մարզպան Ատրվշնասպ Հոզմանդյանն ու հազարապետ Վեհվեհնամը փախան բերդից և բռնեցին Ատրպատական տանող ճամփան։

Ոչ ոք չտեսավ, թե հայոց գնդից Ատատն ինչպես բեկվեց ու ետ դարձավ Շիրակ։ Ճիշտ է, Գագիշոն դավաճան է, բայց նա Թեժի հայրն է։ Եվ Ատատը չի կարող մոռանալ դա։ Հնօրյա սովորությամբ դավաճանի դին պետք է անթաղ մնա առնվազն մի օր։ Բայց ինչ ասես, որ չի կարող լինել այդ մի օրում։ Գայլերի ոհմակի բաժին կդառնա և Գագիշոյից ոչինչ չի մնա թաղելու համար։ Մարդիկ էլ կասեն, թե Ատատն ամուսնացել է անդերեզման Գագիշոյի դստեր հետ։ Դա էլ կարելի է բանի տեղ չդնել։ Բայց ինքն իրեն չի ների ամբողջ կյանքում, ոչ էլ հանգիստ խղճով կնայի Թեժին։

Ատատը գիշերով հասավ Գագիշոյի դիակի մոտ, փոս փորեց, նիզակազերծ արեց դին և թաղեց այն։

***

Ճակատագրի բազմաբաղում հարվածներից արթմնի դարձած հայը չափավորել է իր ամենալիաթոք խնդությունը, սեղմել ուրախությունն ու ծիծաղը, ապրել հետիոտն։ Բայց երկնքով թռչող ձիավորի է նմանվել հենց որ սկսել է արարել՝ տաճար կառուցել, քայլ ու մատանի պատրաստել, մագաղաթ ակոսել, ամրակուռ պատի շաղախ սարքել, ոսկեթել գորգ գործել կամ ոստերից զամբյուղ հյուսել։ Հե՞յ իմաստուն, բայց այս աշխարհի չարն ու բարին պարզամիտ երեխայի նժարով չափող ժողովուրդ։ Ինչու չկարողացար չափավորել նաև քո կառուցողական քանքարը, մնալ անքաղաք։ Հայաստան աշխարհն այսքան ասպատակողներ, խժռողներ ու ավերողներ չէին մտնի, եթե քո ստեղծածը խայծի պես հեռվից աչքով չաներ նրանց։

Տափերական դաշտում չորս քաղաքամայր է կառուցվել՝ Արմավիր, Արտաշատ, Վաղարշապատ և Դվին։ Արտաշատը գեղեցիկ է եղել Արմավիրից, իսկ Վաղարշապատը՝ Արտաշատից։ Հիմա էլ Դվինն է գեղեցիկ Վաղարշապատից։

Դվինի հիմնադիր Խոսրով Կոտակ արքան հարյուր հիսուն տարի առաջ վարդի մի թուփ է տնկել քաղաքի կենտրոնում՝ բլրի վրա։ Զգլխիչ հոտ ունի հայկական այս հնօրյա վարդը։ Մարզպան Ատրվշնասպ Հոզմանդյանը խոստացել է Պերոզ արքային, որ հայոց այս վարդը իր ամբողջ տունկով՝ գուղձ-արմատներով կհասցնի Տիզբոն։ Սահակ Բագրատունին դիտեր, որ Ատրվշնասպը առանց այդ վարդի Տիզբոն չի մտնի։ Հավանաբար նա Վեհվեհնամի հետ Ատրպատական է գնացել զորական ուժ հավաքելու։ Իսկ մինչ այդ պիտի Դվինի դարպասները փակել պարսիկի առջև, պիտի այնպես անել, որ Խոսրովի նշանավոր վարդի թուփը մնա հայկական հողում։

Մարզպան Ատրվշնասպ Հոզմանդյանի և հազարապետ Վեհվեհնամի փախուստից երեք օր անց, վաղ առավոտյան հայոց

գնդի սուրհանդակները քաղաքի փողոցներում հնչեցրին եղջերափողերը։ Դա ցնծության, տոնախմբության, հաղթահանդեսի կանչ էր։

— Այսօր ասպետ Սահակ Բագրատունուն կօծեն որպես Հայքի մարզպան, իսկ Վահան Մամիկոնյանին՝ սպարապետ,— ասում էին մարդիկ միմյանց։

Դվինի փողոցները միանգամից աշխուժացան, դարձան մարդահոծ։ Միջնաբերդի վրա, արքայական պալատի բակում իսկույն հայտնվեցին քսանից ավելի գուսաններ։ Հնչեցին փանդիռները, ճչացին ծնծղաները։ Արքայական ութասյուն գահասրահի պատերը սկսեցին սնդուրել որդան կարմիրով։ Դա նշան էր, որ գահասրահում այսուհետև պիտի հնչի միայն հայերեն խոսքը և հայանպաստ հրովարտակը։

Եռուզեռ էր արհեստավորաց տներում և կուղպակներում։ Հին սովորություն էր՝ տոնական օրերին Դվինում ամեն ինչ վաճառվում էր էժան գնով։ Դվինը համարյա իր ամբողջ արտադրանքը հանել էր մեծ շուկա։ Ընտիր ու ճարտար են պատրաստված դվինցու նետասլաքները, տեգերը, դաշույնները, շղթաները ու ուրագները, կացիններն ու մկրատները, ուլունքներն ու օձաձուկ ապարանջանները, շղթայաձև մանյակներն ու արծաթյա զոտիները, գեղեցիկ բռնակներով սափորներն ու ձիթաճրագները, որձաքարից շինված սանդերը, երկանքներն ու ոմբաքարը, կաթմբուներկ կավե կարասներն ու ջնարակված քրեղանները, սկահակներն ու կարծր քարի դրոշմիչը, որով կարելի է փորագրել ամեն տեսակ կնքաքար։

Դվինն աշխարհի հետ էր կապված, աշխարհը՝ Դվինի։ Կապուղն այս մեծ շուկան էր, որտեղ հինգ սյուն է տնկված։ Դա նշան է, որ Դվինից հինգ մայրուղիներ են դուրս գալիս դեպի աշխարհի հինգ կողմերը։

Առաջին սյան վրա հայերեն, հունարեն ու պարսկերեն գրված է.

«Դվինից մինչև Կարին երկու հարյուր մղոն է։ Մղոնը հազար քայլ է, կամ՝ յոթ ասպարեզ։ Հրասախը երեք մղոն է։ Ասպարեզը հարյուր յոթանասուն քայլ է, քայլը վեց ոտ է, ոտը տասնվեց մատ է»։

Երկրորդ սյան վրա.

«Դվինից մինչև Խլաթ հարյուր յոթանասուն մղոն է։ Այնտեղից մինչև Քղիսմար ութսուն մղոն է։ Այնտեղից մինչև Ռուհա հարյուր ութսուն մղոն է։ Այնտեղից մինչև Եփրատ գետը քառասուն մղոն է։ Այնտեղից մինչև Դամասկոս հարյուր քսան մղոն է։ Այնտեղից մինչև Թափոր լեռը իննսուն մղոն է։ Այնտեղից Երուսաղեմ՝ հարյուր մղոն է»։

Երրորդ սյան վրա.

«Դվինից մինչև Բերդկուն վաթսուն մղոն է։ Այնտեղից մինչև Պարտավ հարյուր վաթսուն մղոն է, այնտեղից մինչև Կասպից ծով իննսուն մղոն է»։

Չորրորդ սյան վրա.

«Դվինից մինչև Նախճավան յոթանասուն մղոն է։ Այնտեղից մինչև Գանձակ-Շահաստան հարյուր քսան մղոն է։ Այնտեղից մինչև Տիզբոն երեք հարյուր յոթանասուն մղոն է։ Այնտեղից Ակոռիա յոթանասուն մղոն է։ Այնտեղից մինչև Բասրա հարյուր քառասուն մղոն է։ Այնտեղից մինչև Պարսկահայաց ծովը քսան մղոն է»։

Հինգերորդ սյան վրա.

«Դվինից մինչև Կողբ հիսուն մղոն է։ Այնտեղից մինչև Կոտայեղ հարյուր քսան մղոն է։ Այնտեղից մինչև Տփխիս հարյուր քսան մղոն է։ Այնտեղից Հունակերտ յոթանասուն մղոն է։ Այնտեղից մինչև Պարտավ հարյուր մղոն է»։

Շուկան ուներ երեք ներքին փողոց և վեց շարք վանատուր խանութներ։

Սակայն Դվինի բոլոր շենքերի գեղեցկուհին մայր տաճարն էր։ Մինչև հիմա նրա հրաշակերտ կամարների տակ այսքան հուզմունք չէր լցվել։ Իր նոր, շողշողուն ծոպերով նափորտն էր հագել կաթողիկոս Հովհան Մանդակունին։ Տաճարում հավաքվել էին հայոց նախարարները, սեպուհներն ու ազատները։ Ահա արևաթև տուտեռով ծիրանի պատմուճանը ուսերին գցած ներս է մտնում ասպետ Սահակ Բագրատունին։ Նրա վսեմաշուք կեցվածքն ու պահվածքը հիացնում է նախարարներին։ Կողքի խորանարդ խցից դուրս գալով տաճարի կենտրոն են մտնում երկու աբեղաներ, որոնք բռնել էին նախշազարդ մի մատուցարան։ Վերջինիս վրա դրված էին երկու սքանչելագույն սաղավարտներ։ Քիչ հետո դրանիկների ուղեկցությամբ տաճար մտավ և Վահան Մամիկոնյանը։

Հովհան Մանդակունին վերև է բարձրացնում իր խաչակիր գավազանը և ասում.

— Արք հայկազո՛ւն, այս սրբազան պահին ասածու կամ-

քով ես պաշտոնազրկում եմ Հայոց աշխարհի մարզպան Ատրվշնասպ Հոզմանդյանին։ Պարսիկ է, թող գնա պարսիկների վրա մարզպետություն անի։ Ես Հայոց աշխարհի մարզպան եմ օծում ասպետ Սահակ Բագրատունուն։ Եղիցի աղատություն, հաղթություն ու լո՛ւյս։

Ապա հայրապետը մատուցարանի վրայից վերցնում է արծվակիր ճակատով փայլուն սաղավարտը, դնում ասպետի գլխին ու շարունակում.

— Այդ Սահակ Բագրատունի՛, տեր կանգնիր Հայոց աշխարհին և իմաստությամբ վարիր երկրի գործերը։

Բացականչությունները որոտացին մայր տաճարի կամարների տակ։ Ցնծությունը հորդաց տաճարի դռնից և հասավ տաճարի բակում հավաքված ամբոխին։ Այստեղ արձագանքեցին հույժ ուժգին բացականչություններով։

Տաճարի ներսում կաթողիկոսին ընդառաջ եկավ Վահան Մամիկոնյանը։

— Վահան Մամիկոնյան, ասածու կամքով քեզ վերադարձնո՛ւմ եմ քո տոհմական սպարապետությունը։ Թող ասված բազմապատկի բազկիդ ուժը և զորավարական հնարամտությունը։ Ես քո գլխին եմ դնում հորեղբորդ՝ քաջ սպարապետ Վարդան Մամիկոնյանի սաղավարտը։ Երեսունմեկ տարի է, ինչ ասարժանավոր գլխի է սպասում։

Տաճարը նորից լցվեց ցնծության աղաղակներով։

Այդ օրը Հովհան Մանդակունին, Սահակ Բագրատունին և Վահան Մամիկոնյանը դավաճան Գդիհոնին զրկեցին Սյունյաց նահապետի իրավունքից։ Նրա տեղ Սյունյաց նահապետ ճանաչեցին Բաբգեն Սյունուն, իսկ Գադիշո խորխոռունու փոխարեն մաղխազ նշանակեցին նույն խորխոռունյաց տոհմից Գարջույլ իշխանին։

Հայոց համար երջանկավետ այդ օրից երկու շաբաթ անց սուրհանդակը Դվին հասավ և մարզպան Սահակ Բագրատունուն ու սպարապետ Վահան Մամիկոնյանին հայտնեց, որ Ատրվշնասպ Հոզմանդյանը Ատրպատականում զորք է կազմել և գալիս է դեպի Հայք։

Մարզպանը, սպարապետն ու կաթողիկոսը խորհրդի նստեցին և որոշեցին թշնամու ճանապարհը փակել Նախճավանի մոտ։ Կազմեցին չորս հարյուր զորական ունեցող մի գունդ, որի հրամանատար կարգեցին սպարապետ Վահան Մամիկոնյանի

եղբայր քաջազն Վասակին։ Վերջինիս հետ էին Գարջույլ խորխոռունին, Արշավիր Կամսարականի որդիներ՝ Շիրակի տեր Ներսեհն ու նրա եղբայր Հրահատը, Գնունիների տոհմից Ատոմ իշխանն ու նրա եղբայր Առաստոմը։

Հայոց գունդը Վարազկերտ գյուղ հասավ գիշերով։ Վասակը մի փոքրիկ զորաջոկատով բեկվեց գնդից ու առաջ անցավ։ Նա մտադիր էր ամրանալ Երասխի ափամերձ Կովակք գյուղում և խանգարել պարսիկների դիտանցը։

Սակայն սեպուհ Վասակ Մամիկոնյանն ուշացել էր։ Ատրվշնասպ Հոզմանդյանն անցել էր Երասխը և հասել Կովակք։

Այգաստղը դեռ չէր բացվել։ Մոտ յոթանասուն հայ հեծյալներ թաքնվել էին Կովակքին մերձ եղեգնուտներում և սպասում էին, թե ինչ կորոշի Վասակը։ Եթե լույսը բացվեր՝ պարսիկները կնկատեին հայերին։ Ծուղակի մեջ չընկնելու և զորաջոկատը պահելու նպատակով Վասակը հրամայեց երկու-երկու, երեք-երեք դուրս գալ եղեգնուտից և հասնել Վարազկերտ։ Եվ որպեսզի պարսիկները ոչինչ գլխի չընկնեին սեպուհը դիմեց խորամանկության։ Երկու հայ զորականների ուղեկցությամբ նա մտավ պարսկական բանակատեղին՝ հայտնելով, թե Ատրվշնասպ Հոզմանդյանին պատգամ ունի հաղորդելու։ Վասակին ուղեկցեցին Ատրվշնասպի զորավրանը։ Պարսիկը ճանաչեց Վահան Մամիկոնյանի եղբորը և ասաց.

— Սեպուհ, դո՞ւ ես Հայոց պատգամավորը։ Բայց, ըստ իս, դու ինձ ասելիք չունես, ապստամբ աշխարհն ինչ պատգամ պիտի հղի ինձ։

Վասակը նրան պատասխանում է.

— Դու կռվի ես գալիս Հայոց դեմ, որ պիտի խորացնի թշնամանքը Արյաց և Հայոց միջև։ Դա հազիվ թե հաճո լինի Պերոզ արքային։ Ետ դարձիր քո զորքը և հայոց հետ վեճի մեջ մտիր խոսքով։ Արյունահեղություն չի լինի և կշահենք երկուսդ։

— Չէ, սեպուհ, ես պետք է ձեզ հետ միայն դենքի ուժով խոսեմ։ Գնա այդպես էլ ասա եղբորդ, որին նույն վախճանն է սպասվում, ինչ երեսունմեկ տարի առաջ բաժին հասավ ձեր հորեղբորը։

Վասակը իր երկու ուղեկիցներով դուրս եկավ Ատրվշնասպի զորավրանից և, ելնելով նժույգի վրա, կանչեց.

— Լսիր, Ատրվշնասպ Հոզմանդյա՛ն։

Պարսիկը դուրս եկավ վրանից։

— Ես ծաղրեցի ձեզ՝ ասելով, թե առաքված եմ որպես պատգամավոր։ Ոչ ոք էլ ձեզ պատգամ չի հղել։ Ես եկա տեսնելու, թե ինչպիսին եք։ Դուք վատ և անպիտան մարդիկ եք։ Դուք մահ ու շարութիւն եք բերում մեր աշխարհին, բայց ինքներդ կկորչեք չարութիւնամբ,— ասաց քաջարի Վասակը և անհայուղ շափ դցեց ձին։

Երեք հայ հեծյալների ետևից պարսիկները հասնել չէին կարող։ Փորձ էլ չարեցին։

Լույսն արդեն բացվել էր։ Վասակ Մամիկոնյանը արագ հասավ Վարազկերտ և յուրայիններին ասաց.

— Իրավ է, շատ են պարսիկները։ Բայց դա խառնիճաղանջ բազմութիւն է։ Նրանց կարելի է իշապաններ անվանել, բայց ոչ զորականներ։

Այդ ժամանակ Ատրվշնասպը իր յոթ հազարանոց բանակով դուրս եկավ Կովակից և շարժվեց առաջ։ Նա մտադիր էր հաջորդ օրը հասնել Դվին։ Պարսիկը, սակայն, գլխի չընկավ, որ իր առջևից արագընթաց գնացքով նահանջում է հայոց գունդը։ Պարսկական բանակում գտնվող դավաճան Վարազշապուհ Ամատունին Ատրվշնասպին ասաց

— Չպետք է թույլ տալ, որ հայոց գունդը ետ դառնա և Դվին մտնի։ Պաշարումը երկար կտևի՝ եթե Վահան Մամիկոնյանը իր զորական ուժերը մեկտեղի Դվինում։

Ատրվշնասպը հավանություն տվեց Վարազշապուհ Ամատունու մտքին։

Բայց Ատրվշնասպ Հոզմանդյանն ու Վարազշապուհ Ամատունին չգիտեին, որ դա այն է, ինչ ուզում է Վասակ Մամիկոնյանը։ Սեպուհը պարսիկների քթից բռնած քարշ էր տալիս իր ետևից։ Նա ամենևին էլ մտադիր չէր կտրվել պարսիկներից և ապաստան գտնել Դվինում։ Միաժամանակ գիտեր, որ բաց դաշտում ճակատամարտ տալը ճակատագրական սխալ կլիներ։ Դրա համար Վասակը Ատրվշնասպին քաշում էր դեպի Մասիսի լանջերը։ Հայոց գունդն ամրացավ Ակորի գյուղում։

— Մասիսը մեզ լավ թիկունք ու պատվար կլինի, իսկ առջևից մեր բազկի հարվածներին զորություն կտա ամենակարող աստված,— ասաց Վասակն իր նիզակակիցներին։

Հայոց Ահեկան ամսի Մազդեղ օրվա առավոտը Մասիսի կատարից պլորվում էր դեպի Տափերական դաշտ։ Դեմ դիմաց

կանգնել են հայերը՝ չորս հարյուր զորականներով և պարսիկները՝ յոթ հազարով։ Վասակն իր գունդը բաժանեց չորս զորաթևի։ Կենտրոնի զորագլուխ դարձան ինքն ու Սյունյաց Բաբգեն իշխանը, ձախ թևինը՝ մաղխազ Գարջույլը, աջ թևինը՝ եղբայրներ Ատոմ և Առաստոմ Գնունիները, իսկ միջնամասում՝ եղբայրներ Ներսեհ ու Հրահատ Կամսարականները։ Վերջիններս պետք է օգնության հասնեին տկարացող թևին։

Ճակատամարտն սկսվեց ճառագայթյալ ժամին։ Առաջինը կայծակի արագությամբ թշնամու վրա նետվեցին Վասակ Մամիկոնյանն ու Բաբգեն Սյունին։ Պարսիկները չընկրկեցին, բայց դիմադրել էլ չկարողացան։ Փորձառու հայ զորականները սկսեցին ջարդել թշնամուն։ Հենց այդ ժամանակ Ավետարանի վրա տված երդումը դրժելով իր հարյուր զորականներով պարսիկների կողմն անցավ Գարջույլ Խորխորունին։ Բայց դա չվհատեցրեց մարտնչող հայերին։ Ընդհակառակը, նրանց հարվածները դարձան ավելի ուժգնաթափ։ Կռիվն սկսեց բորբոքվել։ Այդ ժամանակ Ներսեհ Կամսարականը հիսուն հեծյալներով ձախից շրջանցեց մարտադաշտը և անսպասելիորեն երևաց թշնամու թիկունքում։ Պարսիկների մեջ խուճապ ընկավ։ Ատոմ Գնունին նիզակահար արեց Ատրվշնասպ Հոզմանդյանին։ Դա ահով լցրեց պարսիկների սրտերը։ Մարտը շարունակվեց մինչև կեսօր։ Լեռնալանջը լցվեց թշնամու դիերով։ Սպանվեցին պարսիկ բոլոր մեծամեծերը և հայ շատ ուրացողներ։ Ատոմ և Առաստոմ Գնունիների ձեռքից մազապուրծ եղավ դավաճան Գդիհոն Սյունին։

Փառավոր հաղթանակի առթիվ հայոց գնդի ցնծագին բացականչությունների արձագանքը Մասիսի լանջերն ի վեր նյավ, հասավ հնամենի Խորխորատը և ետ դարձավ դեպի Ակորի։

Իսկ ի՞նչ էր կատարվում Դվինում։ Ճակատամարտն սկսվելուց կես ժամ հետո, կարծելով, թե պարսիկները պիտի հաղթեն, երկու հայ պարսկասեր իշխաններ՝ Վառազ Գնթունին և Վասակ Սահառունին, Ակորիից ճեպով հասնում են քաղաքամայր և կաթողիկոս Հովհան Մանդակունուն, մարզպան Սահակ Բագրատունուն ու սպարապետ Վահան Մամիկոնյանին գուժում հետևյալը.

— Ամեն ինչ խառնվեց հենց որ երկու կողմերը կպան իրար։ Հայոց գունդը պարտության մատնվելով փախուստի դիմեց։ Թշնամու սրից ընկան մեր զորականները՝ քաջ Վասակ

Մամիկոնյանը, լավ այր Բաբգեն Սյունին, Շիրակի տեր Ներսեհ Կամսարականը, նրա եղբայր Հրահատը, Ատոմ և Առաստոմ Գնունիները։ Եվ ընդհանրապես բոլոր հայերը զոհվեցին Ակոռիի լանջակողին։ Ասված մահից փրկեց միայն մեզ, որպեսզի աղետաբեր այս լուրը հասցնենք ձեզ։

Հավատալով վատաբարո այրեր Վառգոշ Գնթունուն և Վասակ Սահառունուն, Դվինում սուգ հայտարարվեց։ Փակվեցին քաղաքի բոլոր արհեստավորաց տներն ու կուղպակները։ Մայր տաճարում նահատակների համար օրհնանքի խոսքեր էր մըրմընջում Հայոց կաթողիկոսը։

Այդ սուգը տևեց մինչև կեսօր, մինչև այն ժամը, երբ արշավասույր Դվին մտավ Առաստոմ Գնունին և բարձր ձայնով գոչեց.

— Հաղթե՞ց սուրբ խաչի զորությունը, հաղթե՞ց հայոց գունդը, հաղթեցի՞նք, հաղթեցի՞նք, հաղթեցի՞նք, հաղթեցի՞նք։

Սուգն անմիջապես փոխվեց ցնծության։ Սուրհանդակները մտան քաղաքի փողոցները և եղջերափողերով հնչեցրին հաղթականը։ Մարդիկ դուրս թափվեցին տներից և լցվեցին փողոցները։ Հաղթության առթիվ զվինցիները համբուրում էին միմյանց։ Մարդիկ հանկարծ հիշեցին անտեղի սուգի հանցավորներ Վառգոշ Գնթունուն և Վասակ Սահառունուն։ Սակայն ոչ ոք չգտավ նրանց, ասես անցել էին գետնի տակ։ Իսկ իրիկնադեմին քաղաքամայրը հաղթականներով ընդունեց հայոց գնդի մուտքը։ Մարդիկ ուրախությունից արտասվում էին՝ տեսնելով իրենց նժույգների վրա հաղթականորեն տուն դարձող Վասակ Մամիկոնյանին, Բաբգեն Սյունուն, Ներսեհ և Հրահատ Կամսարականներին, Ատոմ Գնունուն։

Տոնախմբությունը շարունակվեց մինչև ուշ գիշեր։

Անսովոր ուրախությունից այդ գիշեր անքուն մնացին հայրապետ Հովհան Մանդակունին, մարզպան ասպետ Սահակ Բագրատունին և սպարապետ Վահան Մամիկոնյանը։ Նրանք առանձնացել էին Դվինի միջնաբերդի արքայական դահլիճում և քննում էին, թե Ակոռիի հաղթանակը ինչ կտա Հայոց աշխարհին։

— Այբր ոսկեղենիկ է,— ասում է մարզպան Սահակը։— Հարյուր տարին մեկ է պատահում, որ երեք հարյուր այրը հաղթի յոթ հազարին։

— Իսկ եթե Պերոզը կատաղի և Արյաց վայրենաբարո զո-

բական ուժը հանի մեր դեմ,— խոսեց Հովհան Մանդակունին։

— Հայրապետ, դա համազոր կլինի ինքնակործանման։ Պերոզն այդքան հիմար չէ, որ իր հեծելազորն ուղարկի Հայք և պարսից տերության դռները բացի հեփթաղների առջև։ Իսկ ճշմարտությունն այն է, որ Ակոռիից հետո նա հիմա չի հոխորտա։ Նա կփորձի դեռ լեղու գտնել մեզ հետ։ Նա մեզնից վրեժ կլուծի միայն հեփթաղներին հաղթելուց հետո։ Իսկ մինչ այդ մենք պետք է Հայքից վտարենք բոլոր պարսիկներին և փակենք հայ նախարարների ճանապարհը դեպի Տիզբոն։— Սահակը մի պահ կանգ առավ, ապա դիմեց Վահան Մամիկոնյանին,— դու ի՞նչ կասես, սպարապետ, ինչքան զորք կունենանք մի ամիս հետո։

Վահան Մամիկոնյանն ասաց.

— Մեր այրուձին հիմա յոթ հարյուր հեծյալ ունի։ Մի ամիս հետո մենք կարող ենք մի բյուր հեծյալ ունենալ, եթե մեր բոլոր նախարարները զորական ուժեր տան մեզ։ Մի բյուրի չափ էլ հետևակ զորական կունենանք։

— Հետևակի ժամանակներն անցնում են, սպարապետ։ Ամեն տեսակ աղետաբեր հողմ է սպասվում մեզ, այդ պատճառով էլ մեր այրերը պետք է հողմի պես սլացող նժույգների վրա լինեն։ Մեր թշնամիները գիտեն, որ մենք անպատրաստ ենք և կարող են անակնկալի բերել։ Հայն աշխարհում հայ կմնա այնքան ժամանակ, որքան իր հույսը կդնի սեփական զենքի ու զրահի վրա։

— Մարզպան,— ասաց սպարապետը,— մենք միանգամից չենք կարող զորեղանալ։ Պետք է օգնություն խնդրենք մեր բարեկամներից։ Վրաց Վախթանգ արքան խոստացել է մեզ հոնական զորք ուղարկել։ Նամակ գրենք նրան։

— Գրենք, սպարապետ,— պատասխանեց մարզպանը,— և մեր նախնյաց առածն էլ չմոռանանք. «Հույսդ մի կորիր բարեկամներից, բայց նիզակդ սուր պահիր ամեն օր»։

Մի քանի շաբաթ հետո Վախթանգ արքան որպես օգնական ուժ երեք հարյուր հոն ուղարկեց Հայք։ Սակայն լեռնականները Հայքում մնացին ընդամենը մի ամիս։ Վախթանգը նա կանչեց նրանց։ Սահակն ու Վահանը դիմեցին Արծրունյաց, Անձևացյաց, Ռշտունյաց և Մոկաց նախարարներին։ Նրանց կանչում էին համայնական դրոշի ներքո։ Հասել է ժամը,— ասում էին Սահակն ու Վահանը,— երբ Քրիստոսի արդար մշակը պիտի եղանը

ձեռքն առնի, սրբի իր կալը, ցորենը մաքրի հարդից։ Դուք ինչո՞ւ եք մի կողմ կանգնած մնացել։

Մարզպանին ու սպարապետին միաբանեցին Անձևացյաց նախարարներից երկու իշխան՝ Հովհանը և Երվանդունի Ներսեհը։ Նրանք ժողովեցին իրենց զորականները և ճանապարհ ընկան դեպի Դվին։ Սակայն Առեստ գյուղաքաղաքի մոտ նրանց առջև դուրս եկան Անձևացյաց Սևուկ իշխանն ու Մոկաց Հովհան իշխանը։ Այս պարսկասերներն ունեին մեծ այրուձի և հույս ունեին, թե կհաղթեն անմիջապես։

Այդը նոր էր բացվում։ Հարձակումը անակնկալ էր, բայց Անձևացյաց Հովհանն ու Երվանդունի Ներսեհը խուճապահար չեղան։ Երվանդունի Ներսեհը գրոհեց և նիզակահար արեց Մոկաց Հովհան իշխանին։ Դա երկյուղով լցրեց պարսկասերների օրտերը և նրանք դիմեցին փախուստի։ Դրանով էլ մարտն ավարտվեց։

Անձևացյաց իշխաններ Հովհանն ու Երվանդունի Ներսեհը շարունակեցին իրենց ճանապարհը և հաջորդ օրը հասան Դվին։

Գարունը նոր էր բացվել։ Մանուշակի հոտ էր խառնվում գետնից բարձրացող գոլորշուն։ Սերմնացանն ամեն առավոտ երկնքին էր նայում և փորձում որոշել հունդը հողի մեջ գցելու ժամանակը։

Արեգ ամսվա Կորդուիք օրը մարզպան Սահակ Բագրատունին երկու նամակ ստացավ՝ մեկը Բագավանից, մյուսը՝ Հեր գավառից։ Նախ բացեց Մովսեսի նամակը։ Զարմացավ։ Իմաստասերը երբեք առանձին նամակ չի գրել Սահակին։ Նա միշտ իր ասելիքը խառնում էր Հայոց պատմության տողերին։ Իսկ հիմա գրում է.

«Ակոռիի ճակատամարտը երիտասարդացրեց ինձ։ Այդպես պիտի վարել նաև տերության գործերը։ Պիտի հենվել ժողովրդի, պատմության ու Մասիսի վրա։ Հեռու չի կարող գնալ այն ազգը, ով ճակատամարտ է տալիս չորս կողմը բաց դաշտում»։

Հետո իմաստասերը գրում է, որ մարզպանը, սպարապետն ու կաթողիկոսը պետք է քնից արթնացնեն Գյուտին, որ մոռացության մատնված ապրում է Ոդմսու գյուղում. «Ուրախական նամակ գրեք նրան։ Եվ օգտվեցեք նրա իմաստությունից։ Այս դարձդարձիկ ժամանակներում չօգտվել նրա խելքից դա նման է նրան, որ մարդ նստի ոսկու վրա և դինդեր պատրաստի պղնձից»։

Երկրորդ նամակը Հեր քաղաքից էր։ Հայ ծայրակալ նահապետը գրում էր. «Հայքի սահմաններում նորից խառնում են ամպերը։ Պարսից զորաբանակը եկել հասել է Հեր և Զարավանդ գավառները։ Եվ հեծյալ են, և հետիոտն։ Զորականները մեծաթիվ են, բայց ոչ ընտիր։ Բայց ունեն ընտիր զորավարներ՝ Սուրեն Պահլավը, փուշտիպանան սպարապետ Ատրներսեհը, Վին-Ի-Խոռյանը, Ատրվշնասպ-Ի-Տապյանը, և գավառաց Գդիհոն Սյունյացը։ Գլխավոր հրամանատարը Ատրներսեհն է, որին անվանում են փուշտիպանան սպարապետ՝ թիկնապահների վերակացու։ Դա նույնն է, ինչ որ Հայոց աշխարհում մաղխազը։ Ատրներսեհի տոհմը այդ պատվանունին արժանացել է Հաղկերտ արքայի օրոք։ Պարսիկները մտադիր են շարժվել դեպի Արտազ։ Իր զորականներին ոգևորելու համար Ատրներսեհը որոշել է ճակատամարտ տալ Ավարայրի դաշտում։ Սրանք ուզում են կրկնել Ավարայրը։ Այս անգամ դա կարող է մայրամուտ դառնալ մեզ համար։ Խորհեցեք, մարզպան։ Հնար գտեք ու կանխեցեք արհավիրքը»։

Սահակ Բագրատունին ճեպով խորհրդի նստեց Վահան Մամիկոնյանի հետ։ Հերից ստացված նամակը կարդաց նաև սպարապետը։

— Պետք է խուսափել Ավարայրից,— ասաց մարզպանը,— պարսիկների հետ մենք կճակատենք ուրիշ տեղ։

— Ինչո՞ւ,— հարցրեց սպարապետը։

— Ինչպե՞ս թե ինչու։ Պարսիկներն ընդունում են, որ երեսունմեկ տարի առաջ իրենք հաղթել են Ավարայրի ճակատամարտում։ Հայրերի հաղթանակը միշտ էլ ոգևորիչ է եղել որդիների համար։

— Իսկ մեզ, մարզպան, կանչում են այդ դաշտում նահատակված մեր հայրերի ոգիները։ Մեր զորականները քաջաբար կմարտնչեին հենց Ավարայրի դաշտում, իրենց հարազատների ոգիների կողքին։ Այո, Սահակ, Ավարայրի ճակատամարտը չի ավարտվել, երեսունմեկ տարի է, ինչ շարունակվում է այն։ Ակոռիի կռիվը Ավարայրի մի դրվագն էր։ Պետք է ես ու դու վերջացնենք այս մարտը։ Միայն դրանից հետո հայտնի կդառնա հաղթողը։

— Դու համոզեցիր ինձ, Վահան, մեր փրկության ասողը պիտի վառվի Արտազի դաշտում,— ասաց Սահակը,— պետք է փութալ և Արտազ հասնել։

— Այո, մարզպան։ Երեսունմեկ տարի առաջ Արտազում

Մուշկան Նյուսալավուրտը դիմավորեց հորեղբորս՝ Վարդան Մամիկոնյանին, այս անգամ այդ նույն դաշտում ես կդիմավորեմ փուշտիպանան սաղար Ատրներսեհին։

Մի քանի օր անց հայկական զորքը դուրս եկավ Դվինից և շարժվեց դեպի Արտազ։ Զորքի հետ էին սպարապետ Վահան Մամիկոնյանը, մարզպան Սահակ Բագրատունին, կաթողիկոս Հովհան Մանդակունին։ Երրորդ օրը հայկական զորքը տեղ հասավ և կանգ առավ Ներսեհապատ գյուղում, որ Ավարայր գյուղից հեռու էր հինգ-վեց հրասախ։ Հաջորդ օրը երևացին պարսիկները։

Մարերի ամիսն էր։ Աստղիկ օրվան նախորդող գիշերը զորավարանում միայնակ նստած Սահակ Բագրատունին կոիվ էր տալիս իր խոհերի հետ։ Ատատին Արտազ չբերեց։ Քաջ կապարճակիրը լաց եղավ, աղաչանք ու պաղատանք արեց, բայց ասպետը մնաց անդրդվելի։ Ճիշտ է, մարտի ժամանակ Ատատը կպաշտպաներ Սահակի թիկունքը, բայց, միևնույն է, ասպետն իրեն հանգիստ չէր զգա։ Հոգու հեռավոր անկյունից մի ձայն սկսեց մեղադրել Սահակին։ Դա ի՞նչ մարզպանական խելք է, մի՞թե չգիտես, որ Ատատի հետ կռվի գնացողը չի մեռնի։ Ի՞նչ։ Չես վախենում մահի՞ց։ Իսկ ինչո՞ւ է սարսուռը մտել հոգուդ մեջ։ Աշխարհում ոչ մի մարդ չկա, որ չերկյուղի մահից։ Լսո՞ւմ ես, ասպետ, քաջությունը քաջություն, բայց եթե մի ոստնակ լիներ, որը կարողանար թոցնել մարդուն մահվան գլխով՝ ապա ոչ ոք չէր հրաժարվի իր ոտը դնել այդ ոստնակին։ Սահակը նեղանում է ինքն իրենից, իր ներքին ձայնից։ Հայոց գնդերում շատ կան Ատատի պես քաջ զորականներ։ Ատատն իր համար ոչ ասպանդակապահ է, ոչ էլ աղեղնակապարճը տանող։ Ատատը պիտի ապրի, որպեսզի Մովսեսի մագաղաթները Բագավանից հասցնի Դվին։ Հայերի համար ստեղծվող պատմագիրքը դառնալու է մի աղոթամատյան, որին չհաղորդվող հայը կարող է օտարաշուրթ դառնալ կամ հոգին լցնել անապատի խորշակով։ Ատատը պիտի ապրի այդ գրքի համար, և այդ գրքի հետ։ Հայը գրքի պահապան է կարգում իր ամենաքաջ զորականին։ Այդպես եմ վարվել ես և իրավունք չունեմ մեղադրել ինքս ինձ։ Ատատի ասպազգեստն ու ասպազենը պետք չեն այս տեսակ փոքր կռիվների համար։ Ատատը մեծ գիրք արարելու ճակատամարտի զինվոր է։

Նորից ըմբոստ ձայնը հոգու խորքից վեր ելավ։ Խելքի արի, Սահակ։ Ի՞նչ գիրք, ի՞նչ Ատատ։ Վաղը դու կարող ես ընկնել

մարտում։ Հետո քո դին, ասպն ու ասպասարքը կտանեն մորդ՝ տիկին Մագաղաթին։ Ի՞նչ պիտի անի վշտաբեկ մայրդ։ Կսկսի փնտրել մազերը։ Նա մեռնելու իրավունք չունի՞։ Պարտավոր է գոնե այնքան ապրել՝ մինչև իմաստասեր Մովսեսը ավարտի իր մատյանը, որը կունենա այսպիսի վերջաբան. «Այս գրքի մեկենասն էր Հայոց աշխարհի մարզպան ասպետ Սահակ Բագրատունին։ Միայն մեկենաս չէր, այլ ուղղություն տվող ուսուցիչ։ Գրքի ստեղծման ժամանակ նա դարձավ մի շողուլ, առանց որի ոչ մի որմնադիր չի կարող պատն ուղիղ շարել։ Ոչ մի մեկենաս այնքան չի խառնվել իր հանձնարարած գրքի ստեղծմանը, որքան ասպետ Սահակը։ Չհասցրեց արքա դառնալ, չնայած արքա էր հոգով ու խելքով։ Նրա մոտ ոչ ոք չէր կարող հոխորտալ կամ հպարտանալ իր իմաստությամբ։ Մեծագարմ այր էր, որ ամբողջ կյանքում չիջավ արժանապատվության նժույգից։ Աստված պիտի իր պահուստից այս շողշողենի մարդուն մի դար բաշխեր։ Այսքանը հերիք է, մտքում ասաց Սահակը։ Պիտի կտրել խոսքի երկարը և լեղի լցնել շատախոսի լեզվին, որ նա չկարողանա բըլբըլալ։ Եթե ողջ մնա՝ իր դիվանը կդարձնի մեծ մատենադարան, որը կմրցի Ալեքսանդրիայի մուսեյոնի հետ։ Հայրը՝ ասպետ Տիրոցը շատ ոսկի է թողել։ Սահակը կարող է գնել աշխարհի ամենաթանկ գրքերը։ Մտապատկերում երևաց խեղճացած Վանադուխտը։

— Ես սիրում եմ քեզ,— ասում է օրիորդը։

— Եթե ես ընկնեմ կռվում՝ դու կսիրես ուրիշին։

— Չեմ կարող, կամ՝ դու, կամ՝ մահ։

— Եթե այդքան ուժգին ես սիրում, ասված ինձ ողջ կպահի քեզ համար։

Վրանի ճեղքից լույսի մի շիթ ցոլաց, հետո կողքի շամբից մի ձայն լսվեց, որ նման էր խոզի խանչի։ Սահակը շարժվեց տեղից և կանթեղի շողշողուն լույսի տակ սկսեց տնտղել իր ասպարն ու նիզակը։ Հետո թիկն տվեց, գլուխը հենեց վահանի պտուկին և փոքձեց ննջել։ Զորականներից մեկը դրսում աղմուկ բարձրացրեց։ Մի կինճ շամբի մեջ խշխշոց էր գցել, որից անհանգստացած ձիերը վրնջյուն էին հանում։ Զորականն ուզում էր փախցնել կինճին։

Նիրհից մինչև քուն մի քայլ է։ Սահակը շատ էր հոգնած և տեղ հասավ կես քայլ անելով։ Քնեց թե չէ՝ ընկավ երազների

աշխարհը։ Հայրը բռնել էր Սահակի ձեռքը և քաշում էր դեպի էջմիածնի մայր տաճարը։

— Ո՞ւր ես տանում, հայր իմ,— հարցնում է Սահակը։

— Գնանք, տղաս, հայրապետն սպասում է մեզ,— ասում է հայրը՝ ասպետ Տիրոցը։

— Ի՞նչ հայրապետ։

— Հայոց աշխարհը մի հայրապետ ունի, տղաս, սուրբ Հովսեփ Վայոցձորեցին։

— Նա վաղուց է հրաժեշտ տվել աշխարհին, հայր իմ։ Հիմա հայրապետը Հովհան Մանդակունին է։

— Չէ, չէ, տղաս, գնանք Հովսեփի մոտ, ես նրա լուսաշող օրհնանքի ներքո եմ երդվել ու դրժել իմ երդումը։

— Հայր, դու Բագրատունի ես, ասպետ, քաջասիրտ հայկազուն, դու ինչպե՞ս կարող ես դրժել երդումդ։

— Կշտամբիր, տղաս, ինչքան ուզում ես, բայց այսպես եղավ։ Ավարայրի ճակատամարտի ժամանակ ես իմ գունդը մարտի չտարա պարսիկների դեմ, ինքս էլ անգործ կանգնած մնացի Վասակ Սյունու կողքին։

— Ուրեմն դա ճի՞շտ է։

— Այո՛, տղաս։

— Եվ դու անտարբեր դիտում էիր, թե պարսիկներն ինչպես են ջախջախում զենքին անվարժ հայ շինականների՞ն։ Դա տմարդություն էր, հայր։

— Մի խնայիր հորդ, տղաս, դա դավաճանություն էր։

— Այդ ի՞նչ եք արել, այրերդ հայոց, զորական ընտիր գընդերը մի կողմ եք թողել և մարտի մղել շինականների՞ն։

— Բա՞վ է, տղաս, դու պետք է մեր տոհմի ճակատից մաքրես անպատվության այդ կեղտը, գնանք հայրապետի մոտ։ Վաղը ճակատամարտ է։ Դու պետք է կռվես նաև իմ փոխարեն։ Գնանք հայրապետի մոտ։ Դու պետք է ուժ առնես նրա օրհնանքից։

Տեսարանը փոխվեց։ Հայրը հրեշտակ դարձավ և սկսեց բարձրանալ դեպի երկինք։ Հետո երևաց Ատատը, որը նրան ուղեկցեց Բագավանի լուսավորչի տաճար։

— Ողջո՛ւյն, Սահակ։

— Ողջո՛ւյն, իմաստասիրդ Մովսես, ահա թե ինչպիսին ես դու։

— Ասպետ, աստված չիմացավ, որ կյանքում հանդիպենք իրար։

— Ինչպե՞ս թե, որտե՞ղ ենք գտնվում մենք հիմա։

— Երազում, ասպետ, երազում։

Սղջերափողի կանչը ընդհատեց մարդպանի երազը։ Նա աչքերը բացեց, հանդարտ բարձրացավ տեղից և ինքնիրեն ասաց.

— Երազում էլ չհասցրի մի կարգին նայել քեզ, իմաստասիրդ Մովսես։

Առավոտ էր։ Զինջ օդը լցված էր ծաղկանց բուրմունքով։ Ներսեհապատի դաշտում ծղրիդներն սկսել էին իրենց առավոտյան ճովողությունը։ Ահա հայոց զենքերի զորաշարերի առջևում երևաց կաթողիկոս Հովհան Մանդակունին։ Նա հագել էր շողավոր ծոպերով շուրջառ։ Վսեմ կեցվածքով անցնում էր շարքերի առջևով, մերթ ընդ մերթ բարձրացնում իր խաչակիր գավազանը և ասում.

— Աշխարհը բոլոր մարդկանց համար ասպնջատուն է։ Որոշիչը տարիների թիվը չէ, որ կարող է մի քիչ այս կողմ, մի քիչ այն կողմ լինել։ Հավերժականը միայն հայրենի հողն է, մեր նախնյաց ոգիների օրրանը։ Մենք այստեղ ենք եկել միայն հաղթելու համար։ Զարկենք ոսոխին ու հաղթենք, որպեսզի այս հողի վրա բոլոր հայկյանները խոսեն ու աստծուն աղոթեն հայերեն։ Քաջաբար է կռվում նա, ով ողջախոհորեն հաշտվում է նահատակվելու մտքի հետ։ Արիացե՛ք, իմ քաջեր, ձեզ նայում է համայն Հայոց աշխարհը։

Սպարապետ Վահան Մամիկոնյանը զորաճակատ կազմեց։ Կենտրոնում իր մեծաթիվ այրուձիով պիտի մարտնչեր Սահակ Բագրատունին։ Աջ թևում իրենց հեծելազնդերով և հավելվածով զորագլուխներ կարգվեցին Բաշզ Վահեվունին, Բաբգեն Սյունին, Ատոմ Գնունին և Փապակ Պալունին։ Ձախ թևում ճակատ կազմեցին Վահան, Ներսեհ և Հրահատ Կամսարականները։ Մի առանձին գնդի գլուխ անցած սպարապետը պիտի ղեկավարեր ամբողջ ռազմաճակատը։ Պահեստային զորամասի հրամանատարն էր Վրեն Վանանդացին։ Սպարապետի հրամանները պիտի տեղերը հասցներ ոստանիկ այր Պապ Արտակունին, որ Բաբոցի որդին էր։

Հայոց դիմաց կանգնած էր պարսից բանակը։ Գլխավոր հրամանատար փուշտիպանան սպարապետ Ամրներսեհը մտադիր էր առաջինն սկսել Ղարտը, հայերին ետ քաշել Ներսեհապատից և

հիմնական ճակատամարտը տալ Ավարայրում։ Վահան Մամիկոնյանը գիտեր այդ մասին և մտածում էր ուրիշ ընթացք տալ ճակատամարտին։ Սպարապետը Պապ Արտակունու միջոցով ապսպրեց Կամսարականներին, որ նախահարձակ լինեն։ Սակայն պարսկական առաջապահ մի մեծ զորագունդ գրոհեց աջ թևով և Բաշղ Վահեվունու գունդն ընկրկեց։ Քիչ հետո կենտրոնից մարտի մեջ մտավ փուշտիպանան սաղար[1] Ատրներսեհը։ Նրա դեմ դուրս եկավ մարզպան Սահակը։ Երկուսի նժույգներն էլ աստղաճակատ էին։ Սկզբում նիզակով գրոհեց Սահակը։ Ատրներսեհը պաշտպանվեց վահանով, հետո նիզակով փորձեց հարվածել Ատրներսեհը, այս անգամ էլ հարվածից ճարպկորեն խուսափեց Սահակը։ Նրանք իրենց նժույգները մի փոքր ետ էին դարձնում և թափով հարձակվում միմյանց վրա։ Կողքից նրանց ոչ ոք չէր խանգարում։

Ներսեհեպատի դաշտը խլացել էր բազմահազար զենքերի ահեղ շառաչյուններից, գոռում-գոչումներից, ձիերի վրնջոցներից։ Սկսվել էր մահու և կենաց սոսկալի մարտը։

Փուշտիպանան սաղարն ու մարզպանը շարունակում էին կռվել։ Մի հարձակման ժամանակ երկուսի նիզակները կպան իրար և ընկան վայր։ Երկուսով մնացին առանց նիզակի։ Սահակը փորձեց ձին ետ դարձնել, բայց Ատրներսեհը մոտեցավ և բռնեց նրա մազերից։ Մարզպանն էլ ստիպված էր նրա մազերից բռնել։ Քաշքշում էին իրար, բայց մեկը մյուսին հաղթել չէր կարողանում։ Սահակն զգում էր, որ իր նժույգի թամբի ձախ ասպանդակը թուլանում է և կարող է կտրվել։ Այդ պատճառով նա ճիգ էր թափում իր ձին հեռացնել Ատրներսեհից։ Վերջապես փուշտիպանան սաղարին հաջողվեց պոկվել իր հակառակորդից և ասպանդակելով ձիուն՝ ետ սլանալ։ Սահակը կարծում էր, որ Ատրներսեհը ուր որ է պիտի վերադառնար նոր նիզակով։ Հենց այդ ժամանակ հայ հեծյալներից մեկը նիզակ տվեց մարզպանին, որը, սակայն, մինչև մարտի վերջը նորից չհանդիպեց փուշտիպանան սաղարին։

Տեսնելով հայոց աջ թևի նահանջը՝ Վահան Մամիկոնյանը ձայն տվեց Վրեն Վանանդացուն.

— Շտապի՛ր աջ կողմ և հարվածն ընդունիր քեզ վրա։

1 Փուշտիպանաե սաղար — զորապետական տիտղոս Պարսից աշխարհում, որ բառացի նշանակում է արքայի թիկնապահների վերակացու։

Սակայն Վրեն Վանանդացին հուսահատական պատասխան տվեց.

— Հույս մի դիր ինձ վրա, սպարապետ, ես արդեն մարտի մեջ եմ մտել, պարսիկները գրոհում են երեք կողմից։

Վահան Մամիկոնյանը Կամսարականների հետ հարձակվեց աջ թևի վրա։ Անկասելի հարվածից պարսիկները խուճապահար եղան և սկսեցին ասպախումբ-ասպախումբ նահանջել դեպի Ավարայր։ Սպարապետը իր զորաթևով կտրեց պարսիկ զորապետ Վին-Ի-Խոռյանի ճանապարհը։ Պարսիկը փորձեց պաշտպանվել, բայց Մամիկոնյանը դիպուկ հարվածով նիզակը խրեց նրա փորը և բացականչեց.

— Առ քեզ, Մուշկան Նյուսալավո՛ւրտ...

Ցնցած Մուշկան Նյուսալավուրտը վաղուց է մահացել, բայց Վահան Մամիկոնյանի համար բոլոր պարսիկներն էլ Մուշկան Նյուսալավուրտ են, որի հետ մղած կռվի ժամանակ զոհվել էր իր հորեղբայր Վարդան Մամիկոնյանը։

Սպարապետը կանգնեց Ավարայր տանող ճանապարհին և դիմեց Շիրակի տեր Ներսեհ Կամսարականին.

— Իմա՛ց տուր մերոնց, թող ոչ ոք չշարժվի դեպի Ավարայր, չպետք է հեռանալ Ներսեհապատից ու խախտել զորակարգը, պարսիկներն ուզում են խորամանկել, մեզ քաշում են դեպի Ավարայր, կարծելով, թե պիտի կրկնվի երեսունմեկ տարի առաջ տեղի ունեցածը։ Իսկ մենք նրանց պիտի դաս տանք այստեղ՝ Ներսեհապատի դաշտում։

Անսալով սպարապետին Ներսեհ Կամսարականը պարիսպ-զորաշար կազմեց կանաչ տափարակի վրա։ Պարսկական բանակը երկատվեց, մի մասը մնաց Ներսեհապատում, մյուսը լճացավ Ավարայրում։ Հայերը նեղեցին Ներսեհապատի պարսիկներին, որոնք սկսեցին կծկվել ասպարափակ կազմելով։ Ավարայրում կուտակված պարսկական զորամասերն ստիպված էին մարտի մեջ մտնել։ Նրանք սրաշավ հասան ու գրոհեցին Ներսեհ Կամսարականի զորաշարի վրա։ Կամսարականը ճեղք բացեց հակառակորդի համար և տեսնելով, որ Ավարայրի կողմում ոչ ոք չմնաց՝ նորից փակեց զորաշար-պարիսպը։ Նկատելով, որ ընկել են շրջապատման մեջ պարսիկներն սկսեցին մարտնչել ավելի մոլեգնորեն։ Իր նիզակը ճոճելով Ներսեհ Կամսարականի վրա հարձակվեց Ատրշնասպ-Ի-Տապյանը։ Կամսարականը ետ մղեց հակառակորդի հարվածը և ինքը գրոհեց։ Հետո Ներսեհը քիչ

հեռվից նետեց իր նիզակը, որը խրվեց Ատրվշնասպ-Ի-Տապյանի կողը։ Պարսիկն ընկավ ձիուց։

Ներսեհապատի դաշտում սկսեցին հնչել հայկական եղջերափողերի հաղթականները։ Շրջապատման մեջ ընկած պարսիկները դադարեցին դիմադրությունը և անձնատուր եղան։

Կաթողիկոս Հովհան Մանդակունին չոքել էր կանաչ գետնին և հայացքը երկինք կարկառած, մեծ հաղթության առթիվ գոհություն էր մաղթում աստծուն։

Հաղթական բացականչությունները դեռ թնածում էին Ներսեհապատի դաշտում, երբ լուր տարածվեց, որ հայտնվել է սպարապետ Վահան Մամիկոնյանի եղբայր Վարդ Մամիկոնյանը։ Սպարապետն ուրախությունից արտասվում էր, իսկ Վարդը պատմում էր, թե Պերոզ արքայի պատանդությունից ինչպես է ազատվել ու իր ծառայի հետ Տիգրոնից հասել Ներսեհապատ։

* * *

Մովսեսը զարմացավ Լուսավորչի տաճարի գավիթում հանդիպելով Ալեքսանդրիայի մուսեյոնի «Բուկեֆալ» կացարանի կառավարիչ Մակեդոնացի Ամինտասին։

— Այդ դո՞ւ ես, Ամինտաս, — ողջագուրվելով ասաց իմաստասերը։

— Ես եմ, Մովսես։

— Դու համարյա մնացել ես նույնը։

— Այդ նրանից է, որ ես շարունակում եմ պաշտել հեթանոս Օլիմպիս աստծուն։ Հիսուս Քրիստոսի տարիքն ինչ է, որ նրա ուսմունքն ինչ լինի։ Մարդս խելքի է գալիս երեսուներեքից հետո, իսկ Քրիստոսն ընդամենը երեսուներեք տարի ապրեց աշխարհում։— Ամինտասը հանկարծ հասկացավ, որ դրույցն անհաճո ընթացք կարող է ստանալ, կանգ առավ մի պահ ու շուռ տվեց իր խոսքի հունը։— Դե ես աստվածաբան չեմ և, հավանաբար, տգետ բաներ եմ ասում։

— Չէ, Ամինտաս, դու տգետ չես։ Կդա ժամանակ, երբ մարդ կասի այն, ինչ մտածում է, դու ոտքիդ մեկը դրել ես գալիքի կամրջին։

Ապա Մովսեսը հետաքրքրվեց, թե Ամինտասը ինչ գործով է Ալեքսանդրիայից հասել Բագավան։

— Ես այլևս «Բուկեֆալ» կացարանի կառավարիչ չեմ,— ասաց Ամինտասը,— և այստեղ եմ եկել ոչ թե Ալեքսանդրիայից։

այլ Կոստանդնուպոլսից։ Տասը տարուց ավելի է, ինչ ես ապրում եմ բյուզանդական կայսրերի հարևանությամբ։ Դու ճանաչո՞ւմ ես իմաստասեր Սոդոսին։

— Իմաստասեր Սոդո՞ս, ոչ, չեմ լսել այդ անունը։

— Նա Զենոն կայսեր ատենադպիրն է։ Հիմա էլ ձեռնարկել և գրում է իր «Զիամատյանը»։ Դա կլինի աշխարհում ամենամեծ գիրքը ձիերի մասին։

— Իսկ դու ի՞նչ գործ ունես Սոդոսի հետ։

— Ես օգնում եմ նրան։

— Դու հասցրել ես ձիաբան դառնալ, իսկ Ալեքսանդրիայում սովորելու տարիներին կարծում էի, թե միայն Ալեքսանդր Մակեդոնացու հռչակավոր նժույգի անունը գիտես։

— Չէ, Մովսես, հետագայում ես շատ բան իմացա ու սովորեցի ձիերի մասին։ Նաև՝ Բուկեֆալի մասին։ Ես գտա մի հին մատյան Հայքի մասին։

— Հայքի մասի՞ն։

— Այո։

— Ի՞նչ գիրք է դա։

— Ես չգիտեմ խորագիրը, որովհետև սկիզբն ու վերջը չկա, իմ ձեռն են ընկել գրքի այն մագաղաթները, որտեղ գրված է հայկական ձիերի մասին։

— Ի՞նչ է գրված։

— Այն, որ աշխարհի ամենաարտիր, աղնվացեղ ձիերի հայրենիքը Զորրորդ Հայք նահանգի խորձյան գավառն է։ Այստեղից են տարել ու Ալեքսանդր Մակեդոնացուն նվիրել նաև Բուկեֆալը։ Այնպես որ մեծ զորավարի ձին եղել է հայկական, իսկ անունը՝ մակեդոնական։

— Հիմա եկել ես այստեղ և ձիերի մասին գրված նոր գրքե՞ր ես որոնում։

— Դու կռահեցիր, Մովսես։ Հայկական ձիու մասին ամեն ինչ հետաքրքրում է Սոդոսին, ասպաղինելը, ասպախաղը, ասպաստանը, նույնիսկ ձիու հայկական անվանումները։ Մինչև հիմա ինձ հաջողվել է հավաքել այսքանը, հայերը ձիուն անվանում են նաև ասպ, ընտիր ձիուն՝ նժույգ, արու ձիուն՝ հովատակ, մատակ, էգ ձիուն՝ զամբիկ, ճակ, մատյան կամ սարակ, հեծնելու ձիուն՝ երիվար, կառքին լծվածին՝ վարգաձի, դեռատի ձիուն՝ մտրուկ, ասպարափայլին՝ ճերմակ, շիկագույնին՝ աշխետ, մոխրագույնին՝ մոդոշիկ, թխակարմիրին՝ շառատ, սև ու

ճերմակավունին՝ ճանճկեն, սպիտակ սևախայտ ձիուն՝ ճարտուկ, սպիտակախայտ ոտքերով ձիուն՝ կոստնոտիկ, եզի պես լայն ու տափակ գավակ ունեցողին՝ եզնգավակ, մերկ, անթամբ ձիուն՝ մերկիկ, ձիու ձագին՝ քուռակ։ Գիտեմ նաև, որ ձիու սմբակի գորտի ծայրամասը կոչվում է սմբակբերան, գրաստի փորքաշի հարած տեղը՝ քաշտեղ, ձիու առնանդամը՝ տոշ։ Ասում են՝ տոշ նշանակում է ուժ, այդ բառը հայերից փոխ են առել պարսիկները։ Կոստանդնուպոլսում նստած մի խելառ հայ իմաստասեր փորձում է հակառակը հավաստել և ասում է, թե տոշը հայերն են փոխառել պարսիկներից։

— Ամինտոս, իրոք, դու շատ բան գիտես հայկական ձիու մասին։

— Սոդոսն ասում է, որ աշխարհի ոչ մի լեզվում ձին այդքան անվանումներ չունի։ Դա նշան է, որ ձին հայերին ծանոթ է շատ հնուց։ Ով գիտե, գուցե այս հողի վրա է ստեղծվել առաջին թամբը։

— Չէ, Ամինտոս, այդ հարցին ես պատասխանել չեմ կարող։ Բայց ինձ հետաքրքրում է ուրիշ բան՝ ինչո՞ւ է Սոդոսը կպել հատկապես հայկական ձիերին, չէ որ աշխարհի բոլոր կողմերում էլ ձի կա։

— Հայկականը դիմացկուն է և ռազմի դաշտում, և ամեն տեսակ բնության տակ։

Զիու հետ կապված ամեն ինչի այդ եռանդուն որոնումները հայտնի թե բխելիս լինեն սոսկ իմաստասիրական հետաքրքրությունից, մտածեց Մովսեսը։ Հավանաբար Սոդոսը կատարում է Զենոն կայսեր հանձնարարությունը։ Բյուզանդացիները ցանկանում են մեծ այրուձի ստեղծել և ռազմարշավի դուրս գալ կամ ասպատակել աջ ու ձախ։ Նրանք մտադիր են աշխարհի հզորների շարքում շողալ իրենց այրուձիով։ Կարևորը հեծյալն է և ոչ թե ձին։ Ով կարող է հավաստել, որ Ալեքսանդր Մակեդոնացու Բուկեֆալը հայկական ձի է եղել։ Մարդկանց հետաքրքրում են միայն անունն ու տերը։ Բյուզանդացիները հայկական ձիերով այրուձի կստեղծեն և առաջինը կհարձակվեն Հայքի վրա։ Եվ ընդհանրապես տերության հարստությունը ոսկուց չի սկսվում։ Ոսկին նման է պոռնիկ կնոջ, որ կարող է ամեն տեսակ տղամարդու գիրկ ընկնել։ Հայոց համար թանկ հարստություն է ձին, որդան կարմիրը, գազպենը և այն փայտը, որից դիմացկուն առեղ, նետ ու աղեղ և ռազմակառքեր են պատրաստում, և ոչ-

խարի ու երինջի թարմ ու ապխտած միսը, և նուռն ու խաղողը։ և փրփուր-փրփուր լավաշը։ Օտարները ջանում են այս երկրից տանել ամեն ինչ։ Նրանք աչք են տնկել հայկական բոլոր բարիքների վրա։ Եթե կարողանան իրենց տուն տանելու համար կշալակեն և մեր հողը։ Ասում են Պարսից Պերոզ արքան ճաշից առաջ ու հետո հայկական խաղողից պատրաստված օշարակ է խմում։ Առանց դրա կերածը կուլ չի գնում։ Երկիր պահելը նաև երկրի հարստությունը պահել է նշանակում։ Հայոց մեծերը պարտավոր են խորհել այդ մասին։

Ամինտոսը գնաց գիշերելու Բագավանի կողքին գտնվող Բախտատուրի իշևանատանը։ Մովսեսը Բուն փողոցով սկսեց քայլել դեպի տուն։ Առջևից սրաթռիչ մի ձիավոր էր գալիս։ Մովսեսը ճանաչեց նրան։ Ատատն էր, Դվինից էր գալիս։ Ասպետ Սահակի կապարճակիրը հասավ եպիսկոպոսին և կտրուկ կանգ առավ։ Իջավ ձիուց ու բացականչեց.

— Հաղթությո՞ւն, հաղթությո՞ւն, հաղթությո՞ւն...

Նրա հզոր ձայնը հասավ կողքի տների բնակիչներին։ Մարդիկ դուրս թափվեցին ու իմացան, որ Ներսեհապատի դաշտում հայոց գնդերը հաղթել են պարսիկներին։ Ցնծությունն ու ավետիսը տնից տուն անցավ և առօրեական նիրհից հանեց հնամենի Բագավանը։ Մովսեսը ետ դարձավ, գնաց Լուսավորչի տաճար և հաղթության մաղթանքի իր աղոթքն ուղղեց առ աստված։

Ատատը Բագավանում տուն է գնել ու ամուսնացել Թեժի հետ։ Նրանց ամուսնությունն օրհնել է Մովսեսը։ Հիմա էլ իմաստասիրից բաժանվելուց հետո շտապեց տուն։ Շեմին կանգնած Թեժը գրկեց ամուսնուն և երկար ժամանակ բաց չէր թողնում նրան։

Հետո տուն մտան՝ հայացքները խաչաձևած։

— Ի՞նչ էիր անում այս քանի օրը,— հարցրեց Ատատը։

— Ոսպ էի չորացնում և գուլպա գործում։ Էհ, Ատատ, գլխի եմ ընկել, որ ես չկամ,— խոսեց Թեժը։

— Ինչպե՞ս թե չկաս։

— Չկամ, Ատատ, առանց քեզ ես չկամ, դու ինձ հետ ես ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպե, ամեն ակնթարթ։ Ես չեմ կարող մտքով բեկվել քեզնից նույնիսկ մի ակնթարթով։ Մեր սերը ինձ դարձրել է քո կցորդը, Ատատ։ Մի այնպիսի բան արա, որ ես քիչ սիրեմ քեզ։

— Ի՞նչ անեմ։

— Չգիտեմ։

— Չէ, Թեժ, իմ սերն անչափելի է։ Դու էլ միշտ ինձ հետ ես, մի՛շտ, մի՛շտ, մի՛շտ։ Հա՛, մոռացա,— Ատատը գրպանից հանեց և մի ոսկեզօծ ծամկալ նվիրեց կնոջը։

— Սա որտեղի՞ց ես ձեռք բերել,— հարցրեց Թեժը։

— Դվինի արհեստավորաց տներից մեկում։ Ճարտար են դվինցի արհեստավորները։

Հետո հաց կերան մունջ ու վերսկսեցին գրույցը։

Ատատն ասաց.

— Ներսեհապատում մերոնք չարդել են փուշտիպանան սաղար Ատրներսեհի քիթ ու մռութը։ Պարսիկները ամոթալի պարտություն են կրել և անձնատուր եղել ամբողջ զորքով։

— Թող ասված նրանց ոտը կտրի այս հողից, որպեսզի հորս պես թույլ ու ստրկամիտ մարդիկ յուրայինների ատելությանը զոհ չդառնան,— արձագանքեց Թեժը և անմիջապես շուտ տվեց գրույցը։

***

Մովսեսի պատվերով Ատատը Դվինից բազում գրքեր էր բերում Բագավան ու ետ տանում։ Սահակ Բագրատունին, գետնի տակից էլ լիներ, Մովսեսի համար գտնում էր ամեն տեսակ ձեռագիր։

Աշխարհում շատ կան գեղակազմ, մարգարտագիր գրքեր։ Նրանց մեծ մասը անուն է հանում հեղինակների կենդանության օրոք։ Հաճախ Մովսեսը թերթատում է դրանք, ձեռքը թափ տալիս և Արձանին ասում.

— Գրքերի աշխարհը նման է որոմնաշատ արտի, մինչև չհնձես՝ չես իմանա, թե որն է անոպիտանին։

***

Սահակ Բագրատունին Մովսեսի համար և ողջախոհության ասպետ էր, և ուսումնառության կարոտ սան։ Երբեմն իմաստասերի պատումն ընդհատվում է և տեղի տալիս խրատանուն. «Որոշակի եզրեր չունեն բուն Հայկազանց և եկվոր սերունդները։ Ես անուն առ անուն չեմ պատմի նրանց մասին, մասամբ՝ որովհետև մեզ հայտնի չեն, և մասամբ խույս տալով դժվարին աշխատանքից, և երրորդ, որ շատերի անհաստատ լինելը կթելադրեր բոլորն էլ հետազոտել։ Այս պատճառով էլ մենք ոչինչ չենք գրի Տիգրան վերջինից հաստատված ցեղերի մասին, թեկուզ շատ անգամ էլ սրա համար աղաչես, այլ կգրենք միայն հետո հաստատվածները, որոնց մասին հավաստի գիտենք։ Որովհետև մենք, որքան հնարավոր էր, խուսափեցինք ավելորդ ու պաճուճված խոսքերից և ինչ որ անհավաստի գործ կամ կարծիք կար, միայն հետևելով արդարն ու ճշմարիտը գրելու, ուրիշներից օգտվելով կամ մեղանից՝ որքան կարողություն ունեինք։ Այստեղ էլ նույնպես վարվելով՝ խոսքիս ընթացքը կանգնեցնում եմ, երբ անպատշաճություն եմ նկատում կամ հավաստիության կողմից կասկածելի մի բան։ Եվ քեզ էլ, ինչպես շատ անգամ, այժմ ես աղաչում եմ, մեզ մի հարկադրիր ավելորդ բաներ գրելու, մի գուցե այդպիսի քիչ կամ շատ պատմություններով մեր այս մեծ և հավաստի ամբողջ աշխատությունն անպետք ու ավելորդ մի գործ դառնա, որ հավասարապես վտանգ է և ինձ, և քեզ»։

***

Ամինտասը մի քանի ամիս շրջագայեց Հայքի գավառներում և վերստին հայտնվեց Բագավանում։ Պարսկերեն գրված մի մատյան ցույց տվեց Մովսեսին ու ասաց.

— Գնել եմ Արմավիրում։ Գիրքն այս կոչվում է «Զրուցարան վասն ձիո»։ Ուզում եմ ծանոթանաս և ասես, թե սա պե՞տք կդա իմաստասեր Սոդոսին։

Այդ գիշեր ձեթի ճրագի լույսի տակ Մովսեսն սկսեց թերթել Ամինտասի գնած մատյանը։

Տիգրան Երվանդյանի արքայական դիվանից բեկված մի դիրք է դա, որի վրա չի գրված հեղինակի անունը։ Նշաններից երևում է, որ մատյանը պահվել է փակի տակ և առանց արքայի թույլտվության ոչ ոք չէր կարող թերթել այն։ Սովորական զրուցարանները գաղտնի չէին պահում, մտածեց Մովսեսը։ Այստեղ թաքնված բան կա։ Թերթատելով ոչինչ չես հասկանա, պիտի ծանոթանալ հանգամանորեն։ Մատյանում գրված էր. «Դա եղել է այն ժամանակ, երբ աշխարհում ի հայտ եկավ թագը։ Տղամարդու տեղ էր, ում ուժը պատում էր՝ իշխում էր մյուսի վրա և գլխին թագ դնում։ Մարդիկ տառապում էին թագավորացավով, սկսվել էին առաջին պատերազմներն աշխարհում։ Հարազատը հարազատին չէր խնայում, ամեն մեկն ուզում էր գլխին

թագ ունենալ։ Ահա այդ ժամանակներում Տափերական դաշտում արիասիրտ մի իշխան էր ապրում Տիգ անունով։ Նրա ամրոցը Մասիսի քթի տակ էր, Երասխի ափին։ Մի անգամ Տիգը մոռանում է փակել իր ամրոցի դարպասը և դարանակալած թշնամին ներս է մտնում ու գրավում ամրոցը։ Տիգը միանգամից զրկվում է և գեղեցիկ կնոջից, և տուն ու տեղից, և հայրական կալվածքներից ու իշխանական իրավունքներից։ Անսիրտ թշնամին Տիգին տանում ու բաց է թողնում Ասորաց կողմի ավազուտներում։ Երիտասարդ իշխանը ուշքի է գալիս ու տեսնում, որ հագին մի գրգի[1] է մնացել։ Գոնե կարողանար դուրս գալ մահաշունչ ավազուտներից։ Փորձում է որոշել, թե որն է հյուսիսը, հարավը, արևելքն ու արևմուտքը։ Բան չի ստացվում։ Ավազուտներում չորս կողմն էլ մարդու աչքին արևելք է երևում, որովհետև որ կողմ նայում ես՝ շոգ ե, հրավառ, բոսորաշունչ։ Ելավ տեղից ու սկսեց քայլել, սակայն ուսի սոսկալի ցավից նորից ընկավ ավազների վրա։ Հանկարծ նրա ականջին հասավ իր ձիու՝ Մոնի խրխնջոցը։ Չէ, երազ չէր, Մոնը մոտեցել և ոռնոցը քսում էր տիրոջ դեմքին։ Տիգն ուրախությունից չգիտեր ինչ անել։ Մոնն իմաստուն էր, սմբակահմա[2]։ Ասպարափայլ էր, առջևի ոտքերից յուրաքանչյուրի վրա յոթ կարմրավուն խալ կար։ Հայքից բացի աշխարհում ոչ մի տեղ այդպիսի ձիու չես հանդիպի։

Մոնը չոքեց և Տիգը դժվարությամբ իրեն գցեց ձիու վրա։ Իշխանը մտածում էր, թե ձին ինչպես է կարել կապն ու դուրս եկել ասպաստանից, հետո էլ՝ ամրոցից և Երասխի ափերից եկել ու հասել Ասորաց կողմը։

Ավազուտներից դեռ դուրս չեկած Մոնը կանգ առավ ու սմբակներով դոփեց գետինը։ Տիգը, որ մի փոքր ուշքի էր եկել, հասկացավ ձիուն։ Նա իջավ ձիուց ու սկսեց ձեռքերով ետ տալ ավազը։ Երկար ժամանակ պետք չեղավ, որպեսզի Տիգի ձեռքը դիպչեր փոքրիկ տուփին։ Բացեց, ոսկի էր։

Հետո շարունակեց ճանապարհը։ Պատահած առաջին քաղաքում Տիգը նոր հագուստներ ու թամբ առավ։ Հենց այդ ժամանակ էլ վաճառականներից մեկի աչքով է ընկնում նրա ոսկեգույն տուփը։ Գիշերն իշևանատանը գողանում են իշխանի ոսկին։ Տիգը մնում է ձեռնունայն։ Նա նստում է իր ձին և ճամփա ընկնում դեպի Հայք։ Մի աղբյուրի մոտ Մոնը սմբակներով նորից է դոփում գետինը։ Տիգը քանդում է հողը և ոսկու մի տուփ գտնում։

Երբեմն-երբեմն ձին դուրս էր գալիս ճանապարհից, այծուղիներ մտնում և սմբակների դոփյունով ցուցանում գանձերի թաքստոցները։ Տիգն այնքան ադամանդ, ոսկի ու արծաթ է հավաքում, որ հետը չի կարողանում տանել և ստիպված ինքն էլ իր հերթին է այստեղ ու այնտեղ թաքցնում գտած գանձերը։

Մի անգամ իշխանը ճանապարհի վրա հանդիպում է իր նախկին զորականներից մեկին, որի անունը Գոգիկ էր։

— Այդ դո՞ւ ես, Գոգիկ,— հարցրեց իշխանը։

— Ես եմ, տեր իմ։

— Ի՞նչ դարձավ իմ ամրոցը։

— Քո թշնամի Սանահը հրի մատնեց այն։

— Իսկ Շողենի տիկի՞նը։

— Նրան էլ տարավ հետը։

— Ո՞ւր։

— Հրև քաղաքի կողմերը։

— Միևնույն է, Սանահն ուր էլ տանի, ես կգտնեմ ու կազատեմ կնոջս։

— Բայց քո ինչի՞ն է պետք Շողենի տիկինը։

— Ինչպե՞ս թե, նա իմ կինն է, Գոգիկ։

— Նա Հիմա Սանահի կինն է, տեր իմ։

— Բռնությամբ է դարձել նրա կինը։

— Ոչ, իշխան, սիրով է դարձել։ Այդ մասին նա ինքն է հայտնել քո բոլոր հպատակներին։

— Եվ ի՞նչ արեցին հպատակները։

— Նրանք լքեցին իրենց տիրուհուն։ Հենց այդ օրն էլ ամրոցից փախավ քո Մոնը, որն ինչպես տեսնում եմ՝ եկել ու գտել է քեզ։

— Կա՜նգ առ, Գոգիկ, հավատալս չի գալիս, որ Շողենին դավաճանի ինձ։ Հայքում ոչ մի կին իր գեղեցկությամբ չի կարող մրցել նրա հետ և աշխարհում ոչ մի տղամարդ էլ չի կարող այնպես ուժգին սիրել, ինչպես ես եմ սիրում իմ կնոջը։

— Այո՛, իշխան, նա չքնաղագեղ է, բայց գեղեցիկ կանայք

---

[1] Գրգի — քրքրված հանդերձ, ցնցոտի։

[2] Սմբակահմա — բառացի՝ սմբակով գուշակող։ Հին Հայաստանում այդպես էին կոչում այն ձիերին, որոնք սմբակներով դոփում էին գետինը՝ հասկացնելով տիրոջը, որ այդտեղ բան կա թաքցրած։

մի ամուսին են ունենում, յոթ սեր էլ թաքցրած պահում իրենց հոգում։ Ձիդ ավելի հավատարիմ գտնվեց, քան կինդ։

— Հիմա ի՞նչ անեմ ես։

— Գնա նոր տուն ու տեղ դիր և մոռացիր Շողենի տիկնոջը։

Տիգն այլևս հարց չտվեց իր նախկին զորականին, շուռ տվեց ձիու գլուխը և ետ դարձավ տուն տանող ճանապարհից։

Գնաց ու վրան խփեց Վանա լճի ափին։ Քարգործ վարպետներ կանչեց ու կառուցեց աշխարհի ամենահրաշալի ապարանքը։ Տիգի անունն սկսեց թնդալ ամեն տեղ։ Ոչ մի արքա նրա պես հզոր ու մեծաթիվ զորք չուներ։

Բայց ինչ կարող ես անել, որ գոմում հանգիստ չէր կարողանում մնալ Մոնը։ Խրխնջում էր, հա խրխնջում։ Հետո սկսեց հյուծվել։ Տիգն սկսեց անհանգստանալ, ձիաբույժներ հրավիրեց այս ու այն կողմից։ Սակայն բան չէր ստացվում, ձին օր օրի վրա ընկնում էր հալից։ Մի անգամ երազում Տիգի հետ ձին սկսեց խոսել մարդկային լեզվով։

— Ի՞նչ է պատահել քեզ, տեր իմ, դու շատ տխուր ես,— ասաց Մոնը Տիգին։

— Ուրախանալու առիթ չկա, Մոն, ես չեմ կարողանում բուժել քեզ։

— Բայց ես հիվանդ չեմ, տեր իմ։

— Ինչպե՞ս թե հիվանդ չես, իսկ ինչու ես այդքան հյուծվել։

— Հյուծվել եմ նրա համար, որ ինձ դուրս չես բերում շրջագայության։

— Իսկ որտե՞ղ ես ուզում շրջագայել, Մոն։

— Աշխարհի բոլոր կողմերը, տեր իմ։

— Ինչո՞ւ ես ուզում շրջագայել, Մոն։

— Ուզում եմ ցույց տալ, թե որտեղ կա թաքնված ոսկի։

— Մոն, դու ինձ այնքան ոսկի ես ցուցանել, որ դա լիուլի հերիք է ինձ։

— Ես ուզում եմ, որ դու տեր դառնաս աշխարհի բոլոր կողմերում թաքցրած ամբողջ ոսկուն։

Հաջորդ օրը Տիգը հեծավ իր ասպարափայլը և ճամփա ընկավ։ Դե, Տիգը չգիտեր էլ, թե ուր է գնում։ Ձին էր տանում նրան։ Քայլում էր Մոնը, անցնում աշխարհի հին ու նոր ճամփաներով, այստեղ ու այնտեղ կանգ առնում, սմբակներով դոփում գետինը և տիրոջը ցույց տալիս թաքցրած գանձերի տեղը։

Տիգը հարստանում էր, հա հարստանում։ Նա չգիտեր, թե ինչ

աներ այդքան գանձերը։ Հավաքեց հյուսիսի, հարավի, արևելքի ու արևմուտքի բոլոր ոսկերիչներին։ Եվ Վանա լճի ափին սկսեցին ոսկուց ձուլել ու պատրաստել ոչ միայն քայլ ու գինդ, այլ ոսկյա բազպաններ, բաժակներ, ասեղներ, գավազաններ, ոսկեզարդան հանգերձներ, ոսկեղրվագ սափորներ, ոսկեձամ ու ոսկեդիսակ արձանիկներ։

Այնուհետև Տիգը Վանա լճի ափից փորել տվեց և լճի հատակում սարքեց իր գանձատունը։ Տիգից բացի ոչ ոք չէր մտել այնտեղ։ Մարդ կկորչեր գանձարան տանող ընդգետնյա բավիղներում։

Մի օր էլ Տիգի ապարանքի առջև մարդիկ տեսան գեղանի Շողենու հսկա արձանը, որ ձուլված էր համակ ոսկուց։ Լուրը հասավ հեռավոր Հրև քաղաքը։ Շողենին իր հավատարիմ ծառային ուղարկեց Վանա լճի ափ։ Ծառան վերադարձավ ու ասաց.

— Տիկին Շողենի, ամեն ինչ ճիշտ է։ Վանա լճի հարավային ափին, Տիդ իշխանի ապարանքի կողքին, կանգնեցված է եռահարկ շենքի բարձրությամբ քո ոսկյա արձանը։ Դա հրաշալի գործ է։ Նմանահան անդրիագործը կերտել է այնպես, ինչպես դու կաս։ Ինչ որ ինքդ քեզ տեսնես։

— Իսկ ի՞նչ են ասում մարդիկ,— հարցնում է տիկինը։

— Ասում են սա գեղեցկության աստվածուհի Շողենին է, ծունկ են իջնում և երկրպագում քո արձանը։

— Շա՞տ մարդիկ են գալիս արձանը տեսնելու։

— Թիվ ու հաշիվ չկա, տիրուհի, աշխարհի բոլոր աղնվազարմ այրերը, օրիորդներն ու տիկնայք Վանա լճի ափ են շտապում՝ տեսնելու քեզ։ Տիկին Շողենի, ոչ մի աստվածուհի այդպիսի բախտի չի արժանացել։

Քունը փախավ Շողենու աչքերից։ Նա վեր է կենում և գալիս ու հասնում Վան։ Սակայն Շողենուն չի հաջողվում տեսնել իր արձանը։ Վան է հասնում և տեսնում, որ իր արձանի տեղ դրված է ձիու ոսկյա գեղեցիկ մի արձան, որի պատվանդանին գրված է. «Այս ձիու անունը Մոն է։ Նա ավելի հավատարիմ գտնվեց իր տիրոջը՝ իշխան Տիգին, քան վերջինիս կինը»։

Մովսեսը մի կողմ դրեց գիրքը և սկսեց խորհել։ Այս առասպելախառն պատմությունից բյուզանդացիները կհանեն միայն մի բան։ Կորոնեն ու կգտնեն հայկական ասպարափայլ այն ձին, որի առջևի ոտքերից յուրաքանչյուրի վրա յոթ կարմրավուն խալ կա։

* * *

Ով ասես, որ չի գալիս Բագավան։ Շատերը գալիս են միայն նրա համար, որպեսզի տեսնեն եպիսկոպոս Մովսեսին, լսեն նրա քաղցրաձայն աղոթքը։ Նրանց մեջ երբեմն պատահաբար հայտնվում են Մովսեսի հին ծանոթները։ Ամինտոսի Կոստանդնուպոլիս մեկնելու հաջորդ օրը Լուսավորչի տաճարում Մովսեսը հանդիպեց Ջաջուռին։

— Դու հիշո՞ւմ ես Կարինը,— հարցրեց Ջաջուռը։

— Իհարկե, հիշում եմ, ոչ ոք չի մոռանում իր դրած պատը։ Հիմա դու, աներկբա, զարմանում ես, որ պատ շարողը եպիսկոպոս է դարձել։

— Չէ, սրբազան հայր, չեմ զարմանում, դու ինձ համար չօծված եպիսկոպոս էիր այն ժամանակ, երբ հանգամանքների բերումով որմնադիր էիր դարձել։

Ջաջուռը պատմեց, որ ինքը վաղուց է դուրս եկել Կարինից և ապրում է Վանանդ գավառի Ոդմսու գյուղում։ Հետո մի նամակ հանձնեց Մովսեսին՝ ասելով.

— Սա նախկին հայրապետն է գրել, քո ընկեր Գյուտը։ Մահից առաջ է հանձնել ինձ։ Դա եղել է երկու տարի առաջ։ Չհասցրի ժամանակին բերել, իսկ ուրիշի ձեռքով ուղարկել չէի կարող։ Հանգուցյալը խստագույնս պատվիրել էր, որ անձամբ հանձնեմ քեզ։

Հուզմունքից Մովսեսի մատներն սկսեցին դողալ։ Գյուտի անունը լսելիս նա ուզում էր մի կուշտ լաց լինել։

Ջաջուռի հետ դուրս եկավ տաճարից ու սկսեց քայլել Բուն փողոցով։ Տուն հասավ միայնակ՝ չիմանալով, թե փողոցի որ մասում բաժանվեց Ջաջուռից։ Տուն մտնելիս մոռացավ բարձրացնել գլուխը և նայել կողքի դաստակերտի դստիկոնին, որտեղ անհամբեր շարժումներ կատարելով Մովսեսի օգային ողջույնին էր սպասում Կամարան։

Գյուտը նրան մոռացնել էր տվել ամեն ինչ։ Բացեց նամակն ու կարդաց։ Գյուտը գրում էր. «Ինձ քիչ ժամանակ է մնացել։ Ենիմաստ են Ոդմսուում ապրած տարիներս։ Մարդ պիտի մահանա այն ժամանակ, երբ իր կապերը կտրում է աշխարհից ու մարդկանցից։

Դու ճանաչո՞ւմ ես Ներսեհ, Վահան և Հրահատ Կամսարականներին։ Քաջարի այրեր են։ Սակայն նրանցից մեկը՝ Հրահատը չի սիրում և ամենուրեք ամբաստանում է քեզ։ Ինչ-որ մեկը նրան համոզել է, թե իբր դու հերձվածող ես, հեթանոս։ Նրան թվում է, թե քո պատճառով Բագավանը դարձել է հեթանոսական աշխարհի մի կոշտ պատառ, որը չի կարող կուլ տալ նույնիսկ Հիսուս Քրիստոսը, եթե նա ողջ լիներ։ Նա ասում է, թե իբր դու Լուսավորչի տաճարում Արամազդին ու Անահիտին ես պաշտում։ Բագավանը նորից հեթանոսանում է, ասում է Հրահատը։ Մովսեսը պինչը վեր է քաշում և ամենքին տգետ անվանում։ Ասպետ Սահակ Բագրատունին քո գրած «Հայոց պատմության» առաջին գիրքը ընթերցել է Հրահատ Կամսարականին։ Շիրակի տերը օրապակաս եղրակացություն է արել և ասել, թե դու գովում և աստվածացնում ես միայն մեր հեթանոս նախնիներին, թե իբր Գրիգոր Լուսավորչից հետո մեր մեծերը քո մատյանում փոքրություններ են դարձել։ Դու կարծում ես, թե այս ամենը գրում եմ նրա համար, որ դու ջանաս հակառակը համոզե՞լ մարդկանց կամ պայքարի մեջ մտնես նրանցից որևէ մեկի հետ։ Ընդհակառակը, մի ցուցանիր, թե բանի տեղ ես դնում Հրահատ Կամսարականի կարծիքը։

Ասելիքս այն է, Մովսես, որ դու շուտ ավարտես գործդ։ Գուցե քո գիրքը մարդկայնացնի մեր արյունակիցներին և հարյուր տարի հետո ինձ ու քեզ նման մարդիկ մոռացության չմատնվեն»։

Մովսեսն սկսեց ետ ու առաջ գնալ իր խցասենյակում ու մենախոսել.

— Մեծերն այրվում են, որ աշխարհը շողանա և մարդկանց հոգիները խոպան չմնան։ Դու քո կյանքով հրաբորբոք դարձրիր Հայոց աշխարհի արևը։ Հազար օրհնանք քեզ, այդ պայծառ։ Ինձ թվում է, Գյուտ, թե ես ապրում եմ քո փոխարեն։ Ես էլ եմ հասել արփողին։ Կամսարականի հետ ես վեճ չունեմ, թող խորհի, ինչպես կամենում է։ Եթե ես հանդիպեմ՝ կհամբուրեմ Կամսարականի ճակատը, որովհետև նա հայկաբար է կռվել Ներսեհապատի դաշտում։ Ափսոս, դու չտեսար այդ հաղթությունը։ Փուշտիպանան սաղար Ատրներսեհը պարտվեց։ Վահան Մամիկոնյանն ու Սահակ Բագրատունին հաղթեցին, Գյուտ։ Գոռոզ Պերոզը հիմա աղվեսի լեզու է բանեցնում և հաշտության եղրեր որոնում մեզ հետ։ Եթե դու ողջ լիներիր՝ համայն Հայոց աշխարհը քեզ մեծաշուք պատվով Ոդմսուից կուղեկցեր Դվին։ Քեզ չեն մոռանա, Գյուտ, որովհետև դու սրբերի շարքը կդաս-

վեստ։ Առանց քո անունը տալու ու քո ազատաբաղձ ոգին դրոշ դարձնելու այս ժողովուրդը երկար ճամփա կարել չի կարող։ Իսկ ինձ դո՛ւ գտար, Գյուտ, և իմ մատյանի համար մարդիկ պետք է քեզ շնորհակալություն հայտնեն։

* * *

Մրջնիկը էջմիածնի մայր տաճարի արեղայական խցում ապրել է վաթսուն տարի։ Տանտիրոջ տարեկան էր, երբ այստեղ եկավ։ Հիմա յոթանասունհինգի շեմին է և չարությունից դարձել է շողսիրտ։ Բարձրահասակ է, լղարիկ, ջվալի հնամաշ անկերի նմանվող այտերով։ Նա կարող էր թույն տալ Տաթևրական դաշտի ամենաթունոտ իժին։ Ատում էր բոլոր դիտուններին, հոգու խորքում հրճվում էր՝ հենց որ լուր էր ստանում որևէ ծանոթի մահվան մասին։ Ամեն անգամ քնելուց առաջ մտովի ոչնչացնում էր իրեն ճանաչող բոլոր մարդկանց։ Նոր կյանք սկսելու համար ճանաչողները խանգարում են նրան։ Շատ տարիներ առաջ փորձեց ոչնչացնել «Ողբ»-ի հեղինակ Մովսեսին, հետամուտ եղավ, նրա հետևից նույնիսկ Թանահատ հասավ, բայց բան չստացվեց։ Հետո ձևացրեց, թե ինքն անոխակալ հոգի ունի, երբ լսեց, որ նույն Մովսեսը դարձել է Բագրևանդի եպիսկոպոս։

Ոչ ոք չգիտեր, որ նա ձեռնաքաշ է։ Տաճարին տված նվերներից մի-մի բան է թոցրել, խնայել նաև իր ոռճիկը։ Հավաքել է աննկատ ու աննշմարելի, փաթաթել մի հին գառնենու մեջ և պահել իր խուց-կացարանի պատում։ Չէ, նա իր ոսկիները տուփի մեջ չէր պահի։ Տուփ կարող են ունենալ նաև գողերը։ Եթե մի բան պատահի՝ մարդիկ կասեն, որ Մրջնիկը գառան նման անմեղ է, դրա համար էլ իր պահուստը գառնենու մեջ է փաթաթել։

Յոթանասունհինգի շեմին էլ նրա ոսկիների թիվը կլորիկ դարձավ։ Ուղիղ հազար։ Դա ոչ շատ շատ է, ոչ էլ շատ քիչ է։ Անձնացույց էր և կարծում էր, թե մի օր եպիսկոպոս կդառնա։ Բայց, չնայած ոչ մի անգգույշ բան չարեց՝ աբեղայական աստիճանից վեր չբարձրացավ։ Նույնիսկ չհասցրեց ամուսնանալ և մնաց անզարմ։ Մի այրաթոռի հետ էլ չամուսնացավ։ Ամբողջ կյանքն ի նանիր է աշխատել ու չի հասել ոչնչի։

Օրերով խորհում է ու չի իմանում, թե ինչի վրա ծախսի իր հազար ոսկին։ Ամբողջ կյանքում դավել ու բամբասել է սրանների, հիմա ծերացած գամփռի պես ձայնը կորվել է։ Նույնիսկ

հարազատ կամ մտերիմ մարդ չուներ, որ ունեցածը կտակեր նրան։ Սկսեց մեղադրել իրեն կյանքը հիմարաբար անցկացնելու համար, բայց արդեն ուշ էր։ Հանկարծ նրա գլխում մի գաղափար շողաց։ Իսկ եթե այդ ոսկին ծախսի Հայքի ամենագիտուն մարդուն վարկաբեկելու համար։ Ինչ կարող ես անել, ոջիլը կեղտակոլոլ մարդուց է ծնվում։

Մրջնիկն իր մտաբեռում շարք կանգնեցրեց Հայքի բոլոր գիտուններին։ Բոլորից գիտունը մնաց դարձյալ նույն Մովսեսը։ Քառասուն տարի առաջ իմաստասերը Մրջնիկին ասել է. «Տգետի մեղից կաղնու արմատն էլ կշորանա»։ Այդպիսի հարված Մրջնիկը ոչ ոքից չի ստացել։ Մարդ կարող է մոռանալ հաղար բոսի կծած, բայց այդպիսի խայթոցը մոռանան անել չի կարող։

Գուցե այս Մովսեսի պատճառով է, որ ինքը մնաց աբեղա։ Իհարկե։ Այդ ինչպես է եղել, որ ինքը մինչև հիմա այդ մասին չի մտածել։ Չէ որ վերջին երկու հայրապետները՝ Գյուտն ու Հովհանը Մովսեսի ընկերներն ու համախոհներն են։ Թերևս նրանք Մովսեսի վրեժը ինձնից են լուծել։

Մի առավոտ Մրջնիկը մականը ձեռքն առավ ու Վաղարշապատից ճամփա ընկավ դեպի Դվին։ Դժվարաքայլ գնացքով կեսօրին հազիվ տեղ հասավ։ Տեղավորվեց մեծ շուկայի ասպանջատներից մեկում և մի արհեստավորի միջոցով ապսպրեց, որ իր մոտ գա զորական Մաշմաշը։

Զանցած կես ժամ Մրջնիկի մոտ եկավ ասպարակող դինվորը։ Նա կարմրաներիզ անդրավարտիք ուներ։ Այդպիսի անդրավարտիքներ են կրում Սահակ Բագրատունու բոլոր յոթանասուներկու հեծյալները։ Երիտասարդ զորականը ներս մտավ, ողջունեց Մրջնիկին ու ասաց.

— Ես քեզ չեմ ճանաչում։

— Դա վատ է, մարդս մարդ չի, եթե չի ճանաչում իր ազգականին։

— Ես քո ազգակա՞նն եմ։

— Այո։

— Զարմանալի է։

— Քո անունը Մաշմաշ է, հորդ անունը՝ Մժեժ, մորդ անունը՝ Սևծամ։

— Ճիշտ է։

— Դու ծնվել ես Վաղարշապատում, Պերոզի թագավորության առաջին տարում, Հայկա Արաց ամսի Միհր օրը։

— Այդ ամենը ստույգ է։

— Հայրդ մահից առաջ տառապում էր ականջացավով։

— Դա էլ ճիշտ է։

— Քրոջդ անունը Թիթեռնիկ է։ Նա ամուսնացել է կոշկակար Տասանի հետ։ Վաղարշապատում ոչ ոք չի կարող նրա պես կոշիկ կարել։ Եղբայրներդ են Վարդը, Շարան, Շոտոտը։

— Իսկապես ամեն ինչ ճիշտ ես ասում։

— Իսկ ես քո մորական տատի քրոջ տղան եմ։ Իրավ է, հեռու ենք իրարից, բայց ազգականը մնում է ազգական։

— Իսկ ինչո՞ւ այդ մասին հիմա ես ասում։

— Ժամանակ չունեի, իսկ հիմա հասել եմ սահմանին և վաղվա հանդեպ հույս չունեմ։ Մի՞թե դու չգիտես, թե ովքեր են իրենց կյանքի վերջին տարիներին որոնում հեռավոր ազգականներին։ Ես միայնակ եմ մնացել և չգիտեմ, թե իմ ունեցած հազար ոսկին ում տամ,— այս ասելով Մրջնիկը ետ տվեց գառնենու փաթթոցը և դեղին մետաղների շողքը խփեց Մաշմաշի աչքերին։— Այս բոլորը ես նվիրում եմ քեզ, բայց փոխարենը դու պիտի կատարես այն, ինչ կասեմ ես։

— Համաձայն եմ,— չկարողանալով թաքցնել իր ուրախությունը, անմիջապես արձագանքեց Մաշմաշը։

— Քանի՞ տարի է, որ դու զինվորագրվել ես Սահակ Բագրատունուն։

— Չորս։

— Ասպետը վստահո՞ւմ է քեզ։

— Նա վստահում է իր բոլոր յոթանասուներկու զինվորներին էլ։

— Բայց Ատատին ավելի շատ է վստահում, քան յոթանասուներկուսիդ միասին վերցրած։

— Դա ճշմարիտ է, բայց Ատատը ժամանակի մեծ մասը անցկացնում է Բագավանում։ Նա Դվին է գալիս այն ժամանակ, երբ իմաստասեր Մովսեսը նրան դրի առած մագաղաթներ է հանձնում։

— Ասպետ Սահակն ի՞նչ է անում այդ մագաղաթները։

— Ընթերցում է, հիանում, հրճվում, ապա տալիս է գրիչներին, որոնք սկսում են ընդօրինակել։

— Ատատն ամեն անգամ քանի՞ մագաղաթ է բերում Բագավանից։

— Չեմ հաշվել, չգիտեմ։

— Բայց մի՞թե աչքի չափով էլ չես կարող ասել, թե բերածն ինչքան է։

— Հավանաբար քառասուն կամ հիսուն մագաղաթ։ Հնարավոր է, որ մի քիչ ավելի կամ պակաս լինի։

— Դու պետք է Ատատի միանգամվա բերած մագաղաթների տրցակը լթողնես, որ ընկնի ասպետի ձեռքը։ Հը, կարո՞ղ ես ձեռքդ գցել այդպիսի մի տրցակ։

Մեղկ ու փողասեր Մաշմաշը առանց ուշացնելու պատասխանեց.

— Այո, կարող եմ։

— Կեցցե՛ս, դու ինձ դուր ես գալիս։

— Հետո այդ մագաղաթները պիտի բերեմ հանձնեմ քե՞զ։

— Ոչ։

— Իսկ ի՞նչ պիտի անեմ։

— Պիտի ծվեն-ծվեն անես ու կտորտանքները լցնես Նրասխի ջրերը։

— Միայն այդքա՞նը։

— Այո։

— Բայց չէ՞ որ դու չես տեսնի իմ արածը։

— Իմ փոխարեն ասուած կտեսնի։

— Ուզում ես ասել, որ վստահում ու հավատո՞ւմ ես ինձ։

— Այո, Մաշմաշ, եթե խաբես՝ ասուած քո տոհմանդամներից ոչ ոքի ողջ չի թողնի։

Մրջնիկը վերադարձավ Վաղարշապատ, իսկ Մաշմաշը վերցրեց հազար ոսկին և դարձավ հազարապատիկ ստոր, խարդախ ու խաբեբա։ Ցերեկները քնում էր, իսկ գիշերները աղվեսաքուն մտնում։

Մի գիշեր, երբ աղջամուղջը փաթաթվել էր Դվինին, Մաշմաշը մտավ ասպետի դաստակերտի այն հարկը, որտեղ սովորաբար ոչ մի զորական չէր մտնում։ Եթե բռնվի՝ կասի շփոթվել է, մտածում էր նա։ Հագել էր թաղիքե մաշիկներ, որոնք քստքստոց չեն հանում։ Նա մտավ դստիկոնը և գտավ Ատատի բերած նոր մագաղաթների տրցակը։ Վերցրեց ու պատրաստվեց դուրս գալ։ Իջավ մինչև երկրորդ հարկ։ Այստեղ արդեն դժվար էր։ Պահակ զորականները արթուն են և նրանց կողքով աննկատ անցնել չես կարող։ Նա ծոցից հանեց փոքրիկ պարանը ու կապեց պատշգամբից։ Գիտեր, որ պարանը մինչև գետին չի հասնում։ Ինչ արած, ներքև քիչ բան է մնում, կցատկի ու կիջնի։

Ամեն ինչ արեց զգուշորեն։ Գազանուկ դուրս եկավ դաստակերտից ու շտապեց դեպի Երասխի եղեգնուտները։ Հասավ առանց վշշոցի հոսող Երասխի ափը։ Բացեց մագաղաթների տրցակը և դանակը ձեռքն առավ։

Հանկարծ ձեռքն սկսեց դողալ։ Մտաբերեց տիկին Մագաղաթի խոսքերը. «Գիրք ոչնչացնողի ձեռքը աստված է կտրում»։ Այս ի՞նչ եմ անում։ Աստված չի ների ինձ։ Ասում են Մովսես-իմաստասերը սուրբ է ու նրա բոլոր գրածներն էլ սրբություններ են։ Չէ, ես չեմ կարող կտրտել սրանք, կզրկվեմ կյանքից ու հազար ոսկուց ոչ մի օգուտ չեմ ունենա։ Գուցե այս տրցակը ետ տանեմ ու դնեմ իր տեղը։ Չէ, կբռնվեմ, ետ տանելն ավելի դժվար է, քան գողանալը։ Մրջնիկն ինձ կրակի մեջ գցեց։ Ի՞նչ անեմ հիմա։ Ա՜յ քեզ աղգականի լավություն։ Այսպիսի լավությունը աստված մարդու քթից կհանի։ Իսկ եթե իր ոսկին ետ տամ։ Չէ, դա էլ բանի նման չի լինի, ամբողջ կյանքում աղքատ կմնամ։ Մարդ չպետք է քացի տա իր բախտին։ Իմ յոթ պորտն իր օրում հազար ոսկի չի տեսել։

Վերջապես Մաշմաշը որոշեց մագաղաթների տրցակը թաղել հողում։ Նա դանակով փոս փորեց, մագաղաթները լցրեց փոսի մեջ ու սկսեց ծածկել հողով։ Ապա դանակը շպրտեց Երասխի մեջ՝ կարծես թե դրանով մարդ էր սպանել։ Եվ դողունի քայլերով ետ դարձավ։

Հաջորդ առավոտյան, դեռ արևը գետնից չբարձրացած, աստեղի դաստակերտում աղմուկ բարձրացավ։ Գտան երկրորդ հարկի պատշգամբից կապված պարանը։

— Գող է մտել դաստակերտ,— ասացին ամենքը։

Անմիջապես հայտնի դարձավ, որ գողացել են Բագավանից ստացված մագաղաթների նոր տրցակը։

Սահակը զայրացավ և բոլոր զորականներին ոտքի կանգնեցրեց։ Նա համոզված էր, որ իր զորականներից մեկի մատը խառն է այդ գողությանը։ Զորաշար կազմեց ու սկսեց նայել բոլորի աչքերին։ Չէ, այստեղ սխալվել չի կարելի։

Սահակի հրամանով զորականները ցրվեցին։

Մարզպանը մտմտում էր, դաստակերտի մի հարկից մյուսն անցնում, բայց չէր կարողանում շփոթ կացությունից դուրս գալու ելք գտնել։ Հետո իմաց տվեց, որ կեսօրին բոլոր զորականները հավաքվեն նեստաձգարան-ստադիոնը։ Նա գիտեր իր հեծյալների յուրաքանչյուրի դիպուկության չափը։ Գողացողը կամ գողության մասնակիցը չի կարող նետն արձակել սովորականի պես։ Դողից ու հուզմունքից նա կվրիպի։

Սակայն կեսօրին զորաշար կազմեց յոթանասունմեկ հեծյալ։ Մաշմաշը չկար։ Ոչ ոք չէր տեսել, թե նա ինչպես է փախել։

— Ա՜խկ, նզո՜վք քեզ, վախկո՜տ ու դավաճա՜ն Մաշմաշ,— գարշանքով բացականչեց Սահակը։

Մինչ այդ ոչ ոք մարզպանին չէր տեսել այդքան բարկ ու խոհական դեմքով։

Հեծյալներն սպասում էին հրամանի։ Սահակը նշան տվեց։ Սկսվեց մի խելահեղ հետապնդում։ Ոտի տակ տվեցին Ոստան գավառի բոլոր կողմերը։ Զգտան։

* * *

Նրբին մի շամանդաղ հարսանեկան մետաքսե քողի պես ծածկել էր Բագավանի դեմքը։ Մովսեսն իր խցի պատուհանից նայում էր դուրս ու մտորում։ Մարդ չի կարող այս մեզի մեջ որոշել օրվա պահը։ Այդպես է և պատմիչի գործը։ Դու պարտավոր ես քո մտքի ուժով բարձրացնել մառախուղը և անցյալը տեսանելի դարձնել ընթերցողին։ Այլապես Բագնաց ավանը կշփոթվի Արտաշատի կամ Դվինի, Դվինն ու Արտաշատն էլ՝ Բագնաց ավանի հետ։ Աշխարհում ամենից շատ եղծվել է ժողովուրդների անցած ճանապարհի պատմությունը։ Բոլոր բախտորոշ հարցերը լուծել են մեզի մեջ։ Գազանասիրտ բռնակալները, փառատենչության բորով վարակված, ճակատամարտեր են տվել, անքանակ մարդկանց խոշտանգել ու կոտորել, որպեսզի իրենց անունն անմահ մնա։ Մի խաշնարած կարող էր գահ ու գահավորակի տիրանալ և հազար բերդ խորտակել։ Մի քանի հզորների կամքով ժողովուրդների պատմությունը դուրս է եկել իր հունից։ Պատմություն են ստեղծել պատմության մեջ մնալու համար։ Բոլոր պատմիչներն էլ եղել են իրենց մեկենասների խոսնակները։ Նրանցից շատերը չեն խորշել խարդավանքից, մեծարել են անփառունակ արքաներին ու իշխաններին, ճշմարտությունը եղծե՜լ, եղծե՜լ, եղծե՜լ։ Ինչքան առատաձեռն է եղել մեկենասը, այնքան շատ է կեղծվել պատմությունը։ Հավասարվել են իրար արժանավորն ու ապաշնորհը, աշխարհակուլ աշխարհակալն ու քերդակալ իշխանը։ Դե իշիր հիմա ան-

ցյալի խորխորատները և մեկնիր հնաբույր առեղծվածները։ Առանց բազրիքի դժվար է շարժվել պատմության բաղմահնար բավիղներով։ Բժժանքի մեջ կընկնես և արհավիրքը կխառնես խրախճանքի հետ։

Դժվարը միայն այն չէ, որ ակնավճիռ չէ հայոց պատմությունը։ Մենք անչատ չենք եղել բովանդակ աշխարհում, հարևանների հետ ենք ապրել, երբեմն ապավեն եղել նրանց և հազար հոգս ու ցավ ուսել համատեղ։ Բայց ինչ կարող ես անել, որ բրածեծ են արել նաև հայոց հետ առնչություն ունեցող ժողովուրդների պատմությունը։ Հաստափոր մատյանների մեջ հաղիվ ես հանդիպում մի քանի էջերի, որոնք կուռ ու անսխալ շարադրանք ունեն։ Արծվաթռիչ մտքի տեր հանճարների մեջ էլ են եղել նվաստ այրեր, որոնց շուրթերը կպել է իշխանավորների գարշապարին։ Ոչ ոք չի կարողացել առաքինաբար ավարտել անցավոր իր կյանքը։ Եթե մեկը հնարավորություն ունենա համադրել հին աշխարհի մասին ասված գրավոր ամեն բան, ապա սուտը ոտքի կելնի ստի դեմ։ Մեծ ստերը ճշմարտության դիմակի տակ անվախճան են դարձել։ Չես կարող մեր օրերից նետ արձակել դեպի անցյալի փքուն ստերը։ Նրանք անպարտ ու անեղեր են իրենց հեռավորությունից։

Իսկ ինչպես կվարվեմ ես, եթե ասված ինձ կարդի համայն պատմության դատավոր։ Ես կջնջեմ բոլոր նրանց անունները, ում հրամանով մարդ հն սպանել, նաև նրանց՝ ովքեր սպանել են։ Եվ պատերազմներում ցուցաբերած հերոսությունն ու քաջությունը չափանիշներ չեն լինի։ Մարդ սպանելը վայրագություն է, հետևապես վայրագ սովորություն է սպանողին հերոսացնելը։ Մարդը պիտի հերոսանա միայն բնության հետ մենամարտում։ Փակիր հեղհեղատի առաջը, եթե կարող ես՝ խափանիր երկրաշարժը, ամեն տեսակ փոթորկի դիմացող նավ պատրաստիր, շալակով ջուր կրիր ու անդաստան դարձրու խորշակահար անապատը, մաքրիր հողը, որ առը շուռ տալու ժամանակ խոփդ դեմ չառնի քարին։ Եվ միայն մեկին սիրիր։ Այս բաների համար ես դու աշխարհ եկել, մարդ։ Պատմությունն այլ չունի, գրի չի առել ոսկեհատիկ ցորենի շեղջ արարող ոչ մի շինականի անուն։ Մի՞թե կյանքի շարժման նյութը արկածն ու արհավիրքն է, կռիվն ու կոտորածը։ Մարդասպաններ են եղել նաև հին ասվածները, հետևապես նրանց հերոսությունն էլ է արյունոտված։ Կոստանդնուպոլսում որոշել են առանձին սրվակի

մեջ պահել Զենոն կայսեր գողը։ Ահա թե ինչքան անպատկառ կարող է լինել իշխանի ցանկությունը։

Չէ, ես, Մովսես իմաստասերս, դեմ եմ պատմությանը, դեմ եմ արիության չափ ու կշռին, մեծությունը որոշող նժարներին։ Միևնույն է, գալիքի բոց-ալավը կայրի մինչայժմյան հերոսությունները։ Ոչ արյունակցի, ոչ էլ օտարի սպանությունը չի մնա պատմության աղբ։ Մեծ զորավարները կգրկվեն իրենց բարձերից, որովհետև նրանք մեծ մարդասպաններ են եղել։

Կանգ առ, Մովսես, այդպես արագ քայլողը միշտ չէ, որ տեսնում է ամեն բան։ Չէ որ եղել են պաշտպանվողներ, չէ որ Հայկը չէր սպանի Բելին, եթե վերջինս վեր չկենար ու Սենաարից գար հասներ Վանա լճի ափ։ Մարդիկ կռվել են իրենց տուն ու տեղի, իրենց հող ու ջրի համար։ Քեզ վրա մի՛ վերցրու գալիքի դատը։ Մի՛ զինաթափիր պաշտպանվողներին։ Ընդհակառակը, կոփիր նրանց ոգին, որ անսասան մնան։ Եթե հայը զենքը սրած չպահի ու հրաժարվի իր հակառակորդին սպանելուց, ապա հակառակորդը կսպանի հային։ Այդպես է պատմության օրենքը, հատու զենք ունեցողն է հավերժության ճամփորդ դառնում։ Ցեխ մի՛ շպրտիր հերոսների վրա։ Նրանք ավելի սուրբ են, քան այն սրբերը, որոնք զենքի երես չեն տեսել։

* * *

Մամբրե Վերծանողը վաղուց է տնավորվել Վաղարշապատում։ Վերակացու էր կարգվել Էջմիածնի մայր տաճարի դիվանի վրա և թարգմանություններ էր անում հունարենից հայերեն։ Ջանում էր հոգս չպատճառել իր եղբորը։ Հազվադեպ էր գալիս Բագավան, Տարոն էլ այլևս չէր գնում։ Կինը՝ Սանդուխտը, շատ բեղուն դուրս եկավ։ Ամուսնությունից երկու տասնյակ տարի էլ չանցած Մամբրեն ու Սանդուխտը տասնչորս զավակ ունեցան՝ վեց աղջիկ, ութ տղա։ Մովսեսն առանց հարցնելու օգնում էր եղբորը։ Ատատը երբեմն Դվին դալուց՝ Վաղարշապատ էր մըտնում և Մամբրեին հանձնում եղբոր ուղարկած փողը։

Մի անգամ Ներգին գյուղից մի քանի օրով Բագավան եկած Աշխենը եղբորն ասաց.

— Դու ի՞նչ ես խելքդ տվել այդ Կամարային։ Երիտասարդ տարիներին, երբ վրան գեռ գույն կար՝ լքեց քեզ, հիմա ծերացել է ու եկել կպել։

— Աշխե՜ն, քույրի՜կս,— խեղճացած պատասխանում է Մովսեսը,— հին օրերի նման մի՛ խայթիր ինձ, տիկին Կամարան իմ միակ մխիթարությունն է։

— Քո մխիթարությունը պիտի լինեն քո հարազատները և ոչ թե տիկին Կամարան։ Եվ դու պետք է օգնես ոչ թե նրան, այլ եղբորդ, որը տասնչորս երեխա ունի։

— Դու կարծում ես, թե ես օգնում եմ Կամարայի՞ն։

— Այո։

— Ինչո՞վ։

— Իհարկե փողով։

— Աշխեն, նա աշխարհի ամենահարուստ կանանցից մեկն է։ Նա ոչ իմ, ոչ էլ որևէ մեկի օգնության կարիքը չի զգում։

— Ամենից շատ փողի կարիք են զգում փող ունեցողները։

— Դու սխալվո՞ւմ ես, Աշխեն, սխալվո՞ւմ ես, սխալվո՞ւմ ես։

— Եթե այդպես է՝ ինչո՞ւ չես համոզում Մամբրեին, որ նա Վաղարշապատից փոխադրվի Բագավան։

— Ինչո՞ւ փոխադրվի։

— Որպեսզի միասին լինեք և դու մոտիկից օգնես նրան։ Երկյուղում ես, որ դա կարող է դուր չգալ տիկին Կամարային, այնպես չէ՞։

— Դարձյալ սխալվում ես, Աշխեն, ես կխոսեմ Մամբրեի հետ, կփորձեմ համոզել, որ նա դա և ապրի ինձ հետ։ Դա հրաշալի կլինի։

Աշխենի մեկնելուց հետո Մովսեսն այս զրույցը շարունակեց Կամարայի հետ։

— Իսկ ինչպե՞ս պիտի հանդիպենք մենք,— հարցրեց Կամարան։— Չէ՞ որ նրանց ներկայությամբ դու չես կարող հանդիպել ինձ, ոչ էլ ես կարող եմ այցի գալ քեզ։ Մենք կկորցնենք այն, ինչ հիմա ունենք։

— Իսկ ի՞նչ կարելի է անել։ Ես քրոջս խոստացել եմ գլուխ բերել այդ գործը, որովհետև Մամբրեի համար Վաղարշապատում ապրելն իրոք դժվար է։

— Անապարել պետք չէ, հնար կգտնենք։ Աշխարհում ոչ մի անցք չկա, որտեղով չանցնի մարդկային միտքը։ Կարելի է այնպես անել, որ ինքը՝ Մամբրեն հրաժարվի Բագավան գալուց։

— Ինչպե՞ս։

— Բաղում գիտելիքների տեր շնորհալի այր է Մամբրեն։

Նրա կարիքն ամենից շատ հիմա պետք է զգա Հայրապետ Հովհանը։ Խոսիր Հովհանի հետ։ Թող հայրապետը Մամբրեին բերի Դվին և դիվանատան պետ կարգի։ Եղբայրդ Հովհանի համար կդառնա ամենավստահելի մարդը։ Ես քեզ փող կտամ, որով դու կգնես Դվինի արհեստավորաց տներից մեկը և կնվիրես Մամբրեին։

— Դա շատ շատ է։

— Շատ չէ, Մովսես, այդքան երեխաների փորը կարող են կշտացնել միայն արհեստավորաց տան եկամուտները։

— Այդ դեպքում ինքս պարտք կմնամ քեզ։

— Պարտք չես մնա, Մովսես։

— Դու իրավունք չունես տղաներիդ՝ Նոյին ու Եզրին պատկանող ոսկիները նվիրել ուրիշի։

— Նոյին ու Եզրին են պատկանում այն, ինչ թողել է նրանց Հայրը։ Իսկ ես քեզ եմ նվիրում հորս տվածը, այսինքն այն, ինչ սխալվել և ժամանակին չեմ տվել քեզ։ Այնպես որ ես վերադարձնում եմ քոնը։ Իսկ եթե Բագավանում բնակվելու ցանկություն հայտնի Աշխենը, ապա ինձ մոտ մնացած, բայց քեզ պատկանող գումարով ես տասը գյուղ կգնեմ Տարոնում և կնվիրեմ նրա ամուսին Առանձարին։

— Չէ, ինչ էլ պատահի՝ Առանձարը չի թողնի Ներգին գյուղը, այնպես որ քո մտահոգությունն ավելորդ է և պետք չէ, որ դու սնանկացնես քեզ մեր մտերմությունը մարդկանց աչքից հեռու պահելու համար։ Զարմանալի է, մարդ հաճախ ստիպված է լինում փախչել նաև իր հարազատից։

Կոստանդնուպոլսի շուկան ամեն տեսակ բարիքների համաշխարհային հավաքատեղի է։ Այստեղ են հանում Լիբիայի դղումը, Ամիդի լայնաբերան բահը, հնդկական կուզբի բաց շագանակագույն մորթին, Դվինում պատրաստված դեղդիրը, եռոտանի դրակալը, շիշը, մախաթը, գեղակոթ սակրը, ճրագի պատուլգը, այծենին, վահանակը, թմբուկը, չամիչը, Վեհաոտ գետի ափերից բերված նրբաթուլր սալաքարը, աթենական քնարը։

Հայքի այս ու այն կողմում գնած իր գեղմը այստեղ է բերում նաև Եզրը։ Հաճախ այնքան շատ է բերում, որ վաճառելու

համար ստիպված է լինում Կոստանդնուպոլսում մնալ մի քանի ամիս։ Մի փոքրիկ կուղպակ էր վարձել և բրդի պարկերը լցրել այնտեղ։ Օրվա մեջ մի քանի անգամ փակում էր կուղպակի դուռը, դուրս գալիս, շրջում շուկան, դիտում ուրիշ երկրների ապրանքը և ինքնագոհ վերադառնում իր տեղը։ Մոր՝ տիկին Կամարայի համար գնում էր ոսկյա, արծաթե ու սաթե ամեն տեսակ զարդ։

— Բավ է, տղաս, իմ ինչի՞ն է պետք այսքան զարդը,— հաճախ ասում էր մայրը։

— Դու պետք է ավելի շատ զարդ ունենաս, քան ամենահարուստ կայսրուհին,— պատասխանում էր Եզրը։— Աշխարհում ոչ մի բան այնքան ակնապարար չէ, որքան գեղանի կնոջ վրայի գեղեցիկ զարդը։

Կոստանդնուպոլսի շուկայում ոչ մի հայ հայի կարոտ չի զգում։ Այստեղ ամեն քայլափոխի կարող ես հայրենակցի հանդիպել։ Մի անգամ Եզրը նկատեց, որ մի երիտասարդ անցուդարձ է անում իր կուղպակի առջևով, բայց չի համարձակվում զրույցի բռնվել։

— Ողջո՞ւյն,— փորձեց զրույցի քաշել Եզրը։

Երիտասարդը կանգ առավ, մի պահ ուշադիր նայեց Եզրին ու արձագանքեց.

— Ողջո՞ւյն։

— Ես կռահում էի, որ դու հայ ես։

— Ես էլ էի կռահում,— ասաց անծանոթ երիտասարդը ու մոտեցավ Եզրին։

— Իմ անունը Եզր է, ես Բասենից եմ։

— Ես էլ Վաղարշապատից եմ։

— Դու չասացիր անունդ։

— Կոտակ։

— Թագավորական անուն ունես, բայց դու բարձրահասակ ես, ինչո՞ւ են քեզ Կոտակ կոչել։

— Ինձ հետո են այդպես կոչել, մինչ այդ ես ուրիշ անուն ունեի։

— Ինչ էլ լինի՝ մարդ չպետք է հրաժարվի իր առաջին անունից, դա համարյա նույնն է, ինչ որ մարդ ինքն իրենից հրաժարվի։

— Դու ասրավաճա՞ռ ես։

— Այո։

— Իսկ ես չգիտեմ էլ, թե ինչով զբաղվեմ։

— Բայց Վաղարշապատից ինչո՞ւ ես եկել այստեղ։

— Ինքս էլ չգիտեմ։

— Դու միտք չունե՞ս վերադառնալ տուն։

— Ոչ։

— Վաղարշապատում հարազատներ չունե՞ս։

— Ոչ։

— Բայց ինչո՞ւ ես ընկել Կոստանդնուպոլիս։

— Մի հույն վաճառական էր եկել Վաղարշապատ, օգնեցի, որ իր ապրանքները հասցնի այստեղ։ Հոյնը մահացավ, ես մնացի անգործ։

— Դու ջլապինդ մարդ ես երևում, եթե համաձայնես՝ ես կարող եմ գործ տալ քեզ։

— Ի՞նչ գործ։

— Կօգնես ինձ բրդի պարկերը տեղից տեղ փոխադրել։

Կոտակը համաձայնեց և ծառայության անցավ Եզրի մոտ։

Կոստանդնուպոլսում առևտուրը վերջացնելուց հետո Եզրը Կոտակի հետ վերադարձավ տուն։

Կոտակը ապշեց, երբ կառքը նրան հասցրեց Բագավան։ Դաստակերտում դեռ նոր էր տեղավորվել, երբ ծառաներից տեղեկացավ, որ կողքի շենքում ապրում է իմաստասեր Մովսեսը։ Ուշ քնեց, հետո ընկավ մշձավանջային երազների աշխարհը։ Տեսիլները փոխարինում էին միմյանց։ Մի քանի հրեշտակների ուղեկցությամբ նրան տանում էին աստծու մոտ։ Անցնում էին աստղալույս դահլիճներով։ Գոլ օդ էր փչում Կոտակի դեմքին։ Վերջապես կանգ առան մի մեծ դարպասի մոտ, որի առջև պահակ էր կանգնել շիկակարմիր մորուքով մի հսկա։ Դարպասը բացվեց և Կոտակն ընկավ քառամույթ մի գավիթ։ Հենց այստեղ, ոսկեքանդակ բազմականի վրա նստել էր յոթմորուքանի աստվածը։

— Դո՞ւ ես Կոտակը,— հարցրեց աստված։

— Այո։

— Իսկ Մաշմաշն ո՞վ է։

— Ես եմ։

— Դու խաբել ես Եզրին և քեզ անվանել Կոտակ։

— Նա էլ ինձ է խաբել։ Ասել է բասենցի է, իսկ ինձ բերել հասցրել է Բագավան։

— Նա ծնվել է Բասենի Դու գյուղում՝ հետևապես բասենցի

էր։ Իսկ Բագավան վիրջերս է փոխադրվել մոր ու եղբոր հետ։ Բայց ես չեմ քննում քո և Եզրի որտեղացի լինելը։ Դու գիտե՞ս, որ տեղ չունես ոչ գրախտում, ոչ դժոխքում։ Մնում է, որ քեզ գցենք ուխտանի ատրուշանի մեջ և մոխիրդ քամու թևերն տանք։

— Ինչո՞ւ։

— Անունդ փոխելու համար։

— Մի՞թե այդքան մեծ է իմ հանցանքը։

— Այո։ Չկա ավելի սոսկալի շարագործություն, քան սեփական անունն ու մայրենի լեզուն փոխելը։ Դու Մաշմաշ էիր՝ ինչո՞ւ գաղթար Կոստակ։

— Ասպետ Սահակն ընկել է իմ ետևից, նա ուզում է սպանել ինձ։ Ես եմ գողացել իմաստասեր Մովսեսի մագաղաթների հրցակը։

— Որտե՞ղ են հիմա այդ մագաղաթները։

— Ես չեմ կորցրել ու լցրել Երասխը, ինչպես հանձնարարել էր Մրջնիկը։ Մագաղաթները իրենց տեղում են՝ եղեգնուտների մեջ։

— Իսկ ի՞նչ ես արել հազար ոսկին։

— Տարել ու թաքցրել եմ Մասիսի լանջին։ Ծախսել եմ ընդամենը տասը, մնացածն այնտեղ է։

— Թաքցրած ոսկու համար ես չեմ պատժում։ Հազար ոսկու եղածը մի բան չէ։ Ուրիշ է մագաղաթների խնդիրը։ Դու հոգածածկ ես արել իմաստասերի հանճարեղ մտքերը։ Միտքն սպանելն ու մարդուն սպանելը նույնն է։

Աստծու գութը շարժելու համար Մաշմաշը ջանաց լացել՝ չկարողացավ։ Նա ակամա սկսեց բառաչել կովի նման։ Արթնացավ իր ձայնից և երազը կիսատ մնաց։ Նստեց անկողնու մեջ և փորձեց կարգավորել մտքերը։ Հիմա ինքը Եզրի գաստակերտում է։ Կողքի շենքում ապրում է եպիսկոպոս Մովսեսը՝ ասպետ Սահակի սիրելին։ Մաշմաշը գողացել է նրա գրքի էջերը։ Ի՞նչ անել։ Իսկ եթե առավոտյան իր դեմ ելնի Աստատը։ Աստծուց կարելի է ազատվել, բայց Աստատի ձեռքից փրկվել չես կարող։ Աստատը զորեղ բազուկներ ունի, կրունի ու կխեղդի առանց դատ ու դատաստանի։ Չէ, այս գաստակերտը վանդակ է, աններելի սխալ կանի, եթե մնա։ Քանի լույսը չի բացվել՝ պիտի շուտափույթ հեռանալ այստեղից։

Մաշմաշը հագնվեց, դուրս եկավ բակ ու նայեց ամպշող

երկնքին։ Լուսադեմի անդորը էր։ Աչ ու ձախ նայեց ու իրեն նետեց Բուն փողոցը։ Հետո սկսեց վազել։ Քիչ հետո գլխի ընկավ, որ վազել պետք չէ, որովհետև ոչ ոք չի հետևում իրեն։

***

Լսելով, թե ինչ է պատահել իր մագաղաթների գլխին՝ Մովսեսն ընկավ տրամադիր հույզերի աշխարհը։ Եթե Սահակ Բագրատունու պես զորավոր մի մարդ չի կարողանում իր ունեցածը պահել, ապա էլ ո՞վ պիտի ապահովագրի իրեն չարաբաստիկ պատահարներից։ Դե աչքի և աչքդ տնկիր, թե երբ պիտի ասա-վածաստաց ձեռքն իջնի անարգ մարդկանց գլխներին։ Սպասելու փոխարեն՝ ավելի լավ է շարունակել կյանքն ու շտկել։ Եվ Մովսեսն սկսեց սեպագիր օրինակից ընդօրինակել պակասող էջերը։ Բայց Մովսեսը սովորական գրիչ չէ, որ կարողանա թեկուզ իր գրածի պատճենը հանել հարազատորեն։ Արտագրելու ժամանակ սկսեց շատ բան փոխել։ Ապա հինն ու նորը համադրելով ինքն իրեն ասաց.

— Չկա չարիք առանց բարիքի։ Այս տարբերակը նախկինից լավ է։ Եթե մարդ կարողանար ամեն ինչ վերափոխել՝ աշխարհում կշատանար գեղեցիկը։

Բայց ինքն անզոր է հիմա արածը երկրորդելու։ Բազմազրաղ է, և ասպետ Սահակի պատվերն է կատարում, և թարգմանություններ անում։

Համարյա ամեն ամիս հայրապետ Հովհաննը հունարեն մանր թղթեր ու ճառեր է ուղարկում Մովսեսին՝ հայերեն թարգմանելու համար։ Չի կարող հրաժարվել, որովհետև եպիսկոպոս է։

Եպիսկոպոսի գործը միայն այն չէ, որ քրիստոնեական ոգով կրթի իր հոտը։ Նա պարտավոր է հունարենից ու ասորիներենից թարգմանել այն, ինչ վերաբերում է եկեղեցուն։ Հույն կրոնական գործիչները վերաձևում են Հիսուս Քրիստոսին ու նրա ուսմունքը հարմարեցնում իրենց գաղափարական ճախարակին։ Եվ մանվածքն ու կծիկը դառնում են ամբողջովին հունական, կամ որ նույնն է՝ բյուզանդական։ Հայկական դիմագիծը անաղարտ պահելու և բյուզանդական ասվածուսմունքին հակադրվելու համար ամենից առաջ պիտի թարգմանել հունարեն թղթերը։ Այդպես է արել նաև Մովսես եպիսկոպոսի նախորդը՝ Եզնիկ Կողբացին։ Այդպես են անում հիմա Հայքի մյուս եպիս-

Էրոպոսները։ Թարգմանելը քիչ է, դու պիտի տեսնես, թե դրանից ինչ վնաս կարող է կրել Հայոց եկեղեցին և այդ մասին իմաց տաս հայրապետին։ Դա միայն բանակռիվ չէ եկեղեցական հանդիպումների ու տարաբաղդությունների աննշան տարբերությունների համար։ Ճակատագիրը հային կանգնեցրել է անդունդի եզրին։ Բոլոր թշնամիներն էլ ուզում են հրել ու կործանել նրան։ Բյուզանդական եկեղեցին դա ուզում է անել ժպտերես։

Բայց Մովսեսը նաև անձկալի գործեր է թարգմանում։ Ամենից շատ թարգմանում է իրենից մի դար առաջ ապրած Գրիգոր Նազիանզացու ճառերը, թղթերն ու բանաստեղծությունները։ Այս Գրիգորն իմաստուն աստվածաբան է եղել, որի համար էլ կրել է Աստվածաբան մականունը։ Մովսեսը, որպես գնահատանքի արտահայտություն, ի բերան էր ուսել Աստվածաբանի շատ գործեր։ Անշուշտ ամեն թարգմանություն չէ, որ դուր է գալիս իրեն։ Մտադիր է նորից թարգմանելու Աստվածաբանի սքանչելի «Ողբ»-ը, որ նվիրված է Անտիոքի հայրապետ Մելիտոսի մահվան։ Չէր հասցնում։ Եղեսիայից ստացել է ճառերի մի ժողովածու, որի հեղինակն է Կյուրեղ Ալեքսանդրացին։ Մովսեսի ուսանելու տարիներին Կյուրեղն Ալեքսանդրիայի եպիսկոպոսն էր։ Մովսեսը հաճախ է զրույցի նստել նրա հետ։ Ե՞րբ պիտի թարգմանի այս գիրքը։ Կհասցնի՞։ Հետո պիտի վերանայել ուրիշների թարգմանությունները։ Մարդիկ կան, որոնք թարգմանում են այն, ինչ հասկանալի է իրենց, այդ պատճառով նրանք լուսաղրկում են թարգմանվող երկը, արևը լուսին դարձնում։

Թարգմանությունը նույն դաշտի երկրորդ բերքն է և պետք է այնպես անել, որ առաջինի համեմատությամբ նվազ լինի կորուստը։

Թարգմանում ենք, որպեսզի հոգու սով չզգանք և միայնակ չմնանք աշխարհում, որպեսզի սովորենք մեր բանավոր հանճարեղ խոսքը գրավորի վերածելու ձևերը։ Խաղողը խաղողին նայելով է սնանում։

Առանց թարգմանության կբորբոսնի նույնիսկ ամենահանճարեղ ազգության միտքը, մտածում է Մովսեսը։ Գուցե դրանով կորած չէր համարում թարգմանությանը նվիրաբերած իր տարիները։

Ինչքան էլ ջանում էր՝ արածն աչքին քիչ էր երևում, անելիքը՝ շատ։ Մտադիր էր ասպետ Սահակի պատվերը կատարելուց հետո մի մեծ ասք գրել Տիգրան Երվանդյանի մասին և ինքն

էլ թարգմաներ հունարեն։ Երևի չվիջի ոչ մի հույն քերթողի։ Եվ հետո, թող աշխարհը տեսնի, որ հանձին Տիգրան Երվանդյանի, հայերն էլ իրենց Աքիլլեսն են ունեցել։

Մի անգամ Կամարան ծանր զրույցի նստեց Մովսեսի հետ։

— Դու ե՞րբ պիտի ավարտես ասպետ Սահակի գործը,— հարցրեց տիկինը։

— Չգիտեմ,— փորձեց անորոշ պատասխան տալ Մովսեսը։

— Մի տարուց հետո կավարտե՞ս։

— Չգիտեմ։

— Հինգ տարո՞ւց։

— Չգիտեմ։

— Տասը տարո՞ւց։

— Չգիտեմ։

— Իսկ ես ուզում եմ, որ դու շուտ ավարտես։

— Չեմ կարող։

— Իսկ եթե կիսատ թողնե՞ս։

— Կամարա, դա արդեն դարձել է իմ հոգու պատվերը, ասենք՝ ասպետ Սահակից աղաչվեցի, իսկ ինչպես աղաչվեմ ինքս ինձնից։ Եվ հետո՝ չեմ հասկանում, ինչո՞ւ ես ուզում, որ ես կիսատ թողնեմ։

— Որովհետև ես եմ ուզում պատվեր տալ քեզ։

— Դո՞ւ։

— Այո, ես։

— Ի՞նչ պատվեր ես ուզում տալ։

— Ուզում եմ, որ գրես մեր սիրո պատմությունը։

— Այդ պատմության մեջ շատ է դառնությունը։ Հետո հաճելի չէ, որ ինքս ինձ հոմանի հանդես բերեմ, քեզ էլ՝ հոմանուհի։

— Սերը թույլ չէ, որի մեջ եղած կորնկանման բոլոր հունդերը միատեսակ քաղցրություն ունեն։ Բայց հիմա, այս տարիքում քեզ սիրում եմ այնպես, ինչպես տասնյոթ տարեկանում։ Ուզում եմ, որ դու գրես այդ մասին։

— Պետք չէ գրել այդ մասին, Կամարա։

— Ինչո՞ւ պետք չէ։

— Մենք ամեն ինչ տվել ենք մարդկանց ու աշխարհին։ Մեզ սեփականություն է մնացել միայն մեր սերը։ Դա մեր հոգու հարստությունն է, աշխարհն ու կյանքը սիրելու մեր ակնաղբյուրը։ Ինչու ես ուզում մերկապարանոց անել այն, իմաց տալ ամենքին։ Եվ հետո՝ մենք սիրում ենք ոչ նրա համար, որ գրի

առնվի այդ մասին։ Սերն ավելի քաղցր է, երբ գաղտնի է։ Հենց որ բոլորն իմացան, որ սիրում ենք միմյանց՝ մեր սիրո հմայքը կկորչի, մենք կկորցնենք իրար։

— Ինչո՞ւ պիտի կորցնենք իրար։

— Կասեն Բագրևանդի եպիսկոպոս Մովսեսը անվայելուչ կյանք է վարում, իգամոլ է, ցանկասեր, և հազար և։

* * *

Դարանաղի գավառի Թորդան ավանում գուսան Մհուբի մատները թուլացան միանգամից։ Մի ժամանակ այդ հրաշագործ մատները փանդիռին դիպչելուց շրջապատը լցնում էին գեղգեղող հնչյուններով։ Մերությունն աննկատ հաղթում էր պնդակազմ Մհուբին։ Հիմա նա ոչ փանդիռ կարող էր նվագել, ոչ էլ երգել։ Կարծես ցամաքում էին նաև կապտաժեռ աչքերը, վատ էր տեսնում։ Սկսեց հիշել հայրենի Գողթնը։ Հուշերի խորքերից վեր ելնելով հանապազօրյա մտապատկերում երևաց հեղաձեմ մայրը։ Լսում էր նրա հարազատ ձայնը.

— Վերցրու, տղաս, իմ աչքի լույսը քեզ եմ տալիս, թող ես կույր մնամ, միայն թե դու տեսնես աշխարհը։

Մհուբը այս ու այն գավառից դեղին կանթեղխոտի պատիճ է հավաքել, որի մեջ լցված խաշխաշանման հունդերը սրատես են դարձնում մարդուն։ Բայց չգիտես ինչու, կանթեղխոտն այլևս չի օգնում նրան։

Թորդանը շատ է հեռու Գողթնից։ Թե ոտքով քայլի՝ երկու ամսում հազիվ հասնի։ Հե՜յ ծննդավայր, ինչո՞ւ ես դու հավերապատիկ քաղցրանում մեռնող մարդու համար։ Գողթնի գուսանները մի գողտրիկ ասք են հյուսել այն մասին, թե նորից կվերածնվեն միայն այն մարդիկ, որոնք թաղվում են հայրենի հողում։

Անհրաժեշտ է տուն վերադառնալ օր առաջ, մտածեց Մհուբը։ Ճանապարհին կշրջանցի իշխանական բերդերը, որոնցից շատերի հյուրն է եղել հին-հին օրերում։ Ոչ ոք խնջույքի չի հրավիրում ուժասպառ եղած գուսանին։

Սակայն դեռ Դարանաղիից դուրս չեկած այսպես եղավ։ Թորդանում, Սուրբ խաչ վանքի կողքին, Սեպուհ լեռան արևելյան լանջին մի հին գերեզմանատուն կար, որտեղ թաղված էին նաև Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ Արշակունի թագավորը։

Հայկա յուրաքանչյուր ամսվա Զոպաբեր օրը մարդիկ հավաքվում էին այդ գերեզմանատանը և տոնախմբություն սարքում։ Այդ օրը գերեզմանատունը դառնում էր նաև շուկա։ Ամեն ոք վաճառում էր ինչ ուզում էր։

Ահեկան ամսի Զոպաբեր օրը Թորդանի գերեզմանատուն գնաց նաև Մհուբը։ Որպես հանդիսատես սկսեց դիտել, թե ինչպես են ուրախանում մարդիկ։ Մհուբին թվում էր, թե ինքն արդեն հրաժեշտ է տալիս աշխարհին, թե այս տոնախմբությունը իր կյանքի ավարտի անդրադարձն է։ Հանկարծ նրա աչքին ընկավ մի հին գիրք։ Վաճառողը երիտասարդ մարդ էր։ Մհուբը մոտեցավ նրան։

— Սա ի՞նչ գիրք է,— հարցրեց Մհուբը։

— Չգիտեմ։

— Ինչպե՞ս թե, դու չգիտես, ինչ ես վաճառում։

— Գինը քառասուն ոսկի է, իսկ գրքի անունը չգիտեմ։ Գիտեմ, որ հունարեն է, սա իմ ապուպապերից մեկի ձեռքն է ընկել մի քանի հարյուր տարի առաջ։ Հայրս էլ ասել է, որ սա քառասուն ոսկի արժե։

Մհուբը ձեռքն առավ գիրքը ու բացեց առաջին մագաղաթը, որի վրա գրված էր «Ալեքսանդր Մակեդոնացու էֆեմերիդները»։ Հաջորդ մագաղաթի վրա գրված էր. «Այս հիշատակարան քննիկոնը գրի է առել Ալեքսանդր Մակեդոնացու գերագույն դպիր, գրանիկ հնծելախմբի հրամանատար Էվմենը։ Նա մասնակցել է աստվածամերձ Ալեքսանդրի բոլոր արշավանքներին։ Նրա ձեռքի տակով են անցել արքայական հրամաններն ու հրովարտակները, արքունիքի պաշտոնական ողջ գրագրությունը»։

Մհուբն ընդամենը քառասուն ոսկի ուներ, որ հավաքել էր վերջին քառասուն տարում։ Ինքն էլ չգիտեր, թե ինչպես է հավաքել։ Մտածում էր, որ Գողթն հասնելուց պետք կգա իրեն։ Այնուամենայնիվ հոգու խորքում համոզված էր, որ ինքն այնքան չի ապրի, որպեսզի հասցնի ծախսել քառասուն ոսկին։ Չէ, այս ոսկին իրեն բոլորովին պետք չէ։ Մարդ ոսկու փոխարեն պիտի առողջություն տնտեսի։

Ավելի լավ է ունեցած փողը տա, գնի այս մատյանը և տանի ու նվիրի իմաստասեր Մովսեսին։ Սա պետք կգա նրան։ Գուցե Ալեքսանդր Մակեդոնացու էֆեմերիդներից միայն սա է պահպանվել։ Մովսեսը դա կասի անմիջապես։ Հնարավոր է, որ այս

գրքում մի այնպիսի բան կա, որ Մովսեսը որոնում է ու չի գտնում։

Մհուբը համոզում է ինքն իրեն, վճարում փողը և գնում մատյանը։ Հետո որոշում է հաջորդ օրը ճամփա ընկնել դեպի Բագդանդ, այնտեղից էլ՝ Դողթն։

Այդ գիշեր սկսեց թերթել մատյանը՝ իմանալու համար, թե ինչ է գրի առել Ալեքսանդր Մակեդոնացու գերագույն դպիր Էվմենը։ Մի էջի վրա կարդաց. «Ինչ արեցին շատակեր զինվորները»։ Այ քեզ բան, մտածեց Մհուբը, նույնիսկ շատակերների մասին են գրում։ Ու սկսեց կարդալ. «Մի անգամ Ալեքսանդր Մակեդոնացու մոտ եկավ նրա պատմիչ Կալիսթենեսը, որ Արիստոտելի աղգականն էր, և ասաց.

— Պետք է արձակել շատակեր զորականներին և տուն ուղարկել։ Նրանք մկների պես խժռում են բանակի պարենը։

— Կալիսթենես, արձակելու փոխարեն պետք է օգուտ քաղել նրանց շատակերությունից,— պատասխանեց Ալեքսանդրը։

— Տեր իմ, ի՞նչ օգուտ կարող ենք քաղել որկրամոլից։ Մեկը կա, անունը Մոմոս է, նրա որովայնը տեղավորվում է հիսուն զինվորի բաժին ճաշը։

— Արիստոտելի աղգական լինելդ չի փրկում քեզ, Կալիսթենես, դու բութ ես։

Այս զրույցից հետո Ալեքսանդրը հավաքեց հարյուր շատակեր զինվոր և նրանց ասաց.

— Գնացեք պարսից բանակ և դարձեք վարձու զորականներ։ Էվմենը իմաց կտա ձեզ, թե երբ լցնեք ձեր որկորը։

Իսոսի ճակատամարտից մի քանի օր առաջ Ալեքսանդրի հարյուր զորականները, որ ծառայության էին մտել Դարեհի բանակում, սկսեցին խժռել զորքի պարենը։ Պինարոս գետի ափին բանակած պարսկական զորամասերից մեկը սովի մատնվեց։ Չորս հազար զինվոր անձնատուր եղավ առանց կռվի։ Հենց այդտեղ էլ գերի ընկան Դարեհի մայրը, կինը, երկու դստերները, մանկահասակ տղան։

Ճակատամարտի հաղթական ավարտից հետո Ալեքսանդրը կանչեց Էվմենին և կարգադրեց.

— Տարեգրիր այսպես. «Ալեքսանդրի հարյուր շատակեր զինվորները սովամահ արեցին չորս հազար պարսիկի»։

Ա՜յ քեզ Ալեքսանդրի խելք, ինքն իրեն ասաց Մհուբը։ Սրա ճիշտ ու սխալ լինելը միայն Մովսեսը կիմանա։

Հետո շուռ է տալիս մի քանի թերթ ու կարդում. «Հնդկաստանում մի արշավանքի ժամանակ Ալեքսանդրի բանակը կանգ է առնում մեծ ճանապարհին։ Հույն զինվորները մի կառք են գրավում, պոկում են ծածկոցը և տեսնում մի շնաշխարհիկ կնոջ։ Հույներին թվում էր, թե սա ոչ թե սովորական կին է, այլ՝ ոսկեծղի աստվածուհի։ Նրանք հրապուրվում են գեղեցկուհի կնոջով, կանգ առնում և սպասում Ալեքսանդրին։ Վերջամասից Ալեքսանդրը հասնում է կառքի մոտ, դառն ժպտում և դիմում կնոջը.

— Ի՞նչ է քո անունը։

— Ագնի,— պատասխանում է հնդկուհին։

— Ո՞վ ես դու, աստվածային անունով և աստվածային խելքով կին։

— Ես Նանանարա քաղաքի թագուհին եմ։

— Դու այստեղ հասար և զբաղեցրիր իմ զինվորներին քո ճաճանչագեղ գեղեցկությամբ։ Իմ բանակը պետք է Նանանարան գրավեր սրընթաց գրոհով, հիմա չի կարող, որովհետև քո զինվորները հասցրին փակել բոլոր դարպասները և հոգ տանել պաշտպանելու քաղաքը։

— Ճիշտ է։

— Դու հաղթեցիր իմ բանակին, բայց ոչ ինձ։

— Այո, ես հիմա հասկացա, որ քեզ հաղթելը համարյա անկարելի է։

— Ինչպե՞ս հասկացար։

— Դու շատ արագ կռահեցիր իմ մտադրությունը, մինչդեռ մի քանի ժամ է, ինչ քո զինվորները բերանները բաց ինձ են նայում՝ չմտածելով, թե ես ինչու պիտի հենց այնպես գայի ու կանգ առնեի այստեղ։

— Ես չեմ պաշարի քո քաղաքը, իսկ քեզ աղաչ եմ արձակում։

— Ինչո՞ւ։

— Որովհետև ինձ համար հերոսուհի է այն կինը, ով իր գեղեցկությունը զոհաբերում է հայրենիքի ազատության համար,— պատասխանեց Ալեքսանդրը»։

Մի քանի օր անց Մհուբը հասավ Բագավան։ Ողջագուրանքից հետո գուսանը Մովսեսին մեկնեց իր գնած մատյանն ու ասաց.

— Սա նվիրում եմ քեզ, համոզված եմ, որ քեզ շատ է պետք։

Մովսեսը շուռումուռ տվեց գիրքը և զարմացած բացականչեց.

— Դու գիտե՞ս սա ինչ գանձ է, Մհուբ։ Այս հիշատակարան-քննիկոնը գրվել է ութ հարյուր տարի առաջ։ Հետո հայտնի չէ, թե որտեղ է կորել, բայց հույներն ահա ութ հարյուր տարի է, ինչ փնտրում են սա։ Պտղոմեոս Լագոսը հարյուր ձիաբեռ ոսկի կտար այս մատյանի դիմաց։ Դու ի՞նչ ես տվել սրան, Մհուբ։

— Ոչինչ էլ չեմ տվել, Մովսես, դա իմ վերջին նվագի վարձն է։

— Եվ որտե՞ղ ստացար սա։

— Թորգանում։

— Հիմա՞ էլ այնտեղ Զոպաբեր օրերին տոնախմբություն է լինում Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Արշակունու գերեզմանների մոտ։

— Այո, Մովսես, լինում է։ Այդ տոնախմբությունը եղել է այն ժամանակ, երբ մեր նախնիք հեթանոս են եղել, կա հիմա, երբ մենք քրիստոնյա ենք, կլինի և այն ժամանակ, երբ մենք ոչ հեթանոս կլինենք, ոչ քրիստոնյա։

— Հիմա ո՞ւր ես գնում։

— Գողթն։

— Դու շատ հոգնած ես երևում, մի քանի օր մնա այստեղ, հանգիստ կառնես, հետո կշարունակես ճամփադ։

— Չէ, Մովսես, գնամ, ճամփան ճամփորդին է սպասում։

— Մնա՝ ասում եմ։ Դու կհանդիպես մեկին ու կզարմանաս։

— Հիմա ոչ մի բան չի զարմացնում ինձ։

— Տիկին Կամարան կզարմացնի քեզ։

— Կամարա՞ն։

— Այո։

— Նա այստե՞ղ է։

— Այո,— ասաց Մովսեսն ու պատմեց, թե Կամարան երբ է Դուից փոխադրվել Բագավան։

— Տեսնում ես, Մովսես, ես սխալվել եմ, հավանաբար ոչ մի սեր էլ չի մոռացվում։

***

Բագավանից Դվին գալիս Ատատը հարավից շրջանցում է Փոքր Մասիսը, հրապուրվում Մասյացոտն գավառի ծաղկափթիթ դարավանդներով և նոր մոտենում Տափերական դաշտին։ Հազար խայծ ու հրապույր ունի Երասխի աջակողմը։ Աշխարհում չկա ավելի գրավիչ բան, քան Մասիսի լեռնալանջի ստվերները։ Ատատը երբեմն կանգ էր առնում ու հմայված դիտում այդ ստվերները, որոնք այնքան զարմանահրաշ էին։ Ատատին թվում էր, թե դրանք քնած հսկաներ են և ուր որ է՝ պիտի արթնանան։

Տափերական դաշտը լեռնալանջին ձուլվում է աննկատ։ Չես կարող ասել, թե որտեղ է վերջանում դաշտը և որտեղ սկսվում Մասիսը։ Լեռնալանջը դաշտի հետ կապող բոլոր կածանները ծանոթ են Ատատին։ Նա նկատում է նույնիսկ ճամփեզրի տեղաշարժված քարը։

Գարնանային այդ օրը Ատատը հեռվից մի անցորդ նկատեց ճանապարհի վրա։ Քայլվածքը ոչ շինականի էր նման, ոչ արհեստավորի, ոչ էլ գուսանի։ Տեսնելով, որ ձիավոր է գալիս՝ անցորդը դուրս եկավ ճանապարհից ու անցավ փոքրիկ ժայռի հետև։ Դա դուր չեկավ Ատատին։ Նա կանգնեց ու սկսեց խորհել։ Սա եթե վախկոտ լիներ միայնակ դուրս չէր գա մեծ ճանապարհի վրա։ Փորձված ավազակն էլ ցերեկով ճամփա չի գնա։ Հավանաբար հանցագործ է, որ թաքնվում է ավազակներից և սովորական ազնիվ մարդկանցից։ Իսկ ինչպե՞ս իմանալ՝ անկեղծ է, թե զինված։ Ատատը ձախ թևին քաշեց վահանը և չափ դցեց իր նժույգը։ Եթե թաքնվածը նետ արձակի, ապա, միևնույն է, վահանին կկպչի։ Սակայն Ատատի նժույգն այնպիսի սլացք ուներ, որ նետն էլ նրա հետևից չէր հասնի։

Անցավ փոքրիկ ժայռի մոտից, կտրեց ևս կես հրասախի չափ ճամփա, նորից կանգ առավ ու ինքն իրեն ասաց.

— Ես պետք է իմանամ, թե ով է սա, մինչև հիմա ինձ տեսնելուց ոչ ոք չի թեքել իր ճամփան։

Ատատն իջավ, նժույգը կապեց փոքրիկ կիրճի մի ծառաբնի, և ինքն սկսեց սողալ լեռնալանջն ի վեր։ Նրա աչքի առջև թռչունների վիմասույզ մի երամ պոկվեց գետնից ու երկինք թռավ։ Ատատը հասավ մի ծերպի, հարմարվեց ու սկսեց դիտել դեպի ներքև։ Անծանոթ մարդը դուրս էր եկել ժայռի հետևից և անվստահ քայլքով շարունակում էր իր ճամփան։ Կամաց-կամաց

նա մոտենում էր Ատատին։ Հենց որ հավասարվեց՝ Ատատը մի ոստյունով տնկվեց նրա առաջ։ Անծանոթը փորձեց փախչել, բայց ուշ էր, նրա դեմ կանգնած էր սպառազեն Ատատը։

— Ո՞վ ես,— հարցրեց Ատատը։

Հավանաբար ահից անծանոթը չկարողացավ պատասխանել և սկսեց կմկմալ։

— Ինչո՞ւ ես սնգուրել դեմքդ, ո՞ւմից ես փախչում,— սպառնագին խոսեց ասպետ Սահակի կապարճակիրը։

— Ես մի խեղճ շինական եմ,— շողոմ լեզվով ասաց անծանոթը։— Մեր գյուղը Կնքաձորն է, Փոքր Մասիսից հարավ, Արտազ գավառի եղրին։ Այսպիսի տարի Կնքաձորը չէր տեսել։ Անսովոր երաշտի պատճառով մեր դաշտերը լցվեց նեպուկով։ Մեր արտերը չորացան, ձմռանը սով կլինի, հիմա էլ ուտելու բան չկա գյուղում։ Ես Դվին եմ գնում, գուցե արհեստավորաց տներից մեկում գործ գտնեմ։

— Իսկ դեմքիդ ներկն ի՞նչ է։

— Սա ծարիր է։ Ասում են՝ ծարիրը արագորեն է բուժում մորեխների՝ նեպուկների խայթած տեղերը։

— Մինչև հիմա կարծում էի, թե ծարիրը նրա համար է, որ կանայք ներկեն իրենց մազերն ու թարթիչները։ Ամենևին չէի մտածում, թե այրը կարող է ծարիրով այլափոխել իր դեմքը։ Դու շիտակ մարդ չես երևում, շարունակիր ճամփադ,— ասաց Ատատը, ազատ արձակեց անծանոթին և քայլեց դեպի իր նժույգը։

Հասավ նժույգին ու տեսավ, որ թամբի վրա թառել է երկարափետուր մի արտույտ։ Հիշեց մանկության տարիներին լսած խոսքը՝ «թե թամբիդ արտույտ թառեց՝ գիտցիր, որ տարին այդ ցորենաբեր կլինի»։ Այ քեզ բան։ Անծանոթն ասաց, թե Կնքաձորում երաշտ է, իսկ արտույտն ուրիշ նշան է ցուցանում։ Բայց այսքան գնում-գալիս եմ, ինչու այս տարվա երաշտի ու նեպուկի մասին բան չլսեցի ուրիշից։ Չէ, անծանոթը խաբեց ինձ։ Երբեմն տհաճ մարդուն հանդիպելը համարյա նույնն է, ոնց թշնամուդ հանդիպես։ Ատատը մի սովորություն ուներ՝ իրեն տանջող անհաճո զգացումներից ազատվելու համար՝ սկսում է մտովի զրուցել Թեժի հետ։ Սովածավալ քնքշանք ունի Գադիշոյի դուստրը։ Հաճախ նա կրծքին է սեղմում Ատատի գլուխը և ասում. «Աշխարհում ամենաքաղցր բլիթը սերն է, որից մի անգամ կծողը հարբում է, մեղմանում, քնքշանում, նրբանում։ Աշխարհը

իսկական դրախտ կդառնար միայն այն ժամանակ, եթե բոլոր մարդիկ ուշքի չգային սիրո արբեցումից»։

Ատատը վերապրում էր, կրկնում ու կրկնում։ Այդպես էլ նա մտովի իր գլուխը չհանեց Թեժի գրկից մինչև հասավ Դվին։

Հին դղյակի դարպասի առջև Ատատը հանդիպեց վարաղաորսից վերադարձող մարզպանին։

— Ողջույն, տեր Սահակ,— ասաց կապարճակիրը։

— Ողջ լեր, Ատատ,— արձագանքեց մարզպանը։

— Որսդ այսօր հաջողակ է եղել, տեր իմ։

— Իմ նետից ոչ մի երե ազատվել չի կարող։ Սա էլ մագաղաթագող Մաշմաշը չէ, որ ձեռքներիցս բաց թողնենք։ Հիմա էլ ասում են գավառից գավառ է անցնում երեսը ծարիր քսած։

— Ի՞նչ,— կայծակնահարի նման ճչաց Ատատը։

— Ինչո՞ւ այդքան զարմացար,— հարցրեց Սահակը։

— Տեր իմ, երկու ժամ առաջ ես նրան բաց թողեցի իմ ձեռքից։

— Ո՞ւմ բաց թողեցիր։

— Մաշմաշին,— պատասխանեց Ատատը ու պատմեց ճանապարհին տեղի ունեցած պատահարի մասին։— Թույլ տուր ետ դառնալ ու որոնել,— վերջացնելով իր խոսքը ասաց Ատատը։

— Հիմա նրան չես գտնի։

— Ինչո՞ւ։

— Նա ճանաչել է քեզ ու ծլկել։

— Ափսոս, ոնց պուկ եկավ իմ ձեռքից։

— Շա՞տ է աղավաղել իր դեմքը։

— Այո, տեր իմ, ես նրան բոլորովին չճանաչեցի։

— Ոչինչ, երբ էլ լինի՝ մենք կբռնենք նրան,— ասաց Սահակն ու ավելացրեց,— իսկ հիմա գնա և հանգիստ առ, հետո կնստենք ու խորոված կուտենք։ Վաղն էլ պիտի մեկնես Շիրակ, նամակ պիտի տանես օրիորդ Վանադուխտին։

Դղյակի բակում մարզպանն իջավ ձիուց ու գրկեց ժպտացող մորը։

— Մայր իմ, Ատատը գլխացավ ունի, փոխինձ տուր նրան, փոխինձը մեղմում է գլխացավը,— ասաց ասպետը ու քայլերն ուղղեց դեպի իր սենյակը։

Ներսեհապատի հաղթությունից հետո Սահակը մտադիր էր հարսանիք անել, բայց հայրապետ Հովհանն ասաց.

— Սահակ, քո ցանկությունն արդար է։ Ամուսնությունը երեք

բարիք ունի՝ հավատարմություն, միաբանություն և սերունդ։ Դու ուշացրել ես։ Հիմա էլ ժամը ժամ չէ։ Համբերիր մի քիչ։ Ամեն աչքը գոց մարդ չէ, որ քնած է։ Ինձ թվում է, թե Պերոզն աղվեսաքուն է մտել։ Դա լավ նշան չէ։ Սա փոթորկաբեր լռություն է, մարդպան, հիմա հարսանիքի ժամանակ չէ։

Ի՞նչ անել, մտածում էր Սահակը։ Վանագուխտը շատ սպասեց։ Իսկ եթե հուսահատվի՞։ Մի քանի օր առաջ մտքերի մեջ խորասուզվեց եղավ ու որոշեց Դպրևան գնալու փոխարեն, դպիր Ղազար Փարպեցու նման մի զրույց հորինել և ուղարկել Կամսարական օրիորդին։ Թող Վանագուխտն իմանա, որ Սահակը նաև իմաստասեր է և քերթվածը խորթ չէ նրա հոգուն։

❁ * ❁

— Ողջույն, սրբազան հայր։

— Ողջ, լեր որդյակ։

— Իմ անունը Օտա է։

— Դա հավաստում է, որ դու Ամատունի ես։

— Այո, սրբազան հայր։ Ես Արագածոտն գավառի Օշական գյուղի եկեղեցու աբեղան եմ։

— Իսկ ինչպե՞ս ես ընկել Բագավան։

— Ինձ այստեղ է ուղարկել ասպետ Սահակ Բագրատունին, մարդպանը։ Կես տարի առաջ նա պատվիրել է ինձ տեղեկություններ հավաքել Ամատունի տոհմածառի մասին և հայտնել բիզ։

— Այո, ես ինքս եմ խնդրել ասպետ Սահակին։ Իսկ ո՞ւր են բերածդ թղթերը։

— Դե, ես ոչ մի թուղթ էլ չեմ բերել։

— Ինչպե՞ս թե։

— Հոգ մի անի, սրբազան հայր, իմ պատմելիքը ես գիտեմ ի բերան, ինչ կուզես՝ հարցրու։

— Հայքում կա չորս հարյուրից ավելի մեծ ու փոքր նախարարական տոհմ։ Դրանցից ավագները երեք հազար, կրտսերները՝ հարյուր տարեկան են։ Նախարարական յուրաքանչյուր տուն ունի իր անձնանունները։ Այդ հնավանդ սովորությունը դարձել է օրինաչափություն։ Սմբատը Բագրատունյաց անուն է, Մուշեղը՝ Մամիկոնյան, Մեհրուժանը՝ Արծրունյաց, Հրահատը՝ Կամսարական, Քաջաջը՝ Ամատունյաց։ Մառը ծառ է իր ճյուղերով, նախարարական տոհմածառի ճյուղերն էլ այդ անուններն են։ Արժանապատվության չափանիշ է տոհմական անունները երկարակյաց դարձնելը։ Վերջերս տոհմերն սկսել են բարեկամանալ և միմյանցից անուններ փոխառնել։ Կամաց-կամաց բոլոր անունները դառնում են համահայկական։ Հիմա ասա՝ Օշականում քանի՞ մարդ կա Օտա անունով։

— Սրբազան հայր, ոչ Օշականում, ոչ էլ համայն Արագածոտն գավառում, ինչպես և մեր բնօրրան Արտազում ինձնից բացի Օտա անունով ուրիշ այր չկա։

— Իսկ Ամատունի տոհմում քանի՞ այր է եղել Օտա անունով։

— Հարյուր քսանյոթ։ Նրանցից քսանմեկը եղել է ավագ նախարար, քառասունյոթը՝ սեպուհ, մնացածը՝ ազատներ։ Այդքան Օտաներից Հայոց աշխարհի հազարապետ են եղել երկուսը։

— Երկո՞ւսը թե մեկը։

— Երկուսը։ Նրանք ապրել են Տրդատ արքայի և Գրիգոր Լուսավորչի ժամանակներում։

— Գուցե դու շփոթում ես, Օտա։

— Չեմ շփոթում, սրբազան հայր։ Նրանցից մեկին անվանում էին Կունդ Օտա, մյուսին՝ Երկարաքիթ Օտա։ Կունդ Օտայի ժամանակ Հռոմից Վաղարշապատ հասան քրիստոնեության քարոզչուհիները։ Քրիստոնյա կույսերի մեջ ամենագեղեցիկը Հռիփսիմեն էր, որին էլ ուզում էր կնության առնել Հայոց արքա Տրդատը։ Կույսը համառում է և դատապարտվում մահվան։ Տրդատը քաջ այր էր և զարմանում է, թե ոնց հրամայեց սուր բարձրացնել կանանց վրա։ Այդ մտքերից խոցված նա հիվանդանում է գայլախտով։ Մինչ այդ Գրիգոր Լուսավորիչը կշտամբել էր Տրդատին անմեղ կույսերի արյունը թափելու համար։ Արքան զայրացել էր և Գրիգորին բանտել Խորվիրապում։ Տրդատի քույր Խոսրովիդուխտը, որ մի օրինավոր համեստ կույս էր և լուներ բոլորովին անդուռն բերան, ուրիշ կանանց նման, դառնում է Կունդ Օտայի համախոհը և ամեն օր ջուր ու մի նկանակ է հասցնում ցամաք վիրապի մեջ գտնվող Գրիգորին։ Այս Օտան է, որ Տրդատի հրամանով Խոսրովիդուխտի հետ գնում և Խորվիրապից հանում է Գրիգորին, որը գալիս և գայլախտությունից ազատում է Տրդատին։ Մինչև հիմա էլ Օշականի Ամատունյաց հին ամրոցում պահվում է այն պարանը, որով Օտան ու Խոսրովիդուխտը Գրիգոր Լուսավորիչին հանել են Խորվիրապից։

Օտայի մահից հետո Տրդատը Հայքի հազարապետ է նշանակում նրա որդուն, որի անունը նույնպես Օտա էր։ Երկար քթի պատճառով սրան կնքում են Երկարաքիթ մականունը։ Սա էլ հավատարմությամբ է ծառայում արքային։ Ասում են Երկարաքիթ Օտան ուրկանոց[1] է բացել Արմավիրում։ Հետո Սլկունյաց ցեղի նահապետ Սղուկը Պարսից Շապուհ թագավորի դրդմամբ սպանում է Երկարաքիթ Օտային, որն արդեն ծերունի էր։

— Ինձ թվում է, թե Կոնդ Օտան և Երկարաքիթ Օտան նույն մարդն է։

— Բայց Օշականում մինչև հիմա էլ մնում են երկուսի շիրմաքարերը։

— Ողջերը հաճախ չափազանցնում են նախնյաց գործերը։ Մի Օտան կարող է երկու դառնալ թեկուզ հենց նրա համար, որ Ամատունիներն ասեն, թե միայն Օտա անունով իրենք երկու հազարապետ են ունեցել։

Մովսեսը երկար զրուցեց աբեղա Օտայի հետ։ Պատմությունների կծիկը ետ էին տալիս, կծկում ու նորից ետ տալիս։

Իմաստասերը հասկանում էր, որ շատ բաներ մնում են անորոշ, որովհետև ստույգ ժամանակագրություն չկա։ Իրար են խառնվել ոչ միայն հարևան տասնամյակները, այլև հարևան դարերն ու հազարամյակները։ Այլազան տոմարների պատճառով խառնվել են ժամանակի շերտերի եզրագծերը։ Պատմություն գրելն առանց ժամանակագրության նույնն է, թե աչքերդ փակած անցնես դարձդարձիկ արահետները։ Քանի գիշերակալ ջահ է պետք հին-հին դարերի խավարը ետ տալու համար։ Մարդիկ խառնափնթոր են դարձրել ոչ միայն աշխարհի գործերը, այլև ժամանակի հաշվումները։ Ով հասցրել է՝ բզկտել է ժամանակը։ Աշխարհակալները, մեծ արքաները, արքայիկները, նույնիսկ բազում իշխաններ ժամանակի սկիզբ են համարել իրենց։ Աշխարհում կա այնքան տոմար, ինչքան թագավոր է եղել։

Մարդը չի կարող խոտորել ժամանակը, նա կարող է խճճվել միայն իր հաշվումների մեջ։ Կոստանդնուպոլսի հիմնադիր Կոստանդիանոսը իր քաղաքը կոչեց Նոր Հռոմ։ Համեստ մարդ էր, չուզեց իր անունն անմահացնել։ Բայց աշխարհը քաղաքն անվանեց Կոստանդնուպոլիս։ Կոստանդիանոսը հավատարիմ մի մարդ ուներ Լիկիանոս անունով։ Կայսրը, գիտեր, որ Լիկիանոսը

[1] Ուրկանոց — հիվանդանոց բորոտների համար։

աթոռասեր է, փառատենչ։ Բայց փորձելու համար երկրորդական դահի արժանացրեց և նշանակեց Արևելքի թագավոր։ Լիկիանոսը չփոխվեց, մնաց նույնը։ Ինչպես անկարելի է փոխել ինձի[1] խայտուցը և եթովպացու թխությունը, այդպես էլ անկարելի է փոխել ամբարիշտ մարդու բարքը։ Լիկիանոսը առհասարակ բազմատեսակ չարիքներ հասցրեց իր իշխանության տակ եղողներին։ Այս ցանկասեր և գարշելի ալևորը, որ ներկում էր մազերը և իր կնոջը մեծ նեղություն պատճառում, սիրահարվեց երանելի Գլափյուռային, որի պատճառով սպանեց պոնտական Ամասիայի եպիսկոպոս սուրբ Բասիլիոսին։ Լիկիանոսը իր իշխանության սահմաններում պատրաստել տվեց հուշասյուներ, որոնց վրա գրել տվեց իր անունով տոմարի թվերը։ Այդ տոմարով նա իրեն երիտասարդացրեց տասնչորս տարով, նշանավոր անցուդարձերը հարմարեցրեց իր թագավորության տարեթվերին։ Կոստանդիանոսն իմացավ այս դավի մասին և զրկեց նրան իշխանությունից։ Լիկիանոսը վաղուց է հրաժեշտ տվել աշխարհին, բայց այդ պիղծ մարդու արածի հետքերը չեն ջնջվել աշխարհից։ Մի քանի տարի առաջ Ամասիայի մոտ պեղել-հանել են Լիկիանոսի հուշասյուներից մեկը։ Նրա վրա եղած տոմարական հաշվումները շփոթության մեջ են գցել բյուզանդական իմաստասերներին։

Բագավանից տասնհինգ հրասախ դեպի արևմուտք Խատուտիկ բերդն էր։ Աբեղա Արձանը պնդում էր, թե ինքն այնտեղ հին գրքեր է տեսել։ Մովսեսը գնաց բերդապահ իշխանի մոտ, բայց վերջինս ժխտեց Արձանի ասածը։ Մովսեսը հույսը կտրեց Խատուտիկի գրքերից։ Սակայն բերդապահ իշխանի մահից հետո նրա կինը մի օր Մովսեսին հրավիրեց Խատուտիկ։

— Սրբազան հայր, դու պետք է ներես իմ հանդուգն խնդրանքը,— ասաց բերդի տիրուհին։

— Նա ինձ ոչ մի վնաս չի տվել, ինչո՞ւ պիտի ես ներեմ նրան։ Ամենքն էլ գիտեն, որ նա անքին, աննախանձ ու անպատճառ հոգու տեր մարդ էր։

Տիրուհին եպիսկոպոսի առջև դրեց մի քանի մատյաններ։

— Ինչո՞ւ էր ամուսինդ ժխտում սրանց գոյը,— հարցրեց Մովսեսը։

— Ամուսինս սիրում էր քեզ, բայց մեկն ստիպում էր, որ նա այս գրքերը չհանձնի քեզ։

[1] Ինձ — ընձայուծ։

— Ո՞վ է այդ մեկը։

— Չգիտեմ։ Այդ գազանիքը այդպես էլ նա իր հետ գերեզման տարավ։ Մի քանի անգամ փորձեց սրանք ծածուկ քեզ ուղարկել, բայց վախեցավ, որովհետև երդվել էր Ավետարանի վրա, որ այս գրքերը քեզ ցույց չի տա։

— Ի՞նձ, թե ընդհանրապես որևէ մեկին։

— Ո՛չ, միայն քեզ։

— Բայց ի՞նչ պատահեց, որ որոշեցիր շրջանցել ամուսնուդ երդումը և սրանք ցուցանել։

— Մեռնելիս ամուսինս ասել է. «Իմ մահից քառասուն օր հետո մի զորական կգա և կասի. «Ոսկրի ետևից եմ եկել»։ Դու անմիջապես կհանձնես նրան և ոչինչ չես հարցնի։ Բայց մինչ այդ կհրավիրես եպիսկոպոս Մովսեսին և ցույց կտաս սրանք»։ Այնպես որ ես միայն կատարում եմ հանգուցյալի պատվիրանը։

Մովսեսը բացեց առաջին մատյանը, որն ուներ «Առածանի» խորագիրը։ Թերթեց և կանանց մասին հետևյալ առած կարդաց բարձրաձայն.

«Արք ունեցողը նազ կանի»։

«Կնոջդ ոչ չրաղաց ուղարկիր, ոչ այգի, ոչ էլ հեռու տեղ»։

«Որևէ տեղ գնալուց՝ կնոջդ մի առա, թե ուշ կգամ»։

«Թե ուզում ես, որ կնոջդ ձեռքերը սպիտակ մնան՝ այնպես արա, որ նա միշտ խմոր հունցի ցորենի ալյուրից»։

Մյուս գիրքն «Առականի» էր։ Մեկը հունարեն տառերով գրի էր առել հայերեն առակները։ Երրորդը հանելուկների մատյան էր։ Առաջին մագաղաթի վրա գրված էր. «Ի՞նչ երկաթաձող է, որից հացի հոտ է գալիս։ Պատասխան՝ ծհանը»[1]։

Չորրորդ մատյանը խրախճանականների ժողովածու էր։ Մովսեսին դուր եկավ մի խրախճանական. «Մի մարդ հարյուր տարի հովվություն արեց՝ տարեկան պահելով հազար ոչխար։ Ամեն օր նրա հոտում երկու գառ էր ծնվում։ Արդ, իմացիր, թե հարյուր տարում ընդամենը քանի գառ է ծնվել։ Եթե թվերից գլուխ հանող լինես՝ այս խրախճանականը կլուծես անմիջապես, իսկ եթե տգետ լինես, ապա քո չարչարանքը կտևի մի քանի օր»։

Մովսեսը շվարել էր։ Սրանք գաղտնի պահելիք գրքեր չեն։

[1] Ծհան — հացհան, երկաթյա ձող, որի օգնությամբ թոնրից հանում են թխած հացը։

Տեսնենք ինչ կա վերջինի՝ հինգերորդի մեջ։ Սա ոչ խորագիր ուներ, ոչ ծանուցում։ Առաջին էջերի վրա մի հին զրույց էր Սողոմոն իմաստունի մասին։ Հետո զայրույթը հազիվ սքողելով Մովսեսը կարդաց. «Պերոզի թագավորության տասնմեկերորդ տարում Բագրևանդի եպիսկոպոս կարգվեց այր մի Մովսես անուն։ Կրթվել էր հունացոց մոտ և իմաստասերի անուն էր հանել։ Սա ծաղրում և ծանրամիտ է կոչում ամենքին։ Վիրավորանքի խանձողը ձեռքին այրում է սրա-նրա արժանապատվության կողը։ Նրա համար նվաստացուցիչ է իմաստասիրության մասին վեճի մեջ մտնել մեկի հետ, որը հունարեն չգիտե։ Գոռոզաբար է վերաբերվում Բագրևանդի և Արշարունիքի երևելիների հետ»։

Մովսեսն ամբաստանագիրն ընթերցեց մինչև վերջ և դարձավ բերդի տիրուհուն.

— Դու չգիտե՞ս, թե այս մատյանն ով է բերել ամուսնուդ։

— Մի քանի տարի պակաս Վաղարշապատից մի մարդ բերեց։

— Ի՞նչ էր նրա անունը։

— Չգիտեմ, նրա գալն ու գնալը մեկ եղավ։

— Իսկ ինչպիսի՞ տեսք ուներ։

— Ոչ կոտակ էր, ոչ բարձրահասակ։ Պիրկ պրկած բաճկոնն էլ աքցանի պես էր կպել նրա մարմնին։

Մի անգամ ասպետ Սահակ Բագրատունին նամակով Հարցում արեց իմաստասեր Մովսեսին.

— Ինչո՞վ է տարբերվում աշակերտն ուսուցչից։

Մովսեսը պատասխանեց.

— Աշակերտը գիտե, որ բիլ ընդհանրապես նշանակում է կապույտ, իսկ ուսուցիչը պիտի իմանա, որ բիլ է կոչվում մասնավորապես նոսր կապույտը։

Այդ պատասխանն այնքան դուր եկավ Սահակին, որ նա որոշեց հարց ու պատասխանը քանդակել տալ Դվինի դպրանոցի դռան բիդիս քարի վրա։ Խելով այդ մասին, Ղազար Փարպեցին նույնը արեց նաև Դպրևանի դպրանոցի շքամուտքին։

Սակայն ասպետին ամենից շատ զարմացրեց Վանադուխտը։ Սովորաբար Բագավանից ստացված մագաղաթները Սահակն ընդօրինակել է տալիս բազում օրինակներով և ուղարկում այստեղ ու այնտեղ։ Առաջինն, իհարկե, ստանում էր Վանադուխտը։

Սահակին թվում էր, թե Կամսարական օրիորդը կարդում էր իմաստասեր Մովսեսի «Հայոց պատմության» էջերը և մի կողմ դնում, ինչպես դա անում են բոլոր մատյանների հետ։ Բայց մի զրույցի ժամանակ Վանադուխտն ասաց.

— Դու գտա՞ր մագաղաթագող Մաշտոցին։

— Դեռ ոչ, նա շրջմոլիկ է դարձել, բայց, միևնույն է, կբռնվի,— պատասխանեց Սահակը։

— Պետք էլ չէ, թող թափառի ինչքան սիրտն ուզում է։

— Ինչո՞ւ։

— Ես ի բերան եմ ուսել այն ամենը, ինչ մինչև հիմա գրել է Մովսեսը։ Ես կարող եմ բառ առ բառ վերականգնել ամբողջը։

— Ապա հաստատիր ասածդ, եթե դա կատակ չէ։

— Դու հետևիր մագաղաթին, ես կարտասանեմ,— ասաց Վանադուխտը։

Վերջացնելուց հետո ասպետը դիմեց օրիորդին.

— Դու գիտե՞ր, որ ծովածավալ հիշողություն ունես։

— Ոչ։

— Հիմա էլ դա կդառնա մի նոր հոգս։

— Ի՞նչը։

— Քո հիշողությունը։

— Ինչո՞ւ։

— Որովհետև հիմա էլ կարող են քեզ գողանալ, որ կրկնակի հարված կլինի ինձ համար։

— Ինձ ինչո՞ւ պիտի գողանան։

— Որովհետև, Վանադուխտ, մենք ազգ ու հայրենիք ենք պահում նաև հիշողությամբ։ Մովսեսի մատյանը Հայքի ամենամեծ հոգևոր հարստությունն է։ Դու ի բերան ես ուսել այն և պահում ես մեր մտավոր գանձը, ինչպես դա կարող է անել մի անմատչելի բերդ։ Թշնամին կարող է կործանել մեր բերդերը, բայց չի կարող քեզնից խլել քո հիշողությունը։ Յուրաքանչյուր ազգի հարստություն են նաև նրա արտասովոր հիշողության տեր զավակները։

Հետո կարծես ինչ-որ բան մտաբերելով Սահակը հարցնում է.

— Իսկ ո՞վ գիտե, որ դու այսքան բան ի բերան ես ուսել։

— Ոչ ոք,— պատասխանում է Վանադուխտը։

— Չգիտե նույնիսկ Ներսե՞հը։

— Նա էլ չգիտե։ Դա ես ասել եմ միայն քեզ համար, Սահակ,— ասաց Վանադուխտը՝ խանդակաթ հայացքը ուղղելով ասպետին։

Այս դեպքից հետո Սահակ Բագրատունին հայրապետ Հովհաննին ասաց.

— Մենք չգիտենք, թե Հայքում հզոր հիշողության տեր ինչպիսի մարդիկ կան։

— Դա հնարավոր է միայն այն ժամանակ, եթե ամենքը գրել-կարդալ իմանան։

— Դու կարծում ես, թե դպրանոցներն ավարտած բոլոր սաները գիտեն իրենց հիշողության չա՞փը։

— Բնատուր հիշողությունն այնպիսի բան չէ, որ գաղտնի մնա, վաղ թե ուշ այն պետք է ի հայտ գա։

— Հայրապետ, իմ միտքն այն է, որ կրթենք նաև հիշողությունը։ Շատ ջրեր են անտեղի հոսում, բայց ամենից շատ մարդուն օգուտ է բերում ջրանցքի ջուրը։ Պետք է ազգը օգուտ ունենա իր զավակների հիշողությունից։ Չպիտի թողնել, որ նա հոսի հենց այնպես՝ անսանձ գետի նման։

— Մարզպան, դու իրավացի ես, կարևորն այն է, որ մարդ հիշի օգտակար բանը։ Դու լսե՞լ ես Գադի մասին։

— Ոչ, ո՞վ է այդ Գադը։

— Տիգրան Երվանդյանի ժամանակներում մի հայ զորական է լինում Գադ անունով։ Նա չէր կարողանում մոռանալ ոչ մի լսած բան։ Տիգրանը որոշում է զարմացնել հարևան երկրների արքաներին։ Նա խնջույքի է հրավիրում նրանց և ասում. «Սա իմ Գադ զինվորն է։ Նա կարող է մտապահել ձեր ասած բոլոր խոսքերը»։ Օտարերկրացի արքաները սկսում են շատախոսել և ստիպում, որ Գադը կրկնի նրանց։ Հետո, համոզվելով, որ Գադն, իրոք, ոչինչ չի կարողանում մոռանալ, որոշում են գնել նրան։ Առասպելական դներ են առաջարկում Տիգրան Երվանդյանին։ Սակայն վերջինս ոչ սակարկում է, ոչ էլ համաձայնում։

— Հետո՞։

— Միայն այդքանն եմ լսել։

— Իսկ Գադն իր հիշողությամբ ի՞նչ օգուտ տվեց Հայքին։

— Ցավոք, Սահակ, այդ մասին ոչ ոք ոչինչ չգիտե։

Ասպետը երկար մտորեց այդ մասին ու մի օր ինքն իրեն ասաց.

— Հիշողությունը հիշողություն, բայց մնում է միայն գրավոր խոսքը։ Բաներ կան, որ պիտի բեկել մարդկանց հիշողությունից և գրի առնել մագաղաթի վրա կամ քանդակել քարին։

Եվ Սահակը քարգործ վարպետի միջոցով իր դղյակի արևվելյան պատի վրա քանդակել տվեց իմաստասեր Մովսեսի ամենաիմաստուն խոսքը. «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան»։

Իսկ Բագավանում նստած Մովսեսը մենախոսում էր.

— Ես չանվեցի ոչ մեկի մտքի կռճռոնով։ Մարդը պիտի ազատ լինի ամեն տեսակ սնոտիապաշտական կաշկանդումներից ու պայմանականություններից և հնազանդվի միայն իր ողջախոհությանը։ Իհարկե ախորժելի չէ անիշխանությունը։ Բայց յուրաքանչյուր ազգի դեկավար պիտի դառնա իմաստուն իմաստասերը և ոչ թե հում գաղափարախոսության ջատագովը կամ սրբագործված տոհմի ժառանգը։ Չի կարելի մարդուն մեծարել իր նախնիների հաշվին։ Հնարուն տոհմից սերելը դեռևս խելքության չափանիշ չէ։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Մովսեսը չնկատեց, թե իր ու Կամարայի տների սահմանագլխի ցանցառ թուփը երբ թանձրացավ ու բազմատոտ դարձավ։ Մի առյուծակ սկսեց բույն հյուսել թփի վրա։ Նրա կայտառ ծլվլոցը հիշեցնում էր, որ Մովսեսը ծեր է, զառամյալ։

Մովսեսին թվում էր, թե արար աշխարհում իրենից ծեր ոչ մի մարդ չկա։ Մի ժամանակ նրա համար բոլոր առավոտները անսովոր էին։ Ջահելությունը ցրում էր ամեն տեսակ ամպ ու զամպ։ Հիմա ամենապայծառ օրվա մեջ նա մի պճեղ մշուշ է տեսնում։

Երազում երբեմն երևում էր մայրը՝ Արեգուհին, որը Մեղրագետի ափից ձեռքով էր անում և կանչում Մովսեսին.

— Տուն արի, տղաս, բավ է, ինչքան թափառեցիր աշխարհում։

Երիտասարդությունը մարդկային կյանքի նժույգն է, միջին տարիքը՝ երիվարը, ծերությունը՝ հետիոտնը։ Մարդ չի տեսնում, թե նժույգից երբ և ինչպես է իջնում ու հեծնում երիվարը, հետո էլ երիվարի թամբից ընկնում ու դառնում հետիոտն։

Ո՞ ոք[1] կարող է շիջնել նժույգից։

Ողբո՜ւմ եմ քո կյանքի տևողությունը, մարդ։ Վերելքդ ակընթարթ է, վայրէջքդ՝ ակնթարթ։ Իսկ դու, հավիտենականության ծարավի արարածդ, չես ուզում ընդունել, որ ամենաբեղուն ակընթարթից էլ միայն ակնթարթ է ծնվում, առանց մի ծեղ ավել կամ պակասի։

Դա պատահեց Արեգ ամսի Մուրց օրը։ Բուն փողոցով քայլելիս սիրտը նվաղեց։ Մովսեսին թվաց, թե մարմնի մեջ ինչ-որ լար կտրվեց։ Նա տուն հասավ երերալով, ծանր քայլերով։ Ճա-

[1] Ո՞ ոք — ով (գրաբարյան ոճ է)։

Դուռն սկսեց շփել ջրով։ Չօգնեց։ Հետո շրթունքներին մոտեցրեց թարմացուցիչ խաշխաշով լեցուն ափսեն։ Դա էլ չօգնեց։

Մահճակալի վրա մեկնվեց առանց նափորոյ հանելու։ Կամարան խցասենյակ մտավ թե չէ՝ իսկույն գործի անցավ։ Բաց արեց իմաստասերի կոնքը և սկսեց շփումը։ Մովսեսը փակել էր կոպերը և չէր տեսնում իշխանուհու մատների ճարտար շարժումները։ Դա տևեց քառորդ ժամ։ Հետո արծվապատկեր կանթով կապիճից հյութ խմեցրեց Մովսեսին և վերջինիս խոժոռ հայացքը մեղմացավ։

— Կենարար է,— ասաց իմաստասերը։

— Այս ջուրն ստանում են նոճու կեղևից և ծիրանի հյութից։

— Դո՞ւ ես պատրաստել։

— Այո, մայրս է սովորեցրել։ Մեկ-մեկ ինքս եմ փորձում։ Մի քանի կում խմելուց թվում է, թե ես պարմանուհի եմ դառնում։

Այնուամենայնիվ իմաստասերի թուլությունը չանցավ հաջորդ՝ երեկվան, Անի և Պարխար օրերին։ Հետո երեք օր ոտքի վրա մնաց և Ասակ օրը նորից դամվեց անկողնուն։ Կամարան նրա սնարից չէր հեռանում։

Մովսեսն սկսեց մոռանալ ժամանակը։ Սկզբում կորցրեց օրերի հաշիվը, հետո խառնեց տարվա եղանակները։

— Հիմա ի՞նչ է, աշո՞ւն է թե ձմեռ,— հարցնում էր նա։

— Գարուն է,— պատասխանում էր Կամարան։

Սակայն մի քանի բոպեից հետո իմաստասերը հարցնում է.

— Եթե ամառ է՝ ինչո՞ւ ես վառել պատի կրակարանը։

— Գարուն է, Մովսես, գարնան սկիզբ, ամառը դեռ շատ հեռու է,— մեղմիվ ձայնով ասում է իշխանուհին։

Թմրությունը երկար չտևեց։ Շուտով միտքը զգաստացավ և խորհրդածությունների աղբյուրակնը բացվեց.

— Կամարա, մարդու արժանապատվությունը ոտնափշուր է դառնում այն ժամանակ, երբ սկսում են խղճալ նրան։ Հը, ի՞նչ կասես, ինչո՞ւ է այսքան երկար լռում ասպետ Սահակը։ Հավանաբար Աստատը նրան իմաց է տվել, որ ես հիվանդ եմ և ասպետը չի ուզում գլխացավանք պատճառել ինձ։ Իզուր։ Մոտեցիր գրագալին ու գրի առ այն, ինչ կասեմ։ Ոչ շտապեցրու, ոչ էլ ընդհատիր միտքս։ Դե, սկսիր.

«Ասպետդ Սահակ։

Կատարելով քո հանձնարարությունը ես ճամփա ելա դեպի մարդկության նախասկիզբը։ Ճանապարհին խոպան ու անտերև հազարամյակներ տեսա և այստեղ ու այնտեղ կանաչին տվող տարիներ, տեսա բաղում ամուլ դարեր և հատուկենտ հանճարածնունդ ակնթարթներ։ Քշերին տեսա, որոնք արժանապատվության կնգուղ էին կրում իրենց գլխներին։ Տեսա, թե հայկյաններն ինչպես են անցնում խորշակահար ու մահագուշակ դարերով։ Տարեգրության իմ տեսած լավն ու վատը և պատմագիրքը հասցրի մինչև Վռամշապուհ Արշակունի հայ արքայի թագավորության տասներկուերորդ տարվան։ Այդտեղից մինչև այսօր ութսուն տարվա ճանապարհ է, եթե որևէ ծերունի իր հիշողության տուտը բաց թողնի՝ կհասնի մանկութ օրերին։ Ես շարժվում եմ դեպի մեր ժամանակները։ Այնպես որ, ասպետդ ազնվափայլ, որտեղ էլ ես կանգ առնեմ՝ հաշվիր, որ այդտեղ է ավարտվում իմ ու քո գիրքը։ Եվ ընդհանրապես, ավարտուն պատմագիրք չկա։ Ամեն ինչ կիսատ է, շարունակելի։ Եթե քեզ հետ ավարտվում է կյանքդ՝ ուրեմն անիմաստ ես ապրել։ Ես որդի չունեմ, այս գիրքը իմ հոգևոր զավակն է, որին պիտի որդեգրի ամբողջ հայ ժողովուրդը։

Զկնի այսորիկ[1] և անելիքս կարճառոտ կլինի և կյանքս»։

— Վերջացրի՞ր,— հարցրեց Կամարան։

— Այսօր այդքանը բավ է, մնացածը՝ վաղը, եթե չկարողանանք շարունակել՝ փույթ չէ։ Կիսատ են նաև բոլոր նամակները։ Եվ ընդհանրապես աշխարհում ավարտուն ոչ մի բան չի լինում։ Սկիզբ ու վերջ չկա, Կամարա, բոլոր ծնունդներն ու ավարտները պայմանական են, մարդկային խոհականությունը ի զորու չէ տեսնելու կատարյալ ավարտուն սահմանագծեր։ Բողբոջի պայթյունը և ծնունդ է, և մահ։

Կամարան գլխի էր ընկնում, որ Մովսեսը հաշտ տրամադրությամբ է դիմավորում իր կյանքի մայրամուտը։ Իսկ ինչի՞ է պետք ինքը Մովսեսից հետո։

Կամարան պատրաստ էր հրաժարվել իր ունեցած թանկագին բոլոր զարդերից՝ եթե դրա դիմաց նա ձեռք բերեր մի այնպիսի կենարար հեղուկ, որը լիովին ապաքիներ Մովսեսին։

Բայց շուտով իմաստասերը վերագտավ իր երբեմնի կայ-

[1] Զկնի այսորիկ — ապա, այնուհետև, դրանից հետո (գրաբարյան սճ է)։

տառությունը և իշխանությունին զարմացավ՝ տեսնելով նրան կենսուրախ և առօրեական հոգսերով լցված։

Այդ օրերին Կոստանդնուպոլսից Բագավան վերադարձավ աբեղա Արձանը։ Նա կայսերական մայրաքաղաք էր գնացել կաթողիկոս Հովհան Մանդակունու հրամանով։ Արձանը հետը վերցրել էր Դվինի արհեստավորաց տներում գործած դիպակ, որից կարելի էր կարել ճիշտ այնպիսի հայրապետական կամ եպիսկոպոսական նափորտ, ինչպիսին կարում էին Կոստանդնուպոլսում։ Բյուզանդական կրոնապետները հավաստել էին, որ Դվինի դիպակը ընտիրագույնս է ամեն տեսակ նափորտի համար։

Նախքան Բագավան հասնելը Արձանը եղել է Դվինում և հայրապետ Հովհանին զեկուցել Կոստանդնուպոլիս կատարած իր առաքելության մասին։

Սակայն Կոստանդնուպոլիսը Արձանի դեմքին դրոշմել էր այնքան մռայլություն, որ կհերիքեր հարյուր մարդու։ Թվում էր, թե մարմնեղ աբեղան նիհարել է, ներս էին քաշվել նրա ուսերը։

— Նայում եմ քեզ ու զարմանում,— ասաց Մովսեսը,— կարծես դու Կոստանդնուպոլսից տուն ես վերադարձել առանց քեզ։

— Դու իրավացի ես, սրբազան հայր,— պատասխանեց Արձանը,— այսպես վերադառնալը վերադառնալու նման չէ։

— Բայց ի՞նչ է պատահել։

— Ամեն ինչ սկսվեց պարականոն թղթից։

— Ի՞նչ թուղթ։

— Տուն վերադառնալու նախօրեին ինձ հանդիպեց Զենոն կայսեր սենեկապետը։ Նրա անունը Ասոս էր։ Հովազի հայացքով այդ մարդը շողոքորթ լեզու թափեց, փորձելով համոզել, թե մի քանի օր է, ինչ փնտրում է ինձ։ Հետո մի թուղթ տվեց ու ասաց. «Սա կհանձնես եպիսկոպոս Մովսեսին, հիշիր, Մովսեսին պիտի հանձնես և ոչ կաթողիկոս Հովհանին»։ Մինչև գրտնակելը նա կարդաց թուղթը։ Զենոն կայսրը հրավիրում է քեզ իմաստասիրական վեճի։ Կոստանդնուպոլիսը փորձում է նոր տիեզերաժողով հրավիրել և նորից քննել Քրիստոսի միաբնակ ու երկաբնակ էության հարցը։ Հաջորդ օրը ես դուրս եկա Կոստանդնուպոլսից և ուղևորվեցի դեպի տուն։ Իրիկնադեմին, երբ կայսերական մայրաքաղաքից հեռացել էի մոտ քսան կամ քսանհինգ հրասախ, մեր կառքի վրա հարձակվեցին մի քանի զինված պարսիկներ։ Նրանք ինձնից խլեցին Զենոնի թուղթը և անմիջապես հեռացան առանց ձեռք տալու մյուս ճանապարհորդներին։ Գուցե ես սխալվել եմ, որ ետ չդարձա և այդ մասին իմաց չտվի կայսրին։

— Դրա կարիքը չկար, Արձան։ Ինձ ուրիշ բան է հետաքրքրում, դու համոզվա՞ծ ես, որ քեզ վրա հարձակվողները պարսիկներ էին։

— Չգիտեմ, պարսկահանդերձ էին, պարսկերեն էին խոսում։

Մովսեսը սկսեց մտմտալ, փորձելով կռահել, թե բյուզանդական մայրաքաղաքում ինչ խաղ են խաղացել Արձանի գլխին։ Ինչպես է պատահել, որ Զենոն կայսրը թուղթ է գրել իրեն։ Ինչու հատկապես իրեն է գրել։ Չէ որ կայսրը իր նամակը պիտի ուղղեր հայրապետին։ Բայց ի՞նչ վեճի են հրավիրում։ Վերջին հիսուն տարում հավատի մաքրության քողի տակ Կոստանդնուպոլիսը ձգտում է համաշխարհային տիրապետության։ Քրիստոսին ծնել է կույս Մարիամը։ Բայց ինչպե՞ս կարող է մահկանացու Մարիամը աստծու ծնել։ Եվ հետո՝ Մարիամից ծնված Քրիստոսը միայն աստվա՞ծ է, թե նաև մարդկային բնություն ունի։ Այս խնդիրը դարձել է կրոնական բանավեճերի տիեզերական թնջուկ։ Եփեսոսի ու Քաղկեդոնի ժողովները հաղթություն չրևեցին ոչ Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորին, ոչ Ալեքսանդրիայի արքեպիսկոպոս Կյուրեղ Ալեքսանդրացուն, ոչ էլ կոստանդնուպոլսեցի վանահայր Եվտիքեսին, որը գտնում էր, թե Քրիստոսի մարդկային բնությունը ձուլվել է աստվածային բնության մեջ, հետևապես նա միաբնակ է։ Բայց Եվտիքեսը բանավիճում էր առերես։ Իր հակառակորդներին նա կարգալույծ անել էր տալիս փողի ուժով, կաշառում էր կայսերական բոլոր պաշտոնյաներին, նաև՝ կայսրին։ Եկեղեցական ամենաանփառունակ ժողովը Քաղկեդոնինն էր, որ հրավիրել էին կայսրուհի Պուլքերիան և կայսր Մարկիանոսը։ Քաղկեդոնը միայն վավերացրեց Հռոմի պապի համաշխարհային կայսրությունը քրիստոնեական աշխարհի մեծ մասի վրա։ Հայերը չմասնակցեցին Քաղկեդոնի ժողովին։ Բյուզանդական տիեզերաժողովներից ոչ մեկի որոշումը պարավանդ չդարձավ հայի հոգու համար։ Քրիստոսն ու Մարիամը ոչ մի տեղ այնքան անաղարտ չմնացին, որքան Հայքում։ Հայ եկեղեցու հոգևոր հայրերը հայոց եկեղեցու դիմագիծը պարապինդ դարձրին ազգային ավանդապահությամբ և փակեցին օտարածին նորամուծությունների ճամփան։ Հայը

Ոչ մի հարցում այնքան աշխատություն չի դրսևորել, որքան Քրիստոսին Քրիստոս պահելու մեջ։

Ով գիտե, թե ինչ նոր բան է հղացել Զենոնը։ Եվ ընդհանրապես ոչ մի կայսր էլ Քրիստոսի հանդեպ անկաշառ սեր չի ունեցել։

Քրիստոսը ծնվել է այն ժամանակ, երբ Հռոմի Օգոստոս կայսրը հրաման էր տվել ամբողջ տիեզերքն աշխարհագիր անել։ Հռոմեացի գործակալները Քրիստոսին համարեցին պարականոն ծնունդ և մարդաթվի մեջ չմտցրին նրան։ Այդ ժամանակից անցել է հինգ հարյուր ութսուն տարի։ Զենոնն ինչո՞ւ է կպել Քրիստոսին։

Հարցին պատասխանելու համար պետք է առնվազն մեկ-երկու շաբաթ ապրել Զենոնի արքունիքում։

Մովսեսի միտքը գալար տվեց, վեր ու վար իջավ, բայց չկարողացավ թեկուզ մոտավոր մի պատասխան գտնել և ասել, թե ովքեր և ինչու են Արձանի ձեռքից խլել Զենոնի թուղթը։

Տափերական դաշտ։

Ուրծ գավառ։

Սագրա բերդ։

Աշխարհում անմատչելի բերդ չկա, բոլորն էլ վաղ թե ուշ կործանվում են, դառնում անպարիսպ։ Անմատչելին միայն Սագրան է, որի բարձրիկ աշտարակները խրոխտաբար նայում են Մասիսին։ Նրա հսկա բակում և ջրհոր կա, և ցորենի մի փոքրիկ արտ, և արգելափակոց քսանից ավելի եղնիկների համար։

Կառուցել է Ուրծի իշխան Կողթեկը։ Տասը տարի տևեց մինչև ավարտին հասցրեց։ Սոապարիսպ ամրոց մտնողը կընկնի շրջապարիսպների մեջ և չի կարող գտնել ելման դուռը։

Բախտավոր բերդ դուրս եկավ Սագրան, որ ընկած էր Նախճավանից Արտաշատ, Դվին ու Վաղարշապատ տանող ճանապարհի վրա։ Պարսիկները Հայքի խորքերն էին շարժվում Սագրայի կողքով։ Ոչ մի զորքի ու զորապետի չի հաջողվել մուտք գործել Սագրա։

Կողթեկը պատահաբար չէ իր բերդը կառուցել Տափերական դաշտի հենց այդ հատվածում։ Սագրայի կողքին տափարակ մի ավազուտ կար, որտեղ ոչինչ չէր աճում։ Ոչ ոք չգիտե, թե երբ-

Վանից է այդ ավազուտը կոչվում Իժերի կովատեղի։ Ամռան կեսերին, երբ տոթը սաստկանում է, Մասիսի և Արագածի լանջերի իժերը վտառներ կազմած գալիս և միմյանց հանդիպում են Իժերի կովատեղում։ Սկսվում է մի սոսկալի ճակատամարտ, որ տևում է երկու-երեք օր։ Նրանք միմյանց վրա են հարձակվում խորհրդավոր վշշոցներով, գրոհում մոլեգնաբար և արյունլվա դարձած թողնում մարտադաշտը։ Կռվի ժամանակ իժերից շատերը զոհվում են։ Ողջ մնացածները նորից վտառներ են կազմում և վերադառնում իրենց բները։ Բայց ինչպես բոլոր ճակատամարտերը, իժերի կռիվն էլ իր կարգ ու կանոնն ունի։ Պարտված կողմը պարտավոր է թողնել ռազմադաշտը։ Հաղթող կողմը Իժերի կովատեղում հաղթահանդես է սարքում, մի խելահեղ օձապար, որ ոչ մի նկարչի դեռ չի հաջողվել նկարել։ Ցուրաքանչյուր կողմ տանում է իր զոհերին և կռվի դաշտում մնում են օձաշապիկները։

Ահա երկու հարյուր հազար տարի է, ինչ ամեն ամառ Իժերի կովատեղում ճակատամարտ է լինում, բայց մինչև հիմա ոչ ոք չգիտե, թե որ կողմն է հաղթում՝ մասիսցիները՝ թե արագածցիները։

Մարդ-մահկանացուն չի կարող դիտել այդ օձակռիվը։ Իժերի վշշոցից նրա գլուխը կպտտվի։

Իսկ ի՞նչ են ուզում իրարից Մասիսի և Արագածի լանջերում ապրող օձերը, ինչո՞ւ են կռվում։ Ասում են թշնամությունը հնուց է գալիս։ Մի ժամանակ երկու կողմերի իժերն էլ, որ առանձին տոհմեր են, ապրելիս են եղել Մասիսի լանջերին։ Հետո նրանց մեջ վեճ է եղել մի դատարկ բանի համար։ Կռվել են ու մի տոհմը մյուսին քշել է Մասիսի լանջերից։ Երկու հարյուր հազար տարի է անցել, բայց Արագածի լանջերը քշված օձերը չեն մոռանում իրենց թշնամությունը։ Եվ ամեն ամառ կռվում են՝ իրենց հին որջերը վերադառնալու համար։

Իշխան Կողթեկը Սագրան կառուցել է Իժերի կովատեղիի կողքին՝ մտածելով, որ իժերից խուսափելով թշնամին չի հանդգնի ամռանը պաշարել բերդը։ Սակայն շրջակա վայրերի բնակիչները գիտեին Իժերի կովատեղիի մասին, իսկ հակառակորդը ավելի շուտ երկու-երեք օրով կհետաձգեր բերդի պաշարումը, քան գլուխ կդներ իժերի հետ։

Իժից էլ ագահ ու փառատենչ մարդ էր Կողթեկի որդի Վարազներսեհը։ Երազում էր դառնալ համայն Տափերական դաշտի

տերը։ Պարսից Պերոզ արքան խոստացել է նրան նշանակել Տափերական կուսակալ։

Վարազներսեհը հոր մահից հետո դարձավ Սագրայի տերը։ Շարունակեց գաղտնի գործակցել պարսիկների հետ։ Մի տարի առաջ օգնեց Արտաշատի բերդում պաշարման մեջ ընկած մարզպան Ատրվշնասպ Հոզմանդյանին և հազարապետ Վեհվեհնամին՝ փախչելու Ատրպատական։ Բայց դա գաղտնի չմնաց, հայերը իմացան Վարազներսեհի դավաճանության մասին։ Կողթեկի որդին գիտեր, որ ոչ սպարապետ Վահան Մամիկոնյանը, ոչ էլ սպասպետ Սահակ Բագրատունին չեն ների իրեն։ Եվ որոշեց քաշվել ու ամրանալ իր ամրոցում։ Մինչ այդ հարձակվեց Բռնավեժ ամրոցի վրա, կողոպտեց նրա հարստությունները և եկավ, պինդ փակեց Սագրայի դարպասները։

Վահան Մամիկոնյանը մի քանի վաշտ առանձնացրեց հայոց գնդերից և շրջապատեց Սագրա բերդը։ Պաշարումը տևեց երկար ժամանակ։ Վարազներսեհը կտրվել էր աշխարհից։ Ոչ ոք չէր կարողանում ոչ Սագրա մտնել, ոչ էլ դուրս գալ այնտեղից։

Ամրոցի ներսում հարյուրից ավելի մարդ կար։ Նրանք սովամահ չէին լինի, որովհետև տասը տարվա պարեն ունեին և ջրհոր։

Սագրան ընդարձակ պաշարված էր, բայց երկյուղի մեջ չէր։ Ընդհակառակը, Վարազներսեհը դարձել էր ավելի սթափ ու աշխուժ։ Մի անգամ նա որոշեց ծաղրել բերդը շրջապատող հայկական զորախմբին։ Կանչեց ամրոցի հացթուխին ու ասաց.

— Ինչպե՞ս է թոնիրդ։

— Ամեն օր բորբոք եմ պահում, տեր Վարազներսեհ, ոչ ոք բերդում սոված չի մնում։

— Ես գիտեմ, որ այդպես է։ Ինձ հետաքրքրում է ուրիշ բան։ Կարո՞ղ է պատահել, որ ալյուր չունենալու պատճառով դու հանգցնես թոնիրդ։

— Տեր իմ, մեր ալյուրի պաշարը շատ է։

— Ես ուզում եմ, որ դու լավաշ թխես նաև մեր ամրոցը պաշարող զորքի համար։

— Ի՞նչ։

— Զարմացա՞ր։

— Գուցե լավ չլսեցի։

— Ոչ, հացթուխ, դու ճիշտ լսեցիր։

— Եվ ես պիտի հաց թխեմ նրանց համար, ովքեր ուզում են կործանել մեր բե՞րդը։

— Այո։

— Մինչև հիմա հաղիվ թե այդպիսի բան լինի եղած աշխարհում։

— Դա ճիշտ է։

— Բայց ի՞նչ կասեն մարդիկ։

— Մարդիկ կհիանան, իսկ մեր բերդը պաշարողները կհիասթափվեն և կթողնեն ու կհեռանան։

— Ինչո՞ւ պիտի հեռանան։

— Երևում է, որ կարգին խելք չունես, հացթուխ։ Սովորաբար ամրոցները երկար շրջապատում են նրա համար, որպեսզի սովամահության մատնեն պաշարվողներին։

— Ոնց որ գլխի եմ ընկնում։ Մեզնից լավաշ ստանալով՝ նրանք կհասկանան, որ մենք շատ հաց ունենք և սովից չենք մեռնի։

— Ճիշտ է։

— Հիմա ինչքա՞ն լավաշ պիտի թխեմ։

— Այնքան, որ մի քանի օր հերիքի մեր բերդը պաշարող հարյուր քառասուն զինվորներին։

Հաջորդ օրը Սագրա ամրոցի աշտարակներից գրտնակման ծանրոցներ ընկան պարիսպների տակ։ Վահան Մամիկոնյանի զորականները քանդեցին գրտնակները և սկսեցին անուշ անել ախորժաբուր լավաշները։

Վարազներսեհը հաշվարկել էր ստույգ։

Երկու օր անց սպարապետի զորական վաշտերը հեռացան Սագրա ամրոցի մոտից և շարժվեցին դեպի Դվին։

Պաշարումը վերացնելու երրորդ օրը Վարազներսեհը հետախույզներ ուղարկեց չորս կողմերով։ Սակայն նրանցից ոչ մեկը չվերադարձավ։ Ուրծի իշխանը հասկացավ, որ նրանք ընկել են սպարապետի սարքած թակարդի մեջ։

Եվ Վարազներսեհն ստիպված էր պինդ գոցել ամրոցի դարպասները։ Դա նման էր ինքնակամ մեկուսացման։ Փորձեց սուրհանդակ ուղարկել և կապ հաստատել Պերոզ արքայի հետ։ Բայց սուրհանդակը բռնվեց դեռ նախճավան չհասած։

Այն ժամանակ, երբ ոչ ոք չէր կարողանում Սագրա բերդից դուրս գալ և կապ հաստատել դրսի աշխարհի հետ, մեկն էլ ջանում էր մտնել Սագրա։

Նրա անունը Կնճիթ էր։ Քառասունն անց էր։ Ամբողջ կյանքը Բռնավեժում էր անցկացրել։ Ոչ ծնողներ ուներ, ոչ հարազատներ։ Նրան Բռնավեժ էին բերել Տիզբոնից։

Բռնավեժը կողոպտելիս Վարազներսեհը չէր կարողացել բռնել նրան։ Կնճիթը փակվել էր ամրոցի արևելյան պարիսպի գաղտնի խցի մեջ։ Ասպատակողների հեռանալուց հետո դուրս էր եկել թաքստոցից և տեսել, թե ինչ է արել Վարազներսեհը։ Ուրծի չարասիրտ իշխանը նիզակածեծ էր արել Բռնավեժի բոլոր պաշտպաններին։

Կնճիթը Բռնավեժի բերդակալ իշխանին գտավ սալահատակին ընկած։ Բերդատերը մահամերձ էր։ Նա ճանաչեց Կնճիթին, ուժերը հավաքեց և ասաց.

— Կնճիթ, դու հավատարմորեն ես ծառայել ինձ։

— Այո, տեր իմ։

— Ես շնորհակալ եմ, Կնճիթ։

— Ես էլ եմ շնորհակալ, իշխան։

— Իմ ուժերը հատնում են, Կնճիթ, ես պետք է քեզ մի մեծ գաղտնիք հայտնեմ։

— Ի՞նչ գաղտնիք։

— Վարազներսեհը Բռնավեժը կործանեց՝ կարծելով, թե հաղթություն կտիրանա։ Սակայն քիչ բան ընկավ նրա ձեռքը։ Բռնավեժի մի քանի ձիաբեռ ոսկին մնաց անձեռնմխելի։

— Դու թաքցրե՞լ ես այն։

— Այո, Կնճիթ։

— Լավ է, որ չի ընկել ասպատակողի ձեռքը։

— Կնճիթ, ինչո՞ւ չես հարցնում, թե որտեղ է գտնվում այն։

— Տեր իմ, ես քեզ ծառայել եմ հավատարմաբար և իմ մտքով չի անցել փոխհատուցում ակնկալել։

— Ես հավատում եմ քեզ, Կնճիթ։ Հիմա լսիր ինձ։

— Խոսիր, տեր իմ։

— Քսան տարի առաջ մայրի փայտից յոթ արկղ եմ պատրաստել և ոսկին լցրել դրանց մեջ։

— Եվ այդ արկղները գտնվում են մեր ամրոցո՞ւմ։

— Ոչ, Կնճիթ, նրանք այստեղ չեն։

— Իսկ որտե՞ղ են։

— Վայոց ձորի Սև քարանձավում։

— Տեր իմ, դա վիթխարի այր է, որի մի ծայրից մյուսը անցնելիս մարդ կարող է կորչել։

— Դու իրավացի ես, Կնճիթ, առանց արծվակիր դրոշի այնտեղ չես կարող ոչինչ գտնել։

— Ի՞նչ արծվակիր դրոշ։

— Դա սովորական գոգնոցի չափի դիպակե ծիրանաթույր կտոր է, որի վրա պատկերված են կտուց-կտուցի տված երկու արագիլներ։ Դրոշի վրա արծիվները ասեղնագործված են և ներկված որդան կարմիրով։ Դրոշի ներքևի մասում հունարեն տառերով գրված է, թե Սև քարանձավի որ մասում են գտնվում ոսկով լեցուն արկղները։

— Ամեն ինչ գրված է այդպես պա՞րզ։

— Ոչ, Կնճիթ։ Գրված երեք շարք բառերի մեջ պիտի որոնես երեք բան՝ քարանձավի կողմը, մուտքից մինչև արկղներն ընկած քայլերի թիվը, քարանձավի այն սալը, որի տակ տեղավորված են արկղները։

— Իսկ որտե՞ղ է այդ դրոշը։

— Վարազներսեհն այն տարել է իր հետ։ Ձեռք բեր այդ դրոշը և դու կդառնաս աշխարհի ամենահարուստ մարդը։

— Ասենք թե՝ ինձ հաջողվեց ձեռք բերել այդ ամրոցը ոսկին, հետո ի՞նչ պիտի անեմ այն։

— Վարվիր ինչպես կուզես։

Մի ժամ հետո Բռնավեժի բերդակալ իշխանը մեռավ։ Կընճիթը հողին հանձնեց նրա դին և սկսեց խորհել իր անելիքի մասին։ Որոշեց գնալ ու կամովին գերի հանձնվել Վարազներսեհին։ Սագրա կմտնի, մի կերպ ձեռք կգցի արծվակիր դրոշը, մնացածն արդեն հեշտ է։

Սակայն Վարազներսեհը ոչ մեկին ներս չէր թողնում իր ամրոցը։

Եվ Կնճիթը սպասում էր պատեհ առիթի։

Բայց ծածկագիր դրոշի մասին գիտեր նաև ուրիշ մարդ, որն ապրում էր Սագրա ամրոցում։ Նա առանց դժվարության տիրացավ Բռնավեժի այդ դրոշին և աննկատ դուրս եկավ Սագրա ամրոցից։ Վարազներսեհը նրան համարեց դավաճան։

Սագրայից դուրս եկած զորականը բռնվեց։ Նրան խուզարկեցին և բռնագրավեցին Բռնավեժի բերդակալի արծվակիր դրոշը։ Վահան Մամիկոնյանը հունատառ դրոշը ցույց տվեց Սահակ Բագրատունուն։

— Այս ծածկագիրը ես չեմ կարող վերծանել,— ասաց ասպետը,— սրա ինչ լինելը կիմանա միայն իմաստասեր Մովսեսը։

— Վերցրու և ուղարկիր նրան,— դրոշն ասպետին դիջեց սպարապետը։

Առատը ծածկագիր դրոշը բերեց Բագավան։ Մովսեսը զննեց դրոշը և աբեղա Արծանին ասաց.

— Ես վերծանեցի։ Այստեղ գրված է. արևելյան կողմ, յոթանասունյոթ քայլ, սալի տակ»։ Սա, հավանաբար, առևտրականի թաքստոցի ծածկագիր է։

— Երևի տերը հույն է,— ասաց Արծանը։

Մովսեսը որոշեց դրոշը տալ Եզրին։

— Եթե ոտդ ընկնի Կոստանդնուպոլիս, ցույց տուր վաճառականներին, գուցե տերը գտնվի,— խորհուրդ տվեց իմաստունը։

* * *

«Ասպետդ Սահակ։

Կարդացի տասներկութերթանի քո նամակը։ Դու ուզում ես, որ ես իմ «Պատմության» սահմանները հասցնեմ մինչև մեր օրերը։ Ես չեմ կարող վարվել այնպես, ինչպես հուշում ես դու։ Անկարելի է մեր ժամանակի կյանքը դրվագել որպես պատմություն։ Յուրաքանչյուր իրադարձության պիտի նայել առնվազն քառասուն տարվա հետևողությունից։ Ժամանակակիցները, առանց բացառության, միմյանց հանդեպ կողմնակալություն ունեն, այդ պատճառով էլ ոչ նրանց գնահատականներն են արդարացի, ոչ չափանիշները։ Պիտի սպասել այնքան ժամանակ, մինչև հասարակության կյանքի որևէ փուլ թանձրանա և դառնա հուշ։ Պատմությունը սոսկական ժամանակագրություն չէ, այլ անցյալի ակնառու անցուդարձերի հակիրճ շարադրանք, անկողմնակալ ու սթափ վերաքննահատում։ Իմ ու քո ժամանակի դեպքերն ինչքան էլ թեժ ու աշխարհացունց լինեն՝ պատմություն պիտի դառնան միայն վաղը։ Պիտի պարծանքի փրփուրը նստի, թափ տա իր վրայից սնապարծության թևփը։ Մենք չենք կարող մեր գործերը չափել ժամանակի կշռով, որովհետև մեր ժամանակը մեզ համար տեսանելի է միայն մի կողմով։ Մենք մեզ մեզնով ենք չափում։ Մեծության հավակնորդները հոլովք են։ Մարդկության անմահանալու մարմաջի պատճառով աշխարհը մի օր փուլ կգա։ Մեռածները բոզոք չեն հանում։ Պաղատու ծառի մասին մարդիկ խոսում են միայն բերքն ուտելուց հետո։

Մեր ժամանակի բերքի մասին կարող է դատել միայն հաջորդ սերունդը։ Շրինդի մեջ մեղմ երգ չի լսվի։ Պատմիչի ականջները կարող են խլանալ ճռճռան ժամանակից։

Բայց ինձ զարմացնում է ուրիշ բան։ Քո ինչի՞ն է պետք, որ ես պատմության ծայրը քաշեմ ու հասցնեմ մինչև ինձ ու քեզ։ Մենք էլ եզր չենք, ասպետդ Սահակ։ Ամեն ինչ շարունակվում է, կանգառ չկա, հետևապես չի կարող և եզր լինել»։

* * *

Անտիոքից Բագավան էր եկել հույն իմաստասեր Տանոսը։

Հիսունն անց, պինդ, շարժուն մարդ էր։ Եղել էր Ալեքսանդրիայում, Աթենքում, Հռոմում, Միջերկրյայքի այն բոլոր քաղաքներում ու ավաններում, ուր թեկուզ մի իմաստասեր է ապրում։ Շրջագայում է բոլոր կողմերը ու բանավեճի մտնում այս ու այն իմաստասերի հետ։ Նա ուներ իր հավատամքը՝ բանավիճելը իմաստասերի զարգացման համար նույնն է, ինչ անձրևը դեռահաս արտի համար։

Տանոսը մի դպիր ուներ, որին հետը տանում էր ամեն տեղ։ Դպիրը գրի էր առնում բանավիճողների ասածները և հանձնում Տանոսին։ Դրանք իմաստասիրական ինքնատիպ հիշատակարաններ են, որ Տանոսը հավաքում ու պահում էր աչքի լույսի պես։

Մովսեսը չմերժեց Տանոսին։ Բանավիճելու վայր ընտրեց իշխանուհի Կամարայի դաստակերտի մեծ պատշգամբը։ Սկսեց Տանոսը.

— Որտեղի՞ց է սկսվում մարդը։

— Երբ իրենից բացի տեսնում է նաև ուրիշին,— պատասխանեց Մովսեսը։

Չնայած պատասխանը դուր եկավ հույն իմաստասերին, բայց և այնպես նա ասաց.

— Շատ արագ պատասխանեցիր, իմաստասերդ Մովսես, ինչպե՞ս վարենք զրույցը, չէ որ հարցեր կլինեն, որոնք կրկնակ պատասխաններ կունենան։

— Բոլոր հարցերն էլ կրկնակ պատասխաններ ունեն, մենք իմացության մեր չափանիշով ենք պատասխան ընտրում, երկրորդ պատասխանը մենք չենք տալիս կամ անդիտության պատճառով, կամ մեր մանր ու մեծ շահերը ամպի տակ պահելու ու անտեսանելի դարձնելու նպատակով։

— Ի՞նչ կպատասխաներ ինձ ու քեզ, եթե մեզնից տասը հազար տարի առաջ ապրող տոհմապետին, որի քիմքին իմաստասիրությունը դեռ խուտուտ չի տվել, հարցնեինք, թե որտեղից է սկսվում մարդը։

— Նա կասեր, որ մարդն սկսվում է որսից։

— Դա ճի՞շտ պատասխան կլիներ։

— Ո՛չ։

— Իսկ ինչպի՞սին կլիներ այդ հարցի երկրորդ պատասխանը։

— Որսի միտը նա մենակ չի ուտում, այլ բերում է իր տոհմանդամների համար, հետևապես պիտի տրվի նույն պատասխանը, ինչ ասացի սկզբում՝ երբ իրենից բացի տեսնում է նաև ուրիշին։

— Դա նշանակում է, որ առանձին հարցեր իմաստասիրական կայուն պատասխաններ՞ ունեն հին ու նոր ժամանակների համար։

— Ո՛չ։ Աշխարհում ոչ մի կայուն բան չկա։ Կայունն անկայունությունն է, և միայն անկայունությունը։

— Բնության մեջ ի՞նչն է ամենից դանդաղ ընթանում։

— Մարդու կատարելագործումը։ Մարդը դանդաղ է մարդ դառնում, յուրաքանչյուր հազարամյակում հազիվ մի քայլ է կատարում դեպի կատարելություն։

— Ե՞րբ պիտի տեղ հասնի։

— Ավելի լավ է վերելքի լանջերին մնա։

— Ինչո՞ւ։

— Որովհետև կատար հասնելուց չի կարող կանգ առնել։ Այս լանջով բարձրացել, մյուս լանջով պիտի իջնի։

— Ուրեմն քաղաքակրթությունը եռդարձ շարժո՞ւմ ունի։

— Այո։

— Այդ դեպքում նախընտրելի է, որ մարդու կատարելագործումն ավելի դանդաղի։

— Հավանաբար մարդկությունը դրանից կշահի։

Ապա Տանոսը հարցրեց.

— Քանի՞ եղանակ ունի տարին։

— Չորս՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ։

— Մարդն իր բնությամբ նմա՞ն է տարվան։

— Այո։

— Նշանակում է գարուն, ամառ, աշուն, ձմեռ կա նաև մարդու խառնվածքի մեջ։

— Իհարկե, կա, բայց առանց հաջորդական օրինաչափության։ Մարդու մի հայացքում կարող է տեղավորվել ամբողջ ձմեռը, հայացք էլ կա, որ ամառն ու աշունն է ձուլում իրար։ Նմանությունները առերևույթ են, որովհետև մարդկային միտքն ու հայացքը պատյան չունեն։

— Ասա ինձ, իմաստասեր Մովսես, կարո՞ղ է պատահել, որ մարդ ձմռանն ավելի բարի, կամ ավելի դաժան լինի, քան ամռանը։

— Այո, բայց դա ի հայտ կգա շնչին բաներում։ Ամառն ու ձմեռը չեն փոխում մարդու հոգեբանությունը, չեն կարող չարասիրտին բարեսիրտ դարձնել, բարեսիրտին՝ չարասիրտ։

— Մարդն իր մտադրությունների ո՞ր մասն է գաղտնի պահում։

— Կեսից ավելին։

— Իսկ եթե մեկը ոչ մի գաղտնիք չի պահում։

— Գաղտնիք չունեցողը հիմար է։

— Իսկ իր մտադրությունները թաքցնող մա՞րդը։

— Խորամանկ։

— Ո՞վ է ավելի երկարակյաց լինում, գաղտնապահը՝ թե բացսիրտը։

— Բացսիրտը։

Իշխանուհի Կամարան գաղպենից պատրաստված քաղցրավենիք բերեց և իմաստասերներին ստիպված եղան ընդհատել իրենց վեճը։

— Դու եղե՞լ ես Մասասանում,— իմաստասիրական բանավեճից առօրեական խոսակցության անցավ Տանոսը։

— Ոչ, չեմ եղել, ի՞նչ է այդ Մասասանը։

— Գյուղ է։

— Որտե՞ղ է գտնվում։

— Մակեդոնիայում։

— Ինչո՞վ է այն արժանացել քո ուշադրությանը։

— Այդ գյուղում մի զարմանալի մարդ է ապրում։ Նրա անունը Սելեստանոս է։ Նա համոզում է բոլորին, թե ամեն գիշեր հին աշխարհի մեծերից մեկը այցի է գալիս իրեն։ Երեք տարի առաջ Ալեքսանդր Մակեդոնացու հայր Փիլիպոսը իբր գիշերը այցելության է եկել Սելեստանոսին և զրուցել նրա հետ։

Հաջորդ օրը Սելեստանոսը ձայնը գլուխն է գցում և մարդկանց իր շուրջը հավաքում։ Նա հավատացնում է, թե Փիլիպոսը իրեն գաղտնիք է հայտնել։ Եվ Սելեստանոսը ցույց է տալիս Մասասանի մոտի փոքրիկ բլուրը։ Փիլիպոսը այդտեղ թաքցրել է մի սնդուկ ոսկի, ասում է Սելեստանոսը իր համագյուղացիներին։ Մարդիկ ոսկու անունը լսելով՝ մոռանում են, որ Սելեստանոսը խենթ է և սկսում են քարուքանդ անել գյուղին մերձ գտնվող բլուրը։

— Եվ ինչ, գտնո՞ւմ են ոսկին։

— Այո, իմաստասերգ Մովսես, գտնում են և սկսում փառաբանել Սելեստանոսին։

— Հետո՞։

— Հետո ասես մարդկանց շարությունը բռնում է և նրանք սկսում են հալածել Սելեստանոսին։

— Ինչո՞ւ։

— Պահանջում են, որ նա գարձյալ գանձերի տեղ ցույց տա։ Նրանք ստիպում են, որ տեսլային հանդիպումների ժամանակ Սելեստանոսը հին աշխարհի մեծերից իմանա, թե ինչ գանձեր կան թաքնված Մակեդոնիայի այս ու այն կողմում։ Սելեստանոսը խոստանում է կատարել համագյուղացիների պատվիրանը, բայց ահա երեք տարի է, ինչ հին աշխարհի թագավորները գանձի տեղ չեն ցուցանում նրան։ Այդ պատճառով էլ անխիղճ համագյուղացիները ծեծում են Սելեստանոսին։

— Ապերախտ մարդիկ են մասասանցիները։

— Այո,— համաձայնում է Տանոսը։

Հետո հույն իմաստասերն ասում է.

— Մի Սելեստանոս էլ Կոստանդնուպոլսում է ապրում։

— Նա ինչո՞վ է աչքի ընկնում։

— Նա էլ խենթ է և անունը Սելեստանոս։

— Միայն այդքա՞նը։

— Դե, իհարկե, ոչ։ Նա բնակվում է Կոստանդնուպոլսի կողքի մի անձավում, որը գտնվում է մեծ ճանապարհի վրա։ Երբեմն այդ անձավի կողքով է անցնում արքայական կառքը։ Այդպիսի դեպքերում ճգնավոր Սելեստանոսը բացականչում է. «Ջենոն»։ Զայնի արձագանքը տարածվում է շրջակայքում և թվում է, թե բոլոր կողմերից Ջենոն են կանչում։ Մի քանի տարի առաջ լուր տարածվեց, թե ճգնավորը մահացել է։ Բայց հենց որ Ջենոնի կառքը երևաց ճանապարհի վրա, անձավից դարձյալ

լսվեց նույն գոչյունը։ Կայսրի դրանիկները ոտի տակ տվին անձավը, բայց Սելեստանոսին չգտան։ Հետո կայսերական արքունիքում ծանրորեն նստեց սնոտիապաշտությունը։ Բարձրաստիճան արքունականներն ու գուշակները տարածեցին, թե աստծո կամքով Ջենոն անունը դարձել է բնության մի մասը, թե քարանձավից պիտի հուր-հավիտյան լսվի Ջենոն անունը։

— Այդպես էլ Սելեստանոսի կյանքը մնաց անորոշության մե՞ջ,— հարցրեց Մովսեսը։

— Այո։

— Ամեն ինչ հասկանալի է։

— Ի՞նչ ես ուզում ակնարկել։

— Կայսրին ձեռնտու չէ կեղծիքի բացահայտումը։ Հասկանալի է, որ Սելեստանոսը ողջ է և ապրում է նույն անձավում։ Բացառված չէ, որ կայսրին դուր գալու համար այդ կեղծիքը սարքել են հենց իրենք՝ Ջենոնի մերձավորները։

— Այդ մասին մտածել եմ նաև ես, բայց վախենում եմ բարձրաձայն խոսել Կոստանդնուպոլսում,— ասաց Տանոսը։

Բանավեճը վերսկսվեց կեսօրին։ Այս անգամ սկսեց հարցեր տալ Մովսեսը։

— Ինչպե՞ս կապրեր մարդկությունը եթե չլինեին ոչ աստվածներ, ոչ էլ աստվածային քարոզչություններ։

— Այդ դեպքում աշխարհում ոչ մի թագավոր չէր լինի, քանզի ամեն տեսակ աստված ու աստվածուհիներ նախ և առաջ ամրապնդում է երկրային տիրակալի գահը,— պատասխանեց Տանոսը։

— Բայց անիշխանությունն էլ կամայացնի տիեզերքը։

— Այո, կարգուկանոն չունեցող հասարակությունը հեռու չի գնա։

* * *

Նպատի փեշերի տակ, Սրաճանիի ափերին թեածում էր Նավասարդյան աստանմբությունը։ Թվում էր, թե Բախտասարի ձոր փնջվել է Հոմայն Հայքը։ Մի քանի օրով հայերը դարձել են վրանաբնակ, մրցատաղեր ու գինարբուք են սարքում, անուշում Հայկյան տոհմականը։

Նավասարդյան օրերին հայոց աստվածները Նպատի շրջակայքը հեղում են մի ամբողջ տարվա ուրախությամբ ու խենթությամբ։

Գուշակության օրն էր։

Նավասարդյան առնախմբությունները ավարտվում են գուշակություններով։ Բախտատուրի ծաղկազարդ բացատների այս ու այն կողմում այդ օրը նստում են Հայքի երևելի գուշակները և մարդկանց բախտ ըացում։

Ինչ էլ անես, մարդ, չես կարող խուսափել ճակատագրից։ Բախտը անսանձ ձի է, մարդը՝ ձիավոր։ Ձիու վրա ես, բայց քո գլխի տերը չես։ Առաջ ես շարժվում անդունդների եզրերով։ Քո խենթուկ ձին կարող է նետվել անդունդ և դու նրան պահել չես կարող, սա է քո բախտը։ Մի հպարտացիր ոչ հարստությամբ, ոչ քաջությամբ, ոչ էլ հնաբուն առհմով։ Բախտ-ձիու խենթության առջև անզոր են նույնիսկ ամենազոր աստվածները։

Դե եկ ու բացիր բախտդ, անցվոր։ Եկ ու մեղմացրու քո ձիու խենթությունը։

Բախտն էլ դիպված է, որից չես կարող փախչել։ Մի քաշվիր, մոտեցիր գուշակին, տես ինչպես է տնօրինում քո ապագան։ Նա չի խրտնեցնի քո բախտ-ձիուն։ Բոլոր գուշակներն էլ սրտապնդիչ խոսք ու սրտահաճո վերջաբան ունեն։

Գուշակությունը արթմնի երազ է։ Մոտեցիր, երբ գուշակն է կանչում քեզ։ Կյանքի հոծ ուղիներում քո բախտի թելը խճճվում է մի տեղ։ Դա նույնն է, ինչպես փակես ջրի առվակը և գետը լճանա։ Գուշակը քեզ կասի, թե ինչպես բացել հանգույցը, որ ջուրն անշեղ ու աննահանջ գնա իր ճամփով։

Այդ օրը ամենից վաղ արթնացել էր գուշակուհի Արածանուհին։ Նա եկել, նստել էր Բախտատուրի ժայռասեպի արևելյան կողմում։ Մեջքն այնպես էր հենել ժայռին՝ ասես Բախտատուրի տիրուհին լինի։ Երեսունհինգն անց էր, բայց դեմքը պահել էր հին օրերի գեղեցկությունը։ Նրա շրթունքներից կախվել էր կախարդ ու հրացայտ մի ժպտախաղ։ Պուլիկի բերանի նմանվող ակնափոսերում բիբերն այնպես անհանգիստ էին շարժվում՝ կարծես ընկել էին խոր ջրհորի մեջ ու չէին կարողանում դուրս գալ։

Ամեն գուշակուհի մի զենք ունի, որով խայծի պես իրեն է քաշում մարդկանց։ Արածանուհին երկու զենք ուներ՝ անսովոր բիբերը և շրթունքների ժպտախաղը։

Արածանուհին Բախտատուրի մոտ է եկել Ջորափտուն գյուղից, որ Բագավանից հեռու է տասը հրասախ։ Ամուսինը ոչ ծույլ է, ոչ աշխատասեր։ Շուրջ տարին բանում է, բանում, բայց չի հասցնում էշը ձիով փոխարինել։ Էշով հեռու չես գնա, հենց որ ձիավոր է հայտնվում պիտի մի կողմ քաշվես, որ ճամփա տաս նրան։ Ձիավորներն էլ բաղմանում են օրեցօր։ Ժամանակն ու մարդիկ ձի են հեծնում, իսկ Արածանուհու ամուսինը մնում է իր էշի վրա։

Եթե Արածանուհին գուշակություն չանի, տան գործերն ավելի վատ կլինեն։ Եղած էշն ու կահկարասին որ ծախեն՝ դարձյալ չեն կարող կուշտ փորով հասնել մինչև տարեվերջ։

Ինչ անի Արածանուհին։ Տարվա մեջ մի քանի անգամ հազիվ է գյուղից դուրս գալիս։ Այդ մի քանի օրում նա ավելի շատ ուշադրություն է բերում, քան ամուսինն ամբողջ տարում։ Եվ այսուհանդերձ ամուսինը դժգոհ է Արածանուհուց։ Ամուսինը ամենից շատ տրանջում է այն բանի համար, որ Արածանուհին ընդամենը երկու երեխա է ծնել։ Բա հայ կինը երկու երեխա կծնի՞։ Կինը կին է, երբ հինգից քսան երեխա է բերում։ Երկու երեխա բերող կնկանը պիտի բռնես ու գցես ջուրը տանի։ Բա աղջատ աղբա՞տ լինենք, երեխայո՞վ էլ աղքատ լինենք։ Թող դեմքդ կոշտ լինի, բայց երեխա ծնիր, երեխա՞։

Մի անգամ էլ Արածանուհու ամուսինը տան բակում պարանի վրա փռած լվացքաշորի մեջ նկատեց ծակոտկեն մի շրջազգեստ։ Ամուսինը պարանից քաշեց շրջազգեստը, ձեռքում ճմռթելով առն մտավ և, դեմ առնելով կնոջ քթին, ասաց.

— Սա ի՞նչ է, դու վարձա՞ի ես, թե իմ կինը։

— Գժվե՞լ ես, ի՞նչ է, դա ներքնաշապիկ է, որ տակից եմ հագնում,— փորձեց արդարանալ կինը։

— Ո՛չ, ես քեզ չեմ հավատում, հավանաբար դու այս ծակոտկենը հագնում ես այն ժամանակ, երբ ուրիշ տեղ ես գնում։ Այսպիսի շրջազգեստն է տղամարդուն պագշոտ դարձնում, այսուհետև ես չեմ թողնի, որ ոտդ տնից դուրս հանես։

Ասելն ասում էր, բայց երբ պակասում էր մառանի պարենն ու մարագի հարդը, նա ձենը փորն էր գցում ու համաձայնում, որ Արածանուհին մի քանի օրով շրջագայության դուրս գա։

Սովորական շրջագայություններն, իհարկե մեծ բան չեն տալիս։ Ուրիշ է նավասարդյան առնախմբության գուշակության օրը։ Գուշակների համար դա հինավուրց առածի այն օրն է, որ տարի է կերակրում։

Արածանուհուն թվում էր, թե ինքը ճիշտ է գուշակում մարդկանց մտադրություններն ու ապագան։ Մի անգամ այսպիսի բան

եղավ։ Երիտասարդ մի կնոջ բախտ էր բացում։ Արածանուհին նրան ասաց.

— Դու ամուսնացել ես հինգ տարի առաջ, բայց երեխա չունես։

— Ճիշտ է,— զարմացած արծաթանքեց կինը ու հարցրեց,— ինչպե՞ս իմացար։

— Դա արդեն իմ գաղտնիքն է,— պատասխանեց Արածանուհին։

— Ես երեխա կունենա՞մ, թե պիտի այսպես ամուլ մնամ,— նորից հարցրեց կինը։

— Կունենաս։

— Ե՞րբ։

— Եկող տարի։

Երկու տարի հետո երիտասարդ կինն իրոք երեխա է բերում և ամուսնու հետ ելնում ու գալիս Արածանուհու մոտ։ Նրանք հեռուները որպես ընծա բերում են երկու ձիաբեռ մարգարտահատիկ ցորեն։ Այդ տարին ասրափալլ լավաշի տեր դարձած գուշակուհին ամուսնու աչքում թագուհի էր երևում։

Արածանուհին գիտեր այնպիսի բաներ, որոնք անմատչելի են մնացած գուշակներին։ Ասենք՝ նա կարող էր նայել կնոջ սրունքին և ասուլդ ասել, թե քանի երեխա է ծնել։ Երբեմն հայացքը մի քանի ակնթարթ տնկում էր տղամարդու ճակատին և հայտնում նրա տարիքը։ Չէր սխալվում։

— Ինչպե՞ս իմացար,— հարցնում են նրան։

— Կնճիռների շարքից,— պատասխանում էր նա։

— Բայց իմ ճակատին կնճիռներ չկան,— ասում էր մեկը։

— Ամենաողորկ ճակատն էլ,— պատասխանում էր Արածանուհին,— կնճիռ ունի, որ ոչ տերն է տեսնում, ոչ էլ դիմացինը։ Իսկ ես ոչ միայն տեսնում եմ, այլ՝ հաշվում նրանց թիվը։

Արածանուհին հարուստ կապրեր, եթե Դվինում լիներ։ Սակայն ամուսինը չէր համաձայնի տնով-տեղով քաղաք փոխադրվել։ Հո հիմար չէ, որ իր սիրունատես կնոջը տանի ու ցույց տա քաղաքի փքվածներին։ Չէ, կինն ինչքան քիչ տղամարդ տեսնի՝ այնքան առաքինի կլինի։ Ինչ անես, էդ անտեր քաղաքում էլ տղամարդիկ շատ-շատ են։ Մարդը մի օր կլուծի տիեզերական բոլոր գաղտնիքները, ոչի՞նչ-ոչի՞նչ փակ չի մնա։ Գաղտնիք կմնա միայն կնոջ սեթևեթ հոգին և նրա հարաճոճ, փնտրող հայացքը։

Արածանուհին հույս ունի, որ այսօր պղնձե շատ դրամ կվաստակի։ Իսկ գուցե գործը հաջողակ լինի և մեկ-երկու արծաթի տեր դառնա։ Կարող է նաև ոսկի մի դրամ ձեռք բերել, որ կես տարվա ապրուստ է։

Ահա նրան մոտեցավ մի երիտասարդ և ասաց.

— Իմ անունը Կամսար է, կարո՞ղ ես մնացածն ինքդ ասել։

Արածանուհին երկար նայեց տղային, որ դեմքին դեռ աղվամազ չուներ և խոսեց.

— Դու սիրում ես մի աղջկա, որի անվան մեջ երկու ա կա։

Տղան մի պահ լռեցավ և զարմացած ասաց.

— Ճիշտ է։

— Մտադիր ես ամուսնանալ նրա հետ։

— Դա էլ է ճիշտ։

— Բայց այդ բանը դյուրին չի լինի։

— Ինչո՞ւ։

— Նրա վրա աչք ունի նաև ուրիշ երիտասարդ։

— Ո՞վ։ Գեղջավագի տղա Կո՞ղը։ Գայանեն չի սիրում նրան։

— Նրա անունը Կոզ չէ։

— Ապա ի՞նչ է։

— Չգիտեմ։

— Գուցե մեր հարևան ագարակի Հովսեփն է։

— Ոչ էլ նա է։ Ես կարող եմ միայն մի նշան ասել։

— Ի՞նչ նշան։

— Նրա անվան առաջին տառը ա է։

Կամսարը մի քիչ մտմտաց և հուսահատված ասաց.

— Չգտա։ Գուցե վաղարշապատցի է, Գայանեի հայրը Վաղարշապատում շատ ծանոթներ ունի։

— Նրա որտեղացի լինելը ես չգիտեմ։

— Իսկ ի՞նչ անեմ, որ իմ անծանոթ հակառակորդը հեռու մնա Գայանեից։

— Պուրակ տնկիր տուչոր ավաղուտում։

— Եվ դրանից հետո նրա ձեռքը չի՞ հասնի Գայանեին։

— Չի հասնի։

— Իսկ եթե նրա փոխարեն մի ուրիշը աչք տնկի Գայանեի վրա։

— Չգիտեմ, ես չեմ կարող կանխատեսել ամեն ինչ։

— Բայց դու կարող ես ուրիշ բան անել։

— Ի՞նչ բան։

— Կապ կապել։ Այնպես անել, որ աշխարհում ոչ մի տղա չկարողանա ոչ սիրահարվել, ոչ էլ մոտենալ Գայանեին։

— Չեմ կարող։

— Ինչո՞ւ։

— Որովհետև դա շատ դժվար է։

Կամսարը գրպանից հանեց մի բուռ պղնձե դրամ և, ցույց տալով Արածանուհուն, ասաց.

— Սա չի՞ կարող գործը դյուրացնել։

— Ոչ։

Տղան այս անգամ հանեց երկու արծաթ և շարունակեց.

— Իսկ սրա՞նք։

— Ոչ,— երկրորդեց Արածանուհին։

Հետո Կամսարը ցույց տվեց մի դեղին ոսկի.

— Իսկ սա՞։

— Ոչ,— պնդեց գուշակուհին։

— Այնուամենայնիվ, վերցրու այս ոսկին, դու առանց այն էլ շատ բան ասացիր, և խոսքդ է ոսկի, և՝ սիրտդ, հետևաբար վարձդ էլ պիտի ոսկի լինի,— և Կամսարը ոսկին հանձնեց Արածանուհուն։

— Մազերիցդ մի փունջ կտրիր և տուր Գայանեին,— ասաց գուշակուհին և ընդունեց ոսկին։

— Գայանեն ի՞նչ պիտի անի իմ մազերը։

— Պիտի կարի իր շրջազգեստի տուտի մեջ։ Թող աստված պահապան լինի և դառնաս քո սիրո տերը,— մաղթում է Արածանուհին և խաչակնքում երեսը։

Հետո գուշակուհուն սկսում են մոտենալ ուրիշ մարդիկ։ Մինչև կեսօր շատ մարդու բախտ է նայում։ Բայց Կամսարից հետո միայն պղնձե դրամներ էին տալիս ու մանր-մունր նվերներ։

Այդ օրը Արածանուհու մոտ գնաց նաև Թեժը։ Գուշակուհին հասկացավ, որ իր դիմաց կանգնած է բարձրաստիճան մի տիկին։

— Ես գիտեմ, թե դու ինչի մասին ես երազում,— ասաց Արածանուհին։

— Ինչի՞ մասին եմ երազում,— հարցրեց Թեժը։

— Զավակ չունես։

— Հավանաբար դու ճանաչում ես ինձ,— զարմացած ասաց Թեժը։

— Ոչ, ես քեզ առաջին անգամ եմ տեսնում։

— Իսկ ինչպե՞ս իմացար, որ ես մինչև հիմա զավակ չեմ ունեցել։

— Դա ես ասել չեմ կարող։

Թեժը տարուբերեց գլուխը և ասաց.

— Ինչ արած, քո գաղտնիքը թող քեզ մնա, ես միայն ուզում եմ, որ դու բացես իմ բախտը։

— Ամուսնուցդ բացի դու պետք է ոչնչի մասին չխորհես,— սկսեց Արածանուհին։

— Ես սիրում եմ իմ ամուսնուն և առանց նրան աշխարհն իմ աչքին կսևանա։

— Գուցե դա այդպես է, բայց քո հայացքում ես տեսնում եմ կորցրած մի ուրիշ աշխարհի ափսոսանք։

— Ես սեր չեմ կորցրել։

— Եվ, այնուամենայնիվ, դու մի բան ես կորցրել, որը թանկ է, ինչպես սերը։

— Մի՞թե իմ հայացքից երևում է դա։

— Այո։

— Դու զարմացնում ես ինձ, գուշակուհի։

— Զավակ ունենալու համար պիտի միայն ամուսնուդ տեսնես և մոռանաս ամեն բան։ Իսկ ես կօգնեմ քեզ։

— Ինչո՞վ։

— Կբացեմ քո բախտը։

— Դու բոլորի՞ բախտն ես բացում։

— Ոչ։

— Ինչո՞ւ։ Մի՞թե դա հնարավոր չէ։

— Ես օգնում եմ միայն նրան, ում բախտը փակվել է։

— Եվ դու տեսնո՞ւմ ես դա։

— Զգում եմ, տիկին։

— Այդ դեպքում օգնիր, որ բացվի նաև իմ բախտը։

— Վերցրու այս ճաճանչակնքի ծաղիկը, սա կոչվում է ձարխոտ կամ իգապտեր։

— Ի՞նչ պիտի անեմ։

— Կդնես քո և ամուսնուդ բարձի տակ։ Բայց պետք չէ, որ այդ մասին ամուսինդ իմանա։

— Ինչքա՞ն ժամանակ պիտի սա մնա բարձի տակ։

— Քսանչորս օր։

Թեժը գուշակուհուն մի ոսկի դրամ տվեց։

Դա Արածանուհու այդ օրն ստացած երկրորդ ոսկին էր։

Ամեն անգամ իմաստասեր Մովսեսը գուշակության օրը դուրս էր գալիս Լուսավորչի տաճարից, գնում ու հանդիպում Բախտատուրի մոտ և դիտում, թե նավասարդավորներն ինչպես են փակում տոնախմբությունը։

Աբեղա Արծանը նրան խորհուրդ էր տալիս ծանոթանալ գուշակուհի Արածանուհուն և զրուցել նրա հետ։ Սկզբում Մովսեսը սկսեց հեռվից-հեռու դիտել և չխանգարել նրան, հետո երբ տեսավ, որ նավասարդավորները ցրվում են և գուշակուհուն մարդիկ չեն մոտենում, քայլերն ուղղեց դեպի նա։

Արածանուհին Մովսեսի նափորտից կռահեց, որ նա եպիսկոպոս է։

— Ափսոս, որ սրբազան հոր համար ես ասելիք չունեմ,— արձագանքելով Մովսեսի ողջույնին փորձեց կատակի տալ գուշակուհին։

— Իսկ ես ասելիք ունեմ,— ասաց Մովսեսը։

— Ի՞նձ։

— Այո։

— Հաղիվ թե սրբազան հայրը որևէ բան ունենա հայտնելու ինձ պես հասարակ գեղջկուհուն։

— Քո անունը Արածանուհի է։

— Ճիշտ է, սրբազան հայր։

— Ինձ հայտնել են, որ դու իմաստունի պես ես քննում մարդկանց մտադրությունները։

— Դա ճշմարտությանն այնքան էլ մոտ չէ։ Մարդիկ անմատչելի բերդեր են, գուշակը՝ միայնակ զինվոր։ Ես ինչպես կարող եմ բացել դարպասները և տեսնել, թե ինչ կա այդ ամրոցներում։ Ես միայն ենթադրում եմ, սրբազան հայր, ինչպես միայնակ զինվորը կարող է ենթադրել փակ բերդի զորական ուժի մասին։ Գուշակությունը ենթադրություն է և միայն ենթադրություն։

— Մի՛ չանա նսեմացնել ինքդ քեզ։ Ասա ինձ, դու կարո՞ղ ես անվճար բախտ բացել։

— Բախտ բացելու ժամանակ ես չեմ մտածում վարձի մասին։

— Մի շտապիր։ Եպիսկոպոսական իմ աստիճանը թույլ չի տալիս, որ քո խոսքերը փոխհատուցեմ դրամով, որովհետև ի պաշտոնե ես պիտի արգելեմ գուշակությունը։ Դու ասում ես, թե ինձ համար ասելիք չունես։ Մի պահ պատկերացրու, որ իմ հանգին նափորտ չէ, ես սրբազան հայր չեմ, այլ սովորական մարդ։

— Չեմ կարող, սրբազան հայր։

— Ինչո՞ւ։

— Որովհետև քեզ համար անորոշ ավելի քիչ բան կա, քան ինձ համար, որովհետև դու ավելի մեծ գուշակ ես, քան բոլոր գուշակները միասին։

***

— Սրբազան հայր։

— Լսում եմ, Արծան։

— Երզնկայում երկրաշարժ է եղել։

— Ե՞րբ։

— Մի ամիս առաջ։

— Շա՞տ մարդ է զոհվել։

— Չգիտեմ, սրբազան հայր։

— Իսկ քեզ ո՞վ հայտնեց, որ այնտեղ երկրաշարժ է եղել։

— Աբեղա Վահունին, նա եկել է Երզնկայից։

— Ներս հրավիրիր նրան,— ասում է Մովսեսը։

Քիչ անց Լուսավորչի տաճար է մտնում Վահունին։ Կարծես մեկը նրա գլխից ու ոտից քաշել և մարմինը երկարուկ է դարձրել։ Նրան տեսնելով Մովսեսը ակամայից հիշեց իր մորը՝ տիկին Արեգուհուն, որի նման բարձրահասակ ոչ մի մարդ չկար խորոնքում։

— Ողջույն, սրբազան հայր,— ասաց Վահունին ու գլուխ տվեց։

— Ողջ լեր, աբեղա։

— Ինձ քեզ մոտ է ուղարկել Խոտակեր Աշոտը։

— Խոտակեր Աշո՞տ։

— Այո։

— Չեմ ճանաչում։

— Ճգնավոր է, երկար ժամանակ ապրել է Ոդմսու գյուղում, հետո փոխադրվել է Երզնկա։ Եղել է կարգալույծ եղած կաթողիկոս Գյուտի մտերիմներից։ Գյուտն է քո մասին պատմել Խոտակերին։

— Իսկ ի՞նչ ունի նա ինձ հայտնելու։

— Խճճված բան է ստացվել, սրբազան հայր։ Չգիտեմ, թե որտեղից սկսեմ իմ ասելիքը։ Երզնկայում աշխարհակործան երկրաշարժ եղավ։ Հազարից ավելի մարդ է զոհվել։ Համարյա կան-

գուն շինություն չի մնացել։ Փլված մի շենքում խոտակեր Աշոտը գտել է հնագիր մատյաններ։ Իմանալով, որ ես այս կողմերն եմ գալիս, այդ գրքերը տվեց ինձ, որ ես հանձնեմ քեզ։

— Ո՞ւր են դրանք։

— Ճանապարհին խլեցին իմ ձեռքից։

— Ո՞վ խլեց։

— Բյուզանդացի մի զորական։ Դա պատահեց Մկնաուինճ գյուղում։ Բյուզանդացի զորականները տակնուվրա արեցին իմ իրերը և բռնագրավեցին խոտակեր Աշոտի տված գրքերը։ Հետո նրանց գլխավորը գոռաց ու ինձ ասաց. «Մկնաուինճը բյուզանդական կայսրության եզրն է։ Մի հրաստախ այն կողմ Պարսից աշխարհն է։ Ուզում եմ ասել, որ դու այս գրքերը իրավունք չունես Բյուզանդիայից փոխադրել Պարսից աշխարհ»։ Ես բյուզանդացուն ասացի, որ սրանք հայերեն մատյաններ են, որ գտնվել են Երզնկայում։ Բյուզանդացին ավելի կոպտաբար պատասխանեց ինձ. «Երզնկան գտնվում է Բյուզանդիայի սահմաններում, հետևապես այնտեղ գտնված գրքերն էլ բյուզանդական են և ոչ թե հայկական»։ «Բայց այս մատյանների տառերը հայերեն են»՝ կողի անցա ես։ Բյուզանդացին շարունակեց մեծապետական դիրքերից. «Հունարենից բացի ուրիշ տառեր չպետք է լինեն, ոչ էլ ուրիշ լեզվով գրված գրքեր»։

— Դրանով էլ ավարտվե՞ց ամեն ինչ։

— Այո, սրբազան հայր։

— Իսկ ի՞նչ մատյաններ էին դրանք։

— Չգիտեմ։

— Բայց դու ասացիր, թե դրանք գրված են հայերեն տառերով։

— Այո, դրանք նման էին Մաշտոցի ստեղծած տառերին։

— Ի՞նչ, ինչպե՞ս թե նման էին։

— Ես իմ աչքով տեսա, սրբազան հայր։

— Զարմանում եմ, աբեղա։ Դու ուզում ես ինձ համոզել, թե Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերեն տառեր են եղել։

— Ես ոչինչ էլ չեմ ուզում համոզել։ Բայց հավաստում եմ, որ իմ տեսած տառերը նման էին մեր գրերին։

— Ես նախամեսրոպյան հայերեն գրեր չեմ տեսել։ Բայց այս ու այն կողմից լսում եմ, թե ինչ-որ մեկը տեսել է ինչ-որ մի տեղ։ Միմյանցից լսում ու միմյանց են հաղորդում, իսկ գրքերը մեջտեղ չեն գալիս։

***

Խոնավ գիշերը պինդ գրկել էր Բագավանը։ Չես կարող ասել, թե երբ պիտի ճաղատ դառնա ու լույսը բացվի։ Գիշեր կա, որ թվում է, թե միշտ էլ պիտի գիշեր մնա։

Մովսեսի տան դարպասի կոշնակը հնչեց՝ աղարտելով Բուն փողոցի գիշերային ալարկոտ անդորրը։

Կոշնակի ձայնը ուշ հասավ Մովսեսին։ Իմաստասերը դանդաղ ելավ մահճակալից և վառեց ձիթաճրագը։ Կոշնակը նորից հնչեց։

Մովսեսը շուրջառը ուսերին նետեց, դուրս եկավ բակ և, մոտենալով դարպասին, հարցրեց.

— Ո՞վ է։

— Շնգին իշխանը։

— Արծրունի՞ ես։

— Ոչ, Գնունիներից եմ։

— Բայց Շնգինն Արծրունյաց անուն է։

— Մայրս Արծրունյաց տնից է, ինձ կոչել են նրա հոր անունով։

— Իսկ այս տարաժամ այցելությունն ինչի՞ համար է։

— Ես եկա քո օգնությունը հայցելու, սրբազան հայր։

— Դա կարելի էր անել օրը ցերեկով։

— Չէի կարող, սրբազան հայր, առանց այն էլ ուշացել եմ, հորս վտանգ է սպառնում, ի սեր աստծո, օգնիր ինձ։

— Ինչո՞վ կարող եմ օգնել քեզ։

— Եթե դարպասը բացես՝ կասեմ ինչով։

Իմաստասերը ետ տարավ դարպասի սողնակը և ձիավորը մտավ բակ։ Նա իջավ ձիուց, քշեց թիկնոցի երկար քղանցքները և հետևեց Մովսեսին։ Մեծ սենյակում իմաստասերը մի ձիթաճրագ էլ վառեց։

Մովսեսը ուշադիր նայեց այցելուին։ Շնգին իշխանը համարյա պատանյակ էր. Վերջինս թիկնոցի տակից հանեց և սեղանի վրա դրեց ոսկյա մի ըմպանակ։

— Սա ի՞նչ է,— հարցրեց Մովսեսը և ձեռքն առնելով ըմպանակը սկսեց ձիթաճրագի լույսի տակ զննել այն։

Նախշազարդ, գեղեցիկ բաժակի պատին Մովսեսը նկատեց Նազանք լճի նկարը։

— Սա Խորխորունյաց տոհմի զինանշանն է,— ասաց Մովսեսը։

— Այո, սրբազան հայր։ Այս ըմպանակը Գադիշո Խորխորունուն է։

— Ինչպե՞ս է ընկել քո ձեռքը։

— Մի քանի տարի առաջ հայրս պատրաստվում էր Տիզբոն գնալ։

Շնգինը կանգ առավ և փորձեց կարգի բերել ասելիքը։

— Ինչո՞ւ էր Տիզբոն գնում,— հարցրեց Մովսեսը։

— Իբր ակնազարդեր էր տանում վաճառելու, բայց ճշմարիտն այն է, որ նրան Տիզբոն էր ուղարկում սպարապետ Վահան Մամիկոնյանը, որն այն ժամանակ Հայքի ոսկեհատն էր։ Սպարապետը հորս հանձնարարել էր աչքի պոչով նայել, թե Պարսից մայրաքաղաքում ինչ զորաշարժեր են լինում, ինչ լուրեր կան պարսկա-հեփթաղական կռիվներից, և, ընդհանրապես, պարսիկների զորական ուժն ինչքան է։

— Հետո՞։

— Ճանապարհվելիս հորս հանդիպեց Գադիշո Խորխորունին։ Հայրս մտերիմ էր Գադիշոյին, բայց նրա համախոհը չէր։ Գադիշոն հորս մի նամակ է հանձնում ուղղված Պերոզ արքային։ Վահան Մամիկոնյանը հորս խորհուրդ է տալիս կատարել Գադիշոյի պատվերը, որով կարելի էր քողարկել Տիզբոն մեկնելու նրա հիմնական նպատակը։

— Իսկ ի՞նչ նամակ էր դա։

— Հայրս այդ մասին ոչինչ չգիտեր։ Այդ նամակի պատճառով հայրս ծուղակի մեջ ընկավ։ Պարզվում է, որ Գադիշոն Պերոզին ինչ-որ բան է հաղորդում, միաժամանակ ասում, որ մի քանի օրից արքային նվեր կուղարկի ոսկյա այս ըմպանակը։ Պերոզասեր Գադիշոն կատարում է իր խոստումը և ըմպանակը հանձնում Վարազշապուհ Ամատունի իշխանին։ Հենց այստեղ էլ կծիկի թելը խճճվում է։ Հայրենիքի գավաճանը ամեն ինչի գավաճան է։ Վատաբարո Վարազշապուհը ստանում է ըմպանակը և խոստանում հասցնել Պերոզին։ Սակայն հենց այդ ժամանակ հայ նախարարները Շիրակում սպանում են Գադիշո Խորխորունուն։ Լսելով այդ մասին Վարազշապուհը թաքցնում է այս ըմպանակը և որոշում սեփականել։ Այդ դեպքից մի ամիս հետո Պերոզի գործակալները Տիզբոնում բռնում են հորս և պահան-

ջում ոսկի ըմպանակը։ Հայրս չի կարողանում արդարանալ և նրան նետում են Տիզբոնի հանցանաց խցերից մեկը։

— Քա՞նի տարի է, ինչ հայրդ Տիզբոնում է։

— Համարյա երկու։

— Պերոզն, իհարկե, որպես փրկագին, այս ըմպանակն է պահանջում։

— Այո, սրբազան հայր։

— Բայց սա ինչպե՞ս ընկավ քո ձեռքը, ինքը Վարազշապո՞ւհը տվեց։

— Ա՜յդ էր պակաս, գողն ինչու պիտի գողացածը ետ վերադարձնի։ Վարազշապուհի մեջ մի պաղունց մարդ էլ չկա, հետևապես նրա գործերի մեջ ազնվության նշույլ չի կարելի որոնել։ Վարազշապուհը մի դուստր ունի Տուտու անունով, ես սիրում եմ նրան։

— Վարազշապուհը գիտե՞ այդ մասին։

— Ոչ։

— Օրիորդ Տուտո՞ւն է քեզ տվել այս ըմպանակը։

— Այո։

— Բայց հայրը սրա համար կպատժի օրիորդին։

— Տուտուն պատրաստ է մեռնել ինձ համար։

— Եվ դու մտադիր ես սա տանել Տիզբոն և ազատել հորդ։

— Այո։

— Իսկ ես ինչո՞վ պիտի օգնեմ քեզ։

— Քանի օր է՝ որոնում եմ մարզպան Սահակ Բագրատունուն, սպարապետ Վահան Մամիկոնյանին և հայրապետ Հովհան Մանդակունուն։ Չեմ կարողանում իմանալ, թե որտեղ են նրանք։ Հիմա առանց նրանց համաձայնության չեմ կարող Տիզբոն գնալ։

— Ինչո՞ւ։

— Նախիջևանի և Արտազի կողմերին հսկում են սպարապետ Վահան Մամիկոնյանի հետախույզները։ Երկյուղում եմ բռնվելուց։ Կարևորն, իհարկե այս ըմպանակը չէ, սրա հետ ես կկորցնեմ հորս ազատելու հույսերը։

— Հոգ մի արա, լուսադեմին սպարապետ Վահան Մամիկոնյանը կժամանի Բագավան։

— Ինչպե՞ս թե։

— Նա Հայոց զնդի հետ Ծաղկոտն գավառում է։ Այսօր պիտի վերադառնա Դվին, կանցնի այստեղով։ Նա կօգնի քեզ։

Այս դեպքի մասին Մովսեսը իմաց չտվեց Աստատին։ Թող

թեժը չիմանա, խորհեց իմաստասերը։ Գագիշոն ոսկե ըմպանակ է ձուլել տվել Պերոզի համար։ Սա դեռ այն է, ինչ պարզորոշ է դարձել։ Երևում է, որ սողուն դավաճանը հաղար թելով կապված է եղել Պարսից տիրակալին։ Աստծուն էլ հայտնի չէ, թե որտեղ են վերջանում դավաճանության թելերը։

* * *

«Իմաստասերդ Մովսես։

Սահակ Բագրատունին ողջունում է քեզ։

Իմ բժշկին ուղարկեցի Բագավան։ Նրան քեզ մոտ կբերի Առատը։ Նրա ձեռքը անշունչ մարդուն ոտքի են կանգնեցնում։

Հիմա վերստին անդրադառնանք իմ տոհմի պատմությանը։ Դու համառում ես, որ Բագրատունյաց տոհմի նախնի Բագարատը հրեական ծագում ունի։ Ներիր ինձ, հարգարժան իմաստասեր, բայց դա ավանդական թյուրիմացություն է։ Իմ արյան մեջ հրեական ոչ մի կաթիլ չկա, չնայած եթե լիներ՝ ես ոչ նվաստ կզգայի ինձ, ոչ էլ կհպարտանայի դրանով։

Դու ասում ես, թե քննաբար ես նայում պատմական բոլոր գործոններին և պարտավոր ես տարեգրել միայն հավաստին։ Բայց իմ տոհմի մասին ես ավելի լավ գիտեմ, քան կարող են քեզ հաղորդել օտարագիր հիշատակարանները։ Ես ներքուստ համոզված եմ, որ իմ տոհմում խառնուրդ չկա։

Օտարագիր պատմիչները մի բանում անսահման ջանասեր են։ Մամիկոնյան, Բագրատունյաց, Պահլավունի և Հայքի ուրիշ երևելի տոհմերի բունը նրանք որոնում են օտար արյան մեջ։ Կարծես թե մեծությունները ու զորեղները դրսից են եկել Հայք։ Ոչ ոք չի բռնել պատմությունը նենգափոխողների ձեռքը։ Իսկ դու պարտավոր ես բռնել։ Եթե տուր ամեն տոհմի ծագումնաբանության կծիկը, որպեսզի տեսնես, թե որտեղ են հանգույցները։ Դու պարտավոր ես նկատել նաև, թե ինչն ինչին է հանգուցված՝ հայը հրեայի՞ն կամ պարսիկին, թե հայը՝ հային։

Մեծաթիվ աղխեր այս հողից են ցրվել աշխարհի մյուս կողմերը։ Սփռվելու, ցրվելու արգասիք է Հայքի Ցրոնք տեղանունը։ Մենք մեր արյունից շատ ենք տվել մյուս ազգություններին։ Այդ մասին լռում են օտարագիր հիշատակարանները։ Իհարկե, չի կարելի ասել, թե Հայքը անմատչելի կղզի է եղել ուրիշների համար։ Բայց ճշմարտությունն այն է, որ հարյուրը գնացել է, մեկը եկել։

Այդպես է և իմ տոհմածառը։ Բագրատունիներից գնացել ու այլևայլ ազգերի երևելի գործիչներ են դարձել Բագրատիդ, Բագրատիգես և Բագրատիոն անուններով։ Իսկ դրսից ոչ ոք չի մերվել մեզ հետ։ Մենք աշխարհին պարտք չենք, աշխարհն է մեզ պարտական։

Մենք՝ Բագրատունիներս, սերնդե-սերունդ բանավոր մի զրույց ենք պահում։

Մեծ ջրհեղեղի ժամանակ Նոյի հետ տապան է նստել ու Մասիսի կատարը բարձրացել Բագրատունյաց նահապետը՝ Բագարատը։ Ջրերն իջնելուց հետո հողի վրա առաջինը ոտք է դրել իմ այդ նախապապը։ Մասիսի թիկունքի երկրամասը նրա անունով կոչվել է Բագրևանդ։

Քո կարծիքով սա ավելի հավաստի չէ՞։ Չէ՞ որ Բագրևանդն ավելի մոտ է Մասիսին, քան Հրեից աշխարհին։

Մեր հնաբուն տոհմերի արմատները փորփրում և դրսեկ ավիշ են որոնում օտարազգի քարոզիչները։

Կանգ առ, իմաստասերդ Մովսես։ Ոչ ջուր լցրու նրանց ջրաղացին, ոչ էլ վավերացրու օտարածին կեղծիքը։ Ինքնախարազանումով մարդ ոտնատակ է տալիս իր արժանապատվությունը։ Հայկական խաղողը սնունդ է առնում հայոց ջրերից ու արևից։

Ես ընդունում եմ, որ պատմության հեռատեսները քեզ ավելի տեսանելի են, քան ինձ պես տհասներին։ Բայց ես ինձ ավելի լավ եմ ճանաչում։

Ներիր ինձ, իմաստասերդ Մովսես։ Ես կարող եմ խարխափել պատմության մեծ պողոտաներն անցնելիս, բայց իմ տոհմի պատմուղիներում չեմ մոլորվի։

Ես չեմ պարտադրում, որ դու վերածևես քո գրածը, բայց գիտցիր, որ իմ տոհմի մասին ասածդ ճշմարտապատում չէ։

Օտար արյունը պարտքի նման է, մի օր պիտի վերադարձնես։ Պարտք են անում խեղճերն ու թույլերը, իսկ Հայկ տոհմապետի ժամանակներում մեր նահապետները խեղճ ու թույլ չեն եղել։

Արևը նախ դիպչում է Մասիսի կատարին և նոր ջերմացնում մնացած աշխարհը։ Իմ նախապապը Մասիսի կատարից է իջել աշխարհի վրա»։

***

Մաշմաշը դարձավ պարագնաց։ Տեղից-տեղ էր անցնում, խուսափում ծանոթ ու հարազատ վայրերից, օրվա մեջ երբեմն երկու անգամ անվանափոխվում։ Այնքան ծարիր էր քսել դեմքին, որ երևսի մաշկը ցավում էր։ Անօգնական էր, սնտեր, հոգնատանջ։ Նա կարող էր թափառ կյանքի տառապանքները մի կերպ տանել, եթե ստիպված չլիներ անքուն մնալ։ Հենց որ պառկում էր և փորձում քուն մտնել՝ իսկույն ընկնում էր երազների աշխարհը։ Միշտ կրկնվում էր նույն տեսարանը։ Մաշմաշն ընկնում է մի մեծ կաթսայի մեջ։ Բայց այդ կաթսան նման էր խոր անդունդի։ Մաշմաշը ջանում է մագլցել վեր՝ չի կարողանում։ Արթնանում է։ Պուտ-պուտ քրտինքը սառչում է նրա դեմքին։

Օրվա որ ժամին էլ փորձեր քնել՝ կրկնվում էր նույն երազը։ Եվ միշտ ընկնում էր անդունդի նմանվող նույն կաթսայի մեջ։ Հետո ճչում էր ու արթնանում սարսափահար։ Ակներևաբար, չկա ավելի ծանր բան, քան մահաբեր երազի կրկնությունը։ Մի անգամ հայելու մի կտորի մեջ տեսավ իրեն։ Զգիտեր, որ ամբողջովին սպիտակամազ էր դարձել։ Չճանաչեց ինքն իրեն։ Մրջնիկը նրան հասցրել էր վաղահաս ծերությունն ու հանապազօրյա տանջանքի։ Ի՞նչ անել, մի՞թե չի կարելի հարթել իր կյանքի ճամփան, նորից մարդ դառնալ ու նմանվել ամենքին։

Ամենից շատ նրան հալածում էր մշտագալ երազը։ Ոչ մի կերպ հանգրվան ու հանգիստ չէր գտնում։ Այդպիսի ծանր երազով չես կարող պարագայել աշխարհում։ Կամաց-կամաց հասկացավ, որ ինքն այդ երազից չի կարող ազատվել, քանի դեռ աշխարհում ապրում է Մրջնիկը։ Վիճակ արկանել պետք չէ։ Հարկավոր է Մրջնիկին նետել անդունդանման կաթսայի մեջ։

Բռնեց Վաղարշապատ տանող ճամփան։ Թվում էր, թե նրան առաջ է մղում մի անտես, աներկյուղ ոգի։ Ոչ ոքի չէր տեսնում։ Նրա հայացքը կուրացել էր։ Հասավ Արեգ դարպասին, կանգ առավ ծաղկած բալենու տակ և ձեռքը տարավ ծոցագրպանը։ Համոզվելով, որ դաշույնը տեղում է, շարունակեց ճամփան։ Քաղաքի փողոցներով անցնելիս ոչ ոք չէր նայում նրան։ Մաշմաշը ոչ աղքատակերպ էր, ոչ էլ նման էր ուխտագնացի։

Ահա և էջմիածնի մայր տաճարը։ Մաշմաշը բակ մտավ և շարժվեց դեպի Մրջնիկի աբեղայական խուցը։ Զարմացավ, տեսնելով, որ խցի դուռը բաց է։ Ներս մտավ։ Զուտամյալ Մրջնիկը անվրդով քնել էր թախտի վրա։ Մաշմաշը ալքերը կկոցեց և սուր ու շար հայացքը ուղղեց նրա կողմը։ Մոտեցավ և Մրջնիկի վրայի ծիրանաթույր վերմակը շպրտեց դեպի խցի դուռը։ Մրջնիկը դանդաղ բարձրացավ տեղից և նստեց թախտի վրա։ Հետո բացեց ալքերը և, տեսնելով փայլատակած դաշույնը, փոթնեց ճչալ։ Չհասցրեց։ Մաշմաշը դաշույնը խրեց աբեղայի սիրտը։

Աբեղաներից ոչ ոք չտեսավ, թե Մաշմաշը երբ խուց մտավ և երբ հեռացավ։

Մրջնիկը միանգամից շունչը չփչեց։ Արյունաքամ լինելով, սողալով շարժվեց դեպի դուռս։ Երիտասարդ մի աբեղա նկատեց Մրջնիկին և բացականչեց.

— Սպանությո՞ւն, սպանությո՞ւն...

Տաճարի բոլոր աբեղաները հավաքվեցին մեռնողի շուրջը։

— Ո՞վ էր, Մրջնիկ, դու չճանաչեցի՞ր նրան,— ջանում էին որևէ բան իմանալ աբեղաները։

Մեռնողի անբոց հայացքում դիվային մի կայծ շողաց։ Ես իմ մահով էլ պիտի հարվածեմ նրան, անցավ աբեղայի մտքով և երբ նորից հարցրին, թե ով հարվածեց, Մրջնիկը հանդիստ պատասխանեց.

— Հայրապետի եպիսկոպոս Մովսեսի գործակալը։ Թող հայրապետը իմանա, որ ինձ սպանել տվեց Մովսեսը։

Մրջնիկի խոսքը զարմացրեց հավաքվածներին։ Նրանք չկարողացան նոր բան իմանալ, որովհետև քիչ հետո աբեղան շունչը փչեց։

Ոչ ոք չհետապնդեց մարդասպանին։ Աբեղաները կարծում էին, թե նա թաքնվել է քաղաքի նկուղներից մեկում։

Իսկ այդ ժամանակ Մաշմաշը շարժվում էր դեպի Դվին։ Նա քայլում էր անվախ, անղգուշաբար, թեթևացած սրտով։ Նրան թվում էր, թե ինքն անօրինակ սիրանք է գործել, թե սպանելով Մրջնիկին՝ Հայքն ազատել է արնախում հրեշից։ Քայլում էր անցուկ, գլխաբաց, անտրտում։

Սկզբում նա Դվին չմտավ։ Շրջանցեց քաղաքի պարիսպներն ու հասավ Երասխին։ Եղեգնուտների մեջ դտավ ծանոթ նրբուղին և մոտեցավ իր թաքստոցին։ Ձեռքերով քանդեց հողը և դուրս հանեց իմաստասեր Մովսեսի մատյանի մագաղաթները։ Ապա թևի տակ դրեց դրանք ու ետ դարձավ։

Նա անվարան մոտեցավ ասպետ Սահակի ապարանքին։ Ոչ ոք չփակեց նրա ճանապարհը, ոչ ոք ոչինչ չհարցրեց։ Մաշմաշը

մտավ դղյակ, բարձրացավ կճասալ սանդուղքներով, թեք տակի մագաղաթները դրեց այնտեղ, որտեղից վերցրել էր։ Հետո հասավ դղյակ-ամրոցի վերին աշտարակի բոլորակին։ Հանեց աշտարակի մասիսահայաց պատուհանի պարակալը և առանց հապաղելու իրեն նետեց ներքև։

Մեռավ առանց ճիչ արձակելու։

Հենց այդ ժամանակ Գվինի կաթողիկոսարան հասավ էջմիածնի մայր տաճարի արեղաների պատվիրակությունը։ Արեղաները Հովհան Մանդակունուն զեկուցեցին Մրջնիկի սպանության մասին։ Ապա հայրապետի առջև դրեցին գառնենու մեջ փաթաթված ոսկիների մի կույտ։

— Սա ի՞նչ է,— հարցրեց Հովհանը։

— Մարդասպանը այս ոսկիները մոռացել և թողել է Մրջնիկի խցում։

— Քանի ոսկի է։

— Ինը հարյուր իննսուն։

— Բայց ո՞ւմն են այս ոսկիները, մարդասպանի՞նը թե Մրջնիկինը։

— Չգիտենք, հայրապետ։

— Մրջնիկը կարո՞ղ էր այսքան հարուստ լինել։

— Աբեղան աղքատ մարդ էր, հայրապետ, նա մի ոսկի էլ չուներ։

— Իսկ ինչո՞ւ պիտի մարդասպանը իր ոսկիները տաներ և թողներ աբեղայի խցում, խելքին մոտ բան չէ։

— Չգիտենք, հայրապետ, չգիտենք։

— Դուք բոլորդ հավատո՞ւմ եք, որ Մրջնիկն ասել է, թե իրեն սպանել է Բագրևանդի եպիսկոպոս Մովսեսի գործակալը։

— Այո, հայրապետ, մեր ականջով լսեցինք այդ բառերը,— հաստատեցին աբեղաները։

— Բայց չէ՞ որ դա անհավանական է։

— Հայրապետ, մենք պատմեցինք այն, ինչին ականատես ենք եղել, և ասացինք այն, ինչ լսել ենք անձամբ։

* * *

Մրջնիկի սպանության լուրը դուրս եկավ Վաղարշապատից և հասավ Հայքի բոլոր կողմերը։ Ապա ծամծմվեց տաճարներում ու եկեղեցիներում և վերածվեց իմաստասեր Մովսեսի դեմ ուղղված հաղարաճանկ բամբասանքի։ Հոգևոր հայրերը զարմանում էին, թե կաթողիկոս Հովհանը ինչու Մովսեսին չի ենթարկում բանադրանքի։

Քյփչոցի զալարափող դարձավ էջմիածնի մայր տաճարի արեղա Կոթկոթը։ Մրջնիկին նա չէր սիրում, կենդանության օրոք նրան ոչ մի սրտամոտ խոսք չէր ասել։ Եվ, ընդհանրապես, ծանրամարմին ու ծանրալեզու Կոթկոթը արեղաների շրջանում ոչընչով աչքի չէր ընկնում։ Առում էր նրանց, ովքեր կարող են հանպատրաստից պերճախոսել և ցուցանել իրենց մտքի գերազանցություններ։ Շատ տարիներ առաջ էջմիածնի մայր տաճարում հավաքված իմաստասերները բանավեճի մտան պարբ բառի շուրջը։ Ամեն մեկը մի բան էր ասում։ Շատերը կարծում էին, թե դա փոխառություն է, բայց դժվարանում էին ասել, թե որ լեզվից։ Հենց այդ ժամանակ էլ կայծքարի պես փայլատակեց Մովսեսի միտքը։ Նա ասաց.

— Տաղտուկ, և երիցս տաղտուկ են ձեր վեճերը։ Օրինաչափություն կա և բնության մեջ, և մարդկային կյանքում, և մտածողության մեջ, և լեզվում։ Միավանկ բառերի մեծ մասը ստեղծում է ավյալ լեզվի տեր ժողովուրդը։ Հայերենի միավանկ բառերը ստեղծվել են մեր ազգության կազմավորման վաղընջական փուլում, մեր ազգի թոթովախոս տարիքում։ Այդ ժամանակ են ստեղծվել հայերեն մաղ, մատ, քիթ, ոտ, ձեռք, ունք, աչք, մազիկ, պորտ, այտ, ջուր, տուն, մութ, պուտ, քուն, ձի, ծունկ բառերը։ Այս բառերի հասակակից է նաև պարը։ Պար նշանակում է դուրս։

Ազմկարար իմաստասերներից մեկը չհամբերեց և բացականչեց.

— Դա հիմարություն է, պար բառն ինչո՞ւ պիտի դուրս նշանակե։

— Պար նշանակում է դուրս,— պնդեց Մովսեսը և շարունակեց,— դա եղել է այն ժամանակ, երբ մարդիկ կարծում էին, թե աշխարհը լցված է աստվածներով։ Որսի գնալուց առաջ նրանք սկսում էին ձեռքերով ու ոտքերով շարժումներ կատարել և հաջողություն աղերսել աստվածներից։ Այդպես էին անում նաև այն ժամանակ, երբ ուզում էին իրենց գոհունակությունը հայտնել նույն աստվածներին։ Պարելիս մարդը դուրս է գալիս իր առօրեական վիճակից։ Հետագայում է պարը պար դարձել՝ ժամանակակից ընկալումով։

Իմաստասերներն սկսեցին մի-մի բառ ասել։ Մովսեսը պիտի մեկներ այդ բառերը, ամեն անգամ ապացուցելով, որ պար նշանակում է դուրս։

— Պարագիծ,— ասաց իմաստասերներից մեկը։

— Դրսի գիծ, եզր,— պատասխանեց Մովսեսը։

— Պարագա։

— Իրագրություն, հանգամանք, իրավիճակ, որի մեջ ընկնում է մարդը։

— Պարագայել։

— Շրջագայել, դրսում ման գալ։

— Պարագնաց։

— Շրջմոլիկ, դրսում թափառող։

— Պարականոն։

— Անսովոր, կանոնից դուրս։

— Պարան։

— Դեպի դուրս երկարող հաստ թել, ճոպան։

— Պարանոց։

— Մարմնից դուրս ցցված ելուստ, վիզ։

— Պարապինդ։

— Դրսից պնդեցրած, պարուրած։

— Պարավանդ։

— Ոտնակապ, շղթա, դրսից կալանդող իր։

— Պարեգոտ։

— Գոտուն շրջապատող հանդերձ, պատմուճան։

— Պարիսպ։

— Դրսի պատ։

— Պարկուճ։

— Սերմերն ամփոփող անոթ։

— Պարման։

— Ման նշանակում է մանուկ, պարման նշանակում է մանկության սահմանն անցած մարդ, այսինքն երիտասարդ։

— Պարսատիկ։

— Դուրս նետվող քար։

— Պարտք։

— Դուրս տարված, ուրիշին տրված դրամար կամ իր։

— Հայկական պար։

— Ամենևին էլ լեռների շուրջպար չէ։ Հայկական պար նշանակում է հայկական լեռ։ Երկրից դուրս ցցված զանգվածը կամ ելուստը կոչվում է լեռ կամ պար։

— Մեծ Պարնի։

— Մեծ Պարնի նշանակում է մեծ լեռ։

Այդ բանավեճից հետո Կոթկոթը չի հանդիպել Մովսեսին։ Բայց հեռվից-հեռու ատում էր նրան։ Նա դիտեր, որ Մրջնիկի՝ մահից առաջ ասված խոսքը սուտ է, զրպարտություն։ Բայց հիմա ոչ ոքի չես համոզի, թե Մրջնիկը զազրախոսել է։ Ամենքը կարծում են, թե մարդը առավել ճշմարտախոս է դառնում մահից առաջ։

Կոթկոթը օրնիբուն զբաղված էր եպիսկոպոս Մովսեսին բամբասելով։ Ում հանդիպում էր՝ հետը զրույցի էր բռնվում և խոսքը շուռ տալիս Մովսեսի շուրջը։ Լսել էր, որ Տափերական դաշտի զեփյուռը մարդու խոսքը թևին է առնում ու տանում Հայքի բոլոր կողմերը։ Իրիկնադեմին դուրս էր գալիս քաղաքից, մտնում Վաղարշապատի արևմտյան կողմի գերեզմանատունը, նստում որևէ շիրմաքարի վրա և ասում.

— Լսեք ինձ, հանգուցյալների ոգիներ, և դուք՝ Հայքի բոլոր կողմերում ապրող ողջերդ, Բագրևանդի եպիսկոպոս Մովսեսը մարդասպան է։ Մանակեցեք, այպանեցեք նրան ձեր ամբողջ ուժով։ Նա այն խեղկատակներից է, որ աստծուն էլ չի խնայում։ Հաղար ցավ տուր նրան, աստվածդ ամենակարող։

Մի անգամ կաթողիկոս Հովհանը կանչեց Կոթկոթին և նրան ասաց.

— Աբեղա, դու ամաչել չգիտես, ամոթանք չունես և օր ու գիշեր զբաղված ես եպիսկոպոս Մովսեսին բամբասելով, դա վայել չէ քո կոչումին։

— Մրջնիկին սպանել է եպիսկոպոս Մովսեսի գործակալը։

— Դա ճիշտ չէ, աբեղա, Մրջնիկին սպանել է ասպետ Սահակի նախկին զորական Մաշմաշը, որը չի ճանաչում Մովսեսին։ Սպանության օրը մեկը տեսել է, թե Մաշմաշը ինչպես է մտել մայր տաճարի բակ։

— Այդ դեպքում Մրջնիկն ինչո՞ւ է մահից առաջ տվել Մովսեսի անունը։

— Չարությունից, աբեղա, չարությունից։

— Հայրապետ, մարդիկ ուրիշ բան են ասում։

— Ի՞նչ են ասում։

— Ասում են Մովսեսը հայրապետ Հովհանի դասընկերն է, այդ պատճառով էլ նրան կարգալուծ չի անում։

— Դա էլ զրպարտություն է, աբեղա, չի կարելի կարգալուծ անել մեկին, որն անմեղ է և ոչ մի առնչություն չունի Մրջնիկի սպանությանը։

***

Այդ գարունը Հայք մտավ հապճեպ, տագնապալից։ Ասում են ամեն ժողովուրդ հարյուր տարվա մեջ մի բախտորոշ գարուն է ունենում։ Գուցե այս մեկն էլ հայկյան գարունն էր։

Ներսեհապատի հաղթությունից հետո Հայքը լցվել էր տարտամ ու գաղջ մի լռությամբ։ Պերոզն ասես մոռացել էր Հայքի ճամփան։ Հեփթաղները նեղում էին պարսիկներին։ Սակայն մարզպան Սահակ Բագրատունին և սպարապետ Վահան Մամիկոնյանը գիտեին, որ Հայոց անպարիսպ երկրի երկինքը ամենապայծառ օրն էլ կարող է ամպաբեր դառնալ։ Հայքում հանկարծահաս են և դժբախտությունը և հաջողությունը։ Հայի բախտի պատը չի պատում տևական խաղաղության մամուռով։

Միրանի հագած Արածանիի ափերին հայտնվեցին առաջին ուխտավորները։ Ատատը զարմացավ՝ Բախտատուրի մոտ տեսնելով թաղիքե վրանները։ Ժամանակից շուտ ոչ ծիտն է ծլվլում, ոչ էլ կկուն է կանչում, մտածեց Ատատը։ Ամառը կարաս բացող մարդը մի փորացավ կունենա։

Կասկածանքը ստուգելու համար ասպետ Սահակի կապարճակիրը սկսեց թափառել Բախտատուրի մոտակայքում։ Հերձվածողների խաժամուժ էր։ Նրանց մեջ կային նաև կարգալուծված աբեղաներ։ Խաժամուժի հոգևոր առաջնորդը աբեղա Կոթկոթն էր։ Ատատը մի օր խառնվելով կեղծ ուխտավորներին, իմացավ, թե այդ մարդիկ ինչու են վրան խփել Բագավանի մոտ։ Իմացավ, բայց այդ մասին ոչ ոքի չհայտնեց։

Հերձվածողների հավաքները սովորաբար տեղի են ունենում իրիկնապահին, մութն ընկնելուց առաջ։ Դա հավաքի պատահական ժամ չէր։ Ատատը լսեց Կոթկոթի խոսքը.

— Հովիվներն այս ժամին են մակաղում իրենց հոտերը։ Ես պետք է մի մեծ գաղտնիք բացահայտեմ։ Ոչխարը մակաղելուց հետո է մարդու միտքը դառնում քարոզունակ։ Մարդուն հոգեպես փոխելու, նրան նոր գաղափարներով զինելու համար

չկա ավելի հարմար պահ, քան երեկոն։ Հին իմաստասերներից մեկը ամբողջ օրը խորհում էր, խորհում և իր մտքերը գրի առնում միայն իրիկնադեմին։ Ցերեկը մարդու միտքը հազար կողմ է թռչում։ Մարդ կենտրոնանում է միայն երեկոյան։ Իսկ արդ լսեք, թե ինչ պիտի ասեմ ես։

Կոթկոթը մի երկար ճառ է ասում։ Նրա խոսքերի մեջ պատդամ ու նպատակ չկա։ Եվ պիտի ատել Քրիստոսին, և հավատալ նրան։ Կարելի է հավատալ նաև զորտին կամ զոմեշին։ Կարևորն աստվածացնելն է։ Կապուտակի մեջ պիտի տեսնել նաև ճերմակը։ Բնության մեջ մաքուր թույր չկա։ Հանճարեղ գաղափարախոսություն չկա, ոչ մի քարոզ երկվորյակ ծնունդներ չի ունենում։ Բոլոր քարոզիչների ուսկանների մեջ ընկած ձկները լինում են տարբեր մեծության։

Ատատին թվում էր, թե Կոթկոթը խելառ էր և զարմանում էր, թե երեսուն-քառասուն այրեր ինչպես են ակնապիշ լսում նրան։

Հետո Կոթկոթը խոսում է եպիսկոպոս Մովսեսի մասին.

— Մովսեսը մարդ չէ։ Օրորոցում քաջքերը փոխել և նրա տեղը դև են դրել։ Այդ դև Մովսեսը սպանել է Հայքի ամենաանմեղ մարդուն՝ աբեղա Մրջնիկին։ Իր ամբարիշտությամբ Մովսեսը պղտորել է ամենքի հոգին։ Եթե նա շարունակի ապրել, ապա աշխարհում համատարած ամլություն կլինի։ Նա արտասովոր դրագետ է։ Իսկ արտասովոր դրագիտությունից մարդիկ օգուտ չունեն։

Մեկն ընդհատեց Կոթկոթին և ասաց.

— Ասում են՝ նա հիվանդ է և երկար չի ապրի։

— Չի կարելի թույլ տալ, որ նա մեռնի,— դայլայացած արձագանքեց Կոթկոթը։

— Ինչո՞ւ։

— Մենք պետք է սպանենք նրան։ Չարագործին պիտի սպանել տանջահար անելով։ Դա լավ դաս կլինի կաթողիկոս Հովհան Մանդակունուն, որը Մովսեսի թելադրանքով ոտնատակ է տվել ամենքիս իրավունքները։ Մովսեսի լեզուն պիտի պապանձեցնել հրե ճարակի մեջ։

— Ինչպե՞ս,— հարցրեց մեկը։

Կոթկոթը դարձավ գործարար.

— Մերձակա գյուղերից պետք է ձեթ հավաքենք և պատրաստենք մի քանի հարյուր կանթեղներ։ Հետո կասկած չհարու-

ցելու համար ամոթխած քայլվածքով կշարժվենք դեպի Բագավան ու կանգ կառնենք Բուն փողոցում, եպիսկոպոսի տան դիմաց։

Կոթկոթի ձայնը դարձավ խռպոտ։ Նա լռեց։ Ատատը համոզված էր, որ մոլեռանդ աբեղան ամեն ինչ չասաց։ Կոթկոթը չի բավարարվի ճոռոմ կոչով։ Խաշխաշի մասին նա լռեց։ Ատատը գիտեր, որ Կոթկոթը Յոթնփորակյան բագինք գավառից մի պայուսակ դեղին խաշխաշ է բերել։ Այդ խաշխաշն ուտողը ընկնում է խելացնոր հափշտակության մեջ։ Ջար ու բարի բոլոր քարոզիչներն էլ նեղ օրվա համար մի բան են պահում։ Ինչ-որ բան թաքցնում է նաև Կոթկոթը։ Բայց ի՞նչ, դժվար է ասել։

Ատատը մի պահ պատկերացրեց, թե այս թոկը կտրածները ինչպես են իրենց կանթեղներով հրո ճարակ դարձնում Մովսեսի տունը։

Ատատն իմացավ խելացնորների արշավի օրը։ Բայց այդ մասին ոչ ոքի չասաց։ Քաջ զորականը համոզված էր, որ ինքը միայնակ կխափանի խաժամուժի գրոհը։

Ահեկան ամսվա երեկկան օրվա օրպատն էր։ Գարնան թովչանք կար Բագավանի բոլոր կողմերում։ Մի մեղմիվ խաղաղություն էր թեածում Բուն փողոցում։ Բախտատուրի կողքին խփած վրանները դատարկվեցին և խաշխաշով հարբած խաժամուժը Կոթկոթի գլխավորությամբ շարժվեց դեպի Բագնաց ավան։ Բայց երկու հարյուր քայլ չարած նրանց առջև տնկվեց ղինավառ Ատատը։ Պարող նժույգի վրա պինդ նստած Ատատը նման էր դյուցազուն մենամարտիկի։ Ոնց որ հեքիաթից մեկը դուրս գա ու կանգնի քո առջև։

— Կանգ առեք,— սպառնագին ձայնեց Ատատը։

— Դու ո՞վ ես,— հարցրեց Կոթկոթը հանկարծակիի գալով։

— Ես տասներեքերորդն եմ,— պատասխանեց Ատատը։

Հերձվածողները ատում են տասներեք թիվը։ Ինչո՞ւ են ատում, տասներեքն ի՞նչ վանող ուժ ունի։ Հիսուս Քրիստոսն ուներ տասներկու աշակերտ, իսկ տասներեքերորդը ինքն էր։ Այնպես որ տասներեքի ատելությունը կապված է Քրիստոսի անվան հետ։ Միով բանիվ տասներեքն ատել՝ նշանակում է ատել Քրիստոսին։ Ատատը պատահաբար չէր իրեն անվանել տասներեքերորդ։ Նա գիտեր, որ դա պիտի դայրացներ հերձվածողներին։ Իսկ ինքն ուզում էր, որ նրանք զայրանան։

— Դու ի՞նչ ես ուզում,— շփոթված հարցրեց Կոթկոթը։

— Ետ դարձե՛ք ու հեռացեք Բախտատուրից և եթե ուզում եք ողջ մնալ՝ այլևս ոտ չդնեք այս կողմերում,— հրամայեց Ատատը։

— Բռնե՛ք և ձիուց իջեցրե՛ք նրան, նա վատաբարո մովսիսական է,— իր համախոհներին դիմեց Կոթկոթը։

Ատատն ասես դրան էր սպասում։ Նա ետ դարձրեց նժույգի գլուխը, հետո նորից շրջվեց դեպի խաժամուժը և իրար հետևից երեք նետ արձակեց։ Երեքն էլ խրվեցին Կոթկոթի սիրտը։ Աբեղան երերաց և փռվեց գետնին։ Խաշխաշով հարբածները տեսան իրենց առաջնորդի մահը, բայց ոչ կանգ առան, ոչ էլ ետ դարձան։ Պատշաճ հեռավորությունից նրանց շարժումներին հետևող Ատատը գլխի ընկավ, որ ինքը չպետք է խղճա ոչ ոքի։

Խաժամուժն ընկավ նետերի տարափի տակ։ Խելքները կորցրած հերձվածողները սկսեցին վառել իրենց կանթեղները։ Իրիկնային մթնշաղի մեջ դա ավելի դյուրացրեց Ատատի գործը։ Կանթեղներն օգնում էին անվրեպ նետաձգությանը։

Մի քանիսը դեն նետեցին կանթեղները և փախուստի դիմեցին, սակայն Ատատն իր նժույգով հասավ նրանց ետևից և սկսեց նիզակի կոթով հարվածել գլխներին։

Այնուհետև մեռնող հերձվածողներին թողնելով իրենց ցավերի հետ՝ Ատատը ետ քաշվեց։

Հաջորդ օրը Բագավան հասավ Հայոց դունդը։ Սպարապետ Վահան Մամիկոնյանը հայ զորականներին Բախտատուրի մոտ էր բերել զորավարժությունների համար։

Մամիկոնյանը գովեց Ատատի քաջությունը և իր զորականներին հրամայեց դիակապուտ անել մեռած հերձվածողներին։

Կատարվածի մասին եպիսկոպոս Մովսեսն իմացավ մի շաբաթ հետո։

— Դու ինչպե՞ս տեղեկացար այդ մասին,— հարցրեց իմաստասերը Ատատին։

— Սրբազան հայր, նրանք քո դեմ վաղուց են որոգայթ լարել։ Աղտեղածին ուղեղներով այդ մարդիկ մտադիր էին հրկիզել քո տունը։

— Հավանաբար նրանք փորձում էին կատարել իրենց զորավոր առաջնորդի հրամանը։

— Ի՞նչ առաջնորդ, ի՞նչ բան, սրբազան հայր, նրանց պարագլուխը տհաս խելքի տեր Կոթկոթն էր։

Զրույցին խառնվեց իշխանուհի Կամարան։ Նա Ատատին ասաց.

— Զեփյուռաշուշանի և մուլկածաղկի հյութ խմիր և դու կմոռանաս Կոթիկոթին։

Հերձվածողների ջարդի լուրը բագավանցիներն ընդունեցին անտարբեր։

* * *

Իշխանուհի Կամարայի կրտսեր տղա Եզրը Կոստանդնուպոլսից նոր էր վերադարձել Բագավան։ Նա գնաց Լուսավորչի տաճար և հանդիպեց աբեղա Արձանին։

— Հը, ինչպե՞ս են գործերդ, այնքան շատ ես գնում Կոստանդնուպոլիս ու գալիս, որ մարդիկ կկարծեն, թե Զենոն կայսեր ազգականն ես,— կատակի տվեց աբեղան։

— Չէ, Զենոնն ինձ չի ճանաչում, բայց ամեն անգամ ապրանքը ոչչունել քեզ,— կատակին կատակով պատասխանեց Եզրը։

Արձանի դեմքը թթվեց, երբ Եզրը նրան ասաց.

— Հիշո՞ւմ ես, երբ դու կայսերական մայրաքաղաքից տուն էիր վերադառնում՝ Զենոնը քեզ մի նամակ տվեց սրբազան հորը հանձնելու համար։

— Այո։ Բայց այդ նամակն իմ ձեռքին մնաց մի քանի ժամ։

— Ես գիտեմ այդ մասին։

— Ի՞նչ գիտես,— զարմացավ աբեղան։

— Պարսկահանդերձ տարազով մի քանի մարդիկ նամակը խլեցին քո ձեռքից։

— Երևում է, որ դու շատ բան գիտես։

— Դա խաղ է եղել, աբեղա, որ քեզ հետ կապ չունի։

— Ի՞նչ խաղ։

— Կեղծ։ Զենոն կայսրն արդեն մոռացել է այդ մասին։

— Ուրեմն ինձնից նամակ խլողները պարսիկներ չէին, այլ բյուզանդացիներ։

— Այո, աբեղա։ Կայսրն ուզում էր բամբասանքների ոստայնի մեջ գցել եպիսկոպոս Մովսեսին։ Այդ մասին ինձ պատմեց բյուզանդական արքունիքի մի հայազգի պաշտոնյա։

— Կայսրը հավանաբար ափսոսացել է, որ Մովսեսին հրավիրել է իմաստասերների համաժողովին։

— Կոստանդնուպոլսում ոչ մի համաժողով էլ չի եղել։

— Չէր էլ նախատեսո՞ւմ։

— Ոչ։ Դա արքունական թատերախաղ էր։

— Իսկ ի՞նչ նպատակով էր սարքված այդ խաղը։

— Որպեսզի եպիսկոպոս Մովսեսն արժանանար պարսիկների կասկածանքին։

— Բայց իմաստասերը բյուզանդացիների հետ երբեք վեճ ու կռիվ չի ունեցել և անդուլ ջատագովել է այն ամենն, ինչ հելլենական է։

— Զենոնը գիտե այդ մասին։

— Այդ դեպքում ի՞նչ է ուզում նա Մովսեսից, որն ակամա բյուզանդացիների բարեկամն է։

— Նա ոչինչ չէր ուզենա, եթե իմաստասերը չգրեր «Հայոց պատմություն»-ը։

— Սրբազան հոր մատյանն ի՞նչ կապ ունի Զենոն կայսեր հետ,— զարմացած հարցրեց Արձանը։

— Մի երկու տարի առաջ Բագավան էր եկել Ամինտոս անունով մի մարդ, որին իմաստասերը ճանաչում էր Ալեքսանդրիայում սովորելու տարիներից։ Նա Հայք էր եկել ձիաբուծության վերաբերյալ տվյալներ հավաքելու՝ Սոդոս իմաստասերի համար։ Եպիսկոպոսը սրտաբաց զրույցի է նստել նրա հետ առանց իմանալու, որ Ամինտոսը Զենոնի գործակալն է։

— Բայց Ամինտոսի հետ ի՞նչ պիտի զրուցեր եպիսկոպոսը։ Ոչ էլ նա գաղտնի է գրում «Հայոց պատմություն»-ը։

— Բանն էլ հենց այդ է,— ասաց Եզրը։

Բյուզանդիայի ու Հայքի կապերը երբեք էլ բարի-դրացիական չեն եղել։ Բացորոշ չեն եղել նաև գժտությունն ու թշնամությունը։ Բյուզանդիան միշտ էլ խանգարել է Հայքի արտաքին կապերի ընդարձակմանը։ Իրավ է, երբեմն հույները հայերի հետ միջազգային համագործակցության խնոցի են հարել, բայց միշտ էլ յուղը մնացել է հույներին, թանը՝ հայերին։ Բյուզանդացիները պարսիկների հետ հաճույքով կիսեցին Հայքը։ Ճիշտ է, մեծ պատառը բաժին ընկավ Պարսից աշխարհին, բայց կարևորն այն է, որ Հայքը դադարեց մեծ տերություն և Բյուզանդիայի մրցակից լինելուց։ Շատ տարիներ առաջ Բյուզանդիան համաձայնեց, որ Հայքի բյուզանդական մասում հայկական դպրոցներ բացվեն և Մեսրոպ Մաշտոցի ստեղծած գրերը ուսուցանեն հայերին։ Դա չարվեց մարդասիրական ու քաղաքակրթության մղումներից։ Սեփական այբուբեն ունեցող ժողովուրդը կրոնա-

փոխ չէր դառնա։ Բյուզանդիան թույլ չէր տա, որ Պարսից աշխարհը հզորանա Հայքի հաշվին։ Հույները փորձեցին հայերին ձուլել ասծու զորությամբ։ Սակայն հայերը դեմ կանգնեցին և ասացին. «Մեր Հիսուս Քրիստոսն ուրիշ է, հույների Հիսուս Քրիստոսն՝ ուրիշ»։ Բայց այբուբենը կիսով չափ գոտեպնդեց հայերին։ Եթե հայերն ստեղծեն իրենց ազգային պատմության դասագիրքը, ապա անկարելի կլինի նրանց հաղթելը։ Այդ դեռ ոչինչ։ Եթե որևէ մեկը կարողանա ճշմարտապես տարեգրել վերջին հազարամյակի պատմությունը, ապա հայերի համաշխարհային կշիռը շատ կբարձրանա։ Հելլենական պատմաշերտի տակ հայկական շատ գանձեր են թաքնված։ Հավերժական մրրկավազքին դիմանում են այն ժողովուրդները, որոնք երեք բան ունեն՝ լեզու, պատմություն և բանակ։ Այդ պատճառով էլ հայոց պատմության մատյանի ստեղծումը ամենից էլ բյուզանդացիների սրտովը չէր։

Այս մասին Եզրն արտահայտվեց ավելի կարճ ու պարզ.

— Զենոնին դուր չի գալիս, որ իմաստասեր Մովսեսը աստվածային հունարենը թողած պատմագիրք է գրում հայերեն։

— Ոչ ոք չի ուզում անպատվասեր մնալ աշխարհում, իսկ ով պատմություն չունի՝ պատիվ էլ չունի,— զրույցը եզրափակեց Արձանը։ Ապա ինչ-որ բան մտաբերելով ավելացրեց,— հիմարություն է կարծել, թե հունարենը մի օր կդառնա տիեզերական լեզու։ Աշխարհում ոչ մի ծառ չի աճել, որից կարողանաս և խնձոր քաղել, և խաղող, և ծիրան, և թուզ, և ուրիշ մրգեր։

Եզրը այդ մասին պատմեց նաև մորը՝ իշխանուհի Կամարային։ Եվ, այնուամենայնիվ, ոչ Արձանը, ոչ էլ Կամարան իմաստասերին չհայտնեցին կայսերական մայրաքաղաքի խարդավանքների մասին։

Կամարան նկատել էր, որ վերջին ամիսներին Մովսեսին դուր չէր գալիս, երբ ինքը խոսք էր բացում մատյանի մասին։

— Մարդ պիտի մարդու հետ ամենից շատ զրույցի սիրու, տեսական խնդության մասին,— ասում է Մովսեսը։

— Դա նո՞ր իմաստասիրություն է,— հարցնում է Կամարան։

— Ոչ, Կամարա։

— Իսկ ինչո՞ւ առաջ հազվադեպ էիր խոսում այդ մասին։

— Մեծ ճշմարտությունները նույնիսկ ինձ պես իմաստասերին ուշ են հասնում։

— Դու ուխտել ես, որ այսուհետև ինձ հետ միայն սիրո ու խնդության մասի՞ն պիտի խոսես։

— Ավելի շատ այդ մասին։ Այս մատյանը գրելու ընթացքում շատ ասքեր ու զրույցներ վերհիշեցի ու լսեցի, բայց ոչ մեկը այնքան հրաշալի չէր, որքան այն զրույցը, որ մի քանի օր առաջ պատմեց Դաշնավոր լճի ափից Բագավան եկած ծերունի ուխտավորը։

— Ի՞նչ զրույց է դա,— հետաքրքրվեց Կամարան։

Մովսեսը պատմեց.

— Սա եղել է այն ժամանակ, երբ մարդիկ դեռ այնքան թվեր չունեին, որ անցնեին հարյուրի սահմանը։ Մի արքա էր ապրում Ամանակ անունով։ Տարեվերջին նա կանչում է պալատականներից մեկին և ասում.

— Գնա և մտմտա։ Մի այնպիսի բան արա, որ նոր տարվա խնդությունը հերիքի մարդկանց մինչև տարեվերջ։ Եթե դա հաջողվի՝ թագավորությանս կեսը կնվիրեմ քեզ։

Պալատականը մտմտում է, մտմտում և գործի անցնում։ Քաղաքից գյուղ է գնում, գյուղից քաղաք ու ամենքին խորհուրդ տալիս, թե ինչպես տոնեն ամանորը։

Մարդիկ սկսում են պատրաստել ամենաքնքուշ ճաշերը։ Տերության բոլոր կողմերում բոցկլտում են թոնիրներն ու խարույկները։ Սեղանների վրա են դրվում թանձր, զզրդիչ հոտով կորկոտ, ախորժաբեր նգածաղիկ ու թարխուն, ասրափայլ լավաշի ախորժահամ թերթեր, եղջերուի, կինճի, ամոճի մսից պատրաստված խելքահան անող խորոված, գազպենի բլիթներ, խնոցու ջրաշիթերը վրան թարմ կարագ, կարասներից նոր հանված թշշացող գինի, ամեն տեսակ աղանդներ։

Եվ նոր տարին սկսվում է մի խելահեղ խրախճանքով։ Մարդիկ ուտում ու խմում են ըմբոշխնելով։

Մի քանի ամիս հետո Ամանակը իր իմաստուն խորհրդականին ասում է.

— Գնա մարդկանց մեջ և իմացիր, թե ով է մոռացել նոր տարվա խնդությունը։

Իմաստունը քաղաքից գյուղ է անցնում, գյուղից քաղաք, ապա վերադառնում է արքունիք և Ամանակին զեկուցում.

— Արքա, ամենքն էլ մոռացել են նոր տարվա խնդությունը։ Հազար հոգս ու ցավ ունեն, ո՞նց հիշեն, թե ինչ են կերել մի

քանի ամիս առաջ։ Ոչ մի ճաշի խնդություն չի հերիքի մարդուն մի ամբողջ տարի։

Նորից տարեմուտ է գալիս։ Ամանակն այս անգամ կանչում է իր երկրորդ պալատականին և ասում.

— Գնա և մտմտա։ Մի այնպիսի բան արա, որ նոր տարվա խնդությունը հերիքի մարդկանց մինչև տարեվերջ։ Եթե դա հաջողվի՝ թագավորությանս կեսը կնվիրեմ քեզ։

Երկրորդ պալատականը մտմտում է, մտմտում և գործի անցնում։ Քաղաքից գյուղ է գնում, գյուղից քաղաք ու խորհուրդ տալիս մարդկանց, թե ինչպես տոնեն ամանորը։

Այս անգամ ընտիր ճաշերից բացի, մարդիկ տոնախմբությամբ են դիմավորում նոր տարին։ Երգում ու պարում են, տոնածառ պատրաստում, մրցում հմուտությամբ ու նեռաձգությամբ, կոխի հրապարակ հանում ըմբիշներին, համբուրում նրանց, ում ցանկանում են։ Երեք օր ու գիշեր խնդությունը թևավածում է տերության բոլոր կողմերում։

Ամանակ արքան իր իմաստունին նորից է ուղարկում մարդկանց մոտ։ Սա վերադառնում է ու ասում.

— Ոչ ոք ոչինչ չի մտաբերում։ Հաղար հոգս ու ցավ ունեն։ Նոր տարվա երգ ու պարի, տոնածառի, մրցությունների ու համբույրի պատճառած խնդությունն ի՞նչ է, որ հարատևի Նավասարդից մինչև Նավասարդ։

Երբ մոտենում է տարեմուտը՝ Ամանակը իր իմաստուն խորհրդականին ասում է.

— Իմ պալատականները չկարողացան հարատևող մի բան նվիրել մարդկանց։ Հիմա էլ դու գնա և մտմտա։ Մի այնպիսի բան արա, որ նոր տարվա խնդությունը հերիքի մարդկանց մինչև տարեվերջ։ Եթե հաջողվի՝ իմ թագն ու գահը դիջում եմ քեզ։

Իմաստունը քաղաքից գյուղ է անցնում, գյուղից քաղաք և յուրաքանչյուր մարդու մի հոգեպարար խոսք ասում։

Նոր տարուց դեռ մի ամիս չանցած Ամանակ արքան ինքն է շրջագայում տերության մեջ և հարցուփորձում մարդկանց.

— Իմաստունի ջերմ խոսքը ուրախ է պահում մեր սիրտը,— ասում են մարդիկ։— Ոչ մի բան չի կարող մարդու խնդությունը տևական դարձնել այնպես, ինչպես սրտահաճո խոսքը։

Զարմանում է արքան և արքունիք վերադառնում խոհա-

մուլն։ Նորից շրջագայության է դուրս գալիս տարեվերջին և տեսնում, որ դեռևս տոնական են մարդկանց սրտերը։

— Գտեք իմաստունին,— բացականչում է արքան,— թող գա և ստանա իր թագն ու գահը։ Նա արեց այն, ինչ մինչև հիմա չի կարողացել անել և ոչ մի մարդ։

Ամանակին հայտնում են, որ իմաստունը ժամանակ չունի թագ ու գահի մասին խորհելու, որովհետև բարի խոսք է տանում նաև մյուս տերություններում ապրող մարդկանց։

Մովսեսը լռեց։

— Ինչո՞ւ կանգ առար, շարունակիր,— ասաց Կամարան։

— Վերջացրի, Կամարա։ Յուրաքանչյուր մարդու երջանկությունն սկսվում է դիմացինի ասված բարի խոսքից։ Մեր հետնորդներն էլ են մեզնից բարի խոսք սպասում։ Եվ ընդհանրապես շատ հեռու ապագայում սրին ու իշխանությանը հաղթելու են սերն ու բարի խոսքը։

— Իսկ ի՞նչ պիտի անեն չարերը։

— Կկծկվեն։ Նրանց մաքի որդնոտ որջը կփսփսի։

— Դա անկարելի է, Մովսես։

— Ինչո՞ւ։

— Թնության մեջ ոչ մի բան տեղի չի տալիս առանց պայքարի։ Ինձ թվում է, թե չարերին պիտի արմատախիլ անել զորական ուժով։

— Ինչե՞ր ես ասում, Կամարա։ Ուժ գործադրելն ինքնին չարություն է։

— Ավելի լավ չէ՞ մի նախճիր անել և աշխարհը ազատել չարերից։

— Չի կարելի, Կամարա, որովհետև չափ ու կշիռ չկա չարությունը որոշելու համար։ Ամեն մարդու մեջ էլ մի քիչ չարություն կա։

— Եթե մեծ չարերը չլինեն մենք չենք չարանա։

— Մի օր մարդը կհաղթի ինքն իրեն։ Հավատա, Կամարա, կհաղթի, մարդը իր ուսերը կթոթափի չարության ու վայրենության բեռից։

* * *

Մարզպան Սահակը երազի մեջ երազ է տեսնում։ Վանադուխտը Շիրակից կանչում է նրան։ Սահակը չի կարողանում կարգի բերել իր մտքերը։ Նրան թվում է, թե ինքը մեծ ճանա-

պարհորդության է դուրս եկել նժույգների երամակի հետ, բայց չի կարողանում որևէ նժույգ հեծնել։ Ասպետը զայրանում է։ Ինչպե՞ս կարելի է հետիոտն մնալ, երբ կողքիդ այսքան նժույգներ կան։ Սակայն հենց որ փորձում է մոտենալ մեկին՝ վերջինս թափ է տալիս իր գլուխը, պոկվում ու թռչում առաջ՝ և մի նեռաձիգ հեռավորությունից տրտինգ տալիս՝ ի հեճուկս ասպետի։ Բայց ահա Սահակը խարս տվեց և բռնեց մի ճերմակաբաշ նժույգ։ Հիմա կհեծնի և կսլանա առաջ՝ ետևում թողնելով երամակը։ Առանց հեծյալի նժույգը միայն ձի է և չի հասնի ոչ մի հեծվորի ետևից։ Բայց շտապել պետք չէ։ Կատաղած երամակը կարող է սմբակների տակ թողնել նրան։

Սահակը երամակի հետ քայլում է երկա՞ր-երկա՞ր։ Երևի դա աշխարհի ամենաձիգ ճանապարհն է, որ իրենից բացի ոչ ոք չի անցել։

Մի տեղ կանգ է առնում։ Հանկարծ նրա դիմաց կանգնում է ճանանչափայլ վարսակալով մի ծերունի։

— Ել ու շարունակիր ճամփադ,— ասում է ծերունին։

— Հոգնել եմ,— փորձում է իր կանգ առնելն արդարացնել Սահակը։

— Սա երազ է, իսկ երազում ոչ ոք կանգ չի առնում։

— Բայց իմ ոտքերը ցավում են։

— Դիմացիր։

— Ինչ արած՝ մի կերպ կդիմանամ,— ասում է Սահակը և շարունակում ճամփան։

Հետո ասպետը նկատում է, որ ծերունին քայլում է իր կողքից։

— Ո՞վ ես դու,— հարցնում է Սահակը։

— Քո ուղեկիցը։

— Ես քեզ չեմ ճանաչում։

— Ոչ ոք չի ճանաչում իր ուղեկցին, բայց ամեն մարդ մի ուղեկից ունի։

— Իսկ որտե՞ղ էիր մինչև հիմա։

— Կողքիդ։

— Չեմ նկատել։

— Դու շատ բան չես նկատում։

— Չկարողացա այս երամակից մի ձի բռնել։

— Այդպես է նաև կյանքը, մեկը հետիոտն է առաջ շարժվում, մյուսը՝ ձիու վրա։

— Բայց կյանքում ես միշտ ձիու վրա եմ եղել, ես ազնվազարմ նախարար եմ։

— Երբեմն ձիու վրա նստած մարդն էլ է նմանվում հետիոտնի։

— Ինչպե՞ս թե։

— Կարևորը միտքն ու հոգին է, ասպետ, մարդ կարող է դետնի վրա քայլել, բայց մտքով ու հոգով նժույգի վրա լինել։

Երամակի ձիերի խրխնջոցից մարդպանն արթնանում է։

Առավոտյան Սահակը մորը պատմում է իր երազի մասին։

Տիկին Մագաղաթը ճարտար երազահանի նման մեկնում է.

— Երամակի ձիերը օրհորդներ են, իսկ նրանց կողքով հետիոտն քայլողը ամուրի այրն է։ Դու երազում հոգնել ու կանգ ես առել։ Այդպես է նաև կյանքում, ամուրին չի կարող երկար ապրել։ Եվ, ընդհանրապես, առանց կնոջ տղամարդու ոչ կյանքն է կյանքի նման, ոչ ապրուստը՝ ապրուստի։ Հապաղել պետք չէ, հենց այս քանի օրը հարսանիք կանենք։

— Բայց հայրապետ Հովհանը հիմա Նիզի հովանոցում է և Դվին կվերադառնա մի շաբաթ հետո,— ասաց Սահակը։

— Քո ամուսնությունը պիտի օրհնի եպիսկոպոս Մովսեսը, նամակ գրիր, թող նա հյուր գա մեր տուն, իսկ հայրապետի այստեղ լինել կամ չլինելը մեզ չի խանգարում,— խոսեց տիկին Մագաղաթը և ինչ-որ բան մտաբերելով ավելացրեց,— շտապիր, քո և Վանադուխտի հարսանիքը պիտի տեղի ունենա առաջիկա յոթ օրվա ընթացքում։

— Դա ի՞նչ պայման է,— զարմացած հարցրեց Սահակը։

— Քո տեսած երազն ասում է, որ յոթ օր ժամանակ ունես, հետո ոչինչ չես կարող անել, որովհետև շարքերը ձիերի երամակը կվերածեն գայլերի ոհմակի,— ասաց տիկին Մագաղաթը։

— Ինչ արած, թող քո ասածը լինի,— համաձայնեց Սահակը։— Գնամ, մի պտույտ կատարեմ Տափերական դաշտում։

— Սպասիր, տնից դուրս գալուց առաջ պետք է մածուն ուտել։ Մածունը հանգստացնում է մարդու միտքը, թե չէ քո երազը կարող է շարունակվել նաև արթմնի ժամանակ։

* * *

Հայոց Մարերի ամսի Պարխար օրն էր։ Մովսեսը գրակալի առջև նստած տարեգրում էր իր «Հայոց պատմության» վերջին գլուխը։ Գրեց, որ Սահակ Պարթևի մահից վեց ամիս հետո, Մեհեկան ամսի տասներեքին, Վաղարշապատ քաղաքում մահացավ Մեսրոպ Մաշտոցը։ Հետո մագաղաթի վրա նրա գրիչն ակոսեց. «Այս ժամանակ ժողովված բազմության մեջ աղմուկ և շփոթություն ծագեց՝ այն պարկեշտ մարմինը թաղելու տեղի պատճառով, որ դեռ մահից առաջ մեռելության վարժեցրել էր իրեն։ Բաժանվել էին երեք խմբի. մի մասն առաջարկում էր տանել Տարոն, իր ծննդավայրը, մյուսները՝ տանել Գողթն, որտեղ առաջին անգամ ուսուցել էր, մի մասն էլ առաջարկում էր թաղել Վաղարշապատ քաղաքում, սրբերի հանգստարանում։ Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որ ավելի ջերմեռանդ էր հավատով և հզոր էր մարմնավորապես, որովհետև պարսիկներն այն ժամանակ նրան էին հավատացել մեր Հայոց աշխարհի հազարապետությունը։ Նա մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական»։

Մովսեսին թվաց, թե ինքն ափ դուրս եկավ, հասավ եզրին։ Ու գրեց իր մատյանի վերջին տողը՝ «Ավարտ Հայոց մեծերի պատմության»։ Հետո նայեց դիմացի պատի այն կետին, որտեղ մտովի կանգնեցնում էր ասպետ Սահակ Բագրատունուն։

— Ես վերջացրի, ասպետ,— մենախոսեց Մովսեսը,— չէ, ոչ չեմ։ Պատմության հեռու-հեռուներում ավելի շատ պարզություն ու խաղաղություն կա, քան մեզ մոտիկ կողմերում։ Ինչքան գնալի մեր ժամանակներն ենք գալիս՝ այնքան և՛ պատմությունն է դաժան դառնում, և՛ մարդը։ Զարմանալի է, մարդկության կյանքն էլ նման է մարդու կյանքին։ Հեռավոր անցյալը նրա մանկությունն է։ Հիմա մարդկությունն ապրում է իր գագաթած երիտասարդությունը, որը կտևի, հավանաբար, մի քանի հազարամյակ։ Կխաղաղվի՝ երբ ծերանա։ Ինձ ճանաչողները կարծում են, թե ես յոթանասուն տարեկան եմ։ Դա ճիշտ չէ, իմ ու համայն մարդկության տարիքը նույնն է։ Եթե պարզունակ արտահայտվենք՝ ես նոյի հասակակից եմ։ Նոյն իր հնարամտությունից մի քանի կաթիլ է ներարկել իմ արյամբ մեջ։ Իմ մանկության ընկերներն են ազատարաղձ Հայկը, Արա Գեղեցիկն ու Երվանդյան Տիգրանը։ Ես, դու կամ ոմն այր մի ուրիշ անուն՝

ոչ թե ծնվում, այլ վերածնվում ենք։ Ես միայն մսից ու արյունից կազմված արարած չեմ։ Իմ մարմնի և ուղեղի մեջ նախնիներիցս ժառանգած հազար կտորտանք կա։ Մեզնից յուրաքանչյուրը շարունակություն է։ Առանձին գո չկա, դա պատրանք է։

Դու շտապեցրիր, որ ես ավարտին հասցնեմ իմ ու քո գործը։ Իսկ ինձ համար ախորժելի էր, թեկուզ մտովի երկար մնալ այն ժամանակներում, երբ Հայքի բոլոր կողմերում միայն հայերենն էր հնչում։ Ահավասիկ, անցյալի խորշերից դուրս գալով՝ ես վերադարձա այս ծանրաշարժ ու հեղհեղուկ, այս բորբոսնած ու իրարամերժ աղանդներից բորոտ դարձած ժամանակներին, հասա ինքս ինձ։

Բախտավորություն եմ մաղթում իմ ու քո մատյանին։ Օգոստոս կայսրը իր թոռ Գայոսին Հայք ուղևորելով մաղթել է, որ աստվածները նրան տան Պոմպեոսի բարությունը, Ալեքսանդր Մակեդոնացու քաջությունը և այն հաջողությունը, որ ուղեկցել է իրեն՝ Օգոստոսին։ Իսկ ես մաղթում եմ, որ այս մատյանը արհամարհի տգետների անգիտությունը, գիտունների գոռոզամտությունն ու նախանձը։ Թող սա շնմանվի ինձ՝ ոչ բախտով, ոչ անօգտակար ըմբոստությամբ։ Այս գիրքը երկարակյաց կարող է դառնալ միայն համբերությամբ։

Չէ, ասպետդ Սահակ, չեմ հրճվում ավարտի համար։ Ինձ թվում է, թե այս մատյանի հետ ավարտվում եմ նաև ես։ Հավանաբար Հայոց աշխարհում ոչ ոքի այնքան շատ չեն բամբասել, որքան՝ ինձ։ Բամբասանք կտեղա նաև իմ մատյանի գլխին։ Բայց ես կապրի առանց ցավ զգալու, որովհետև ես տարա նաև նրա տանելիք ցավերը։

Եվ պատմության այդ դրվագն ավարտեց նամակի վերջաբանով. «Բայց եթե մեկն ասե, թե մենք պետք է գրեինք Մեծն Սահակի խոսածները Պարսից ատյանում, թող նա գիտենա, որ ամբողջն իսկությամբ մեր լսելիքին չի հասել ոչ ոքից, ուստի և մենք չենք հոժարում հյուսել այս պատմության մեջ։ Որովհետև ես էլ մի մարդ եմ ծերացած, և հիվանդոտ, և Բարգմանությունների անպարապ։ Ես միաքս գրի միայն շտապել առանց խոսքի մաքրության հետեւելու, որպեսզի քո կամքը կատարված լինի և ես ազատվեմ քո սոփիոդական խոսքերից և աղաչանքներից։ Քեզ էլ ես մարդ եմ համարում, կարիքների կողմից մեզ հավասար, և ոչ թե ինչպես քերթողներն ասում են, որ իշխաններն աստվածների զարմից են, նրանց մերձավոր և սերնդակից»։

***

Ծաղկանց բուրմունքից հարբած գարունը ոտքերը մեկնել էր Տափերական դաշտում, գլուխը հենել Մասիսի ծնկներին։

Մարզպան Սահակ Բագրատունու դղյակ-ամրոցը պատրաստվում էր մեծ տոնախմբության։ Կանաչի ու ծաղկի բուրմունքը բռնել էր հնամենի դաստակերտի բոլոր անկյունները։ Թվում էր, թե Տափերական դաշտին հրաժեշտ տվող գարունը իր սլքանքները թափել էր մարզպանի դաստակերտում։

Մարզպանի հրավերով ճակատը գավառից եկել էր գուսան Ցորենիկը՝ հետը բերելով վեց ուրիշ գուսաններ։ Նրանք պետք է նստեին ամրոցի վերին աշտարակ բոլորակում և յոթ օր ու գիշեր, մեկժամյա ընդմիջումներով, փանդիռի մեղմահաս հընչյուններով լցնեին շրջապատը։

Սահակը սպասում էր օրիորդ Վանադուխտին։ Դղյակ-ամրոցը հարսանեկան պատրաստությունների մեջ էր։ Տասնյակ սպասավորներ զբաղված էին ճաշեր ու խորտիկներ պատրաստելով։

Ակներևաբար դա լինելու էր Տափերական դաշտում մինչ այդ տեղի ունեցած հարսանիքներից ամենից փառաշուքը։

Շաբաթվա առաջին օրը Ցորենիկն ու մյուս գուսանները հընչիցրին իրենց փանդիռները։ Դվինցի հետաքրքրասեր արհեստավորները սկսեցին խմբվել ամրոցի պարիսպների տակ և ունկընդրել բոլորակ աշտարակից թափվող նուրբ ու մեղմածոր երաժշտությունը.

Հաջորդ օրվա կեսօրին դղյակի առջևի հրապարակը լցվեց բացականչություններով։ Շիրակի Դպրևան ավանից ամրոց էր ժամանել օրիորդ Վանադուխտի շքախումբը։ Վանադուխտի հետ Դվին էին եկել ոչ միայն նրա եղբայրը՝ Ներսեհ Կամսարականը, այլև Կամսարական տնից բազում այրեր ու տիկնայք։ Ուրախասեր մարդիկ են Կամսարականները։ Այնպիսի ցնծություն սարքեցին դղյակի հրապարակում, որ կարծես ոչ թե մեկ, այլ հազար հարսանիք են բերել Դվին։

Տիկին Մագաղաթն առաջին անգամ էր տեսնում գեղեցկապարանոց իր հարսին։ Սահակի մայրը Կամսարականների գեղանի դստեր ոտքերի տակ դրեց կավե մի պնակ։ Վանադուխտը ձախ ոտքով ջարդեց պնակը, ապա մոտեցավ ու գլուխ խոնարհեց տիկին Մագաղաթին։

Հետո Մագաղաթը կամթեց Վանադուխտի ուսը։ Օրիորդը զսպեց ցավի զգացումը և այնպես ժպտաց՝ ասես տիկինը փաղաքշել էր նրան։ Այդպես էր Բագրատունյաց սովորությունը։ Ամենքի ներկայությամբ կեսուրը կամթում էր, իսկ հարսը պիտի ժպտար։ Դա խորհրդանշում էր այն միտքը, թե համատեղ կյանքի ընթացքում հարսը պարտավոր է հանդուրժել կեսրոջ անտեղի վիրավորանքները։

— Ոտդ բարի լինի Բագրատունյաց հարկի տակ,— ասում է Մագաղաթը և գրկում օրիորդ Վանադուխտին։

Ապա ցնծագին բացականչություններով և երգ ու նվագով հարսին ուղեկցում են դղյակի սենյակներից մեկը։

Մի ժամ հետո դղյակի առջև կանգ առավ մարզպանական կառքը, որից դուրս եկան հայրապետ Հովհան Մանդակունին, մարզպան Սահակը և Հրահատ Կամսարականը։

Տիկին Մագաղաթը զարմացավ, տեսնելով, որ տղան հյուրերի հետ բարձրանում է ամրոցի վերին հարկը։ Տարիների փորձը Մագաղաթին հուշում էր, որ երևելի այրերը հավաքվել են ռազմական խորհրդի։

Մագաղաթն ուզում էր բարձրանալ վեր, բռնել տղայի ձեռքը և ուժով քարշ տալ օրիորդ Վանադուխտի սենյակն ու ասել.

— Հարսանիքից առաջ փեսան պիտի հարսի շուրջը պտտվի և ոչ թե կաթողիկոսի հետ նստած տերունական հարցեր լուծի։

Սակայն տիկին Մագաղաթը ոչինչ էլ չարեց։ Իսկ այդ ժամանակ դղյակ-ամրոցի վերին հարկում հայրապետ Հովհանը, Սահակն ու Հրահատ Կամսարականը զրուցում էին միմյանց հետ։

Առաջինը խոսեց Հրահատ Կամսարականը։

— Ուկն դրեք ինձ, մարզպանդ Սահակ և կաթողիկոսդ Հովհան։ Բերածս հաճելի լուր չէ։ Այս դղյակում մեծ ուրախություն է սկսվում։ Հարսանեկան է եղբորս՝ Ներսեհի դուստր Վանադուխտը։ Օրինաց կարգով ես պիտի հիմա դեն նետեմ իմ վահանակն ու լանջապանակը և դառնամ հարսանքավոր։ Բայց Ծաղկոտն գավառից ես այստեղ եմ հասել մի շնչով։ Վրաց Վախթանգ թագավորի սուրհանդակը հայտնում է, որ պարսկական մի մեծ զորաբանակ Կուր գետի աջ ափով մոտենում է Վիրքին։ Վրաց արքան օգնություն է խնդրում։

— Ի՞նչ կարծիքի է սպարապետ Վահան Մամիկոնյանը,— հարցրեց Սահակ Բագրատունին։

— Նա ասաց, որ վճիռ կարող է կայացնել միայն տերության գլուխը՝ մարզպան Սահակ Բագրատունին,— պատասխանեց Հրահատ Կամսարականը։

— Ի՞նչ կլինի՝ եթե մի քանի օր ուշացնենք մեր օգնությունը,— նորից խոսեց Սահակը։

— Պարսիկները կհաղթեն միայնակ մնացած վրացիներին և Հայոց աշխարհի վրա կգրոհեն հյուսիսից,— պատասխանեց Հրահատը և ավելացրեց,— հավանաբար պարսիկները համոզված են, որ մենք չենք հասցնի Ծաղկոտնից Կուրի ափ հասնել մի քանի օրում։

— Դա ինքը՝ սպարապետ Վահան Մամիկոնյա՞նն ասաց։

— Այո։

— Վախթանգը որտե՞ղ է սպասում մեզ։

— Հունարակերտի մոտ,— ասաց Հրահատը։

— Դու ինչո՞ւ չես խոսում, հայրապետ,— Հովհանին դիմեց մարզպան Սահակը։

— Առարկություն չունեմ,— խոսեց Հովհանը,— օգնենք Վախթանգ արքային, առանց թիկունք-թիկունքի տալու ոչ վրացին կարող է հեռու գնալ, ոչ էլ՝ հայը։ Բայց պատշաճն այն է, մարզպան, որ այս անգամ դու մնաս տանը, սպարապետ Վահան Մամիկոնյանը մենակ էլ կարող է մարտի տանել հայոց գնդերը։ Դու պիտի մնաս տանը, մարզպան, քո հարսանիքի ծնծղան աստծու կամքով է հնչել, հետևապես աստծու կամքն է, որ դու հարսանեկան շուրջպարի մեջ մտնես և ոչ թե զենք ու զրահ կապես։

— Չեմ կարող կողք կանգնել, հայրապետ։

— Ինչո՞ւ։

— Վրաց արքան ինձ վախկոտ կհամարի։

— Մենք նամակ կգրենք նրան և կասենք, որ մարզպանն էլ մարդ է ու չի կարող հարսանիքը կիսատ թողնել,— ասաց հայրապետը՝ փորձելով տարհամոզել մարզպանին։

— Հարսանիքի օրը հետաձգելը մեր ձեռքին է, բայց իմ ուժից վեր է թիկուզ մի ժամով պարսիկների հետ ճակատամարտը հետաձգելը,— պնդեց Սահակը,— ես պետք է սպարապետի հետ ի մարտ առաջնորդեմ մեր գնդերը։ Այդպես է հուշում ինձ ոչ միայն մարզպանական պաշտոնի իմ պատասխանատվությունը, այլև ասպետական խիղճս։

— Այդ դեպքում, մարզպան, եկեք հարսանիքն այսօր անենք,— առաջարկեց Հովհանը։

— Դա նշանակում է կորցնել մի ամբողջ օր ու գիշեր, որը կարող է ճակատագրական լինել Հայոց ու Վրաց աշխարհների համար։ Չէ, հայրապետ, ինձ պետք չէ այն հարսանիքը, որի պատճառով համայն Հայքը կարող է ընկնել սպառոնի մեջ։ Էլ չեմ խոսում այն մասին, որ ուրիշ խանգարող հանգամանքներ էլ կան։

— Ի՞նչ հանգամանքներ։

— Դու արդեն մոռացել ես, հայրապետ, չէ որ պայմանավորվել ենք, որ իմ հարսանիքը պիտի օրհնի եպիսկոպոս Մովսեսը։ Իսկ նա Բագավանից Դվին կհասնի վաղը կամ մյուս օրը։ Ավելի լավ է հարսանիքը հետաձգել մի քանի օրով։ Շարժվենք ի Վիրք, տիարք, հաղթենք թշնամուն և նոր մտնենք հարսանեկան շուրջպարի մեջ։

— Իսկ եթե պարսիկներն ուրիշ խաղ սարքեն մեր գլխին,— նորից խոսեց հայրապետը։

— Ի՞նչ խաղ, հայրապետ։

— Ասենք՝ հենց որ մեր գնդերը հասնեն Վիրք, պարսկական մի ուրիշ զորաբանակ Հայք մտնի հարավից։

Կաթողիկոսին պատասխանեց Հրահատ Կամսարականը.

— Սպարապետի հետախույզները հայտնում են, որ պարսիկները Հայքի վրա հարձակվելու նախանշաններ չեն ցուցանում։

Հետո երեքն էլ միանգամից լռեցին։

— Դու, Հրահատ, շտապիր Ծաղկոտն, սպարապետին իմաց տուր, որ ձեզ սպասում ենք Շիրակում,— զրույցը եզրափակեց Սահակը և ավելացրեց,— ես հայրապետի հետ Շիրակ կուղևորվեմ երեկոյան դեմ։

Բաժանվելով կաթողիկոսից ու Հրահատ Կամսարականից մարզպան Սահակը քայլեց դեպի ամրոցի այն սենյակը, ուր գտնվում էր Վանադուխտը։

Կամսարական օրիորդին պճնել էին կապտաշղարշ ծուփ-ծուփ շրջազգեստով։ Այդ զարմանահրաշ հանդերձի մեջ Վանադուխտը նմանվում էր ծովից դուրս եկող հավերժահարսի։ Նրբակար էին նրա հարսանեկան կարմիր մուլիները։ Հարսնանալու զգացումը օրիորդի դեմքը ողողել էր մի փունջ ժպիտով։

Ներս մտնելով Սահակը ողջունեց Վանադուխտին և ասաց.

— Վերջապես դու եկար, իսկ ես չգիտեմ էլ, թե ինչ ասեմ քեզ։ Արդարանալ չեմ ուզում, ընդամենը երեք-չորս օր պիտի մնաս առանց ինձ, հետո մեր հարսանիքը յոթ օրվա փոխարեն կտևի տասնչորս օր։

Աղջիկը շրթունքների դուրեկան ծամածռոցով համաձայնության նշան տվեց։ Դեմքի ժպիտը չաղավաղվեց։ Կարծես աշխարհում ոչ մի բան չի կարող փոխել նրա հարազվարթ տեսքը։

Սահակը դուրս եկավ սենյակից առանց հրաժեշտ տալու Վանադուխտին։ Ոչ մի բառ չասաց նաև օրիորդը։ Այնպես բաժանվեցին իրարից, կարծես թե մարդպանը ոչ թե ռազմի դաշտ էր մեկնում, այլ գնում էր Տափերականից ծաղկեփունջ անելու Վանադուխտի համար։

Բակում բազեկիր մի որսորդ էր կանգնած։ Սահակը նրան իր մոտ կանչեց ձեռքի շարժումով։

— Առավոտյան կգնաս նոսրովի՝ անտառ,— ասաց մարդպանը,— և սև կաքավ կորսաս։ Բոլոր կին հյուրերին կաքավի նուրբ միս կմատուցեք այնքան ժամանակ, քանի նրանք գտնվում են իմ ամրոցում։

Հետո մարդպանն ամրոցից դուրս եկավ անկատ։ Գնաց Դվինի մայր տաճարը, ուր նրան սպասում էր կաթողիկոս Հովհան Մանդակունին։

Փանդիռի նվագը ամրոցի վերին հարկից շարունակում էր տարածվել չորս կողմը։ Այդ նվագի տակ էլ Սահակը դուրս եկավ իր ամրոցից։ Եվ շատ հեռվից էլ նրան թվում էր, թե ինքը լսում է փանդիռի ձայնը։

Գիշերային ժամերին ասես ոչ թե երաժշտություն, այլ թախիծ էր թափվում ամրոցի բարձրաբերձ աշտարակից։

Սահակի մեկնելուց մի օր հետո Բագավանից Դվին հասավ եպիսկոպոս Մովսեսը։ Նրա հետ էին աբեղա Արձանն ու Ատատը։ Դե, Ատատի բանն ուրիշ էր։ Նա Թեժի հետ տուն էր վերադառնում մեկընդմիշտ։

Ատատը Բագավանում մնաց տասը տարի։ Այստեղից Մովսեսի գրած մատյանը մաս-մաս հասցնում էր Դվին։ Ընտելացել էր իմաստասերին, Արձանին, Լուսավորչի տաճարին, Բագավանին, նաև՝ իշխանուհի Կամարային։ Եթե հնար լիներ նա չէր բաժանվի Մովսեսից։ Բայց Բագավանում Ատատն այլևս անելիք չուներ։ Եվ վերջապես Սահակ Բագրատունու կապարճակիրը պիտի տիրոջ մոտ լինի։ Բագավանում մշտապես մնալու ցանկություն չուներ նաև Թեժը։ Գաղիշոյի դստերը մատանջում էր ուրիշ բան։ Նրան թվում էր, թե ինքն անպայման երեխա կունենա՝ եթե Բագավանից փոխադրվի ուրիշ տեղ։

Մովսեսին դիմավորեց տիկին Մագաղաթը։

— Գալդ բարի լինի, սրբազան հայր,— ասաց Մագաղաթը և պատվանուն հյուրին առաջնորդեց ամրոց։

Մովսեսի հետ նույն սենյակում տեղավորվեց նաև աբեղա Արձանը։ Պառկեցին ուշ երեկոյան։ Արձանը շուռումուռ էր գալիս թախտի վրա, բայց չէր կարողանում քնել։

— Արթո՞ւն ես, Արձան։

— Քունս չի տանում, սրբազան հայր։

— Հոգնությունից է, նաև՝ օթևանը փոխելուց, մարդ չի կարող միանգամից հարմարվել նոր բարձին։ Ես էլ չեմ կարողանում աչքս փակել։ Չհասկացա, թե ինչու մարդպանը տանը չէ։ Տիկին Մագաղաթն ասաց, որ մեկնել է Շիրակ, բայց չասաց, թե ինչու հատկապես այսօր է մեկնել, երբ գիտեր, որ ժամանելու եմ ես։

— Տիկին Մագաղաթը քեզ չի հայտնել կարևորը։ Մաղկոտնից հայոց գունդը սպարապետ Վահան Մամիկոնյանի հետ այսօր կհասնի Շիրակ, այնտեղից մերոնք կմեկնեն Վիրք՝ պարսիկներին ընդառաջ։

— Ի՞նչ, պարսիկները մտել են Վի՞րք։

— Այո, սրբազան հայր։

— Ուրեմն նորից արյունահեղություն կլինի։ Ի՞նչ անի մարդպանը, ինչպե՞ս ընտրի իր կյանքի երջանիկ օրը, հարսանիքի պատեհ ժամը։ Հայոց ժամանակը միշտ էլ զարտուղու մեջ է, չես կարող ասել, թե տարվա մեջ ո՞րն է մեր անվիշտ ու անվտանգ օրը։ Ինձ թվում է, թե այս աշխարհում ահուդողի ամենամեծ բաժինը ընկել է հայերին։ Լիաթոք շնչելու ոչ միայն տարի կամ ամիս, այլ օր էլ չունենք։

— Այո, սրբազան հայր, այդպես ենք ապրում մենք,— համաձայնեց աբեղան և գլուխը քաշեց վերմակի տակ։

Առավոտյան տիկին Մագաղաթի ուղեկցությամբ Մովսեսը շրջագայեց ամրոցի բոլոր հարկերը, ծանոթացավ Բագրատունյաց գերդաստանի հին ու նոր մասունքներին, ասպետ Սահակի զիվանին։

— Անձնական գրադարանը ոսկեբեր կալվածքից էլ թանկ բան է,— ասաց իմաստասերը։

Նախաճաշից հետո դղյակ-ամրոցի տիրուհին Մովսեսին տարավ բակ և ցույց տվեց մի մեծ փոսորակ։ Հողի թարմ գուղձերից երևում էր, որ նոր էին փորել։

— Սա էլ Սահակի գրատան տեղն է,— ասաց Մագաղաթը,— օրհներ շինության հիմն արկանելը, սրբազան հայր։

Փոսորակի մոտ մի քանի քարգործ վարպետներ էին կանգնած։ Քիչ այն կողմ թափված էին տաշած քարեր։

Շուրջառավոր Մովսեսին տեսնելով վիմագործ մարդիկ գլուխ տվին։

Մովսեսը մոտեցավ, ողջունեց նրանց և փոսորակի պռնկին կանգնելով սկսեց օրհնանքի խոսքեր ասել։ Թվում էր, թե բառերը նրա կրծքից դուրս էին գալիս դողանջ-դողանջ.

— Մասիսի շափ կյանք ունենաս, տաճարդ գրքի։ Հաստատուն լինի առաստաղդ։ Թող այստեղ ավելի շատ հանդրվանեն մարդկանց հոգիներում բարություն \սերմանող մասյանները։ Թող շեմիդ ոտք դնի միայն գրասերը։ Ոչ հուր ու ջուր տեսնես, ոչ նիզակ ու սուր։ Գիրքը պիտի մարդը մարդուն մոտեցնի, ախտազերծի հոգին ու մարդու մեջ միայն մարդը թողնի։ Եվ օրհնյալ լինի քո հավիտենականությունը, սրբազան տաճարների մեջ տաճարդ սրբազնագույն։ Եղիցի լույս, եղիցի գիրք, եղիցի խաղաղություն տիեզերական, և թող մարդիկ ամենից շատ հող ու մագաղաթ ակոսեն։

Ապա Մովսեսը քշտեց շուրջառի փեշերը, թեթևությամբ իջավ փոսորակի մեջ և դիմեց պատրաստակամ քարագործներին.

— Քար ու շաղախ տվեք։

Հասցրին։

— Շաղախի մեջ ավազը քիչ է,— ասաց եպիսկոպոսը։

Ավագ քարգործը նոր շաղախ պատրաստեց, հետո փոսորակ մտավ ու սկսեց քար ու ցեխ տալ Մովսեսին։

Մովսեսը հարթեց հիմնաքարի տեղը, Մասիսի լանջերից բերված ու տաշած մի քար դրեց և, նայելով փոսորակի պռնկին կանգնած Մագաղաթին, գլխով արեց նրան։ Շինարարների օգնությամբ տիկինն իջավ փոսորակի մեջ, բաց արեց գոգնոցը և հիմքի մեջ լցրեց ոսկե և արծաթի մի բուռ։ Ապա խաչակնքեց երեսին ու մի կողմ կանգնեց։

Հետո Մովսեսն աղոթքի խոսքեր մրմնջաց ու շարունակեց իր գործը։

Մագաղաթը դուրս եկավ փոսորակից և նորից պռնկին կանգնելով սկսեց դիտել, թե ինչ են անում Մովսեսն ու շինարարները։

Հին օրերի ճարտարությամբ Մովսեսն սկսեց պատ դնել։ Ապշահար քարգործները չէին հանդգնում որևէ բան ասել։ Դե արի իմացիր, թե այս եպիսկոպոսը որտեղ է սովորել որմնադրությունը։ Այնքան հմուտ էր գործում, ասես ամբողջ կյանքում միայն պատ էր շարել։

Շինության մոտ երևացին տիկին Մագաղաթն ու Վանադուխտը։ Քարգործներն ընդհատեցին գրույցը։ Բագրատունյաց տիրուհին իր հարսին ամեն ինչ ցուցանում էր այնպես, ասես ամբոցի իշխանությունը հանձնում էր նրան։

Այդ օրը Վանադուխտը նամակ ստացավ Սահակից։ Ասպետը գրում էր. «Իմ գեղանի Վանադուխտ։ Հայրապետ Հովհանի հետ Շիրակ հասանք գիշերով։ Ճանապարհին հոգիս զրուցում էր քեզ հետ։ Կանգ առանք Դպրեվանում։ Երկու ժամ հետո Ծաղկոտն դավառից այստեղ հասան հայոց զորագնդերը։ Վաղը կշարժվենք ի Վիրք։

Այս գիշեր հաղիվ թե կարողանամ քնել։ Հրահատը բերեց ինձ ու ստիպեց, որ գիշերեմ քո սենյակում։ Կամսարականների ապարանքը հրապուրիչ է նաև գիշերով։ Երևի դու քո հմայքը թողել ես այստեղ։ Լուսամուտից սոխակի երգի ձայն եմ լսում։ Չեմ կարողանում որոշել, թե որ թփի վրա է։

Ինձ թվում է, թե ես հիմա լսում եմ այն, ինչ դու ես լսում, սիրում եմ այն, ինչ դու ես սիրում։

Իմ մայրը, աշխարհի բոլոր մայրերի նման, ինձ շատ է պաշտում։ Նրա համար ես մնում եմ անփորձ պատանյակ։ Տարիներ առաջ ես մորս հարցրի, թե ինչու նա այդքան շատ է սիրում ինձ։

— Երբ մեծանաս՝ կհասկանաս,— պատասխանեց մայրս։

— Ինչպե՞ս։

— Կգտնես ինձ համար ամենամեծ, ամենալավ, ամենաթանկ բառը։

Այսքան տարի է՝ որոնում եմ ու չեմ գտնում այդ բառը։ Հավանաբար չգտնեմ էլ։ Ինձ թվում է, թե բոլոր որդիներն էլ որոնում են, բայց չեն գտնում շնորհակալական այն բառը, որ պիտի ասեն իրենց մայրերին։

Սկսել եմ այդպիսի բառ որոնել նաև քեզ համար։

Ես սիրում եմ քեզ։ Սիրում եմ։

Գուցե սա է ամենամեծ բառը։ Հավանաբար ոչ ոք չգիտե, որ դրանից հզոր ու աշխարհակերտ բառ չիր։ Դա է հայերենի ոստանիկ բառը, որ մարդ պիտի մի անգամ և միայն մեկին ասի։

Մտովի վերստեղծում եմ հարազվարթ դեմքդ, անավարտ ժպիտներդ։ Ուզում եմ քանդակել քեզ իմ մտապատկերում։ Ինձ համար տիեզերքն սկսվում է քո ժպիտից։

Դու շատ բան չգիտես իմ մասին։ Ահավասիկ ես՝ ծածկամիտ ու խոովկան չեմ, հոչակ ու փառք չեմ որոնում, հարգում եմ դիմացինի խոհեմությունը, թեկուզ նա լինի իմ թշնամին, ատում եմ փոփոխամտությունը՝ ինչպես առաքինի մարդն է ատում անամոթ ու հերատուկ կնոջ։ Ինձ համար ախորժալուր է պատի քիվից թափվող անձրևաջրի ձայնը։ Սիրում եմ ահեղ որոտը, անամպ երկինքը, բոլոր ջրվեժների շաչյունը, կանդի թռիչքը, ամեն տեսակ ոստի բողբոջ։ Մարդու կարողությունը բևեռ ու եզր չունի։ Հաճելի են այն մարդիկ, ովքեր բառերը արտասանում են հստակ ու ցածրաձայն։ Ջարությունը պիտի մարդու համար ծոմ դառնա ամբողջ կյանքում։ Ատում եմ ծայրահեղ բծախնդրությունը։ Ասածուց ես միշտ խնդրել եմ, որ ինձ չհանդիպեցնի այնպիսի մարդկանց, ովքեր նայում են աչքերիդ ու լկտիաբար սուտ խոսում։

Անգործ չեմ կարող մնալ և ոչ մի ժամ։ Մերացումն սկսվում է անգործությունից՝ ինձ համար սա է ամենամեծ իմաստությունը։

Քերթությունից հեռու եմ մնացել, որովհետև ճանաչում եմ ինքս ինձ և համոզված եմ, որ իմ տողերը ասպետաշունչ չեն, այլ շինական ոտանավոր։

Տեսնո՞ւմ ես, ինձ թափ եմ տալիս, բացվում շեյ-շերտ ու խութ-խութ։ Դե, ես արկղիկ չեմ, որի պարունակությունը կարող է տեսանելի դառնալ։ Երևի շատ բան հավուր պատշաճի չստացվեց։ Անկասկած դա հնարավոր չէ։ Ոչ մի մարդ չի կարող ներկայացնել ինքն իրեն ամբողջովին։ Մարդու հոգում ավելի շատ բան է տեղավորվում, ամբողջը հանել չես կարող։ Դա նույնիսկ վեր է ասածու ուժից։

Քո տոհմական գոյակը մտնելիս հանդիպեցի ուսուցչիդ՝ Ղազար Փարպեցուն։ Դեմքին ութածալ տխրություն կար։ Ուզում էր մեզ հետ Վիրք գալ, սպարապետ Վահան Մամիկոնյանը չհամաձայնեց և նրան ասաց.

— Հռոմեացի զորապետ Սուլլան իր կյանքի մեծագույն երջանկությունն էր համարում երկու բան. նախ, որ իր հետ ընկերություն էր անում Մետելոս Պիոսը, և ապա՝ որ ինքը կարող էր հրկիզել Աթենքը, բայց խնայեց այն։ Իմ երջանկությունն էլ այն է, զպիրդ Ղազար, որ դու իմ ընկերն ես։ Մնա տանը, դու գործ չունես նիզակի ու վահանի հետ։ Խոսքի մարտիկների ռազմաղաշտը մագաղաթն է ու գրակալը։

Ես էլ կարող էի նման մի բան ասել իմաստասեր Մովսեսի մասին։ Բայց մինչև հիմա նա իմ նամականի բարեկամն է։ Ոչ նա է տեսել ինձ, ոչ էլ ես՝ նրան։ Զրուցիր նրա հետ։ Իմաստունների բարությունապետ է։ Ինձ պես մարդիկ կարող են ծնվել ամեն տարի, իսկ Մովսեսի նմանները՝ հազար տարին մեկ։ Նա հավերժալույս կանթեղ է, մնացածներս աղոտ ճրագներ ենք, սովորական մահկանացուներ։

Վաղը մեկնում ենք Վիրք։ Տուն կվերադառնամ հաղթանակով։ Ես զոհվելու իրավունք չունեմ, որովհետև դու սպասում ես ինձ»։

Վանագուխտը նորից ու նորից կարդաց նամակը, հետո դրեց բարձի տակ։

Բագրատունյաց գոյակում հարսանեկան տոնախմբությունը ամբողջովին չէր ընդհատվել։ Մեկ-մեկ փանդիռի նվագ էր լսվում։

Աբեղա Արձանը երկար չվայելեց Բագրատունյաց գերդաստանի հյուրընկալությունը։ Երկու օր հետո մեկնեց Բագավան։ Մովսեսն զբաղված էր ասպետ Սահակի գրքերը աչքի անցկացնելով։ Մի երկու անգամ Ատատի ուղեկցությամբ Դվին մտավ և այցելեց եղբորը՝ Մամբրե Վերծանողին ու նրա տիկնոջը՝ Սանդուխտին։

Սակայն Մամբրեն չկարողացավ ոչ մի գիշեր եղբորը պահել իր հարկի տակ։

— Տիկին Մագաղաթը կվիրավորվի,— պատճառաբանում է Մովսեսը,— ես նրա հյուրն եմ, հենց որ Սահակը վերադառնա, նրա հարսանիքից հետո մի քանի օր կմնամ ձեզ հետ։

Բագրատունյաց ամրոցն ապրում էր մի տեսակ անհանգիստ կյանք, այստեղ անդորր չկար ոչ ցերեկը, ոչ գիշերը։ Ասպնջականն էր դարձել մեծաթիվ կենվորներով։ Մովսեսին թվում էր, թե ողջ գիշերը ամրոց-գոյակը շարժման մեջ է, գնում ու գալիս են, զրուցում, զրուցում, զրուցում։ Մինչև հիմա Մովսեսը

համոզված էր, թե գիշերներն արթուն են մնում հատկապես իմաստասերները, իսկ այստեղ՝ Տափերական դաշտում կարծես թե բոլորն էլ արթմնի են մնում։

Մի պարզկա գիշեր Մովսեսը բարձրացավ ամրոցի վերին աշտարակը։ Երկար պարեգոտն ուսերին գցած մի մարդ հայացքը դարձրել էր դեպի երկինք։ Մովսեսը նստեց նրա մոտ և ասաց։

— Աստղագուշա՞կ ես։

— Գոհ չեմ, որ եմ։

— Ի՞նչ է քո անունը։

— Մուգ։

— Իսկ ինչո՞ւ են քեզ Մուգ անվանել։

— Մուգը աստղի անուն է։

— Դա ո՞ր աստղն է։

— Նայիր դեպի Մասիսի կողմը։ Տեսնո՞ւմ ես աջ կողմի բույլը։

— Ո՞րը։

— Այն, որ նման է ցիրուցան թափված արծաթե հնամաշ դրամների։

— Տեսնում եմ։

— Այդ հույլի մեջ մեկը նման է արծաթաձույլի։

— Այո։

— Դա Մուգ աստղն է։

— Այդ աստղը երբվանի՞ց է Մուգ կոչվում։

— Միշտ էլ Մուգ է կոչվել։

— Ինչպե՞ս թե։

— Այո։ Դա Հայոց ամանորաբեր աստղն է։ Երկնքից ուղիղ նայում է Մասիսին։ Այստեղից փոքր է երևում, բայց հրաբորբ մեհյաղի վիթխարի զանգված է, եթե ընկնի՝ Մասիսը բզիկ-բզիկ կլինի։

— Իսկ ո՞վ է քեզ այդ աստղի անունով կոչել։

— Հայրս։

— Ի՞նչ է, նա գիտեր, որ դու աստղագուշակ պիտի դառնաս։

— Մենք տոհմիկ աստղագուշակներ ենք։ Ես իմ տղայի անունն էլ եմ Մուգ դրել։ Նա հիմա տասը տարեկան է։

— Նա էլ գիտե՞ այդ աստղի տեղը։

— Իհարկե։

— Հայերս ուրիշ աստղ չունե՞նք երկնքում։

— Չէ, միայն Մուգն է։

— Իսկ մյուս ազգությունն ե՞րը։

— Ամեն ազգություն երկնքում երկու աստղ ունի, մեկը բախտի, մյուսը՝ ամանորաբեր։ Մենք բախտի աստղ չունենք, մերը միայն ամանորաբերն է, Մուգը։

— Իսկ ո՞ւր է մեր բախտի աստղը։

— Պապս ասում էր, որ մենք երբեք էլ բախտի աստղ չենք ունեցել։ Դա եղել է շատ վաղուց, բոլոր սկիզբների սկզբում։ Աստվածները նստել են ու երկնքի աստղերը բաժանել երկրի վրա ապրող ազգություններին։ Ամեն մեկին բաժին է ընկել երկուսը։ Վերջում մնացել է մեկը։ Այդ կենտն էլ տվել են հայերիս։

— Ասենք թե՝ դա այդպես է եղել, բայց ինչո՞ւ այդ աստղը ամանորաբեր են կոչել և ոչ թե բախտի։

— Դրա պատասխանը պիտի որոնել երկրի վրա։ Մենք տառապում ենք, ոչ թե ապրում։ Ամանորը մեզ երկու-երեք օրվա խնդություն է բերում, մնացած օրուգիշերները մենք ապրում ենք երկյուղի մեջ։

— Դու գտնում ես, որ բոլոր աստղերը վաղ թե ուշ կընկնե՞ն երկնքից։

— Ոչ, մի քանիսը կընկնեն։

— Իսկ մնացածնե՞րը։

— Նրանք հավերժաշող են։ Բայց կան նաև նորածին աստղեր։

— Նրանց համեմատ էլ երկրի վրա նոր ազգություններ են ստեղծվում։

— Ճիշտ է։

— Դու ամե՞ն գիշեր ես երկնքին նայում։

— Այո։

— Իսկ ամպամած ժամանա՞կ։

— Միևնույն է, ամպերի արանքից ես տեսնում եմ աստղալեցուն երկինքը։

— Հավանաբար քո բոլոր գուշակությունները կապված են Մուգի հետ։

— Այո, նրա շուրջը կան հազար տեսակ երկնային գունախաղեր, որոնք հայերի բախտի նախանշաններն են։

— Դու ասպետ Սահակի աստղագուշա՞կն ես։

— Ինձ այս դղյակն է բերել նրա հայրը՝ ասպետ Տիրոցը։

— Քո գործը միայն գուշակությունն է։

— Աստղագուշակությունը։

— Մի՞թե դա համարյա նույնը չէ։

— Ոչ։

— Գուշակությունից բացի ուրիշ ի՞նչ ծառայություն ես մատուցում ասպետին։

— Ես պարտավոր եմ աստղերի օգնությամբ որոշել եղանակի փոփոխությունները։

— Դա դժվա՞ր է։

— Ոչ, եթե ունենաս առնվազն վաթսուն տարվա օրանշանները։

— Ի՞նչ բան է օրանշանը։

— Արևո՞տ է, ամպամած, թե անձրևո՞տ։ Մագաղաթի վրա գրում ես տարեթիվն ու ամսվա օրը և հինգ կետերի օգնությամբ վավերացնում այդ օրվա եղանակային կենսագրությունը։ Մի կետը արևն է, երկուսը՝ ամպամածությունը, երեքը՝ անձրևը, չորսը՝ կարկուտը, հինգը՝ երաշտը։

— Դու ամեն օր այդպիսի հաշվառո՞ւմ ես անում։

— Այո։

— Քանի՞ տարվա օրանշաններ ունես։

— Քսանհինգ։ Տասը հայրս է արել, տասնհինգը՝ ես։

— Դա շարունակակա՞ն հաշվառում է, թե ինչ-որ տեղ ընդմիջում է եղել։

— Շարունակական է և պակաս չունի։

— Իսկ ի՞նչ են տալիս քեզ քսանհինգ տարիների այդ օրանշանները։

— Օրինաչափությունների բանալի։

— Ի՞նչ է նշանակում դա։

— Բնությունն էլ ունի իր անխուսափելի կրկնությունները։ Ես կարող եմ համարյա անսխալ հայտնել, թե առաջիկա երեք օրերին ինչպիսին կլինի եղանակը։

— Անշուշտ, ասպետը իր կալվածքի վար ու ցանքը, այգեկութն ու հունձը կատարում է քո հաղորդած օրանշաններով։

— Այո, երբեմն իմ օրանշանները լսելուց հետո նա սուրհանդակներ է ուղարկում իր մտերիմ նախարարներին։ Դա անում է հատկապես այն ժամանակ, երբ ես կարկտի նախանշան եմ հայտնում։

— Իսկ այս պահին ի՞նչ ես որոնում երկնքում։

— Ուզում եմ բարի նախանշաններ գտնել Մուգ աստղի

շուրջը, իմ տերը Վիրք է գնացել, որտեղ ահեղ բախում կլինի պարսիկների հետ։

— Իսկ ի՞նչ են ցուցանում աստղային նախանշանները։

— Ոչինչ։

— Ինչպե՞ս թե ոչինչ։

— Մուգի շուրջը սփռված աստղերի հույլի մեջ ամպեր կան։ Երկրային ամպերը թափանցիկ են ինձ համար, իսկ աստղային ամպերը ի վիճակի չեմ տեսնել։ Թվում է, թե փոթորկված ծովի ալիքների վրա միայն մի լաստ է ճոճվում։ Լաստն անտեր է։ Դա ծանր փորձության նշան է։

— Դու մի՞շտ ես երկինքը նմանեցնում ծովի։

— Այո, ծովը երկնքին է նման, երկինքը՝ ծովին։ Աստղագուշակն էլ նման է ծովակալին, երկուսն էլ պարտավոր են իմանալ և կոհակների մռնչյունի ժամը և այն աստղը, որի օգնությամբ մարդ ազատվում է փորձության փոթորկից։

— Ասա ինձ, Մուգ, երբևիցէ պատահե՞լ է, որ քո կանխատեսումները սխալ լինեն։

— Իհարկե, անսխալը միայն ամենածին բնությունն է։ Սխալվել եմ, բայց չեմ խաբել։

Մովսեսը ձեռքով հրաժեշտ տվեց Մուգին և աշտարակից իջնելով գնաց դեպի իր օթևանը։

Պառկեց, բայց դարձյալ քունը չտարավ։

Ուր որ է՝ լույսը պիտի բացվեր։ Ցիմացավ, թե աչքերն ինչպես փակվեցին։ Ընկավ երազների աշխարհը։ Մեղրագետի մի ափին կանգնել է Կամարան, մյուս ափին՝ Մովսեսը։ Կամարան դարձել էր տասնյոթ տարեկան, իսկ Մովսեսը ավելի էր ծերացել։

— Մտի՛ր գետը,— մյուս ափից ձայն էր տալիս Կամարան։

— Հորդացա՞ծ է, չե՞մ կարող անցնել, կխեղդվե՞մ,— տրտնջում էր Մովսեսը։

— Մի՞թե չես տեսնում թե ես ինչպես եմ երիտասարդացել։ Մի վախեցիր, մտիր, դու էլ կդառնաս տասնյոթ տարեկան։ Ու երբեք չես ծերանա։ Մեղրագետը աստվածային գետ է, սրա ջրերը մարդուն դարձնում են հավերժական երիտասարդ։ Մտի՛ր, Մովսես, մտի՛ր։

Կամարայի խոսքերը ոգևորում են Մովսեսին։ Նա առաջ է շարժվում և ոտները դնում ջրի մեջ։ Մանծաղ է երևում գետը։

Մովսեսը համարձակություն է առնում և շարժվում դեպի մյուս ափը։ Ոտքը գետնին է դնում պարման դարձած։

— Տեսա՞ր,— հպարտանում է Կամարան,— հիմա գնանք։

— Ո՞ւր։

— Դու, ի՞նչ է, մոռացե՞լ ես ձեր տան ճամփան։ Մի՞թե չես տեսնում, չէ՞ որ սա խորոնքն է։ Գնանք։

Մովսեսն ու Կամարան քայլում են դեպի խորոնք։

Գյուղում ոչ ոք չկա։ Ահա և Մովսեսենց մեծ պատշգամբը։ Կամարան ու Մովսեսը այս ու կողմ են նայում։ Չգիտես որտեղից հայտնվում է Մովսեսի առաջին ուսուցիչ Նարոտը։ Նա ուսից ցած է դնում ծանր պարկը։

— Բարև, իմ լավ ուսուցիչ,— ասում է Մովսեսը։

— Բարև, Մովսես,— պատասխանում է Նարոտը։

— Ի՞նչ կա պարկիդ մեջ։

— Տառապատկեր փայտիկներ։

— Ո՞ւմ համար ես բերել, գյուղում ոչ մի մարդ չի երևում։

— Նրանք շուտով կգան։

— Բայց ո՞ւր են գնացել։

— Երկինք։

— Ի՞նչ են անում երկնքում։

— Աստղերի բերքահավաք է։

— Ուսուցիչ, մի՞թե աստղերի բերքահավաք է լինում։

— Հիմա բոլորն էլ երկնքից աստղեր են իջեցնում։

— Բայց ինչպե՞ս են երկինք բարձրանում։

— Կամուրջով։ Հայրդ՝ Ստեն է պատրաստել այդ կամուրջը։ Դրա պես գեղեցիկ բան աշխարհում չկա։ Դա միակ կամուրջն է, որից ոչ մի մարդ չի ընկնում։

Նկատելով Կամարային՝ Նարոտը հարցնում է.

— Ո՞վ է այս աղջիկը։

— Իմ կինն է։

— Տնպա՞հ աղջիկ է։

— Ես սիրում եմ նրան։

— Այո, երբ սիրում ես՝ աղջիկը գեղեցիկ է դառնում ամեն ինչով՝ և արտաքինով, և խելքով, և վարքով։

Հետո Նարոտը Կամարային ասում է.

— Ժպտա՝ տեսնենք ինչպիսին է քո հոգին։

Կամարան չի ժպտում։

— Մի՞թե քո կինը ժպտալ չգիտե,— դիմելով Մովսեսին ասում է Նարոտը։

— Դե, ինչու չգիտե, ես հիմա կհրամայեմ՝ և նա կժպտա, լսո՞ւմ ես, Կամարա, ժպտա՝ ասում եմ։

Կամարան ժպտում է։ Նայելով նրան Նարոտը մռայլվում է։

— Ի՞նչ պատահեց, ուսուցիչ, ինչո՞ւ տխրեցիր։

— Կինդ չորսաշքանի ժպիտ ունի։

— Դա ի՞նչ է նշանակում, ուսուցիչ։

— Դա նշանակում է, Մովսես, որ նա կարող է ժպտալ ամենքին, չորսաշքանի ժպիտ ունեցող կանայք ուզում են դուր գալ բոլոր տղամարդկանց։

Մովսեսը արթնանում է քնից։

Ատատը կանգնած էր նրա կողքին։

— Ի՞նչ է պատահել, Ատատ,— հարցրեց Մովսեսը և, գլուխը բարձրացնելով, նստեց մահճակալի վրա։

— Դու քնի մեջ այնքան բարձր էիր գոռում, որ տիկին Մագաղաթն ստիպված եղավ ինձ ուղարկել քո ննջասենյակը,— ասաց Ատատը։

— Իսկ ի՞նչ էի ասում։

— Նարոտ։

— Նա իմ առաջին ուսուցիչն է։ Երազում ես զրուցում էի նրա հետ։

Մովսեսն սկսում է հագնվել։ Աղախինը ննջասենյակ է մտնում և թարմ կաթ մատուցում եպիսկոպոսին։

Մովսեսը Ատատին հարցնում է.

— Ի՞նչ լուր կա Վիրքից։

— Ոչ մի լուր չկա։

— Ինչպե՞ս է Թեժը։

— Լավ է, սրբազան հայր։ Դվինը և ասպետի այս ապարանքը դուր են գալիս նրան։

Մովսեսի ու Ատատի զրույցը երկար չշարունակվեց։ Տիկին Մագաղաթը կանչում է Ատատին։

— Ատատ,— ասում է իշխանուհին,— ասպետից լուր չկա։

— Հուսա ու հավատա, տիրուհի, և լուրն ինքն իրեն կգա։

— Չեմ կարող, Ատատ, ինձ թվում է, թե ուր որ է՝ պիտի խենթանամ։

— Ափսոս, որ նրա կողքին չեմ։ Մի կերպ լուր կտայի քեզ, թե ինչ է կատարվում հայոց զորագնդերի հետ։

— Այո, Ատատ, դու պետք է նրա հետ լինեիր։ Միևնույն է, եթե այստեղ էլ լինեիր՝ կարգելիր և չէր թողնի, որ դու Վիրք գնաս։ Իսկ հիմա ես եմ քեզ խնդրում։ Գնա ասպետի ետևից, գնա և մի լուր բեր։ Այսքան երկար լռությունը լավ նշան չէ, Ատատ, հարսանիքը սառչում է։

— Ես համաձայն եմ, տիրուհի, ե՞րբ մեկնեմ։

— Այսօր, եթե կարող ես՝ հենց հիմա։

— Անհոգ մնա, տիրուհի, կմեկնեմ հենց այսօր։

— Իսկ ե՞րբ կվերադառնաս։

— Ես կվերադառնամ ասպետի հետ։

— Դա կտևի մի քանի օր և ես դարձյալ լուր չեմ ունենա։

— Հետս կվերցնեմ մեր ճերմակ աղավնին և բաց կթողնեմ հենց որ հանդիպեմ ասպետ Սահակին։ Դա կարող է լինել վաղը կամ վաղը չէ մյուս օրը։

— Աղավնին, իհարկե, վերցրու հետդ։ Իսկ հիմա գնա և մեկնելու պատրաստություն տես։

Քարգործ վարպետները շարունակում էին գրքի տաճարի կառուցումը։ Ամրոցի գործերին սկսել էր տիրություն անել նաև օրիորդ Վանադուխտը։ Կամսարականների դուստրը երբեմն այցելում էր եպիսկոպոս Մովսեսին։ Մի քանի զրույցից հետո իմաստասերը համոզվել էր, որ Վանադուխտի աշխարհայացքն ավելի ընդարձակ է, քան Կամսարայինը։ Վերջինս միայն կին էր, իսկ Վանադուխտը կիսով չափ իմաստասեր է։ Ասպետ Սահակի հարսնացուն ի բերան գիտե ոչ միայն Մովսեսի «Հայոց պատմությունը», այլև ուրիշ իմաստասերների առանձին գործեր։

Օրիորդ Վանադուխտի մեջ ամեն ինչ առինքնող է, նաև ճոխ ու խիտ վարսահյուսքերը։

— Իմացությանս համար առանձնապես պարտական եմ իմ ուսուցչին՝ դպիր Ղազար Փարպեցուն,— ասում է Վանադուխտը Մովսեսին։

Իմաստասերը հարցնում է.

— Հիմա որտե՞ղ է Ղազարը։

— Դպրեվանում։

— Ի՞նչ է անում։

— Նա այնտեղ այլևս անելիք չունի։ Հենց որ սպարապետ Վահան Մամիկոնյանը Վիրքից վերադառնա՝ նրան Շիրակից կբերի Դվին կամ Վաղարշապատ։

— Ղազարը կարդացե՞լ է իմ մատյանը։

— Այո, սրբազան հայր։ Հիացած է։ Ավարտը կարդալուց հետո նա ինձ հետ քո մասին զրուցել է շատ երկար։

— Ի՞նչ է ասել։

— Մեսրոպ Մաշտոցի ստեղծած սրբազան տառերով պետք է միայն այսպիսի գրքեր գրել։

Մինչ Բագրատունյաց դղյակում լուրերի էին սպասում, Ատատը Վիրք էր հասել։

Կապարճակիրը, սակայն, ուշացել էր։ Նախորդ օրը տեղի էր ունեցել Ճարմանայնի մեծ ճակատամարտը, որի ժամանակ զոհվել էին մարզպան Սահակ Բագրատունին և սպարապետի եղբայր, սեպուհ Վասակ Մամիկոնյանը։

Ատատը մարտադաշտում չգտավ ասպետի դիակը և Դվին վերադարձավ դառն մտորումներով։

Բագրատունյաց ամրոց-դղյակի վերին աշտարակում սև երիզ երևաց։ Ամրոցում սուգ սկսվեց։

Այդպես էլ Մովսես Խորենացին ու Սահակ Բագրատունին երբեք չտեսան միմյանց։

Մի քանի օր հետո Դվինում լուր տարածվեց, թե իբր Սահակ Բագրատունին ու Վասակ Մամիկոնյանը ողջ են մնացել։ Լուրը սուտ դուրս եկավ։

Մովսեսը մի երկու շաբաթ մնաց տիկին Մագաղաթի մոտ և ջանում էր ամոքել նրա կսկիծը։

Հետո հեռացավ Բագրատունյաց վշտապարույր ամրոցից և Ատատի ուղեկցությամբ բռնեց Բագավան տանող ճամփան։

ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Մովսեսը Բագավան չմտավ։ Եպիսկոպոսական նստարանը Ատատի միջոցով ուղարկեց աբեղա Արծանին, իսկ ինքը գնաց խորոնք։ Ուզում էր բողոքել և մի քանի ճշմարիտ բաներ ասել աստծուն, որ մինչ այդ ոչ ոք չէր ասել։ Իսկ յուրաքանչյուր մարդ ճշմարտությունն ու աստծուն ավելի լավ տեսնում էր իր ծնողավայրում։

Հայկ Հարությունի Խաչատրյան

ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐԸ

Վեպ

Хачатрян Гайк Арутюнович

ОТЕЦ СЛОВЕСНОСТИ

Роман

(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Մինասյան

ИБ 4977

Հանձնված է շարվածքի 11.07.84։ Ստորագրված է տպագրության 16.01.85։
Ֆորմատ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։
Տպագրություն՝ բարձր։ 18,48 պայմ. տպ. մամ., 17,5 հրատ. մամ.։
Տպաքանակ՝ 20 000։ ՎՖ՝ 09456։ Պատվեր՝ 1720։ Գինը՝ 1 ռ. 40 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.